При этом законодательство РА, включая Решения и Положения Центрального банка РА, определяет перечень и способы доведения информации до потребителя по отдельным видам работ и услуг. Например, согласно Главе 3 Решения Совета ЦБ РА № 229-Н от 28 июля 2009 года, утверждающего Положение 8/05 “Порядок, условия, способы и минимальные требования взаимного общения банка и вкладчика, кредитора и потребителя”, информация, предоставляемая финансовыми организациями, должна быть изложена на армянском языке, быть максимально понятной, использовать доступные термины и выражения, не вводить в заблуждение и позволять потребителю осознавать характер предлагаемой услуги и связанные с ней риски и т.д.

Качественными характеристиками информации являются: 1) полнота – адекватное объему отражение материального мира в процессе передачи сведений; 2) достоверность – сведения по своему содержанию являются объективными; 3) актуальность – сведения морально не устарели и соответствуют потребностям².

Право потребителя на информацию реализуется в полной мере только при условии, что продавец, изготовитель, исполнитель или владелец агрегатора предоставляет актуальную, правдивую, понятную и соответствующую целям потребления информацию. Бремя доказывания факта предоставления необходимой и достоверной информации в случае ненадлежащего использования товара, повлекшего его недостатки, возлагается на продавца, изготовителя или исполнителя. В юридической литературе отмечается, что данная презумпция не является абсолютной: требования, основанные на нежелании или неумении потребителя получить информацию, судами отклоняются³.

¹ О рассмотрении судами гражданских дел по спорам о защите прав потребителей: пост. Пленума Верховного Суда РФ от 28.06.2012 г. № 17. // КонсультантПлюс: справ. правовая система. Доступно по ссылке: https://www.consultant.ru/document/cons_doc_LAW_131885/ (дата обращения 26.05.2026 г.).

² Шаповалова Е.В. Информация в системе объектов гражданских прав // Законы России: опыт, анализ, практика. 2008. № 5. - С. 91- 96.

³ Бычков А. Индустрия развлечений: споры с потребителями, заказчиками и конкурентами // “Новая бухгалтерия”. 2017. № 12.

Особенности доказывания в делах о защите прав потребителей обусловлены, прежде всего, применением таких презумпций, как презумпция вины причинителя вреда и презумпция некомпетентности потребителя. Эти принципы смещают бремя доказывания на ответчика, усиливая процессуальную защиту прав потребителей.

Существующий механизм судебного рассмотрения споров в сфере защиты прав потребителей финансовых услуг характеризуется значительной сложностью и длительностью, требуя существенных усилий для представления доказательств. Однако данный процесс не всегда гарантирует достаточный уровень защиты прав участников гражданского оборота. Несмотря на общее правило, освобождающее потребителя от необходимости обосновывать правомерность своих действий, судебная практика нередко возлагает на потребителя бремя доказывания надлежащего поведения и неправомерности действий финансовых организаций. Подобное требование обосновывается принципом формального равенства сторон в гражданских правоотношениях и процессе. В этой связи в судебных решениях встречаются утверждения о том, что “заявитель, подписав договор с банком без оговорок, тем самым выразил согласие со всеми его условиями”.

Для формирования системы защиты прав потребителей финансовых услуг, соответствующей международным стандартам, признанным государством, представляется целесообразным закрепить на законодательном уровне принцип, согласно которому “потребитель является экономически слабой стороной договора, нуждающейся в особой защите”. В данном контексте следует установить, что потребитель, вступая в договорные отношения с банком или иной кредитной организацией, находится в уязвимом положении, лишенном возможности влиять на условия договора. Соответственно, на финансовую организацию должно быть возложено бремя доказывания соблюдения условий договора на всех стадиях: преддоговорной, при его заключении и в процессе исполнения.

Однако даже в случае вынесения решения в пользу потребителя его реализация может быть затруднена. После получения положительного решения суда, установившего наличие нарушения прав потребителей финансовых услуг, само установление факта не влечет для противоположной стороны обязанностей исключить соответствующие признанные нарушающими права клиентов пункты из текстов договоров, заключенных с другими клиентами. А это значит, что, обращаясь в суд с иском о признании не соответствующими требованиям закона отдельных пунктов договора, клиент или уполномоченный орган получает решение только в отношении конкретного договора, заключенного с конкретным клиентом. И следующий спор, стороной которого будет выступать та же кредитная организация/банк, но второй стороной будет другой клиент, будет рассматриваться судом в полном объеме как самостоятельный иск с обязательным установлением тех же обстоятельств. В свою очередь в праве государств – членов ЕС

специально уполномоченные органы государственной власти, осуществляющие защиту прав потребителей финансовых услуг вправе не только осуществлять проверку жалоб потребителей, но и инициировать судебное разбирательство для защиты прав неограниченного круга потребителей финансовых услуг путем подачи коллективного иска даже если жалоба поступила от одного потребителя¹. Судебная практика зарубежных стран также свидетельствует о возможности объединения судом сходных исков потребителей финансовых услуг к одним и тем же ответчикам².

В Великобритании впервые возможность подачи коллективных исков для защиты прав потребителей финансовых услуг была предусмотрена законопроектом Билля о финансовых услугах от 19 ноября 2009 года³. Указанный законопроект был принят в виде Закона о финансовых услугах от 8 апреля 2010 года и в последующем дополнен новой редакцией Закона о правах потребителей 2015 года⁴.

В Бельгии Законом от 6 апреля 2010 года “О рыночных практиках и защите прав потребителей”⁵ предусмотрено право потребителей на получение защиты по коллективному иску в случае банкротства кредитной организации⁶. А Законом от 28

¹ **Francesco A Schurr**. The relevance of the European consumer protection Law for the DEVELOPMENT OF THE EUROPEAN CONTRACT LAW // (2007)38 VUWLR. P. 131–143; D. Fairgrieve and G. Howells. Collective Redress Procedures – European Debates 58 International and Comparative Law Quarterly 379 (2009); Diana Bentley. Collective actions are not as common in Europe as they are in the US but this may be about to change // International Bar Association. Доступно по ссылке: <http://www.ibanet.org/Article/Detail.aspx?ArticleUid=1EC51981-CFB6-43D3-ADEBDD756FC7DF84>;

I.N. Tzankova, J. Kortmann. Remedies for consumers of financial services: collective redress and improvement of class representation // European journal of consumer law = Revue européenne de droit de la consommation. 2010. P. 117–141; **Dr. Christopher Hodges** Current discussions on consumer redress: collective redress and ADR // ERA Forum. 2012-06. Vol. 13, Issue 1. P. 11–33; **Hakim Boularbah**. Proposed rules on collective actions under Belgian law // Litigation Corporate & Finance. July 2013; European Commission RECOMMENDATION of XXX on common principles for injunctive and compensatory collective redress mechanisms in the Member States concerning violations of rights granted under Union Law. Strasbourg, XXX C(2013) 3539/3 // Европейская комиссия.

² *Amex Bank of Canada v. Adams*, [2014] 2 SCR 787, 2014 SCC 56 (CanLII) Доступно по ссылке: <https://www.canlii.org/en/ca/scc/doc/2014/2014scc56/2014scc56.html#> (дата обращения: 26.05.2026 г.).

³ Financial Services Bill, 19 November 2009 Парламент Соединенного королевства: Доступно по ссылке: <http://www.publications.parliament.uk/pa/cm200910/cmbills/006/2010006.pdf>. (дата обращения: 26.05.2026 г.).

⁴ Consumer Rights Act 2015. Printed in the UK by The Stationery Office Limited under the authority and superintendence of Carol Tullo, Controller of Her Majesty’s Stationery Office and Queen’s Printer of Acts of Parliament. Национальный архив Правительства Ее Величества королевы Великобритании и Правительства Северной Ирландии и Шотландии. Доступно по ссылке: http://www.legislation.gov.uk/ukpga/2015/15/pdfs/ukpga_20150015_en.pdf.

⁵ Market Practices and Consumer Protection Act 6 APRIL 2010 // Европейская комиссия: сайт. Доступно по ссылке: <https://webgate.ec.europa.eu/ucp/public/index.cfm?event=public.country.viewFile&lawID=91&languageID=EN> (дата обращения: 26.05.2026 г.).

⁶ Code of Economic Law // Федеральное правительство Бельгии: Доступно по ссылке: http://economie.fgov.be/en/binaries/0-03_FR_tcm327-56403.pdf. (дата обращения: 26.05.2026 г.).

марта 2014 года в Кодекс экономического права был введен новый раздел под названием “Действия коллективного возмещения ущерба”, регулирующий процесс подачи коллективных исков¹.

В Германии процедура подача коллективных исков предусматривает исключительную подсудность для исков, основываясь на вреде, причиненном:

1) ложными или вводящими в заблуждение сведениями, связанными с привлечением общественного капитала, информацией о рынке, или если

2) убытки, претензии связаны с использованием информации или недостаточным разъяснением положений такой информации или

3) претензии по договору, регулируемому Законом о приобретении и отчуждении ценных бумаг в порядке, установленном Модельным законом о рынке капиталов².

Проведенный анализ показывает, что практика рассмотрения коллективных исков, направленных на защиту неопределенного круга потребителей, на сегодняшний день активно внедряется даже в тех странах, где ранее такие механизмы не применялись. В связи с этим представляется целесообразным адаптировать данный подход для разрешения споров между потребителями финансовых услуг и финансовыми организациями в армянской правовой системе. Это обеспечит упрощение процедуры разрешения споров, поскольку суду не потребуется устанавливать, что условия договора, заключаемого сетью филиалов одной организации, нарушают права потребителей. Это обусловлено тем, что филиалы используют единый типовый договор, утвержденный головной организацией, текст которого одинаков для всей сети.

6. Заключение

Проведенный комплексный анализ теоретических основ и правоприменительной практики позволяет сделать вывод о необходимости системной модернизации гражданского законодательства Республики Армения с целью перехода от жесткой дихотомии к многоуровневой и гибкой модели защиты прав. В целях устранения доктринальных противоречий и нормативных пробелов предлагаются следующие законодательные новеллы:

1. Ввести категорию “гибридных форм защиты”, сочетающих элементы государственного регулирования и частной инициативы (например, третейское

¹ Act of 19 April 2014 on the introduction of Book VII “Payment Services and Credit” Code of Economic Law
Доступно по ссылке:

<http://www.stibbe.com/~media/3%20news/newsletters/brussels/emir%20directive/act%20introducing%20book%20vii%20code%20of%20economic%20law%20on%20payment%20services%20and%20credit.pdf> (дата

обращения: 26.05.2026 г.).

² Capital Markets Model Case Act of 19 October 2012 (Federal Law Gazette I, p. 2182), last amended by Article 3 of the Act of 4 July 2013 // Federal Law Gazette I. P. 1981.

разбирательство, нотариат), что позволяет устранить доктринальные споры и учесть их промежуточный характер.

2. Пересмотреть п. 1 ст. 13 ГК РА, исключив императивность указания суда или арбитражного трибунала как единственных органов защиты, и дополнить норму упоминанием гибридных и цифровых форм (медиация, третейское разбирательство, ИИ-процедуры).

3. Расширить ГК РА перечнем современных форм защиты (самозащита, меры оперативного воздействия, медиация, нотариальные действия) с определением их правовой природы и условий применения.

4. В ст. 16 ГК РА закрепить самозащиту как форму защиты, а конкретные действия (удержание имущества, отказ от исполнения обязательства) – как способы ее реализации.

5. Закрепить общий принцип, согласно которому потребитель, как экономически и информационно уязвимая сторона гражданского правоотношения, нуждается в специальной процессуальной защите. Автор доказывает целесообразность переноса бремени доказывания на кредитную организацию, которая обязана подтвердить отсутствие нарушений при заключении и исполнении договора банковских услуг. Это позволит выровнять процессуальный баланс сторон и существенно повысить уровень защиты прав потребителей.

6. Имплементация института коллективных исков в правовую систему Республики Армения для защиты прав неопределенного круга потребителей финансовых услуг. Внедрение данного института позволит оптимизировать судебное рассмотрение однотипных споров с финансовыми организациями, устранить необходимость повторного установления нарушений в унифицированных типовых договорах и обеспечить более эффективную реализацию принципа защиты прав потребителей в условиях их массовой экономической и информационной уязвимости.

Выдвинутые предложения поспособствуют обеспечению и применению на практике принципа эффективного разрешения споров между потребителями банковских услуг и финансовыми организациями.

Список использованных источников

1. Европейская конвенция о защите прав человека и основных свобод (измененная и дополненная Протоколами № 11 и № 14, вступившими в силу 1 июня 2010 года) (п. 1 ст. 6).
2. Конституция Республики Армения от 06.12.2015 (ч. 1 ст. 61).
3. Гражданский процессуальный кодекс от 09.02.2018 г. (с посл. измн. от 11.04.2024).
4. Закон РА “О коммерческом арбитраже” от 22.01.1997 г. (с посл. измн. от 25.03.2026).
5. Закон РА “О нотариате” от 04.12.2001 (с посл. измн. от 11.04. 2024 г.).

6. Постановление Конституционного Суда РА от 28.11.2007 по делу № ПКС-719.
7. Решение Апелляционного Суда РА от 16.10.2023 по гражданскому делу № ՍՉԴ2/0082/02/23.
8. Руководящие принципы для защиты интересов потребителей (Резолюция Генеральной Ассамблеи ООН № 39/248 от 16 апреля 1985 года в редакции 2015 года).
9. Рекомендации Совета ОЭСР относительно повышения финансовой грамотности. Доступно по ссылке: <https://legalinstruments.oecd.org/api/download/?name=OECD-LEGAL-0461+-+Russian+%28as+adopted+on+29102020%29.pdf&uri=%2Fpublic%2F907c5a13-2600-455c-844c-8dd388781c28.pdf> (дата обращения: 21.05.2026).
10. Указ Президента Российской Федерации от 10.10.2019 № 490 “О развитии искусственного интеллекта в РФ” // Собрание законодательства РФ. 2019.
11. Постановление Пленума Верховного Суда РФ от 28.06.2012 № 17 “О рассмотрении судами гражданских дел по спорам о защите прав потребителей”.
12. Обзор судебной практики Верховного Суда РФ по отдельным вопросам судебной практики о применении законодательства о защите прав потребителей при рассмотрении гражданских дел (утв. Президиумом Верховного Суда РФ 01.02.2012) // Бюллетень Верховного Суда РФ. 2012. № 4.
13. Постановление Конституционного Суда РФ от 23.02.1999 № 4-П по делу о проверке конституционности положения части второй статьи 29 Федерального закона “О банках и банковской деятельности” // Вестник Конституционного Суда РФ. 1999. № 3.
14. Определение Судебной коллегии по гражданским делам Верховного Суда РФ от 07.02.2017 № 5-КГ16-228.
15. Zivilprozessordnung (ZPO) [Гражданский процессуальный кодекс Германии]. Paragraph 114. Доступно по ссылке: https://www.gesetze-im-internet.de/zpo/_114.html (дата обращения: 21.05.2026).
16. Consumer Rights Act 2015 (UK). Printed by The Stationery Office Limited. National Archives of Her Majesty’s Government. Доступно по ссылке: http://www.legislation.gov.uk/ukpga/2015/15/pdfs/ukpga_20150015_en.pdf.
17. Market Practices and Consumer Protection Act of 6 April 2010 (Belgium) // European Commission Database. Доступно по ссылке: <https://webgate.ec.europa.eu/ucp/public/index.cfm?event=public.country.viewFile&lawID=91&languageID=EN> (дата обращения: 22.01.2025).
18. Code of Economic Law (Belgium) // Federal Government of Belgium. Доступно по ссылке: http://economie.fgov.be/en/binaries/0-03_FR_tcm327-56403.pdf (дата обращения: 22.01.2025).

19. Act of 19 April 2014 on the introduction of Book VII "Payment Services and Credit" Code of Economic Law (Belgium). Доступно по ссылке:

<http://www.stibbe.com/~media/3%20news/newsletters/brussels/emir%20directive/act%20introducing%20book%20vii%20code%20of%20economic%20law%20on%20payment%20services%20and%20credit.pdf> (дата обращения: 22.01.2025).

20. Capital Markets Model Case Act of 19 October 2012 (KapMuG, Germany) // Federal Law Gazette I, p. 2182, last amended by Article 3 of the Act of 4 July 2013 // Federal Law Gazette I, p. 1981.

21. **Артемяева Ю.А., Ермакова Е.П., Ковыршина Н.А., Русакова Е.П.** Способы разрешения споров в разнотипных правовых системах: монография. - М.: Инфотропик Медиа, 2017. - С. 424.

22. **Байбак В.В., Иванов О.М., Карапетов А.Г.** [и др.] Заем, кредит, факторинг, вклад и счет: постатейный комментарий к статьям 807-860.15 Гражданского кодекса Российской Федерации / отв. ред. А. Г. Карапетов. - М.: М-Логос, 2019.

23. **Баринов Н.А.** О порядке и способах защиты гражданских прав (становление и тенденции развития) // Вестник Саратовской государственной юридической академии. 2014. № 3 (98). - С. 12-17.

24. **Блохина О.Ю.** Процессуальные особенности рассмотрения судами дел о защите прав потребителей: автореф. дис. ... канд. юрид. наук: 12.00.03. Тверь, 1999. - С. 24.

25. Большая юридическая энциклопедия / сост. В.В. Аванесян и др. - М.: ИНФРА-М, 1999.

26. **Бычков А.** Индустрия развлечений: споры с потребителями, заказчиками и конкурентами // Новая бухгалтерия. 2017. № 12.

27. Гражданское право. Ч. 1: учебник / под ред. Ю.К. Толстого, А.П. Сергеева. М.: Проспект, 1999. - С. 242-243.

28. **Дернбург Г.** Пандекты. Т. 1: Общая часть / под ред. П. Соколовского. М.: Университетская типография, 1906. - С. 342.

29. **Карапетов А.Г.** Основные положения гражданского права: комментарий к статьям 1-16.1 Гражданского кодекса Российской Федерации. - М.: М-Логос, 2020. - С. 895.

30. **Конин В.В.** Право на защиту: некоторые теоретические вопросы // Российская юстиция. 2013. № 4. - С. 34-36.

31. **Кузбагаров А.Н.** Примирение сторон по конфликтам частноправового характера: монография. СПб.: Издательство Санкт-Петербургского университета, 2010. С 184.

32. **Мартынов А.В.** К вопросу о возможности компенсации гражданско-правовых убытков, возникающих в результате совершения административного правонарушения // Актуальные проблемы предпринимательского и корпоративного права в России и за рубежом: сб. научно-практ. ст. II Междунар. науч.-практ. конф. (22 апреля 2015 года,

г.Москва) / под общ. ред. С.Д. Могилевского, М.А. Егоровой. - М.: Юстицинформ, 2015. - С. 2114.

33. **Шаповалова Е.В.** Информация в системе объектов гражданских прав // Законы России: опыт, анализ, практика. 2008. № 5. - С. 91-96.

34. Юридический энциклопедический словарь / под ред. М.Ю. Тихомирова. - М.: ИНФРА-М, 2000. - С. 447.

35. *Amex Bank of Canada v. Adams*, [2014] 2 SCR 787, 2014 SCC 56 (CanLII). Доступно по ссылке: <https://www.canlii.org/en/ca/scc/doc/2014/2014scc56/2014scc56.html> (дата обращения: 22.01.2025).

36. **Bentley D.** Collective actions are not as common in Europe as they are in the US but this may be about to change // International Bar Association Journal. Доступно по ссылке: <http://www.ibanet.org/Article/Detail.aspx?ArticleUid=1EC51981-CFB6-43D3-ADEBDD756FC7DF84> (дата обращения: 22.01.2025).

37. **Boularbah H.** Proposed rules on collective actions under Belgian law // Litigation Corporate & Finance. July 2013. pp. 12-19.

38. European Commission RECOMMENDATION on common principles for injunctive and compensatory collective redress mechanisms in the Member States concerning violations of rights granted under Union Law. Strasbourg, C (2013) 3539/3 // European Commission Archive.

39. **Fairgrieve D., Howells G.** Collective Redress Procedures – European Debates // International and Comparative Law Quarterly. 2009. Vol. 58, Issue 2. pp. 379–397.

40. Financial Services Bill, 19 November 2009 // Parliament of the United Kingdom.

41. General principles for the use of Artificial Intelligence in the financial sector. Amsterdam: De Nederlandsche Bank (DNB) Report, 2019.

42. **Hodges C.** Current discussions on consumer redress: collective redress and ADR // ERA Forum. 2012. Vol. 13, Issue 1. pp. 11-33. 45. *Kreuz v. Poland*, Application no. 28249/95, Judgment of 19 June 2001 // HUDOC – European Court of Human Rights.

43. *Kravchenko v. Russia*, Application no. 34615/02, Judgment of 2 April 2009 // HUDOC – European Court of Human Rights.

44. **Schurr F.A.** The relevance of the European consumer protection Law for the development of the European Contract Law // Victoria University of Wellington Law Review. 2007. Vol. 38, No. 1. pp. 131-143.

45. *Stafan v. Croatia*, Application no. 29660/03, Judgment of 14 October 2008 // HUDOC – European Court of Human Rights.

46. **Tzankova I., Kortmann J.** Remedies for consumers of financial services: collective redress and improvement of class representation // Revue européenne de droit de la consommation (European Journal of Consumer Law). 2010. No. 2. pp. 117-141.

**ԲԱՆԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ
ՍՊԱՌՈՂՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՅՈՒՐԻՍՊԻԿՑԻՈՆ
ԵՎ ՈՉ ՅՈՒՐԻՍՊԻԿՑԻՈՆ ՁԵՎԵՐԸ:**

**ՀԱՍԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ, ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏԵՍԱԿԱՆ
ԱՍՊԵԿՏՆԵՐԸ**

Ամփոփագիր

Սույն հոդվածը նվիրված է բանկային ծառայությունների ոլորտում սպառողների իրավունքների պաշտպանության յուրիսդիկցիոն և ոչ յուրիսդիկցիոն ձևերի հայեցակարգային և գործնական հիմնախնդիրների վերլուծությանը Հայաստանի Հանրապետության օրենսդրության և դոկտրինալ մոտեցումների համատեքստում: Հետազոտության նպատակն է վեր հանել քաղաքացիական իրավունքների պաշտպանության ավանդական երկատվածության սահմանափակումները ժամանակակից թվայնացման և այլընտրանքային մեխանիզմների զարգացման պայմաններում: Հոդվածում մանրամասն քննության են ենթարկվում դատական, վարչական, ինչպես նաև ինքնապաշտպանության և օպերատիվ ներգործության միջոցների իրավական բնույթը: Հատուկ ուշադրություն է դարձվում արբիտրաժի, հաշտարարության, նոտարիատի և արհեստական բանականության տեխնոլոգիաների կիրառման իրավական կարգավիճակին: Վերլուծության արդյունքում հիմնավորվում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքում «հիբրիդային» և «թվային» պաշտպանության ձևերի ներդրման անհրաժեշտությունը, ինչպես նաև առաջարկվում է օրենսդրորեն ամրագրել սպառողի՝ որպես պայմանագրային հարաբերությունների տնտեսապես թույլ կողմի պաշտպանության հիմնարար սկզբունքը և կոլեկտիվ հայցերի ինստիտուտը ֆինանսական ոլորտում:

Հիմնաբառեր. սպառողների իրավունքների պաշտպանություն, յուրիսդիկցիոն ձև, ոչ յուրիսդիկցիոն ձև, ինքնապաշտպանություն, արբիտրաժ, հաշտարարություն, արհեստական բանականություն:

JURISDICTIONAL AND NON-JURISDICTIONAL FORMS OF PROTECTION OF CONSUMER RIGHTS IN BANKING SERVICES: CONCEPT, CHARACTERISTICS AND THEORETICAL ASPECTS

Annotation

This article is devoted to the analysis of the conceptual and practical problems of jurisdictional and non-jurisdictional forms of protection of consumer rights in banking services within the framework of the legislation and legal doctrine of the Republic of Armenia. The purpose of the study is to identify the limitations of the traditional dichotomy of civil rights protection forms in the context of digitalization and the development of alternative dispute resolution mechanisms. The article examines in detail the legal nature of judicial and administrative protection, as well as the specifics of self-defense and measures of operational impact. Special attention is paid to the specific legal status of arbitration, mediation, notary, and Artificial Intelligence technologies. Based on the analysis, the author substantiates the necessity of modernizing the Civil Code of the Republic of Armenia by introducing the categories of "hybrid" and "digital" forms of protection, legally anchoring the principle of consumer protection as the economically weaker party to the contract, and developing the institution of class actions in the financial sector of the Republic of Armenia.

Keywords: consumer rights protection, jurisdictional form, non-jurisdictional form, self-defense, arbitration, mediation, artificial intelligence.

Հոդվածը հանձնված է խմբագրություն 26.05.2026 թ., տրվել է գրախոսության 27.05.2026 թ., ընդունվել է տպագրության 18.06.2026 թ.:



DOI: 10.59560/18291155-2026.2-33

ԱԼԵՔՍԱՆԴՐ ԿՈՉՈՒՔԱԵՎ

«Կոնյորա» իրավաբանական ընկերության
Քրեական պաշտպանության
դեպարտամենտի ղեկավար,
ՀՀ Փաստաբանական պալատի անդամ,
փաստաբան,
իրավաբանական գիտությունների թեկնածու,
Հայաստանի եվրոպական համալսարանի
հանրային և միջազգային ամբիոնի դասախոս

**ՔՐԵԱԿԱՆ ԵՆԹԱՄՇԱԿՈՒՅԹԻ ՔՐԵԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

Ամփոփագիր

Սույն հետազոտության նպատակը քրեական ենթամշակույթի քրեականացման իրավական հիմքերի համալիր ուսումնասիրությունն է, մասնավորապես՝ ՀՀ քրեական օրենսգրքի 322-325-րդ հոդվածներով սահմանված իրավական կարգավորումների վերլուծությունը՝ դրանց համապատասխանությունը քրեական իրավունքի հիմնարար սկզբունքներին գնահատելու և իրավակիրառ պրակտիկայում առաջացող խնդիրները բացահայտելու նպատակով: Նշված նպատակի իրագործման համար աշխատանքում առաջադրվում են հետևյալ գիտական խնդիրները.

ա. ուսումնասիրել քրեական ենթամշակույթի հասկացությունը և դրա հիմնական տարրերը,

բ. վերլուծել քրեական ենթամշակույթի քրեականացված իրավական կարգավորումները ՀՀ քրեական օրենսգրքում,

գ. բացահայտել քրեական ենթամշակույթի հետ կապված քրեաիրավական նորմերի կիրառման ընթացքում առաջացող իրավական որոշակիության խնդիրները,

դ. ուսումնասիրել քրեական ենթամշակույթի քրեականացման վերաբերյալ դատական պրակտիկայում ձևավորված իրավական դիրքորոշումները,

ե. կատարել համեմատական վերլուծություն այլ պետությունների, մասնավորապես Վրաստանի, օրենսդրական փորձի հետ,

զ. առաջարկել քրեական ենթամշակույթի քրեականացման իրավական կարգավորման կատարելագործման հնարավոր ուղղություններ:

Հիմնաբառեր. մշակույթ, քրեական ենթամշակույթ, «գողական աշխարհ», կազմակերպված հանցավորություն, քրեական պատասխանատվություն, իրավական որոշակիության սկզբունք, քրեական աստիճանակարգություն, իրավակիրառ պրակտիկա, քրեական հեղինակություն:

Վերջին տարիներին ՀՀ-ում քրեական քաղաքականության կարևոր ուղղություններից մեկը դարձել է կազմակերպված հանցավորության և դրա սոցիալական հիմքերի դեմ պայքարը: Այդ քաղաքականության շրջանակում օրենսդիրը պատասխանատվություն է սահմանել քրեական ենթամշակույթի հետ կապված մի շարք գործողությունների համար, մասնավորապես՝ քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ ստանալու, տալու կամ պահպանելու, քրեական ենթամշակույթ կրող խմբավորում ստեղծելու կամ ղեկավարելու, նման խմբավորմանը մասնակցելու, ինչպես նաև քրեական հեղինակության ազդեցությունը օգտագործելու նպատակով նրան դիմելու համար (ՀՀ քրեական օրենսգրքի 322-325-րդ հոդվածներ): Նշված իրավական կարգավորումները նպատակ ունեն սահմանափակել քրեական ենթամշակույթի ազդեցությունը հասարակական հարաբերությունների վրա և կանխել հանցավոր խմբերի ձևավորումը ու դրանց գործունեությունը:

Քրեաբանական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ քրեական ենթամշակույթը հանդիսանում է հանցավոր միջավայրի կազմակերպման կարևոր գործոն՝ փոխանցելով հանցավոր ավանդույթները, վարքագծի կանոնները և արժեքները նոր անդամներին, ապահովելով հանցավոր խմբերի ներքին կարգավորումը և կայունությունը¹: Միաժամանակ քրեական ենթամշակույթն ունի նաև կարևոր սոցիալական վտանգավորություն. այն նպաստում է հանցավոր փորձի փոխանցմանը, ձևավորում է հակասոցիալական արժեքային համակարգ և խոչընդոտում է անձանց բնական սոցիալականացման գործընթացին²: Այս հանգամանքները հիմնավորում են պետության միջամտության և նման երևույթների նկատմամբ քրեաիրավական արձագանքի անհրաժեշտությունը: Այս ամենով հանդերձ, քրեական ենթամշակույթի քրեականացումը առաջացրել է մի շարք տեսական և գործնական խնդիրներ, որոնք իրավակիրառ պրակտիկայում և դոկտրինայի հարթությունում ստացել են ոչ միանշանակ կարգավորումներ:

¹ Тулегенов В.В. Криминальная субкультура: понятие, структура и соотношение со смежными понятиями // Вестник АГТУ. 2005. № 5 (28), 220–221 էջեր:

² Хисамутдинов Ф.Р., Шалагин А.Е. Криминальная субкультура и ее предупреждение // Вестник Казанского юридического института МВД России. 2015. № 2 (20), 46–48 էջեր:

ՀՀ քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածներում օգտագործվում են այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են «քրեական ենթամշակույթ կրող խմբավորում», «օրենքով գող», «քրեական հեղինակություն», «քրեական ենթամշակույթի կանոններ», որոնք իրավական համակարգում չունեն հստակ սահմանումներ և չեն բացահայտվում որևէ նորմատիվ իրավական ակտում:

Քրեական իրավունքի հիմնարար սկզբունքներից է իրավական որոշակիության պահանջը, համաձայն որի քրեական օրենքը պետք է լինի բավարար չափով հստակ և կանխատեսելի, որպեսզի անձը կարողանա հասկանալ իր վարքագծի իրավական հետևանքները և համապատասխանեցնել այն օրենքի պահանջներին: Երբ քրեական պատասխանատվության հիմքում դրվում են սոցիալական երևույթներ կամ ոչ ֆորմալ կանոններ, որոնք նորմատիվ ամրագրում չունեն, առաջանում է վտանգ, որ քրեական իրավունքի կիրառումը կարող է դառնալ չափազանց լայն կամ անորոշ: Վերոգրյալ հանգամանքները պայմանավորում են ընտրված թեմայի արդիականությունը և անհրաժեշտությունը՝ ուսումնասիրելու քրեական ենթամշակույթի քրեականացման իրավական հիմքերը, դրանց համապատասխանությունը իրավական որոշակիության սկզբունքին, ինչպես նաև բացահայտելու իրավակիրառ պրակտիկայում առաջացող խնդիրները:

Քրեական ենթամշակույթի հասկացությունը բացահայտելու համար նախ անհրաժեշտ է անդրադառնալ «մշակույթ» և «ենթամշակույթ» հասկացություններին, որոնք հանդիսանում են տվյալ երևույթի տեսական հիմքը: Մշակույթը մասնագիտական գրականության մեջ դիտվում է որպես հասարակության կողմից ձևավորված արժեքների, նորմերի, վարքագծի կանոնների, ավանդույթների և խորհրդանիշների ամբողջություն, որոնք կարգավորում են մարդկանց փոխհարաբերությունները և հասարակական կյանքի կազմակերպումը^{1,2}: Մշակույթը հանդիսանում է հասարակության զարգացման կարևորագույն գործոններից մեկը և արտացոլում է տվյալ հասարակության արժեքային համակարգը, սոցիալական փորձը և պատմական ավանդույթները: Միաժամանակ մշակույթը միատարր համակարգ չէ: Հասարակության ներսում գոյություն ունեն տարբեր սոցիալական խմբեր, որոնք կարող են ունենալ վարքագծի, արժեքների և ավանդույթների առանձնահատուկ համակարգեր: Այս երևույթը բնորոշվում է «ենթամշակույթ» հասկացությամբ:

Սոցիոլոգիական իմաստով, ենթամշակույթը որոշակի սոցիալական խմբին բնորոշ արժեքների, նորմերի, վարքագծի ձևերի և կենսակերպի համակարգ է, որը

¹ Parsons, T. The Social System. New York: Free Press, 1951, 6–30 էջեր:

² Универсальный энциклопедический словарь / Гл. ред. А.М. Прохоров. – М.: Большая российская энциклопедия, 2002, 1249 էջ:

որոշ չափով տարբերվում է հասարակության գերիշխող մշակույթից, սակայն միաժամանակ գտնվում է դրա ազդեցության ներքո¹:

Կրիմինոլոգիական տեսանկյունից ենթամշակույթները կարող են ձևավորվել նաև այնպիսի սոցիալական խմբերում, որոնց վարքագիծը հակասում է (կամ պետք է հակասի) հասարակության ընդունված արժեքներին և իրավական նորմերին: Այդպիսի դեպքերում մասնագիտական գրականության մեջ քրեական ենթամշակույթը բնորոշվում է որպես հանցավոր միջավայրում ձևավորված արժեքների, ավանդույթների, սովորույթների և վարքագծի ոչ ֆորմալ կանոնների համակարգ, որը կարգավորում է հանցավոր խմբերի անդամների միջև հարաբերությունները և ապահովում է նրանց գործունեության կազմակերպվածությունը²: Այստեղ կարիք կա անդրադառնալ «պետք է հակասեն» ձևակերպմանը: Քրեական ենթամշակույթը հասարակության կողմից միշտ չէ, որ ընկալվում է բացառապես բացասական: Որոշ սոցիալական միջավայրերում այն կարող է մասամբ ռոմանտիզացվել կամ ընկալվել որպես յուրատեսակ «այլընտրանքային արդարության» համակարգ, ինչը պայմանավորված է տվյալ ենթամշակույթի ներկայացուցիչների նկատմամբ ձևավորված հեղինակությամբ, ինչպես նաև մեդիայի ազդեցությամբ³: Կրիմինոլոգիական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ հատկապես հետխորհրդային հասարակություններում «գողական աշխարհի» հետ կապված պատկերացումները երբեմն ունեն դրական ընկալումներ հասարակության որոշ խմբերի շրջանում: Նման իրավիճակը պայմանավորված է նրանով, որ քրեական ենթամշակույթը պատմականորեն ձևավորել է վարքագծի սեփական կանոններ, որոնք որոշ դեպքերում ընկալվել են որպես «արդարության» կամ «պատվավոր վարքագծի» յուրահատուկ համակարգ⁴: Հետևաբար, երբ խոսում ենք քրեական ենթամշակույթի և հասարակական ընկալումների մասին, պնդումը, որ քրեական ենթամշակույթի նորմերը հակասում են հասարակական ընդունելի նորմերին վիճահարույց է:

Մի շարք հետազոտողների կարծիքով քրեական ենթամշակույթը հանդիսանում է յուրատեսակ սոցիալական համակարգ, որը ներառում է ոչ միայն վարքագծի կանոններ, այլև արժեքային համակարգ, խորհրդանիշներ, հաղորդակցության առանձնահատուկ ձևեր և հիերարխիկ կառուցվածք: Այդ համակարգը նպաստում է հանցավոր խմբերի համախմբմանը և նրանց գործունեության կայունությանը:

¹ **Cohen, A.K.** Delinquent Boys: The Culture of the Gang. New York: Free Press, 1955, 12–15 էջեր:

² **Пирожков В.Ф.** Законы преступного мира молодежи (криминальная субкультура). – Тверь: Приз, 1994, 47–49 էջեր:

³ **Олейник А.Н.** «Жизнь по понятиям»: институциональный анализ повседневной жизни российского общества // Полис. 2001 թ. №2, 41–44 էջեր:



Վերջինս հանդիսանում է հանցավոր միջավայրի կարևոր կազմակերպիչ գործոն¹: Այն ապահովում է հանցավոր խմբերի ներքին կարգավորումը, փոխանցում է հանցավոր փորձը և ավանդույթները նոր անդամներին և ձևավորում է վարքագծի այնպիսի նորմեր, որոնք հակասում են (պետք է հակասեն) հասարակության իրավական և բարոյական արժեքներին: Քրեական ենթամշակույթի կարևոր առանձնահատկություններից մեկն այն է, որ դրա նորմերը չեն ամրագրվում որևէ գրավոր կամ նորմատիվ աղբյուրում: Դրանք փոխանցվում են ոչ ֆորմալ ճանապարհով՝ սոցիալական միջավայրի ներսում ձևավորված ավանդույթների, սովորույթների և հաղորդակցության միջոցով: Այդ պատճառով քրեական ենթամշակույթը հաճախ բնութագրվում է որպես յուրատեսակ «գաղտնի գիտելիք», որը հասանելի է միայն տվյալ միջավայրի անդամներին²: Միաժամանակ քրեական ենթամշակույթն ունի հստակ կառուցվածքային տարրեր, որոնց թվում սովորաբար առանձնացվում են՝ արժեքային համակարգը, վարքագծի ոչ ֆորմալ կանոնները, ավանդույթներն ու ծեսերը, դաջվածքները, հիերարխիկ հարաբերությունները, հաղորդակցության առանձնահատուկ միջոցները (ժարգոն, խորհրդանիշներ և այլն): Նշված տարրերը ձևավորում են այն սոցիալական միջավայրը, որի շրջանակներում տեղի է ունենում հանցավոր գործունեության կազմակերպումը և վերարտադրությունը: Այսպիսով, քրեական ենթամշակույթը սոցիալական բարդ երևույթ է, որը ձևավորվում է հանցավոր միջավայրում և ներառում է արժեքների, վարքագծի կանոնների և ավանդույթների ամբողջություն՝ ուղղված հանցավոր գործունեության կազմակերպմանը և պահպանմանը:

Հանցավոր միջավայրում ձևավորված արժեքների և վարքագծի համակարգը բնութագրելու համար կիրառվում են տարբեր տերմիններ: Առավել տարածված են «քրեական ենթամշակույթ» և «հանցավոր ենթամշակույթ» հասկացությունները: Չնայած դրանք հաճախ օգտագործվում են որպես հոմանիշներ, սակայն գիտական տեսանկյունից դրանց միջև հնարավոր է նկատել որոշակի տարբերություններ: «Քրեական ենթամշակույթ» հասկացությունը առավելապես կիրառվում է կրիմինոլոգիական գրականության մեջ և ընդգծում է այն հանգամանքը, որ տվյալ ենթամշակույթը ձևավորվում է քրեական միջավայրում և կապված է հանցավոր գործունեությամբ զբաղվող անձանց սոցիալական հարաբերությունների հետ³: Միաժամանակ մի շարք հեղինակներ օգտագործում են «հանցավոր ենթամշակույթ» հասկացությունը՝ շեշտադրելով այն հանգամանքը, որ տվյալ ենթամշակույթի

¹ **Орецкий Д.А., Тулегенов В.В.** Криминальная субкультура: понятие, структура и соотношение со смежными понятиями // Вестник АГТУ. 2005. № 5 (28). 220–222 էջեր:

² **Олейник А.Н.** «Жизнь по понятиям»: институциональный анализ повседневной жизни российского общества // Полис. 2001. № 2. 40–44 էջ:

³ **Тулегенов В.В.** Криминальная субкультура: понятие, структура и соотношение со смежными понятиями // Вестник АГТУ. 2005. № 5 (28), 220–221 էջեր:

արժեքներն ու վարքագծի կանոնները հակասում են հասարակության իրավական և բարոյական նորմերին և ուղղված են հանցավոր գործունեության կազմակերպմանը կամ աջակցմանը¹: Այս մոտեցումը առավել ճշգրիտ է ընդգծում տվյալ երևույթի հակասոցիալական բնույթը և դրա կապը հանցագործությունների կատարման հետ:

Մասնագիտական գրականության մեջ առաջարկվել է տվյալ երևույթը բնորոշել նաև որպես **«գողական աշխարհ»**: Այս տերմինը հատկապես տարածված է հետխորհրդային երկրների քրեաբանական և իրավական ուսումնասիրություններում և արտացոլում է ոչ միայն հանցավոր գործունեության շրջանակում ձևավորված հարաբերությունները, այլև դրանց սոցիալական ինստիտուցիոնալացումը՝ սեփական նորմերով, ավանդույթներով և հեղինակային համակարգով: Այստեղ առաջարկում է կիրառել «գողական աշխարհ» եզրույթը՝ այն հիմնավորմամբ, որ այն առավել ամբողջական կերպով է արտացոլում տվյալ երևույթի իրական բնույթը՝ որպես ինքնուրույն սոցիալական միջավայր, որն ունի ներքին կանոնակարգ, հիերարխիա և վարքագծի պարտադիր նորմեր²: Հեղինակի կարծիքով «գողական աշխարհ» հասկացությունը առավել համարժեք է, քանի որ այն ընդգրկում է ոչ միայն ենթամշակութային տարրերը (արժեքներ, նորմեր, խորհրդանիշներ), այլև դրանց հիման վրա ձևավորված սոցիալական հարաբերությունների ամբողջ համակարգը, այդ թվում՝ ոչ ֆորմալ իշխանության ինստիտուտները, վեճերի կարգավորման մեխանիզմները և տնտեսական բաղադրիչները: Այս իմաստով «գողական աշխարհը» դիտարկվում է որպես համեմատաբար փակ սոցիալական համակարգ, որը գործում է պետության իրավակարգից անկախ կամ նույնիսկ դրան հակադիր տրամաբանությամբ:

Միևնույն ժամանակ, նշված տերմինի կիրառումը իրավական գիտության մեջ պետք է ունենա որոշակի սահմանափակումներ: Այն, լինելով առավելապես խոսակցական և սոցիալ-մշակութային բնույթի, չի ապահովում բավարար իրավական որոշակիություն և կարող է տարբեր կերպ մեկնաբանվել իրավակիրառ պրակտիկայում: Այդ պատճառով մի շարք հետազոտողներ նախապատվությունը տալիս են «հանցավոր ենթամշակույթ» եզրույթին, որը, պահպանելով երևույթի սոցիալական բնութագրումը, միաժամանակ ավելի հստակ ընդգծում է դրա հակաիրավական և հակասոցիալական ուղղվածությունը: Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ թեև «գողական աշխարհ» հասկացությունը կարևոր դեր ունի քրեական ենթամշակույթի սոցիալական բնույթի բացահայտման գործում, սակայն իրավական կարգավորման և նորմատիվ ամրագրման տեսանկյունից առավել

¹ Пирожков В.Ф. Законы преступного мира молодежи (криминальная субкультура). – Тверь: Приз, 1994, 45–47 էջեր:

² Բաբախանյան Ա.Ա., Քրեական ենթամշակույթի առանձնահատկությունները և դրա ազդեցությունը հանցավորության վրա: Սեղմագիր: Երևան, 2022, էջ 12–15:

նպատակահարմար է կիրառել «հանցավոր ենթամշակույթ» եզրույթը, որը ապահովում է ավելի բարձր աստիճանի իրավական որոշակիություն և համապատասխանություն քրեական իրավունքի սկզբունքներին:

Տերմինաբանական այս տարբերությունը կարևոր նշանակություն ունի նաև իրավական կարգավորման տեսանկյունից: Քրեական իրավունքում օգտագործվող հասկացությունները պետք է լինեն առավելագույնս հստակ, միանշանակ և միասնական, քանի որ դրանցից կախված է քրեական պատասխանատվության շրջանակը: Այդ պատճառով անհրաժեշտ է գնահատել, թե օրենսդրական մակարդակում նպատակահարմար է կիրառել «քրեական ենթամշակույթ» տերմինը, թե առավել ճիշտ կլինի օգտագործել «հանցավոր ենթամշակույթ» հասկացությունը, որը կարող է ավելի հստակ արտահայտել տվյալ երևույթի հակասոցիալական բնույթը: Միաժամանակ հարկ է նկատել, որ ՀՀ քրեական օրենսգրքի գործող կարգավորումներում օգտագործվում է «քրեական ենթամշակույթ» ձևակերպումը, ինչը փաստում է, որ օրենսդիրը նախընտրել է այդ տերմինը: Սակայն տվյալ հասկացության բովանդակությունը օրենքում բացահայտված չէ, ինչը իրավակիրառ պրակտիկայում առաջացնում է մի շարք խնդիրներ՝ կապված տվյալ երևույթի սահմանների և դրա տարրերի որոշման հետ: Ուստի քրեական ենթամշակույթի քրեականացման իրավական կարգավորման կատարելագործման շրջանակներում նպատակահարմար է նաև անդրադառնալ օգտագործվող տերմինաբանության հստակեցման հարցին՝ գնահատելով «քրեական ենթամշակույթ» և «հանցավոր ենթամշակույթ» հասկացությունների կիրառման նպատակահարմարությունը:

Քրեական ենթամշակույթի ուսումնասիրության կարևոր ուղղություններից մեկը դրա ներքին կառուցվածքի և գործառույթների բացահայտումն է: Քրեական ենթամշակույթը ձևավորում է հարաբերականորեն կայուն սոցիալական միջավայր, որի շրջանակներում ձևավորվում են ոչ ֆորմալ նորմեր, կարգավիճակներ և հաղորդակցության առանձնահատուկ ձևեր: Այդ միջավայրում ձևավորվող կանոնները կատարում են կարգավորիչ դեր՝ սահմանելով հանցավոր խմբերի անդամների վարքագծի ընդունելի և անընդունելի ձևերը¹: Քրեական ենթամշակույթը բնութագրվում է հստակ արտահայտված կառուցվածքային տարրերով: Դրանցից հիմնականներն են արժեքային համակարգը, խմբային նորմերը, հանցավոր միջավայրին բնորոշ ավանդույթները, ինչպես նաև սոցիալական հիերարխիայի համակարգը: Այդ տարրերի համադրությունը ստեղծում է ինքնուրույն սոցիալական կարգավորման մեխանիզմ, որը գործում է պետական իրավական կարգավորման

¹ **Тулегенов В.В.** Криминальная субкультура: понятие, структура и соотношение со смежными понятиями // Вестник АГТУ. 2005. № 5 (28). 221–222 էջեր:



համակարգից անկախ¹: Հատկանշական է, որ քրեական ենթամշակույթի շրջանակներում ձևավորվող հիերարխիկ հարաբերությունները նպաստում են հանցավոր խմբերի ներսում կարգապահության պահպանմանը և դերերի բաշխմանը: Այս հիերարխիան որոշում է խմբի անդամների սոցիալական կարգավիճակը, ազդեցության աստիճանը և նրանց մասնակցությունը հանցավոր գործունեության կազմակերպմանը: Այդպիսի կառուցվածքն ապահովում է խմբի ներսում կայունություն և նպաստում է հանցավոր գործունեության շարունակականությանը²: Քրեական ենթամշակույթի սոցիալական վտանգավորությունը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ այն նպաստում է հանցավոր վարքագծի վերարտադրությանը: Քրեական միջավայրում ձևավորված նորմերը և արժեքները հաճախ հակադրվում են հասարակության իրավական և բարոյական նորմերին, ինչի հետևանքով ձևավորվում է սոցիալական վարքագծի այլընտրանքային համակարգ: Այդ համակարգը նպաստում է հանցավորության կայունությանը և խոչընդոտում է իրավական նորմերի ազդեցությանը տվյալ սոցիալական խմբերի վրա³: Միաժամանակ քրեական ենթամշակույթը սերտորեն կապված է կազմակերպված հանցավորության ձևավորման և գործունեության հետ: Այն ստեղծում է սոցիալական և մշակութային այնպիսի միջավայր, որի շրջանակներում ձևավորվում են հանցավոր խմբերի ներքին կառավարման մեխանիզմները, կարգապահության պահպանման միջոցները և անդամների միջև փոխհարաբերությունների կանոնները: Այդ պատճառով քրեական ենթամշակույթը հանդիսանում է կազմակերպված հանցավորության գոյության և զարգացման կարևոր սոցիալական հիմքերից մեկը⁴:

Ներկայումս ՀՀ քրեական օրենսգրքում նախատեսվել են 322-ից 325-րդ հոդվածները, որոնցով քրեականացվել են քրեական ենթամշակույթին վերաբերող որոշ հարցեր: Սակայն դրանց կիրառման ընթացքում առաջանում են մի շարք խնդիրներ, որոնք կապված են իրավական որոշակիության սկզբունքի ապահովման հետ: Վերջինս իրավունքի հիմնարար սկզբունքներից է և արտահայտվում է «չկա հանցագործություն և պատիժ առանց օրենքի» կանոնով (*nullum crimen, nulla poena sine lege*): Այդ սկզբունքի համաձայն քրեական պատասխանատվության հիմքերը պետք է ձևակերպված լինեն հստակ և կանխատեսելի ձևով, որպեսզի անձը կարողանա կանխատեսել իր վարքագծի իրավական հետևանքները⁵: Հենց այս

¹ **Корецкий Д.А., Тулегенов В.В.** Криминальная субкультура и ее криминологическое значение. - СПб.: Юридический центр Пресс, 2006, 8-10 էջեր:

² **Пирожков В.Ф.** Законы преступного мира молодежи (криминальная субкультура). - Тверь: Приз, 1994, 50-53 էջեր:

³ **Корецкий Д.А.** Криминальная субкультура как фактор преступности. - СПб.: Юридический центр Пресс, 2006, 12-14 էջեր:

⁴ **Тулегенов В.В.** Криминальная субкультура и организованная преступность, 223-224 էջեր:

⁵ **Ashworth A.** Principles of Criminal Law. Oxford University Press, 2013, 63 էջ:

տեսանկյունից ՀՀ քրեական օրենսգրքի 322-րդ հոդվածում օգտագործված մի շարք ձևակերպումներ առաջացնում են խնդիրներ: Մասնավորապես օրենքում օգտագործվում են այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են՝ «քրեական ենթամշակույթ կրող խմբավորում», «քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ», «քրեական ենթամշակույթ կրող խմբավորման սահմանած և ճանաչած վարքագծի կանոններ»: Այս հասկացությունները որևէ իրավական ակտում բացահայտված չեն և չունեն նորմատիվ սահմանում և իրավակիրառի համար ստեղծում են որակման բարդություններ: Քրեական ենթամշակույթի կանոնները գոյություն ունեն ոչ ֆորմալ սոցիալական միջավայրում և փոխանցվում են ավանդույթների ու սովորույթների միջոցով: Այս հանգամանքը ստեղծում է իրավիճակ, երբ քրեական պատասխանատվության հիմքը դառնում են այնպիսի կանոններ, որոնք չունեն իրավական ամրագրում և որոնց բովանդակությունը հնարավոր չէ հստակ սահմանել իրավական գործիքակազմով:

Այս խնդիրը արտահայտվել է նաև դատական պրակտիկայում: Երևանի ընդհանուր իրավասության դատարանը ԵԴԴ/0551/01/24 գործով նշել է, որ «քրեական ենթամշակույթ կրող խմբավորման սահմանած և ճանաչած վարքագծի կանոններ» ձևակերպումը չի կարող համարվել իրավական որոշակիության պահանջներին համապատասխանող նորմատիվ հիմք, քանի որ այդ կանոնները որևէ իրավական ակտում ամրագրված չեն: Դատարանն արձանագրել է, որ նման պայմաններում անձը չի կարող կանխատեսել իր վարքագծի իրավական հետևանքները, ինչը հակասում է քրեական իրավունքի հիմնարար սկզբունքներին:

Միջազգային փորձը ևս ցույց է տալիս, որ քրեական ենթամշակույթի քրեականացումը հնարավոր է միայն այն դեպքում, երբ համապատասխան հասկացությունները ստանում են հստակ իրավական սահմանումներ: Այդ առումով հաճախ օրինակ է բերվում Վրաստանի օրենսդրությունը: Վրաստանի քրեական օրենսգրքում «գողական աշխարհին» վերաբերող հանցակազմերը կիրառվում են «Կազմակերպված հանցավորության և ղեկետի մասին» օրենքի հետ համակցության մեջ, որտեղ տրված են այնպիսի հասկացությունների իրավական սահմանումներ, ինչպիսիք են՝ «գողական աշխարհ», «օրենքով գող», «գողական հավաք» և այլն¹:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը ևս անդրադարձել է Վրաստանի համապատասխան օրենսդրությանը և նշել, որ այդ նորմերը չեն հակասում իրավական որոշակիության սկզբունքին, քանի որ համապատասխան հասկացությունները սահմանված են հատուկ օրենքով և լայնորեն ճանաչված են հասարակության մեջ²:

¹ Law of Georgia on Organized Crime and Racketeering, 2005 թ:

² *Ashlarba v. Georgia*, Judgment of 15 July 2014.



ՀՀ քրեական օրենսգրքի դեպքում իրավիճակը տարբեր է: Այստեղ քրեականացվել է որոշակի սոցիալական երևույթ, սակայն դրա բովանդակությունը չի բացահայտվել որևէ իրավական ակտում: Այս հանգամանքը կարող է ստեղծել (և ստեղծում է) իրավակիրառման լուրջ դժվարություններ: Բացի այդ, օրենսդրական կարգավորման մեջ նկատվում են նաև այլ խնդիրներ: Օրինակ՝ օրենքը նույնացնում է «օրենքով գող» և «քրեական հեղինակություն» հասկացությունները, մինչդեռ քրեական միջավայրում դրանք ունեն տարբեր բովանդակություն և տարբեր կարգավիճակ: Երբ խոսում ենք քրեական ենթամշակույթի հիերարխիկ բնույթից, արձանագրում ենք, որ օրենքով գողերը այդ համակարգում ունեն բարձրագույն կարգավիճակ, իսկ քրեական հեղինակությունները կարգավիճակով ավելի ցածր են: Այստեղ հստակ ընդգծվում է այն հանգամանքը, որ օրենսդիրը օրենքի մշակման ընթացքում ուշադրություն չի դարձրել խնդրո բնագավառի քրեաբանական ասպեկտներին, ինչը հեռվացնում է իրական քրեական ենթամշակույթը օրենսդրական ամրագրումներից՝ դրանով իսկ զրկելով օրենքին պատշաճ կարգավորել հասարակական հարաբերությունները:

Մեկ այլ խնդիր կապված է այն հանգամանքի հետ, որ օրենքը քրեականացնում է քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակը պահպանելը: Այստեղ ևս պետք է արձանագրել օրենքի կոպիտ բացը: Նախապես օրենքով գողի և քրեական հեղինակության կարգավիճակները նույնացնելով՝ օրենսդիրը երկրորդ կոպիտ սխալն է թույլ տալիս՝ քրեականացնելով աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակը պահպանելը: Եթե օրենքով գողերը կարգավիճակը ստանում են գողական հավաքի և գողական պրոտոկոլի միջոցով, ապա քրեական հեղինակություն ստանալը այդպիսի ընթացակարգեր չի ենթադրում և բխում է անձի հեղինակությունից կամ ազդեցությունից, ինչից սկզբունքորեն հրաժարվել հնարավոր չէ: Բացի այդ, կարգավիճակի պահպանման առումով կարևոր է այն դիտարկումը, որ օրենքով գողի կողմից ստացված կարգավիճակից հրաժարման ինստիտուտ քրեական ենթամշակույթի համակարգում առկա չէ, ուստի օրենսդիրը պահանջում է անհնարինը: Բացի այդ, քրեական հեղինակությունը անձի որոշակի շրջանակում նրա ընկալումն է, և անձը չի կարող միակողմանի հրաժարվել քրեական հեղինակության կարգավիճակից: Ավելին, օրենքով գողերը թագազրկվելուց, իսկ հեղինակությունները հեղինակազրկվելուց հետո շարունակում են որոշակի շրջանակների մոտ պահպանել հեղինակությունը: Այլ խոսքով՝ օրենսդիրը քրեականացրել է անհնարին վարքագիծը: Եվս մեկ անգամ ընդգծենք, որ քրեական օրենսգրքի իրավակարգավորումները մակերեսային են և հեռու իրերի փաստացի դրությունից: Քրեական ենթամշակույթի ոչ ֆորմալ բնույթը հաշվի առնելով՝ նման կարգավիճակից հրաժարումը կարող է

¹ Пирожков В.Ф. Законы преступного мира молодежи, 52 էջ:

չունենալ որևէ հստակ ընթացակարգ, ինչը ստեղծում է լրացուցիչ իրավական խնդիրներ: Վերոգրյալ հանգամանքները ցույց են տալիս, որ քրեական ենթամշակույթի քրեականացումը պահանջում է առավել հստակ իրավական կարգավորում: Այս ամենից զատ օրենքը ստեղծում է մեկ արարքի համար անվերջ պատժելու մեխանիզմ: Այսպես, պայմանական ընդունենք՝ անձը դատապարտվել է օրենքով գողի կարգավիճակը պահպանելու համար և պատիժը կրելուց հետո ստացվում է կրկին անհրաժեշտ է նախաձեռնել քրեական վարույթ: Բնականաբար կարող է լինել և այն մեկնաբանությունը, որ դա կդիտվի նոր արարք, սակայն վերստին անհրաժեշտ է արձանագրել, որ անձը չի կարող հրաժարվել սոցիալական կարգավիճակից և սա իրավաբանական որակման համար իրական խնդիր է:

Մեկ այլ դեպքում, օրենսդիրը որպես ՀՀ քրեական օրենսգրքի 323-ից 325-րդ հոդվածների որակյալ կազմ նախատեսել է արարքը, որը կատարվել է իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով, զինված ուժերում կամ այլ զորքերում ծառայողի կողմից: Այստեղ ևս նկատվում է, որ օրենսդիրը խնդիրը կարգավորել է բացառապես իրավական լուծումներով, առանց քրեական ենթամշակույթի կանոնների վերլուծության, քանի որ քրեական միջավայրում իշխանական լիազորությունների կիրառումը կամ զինված ուժերի ինտեգրումը բացառվում է, քանի որ քրեական ենթամշակույթի առանցքային կանոններից մեկը զինված ուժերի և պաշտոնյաների հետ համագործակցության արգելքն է: Կրիմինոլոգիական գրականության մեջ նշվում է, որ նման կապերը քրեական միջավայրում սովորաբար ընկալվում են որպես «անհամապատասխան վարքագիծ» և կարող են հանգեցնել տվյալ անձի հեղինակության կորստին կամ նույնիսկ նրա դուրսմղմանը քրեական միջավայրից¹: Նման մոտեցումը պայմանավորված է այն հանգամանքով, որ քրեական ենթամշակույթը ձգտում է պահպանել իր ինքնուրույնությունը պետական իրավական համակարգից և խուսափել պետական կառույցների հետ բաց համագործակցությունից: Այդ պատճառով քրեական միջավայրում պետական իշխանության ներկայացուցիչների կամ զինվորականների մասնակցությունը սովորաբար դիտվում է որպես տվյալ միջավայրի ներքին կանոններին հակասող երևույթ:

¹ **Корецкий Д.А., Тулегенов В.В.** Криминальная субкультура и ее криминологическое значение. – СПб.: Юридический центр Пресс, 2006, 9–11 էջեր:

Եզրակացություն

Այսպիսով, իրականացված վերլուծությունների հիման վրա հնարավոր է առաջարկել քրեական օրենսդրության կատարելագործման մի շարք ուղղություններ.

Հարց է առաջանում առ այն, թե կարող ենք գործնականում առնչվել հակառակ տրամաբանությանը, մասնավորապես, ունենանք այնպիսի իրավիճակ, որ ոչ առևտրային կազմակերպությունը կոնկրետ իրավիճակում ունենա հանրային իրավունքի սուբյեկտի կարգավիճակ՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ կոնկրետ դեպքում իրականացնում է հանրային շահի պահպանությանն ուղղված գործառույթ: Այս համատեքստում հարկ է արձանագրել, որ Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանը (այսուհետ նաև՝ Վճռաբեկ դատարան) 2022 թ. թիվ ԵԴ/38635/02/19 քաղաքացիական գործով կայացրել է նախադեպային բնույթ ունեցող որոշում², որով արձանագրել է, որ հանրային իրավահարաբերությունները և դրանց արդյունքները պետք է ունենան հանրային՝ համընդհանուր բնույթ, ի տարբերություն մասնավոր՝ կոնկրետ անձին վերաբերող, իրավահարաբերության: Վճռաբեկ դատարանը, ամփոփելով նախկին դիրքորոշումները, կրկին ընդգծել է, որ հանրային է այն իրավահարաբերությունը, որում կողմերից մեկի դերում անպայմանորեն հանդես է գալիս հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտը, որն այդ հարաբերության ընթացքում հանրային շահի իրացման

¹ Տե՛ս «Փաստաբանության մասին» ՀՀ օրենք, հոդված 7, մաս 1, ՀՕ-29-Ն, ընդունվել է 14.12.2004 թ., հղումը՝ <https://www.arlis.am/hy/acts/110603> /հասանելի է 09.06.2026 թ. դրությամբ/:

² Տե՛ս Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի՝ թիվ ԵԴ/38635/02/19 քաղաքացիական գործով 21.06.2022 թ. որոշումը, հղումը՝ <https://www.arlis.am/hy/acts/164483> /հասանելի է 09.06.2026 թ. դրությամբ/:

կապակցությամբ իրացնում է օրենքով սահմանված իր հանրային իշխանական լիազորությունները:

Տվյալ դեպքում փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու առնչությամբ ծագող հարաբերությունները կարգավորող իրավական նորմերը պատկանում են հանրային իրավունքին, քանի որ դրանք փաստաբաններին կարգապահական պատասխանատվության ենթարկելը լիազորում են բացառապես Պալատին, որն այդ գործառույթն իրականացնում է հոգուտ հանրային շահի: Ըստ էության, յուրաքանչյուրի՝ սահմանադրորեն երաշխավորված որակյալ իրավաբանական օգնություն ստանալու իրավունքի ապահովումն ուղղված է հանրային շահի սպասարկմանը, ուստի նշված գործառույթի իրականացման առնչությամբ ծագող հարաբերությունները կարգավորող իրավական նորմերն ունեն հանրային բնույթ:

Հաջորդիվ անդրադառնալով իրավահարաբերության մասնակիցների միջև ենթակարգության-վերադասության առկայությանը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Պալատ-փաստաբան հարաբերությունները բնորոշվում են նաև ցանկացած մասնավոր, այդ թվում՝ աշխատանքային հարաբերությունների ծագման հիմք հանդիսացող գործարքի (պայմանագրի) բացակայությամբ: Պալատի խորհրդի կողմից փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ որոշումը կայացվում է Պալատի հանրային իշխանական լիազորությունների գործադրման արդյունքում և միակողմանի ազդեցություն է ունենում հասցեատեր հանդիսացող փաստաբանի համար:

Այսպիսով, վերոգրյալ իրավական վերլուծությունների արդյունքում անհրաժեշտ է լրացնել Վճռաբեկ դատարանի նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումները՝ ընդգծելով, որ հանրային իրավահարաբերություններում որպես հանրային իշխանության կրող կարող են հանդես գալ ոչ միայն պետական և տեղական ինքնակառավարման մարմինները, այլև պետության կողմից օրենքով պատվիրակված հանրային գործառույթ իրականացնող մասնավոր անձինք:

Ըստ էության, վերոգրյալի համատեքստում կարող ենք արձանագրել, որ հանրային իրավահարաբերությանն առնչվելու հանգամանքը արձանագրելու համար էականը ոչ թե մի կողմի՝ պարտադիր պետության՝ հանձին որևէ պետական մարմնի հանդես գալն է, այլ կոնկրետ իրավիճակում մի կողմի՝ օրենքով վերապահված հանրային գործառույթի իրականացումը՝ ուղղված հանրային շահի պաշտպանությանը և (կամ) պահպանմանը:

Այս համատեքստում հիշատակման է արժանի նաև *Mateescu v. Romania* գործը¹, որի շրջանակներում բժիշկ Միրչա Մատեսկուն, ավարտելով իրավաբանական

¹ *St'u Mateescu v. Romania*, Application no. 1944/10, Judgment of 14 January 2014:

Ֆակուլտետը, փորձեց փաստաբանական գործունեությամբ զբաղվել, բայց Բուխարեստի փաստաբանական պալատը արգելեց նրան համատեղել բժշկի և փաստաբանի մասնագիտությունները: ՄԻԵԴ-ը գտավ, որ այդ արգելքը անհամաչափ է և խախտում է դիմողի մասնագիտական ազատությունը: ՄԻԵԴ-ը հատուկ ընդգծել է, որ Բուխարեստի փաստաբանական պալատը («Bucharest Bar») իրականացնում է հանրային գործառույթ: Վեճն իր բնույթով հանրային-իրավական էր, փաստաբանական պալատը տվյալ պարագայում իրականացնում էր պետության կողմից պատվիրակված գործառույթ, որն առաջացնում էր հանրային-իրավական հետևանքներ: Պալատն էր որոշում, թե տվյալ պետությունում ով կարող է զբաղվել փաստաբանական գործունեությամբ. փաստացի կոնկրետ խումբ անձանց համար որոշվում էր մասնագիտական կոնկրետ գործունեությամբ զբաղվելու հարցը: Վճռում նշվում է, որ փաստաբանական պալատը իրականացնում է հանրային գործառույթներ և այդ պատճառով նրա որոշումները պետք է համապատասխանեն Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի պահանջներին:

Գործնականում այսօր նաև բավական կարևորում ենք այն հանգամանքը, որ եթե պետական մարմինը գրանցում է որևէ փաստ և դրա շրջանակներում առաջանում է իրավական վեճ, ապա միայն այն փաստի ուժով, որ գրանցումը եղել է պետական մարմնի կողմից, դեռևս չի նշանակում, որ միանշանակ կարող ենք անդել, որ գործ ունենք հանրային-իրավական բնույթի վեճի հետ:

Այս առումով հարկ ենք համարում անդրադառնալ Վճռաբեկ դատարանի մեկ այլ կարևոր որոշման: Մասնավորապես, Վճռաբեկ դատարանը ՎԴ/1621/05/14 վարչական գործով¹ անդրադարձել է ապրանքային նշանի օգտագործման իրավահարաբերության բացակայությունը ճանաչելու և «Ապրանքային նշանների մասին» օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով այդ ապրանքային նշանի գրանցումը չեղյալ հայտարարելու հայցապահանջների հիման վրա հարուցված գործի ընդդատության հարցին: Գործի շրջանակներում Վճռաբեկ դատարանն ընդգծել է, որ իրավունքների պաշտպանության հայցի կամ դիմումի հիման վրա հարուցված գործերի առարկայական ընդդատության հարցը որոշվում է՝ ելնելով այն հանգամանքից, թե ինչպիսի (հանրային կամ մասնավոր) իրավահարաբերություններից ծագող վեճից է բխում այդ գործերի հարուցման համար հիմք հանդիսացած պահանջը (իսկ մի քանի փոխկապակցված հայցապահանջների առկայության դեպքում՝ դրանցից հիմնականը): Դատարանն արձանագրում է, որ հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտի՝ իրավահարաբերության կողմ լինելը դեռևս չի նշանակում, որ

¹ Տե՛ս Վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի թիվ ՎԴ/1621/05/14 վարչական գործով 22.04.2016 թ. որոշումը, հղումը՝ https://www.arlis.am/hy/acts/107620/_hասանելի_է_09.06.2026թ._դրությամբ/:

իրավահարաբերությունը հանրային բնույթի է: Քննարկման առարկա սույն իրավիճակում ապրանքային նշանի օգտագործման իրավահարաբերության բացակայությունը ճանաչելու և դրա գրանցումը չեղյալ հայտարարելու հետ կապված իրավական վեճը ծագում է մի կողմից՝ ապրանքային նշանի իրավատիրոջ (կամ դրա օգտագործման իրավունք ունեցող անձի), իսկ մյուս կողմից՝ ապրանքային նշանի օգտագործման իրավահարաբերության բացակայությունը ճանաչելու և դրա գրանցումը չեղյալ հայտարարելու պահանջով դատարան դիմած շահագրգիռ անձի միջև: Թեև ՀՀ Էկոնոմիկայի նախարարության Մտավոր սեփականության գրասենյակն իրականացնում է օրենսդրությամբ իրեն վերապահված ապրանքային նշաններին պահպանություն տրամադրելու հետ կապված գործառույթները, սակայն վերջինս խնդրո առարկա իրավահարաբերությունների շրջանակներում որպես կողմ հանդես չի գալիս. փաստացի, վեճը ծագում է ապրանքային նշանի իրավատիրոջ (կամ դրա օգտագործման իրավունք ունեցող անձի) և ապրանքային նշանի օգտագործման իրավահարաբերության բացակայությունը ճանաչելու և դրա գրանցումը չեղյալ հայտարարելու պահանջով դատարան դիմած շահագրգիռ անձի միջև: Այսպիսով, վերոգրյալ իրավական վերլուծությունների արդյունքում Վճռաբեկ դատարանը հանգում է այն եզրակացության, որ «Ապրանքային նշանների մասին» օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով ապրանքային նշանի օգտագործման իրավահարաբերության բացակայությունը ճանաչելու և ապրանքային նշանի գրանցումը չեղյալ հայտարարելու պահանջների հիման վրա հարուցված գործերը չեն բխում հանրային իրավահարաբերություններից ծագող վեճից և ընդդատյա չեն վարչական դատարանին: Նշված գործերը բխում են մասնավոր՝ քաղաքացիաիրավական հարաբերություններից ծագող վեճից և ընդդատյա են ընդհանուր իրավասության դատարանին:

4. Հանրային և մասնավոր իրավահարաբերությունների տարանջատմանը վերաբերելի հիմնական օրենսդրական զարգացումները

Արձանագրելով դատական մեկնաբանման միջոցով իրավական տարընկալումները հաղթահարելու կարևորությունը՝ ընդգծենք նաև, որ կարևոր, ավելին, առաջնահերթ է հանրային ու մասնավոր իրավահարաբերությունների տարանջատմանն ուղղված աշխատանքներ տանել օրենսդրական դաշտում, քանի որ այսօր մեր իրավական համակարգում կա դրա անհրաժեշտությունը:

Այս առումով հարկ ենք համարում անդրադառնալ արդեն իսկ կատարված մի քանի ողջունելի օրենսդրական փոփոխությունների. դրանք մեր կարծիքով տեղին են և հիմնված կոնցեպտուալ ճիշտ ընկալումների վրա: Մեր կողմից քննարկման առարկա առաջին օրենսդրական փոփոխությունը վերաբերում է ՀՀ քաղաքացիական դատավարության և ՀՀ վարչական դատավարության՝ աշխատանքային իրավահարաբերությունները կարգավորող իրավակարգավորումներին:



Մինչև վերջին օրենսդրական փոփոխությունները հանրային ծառայությունից բխող բոլոր աշխատանքային իրավահարաբերությունների շրջանակներում առկա դատական վեճերը քննում էր Վարչական դատարանը: Այս մոտեցման հիմքում դրված էր այն տրամաբանությունը, որ իրավահարաբերության մի կողմում պետական ապարատի մարմին է: Սակայն աշխատանքային իրավահարաբերությունների պարագայում հարկ է նկատի ունենալ ոչ թե գործատու-աշխատող հարաբերության շրջանակներում որ սեկտորում կատարված աշխատանքը, այլ ըստ էության՝ բովանդակային առումով վերջիններիս աշխատանքային իրավունքների պաշտպանությունը: Էական չէ, օրինակ, գործատուի՝ պետական մարմին կամ ցանկացած կազմակերպարավական ձևի ընկերություն լինելը, եթե օրինակ խախտվել են աշխատողի՝ ամենամյա արձակուրդ ստանալու, հանգստի իրավունքի, փորձաշրջանի ընթացքում վերջինիս վերապահված, և առհասարակ Աշխատանքային օրենսգրքով սահմանված որևէ իրավունքի պատշաճ իրացումը:

Արդյունքում, 2024 թվականի մայիսի 2-ին երկրորդ ընթերցում անցած և ամբողջությամբ ընդունված՝ «Վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-220-Ն օրենքով՝ ուժը կորցրած ճանաչվեց Վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, որով ամրագրվում էր, որ ի թիվս հանրային իրավահարաբերություններից բխող այլ վեճերի, վարչական դատարանին ընդդատյա են նաև հանրային ծառայության անցնելու, այն իրականացնելու, ծառայությունից ազատվելու հետ կապված աշխատանքային վեճերը, զուգահեռաբար ՀՕ-222-Ն օրենքով² ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 24-րդ գլխում կատարվեցին համապատասխան փոփոխություններ, ինչի արդյունքում ամրագրվեց, որ հանրային ծառայության անցնելու, իրականացնելու ու ծառայությունից ազատվելու վերաբերյալ աշխատանքային իրավահարաբերություններից ծագած վեճերը դառնում են ընդդատյա ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին: Արդյունքում, օրենսդրական այս փոփոխություններն ամրագրեցին այն ընդունելի մոտեցումը, որ որպես իրավական վեճի առանցք պետք է դիտարկել ոչ թե վեճի սուբյեկտներից մեկի՝ որպես կանոն հանրային իրավունքի սուբյեկտ լինելու հանգամանքը, այլ վեճի շրջանակներում պաշտպանության ենթակա օրինական շահերի բնույթը:

¹ Տե՛ս «Վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենք, ՀՕ-220-Ն, ընդունվել է 02.05.2024 թ., ստորագրվել է 17.05.2024 թ., ուժի մեջ է մտել 30.05.2024 թ., հղումը՝ <https://www.arlis.am/hy/acts/192987> /հասանելի է 09.06.2026 թ. դրությամբ/:

² Տե՛ս «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենք, ՀՕ-222-Ն, ընդունվել է 02.05.2024 թ., ստորագրվել է 17.05.2024 թ., ուժի մեջ է մտել 01.01.2025 թ., հղումը՝ <https://www.arlis.am/hy/acts/192978> /հասանելի է 09.06.2026 թ. դրությամբ/:

Կարևոր էր նաև նոտարական գործողությունների իրավաչափության վիճարկման վերաբերյալ գործերով նոր օրենսդրական փոփոխությունների ամրագրումը:

Մասնավորապես, 2024 թվականի մայիսին ուժի մեծ մտած օրենսդրական փոփոխություններով¹ ուժը կորցրած ճանաչվեց նաև Վարչական դատավարության օրենսգրքի՝ «Նոտարի գործողությունների իրավաչափության վերաբերյալ գործերի վարույթը» վերտառությամբ 31-րդ գլուխը և միաժամանակ Քաղաքացիական դատավարության օրենսգրքում ավելացավ նույնանուն վերտառությամբ 27.3-րդ գլուխ:

Ըստ էության, այս փոփոխությամբ ամրագրվեց այն տրամաբանությունը, որ ոչ թե որպես առանցք պետք է դիտարկել նոտարի՝ որպես արդարադատության իրականացմանը նպաստող հանրային ծառայություն իրականացնող անձ դիտարկվելու հանգամանքը, այլ այն, թե ինչի շրջանակներում է մատուցվում ծառայությունը, ինչ բնույթի իրավահարաբերությունների կարգավորմանն է ուղղված այն:

5. Եզրակացություն

Ամփոփելով վերոգրյալ ողջ վերլուծությունը՝ կատարել ենք հետևյալ եզրահանգումները.

1. հանրային և մասնավոր իրավահարաբերությունների տարբերակում իրականացնելիս առաջնահերթ պետք է առաջնորդվել իրավահարաբերության բնույթով, իրավահարաբերության շրջանակներում պաշտպանվող օրինական շահով,
2. մասնավոր իրավունքի սուբյեկտների միջև ծագած իրավական վեճը կարող է ենթակա լինել Վարչական դատարանի իրավասությանն այն դեպքում, երբ դրանցից առնվազն մեկին օրենքով վերապահված է հանրային շահի ապահովմանն ուղղված գործառույթ և վեճը ծագել է այդ գործառույթի իրացման շրջանակներում,
3. վարչական կամ այլ հանրային լիազորություններով օժտված լինելու հանգամանքն ինքնին բավարար չէ վեճը վարչական դատարանի իրավասությանը վերագրելու համար. վճռորոշ է այն հանգամանքը, որ տվյալ լիազորություններն ուղղված լինեն հանրային շահի իրացմանն ու իրականացվեն դրա սպասարկման նպատակով,
4. հաշվի առնելով գործնականում հանրային իրավահարաբերությունների շրջանակի ճիշտ ընկալման կարևորությունը՝

¹ Տե՛ս նույն տեղում:

առաջարկում ենք ներպետական օրենսդրությամբ ամրագրել «հանրային շահի ապահովմանն ուղղված հանրային գործառույթ» հասկացությունը՝ առանց սպառիչ սահմանման, փոխարենը նախատեսելով հիմնական հատկանիշները, որոնց համակցված առկայությունը կարող է պայմանավորել համապատասխան իրավահարաբերության բնույթի ճիշտ իրավական որակումը:

4.1. Այս համատեքստում առարկվում է օրենսդրական համակարգում ներդնել հետևյալ դոկտրինալ բնորոշումը.

«Հանրային շահի ապահովմանն ուղղված հանրային գործառույթ է համարվում օրենքով ամրագրված, հանրային նշանակություն ունեցող գործառույթը, որը կարող է իրականացվել պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի, ինչպես նաև օրենքով լիազորված մասնավոր իրավունքի սուբյեկտի կողմից՝ օրենքով սահմանված կարգով, և ուղղված է հանրային շահի իրացման, պահպանման կամ պաշտպանության ապահովմանը»:

Օգտագործված գրականություն

Նորմատիվ իրավական ակտեր

1. ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, ընդունվել է 05.05.1998թ., ՀՕ-239:
2. «Փաստաբանության մասին» ՀՀ օրենք, ընդունվել է 14.12.2004թ., ՀՕ-29-Ն,
3. «Վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենք, ՀՕ-220-Ն, ընդունվել է 02.05.2024 թ.:
4. «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենք, ՀՕ-222-Ն, ընդունվել է 02.05.2024 թ.:

Դատական պրակտիկա

1. ՀՀ ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի թիվ ԼԴ/12260/02/23 քաղաքացիական գործով 07.05.2024 թ. Որոշում:
2. ՀՀ Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի թիվ ԵԴ/38635/02/19 քաղաքացիական գործով 21.06.2022 թ. Որոշում:
3. ՀՀ Վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի թիվ ՎԴ/1621/05/14 վարչական գործով 22.04.2016 թ. Որոշում:
4. *Republic of Argentina v. Weltover, Inc.*, 504 U.S. 607 (1992).
5. *Trendtex Trading Corporation v. Central Bank of Nigeria* [1977] QB 529 (Court of Appeal).
6. *Mateescu v. Romania*, Application no. 1944/10, Judgment of 14 January 2014.

Գիտական գրականություն

7. **Ավետիսյան Վ.**, «Մասնավոր իրավունքի զարգացման արդի խնդիրները Հայաստանի Հանրապետությունում»: Բանբեր Երևանի համալսարանի, 2019, № 3 (30):

8. **Ղազինյան Գ.Ս.**, «Հանրային և մասնավոր շահերի հավասարակշռման սահմանադրական գաղափարի իրացումը ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծի կարգավորումների համատեքստում»: Բանբեր Երևանի համալսարանի. Իրավագիտություն, 2020, № 2 (32):

9. **Колонтаевская И.Ф.** Частное и публичное право: соотношение, взаимодействие, сближение // Вестник Московского университета им. С.Ю. Витте. Серия 2. Юридические науки, 2016, № 1 (8).

10. **Barnes J.**, An Expanding Frontier of Administrative Law: The Public Life of Private Actors (A Functional Approach), European Public Law, Vol. 24, No. 3, 2018, pp. 595–612,

11. **Merrill T.W.**, Private and Public Law. In: Gold A. S., Goldberg J. C. P., Kelly D. B., Sherwin E., Smith H. E. (eds.), The Oxford Handbook of the New Private Law. Oxford: Oxford University Press, 2020, Chapter 35. DOI: 10.1093/oxfordhb/9780190919665.013.35.

АКТУАЛЬНЫЕ ПРОБЛЕМЫ РАЗГРАНИЧЕНИЯ ПУБЛИЧНЫХ И ЧАСТНЫХ ПРАВООТНОШЕНИЙ

Аннотация

В настоящее время в правовой системе Республики Армения существуют правоотношения, определение характера которых - публичных или частных - является сложной теоретической и практической проблемой. Эта проблема в настоящее время решается посредством инициированных на законодательном уровне изменений и сформировавшихся в судебной практике подходов. В статье рассмотрены содержательные факторы, лежащие в основе данной проблемы, рассмотрены последние законодательные изменения в этом контексте и последние события в судебной практике, а также представлено предложение, которое, по нашему мнению, может внести определенность и стать ориентиром для правильного понимания сути правоотношения, имеющего сомнительный характер в каждом конкретном случае.

Ключевые слова: публичные и частные правовые отношения, разграничение, публичная функция, определенная законом, публичный интерес, преследуемая цель,

CONTEMPORARY ISSUES IN THE DELINEATION OF PUBLIC AND PRIVATE LEGAL RELATIONS

Annotation

Currently, in the legal system of the Republic of Armenia, there are legal relations, the determination of which as public or private in nature is a difficult theoretical and practical problem. This problem is currently being overcome through changes initiated at the legislative level and approaches formed in judicial practice. In the article, we have discussed the substantive factors underlying this problem, reviewed the latest legislative changes made in this context and the latest developments in judicial practice, and presented proposals that, in our opinion, can provide certainty and play a guiding role for the correct perception of the essence of a legal relationship that is of a dubious nature in each case.

Keywords: public and private legal relations, separation, public function defined by law, public interest, pursued goal.

Հոդվածը հանձնված է խմբագրություն 22.06.2026 թ., տրվել է գրախոսության 23.06.2026 թ., ընդունվել է տպագրության 26.06.2026 թ.:



DOI: 10.59560/18291155-2026.2-119

ՏԱԹԵՎԻԿ ՍԻՐԱԴԵՂՅԱՆ

Փաստաբան,
ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի
սահմանադրական իրավունքի
ամբիոնի հայցորդ,
ORCID ID: 0000-0003-1868-6568

**ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՎԱՐՉԱԿԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅԱՆ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԵՐԱՇԽԻՔ**

Ամփոփագիր

«Էլեկտրոնային արդարադատությունը որպես վարչական արդարադատության մատչելիության լրացուցիչ երաշխիք» հոդվածում ներկայացվել են էլեկտրոնային արդարադատության հասկացության, այս ինստիտուտին ներկայացվող նվազագույն չափանիշների, առավելությունների և թերությունների վերաբերյալ հեղինակի կողմից կատարված գիտագործնական ուսումնասիրությունների արդյունքները, միջազգային փորձը:

Հեղինակը հոդվածում մանրամասն անդրադարձել է 2025 թ. օգոստոսի 15-ից մեզանում գործարկված վարչական արդարադատության էլեկտրոնային համակարգին, տեսական հենքի վրա վեր հանել համակարգին առնչվող ինչպես իրավական, այնպես էլ գործնական խնդիրները, առաջարկել դրանք հաղթահարելու տեսագործնական հնարավոր ուղիները:

Հիմնաբառեր. արդարադատություն, տեղեկատվական տեխնոլոգիաներ, էլեկտրոնային արդարադատություն, էլեկտրոնային համակարգ, արհեստական բանականություն, էլեկտրոնային դատական ակտ, էլեկտրոնային համակարգից օգտվող ֆիզիկական անձ, տեսահաղորդակցության միջոցներ:

Ներածություն

Տեղեկատվական տեխնոլոգիաների ներկա առաջընթացին զուգընթաց անխուսափելի է էլեկտրոնային արդարադատության գործիքների ներդրումը և գործարկումը դատավարական ընթացակարգերում: Էլեկտրոնային գործիքները ոչ միայն ծառայում են որպես արդար դատաքննության իրավունքի առանձին բաղադրիչ՝ հրապարակային դատավարության ապահովման երաշխիք, այլև կարող

են դյուրացնել դատարան դիմելու և դատական գործի քննության ընթացակարգերը՝ դրանով իսկ արդարադատությունը դարձնելով առավել հասանելի և մատչելի: Արդարադատության մատչելիության ապահովման տեսանկյունից լուրջ մարտահրավեր էր COVID-19 համաճարակը, որն ակնառու դարձրեց դատավարական գործընթացներում տեղեկատվական տեխնոլոգիաների լայնամասշտաբ ներդրման և կիրառման օբյեկտիվ անհրաժեշտությունն ամբողջ աշխարհում: Ըստ էության «Մարդկության թվայնացվածության ներկայիս մակարդակի ու տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացվածության պայմաններում անհնար է ապահովել դատական համակարգի գործունեության արդյունավետությունն ու մատչելիությունն առանց ժամանակակից էլեկտրոնային արդարադատության և դատական գործունեության կառավարման ավտոմատացված ծրագրերի ներդրման»¹:

Էլեկտրոնային արդարադատության կառուցակարգերը, բացառությամբ դրա առանձին դրսևորումների, ներպետական օրենսդրություն են ներդրվել Հայաստանի Հանրապետության դատական և իրավական բարեփոխումների 2022-2026թթ. ռազմավարության և դրանից բխող գործողությունների ծրագրի 1-ին հավելվածով «Էլեկտրոնային դատարան» և «Էլեկտրոնային արդարադատություն» միասնական կառավարման համակարգեր ստեղծելու ռազմավարական ուղղության հիման վրա ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում 2023 թ. դեկտեմբերի 22-ին կատարված փոփոխություններով և լրացումներով: Այս իմաստով, թերևս, առավել քան արդիական է քննարկվող թեմայի գիտագործնական հետազոտումը, միջազգային փորձի ուսումնասիրությունը՝ առկա խնդիրները վեր հանելու, դրանց հնարավոր լուծումներն առաջ քաշելու և այդպիսով նաև մեզանում էլեկտրոնային արդարադատության ինստիտուտի հետագա կատարելագործմանը նպաստելու համար:

Էլեկտրոնային արդարադատության հասկացությունը և առանձնահատկությունները: «Էլեկտրոնային արդարադատություն» կամ «Էլեկտրոնային դատավարություն» եզրույթների նշանակությունը հայրենական օրենսդրությամբ բացահայտված չէ, օրենսդիրը տվել է «Էլեկտրոնային համակարգ» հասկացության մեկնաբանությունը², որը, իհարկե, չի կարող նույնացվել հիշյալ եզրույթների հետ: Գիտական շրջանակներում «Էլեկտրոնային արդարադատություն» հասկացությունն ընկալվում է լայն և նեղ իմաստներով. լայն իմաստով այն

¹ Տե՛ս Բարձրագույն դատական խորհրդի 2019 թ. տարեկան հաղորդումը, էջ 109-110:

² Էլեկտրոնային համակարգը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 119.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 64.3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով՝ էլեկտրոնային փաստաթղթերի նախապատրաստման, առաքման, ստացման, պահպանման և գործի քննության համար անհրաժեշտ՝ սույն գլխով նախատեսված այլ գործողությունների իրականացման համար Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի կողմից վարվող էլեկտրոնային համակարգն է:

դիտարկվում է որպես էլեկտրոնային (թվային) պետության բաղկացուցիչ մաս, դրա ենթահամակարգը՝ բնորոշ դատական իշխանության ճյուղին՝ որպես դրա զարգացման նոր ուղղություն, որի շրջանակներում, հաշվի առնելով դատական պաշտպանության առանձնահատկությունները, իրացվում են էլեկտրոնային պետության նպատակները, խնդիրները և սկզբունքները, կիրառվում են ինչպես արտաքին, այնպես էլ՝ ներքին սուբյեկտների, ներառյալ՝ դատական վարույթի մասնակիցների հետ փոխհարաբերությունների և փոխազդեցության նոր ուղիներ, մեթոդներ և ձևեր՝ կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների գործադրմամբ: Նեղ իմաստով «էլեկտրոնային արդարադատությունը» ընկալվում է կա՛մ որպես վարույթի ձև և մեթոդ, կա՛մ՝ դատավարության ձև: Ըստ էության, էլեկտրոնային արդարադատության նեղ մոտեցումը ենթադրում է ոչ այլ ինչ, քան կոնկրետ ոլորտային՝ վարույթային մոտեցում՝ ընթացակարգային գիտությունների մեթոդների և գործիքների օգտագործմամբ¹: Էլեկտրոնային դատավարությունն արդարադատության իրականացման ընթացքում դատական վարույթի որևէ մասնակցի կողմից տեղեկատվական և հաղորդակցության տեխնոլոգիաների օգտագործումն է՝ պետական ծառայությունների արդյունավետության ու որակի մակարդակը բարձրացնելու նպատակով²: Իհարկե, տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը, վարույթային նյութերի «թվայնացումը» չպետք է ինքնանպատակ լինեն, այլ պետք է ծառայեն որպես դատավարության խնդիրների իրագործման մեխանիզմների կատարելագործման և իրավունքի սուբյեկտների իրավունքների պաշտպանության ու վերականգնման արդյունավետության բարձրացման միջոց³: Արդարացի թվային դատավարությունների ապահովման համար տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացումը պահանջում է տեղեկատվական տեխնոլոգիաների, դատավարական իրավունքի և դրա մեկնաբանման մշտական համապատասխանեցում և վերահամապատասխանեցում⁴:

Էլեկտրոնային արդարադատության ստեղծումը, որպես էլեկտրոնային պետության բաղկացուցիչ մաս, կապված է մի շարք տեխնիկական,

¹ Տե՛ս **Бурдина Е.В., Зуева С.В.** Электронное правосудие: Монография. - Москва, 2021, էջ 42-43, https://op.raj.ru/pdf/burdina_el_prav.pdf

² Տե՛ս **Слабоспицкий А.С** Альтернативные элементы электронного правосудия // Вестник Воронежского государственного университета. Серия: Право. 2023. № 4 (55), էջ 102, DOI: <https://doi.org/1017308/law/1995-5502/2023/4/>

³ Տե՛ս **Даниелян А.С.** Электронное правосудие в гражданском процессе: понятие, вызовы и перспективы // Ученые записки Крымского федерального университета имени В.И. Вернадского. Юридические науки, 2023, Т. 9 (75). № 2, էջ 199, <https://cyberleninka.ru/article/n/elektronnoe-pravosudie-v-grazhdanskom-protssesse-ponyatie-vyzovy-i-perspektivy/viewer>

⁴ Տե՛ս **Dory Reili G, Francesc Co Tini**, "E-Justice Platforms: Challenges for Judicial Governance". (2022), 13 (1) International Journal For Court Administration 6, academic article, էջ 2, <https://iacajournal.org/articles/10.36745/ijca.445>

ընթացակարգային, իրավական հարցերի լուծման հետ և ներառում է ինչպես դատարանում, այնպես էլ տարբեր ատյանների դատարանների միջև ոչ թղթային փաստաթղթաշրջանառության ներդրումը, էլեկտրոնային փաստաթղթին իրավաբանական ուժ տալը, դատարաններում գործերն էլեկտրոնային եղանակով վարելը, տեսահաղորդակցության կիրառման ընդլայնումն ինչպես դատաքննության ընթացքում, այնպես էլ քրեական գործերի նախնական քննության փուլում, գործին մասնակցող անձանց էլեկտրոնային ծանուցումը (դրանց հավասար իրավական ուժ տալը), դատական ակտերի էլեկտրոնային տվյալների բանկերի ստեղծումը, ինչպես նաև համացանցի միջոցով դրանց հասանելիության ապահովումը, այլ պետական մարմինների հետ դատարանների տվյալների՝ իրավաբանորեն նշանակալի փոխանակումը¹: Տեսակոնֆերանսները հիմնականում օգտագործվում են այն դեպքում, երբ անձի ֆիզիկական ներկայությունն անիրագործելի է կամ ծախսատար, դատարանները պարբերաբար օգտագործում են տեսահաղորդակցության միջոցները նախագահող դատավորի և տարբեր քաղաքներում կամ երկրներում գտնվող փաստաբանների միջև լսումներ անցկացնելու, փորձագետների, խոցելի վկաների, անազատության մեջ գտնվող անձանց հարցաքննության համար²:

Էլեկտրոնային արդարադատությանը, իհարկե, հատուկ են նաև որոշ թերություններ. Ռազոժինսան և Շերբինինսան առանձնացրել են էլեկտրոնային փաստաթղթերի իսկության ստուգման, էլեկտրոնային արդարադատության համակարգերում պահպանվող կամ դրանց միջոցով փոխանցվող տեղեկատվության պաշտպանության դժվարությունները, բնակչության պահպանողական խմբերի անվստահության և պետական իշխանության մարմինների հետ փոխհարաբերություններում տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործման ցանկության բացակայությունը³: Առհասարակ առկա են էլեկտրոնային արդարադատության համակարգի զարգացմանը խոչընդոտող մի շարք խնդիրներ, որոնց թվին կարելի է դասել բնակչության իրավական մշակույթի ցածր մակարդակը, դատական համակարգի աշխատակիցների կրթական անբավարար մակարդակը, դատարանների անբավարար տեղեկատվատեխնիկական հագեցվածությունը, էլեկտրոնային արդարադատության համակարգում առկա տեղեկատվության պաշտպանությանն առնչվող խնդիրները, օրենսդրության մեջ ժամանակակից նորարարությունների բացակայությունը, դատարանների միջև փոխգործակցության

¹ Տե՛ս **Денисов И.С.** Электронное правосудие как элемент электронного государства, էջ 4, <file:///C:/Users/HP/Downloads/elektronnoe-pravosudie-kak-element-elektronnogo-gosudarstva.pdf>

² Տե՛ս **Barry Walsh**, "E-Justice Projects – Distinguishing Myths from Realities". Mexico City, 2011 թ., էջ 6-7:

³ Տե՛ս **Рогожина С.Г., Щербинина Н.С.** Электронное правосудие»: сравнительно-правовой анализ // Журнал юридических исследований. Том 5. № 3, 2020, էջ 87:

Էլեկտրոնային դատավարության գործիքների կիրառումը որոշակի ազդեցություն ունի նաև արդարադատություն իրականացնելիս դատարանների կողմից օգտագործվող ֆինանսական ռեսուրսների նվազեցման նկատմամբ: Բարձրագույն դատական խորհուրդն էլեկտրոնային արդարադատության, անգամ պետական իշխանության մարմինների հետ էլեկտրոնային թղթակցության բացակայությունը դիտարկել է որպես արդարադատության գերծախսատարության հիմնական պատճառներից մեկը³, մինչդեռ ըստ Սահմանադրական դատարանի, դատական պաշտպանության իրավունքի սահմանադրաիրավական բովանդակության տեսանկյունից «էժան արդարադատությունը», կամ էլեկտրոնային միջոցների կիրառմամբ դատարան դիմելու գործընթացներն առավել հուսալի կամ մատչելի համարելն ինքնին չեն կարող դիտարկվել որպես դատարանի մատչելիությունն ապահովող անհրաժեշտ երաշխիքներ: (...) հաղորդակցության էլեկտրոնային ժամանակակից միջոցների առավել լայն գործադրումն անձին իրավական այլընտրանքային հնարավորություն կընձեռի դատարան դիմելիս կամ հայցադիմումը (կից փաստաթղթերով) դատավարության մասնակիցներին ուղարկելիս ընտրություն կատարելու հարցում: Բոլոր դեպքերում, այդպիսի միջոցների օրենքով իրացման սկզբունքները, եղանակները պետք է համադրելի լինեն արդարադատության մատչելիության սահմանադրաիրավական չափանիշներին: (...) առանց վերոհիշյալ նախադրյալների ստեղծման (այդ թվում՝ իրավական), դատական պաշտպանության և, մասնավորապես՝ արդարադատության մատչելիության իրավունքի իրացումը ՀՀ Սահմանադրության 61 և 63-րդ հոդվածների սահմանադրաիրավական բովանդակության տեսանկյունից երաշխավորելի չէր լինի⁴:

Դատավարական գործընթացներում տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը խրախուսում են նաև Հայաստանի Հանրապետության կողմից

² Ст'я Гаврилов Е.О. Дискуссионные аспекты и перспективы внедрения электронного правосудия // Bulletin, 2024, № 553, <https://cyberleninka.ru/article/n/diskussionnye-aspekty-i-perspektivy-vnedreniya-elektronnogo-pravosudiya/viewer>

⁴ Տե՛ս Սահմանադրական դատարանի 2016 թ. մարտի 10-ի թիվ ՍԴՌ-1257 որոշումը, <https://concourt.am/decision/decisions/sdv-1257.pdf>

վավերացված միջազգային պայմանագրերի հիման վրա գործող, ինչպես նաև կոնվենցիոն մարմինները: Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեն (այսուհետ՝ Նախարարների կոմիտե), օրինակ, կարևորել է դատարանների հետ նոր տեխնոլոգիաների միջոցով հաղորդակցվելը, մասնավորապես, ի թիվս այլնի նաև՝ էլեկտրոնային միջոցներով դատական վարույթ հարուցելու, դատավարության ընթացքում հետագա գործողություններն էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության միջավայրում իրականացնելու, դատավարության արդյունքներն էլեկտրոնային եղանակով ստանալու հնարավորությունները՝ անհրաժեշտ անվտանգային և անձնական տվյալների պաշտպանությանն առնչվող պահանջների պահպանմամբ¹: Նախարարների կոմիտեն հնարավոր է համարել նաև կապի հեռավար միջոցներով բանավոր ապացույցների ձեռքբերումը, եթե դա թույլ է տալիս տվյալ ապացույցի բնույթը՝ նպատակահարմար համարելով ի թիվս այլնի, հաշվի առնել նաև այնպիսի գործոններ, ինչպիսիք են՝ ապացույցների նշանակությունը, ապացույցը ներկայացնող անձի կարգավիճակը, ապացույցները փոխանցող տեսահաղորդակցության անվտանգությունն ու ամբողջականությունը, դատարանում համապատասխան անձի ներկայությունն ապահովելու հետ կապված ծախսերն ու բարդությունները: Միևնույն ժամանակ, հեռավար եղանակով ապացույցներ ձեռք բերելիս անհրաժեշտ է համարել ապահովել, որ բանավոր ցուցմունքների փոխանցումը տեսանելի և լսելի լինի դատավարության մասնակիցներին ու հրապարակային դատավարությանը ներկա գտնվող անձանց, հեռավար եղանակով հարցաքննվող անձը հնարավորություն ունենա տեսնել և լսել դատավարությունն այն չափով, որն անհրաժեշտ է այն արդար և արդյունավետ իրականացնելու համար²: Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհրդի կարծիքով տեղեկատվական տեխնոլոգիաները պետք է գործիք կամ միջոց հանդիսանան արդարադատության կառավարումը բարելավելու, դատարաններից օգտվողների համար դատարանի հասանելիությունը դյուրացնելու և Կոնվենցիայի 6-րդ հոդվածում սահմանված երաշխիքները խթանելու համար, որոնք վերաբերում են դատավորի անաչառությանը, անկախությանը, դատաքննության արդարությանը և ողջամիտ տևողությանը: Այնուամենայնիվ, դրանց կիրառումը չպետք է սահմանափակի դատավարական երաշխիքները և որևէ կերպ չպետք է դատարանից օգտվողներին

¹ Տե՛ս Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի 2001 թ. փետրվարի 28-ի «Նոր տեխնոլոգիաների օգտագործման միջոցով քաղաքացիներին դատական և այլ ծառայությունների էլեկտրոնային մատուցման վերաբերյալ» թիվ (2001)3 հանձնարարականը, կետ 3:

² Տե՛ս Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի «Քաղաքացիական և վարչական դատավարություններում էլեկտրոնային ապացույցների վերաբերյալ» 2019 թ. հունվարի 30-ի ուղեցույցը, կետ 3,

[https://search.coe.int/cm/#{%22CoEIdentifier%22:\[%220900001680902e0c%22\],%22sort%22:\[%22CoEValidationDate%20Descending%22\]}](https://search.coe.int/cm/#{%22CoEIdentifier%22:[%220900001680902e0c%22],%22sort%22:[%22CoEValidationDate%20Descending%22]})

գրկի մրցակցային դատավարության, բնօրինակ ապացույցներ ներկայացնելու, վկաներին կամ փորձագետներին լսելու և ի շահ իրենց ցանկացած նյութ ներկայացնելու կամ հայտարարություն կատարելու իրավունքներից: Տեսահամաժողովները կարող են դյուրացնել նիստերի առավել ապահով պայմաններում իրականացնելը կամ հեռահար կերպով վկաներին կամ փորձագետներին լսելը: Այնուամենայնիվ, սա կարող է ունենալ թերություն այն առումով, որ դատավորն ուղղակիորեն կամ հստակ կարող է չընկալել կողմի, վկայի կամ փորձագետի բառերը կամ արձագանքը¹: Վեճերի լուծման համացանցային (օնլայն) մեխանիզմները, ըստ Եվրոպայի խորհրդի Խորհրդարանական վեհաժողովի, կարող են ուղեկցվել որոշակի, ներառյալ՝ տեխնիկական խնդիրներով՝ անձանց անհավասարությունը համացանցային ռեսուրսների հասանելիության տեսանկյունից, կոնֆիդենցիալության և դատական ակտերի կատարման հարցերը, ուստի ընդգծելի է Կոնվենցիայով երաշխավորված իրավունքների, հատկապես՝ արդար և արդյունավետ դատաքննության իրավունքների պաշտպանության անհրաժեշտությունը²: Եվրոպայի խորհրդի Արդարադատության արդյունավետության եվրոպական հանձնաժողովը խրախուսել է անգամ արհեստական բանականության գործիքների կիրառումը՝ հիմնական իրավունքների, խտրականության բացառման, անվտանգության և որակի, թափանցիկության, արդարության և անկողմնակալության, օգտագործողի վերահսկողության ներքո գտնվելու սկզբունքների պահպանմամբ³: Նույն հանձնաժողովը «Դատական իշխանության քաղաճ դասերը և դրա առջև ծառացած մարտահրավերները COVID-19 համավարակի ընթացքում և դրանից հետո» հռչակագրում, գտնելով, որ տեղեկատվական տեխնոլոգիաների արագ ներմուծումը և ավելորդ օգտագործումը կարող են հավասարապես բերել բացասական հետևանքների, նշել է, որ տեղեկատվական տեխնոլոգիաների լուծումները, ինչպիսիք են առցանց ծառայությունները, հեռավար լսումները և տեսակոնֆերանսները, ինչպես նաև թվային արդարադատության հետագա

¹ Տե՛ս Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհրդի «Արդարադատությունը և տեղեկատվական տեխնոլոգիաները» կարծիք թիվ 14 (2011), ընդունվել է 12-րդ լիագումար նիստին, Ստրասբուրգ, 2011 թ. նոյեմբերի 7-9-ին, կետեր 5, 28, 30:

² Տե՛ս Եվրոպայի խորհրդի Խորհրդարանական վեհաժողովի «Արդարադատության մատչելիությունը և համացանցը. ներուժը և մարտահրավերները», 2015 թ. նոյեմբերի 10-ի թիվ 13918 զեկույցը, <https://assembly.coe.int/nw/xml/XRef/Xref-XML2HTML-EN.asp?fileid=22245&lang=en>

³ Տե՛ս Եվրոպայի խորհրդի Արդարադատության արդյունավետության եվրոպական հանձնաժողովի «Դատական համակարգերում և դրանց միջավայրում արհեստական բանականության օգտագործման վերաբերյալ եվրոպական էթիկական խարտիա», 2018 թ., 3-4 դեկտեմբեր, Ստրասբուրգ, էջ 7, <https://rm.coe.int/ethical-charter-en-for-publication-4-december-2018/16808f699c>



զարգացումը, միշտ պետք է պահպանեն արդար դատավարության հիմնարար իրավունքներն ու սկզբունքները¹:

Ըստ գիտության ներկայացուցիչների՝ դատական գործունեության շրջանակներում արհեստական բանականության ներդրման նպատակն է դրա արդյունավետության բարձրացումն այնպիսի համակարգերի ստեղծմամբ, որոնք հնարավորություն են տալիս ավտոմատացնել գործերի քննության ընթացակարգերը, դատական որոշումներ կայացնելիս ապահովել դատավորի, ինչպես նաև՝ դատական պաշտպանությունն իրացնելիս ֆիզիկական և իրավաբանական անձանց աջակցությունը²: Հետազոտողների մի մասը գտնում են, որ մարդու փոխարինումն արհեստական բանականությամբ, բազմաթիվ դեպքերում, անշուշտ, օգտակար է, հատկապես, երբ խոսքը գնում է առօրյա աշխատանքի մասին, որտեղ առկա է նաև մարդկանց միջև անհավասարությունը մարդու և մեքենայի միջև անհավասարության փոխարինելու հեռանկարը: Իրավագիտության համար նման իրավիճակն անընդունելի է, ինչի պատճառով էլ վտանգավոր է ինչպես թվային միջավայրի հնարավորությունների թերագնահատումը, այնպես էլ՝ գերագնահատումը³: Արդարադատության իրականացման ընթացքում գոյություն ունի մարդկային գործոն, և դա պետք է պահպանվի, քանի որ արդարադատությունը վերաբերում է մարդկանց և նրանց միջև վեճերին⁴: Վերջին շրջանում կատարված հետազոտությունները վկայում են, որ արհեստական բանականության գործիքների (ChatGPT) կողմից ստեղծված և դատավորների կողմից անմիջապես ընդունված դատական ակտերի մի մասը բողոքարկման արդյունքում չեն հաստատվել, այդպիսով փաստելով, որ նշված գործիքը ռիսկային է սխալ դատավճիռներ կայացնելու տեսանկյունից⁵:

Ներկայում տարբեր երկրներ քաղաքացիական, քրեական կամ վարչական դատավարություններում այս կամ այն չափով ներդրել են արդարադատության էլեկտրոնային տարբեր համակարգեր, ներառյալ էլեկտրոնային փաստաթղթերի ներկայացումը, գործերի կառավարումը՝ այդ թվում դատական նիստերին մասնակցություն՝ դատական նիստերի վիրտուալ դահլիճներում: Էլեկտրոնային

¹ Տե՛ս Եվրոպայի խորհրդի Արդարադատության արդյունավետության եվրոպական հանձնաժողովի «Դատական իշխանության քաղաքացիական դատերը և դրա առջև ծառացած մարտահրավերները COVID-19 համավարակի ընթացքում և դրանից հետո» հոչակագիրը, սկզբունք 5 (կիրառարդարադատություն):

² Տե՛ս **Бурдина Е.В., Зуева С.В.** նշված աշխատությունը, էջ 222:

³ Տե՛ս **Брянцева О.В., Солдаткина О.Л.** Электронное правосудие в России: проблемы и пути решения:

⁴ Տե՛ս Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհրդի «Արդարադատությունը և տեղեկատվական տեխնոլոգիաները» կարծիք թիվ 14 (2011), ընդունվել է 12-րդ լիագումար նիստին, Ստրասբուրգ, 2011 թ. նոյեմբերի 7-9, կետ 6:

⁵ Տե՛ս **Shilun Zhou**, "Analyzing the justification for using generative AI technology to generate judgments based on the virtue jurisprudence theory", Journal of Decision Systems, 2024 թ., էջ 5-6,

<https://www.tandfonline.com/doi/full/10.1080/12460125.2024.2428999>

արդարադատության իրականացման առաջատար երկրներից է Ավստրիան, որտեղ ներդրվել է հատուկ միասնական ծրագիր, ինչը ենթադրում է դատական գործընթացների ամբողջական ավտոմատացում: Գերմանիայում հայցադիմումները և դրան կից փաստաթղթերը, միջնորդությունները, փորձագիտական եզրակացությունները և այլ փաստաթղթերը, երրորդ անձանց դիրքորոշումները կարող են դատարան ներկայացվել էլեկտրոնային փաստաթղթի ձևով, մինչդեռ դատական ծանուցումների կապակցությամբ էլեկտրոնային հաղորդակցության ձևերը կիրառելի են պետական մարմինների, պաշտոնատար անձանց, նոտարների, փաստաբանների և հարկային խորհրդատուների համար¹: Ղազախստանի Հանրապետությունում ևս գործում են էլեկտրոնային արդարադատության համակարգեր, և քաղաքացիական գործերի շուրջ 90 տոկոսը ներկայացվում է հենց այդ եղանակով, իսկ թղթային եղանակով դատարան ներկայացվող դիմումները պարտադիր սկանավորվում են: Ավելին, դատական համակարգը դարձել է ավելի թափանցիկ, քանզի հնարավորություն է տրվել համացանցի միջոցով ստանալ դատական փաստաթղթերի էլեկտրոնային տարբերակները²: Ամերիկայի Միացյալ Նահանգներում և Մեծ Բրիտանիայում էլեկտրոնային արդարադատության գործիքները կիրառվում են նաև քրեական գործերի քննության ընթացքում: Միացյալ Թագավորությունում գործի ներկայացման և քննության էլեկտրոնային համակարգերը թույլ են տալիս ապացույցները ներկայացնել էլեկտրոնային եղանակով և հեռակա կարգով հետևել դատավարության ընթացքին՝ մուտք գործելով համապատասխան համակարգ: Ամերիկայի Միացյալ Նահանգներում գործերի վարման էլեկտրոնային համակարգը հնարավորություն է տալիս փաստաթղթեր ներկայացնել և առցանց հետևել իրենց գործերի ընթացքին: Շատ դատարաններ օգտագործում են տեսակապի միջոցով դատական նիստերին մասնակցելու հնարավորությունը, որը թույլ է տալիս կողմերին մասնակցել դատական գործընթացներին՝ առանց դատարանի դահլիճում ֆիզիկապես ներկա լինելու³: Էլեկտրոնային արդարադատության գործիքները կիրառվում են նաև Ռուսաստանի Դաշնությունում արբիտրաժային գործընթացներում՝ անկախ դատավարության տեսակից և դատական ատյանից⁴:

¹ Տե՛ս **Бурдина Е.В., Зуева С.В.** նշված աշխատությունը, էջեր 279, 285, 286:

² Տե՛ս **Бурдина Е.В., Зуева С.В.** նշված աշխատությունը, էջեր 302, 303:

³ Տե՛ս «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացում կատարելու մասին» սահմանադրական, «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություն և լրացում կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» օրենքների նախագծերի ընդունման հիմնավորումները:

⁴ Տե՛ս **Кашанин А.В., Козырева А.Б., Курносова Н.А.** Информационные технологии в правосудии: состояние и перспективы. – Москва, 2020, էջ 18,

Այսպիսով, էլեկտրոնային արդարադատության գործիքները լրացուցիչ երաշխիքներ են արդարադատության մատչելիության սկզբունքի գործնական իրացման համար, ավելին, դրանք կարող են նպաստել դատական գործերի առավել արդյունավետ քննությանը, ինչպես դատարանների, այնպես էլ դատավարության մասնակիցների ծախսերի, գործադրվող ռեսուրսների նվազեցմանը, թոթափել դատավորների և աշխատակազմերի ծանրաբեռնվածությունը, սակայն, միաժամանակ դրանք օգտագործման տեսանկյունից պետք է հնարավորինս պարզ, հասանելի և մատչելի լինեն արդարադատություն հայցողների և դատավարության այլ մասնակիցների համար, նրանց չծանրաբեռնեն հավելյալ իրավական և տեխնիկական պարտականություններով, հակառակ դեպքում խոսք չի կարող լինել արդարադատության մատչելիության սկզբունքի գոյության մասին: Ավելին, մեր համոզմամբ, էլեկտրոնային գործիքների կիրառման ընթացակարգային հնարավորությունը կարող է հանդիսանալ դատական պաշտպանության դիմելու ինքնուրույն (այլընտրանքային) եղանակ՝ չբացառելով այլ եղանակով (եղանակներով) դատական պաշտպանություն հայցելու տեսագործնական հնարավորությունները: Նշվածը կարևորվում է հատկապես էլեկտրոնային համակարգերի ներդրման սկզբնական փուլում, երբ դրանց արդյունավետությունը գործնականում փորձարկման ու գնահատման կարիք ունի, ուստի արդարադատության էլեկտրոնային գործիքների միայն աստիճանական ներդրումը կնպաստի համակարգերի խութերի բացահայտմանն ու վերացմանը, դրանց կատարելագործմանը և արդյունավետության ապահովմանը:

Վարչական արդարադատության էլեկտրոնային համակարգը Հայաստանի Հանրապետությունում. վեր հանված իրավական և գործնական խնդիրներն ու դրանք հաղթահարելու հնարավոր ուղիները. էլեկտրոնային արդարադատության կառուցակարգերը վարչական դատավարությունում ներդրվել են դեռևս 2023 թ. դեկտեմբերի 22-ին կատարված փոփոխություններով ու լրացումներով, սակայն դրանք ուժի մեջ մտան միայն էլեկտրոնային համակարգի գործարկման մասին հայտարարությունը Բարձրագույն դատական խորհրդի կողմից 2025 թ. օգոստոսի 15-ին հրապարակելուց հետո՝ օգոստոսի 25-ից¹: էլեկտրոնային արդարադատության

<https://ilr.hse.ru/data/2020/07/14/1597449494/%D0%98%D0%BD%D1%84%D0%BE%D1%80%D0%BC%D0%B0%D1%86%D0%B8%D0%BE%D0%BD%D0%BD%D1%8B%D0%B5%20%D1%82%D0%B5%D1%85%D0%BD%D0%BE%D0%BB%D0%BE%D0%B3%D0%B8%D0%B8%20%D0%B2%20%D0%BF%D1%80%D0%B0%D0%B2%D0%BE%D1%81%D1%83%D0%B4%D0%B8%D0%B8.pdf>

¹ Մինչ այդ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում կատարված փոփոխությունների և լրացումների մասով էլեկտրոնային համակարգի գործարկման մասին Բարձրագույն դատական խորհրդի կողմից 2024 թ. փետրվարի 1-ի «Իրազեկում ՀՀ դատարաններում էլեկտրոնային համակարգի գործարկման մասին» հայտարարության հիմքով շուրջ մեկուկես տարի քաղաքացիական դատավարությունն իրականացվում էր նաև էլեկտրոնային համակարգի միջոցով, <https://court.am/hy/news/1700>

իրականացմանն առնչվող առանձին կարգավորումներ են սահմանվել նաև Բարձրագույն դատական խորհրդի կողմից¹, որոնք տարածվում են նաև վարչական դատավարության շրջանակներում ներդրված էլեկտրոնային համակարգի վարման հարաբերությունների նկատմամբ: Այդպիսով, գործարկված կառուցակարգի արդյունավետությունն ու արդարադատության մատչելիության սկզբունքի երաշխավորման տեսանկյունից դրա ազդեցությունը, թերևս, օբյեկտիվորեն վաղ է համակարգային գնահատել, սակայն ներկա փուլում առավել քան կարևորում ենք ներդրված համակարգի գնահատումն ինչպես օրենսդրական երաշխիքների, այնպես էլ տեխնիկական լուծումների ու հազեցվածության տեսանկյունից, ինչը, մեր համոզմամբ, կարող է դրական ազդեցություն ունենալ էլեկտրոնային համակարգի հետագա լավարկման ու կատարելագործման համար:

Իհարկե, վարչական դատավարությունում էլեկտրոնային արդարադատությանը բնորոշ առանձին բաղադրիչներ ներդրվել են շատ ավելի վաղ. դեռևս 2014 թ. հունվարի 7-ից ուժի մեջ մտած ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը նախատեսեց էլեկտրոնային փոստով ծանուցման եղանակը, հետագայում սահմանվեց էլեկտրոնային եղանակով փաստաթղթեր ներկայացնելու կարգը², իսկ ավելի ուշ Վարչական դատարանը հնարավորություն ստացավ հաղորդակցության էլեկտրոնային գործիքների՝ միասնական էլեկտրոնային տեղեկատվական համակարգի միջոցով այլ մարմիններից և անձանցից ձեռք բերել գործի քննության համար անհրաժեշտ տեղեկություններ, ինչպես նաև սահմանվեց դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերը դատական իշխանության պաշտոնական կայքի միջոցով հրապարակելու կարգը³: Ինչ վերաբերում է 2025 թ. օգոստոսի 25-ից ներդրված էլեկտրոնային համակարգին, ապա այն միտված է դատավարության տարբեր գործընթացների էլեկտրոնային եղանակով կազմակերպմանը (էլեկտրոնային եղանակով գործերի վարումը, փաստաթղթաշրջանառության ապահովումը, դատական ծանուցումների կազմակերպումը, ապացույցների ներկայացումը և այլն), ինչպես նաև՝ հեռակա կարգով գործի ընթացքին հետևելու հնարավորություն ապահովելուն, ինչը կարող է օգտակար լինել հատկապես այն

¹ Տե՛ս Բարձրագույն դատական խորհրդի «Դատարաններում էլեկտրոնային համակարգի վարման և դրանից օգտվելու, ծավալուն էլեկտրոնային ֆայլերի, ինչպես նաև էլեկտրոնային համակարգի միջոցով ներկայացնելու անհնարինությամբ պայմանավորված էլեկտրոնային ֆայլերի ներկայացման կարգը սահմանելու մասին» 2024 թ. փետրվարի 1-ի թիվ ԲԴԽ-8-Ն-4 որոշումը:

² Տե՛ս «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» 2017 թ. դեկտեմբերի 21-ի թիվ ՀՕ-8-Ն օրենքի 1-ին հոդվածով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 64.1-րդ հոդվածի լրացումը:

³ Տե՛ս «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2022 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ ՀՕ-583-Ն օրենքի 2-րդ և 5-րդ հոդվածներով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 43.1-րդ հոդվածի լրացումը և 114-րդ հոդվածի 6-րդ մասի փոփոխությունը:



անձանց համար, ովքեր ֆիզիկական, ֆինանսական կամ այլ սահմանափակումների պատճառով չեն կարող անձամբ ներկա լինել դատարանում¹:

Օրենսդիրը 2023 թ. դեկտեմբերի 22-ին ընդունված փոփոխություններով, ֆիզիկական անձանց համար նախատեսելով դատարան դիմելու եղանակի ընտրության հնարավորություն, միաժամանակ իրավաբանական անձանց, անհատ ձեռնարկատերերի, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, վարչարարություն իրականացնող մարմինների, դրանց պաշտոնատար անձանց, ներկայացուցիչ հանդիսացող փաստաբանների, սնանկության գործով կառավարիչների, արտոնագրված հաշտարարների և նոտարների համար ուղղակի պարտականություն է նախատեսել մասնագիտացված վարչական դատարան դիմել և այլ դատավարական գործողություններ իրականացնել միայն էլեկտրոնային համակարգի միջոցով՝ անկախ տվյալ վարչական գործի շրջանակներում էլեկտրոնային համակարգի միջոցով առնվազն մեկ անգամ որևէ գործողություն կատարած լինելուց կամ չլինելուց: Ընդ որում, եթե ֆիզիկական անձինք էլեկտրոնային համակարգից օգտվելու անհնարինության դեպքում կարող են դատարանին տեղյակ պահել և դատավարական գործողություններն իրականացնել այլընտրանքային եղանակներով, ապա նշված անձինք և մարմիններն ուղղակիորեն զրկվել են այդպիսի հնարավորությունից: Միևնույն ժամանակ, հատուկ վարույթի գործերով (բացառությամբ՝ ընտրական իրավունքի պաշտպանության, կարանտինի պայմաններում օրենքով սահմանված միջոցառումների կիրառման շրջանակներում ընդունված ակտերի իրավաչափության վիճարկման, անհետաձգելի միջամտության որոշման բողոքարկման վարույթներով հայցվորները, ինչպես նաև՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 31.6-րդ, 31.7-րդ, 31.8-րդ, 31.9-րդ գլուխներով նախատեսված գործերով) «գործին մասնակցող անձանց» համար պարտականություն է նախատեսվել դատավարական գործողություններն իրականացնել միայն էլեկտրոնային համակարգի միջոցով: Այսպիսի մոտեցման նպատակը, ըստ էության, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծի ընդունման հիմնավորմամբ որևէ կերպ չի փաստարկվել², հատկապես որ օրենսդրի կողմից ողջամիտ է համարվել նախատեսել, որ առնվազն մոտակա մի քանի տարիների ընթացքում դատավարության ֆիզիկական անձ մասնակիցները պետք է

¹ Տե՛ս «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացում կատարելու մասին» սահմանադրական, «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություն և լրացում կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» օրենքների նախագծերի ընդունման հիմնավորումը:

² Տե՛ս ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծի ընդունման հիմնավորումը:

հնարավորություն ունենան «ընտրել»՝ օգտագործել համապատասխան էլեկտրոնային համակարգերը, թե ոչ՝ հաշվի առնելով վերջիններիս կարգավիճակը, հնարավորությունները և գիտելիքների մակարդակը: Նման պայմաններում, հատուկ վարույթի գործերով սահմանափակելով դատավարության մասնակից ֆիզիկական անձանց կողմից դատարան դիմելու և դատավարական գործողություններ կատարելու եղանակի ընտրության հնարավորությունը, օրենսդիրը, մեր կարծիքով, դատարան դիմելու իրավունքի իրացման նկատմամբ նախատեսել է հետապնդվող նպատակի հետ համարժեք հարաբերակցության մեջ չգտնվող և այդպիսով նաև արդարադատության մատչելիության սկզբունքի բուն էությունը խաթարող սահմանափակում: Մեր այս եզրահանգումը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու, համայնքի ղեկավարի որոշումների և գործողությունների իրավաչափությունը վիճարկելու, դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու, անձնական տվյալների պաշտպանության, լիցենզիայի հետ կապված լիազոր մարմնի որոշումների իրավաչափությունը վիճարկելու, կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի եզրակացությունները փաստի հիմքով վիճարկելու, իրավիճակային հայտարարագիր ներկայացնելու որոշման իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ հատուկ վարույթի գործերով դատավարության մասնակից ֆիզիկական անձինք, այդ թվում նաև՝ հայցվորները (դիմողները) չեն կարող իրացնել դատական պաշտպանության իրենց իրավունքն այլ կերպ, քան ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 11.1-րդ գլխով սահմանված էլեկտրոնային եղանակով: Այս տեսանկյունից որևէ կերպ հիմնավորված չէ նաև օրենսդրի տարբերակված մոտեցումն ընտրական իրավունքի պաշտպանության, կարանտինի պայմաններում օրենքով սահմանված միջոցառումների կիրառման շրջանակներում ընդունված ակտերի իրավաչափության վիճարկման, անհետաձգելի միջամտության որոշման բողոքարկման վերաբերյալ գործերով հայցվոր ֆիզիկական անձանց համար էլեկտրոնային համակարգից օգտվելու ընտրության հնարավորություն նախատեսելը, ինչն առավել ընդգծելի է դարձնում մյուս հատուկ վարույթի գործերով ֆիզիկական անձանց կողմից դատարան դիմելու իրավունքի նկատմամբ կիրառված սահմանափակման անհամաչափությունը:

Դրանից բացի, անհրաժեշտ է նկատել, որ թեև ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 11.1-րդ գլխի 64.3-րդ հոդվածում օրենսդիրը կիրառել է «գործին մասնակցող անձինք» եզրույթը, սակայն ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի ինչպես նշված, այնպես էլ այլ հոդվածներում բացահայտված չէ հիշյալ հասկացության էությունը, ավելին, վարչադատավարական օրենքը կիրառել է «վարչական դատավարության մասնակիցներ» եզրույթը, որպիսիք են՝ կողմերը և երրորդ անձինք, ուստի, նորմատիվ իրավական ակտը մեկնաբանելիս տարընկալումներից խուսափելու, արդարադատությունը կանխատեսելի և արդյունավետ դարձնելու

համար նպատակահարմար է օրենսգրքում կա՛մ օգտագործել արդեն իսկ կիրառված հասկացությունը, կա՛մ տալ նոր օգտագործված հասկացության սահմանումը:

Վերը նշվածից հետևում է, որ 2025 թ. օգոստոսի 25-ից սկսած վարչական արդարադատությունը, ֆիզիկական անձանց նկատմամբ կիրառելի առանձին բացառություններից բացի, կարող է իրականացվել միայն էլեկտրոնային եղանակով: Մինչդեռ, «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգի բնականոն և անխափան աշխատանքը խոչընդոտող գործնականում արձանագրված ոչ եզակի դեպքերը¹, էլեկտրոնային քաղաքացիական դատավարության համակարգի բազմակի խափանումներն առավել քան ակնառու են դարձնում անվտանգային համապատասխան միջավայրի բացակայության պայմաններում միայն էլեկտրոնային գործիքների միջոցով արդարադատություն իրականացնելու խոցելիությունը, և, մեր համոզմամբ, հայրենական օրենսդրության նմանաբնույթ ցանկացած փոփոխություն պետք է ուղեկցվեր համապատասխան տեխնիկական, այդ թվում նաև՝ անվտանգության միջոցառումների իրականացմամբ, դատավարության իրականացման ավանդական եղանակից էլեկտրոնային եղանակների անցնցում անցումն ապահովելու համար համապատասխան համակարգերի աստիճանական գործարկմամբ, դրանց նախնական փորձարկման մեթոդների կիրառմամբ, որոնք կերաշխավորեին էլեկտրոնային համակարգերի անխոչընդոտ աշխատանքը՝ այդպիսով նաև նվազագույնի հասցնելով արդարադատության մատչելիության սկզբունքի արդյունավետ իրացման հնարավոր սպառնալիքները:

Էլեկտրոնային համակարգի միջոցով վարչական արդարադատության իրականացման հիմնախնդիրները նպատակահարմար ենք համարում քննարկման առարկա դարձնել նաև արդար դատաքննության իրավունքի հրապարակայնության բաղադրիչի համատեքստում: Նախ, անհրաժեշտ է արձանագրել, որ ի տարբերություն քաղաքացիական դատավարության, վարչական դատավարության էլեկտրոնային համակարգի պարագայում անկախ հայցադիմումը թղթային եղանակով դատարան ներկայացնելուց, այն դատարանի համապատասխան

¹ «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգի աշխատանքը տևական ժամանակահատվածով՝ շուրջ տասն ամիս, խաթարվել էր, երբ դատավորների միջև համակարգչային ծրագրի միջոցով գործերի բաշխման գործընթացին միջամտելու դեպքի կապակցությամբ հարուցված քրեական գործի շրջանակներում 2021 թ. հուլիսին առգրավվել էին Երևան քաղաքում գտնվող դատարանների սերվերների մուտքի և կառավարման բանալիները: Այնուհետև՝ 2024 թ. հունիսի 28-ին, Դատական դեպարտամենտի վարչական շենքում ջրի արտահոսքի պատճառով համակարգերն սպասարկող սերվերների վնասման հետևանքով մինչև 2024 թ. սեպտեմբերը «Դատալեքս դատական տեղեկատվական» համակարգում տեղեկատվության գեներացման տեխնիկական խնդիրները հանգեցրեցին դատական ակտերը դատական իշխանության պաշտոնական կայքի միջոցով հրապարակելու օրենսդրական պահանջի կատարման անհնարինությանը, ինչն էլ, իր հերթին, դարձավ արդար դատաքննության իրավունքի առանձին բաղադրիչի՝ հրապարակային դատավարության փաստացի սահմանափակման պատճառ:



աշխատակիցների կողմից մուտքագրվում է էլեկտրոնային համակարգ, և հետագա գործընթացներն ապահովվում են նշված համակարգի միջոցով: Միևնույն ժամանակ, որոնման գործիքների միջոցով կատարված մեր ուսումնասիրությունները փաստեցին, որ 2025 թ. օգոստոսի 22-ից հետո «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգում որևէ դատական գործ չի մուտքագրվել, ինչից հետևում է, որ վարչական արդարադատության էլեկտրոնային հարթակից տեղեկատվությունը, առհասարակ, «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգում չի գեներացվում: Ավելին, էլեկտրոնային վարչական դատավարության համակարգում կատարված ուսումնասիրությունների արդյունքում պարզ դարձավ, որ գործն ըստ էության լուծող դատական ակտերը հրապարակման են նշանակվում էլեկտրոնային համակարգի միջոցով¹, որպիսի տեխնիկական լուծումը, մեր համոզմամբ, ուղղակիորեն չի կարող որևէ աղերս ունենալ արդար դատաքննության իրավունքի հրապարակայնության բաղադրիչի գործնական ապահովման հետ: Խնդիրը պայմանավորված է այն հանգամանքով, որ մի կողմից օրենսդիրը սահմանել է դատական ատյանում վարույթը եզրափակող դատական ակտերի (օրենքով կամ Բարձրագույն դատական խորհրդի որոշմամբ նախատեսված դեպքերում նաև այլ դատական ակտերի²) միայն դատական իշխանության պաշտոնական կայքի³ միջոցով հրապարակելու պահանջը, մյուս կողմից անգամ էլեկտրոնային համակարգից օգտվելու հնարավորություն չունեցող ֆիզիկական անձանց վերաբերյալ կայացված գործն ըստ էության լուծող և պարտադիր հրապարակման ենթակա այլ (միջանկյալ) դատական ակտերի հրապարակման համար նախատեսվել է դրանք միայն համակարգի⁴ միջոցով հրապարակելու⁵ տեխնիկական հնարավորությունը⁶:

Հրապարակայնության սկզբունքի ապահովման տեսանկյունից անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ ևս մեկ հիմնախնդրի. ինչպես օրենսդիրը, այնպես էլ

¹ Տե՛ս, օրինակ, «Վարչական դատավարության էլեկտրոնային հարթակում» հրապարակված թիվ ՎԴ/18559/05/25, ՎԴ/18544/05/25, թիվ ՎԴ/18427/05/25, ՎԴ/17140/05/25 վարչական գործերը:

² Տե՛ս Բարձրագույն դատական խորհրդի «Դատական իշխանության պաշտոնական կայքում գործի և դրա ընթացքի վերաբերյալ հրապարակման ենթակա տեղեկությունների, այդ թվում՝ եզրափակիչ և այլ դատական ակտերի ցանկը և հրապարակման կարգը սահմանելու մասին» 2021թ. փետրվարի 25-ի թիվ ԲԴԽ-9-Ո-13 որոշումը:

³ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական իշխանությունն ունի պաշտոնական կայք՝ www.court.am

⁴ Տե՛ս «Վարչական դատավարության էլեկտրոնային համակարգ», <https://e-administrativecourt.am/?tab=firstInstance>

⁵ Դատական ակտերի հրապարակման այդ եղանակի մասին տեղեկություն է ներառվել բացառապես Բարձրագույն դատական խորհրդի 2025 թ. օգոստոսի 15-ի հայտարարությամբ:

⁶ Նկատենք, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում 2023 թ. դեկտեմբերի 22-ին կատարված փոփոխությունների և լրացումների ուժի մեջ մտնելուց հետո էլեկտրոնային գործերով «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգում վարույթը եզրափակող և հրապարակման ենթակա այլ դատական ակտերի ամբողջական հրապարակումն ապահովվել է միայն մասնակիորեն:

Բարձրագույն դատական խորհուրդը երաշխավորել են էլեկտրոնային եղանակով վարվող գործի նյութերին, ինչպես նաև նյութական եղանակով ներկայացված փաստաթղթերին ծանոթանալու հնարավորությունը, սակայն չեն կանոնակարգել էլեկտրոնային համակարգի միջոցով դատարան ներկայացված վարչական գործի նյութերը համակարգից դուրս պահպանելու կարգը, որպիսի պայմաններում խնդրահարույց է, թե էլեկտրոնային համակարգից չօգտվող ֆիզիկական անձն ինչ ընթացակարգով կարող է ծանոթանալ էլեկտրոնային եղանակով դատարան ներկայացված կամ Վարչական դատարանի կողմից ստացված գործի նյութերին: Հատկանշական է, որ օրենսդիրը պարտավորեցրել է պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին, վարչարարություն իրականացնող մարմիններին, դրանց պաշտոնատար անձանց հայցադիմումները դատարան ներկայացնել և դատավարական այլ գործողություններն իրականացնել բացառապես էլեկտրոնային եղանակով, իսկ գործի պահպանման առումով դատարանի կամ դատարանի աշխատակազմի վրա անուղղակի պարտականություն է դրվել ցանկացած փաստաթուղթ պահպանել սկանավորված, սակայն, գործի նյութերը նյութական (թղթային) եղանակով պահպանելու պարտականություն չսահմանելով, ըստ էության, սահմանափակվել է էլեկտրոնային համակարգից չօգտվող ֆիզիկական անձանց դատական գործի նյութերին ծանոթանալու իրավունքի իրացման հնարավորությունը: Գիտության ներկայացուցիչներն այս խնդրի կապակցությամբ առաջարկում են հայելային մոտեցում ցուցաբերել, այն է՝ էլեկտրոնային նյութերը պետք է հասանելի լինեն նույնքան, որքան դրանց ավանդական թղթային ձևերը¹, ինչը, մեր կարծիքով, ողջամտորեն իրագործելի է գործնականում: Հատկանշական է, որ Դատական դեպարտամենտի ղեկավարին հասցեագրված տեղեկատվության հարցմանն ի պատասխան հայտնվել է, որ առաջին ատյանում էլեկտրոնային եղանակով հարուցված քաղաքացիական գործերը պահպանվում են որպես կանոն էլեկտրոնային եղանակով, սակայն որոշ դեպքերում պահպանվում են նաև նյութական (թղթային) եղանակով՝ ըստ անհրաժեշտության²: Նշվածը փաստում է, որ օրենսդրությամբ էլեկտրոնային համակարգի միջոցով ներկայացված գործի նյութերը նյութական (թղթային) եղանակով պահպանելու կարգ սահմանված չլինելու, ինչպես նաև Բարձրագույն դատական խորհրդի կողմից դատարան փաստաթղթերի հանձնման և դատարանների գործավարության այլ կանոններ սահմանված չլինելու, դատարանների գործավարության գործող կանոններով³ էլեկտրոնային եղանակով

¹ Տե՛ս **Слабоспицкий А.С.** նշված աշխատությունը, էջ 104:

² Տեղեկատվության հարցումը ներկայացվել է մինչ վարչական դատավարության էլեկտրոնային համակարգի գործարկումը:

³ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 166-րդ հոդվածի 10-րդ մասի հիմքով գործում է ՀՀ դատարանների նախագահների խորհրդի «Հայաստանի

փաստաթղթերի ներկայացման առանձնահատկություններ սահմանված չլինելու պայմաններում, դատական գործի նյութերը նյութական (թղթային) կրիչով պահպանելու հարցը, ըստ էության, թողնվել է դատարանի, առավելապես՝ դատավորի հայեցողությանը: Այսպիսով, ինչպես քաղաքացիական, այնպես էլ վարչական էլեկտրոնային դատավարության համակարգերի նկատմամբ կիրառված այս մոտեցումը, մեր կարծիքով, նպատակահարմար է հնարավորինս սեղմ ժամկետում վերանայել:

Այս առումով, պետք է նկատել, որ այլ է իրավիճակը համակարգից օգտվող անձանց դեպքում. վեջիններիս հասանելի են բոլոր դատական գործերը և դրանց առանձին նյութերը՝ անկախ տվյալ գործով մասնակցությունից, ինչը հնարավորություն է տալիս որոշ դեպքերում ծանոթանալ անգամ կողմերի ներկայացրած դատավարական փաստաթղթերին (միջնորդություն, բողոք և այլն)¹, դատարանի բոլոր դատական ակտերին: Նշվածը խնդրահարույց է ոչ միայն արդար դատաքննության իրավունքի հրապարակայնության բաղադրիչի ապահովման տեսանկյունից, քանզի յուրաքանչյուր անձ հնարավորություն է ստանում մասամբ ծանոթանալ իր վերաբերյալ չքննվող ընթացիկ դատական գործերին և դրանց նյութերին, այլև խիստ մտահոգիչ է հատկապես անձնական տվյալների պաշտպանության իրավունքի տեսանկյունից: Էլեկտրոնային համակարգը տեխնիկապես չի ապահովում դրանում անձնական կյանքի տվյալների, կենսաչափական և հատուկ կատեգորիայի անձնական տվյալների, երեխայի անձնական տվյալներ պարունակող դատական ակտերն ապանձնավորված հրապարակելու հնարավորությունը՝ դրանով իսկ առանց իրավաչափ հիմքի հրապարակայնացնելով դրանք համակարգից օգտվող յուրաքանչյուր անձին: Ընդ որում, պետք է նկատել, որ այս առումով «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգը մասնակիորեն հագեցած է համապատասխան տեխնիկական լուծումներով, ավելին, դրանում հատկապես վերջին շրջանում գործն ըստ էության լուծող դատական ակտերը հրապարակվում են ապանձնավորված, և տեղեկատվական տեխնոլոգիաների ներկա զարգացումներին զուգընթաց պետությունը ցանկացած նոր համակարգ գործարկելիս առնվազն պետք է միջոցներ ձեռնարկի արդեն իսկ գործող տեխնիկական գործիքներն ու միջոցները լավարկելու, առավել արդյունավետ ծրագրային լուծումներ մշակելու ուղղությամբ:

Էլեկտրոնային դատական գործի նյութերի նյութական (թղթային) եղանակով պահպանման նպատակահարմարությունը պայմանավորված է նաև դատական

Հանրապետության դատարանների գործավարության կանոնները հաստատելու մասին» 2007թ. դեկտեմբերի 21-ի թիվ 23-Լ որոշումը:

¹ Տե՛ս «Վարչական դատավարության էլեկտրոնային համակարգը», բոլոր գործերով վերաքննիչ և վճռաբեկ վարույթների «Բողոք» դաշտը:

վարույթի հրապարակայնության պահանջի մեկ այլ ասպեկտի, այն է՝ ավարտված դատական գործերին ծանոթանալու՝ յուրաքանչյուր անձի իրավունքի իրացման պետության ստանձնած պարտավորությունների ապահովման տեսանկյունից, որը ոչ միայն բխում է Կոնվենցիայի 6-րդ և Սահմանադրության 63-րդ հոդվածներից, այլև՝ անմիջականորեն նախատեսված է ներպետական օրենսդրությամբ: Էլեկտրոնային համակարգի միջոցով դատական գործերի և դատական ակտերի հրապարակման կապակցությամբ, թերևս, առկա է ևս մեկ համակարգային խնդիր. մասնավորապես գործնականում սահմանափակվում է համակարգից չօգտվող անձանց՝ նույնանման փաստերով այլ գործով դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտում առկա օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտի մեկնաբանությունները որպես իրավական փաստարկ վկայակոչելու, ինչպես նաև առնվազն մեկ այլ գործով ստորադաս դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտում միևնույն նորմը հակասող մեկնաբանությամբ կիրառված կամ չկիրառված լինելու հիմքով վճռաբեկ բողոք ներկայացնելու իրավունքների իրացումը¹ այդպիսով այս դեպքում ևս հիշյալ անձանց համար խաթարելով օրենքի և դատարանի առջև հավասարության ու հրապարակայնության սկզբունքների գոյությունը:

Անդրադառնալով վարչական արդարադատության էլեկտրոնային համակարգի մատչելիության գործնական խնդիրների գնահատմանը՝ հարկ է արձանագրել, որ էլեկտրոնային հարթակի միջոցով հայց ներկայացնելու համար անխուսափելիորեն անհրաժեշտ է տեխնիկական միջոցների (սարքավորումների), որոշակի ծրագրային լուծումների, նույնականացման քարտի և էլեկտրոնային ստորագրության առկայություն, համացանցային հասանելիություն: Ընդ որում, Վարչական դատարանը հագեցած չէ դատարան դիմելու իրավունքն իրացնելու համար անհրաժեշտ և յուրաքանչյուր անձին հասանելի այդպիսի միջոցներով, ինչը ենթադրում է, որ վարչական դատավարության մասնակիցները էլեկտրոնային համակարգից կարող են օգտվել միայն անձնական միջոցներով: Այլ կերպ ասած՝ դատավարության մասնակիցներն էլեկտրոնային եղանակով դատարան դիմելու իրենց իրավունքը կարող են իրացնել միայն համապատասխան տեխնիկական միջոցների առկայության, դրանցից օգտվելու հմտություններ ունենալու դեպքում կամ այդ նպատակով կրել հավելյալ ծախսեր: Դրանից բացի, ներկա փուլում կարող ենք արձանագրել, որ տեխնիկական լուծումների առումով հնարավոր չէ «Վարչական դատավարության էլեկտրոնային համակարգը» պարզ և մատչելի համարել առնվազն համակարգից օգտվող ֆիզիկական անձանց համար. այն պահանջում է համակարգի գործիքակազմի իմացություն, հակառակ պարագայում ներկայացված հայցադիմումը կարող է չբավարարել հայցադիմումի ձևին և բովանդակությանը ներկայացվող

¹ Տե՛ս «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասը և 11-րդ հոդվածի 11-րդ մասը:



պահանջներին՝ հանգեցնելով համապատասխան դատավարական հետևանքների: Իհարկե, Արդարադատության նախարարության կողմից մշակվել և հրապարակվել են համակարգի օգտագործման ուղեցույցներ¹, սակայն առանց դրանց ծանոթանալու, թերևս, համակարգից օգտվելը կարող է դժվարությունների պատճառ դառնալ: Դրանից բացի, վարչական դատավարության էլեկտրոնային համակարգի գործածության տեսանկյունից խնդրահարույց ենք համարում նաև դրանում հայցադիմումը գրառելու և ըստ հայցադիմումի ձևին ներկայացվող պահանջների, առանձին պարտադիր բաժինների՝ «Հայցի էության հակիրճ նկարագրություն», «Փաստ», «Փաստարկ», «Պահանջ» առանձնացումը, քանզի, մեր գնահատմամբ, նշվածը սահմանափակում է հայցվորներին՝ հայցադիմումը ձևակերպել և ներկայացնել բացառապես համակարգի համար ընդունելի ներքին կառուցվածքով և արտաքին տեսքով: Իհարկե, նշված պահանջները բխում են ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներից, սակայն դրանք սահմանափակում են հայցվորի ազատությունը՝ ըստ անհրաժեշտության հայցադիմումը շարադրել այլ կառուցվածքով: Մեր համոզմամբ, առավել նպատակահարմար էր այս առումով էլեկտրոնային համակարգը հագեցնել դրանով հայցադիմումները ներկայացնելու և ոչ թե դրանք համակարգում կազմելու գործիքներով՝ ապահովելով արդեն իսկ կազմված հայցադիմումը համակարգ ներբեռնելու և դրա միջոցով ներկայացնելու տեխնիկական հնարավորությունը: Ավելին, համակարգի միջոցով դատավարական փաստաթղթերը կարող են կազմվել և ներկայացվել միայն որոշակի տառատեսակներով, իսկ պետական տուրքը վճարելու համար նախատեսված է բացառապես էլեկտրոնային հարթակների միջոցով վճարելու հնարավորություն, ինչը սահմանափակում է այլ եղանակով պետական տուրք վճարելու իրավունքը և առնվազն ենթադրում է ֆիզիկական անձանց դեպքում բանկային հաշվի պարտադիր առկայություն:

Այսպիսով, կարծում ենք, որ էլեկտրոնային համակարգը գործնական կիրառման տեսանկյունից չի կարող բավարարել արդարադատություն հայցող կամ դրան մասնակից անձանց համար պարզ, հասանելի ու մատչելի լինելու չափանիշներին, ուստի նպատակահարմար է մինչ դատավարության էլեկտրոնային եղանակին ամբողջական անցումը հաշվի առնել այդ կապակցությամբ ձևավորված հասարակական պահանջը, ինչպես նաև՝ կատարելագործել վարչական արդարադատության էլեկտրոնային համակարգը՝ իրականացնելով խնդիրների մշտադիտարկում և դրանց արդյունքների գնահատում:

¹ Տե՛ս «Վարչական դատավարության էլեկտրոնային համակարգը», «Վարչական դատարան» էլեկտրոնային համակարգ» օգտվողի ձեռնարկը, տեսաուղեցույցներ, <https://e-administrativecourt.am/guide>

Ինչպես գիտական շրջանակում, այնպես էլ միջազգային տարբեր մարմինների դիրքորոշումներում էլեկտրոնային արդարադատության իրականացման առանձին բաղադրիչների շարքին է դասվել նաև տեսահաղորդակցության միջոցների կիրառումը, մինչդեռ, դրանք դուրս են մղվել մեզանում ներդրված էլեկտրոնային արդարադատության գործիքների շրջանակից: Այս առումով, հատկանշական է, որ դեռևս 2020 թ. մարտին, կորոնավիրուսային համավարակի կանխարգելմանն ուղղված միջոցառումների շրջանակներում դատավարության մասնակիցների մասնակցությունը դատական նիստերին ապահովելու համար Դատական դեպարտամենտի կողմից աշխատանքներ էին իրականացվել յուրաքանչյուր դատարանում դատական նիստերի առնվազն մեկ դահլիճում տեսաձայնային անհրաժեշտ սարքավորումների տեղադրման միջոցով տեսաձայնային հաղորդակցության հնարավորությունն ապահովող համակարգի ներդրմանն ուղղությամբ¹: Ավելին, գործող քրեադատավարական օրենքը նախատեսել է դատարանում տեսահաղորդակցության տեխնիկական միջոցների օգտագործմամբ (տեսակապի միջոցով) անձանց հարցաքննության ընթացակարգեր, որի ապահովման համար ընդհանուր իրավասության և հակակոռուպցիոն դատարաններն ապահովվել են համապատասխան սարքավորումներով: Նշված փորձն առավելապես կարող է նպաստել էլեկտրոնային արդարադատության ներկա համակարգերի շրջանակներում տեսահաղորդակցության միջոցների ներդրման, դրանց ընդունելի եղանակների ընտրության, արձանագրված գործնական խնդիրները կանխատեսելու, դրանք վերացնելու արդյունքում լավագույն արդյունքի հասնելուն:

Եզրակացություն

Մեզանում արդարադատության մատչելիությանը նպաստող էլեկտրոնային, այդ թվում նաև՝ արհեստական բանականության գործիքների ներդրումը, անշուշտ, խրախուսելի է, այդուհանդերձ, դրանք թույլատրելի կարող են լինել միայն դատական պաշտպանության և արդար դատաքննության հիմնարար իրավունքների բոլոր նվազագույն երաշխիքների արդյունավետ իրացումն ապահովելու պայմաններում: Իհարկե, վարչական արդարադատության էլեկտրոնային հարթակի գործարկումից հետո ժամանակ կպահանջվի՝ գնահատելու, թե որքանո՞վ են կատարված օրենսդրական փոփոխություններն ու լրացումները գործնականում իրագործելի դարձնում օրենսդրի հետապնդած նպատակները, որքանո՞վ է այն գործնականում նպաստել դատարան դիմելու ընթացակարգերի դյուրացմանը: Բոլոր դեպքերում, ներկա փուլում կարող ենք արձանագրել, որ վարչական դատավարության

¹ Տե՛ս դատական իշխանության պաշտոնական կայքում 2020 թ. մարտի 23-ին և 25-ին հրապարակված հաղորդագրությունները, էլ. հղումները՝ <https://court.am/hy/news/265>, <https://court.am/hy/news/268>

Էլեկտրոնային համակարգը որոշ ասպեկտներով չի բավարարում Հայաստանի Հանրապետության կողմից ստանձնած միջազգային պարտավորություններին, իսկ օգտագործման տեսանկյունից այն չի բավարարում արդարադատություն հայցող կամ դրան մասնակից յուրաքանչյուր անձի համար պարզ, հասանելի ու մատչելի լինելու չափանիշներին:

Ավելին, դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրացումը երաշխավորելու տեսանկյունից տեղեկատվական տեխնոլոգիաների գործադրմամբ ուղեկցվող ցանկացած փոփոխություն նախաձեռնելիս անհրաժեշտ է նախևառաջ ստեղծել հնարավորինս անխոցելի և անընդհատություն ապահովող տեղեկատվական անվտանգային միջավայր, քանի որ այս կամ այն պատճառով էլեկտրոնային համակարգերի բնականոն աշխատանքի ժամանակավոր անհնարինությունը կամ խափանումը ընդհանրապես կարող է հանգեցնել արդարադատության մատչելիության սկզբունքի խաթարման: Հատկապես, որ 2022-2026 թթ. դատական և իրավական բարեփոխումների ռազմավարությամբ ևս կարևորվել է նոր ներդրվող էլեկտրոնային համակարգերի անվտանգության երաշխիքների նախատեսումը և այդ համատեքստում, անվտանգային նկատառումներից ելնելով, ազգային անվտանգության բնագավառում լիազորված պետական մարմնի հետ իրականացվող միջոցառումների կատարումը համաձայնեցնելու անհրաժեշտությունը¹:

Կարծում ենք, սակայն, որ օրենսդրի որդեգրած մոտեցումը կարող է սահմանափակել արդարադատության մատչելիության սկզբունքի իրացումն այն անձանց համար, ովքեր տեխնիկապես հնարավորություն չունեն հայց հարուցել դատարան և այլ դատավարական գործողություններ իրականացնել տեղեկատվական տեխնոլոգիաներից (համակարգիչ, համակարգչային տարբեր ծրագրեր, համացանց, նույնականացման քարտ, էլեկտրոնային ստորագրություն, բանկային հաշիվ) օգտվելու միջոցով: Նշվածն առավելապես վերաբերում է հատուկ վարույթի կարգով քննվող որոշ գործերով դատավարության մասնակից ֆիզիկական անձանց նկատմամբ տարբերակված մոտեցմանը, ինչպես նաև՝ դատավարության մասնակից այլ անձանց (մարմինների) համար այս կամ այն օբյեկտիվ պատճառով էլեկտրոնային համակարգից օգտվելու անհնարինության դեպքում այլ եղանակով դատավարական գործողություններ իրականացնելու հնարավորություն նախատեսված չլինելուն: Մեր համոզմամբ, արդար դատաքննության իրավունքի իրացումն առավել արդյունավետ երաշխավորելու համար նպատակահարմար է վերանայել օրենսդրի այս մոտեցումը:

Միևնույն ժամանակ, հրապարակայնության սկզբունքի երաշխիքների տեսանկյունից հարկ է վերանայել օրենսդրական կարգավորումները՝ դատական

¹ Տե՛ս Կառավարության 2022 թ. հուլիսի 21-ի թիվ 1133-Լ որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության դատական և իրավական բարեփոխումների 2022-2026 թվականների» ռազմավարությունը, բաժին 1:

ակտերի հրապարակման, էլեկտրոնային համակարգից չօգտվող ֆիզիկական անձանց, իսկ ավարտված դատական գործերի դեպքում՝ յուրաքանչյուր անձի համար՝ էլեկտրոնային եղանակով ներկայացված գործով դատական ակտերի և գործի նյութերին ծանոթանալու հնարավորության ապահովման համար՝ համակարգը հազեցնելով նաև անձնական տվյալների ապանձնավորման տեխնիկական հնարավորություններով:

Դրանից բացի, մեր համոզմամբ, արդարադատության մատչելիության սկզբունքի տեսանկյունից նպատակահարմար է ոչ միայն էլեկտրոնային եղանակով դատարանին դիմելու, այլև՝ տեսահաղորդակցության կիրառման հնարավորության ապահովումը, քանզի այն հնարավորություն կտա դատական նիստերն անցկացնել հեռավար եղանակով, խնայել դատարանի գտնվելու վայր հասնելու հետ կապված դատավարության մասնակիցների ռեսուրսները, այդ թվում նաև՝ ծախսերը, ավելին, այդ կերպ հնարավոր կլինի զերծ մնալ դատական նիստերի անհարկի հետաձգումներից և այդպիսով նաև նպաստել գործը ողջամիտ ժամկետում քննելու հիմնարար պահանջի պահպանմանը, գործի լուծման համար էական նշանակություն ունեցող տեղեկություններին տիրապետող և այս կամ այն օրյեկտիվ պատճառով դատարան ներկայանալու հնարավորություն չունեցող անձանց որպես վկա ներգրավելու և հարցաքննելու ապահովումը:

Օգտագործված նորմատիվ իրավական ակտերի և գրականության ցանկ

1. Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն (2015 թվականի փոփոխություններով)՝ ընդունված 06.12.2015 թ., ուժի մեջ է մտել 22.12.2015 թ., ՀՀՊՏ 2015.12.21/Հատուկ թողարկում Հոդ. 1118:
2. «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենք, ընդունվել է 07.02.2018 թ., ուժի մեջ է մտել 09.04.2018 թ., ՀՀՊՏ 2018.02.12/10(1368) Հոդ.143:
3. ՀՀ վարչական դատավարության օրենսգիրք, ընդունվել է 05.12.2013 թ., ուժի մեջ է մտել 07.01.2014 թ., ՀՀՊՏ 2013.12.28/73(1013).1 Հոդ.1186.1:
4. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրք, ընդունվել է 09.02.2018 թ., մեջ է մտել 09.04.2018 թ., ՀՀՊՏ 2018.03.05/16(1374) Հոդ.208:
5. Բարձրագույն դատական խորհրդի «Դատարաններում էլեկտրոնային համակարգի վարման և դրանից օգտվելու, ծավալուն էլեկտրոնային ֆայլերի, ինչպես նաև էլեկտրոնային համակարգի միջոցով ներկայացնելու անհնարինությամբ պայմանավորված էլեկտրոնային ֆայլերի ներկայացման կարգը սահմանելու մասին»

01.02.2024 թ. թիվ ԲԴԽ-8-Ն-4 որոշումը, ուժի մեջ է մտել 02.02.2024 թ., միասնական կայք 2024.01.22-2024.02.04 Պաշտոնական հրապարակման օրը 01.02.2024:

6. Բարձրագույն դատական խորհրդի «Դատական իշխանության պաշտոնական կայքում գործի և դրա ընթացքի վերաբերյալ հրապարակման ենթակա տեղեկությունների, այդ թվում՝ եզրափակիչ և այլ դատական ակտերի ցանկը և հրապարակման կարգը սահմանելու մասին» 25.02.2021 թ. թիվ ԲԴԽ-9-Ո-13 որոշումը, ուժի մեջ է մտել 26.02.2021 թ.:

7. Սահմանադրական դատարանի 10.03.2016 թ. թիվ ՍԴՈ-1257 որոշումը, ՀՀՊՏ 2016.03.23/22(1202) Հոդ.238:

8. Կառավարության Հայաստանի Հանրապետության դատական և իրավական բարեփոխումների 2022-2026 թվականների ռազմավարությունը և դրանից բխող գործողությունների ծրագիրը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 10-ի N 1441-Լ որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» 21.07.2022 թ. թիվ 1133-Լ որոշումը, ուժի մեջ է մտել 29.07.2022 թ.:

9. Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի 28.02.2001 թ. «Նոր տեխնոլոգիաների օգտագործման միջոցով քաղաքացիներին դատական և այլ ծառայությունների էլեկտրոնային մատուցման վերաբերյալ» թիվ (2001)3 հանձնարարականը:

10. Եվրոպայի խորհրդի Խորհրդարանական վեհաժողովի «Արդարադատության մատչելիությունը և համացանցը. ներուժը և մարտահրավերները», 10.11.2015 թ. թիվ 13918 զեկույցը:

11. Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի «Քաղաքացիական և վարչական դատավարություններում էլեկտրոնային ապացույցների վերաբերյալ» 30.01.2019 թ. ուղեցույցը:

12. Եվրոպայի խորհրդի Արդարադատության արդյունավետության եվրոպական հանձնաժողովի «Դատական համակարգերում և դրանց միջավայրում արհեստական բանականության օգտագործման վերաբերյալ եվրոպական էթիկական խարտիա», 2018 թ. 3-4 դեկտեմբեր, Ստրասբուրգ:

13. Եվրոպայի խորհրդի Արդարադատության արդյունավետության եվրոպական հանձնաժողովի «Դատական իշխանության քաղաժ դասերը և դրա առջև ծառացած մարտահրավերները COVID-19 համավարակի ընթացքում և դրանից հետո» հոչակագիրը, սկզբունք 5 (կիբերարդարադատություն):

14. Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհրդի «Արդարադատությունը և տեղեկատվական տեխնոլոգիաները» կարծիք թիվ 14 (2011), ընդունվել է 12-րդ լիագումար նիստին, Ստրասբուրգ, 2011 թ. նոյեմբերի 7-9:

15. Բարձրագույն դատական խորհրդի 2019 թ. տարեկան հաղորդումը, էջ 109-110:

16. **Бурдина Е.В., Зуева С.В.** Электронное правосудие: Монография. – Москва, 2021, https://op.raj.ru/pdf/burdina_el_prav.pdf
17. **Слабоспицкий А.С.** Альтернативные элементы электронного правосудия // Вестник Воронежского государственного университета. Серия: Право. 2023. № 4 (55), DOI: <https://doi.org/1017308/law/1995-5502/2023/4/>
18. **Даниелян А.С.** Электронное правосудие в гражданском процессе: понятие, вызовы и перспективы // Ученые записки Крымского федерального университета имени В.И. Вернадского. Юридические науки. 2023. Т. 9 (75). № 2, <https://cyberleninka.ru/article/n/elektronnoe-pravosudie-v-grazhdanskom-protsesse-ponyatie-vyzovy-i-perspektivy/viewer>
19. **Денисов И.С.** Электронное правосудие как элемент электронного государства, <file:///C:/Users/HP/Downloads/elektronnoe-pravosudie-kak-element-elektronnogo-gosudarstva.pdf>
20. **Рогожина С.Г., Щербинина Н.С.** Электронное правосудие: сравнительно-правовой анализ // Журнал юридических исследований. Том 5. № 3, 2020.
21. **Казанкова Т.Н.** Проблемы электронного правосудия в России: теоретико-правовой аспект // Теория и история права и государства; История учений о праве и государстве, УДК 34.096; ББК: 67.410, 2022թ., https://www.law-journal.ru/files/pdf/202204/202204_11.pdf
22. **Гаврилов Е.О.** Дискуссионные аспекты и перспективы внедрения электронного правосудия // Bulletin, 2024, <https://cyberleninka.ru/article/n/diskussionnye-aspekty-i-perspektivy-vnedreniya-elektronnogo-pravosudiya/viewer>
23. **Кашанин А.В., Козырева А.Б., Курносова Н.А.** Информационные технологии в правосудии: состояние и перспективы. – Москва, 2020.
24. **Dory Reili G, Francesc Co Tini**, "E-Justice Platforms: Challenges for Judicial Governance", (2022), 13 (1) International Journal For Court Administration 6, academic article, <https://iacajournal.org/articles/10.36745/ijca.445>
25. **Barry Walsh**, "E-Justice Projects – Distinguishing Myths from Realities", Mexico City, 2011թ.:
26. **Shilun Zhou**, "Analyzing the justification for using generative AI technology to generate judgments based on the virtue jurisprudence theory", Journal of Decision Systems, 2024, <https://www.tandfonline.com/doi/full/10.1080/12460125.2024.2428999>

ЭЛЕКТРОННОЕ ПРАВОСУДИЕ КАК ДОПОЛНИТЕЛЬНАЯ ГАРАНТИЯ ДОСТУПНОСТИ АДМИНИСТРАТИВНОГО ПРАВОСУДИЯ

Аннотация

В статье «Электронное правосудие как дополнительная гарантия доступности административного правосудия» представлены результаты проведенных автором научно-практических исследований относительно понятия электронного правосудия, минимальных стандартов, преимуществ и недостатков этого института, а также международный опыт.

В данной статье автор представил подробный обзор системы электронного административного правосудия, задействованной в нашей стране 15 августа 2025 года, на теоретическом уровне раскрыл как правовые, так и практические проблемы, связанные с этой системой, а также предложил возможные практические пути их преодоления.

Ключевые слова: правосудие, информационные технологии, электронное правосудие, электронная система, искусственный интеллект, электронный судебный акт, лицо, использующее электронную систему, средства видеосвязи.

E-JUSTICE AS AN ADDITIONAL GUARANTEE OF ACCESS TO ADMINISTRATIVE JUSTICE

Annotation

The article "E-Justice as an Additional Guarantee of Access to Administrative Justice" presents the results of the author's research on the concept of e-justice, its minimum standards, advantages and disadvantages, and international experience.

In this article, the author provides a detailed overview of the administrative e-justice system launched in our country on August 15, 2025, at a theoretical level, examining both the legal and practical challenges associated with this system, and proposes possible practical solutions to overcome them.

Keywords: justice, information technology, e-justice, electronic system, artificial intelligence, electronic judicial act, individual using the electronic system, video communication means.

Հոդվածը հանձնված է խմբագրություն 26.06.2026 թ., պրվել է գրախոսության 06.07.2026 թ., ընդունվել է տպագրության 08.07.2026 թ.:



DOI: 10.59560/18291155-2026.2-144

ԱՆՆԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

*ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի
քննչական վարչության Մալաթիա-Սեբաստիա
վարչական շրջանի քննչական
բաժնի ավագ քննիչ,
Ռուս-հայկական համալսարանի իրավունքի
տեսության և սահմանադրական
իրավունքի ամբիոնի հայցորդ*

ՄԱՐԴՈՒ ԱԶԱՏ ԳՈՐԾԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԵՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԵՎ ՀՈԳԵԿԱՆ ԱՆՁԵՌՆՄԽԵԼԻՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՎԱՍԱՐԱԿՇՈՒՄԸ ՈՋ ԱՊԱՅՈՒՅՈՂԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

Ամփոփագիր

Ոչ ապացուցողական բժշկության տարածումը ժամանակակից իրավունքում և բիոէթիկայում առաջ է բերում մարդու ազատ գործելու իրավունքի և ֆիզիկական ու հոգեկան անձեռնմխելիության իրավունքի երկրնտրանքը, քանի որ գիտականորեն չապացուցված միջոցների, մեթոդների կիրառումը հաճախ ուղեկցվում է բուժառուի կողմից տեղեկացված կամ իրազեկված համաձայնության բովանդակային առումով լիակատար բացակայությամբ: Երբ անձին հստակ չեն ներկայացվում տվյալ միջամտության գիտական հիմնավորվածության աստիճանը և հնարավոր ռիսկերը, խախտվում է նրա ինքնավարության իրավունքը, իսկ ստացված համաձայնությունը կրում է ձևական բնույթ: Այս ամենի հետևանքով ուղղակի վտանգ է ստեղծվում մարդու ֆիզիկական կամ հոգեկան առողջության համար, որին կարող է անդառնալի վնաս պատճառվել: Ավելին, ոչ ապացուցողական բժշկությանը դիմելու հիմնական վտանգներից մեկն այն է, որ բուժառուն բաց է թողնում ապացուցողական բժշկության շրջանակներում ժամանակին և արդյունավետ բուժում ստանալու հնարավորությունը, ինչը հաճախ հանգեցնում է հիվանդության բարդացման կամ մահվան: Իրավիճակն ավելի է սրվում, երբ այլընտրանքային բուժումն իրականացվում է խոցելի խմբերի նկատմամբ՝ օգտագործելով նրանց հոգեբանական անօգնական վիճակը: Պետությունն ու առողջապահական համակարգն ունեն պոզիտիվ պարտականություն՝ պաշտպանելու մարդուն մոլորեցնող բժշկական գործառույթներից և ապահովելու նրանց անվտանգությունը: Հետևաբար անձի ազատ գործելու իրավունքը չի կարող բացարձակ լինել: Աշխատանքի նպատակն է վեր հանել և համակարգված վերլուծության ենթարկել այն իրավական ու բիոէթիկական

խնդիրներն ու ռիսկերը, որոնք առաջանում են ոչ ապացուցողական բժշկության կիրառման արդյունքում: Մասնավորապես, աշխատանքի նպատակն է բացահայտել այն բացասական հետևանքները, որոնք կապված են բուժառուի իրազեկված համաձայնության բովանդակային բացակայության, անձի ֆիզիկական կամ հոգեկան առողջությանը պատճառվող վնասների, ապացուցողական բժշկության միջոցներով ժամանակին բուժում ստանալու հնարավորության բացթողման, ինչպես նաև խոցելի խմբերին մոլորեցնող գործառույթների հետ՝ հիմնավորելու համար պետության կողմից կարգավորող միջամտության անհրաժեշտությունը:

Հիմնաբառեր. ոչ ապացուցողական բժշկություն, ազատ գործելու իրավունք, ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունք, տեղեկացված համաձայնություն, պետության դրական պարտավորություն, խոցելի խմբեր, բիոէթիկա:

Ոչ ապացուցողական բժշկության տարածումը վերջին տասնամյակներում առաջ է բերել մի շարք բարդ իրավական և բիոէթիկական հարցեր՝ կապված անձի առողջության պահպանման և բուժման ընտրության ազատության հետ: Այս համատեքստում առանձնահատուկ նշանակություն է ստանում մարդու ազատ գործելու իրավունքի և ֆիզիկական ու հոգեկան անձեռնմխելիության իրավունքի փոխհարաբերության ուսումնասիրությունը: Մի կողմից՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի ինքնուրույն որոշելու իր առողջությանը վերաբերող հարցերը և ընտրելու բուժման նախընտրելի մեթոդները, մյուս կողմից՝ պետությունը և առողջապահական համակարգը պարտավոր են ապահովել մարդու առողջության և ֆիզիկական ու հոգեկան անձեռնմխելիության արդյունավետ պաշտպանությունը՝ հատկապես այն դեպքերում, երբ ոչ ապացուցողական բժշկությունում կիրառվող միջոցների, մեթոդների և միջամտությունների արդյունավետությունն ու անվտանգությունը գիտականորեն հիմնավորված չեն: Այս իրավունքների միջև հավասարակշռության ապահովումը կարևոր նախապայման է ինչպես մարդու իրավունքների պաշտպանության, այնպես էլ առողջապահական ոլորտի պատշաճ կարգավորման համար: Հետևաբար, ոչ ապացուցողական բժշկության համատեքստում անձի ազատ գործելու և ֆիզիկական ու հոգեկան անձեռնմխելիության իրավունքների հարաբերակցության ուսումնասիրությունը ձեռք է բերում ինչպես տեսական, այնպես էլ գործնական կարևոր նշանակություն:

Մինչ մանրամասնորեն անդրադառնալ ոչ ապացուցողական բժշկության կիրառման ընթացքում ազատ գործելու իրավունքը և մարդու ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունքը շոշափող հարցերին, նախևառաջ անհրաժեշտ է

հակիրճ քննարկել այս իրավունքներն ամրագրող ներպետական և միջազգային հիմնական փաստաթղթերը:

Մարդու ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունքը միջազգային և ներպետական իրավունքի հիմնարար սկզբունքներից է: Մարդու ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունքը ենթադրում է, որ մարդն ինքն է տնօրինում իր մարմինն ու հոգեկան աշխարհը, և ոչ ոք առանց նրա համաձայնության չի կարող միջամտել այդ իրավունքին, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:

2015 թվականի փոփոխություններով Սահմանադրության 25-րդ հոդվածը սահմանում է ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունքը: Ըստ Սահմանադրության 25-րդ հոդվածի՝

1. Յուրաքանչյուր ոք ունի ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունք:

2. Ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, հանցագործությունների կանխման կամ բացահայտման, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

3. Բժշկության և կենսաբանության ոլորտներում մասնավորապես արգելվում են եվգենիկական փորձերը, մարդու օրգաններն ու հյուսվածքները շահույթի աղբյուր դարձնելը, մարդու վերարտադրողական կլոնավորումը:

4. Ոչ ոք չի կարող առանց իր ազատ և հստակ արտահայտած համաձայնության ենթարկվել գիտական, բժշկական կամ այլ փորձերի: Մարդը նախապես տեղեկացվում է նման փորձերի հնարավոր հետևանքների մասին:

ՀՀ Սահմանադրության 25-րդ հոդվածի ուսումնասիրությունից երևում է, որ բժշկության և կենսաբանության ոլորտներում բացառապես արգելվող գործողություններ են համարվում եվգենիկական փորձերը, մարդու օրգաններն ու հյուսվածքները շահույթի աղբյուր դարձնելը, մարդու վերարտադրողական կլոնավորումը, որոնց համար նաև ՀՀ քրեական օրենսգրքով քրեական պատասխանատվություն է նախատեսվում: Նույնիսկ գիտական, բժշկական կամ այլ փորձերի ենթարկվելու մասին ՀՀ Սահմանադրությունը նշում է, որ դրանք կարող են կատարվել անձի ազատ և հստակ արտահայտված համաձայնության վրա, եթե անձը նախապես տեղեկացվում է դրանց հետևանքների մասին: Այսինքն՝ ՀՀ Սահմանադրությունն ուղղակիորեն որևէ արգելք չի նախատեսում ոչ ապացուցողական բժշկության մեթոդներից օգտվելու մասով, ավելին՝ նույնիսկ չի արգելում ենթարկվել առաջին անգամ կատարվող գիտական, բժշկական և այլ փորձերի:



Բժշկական օգնության և սպասարկման ոլորտում մարդու ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունքը Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայում պաշտպանվում է Կոնվենցիայի 2-րդ (կյանքի իրավունք), 3-րդ (խոշտանգումների արգելք), 5-րդ (ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունք) և 8-րդ (անձնական և ընտանեկան կյանքը հարգելու իրավունք) հոդվածներով, որոնք բոլորն էլ ուղղակի կամ անուղղակի կերպով առնչվում են մարդու ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունքին: Ասվածը հիմնավորվում է ներքոհիշյալ վկայակոչված գործերով, երբ եվրոպական դատարանը մարդու ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունքը քննարկում է կոնվենցիայի տարբեր հոդվածների համատեքստում:

Օրինակ «Լամբերը և այլք ընդդեմ Ֆրանսիայի» (46043/14, վճիռը՝ 05.06.2015, Մեծ Պալատ) գործի¹ շրջանակներում, որը վերաբերում է կոմայի մեջ գտնվող պացիենտին կենսական ֆունկցիաների ապահովման համար անհրաժեշտ արհեստական սնուցման և օրգանիզմում ջրի բալանսավորման սարքերն անջատելուն, եվրոպական դատարանը գտել է, որ նշված հարցն անհրաժեշտ է քննարկել Կոնվենցիայի 2-րդ հոդվածի համատեքստում:

Մեկ այլ՝ «Վ.Ց.-ն ընդդեմ Սլովակիայի» (18968/07, վճիռը՝ 08.11.2011, բաժանմունք 4) գործով² 20-ամյա գնչուական ծագմամբ հղի կնոջը ծննդաբերության ժամանակ բուժաշխատողներն ասել էին, որ հետագայում ևս մեկ հղիությունը կարող է ճակատագրական լինել թե՛ իր, թե՛ երեխայի համար, ուստի անհրաժեշտ էր ամլացում կատարել: Դրանից հետո կինը, առանց իրապես գիտակցելու և հասկանալու, ստորագրել է մի փաստաթուղթ, որում նշված է եղել, որ նա իր համաձայնությունն է տալիս առ այն, որ կեսարյան հատումից հետո իրականացվի ամլացում՝ ֆալոպյան փողերի կապման մեթոդով: Եվրոպական դատարանն արձանագրել է Կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտում այն հիմնավորմամբ, որ բժշկական հաստատությունը հաշվի չի առել կնոջ իրական համաձայնությունն ու ցանկությունը և, կատարելով այդ վիրահատական միջամտությունը՝ խախտել է նրա մարմնի անձեռնմխելիությունը և ամբողջականությունը:

«Ռակևիչն ընդդեմ Ռուսաստանի» (58973/00, վճիռը՝ 24.03.2004, բաժանմունք 2) գործով³ եվրոպական դատարանը Կոնվենցիայի 5-րդ հոդվածի համատեքստում քննարկել է դատական գործի ընթացքում հոգեկան առողջության հետ կապված խնդիրներ ունեցող մեղադրյալին բժշկական հաստատությունում հարկադրաբար տեղավորելու հետ կապված հարցը:

¹ St' u Lambert and others v. France (46043/14, judgment, 05.06.2015, Grand Chamber):

² St' u V.C. v. Slovakia (18968/07, judgment 08.11.2011, Section 4):

³ St' u Rakevich v. Russia (58973/00, judgment 24.03.2004, Section 2):

«Կոստան և Պավանն ընդդեմ Իտալիայի» (54270/10, վճիռը՝ 28.08.2012, բաժանմունք 2) գործում¹ ամուսինները, ում չէին թույլատրել կատարել սաղմի նախաիմպլանտացիոն գենետիկական ախտորոշում, երեխայի ծնվելուց հետո են իմացել, որ երեխան ունի մուկովիսցիդոզ հիվանդությունը², իսկ իրենք այդ հիվանդության ասիմպտոմ կրողներ են: Եվրոպական դատարանն այս գործով արձանագրել է Կոնվենցիայի 8-րդ հոդվածի խախտում:

Իհարկե բուժօգնություն և բուժսպասարկում ստանալիս եվրոպական դատարանը կարող է քննարկել նաև Կոնվենցիայի այլ հոդվածներ, ինչպիսիք են արդար դատաքննության իրավունքն ամրագրող 6-րդ հոդվածը (օրինակ՝ բժշկական սխալի դեպքի վերաբերյալ վարույթի ընթացքում խախտվել են անձի դատավարական իրավունքները), մտքի, խղճի և կրոնի ազատությունն ամրագրող 9-րդ հոդվածը (օրինակ՝ կրոնական համոզմունքներով պայմանավորված բուժօգնության որոշակի տեսակներից հրաժարում³), խտրականության արգելքը սահմանող 14-րդ հոդվածը (օրինակ՝ ռասայով պայմանավորված բուժօգնության տրամադրումից հրաժարում), սակայն վերջիններս վերաբերում են իրավունքի հատուկ սուբյեկտներին կամ դատավարական իրավունքների խախտումներին:

Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագրի (ընդունված՝ ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 1966 թվականի դեկտեմբերի 16-ի 2200 Ա (XXI) բանաձևով) 7-րդ հոդվածն անդրադառնում է խոշտանգումների արգելքին, ինչպես նաև առանց անձի համաձայնության՝ բժշկական կամ գիտական փորձերի ենթարկելու արգելքին՝ սահմանելով. «Ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների կամ էլ դաժան, անմարդկային կամ իր արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի: Մասնավորապես ոչ մի անձ չի կարող առանց իր ազատ արտահայտված համաձայնության ենթարկվել բժշկական կամ գիտական փորձերի»:

¹ Տե՛ս *Costa and Pavan v. Italy* (54270/10, judgment 28.08.2012, Section 2):

² Մուկովիսցիդոզ կամ կիստային ֆիբրոզ - ժառանգական հիվանդություն, որը բնութագրվում է ենթաստամոքսային և բրոնխային գեղձերում լորձի աննորմալ մածուցիկությամբ: Այս ախտանիշը հաճախ արտահայտվում է շնչառական խնդիրներով, երբեմն մահվան պատճառ կարող է դառնալ:

³ Օրինակ՝ «Մոսկվայի Յեհովայի վկաները և այլք ընդդեմ Ռուսաստանի» (դիմում թիվ 302/02, 10 հունիսի 2010 թ.) գործում, որտեղ դիմումատու կողմ էր Մոսկվայի Յեհովայի վկաների կրոնական համայնքը (ստեղծված՝ 1992 թ.), որը դիմել էր եվրոպական դատարան՝ խնդրելով ճանաչել արդար դատաքննության (ՄԻԵԿ 6-րդ հոդված), մտքի, խղճի և կրոնի ազատության (ՄԻԵԿ 9-րդ հոդված), հավաքների և միավորման ազատության (11-րդ հոդված) իրավունքների խախտում, քանի որ շրջանային դատախազի կողմից հայց էր ներկայացվել Յեհովայի վկաների համայնքը լուծարելու և նրա գործունեությունն արգելելու պահանջով, քանի որ համայնքի անդամների կողմից «ոչ արյանը քարտերի» կրումով համայնքում խրախուսվում է ինքնասպանությունը և ծանր առողջական վիճակում գտնվող անձինք կրոնական համոզմունքներից ելնելով բժշկական ծառայություններից, մասնավորապես արյան փոխներարկումից, հրաժարվում էին: Տե՛ս <https://www.coe.int/hy/web/human-rights-and-biomedicine/oviedo-convention>, վերջին այցելությունը՝ 05.04.2026:



Եվրոպայի խորհրդի Կենսաբանության և բժշկության նվաճումների կիրառման առնչությամբ մարդու իրավունքների և արժանապատվության պաշտպանության մասին 1997 թվականի ապրիլի 04-ի կոնվենցիայի (Օվիեդոյի կոնվենցիա)¹ 1-ին հոդվածով սահմանվում են կոնվենցիայի նպատակն ու առարկան, որտեղ մասնավորապես նշվում է. «Սույն Կոնվենցիայի Կողմերը պաշտպանում են մարդու արժանապատվությունը և ինքնությունը, առանց խտրականության երաշխավորում յուրաքանչյուրի անձնական անձեռնմխելիության և այլ իրավունքների ու հիմնարար ազատությունների պաշտպանությունը կենսաբանության և բժշկության նվաճումների կիրառման ոլորտում»: Մարդու անձնական անձեռնմխելիության իրավունքի պաշտպանությանը՝ որպես նպատակ անդրադարձ է կատարվել նաև Օվիեդոյի կոնվենցիայի Կենսաբժշկական հետազոտությունների մասին 2005 թվականի հունվարի 25-ի լրացուցիչ արձանագրությունում:

Օվիեդոյի կոնվենցիայի և դրա թվով 4 լրացուցիչ արձանագրություններում² կարմիր թելի նման անցնում է այն սկզբունքը, որ անհատը պետք է գերակա լինի, այսինքն՝ պաշտպանված լինի իր մարմնի նկատմամբ ապօրինի միջամտությունից, ֆինանսական շահի համար մարմնի ամբողջ կամ մասի օգտագործումից:

Եթե հոգեկան և ֆիզիկական անձեռնմխելիության իրավունքը սկզբնապես բացառիկ կերպով պաշտպանում էր անձին միջամտությունից, ապա դրա ժամանակակից ընկալումը գնում է մեկ քայլ առաջ: Եվրոպական դատարանը, այս առումով, որդեգրելով էվոլյուցիոն մեկնաբանման մեթոդը (անգլ.՝ evolutive method of interpretation of the Convention and its Protocols), կոնվենցիան դարձնում է «կենդանի փաստաթուղթ», կոնվենցիոն նորմերը մեկնաբանում են՝ դրանք համապատասխանեցնելով ժամանակի, հասարակական փոփոխությունների և նոր իրողությունների հետ, որոնց գոյությունը դժվար էր պատկերացնել կոնվենցիան ընդունելու ժամանակահատվածում՝ 1950 թվականին (օրինակ՝ բիոտեխնոլոգիաներ, թվային տեխնոլոգիաներ, շրջակա միջավայրի պաշտպանություն, արհեստական բանականություն): Եվրոպական դատարանը նման մեկնաբանման շնորհիվ ձևավորել է «մարդու ինքնավարության իրավունքը»³, որն առավելագույնս է արտացոլում մարդու ազատ գործելու իրավունքի կարևորությունը:

¹ Օվիեդոյի կոնվենցիան Հայաստանի Հանրապետությունը ստորագրել է 2024 թվականի մայիսի 16-ին: Տե՛ս <https://www.mfa.am/hy/press-releases/2024/05/16>, վերջին այցելությունը՝ 05.04.2026:

² Մարդկային էակների կոնավորումն արգելելու մասին լրացուցիչ արձանագրություն (CETS No. 168), Մարդկային ծագման օրգանների և հյուսվածքների փոխապատվաստման մասին լրացուցիչ արձանագրություն (CETS No. 186), Կենսաբժշկական հետազոտությունների մասին լրացուցիչ արձանագրություն (CETS No. 195), Բժշկական նպատակներով գենետիկական թեստավորման մասին լրացուցիչ արձանագրություն (CETS No. 203):

³ Եվրոպական դատարանի՝ հատկապես հղիության արհեստական ընդհատման, սաղմի և պտղի իրավական կարգավիճակին առնչվող վճիռներում հաճախ կարելի է հանդիպել այս իրավունքին:

Մարդու ազատ գործելու իրավունքի, այլ կերպ՝ ինքնավարության իրավունքի (անգլ.՝ right to autonomy) հիմքերը գալիս են գերմանացի փիլիսոփա Իմանուիլ Կանտի «Զուտ բանականության քննադատություն» աշխատությունից, որտեղ Կանտը ինքնավարությանը (ավտոնոմիա) հակադրում է հետերոնոմիան՝ այսինքն՝ այլոցից կախվածությունը: Սակայն, հակառակ այն բանի, ինչ կարելի է կոչել «կոնկրետ ինքնավարություն»՝ այսինքն՝ այս կամ այն գործողությունն ինքնուրույն կատարելու կարողություն, Կանտի համար ինքնավարությունն ունի ավելի խորքային իմաստ, որն իրականում ոչ ոք չի կարող կորցնել: Վերջինս նշում է, որ ինքնավարությունը նախ և առաջ մեր մտքի հատկություն է, այն, ինչ նա անվանում է բանականություն և կամք: Ըստ Կանտի՝ ինքնավարությունը սեփական պարտականությունների աղբյուրը լինելու, գործողությունների պատճառը լինելու, մաքուր բանականությամբ այս կամ այն որոշումը արդարացնելու կարողությունն է¹: Հենց այս տրամաբանության վրա է հիմնվել Գերմանիայի Հիմնական օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվող ազատ գործելու իրավունքը², ըստ որի՝ յուրաքանչյուր ոք ունի իր անձը ազատորեն զարգացնելու իրավունք, քանի դեռ չի խախտում այլոց իրավունքները, չի հակասում սահմանադրական կարգին կամ բարոյական օրենքին: Գերմանական իրավունքում այն անվանվում է նաև «Auffanggrundrecht», որը թարգմանաբար նշանակում է «պահուստային/մնացորդային հիմնարար իրավունք»: Հայաստանի Հանրապետությունում մարդու ազատ գործելու իրավունքը 2015 թվականի փոփոխություններով Սահմանադրության մեջ առաջին անգամ է ամրագրվել որպես ինքնուրույն իրավունք՝ հետևյալ բովանդակությամբ. «Մարդն ազատ է անելու այն ամենը, ինչը չի խախտում այլոց իրավունքները և չի հակասում Սահմանադրությանը և օրենքներին»: Նախկինում այն ներառված էր 2005 թվականի խմբագրությամբ Սահմանադրության 42-րդ հոդվածի 2-րդ մասում: Այս իրավունքի կարևորությունն այն է, որ ներառում է մարդու բոլոր այն գործողությունների սահմանադրական պաշտպանությունը, որոնք սահմանված չեն հատուկ իրավունքներում: Այն ինքնավարության սկզբունքի իրավական ամրագրումն է ՀՀ Սահմանադրությունում: Առողջապահական իրավունքում մարդու ազատ գործելու իրավունքը ներառում է անձի տեղեկացված/իրազեկված համաձայնությունը, բուժօգնության իր համար նախընտրելի ձևին և եղանակին դիմելու իրավունքը, բուժօգնությունից և բուժսպասարկումից հրաժարվելու իրավունքը, բուժօգնության մասին տեղեկացված

Դատարանն ինքնավարության իրավունքը մեկնաբանում է հիմնականում Կոնվենցիայի 8-րդ հոդվածի համատեքստում:

¹ St'u Comment Kant définit-il l'autonomie, 15.02.2023, <https://www.radiofrance.fr/franceculture/podcasts/le-pourquoi-du-comment-philosophie/comment-kant-definit-il-l-autonomie-8890478>, վերջին այցելությունը՝ 05.04.2026:

² St'u Loi fondamentale pour la République fédérale d'Allemagne, <https://www.btg-bestellservice.de/pdf/80202000.pdf>, վերջին այցելությունը՝ 05.04.2026:

լինելու իրավունքից հրաժարվելու իրավունքը, իր վերաբերյալ բժշկական գաղտնիք կազմող տեղեկությունների պաշտպանությունը, իր որոշումը փոխելու իրավունքը:

Ոչ ապացուցողական բժշկության կիրառումը կարող է խնդրահարույց լինել ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունքի տեսանկյունից, ինչը կարող է պայմանավորված լինել մի շարք հանգամանքներով, մասնավորապես՝

1/ Բուժօգնության և բուժսպասարկման վերաբերյալ տեղեկացված/իրազեկված համաձայնության բովանդակային առումով բացակայություն,

2/ Ֆիզիկական կամ հոգեկան առողջությանը պատճառված վնաս,

3/ Ապացուցողական բժշկության շրջանակներում ժամանակին բուժում ստանալու հնարավորության բացթողում,

4/ Խոցելի խմբերին մոլորեցնող գործառույթներ:

Այս առումով ոչ ապացուցողական բժշկության համատեքստում անհրաժեշտություն է առաջանում հավասարակշռելու մի կողմից՝ մարդու ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունքը, մյուս կողմից՝ մարդու ազատ գործելու իրավունքը, որոնք կքննարկվեն ներքոհիշյալ կետերում:

1/ Անդրադառնալով **ոչ ապացուցողական բժշկությունում բուժօգնության և բուժսպասարկման վերաբերյալ տեղեկացված/իրազեկված համաձայնությանը՝** պետք է պարզաբանել, թե ինչ է նշանակում «բովանդակային առումով տեղեկացված/իրազեկված համաձայնության բացակայություն»: Սա նշանակում է, որ քանի որ ոչ ապացուցողական բժշկությունը ներկայիս պայմաններում դուրս է մնում պետական վերահսկողության շրջանակներից, ուստի տեղեկացված համաձայնության պարտադիր ապահովում չի սահմանվում: Հաճախ բուժառուն բավարար չափով չի տեղեկացվում բուժման այլընտրանքային տարբերակների մասին, ինչը խախտում է նրա ազատ գործելու, այն է՝ ինքնավար որոշում կայացնելու իրավունքը: Ոչ ապացուցողական բժշկության մեջ երբեմն առաջնային է համարվում բժշկի հեղինակությունը, և բուժառուները հիմնականում այլ եղանակով բուժման մեթոդների մասին չեն տեղեկացվում: Սակայն վերջինս էական նշանակություն ունի ցանկացած տեսակի բուժման ընթացքում:

Տեղեկացված համաձայնության իրավունքը, ի թիվս բուժառուի մյուս իրավունքների, սկսել է զարգանալ Երկրորդ համաշխարհային պատերազմից, մասնավորապես Նյուրնբերգյան դատավարությունից¹ և Տասկիգի փորձարկումներից² հետո: Ձևավորված սկզբունքներն ու իրավունքներն

¹ 1946 թվականի դեկտեմբերի 09-ից մինչև 1947 թվականի օգոստոսի 20-ը բժիշկների Նյուրնբերգյան դատավարության ժամանակ քննվում էին մարդկանց վրա գիտափորձեր կատարած բժիշկների վերաբերյալ գործերը: Նշված դատավարության արդյունքում ձևավորվեցին Նյուրնբերգյան բժշկական սկզբունքները, որոնք առավելապես վերաբերում էին բժշկական փորձեր կատարելուն:

² 1932-1972 թվականներին ԱՄՆ Ալաբամա նահանգի Տուսկեգի քաղաքում անցկացված փորձարկումներ, որոնց ընթացքում կառավարությունը նպատակ էր հետապնդում 600 աղքատ

ամբողջությամբ արտացոլում են ներկայիս բոլոր առողջապահական համակարգերում գործող բուժառուի իրավունքները, պարզապես դրանք ձևավորվել էին միայն գիտափորձերի մասով՝ հաշվի առնելով պահի հրամայականը: Մասնավորապես ամրագրվել է.

1/ Մարդու վրա փորձեր կատարելու բացարձակ անհրաժեշտ պայման է վերջինիս կամավոր համաձայնությունը:

2/ Գիտափորձը պետք է հասարակությանը բերի դրական արդյունքներ, որոնք անհասանելի են հետազոտության այլ մեթոդներով կամ եղանակներով:

3/ Այն պետք է հիմնված լինի կենդանիների վրա լաբորատոր հետազոտություններում ստացված տվյալների, տվյալ հիվանդության զարգացման պատմության իմացության կամ ուսումնասիրվող այլ խնդիրների վրա:

4/ Դրա անցկացումը պետք է կազմակերպված լինի այնպես, որ ակնկալվող արդյունքներն արդարացնեն դրա անցկացման փաստը:

5/ Փորձարկումն իրականացնելիս անհրաժեշտ է խուսափել բոլոր ավելորդ ֆիզիկական և հոգեկան տառապանքներից և վնասներից:

6/ Ոչ մի փորձ չպետք է անցկացվի այն դեպքում, եթե հիմքեր կան ենթադրելու, որ փորձի ենթարկվողի համար առկա է առողջությունը վնասելու, հաշմանդամության կամ մահվան վտանգ. բացառություն կարող են լինել այն դեպքերը, երբ հետազոտող բժիշկները հանդես են գալիս որպես փորձարկվողներ իրենց փորձարկումները կատարելիս:

7/ Գիտափորձի անցկացման հետ կապված ռիսկի աստիճանը երբեք չպետք է գերազանցի խնդրի մարդասիրական կարևորությունը, որի լուծմանն ուղղված է տվյալ գիտափորձը:

8/ Փորձարկմանը պետք է նախորդի համապատասխան նախապատրաստումը, և դրա անցկացումը պետք է ապահովված լինի այն սարքավորումներով, որոնք անհրաժեշտ են փորձի ենթարկվողին պաշտպանելու համար և զերծ կպահեն նրա առողջությունը վնասելու, հաշմանդամություն կամ մահ պատճառելու նվազագույն հնարավորությունից:

9/ Գիտափորձը պետք է իրականացվի միայն գիտական որակավորում ունեցող անձանց կողմից: Փորձի բոլոր փուլերում նրանք, ովքեր անց են կացնում այն կամ զբաղվում են դրանով, պետք է ցուցաբերեն առավելագույն ուշադրություն և պրոֆեսիոնալիզմ:

10/ Փորձի ընթացքում փորձարկվողը պետք է կարողանա դադարեցնել այն, եթե, նրա կարծիքով, ֆիզիկական կամ հոգեկան վիճակը անհնարին է դարձնում փորձի շարունակումը:

Ընակիչների վրա ուսումնասիրել սիֆիլիսի բոլոր փուլերի զարգացումը՝ բուժման բացակայության պայմաններում: Փորձարկումների հետևանքով եղել են բազմաթիվ զոհեր:

11/ Գիտափորձի ընթացքում հետազոտողը, որը պատասխանատու է դրա իրականացման համար, պետք է պատրաստ լինի դադարեցնել այն ցանկացած փուլում, եթե նրանից պահանջվող դատողությունների մեջ մասնագիտական նկատառումները, բարեխղճությունը և զգուշավորությունը հիմք են տալիս ենթադրելու, որ փորձի շարունակությունը կարող է հանգեցնել հիվանդի առողջության վտանգման, հաշմանդամության կամ մահվան:

Իսկ Տասկիգիի փորձարկումները հանգեցրին 1979 թվականին Բելմոնտի հանձնաժողովի կողմից Բելմոնտի զեկույցի¹ ընդունմանը, ըստ որի՝ յուրաքանչյուր մարդ պետք է դիտվի որպես ինքնավար անձ, ունակ՝ իր առողջության վերաբերյալ որոշումներ կայացնելու, ոչ ինքնավար մարդիկ (օրինակ՝ հոգեկան առողջության հետ կապված խնդիրներ ունեցող անձինք, երեխաներ) պահանջում են հատուկ պաշտպանություն, փորձերին մասնակցությունը պետք է լինի գիտակցված համաձայնությամբ:

Նյուրնբերգյան դատավարության և Տասկիգիի փորձերի արդյունքում ձևավորված սկզբունքները չնայած, որ վերաբերում էին մարդու վրա բժշկական փորձարկումներին, սակայն դրանց արժեքները հնարավոր է իմպլեմենտացնել նաև ոչ ապացուցողական բժշկության ոլորտում՝ ապահովելու համար մարդու իրավունքներն ու ազատությունները: Մասնավորապես բուժառույն պետք է ստանա ամբողջական, հասկանալի և ճշգրիտ տեղեկատվություն առաջարկվող ոչ ստանդարտ բուժման մեթոդի մասին, ներառյալ դրա հնարավոր օգուտները, ռիսկները: Չնայած կիրառվող բժշկական մեթոդը կարող է չունենալ ապացուցված արդյունավետություն, այն պետք է կիրառվի միայն այն դեպքում, երբ կա ողջամիտ հիմնավորում, որ այն կարող է օգտակար լինել: Պետք է բացառել վնաս հասցնելու ակնհայտ վտանգը: Բուժող անձը պարտավոր է գնահատել՝ արդյոք տվյալ ոչ ապացուցողական մեթոդը կարող է վնասել առողջությանը՝ անմիջական կամ երկարաժամկետ ձևով: Եթե նման ռիսկեր կան, դրանց մասին պետք է բացահայտ նախազգուշացնել բուժառույին: Ավանդական կամ ոչ ապացուցողական մեթոդներն ընդունելի են միայն այն դեպքում, երբ հիվանդը տեղեկացված է և դրանք չեն վտանգում նրա կյանքը՝ հատկապես, երբ առկա են ապացուցված արդյունավետ բուժման տարբերակներ:

Անդրադառնալով տեղեկացված/իրազեկված համաձայնությանը՝ նշենք, որ ոչ ապացուցողական բժշկության մեթոդների, միջոցների և միջամտությունների վերաբերյալ տեղեկացված/իրազեկված համաձայնությունը ենթադրում է, որ՝

¹ Տե՛ս https://videocast.nih.gov/pdf/ohrp_appendix_belmont_report_vol_2, վերջին այցելությունը՝ 05.04.2026 թվականին: The Belmont Report: Ethical Principles and Guidelines for the Protection of Human Subjects of Research: Appendix Volume 2:

1/ Համաձայնությունը պետք է լինի կամավոր, այսինքն՝ առանց ճնշման կամ անհարկի ազդեցության/միջամտության,

2/ Տեղեկատվությունը պետք է տրամադրվի ամբողջական, այսինքն՝ այն պետք է ներառի միջոցի, մեթոդի, միջամտության նպատակը, տեսակն ու բնույթը, ռիսկերն ու օգուտները, առաջացող փոխազդեցության կանխատեսելիությունը, հնարավոր բարդություններն ու կողմնակի ազդեցությունները, հնարավոր վնասները, վնասվածքները, ցավը, պատճառված անհարմարությունները,

3/ Տեղեկատվությունը պետք է տրամադրվի ցանկացած բուժօգնության համար, եթե բուժումը ներառում է մի քանի տեսակի միջամտություն, ապա դրանցից յուրաքանչյուրի վերաբերյալ անհրաժեշտ է տեղեկացված համաձայնության ապահովում,

4/ Տեղեկատվությունը պետք է լինի ազնիվ և օբյեկտիվ,

5/ Պետք է պարզաբանվեն բուժման այլընտրանքային մեթոդները, բուժում չստանալու հետևանքները,

6/ Տեղեկատվությունը պետք է լինի բավարար և համարժեք,

7/ Այն պետք է բուժառուի կողմից ընկալելի եղանակով պարզաբանվի,

8/ Տեղեկատվությունը պետք է տրամադրվի պարզ և մատչելի լեզվով, բառերով՝ հնարավորինս զերծ մնալով բժշկական տերմինաբանությունից,

9/ Տեղեկատվությունը պետք է հարմարեցվի բուժառուի տարիքին, հասունությանը, կրթությանը, նախկինում ստացած բուժօգնության և բուժապասարկման փորձին, հոգեկան վիճակին և այլ գործոններին,

10/ Տեղեկատվությունը պետք է տրվի բուժման հնարավորինս վաղ փուլում:

2015 թվականին Մեծ Բրիտանիայի Գերագույն դատարանը «Մոնտգոմերին ընդդեմ Լանկարդի առողջապահական խորհրդի» գործով մանրամասնորեն անդրադարձել է բուժառուի տեղեկացված համաձայնության իրավունքին՝ նշելով, որ «Սխալ կլինի բուժառուին դիտարկել որպես բժշկական հարցերից չհասկացող և անտեղյակ անձի, ով ամբողջովին կախված է միայն բժշկի տրամադրած տեղեկատվությունից: Գաղափարը, որ բուժառուն բժշկության ոլորտին չի տիրապետում և ունակ չէ հասկանալ բժշկական հարցերը, մշտապես կասկածելի է եղել: Առողջ միտք ունեցող չափահաս անձին պետք է հնարավորություն ընձեռնվի որոշել բուժման առկա տարբերակներից որին է տալիս նախապատվությունը, և վերջինիս համաձայնությունը պետք է ձեռք բերել մինչ բուժման հետ կապված որևէ գործողություն սկսելը: Ուստի բժիշկն ունի ողջամիտ պարտականություն հավաստիանալու, որ բուժառուն տեղյակ է իրեն առաջարկված բուժման ցանկացած

նյութական ռիսկի, ինչպես նաև բուժման ողջամիտ այլընտրանքի կամ տարբերակի մասին»¹:

Աշխատանքի այս հատվածում անհրաժեշտ է անդրադառնալ տեղեկացված/իրազեկված համաձայնության բավարար, լիարժեք, ազնիվ և օբյեկտիվ լինելու հանգամանքներին: Համաձայնությունը չի կարող ունենալ վերոգրյալ հատկանիշները, եթե այն տրվում է առանց նախնական հետազոտությունների արդյունքները ստանալու և դրանք հաշվի առնելու: Այս առումով ոչ ապացուցողական բժշկություն իրականացնող անձի վրա պետք է դրվի նախօրոք պատշաճ հետազոտություններ կատարելու պարտականությունը: Եթե ոչ ապացուցողական բժշկական գործառույթ իրականացնող անձը կամ կազմակերպությունն ունի համապատասխան հետազոտություններ իրականացնելու համար սարքավորումներ, ապա հենց ինքն էլ կարող է կատարել դրանք, եթե չունի, ապա պետք է պարտականություն սահմանվի բուժառուի ուղղորդումը դեպի համապատասխան հետազոտություններ իրականացնող հաստատություններ՝ պարզելու համար հետևյալ հարցերը՝

ա/ ինչ հիվանդություններ/առողջական խնդիրներ են առկա բուժառուի մոտ, որոնց ուղղությամբ պետք է աշխատի ոչ ապացուցողական բժշկության մասնագետը,

բ/ ինչ այլ առողջական խնդիրներ ունի բուժառուն, որոնք ոչ ապացուցողական բժշկության մեթոդները, միջոցներն ու միջամտությունները կիրառելիս կարող են վատթարանալ կամ բարդություններ առաջացնել:

Ոչ ապացուցողական բժշկության մասնագետի կողմից անհրաժեշտության դեպքում նեղ մասնագետի մոտ ուղղորդելու պարտականությունը ևս պետք է սահմանվի օրենքով:

2/ Ֆիզիկական կամ հոգեկան առողջությանը պատճառված վնասը ոչ ապացուցողական բժշկությունում:

Ոչ ապացուցողական բժշկության կիրառման ընթացքում, ինչպես ապացուցողական բժշկությունում, կարող են առաջանալ վնասի երկու տեսակներ՝ 1/ ֆիզիկական առողջությանը պատճառված վնաս, 2/ հոգեկան առողջությանը պատճառված վնաս: Ֆիզիկական վնասն իր հերթին կարող է լինել երկու տեսակի՝ 1/ բուժական մեթոդի, միջոցի և միջամտության հետևանքով առաջացած վնաս, 2/ բժշկական օգնությունն ուշացնելու հետևանքով վնասի պատճառում:

Անդրադառնալով բուժական մեթոդի, միջոցի և միջամտության հետևանքով առաջացած վնասին, անհրաժեշտ է նշել, որ ոչ ապացուցողական մեթոդները հաճախ չունեն անվտանգությունն ու դեղաչափերը կարգավորող ստանդարտներ: Օրինակ՝

¹ Տե՛ս <https://www.supremecourt.uk/cases/uksc-2013-0136>, վերջին այցելությունը՝ 05.04.2026 թվականին: Montgomery (Appellant) v Lanarkshire Health Board (Respondent), (Scotland), Case ID: UKSC/2013/0136, Judgment date: 11 March 2015:

չհաստատված բուսաբուժական միջոցները կարող են առաջացնել թունավորումներ, ալերգիկ ռեակցիաներ կամ փոխազդել դեղերի հետ, ինչի հետևանքով մարդու առողջությանը վնաս պատճառվի: Բացի այդ՝ ֆիզիկական միջամտությունները կարող են առաջացնել մարմնական վնասվածքներ կամ վարակներ, օրինակ՝ ասեղնաբուժության ընթացքում՝ ոչ ստերիլ ասեղների կիրառման հետևանքով:

Ֆիզիկական առողջությանը պատճառված վնասի երկրորդ տեսակը կարելի է համեմատել «բաց թողնված օգուտ»-ի հետ: Ոչ ապացուցողական բժշկական մեթոդի/միջոցի/միջամտության կիրառման պատճառով անձը կարող է ուշ դիմել ապացուցողական բժշկության մեթոդներով բուժման: Օրինակ՝ քաղցկեղ ունեցող մարդը նախընտրում է ոչ ապացուցողական բժշկությանը դիմել և հետագայում արդեն դիմում է ապացուցողական բժշկությանն այն ժամանակ, երբ հիվանդությունն արդեն անցել է հնարավոր բուժելի փուլից: Անգլո-ամերիկյան իրավական համակարգում այն արտահայտվում է բուժման հնարավորության կորստի (the loss of a chance of treatment test) կանոնի միջոցով, որը հատկապես առանցքային է ոչ ապացուցողական բժշկությունում, քանի որ այն չի ենթադրում, որ բուժող անձն իր գործողություններով անմիջական վնաս է պատճառել բուժառուին, սակայն կարող է զրկել բուժառուին առողջանալու իրական հնարավորությունից կամ առողջական բարդությունները կանխելուց¹:

Նշենք, որ ոչ ապացուցողական բժշկական գործառույթի հետևանքով առողջությանը պատճառված վնասը գնահատվում է այնպես, ինչպես ապացուցողական բժշկական գործառույթի հետևանքով պատճառված վնասը: Քանի որ գործողության/անգործության և հետևանքի միջև պատճառահետևանքային կապի առկայությունը պարտադիր է, անհրաժեշտ է քննարկել վերջինիս որոշման վերաբերյալ մի քանի կանոններ, որոնք հնարավորություն են տալիս ապահովել պատասխանատվության համաչափությունը: Կանոնները սկզբնապես ձևավորվել են անգլո-ամերիկյան իրավական համակարգում, վերջիններս ընդգծում են մասնագետի պատասխանատվության սահմանները: Դրանք են՝ 1/ «բարակ գանգի» (անգլ.՝ thin skull rule) կամ «ձվի կճեպից գանգի» (անգլ.՝ eggshell skull rule) կանոնը, 2/ «քայքայվող գանգի» (անգլ.՝ crumbling skull rule) կանոնը, 3/ «res ipsa loquitur» (թարգմանաբար՝ «իրն ինքնին խոսում է») կանոնը, 4/ «sine qua non» (թարգմանաբար՝ մի բան, առանց որի հնարավոր չէ) կանոնը:

«Բարակ գանգի» (անգլ.՝ thin skull rule) կամ «ձվի կճեպից գանգի» (անգլ.՝ eggshell skull rule) կանոնը նշանակում է, որ բուժող անձը ամբողջ ծավալով պատասխանատվություն է կրում նույնիսկ այն դեպքում, երբ տուժած անձն ունի խոցելիություն և անհատական առանձնահատկություններ և բուժող անձի

¹ Տե՛ս **Stapleton, J.** «Loss of the chance of cure for cancer» Modern law review, 2005:



գործողության/անգործության հետևանքով վրա հասած վնասն էականորեն ավելի մեծ է: Օրինակ՝ բուժողը բուժառուին տալիս է բուսական թուրմ, որը սովորաբար անվնաս է, սակայն բուժառուն ունի հազվադեպ ալերգիա և նրա մոտ զարգանում է անաֆիլաքսիա և հանգեցնում մահվան: Ըստ այս կանոնի՝ բուժող անձը պատասխանատվության կենթարկվի բուժվողին մահ պատճառելու համար և տուժողի խոցելիությունը և անհատական առանձնահատկությունները մեղմացնող հանգամանք չեն կարող դիտարկվել:

«Քայքայվող գանգի» (անգլ.՝ crumbling skull rule) կանոնի համաձայն՝ եթե բուժողը միջամտում է բուժվողի առողջությանը, ով նախապես արդեն ունի բարդացող հիվանդություն կամ առողջական վիճակ, ապա բուժողը պատասխանատվություն է կրում միայն այնքանով, որքանով իր միջամտությունը արագացրել է ընթացքը:

«Res ipsa loquitur» (լատիներենից թարգմանաբար՝ «իրն ինքնին խոսում է») սկզբունքը¹, ըստ որի՝ բուժողի անփութությունը հաստատված է համարվում՝ ելնելով վնասի բնույթից: Օրինակ՝ անձը դիմում է տաք քարերով թերապևտիկ մերսման, այցից անմիջապես հետո բուժառուի մոտ առաջանում են այրվածքներ, որոնք չէին կարող առաջանալ առանց անփութության:

«Sine qua non» (թարգմանաբար՝ մի բան, առանց որի հնարավոր չէ) կանոնը նշում է պատճառահետևանքային կապի որոշման պարզ մեխանիզմ, այն է՝ առանց բուժող անձի արարքի վնասը չէր առաջանա:

Այս կանոնների կիրառումը թույլ է տալիս կատարել պատասխանատվության համաչափ բաշխում, հաղթահարել ապացուցման դժվարությունները, հստակեցնել պատճառահետևանքային կապը, հաշվի առնել բուժառուի անհատական առանձնահատկությունները՝ կանխելով թե՛ պատասխանատվության ընդլայնումը, թե՛ դրա սահմանափակումը:

Ոչ ապացուցողական բժշկության կիրառման հետևանքով կարող են առաջանալ հոգեկան առողջության 3 տեսակի վնասներ՝

1/ կիրառված միջոցի, մեթոդի, միջամտության հետևանքով առաջացած հոգեկան առողջության հետ կապված խնդիրներ,

2/ սխալ ախտորոշմամբ պայմանավորված սխալ բուժման հետևանքով առաջացած հոգեկան առողջության հետ կապված խնդիրներ,

3/ հոգեկան առողջության վարթարացում՝ կապված հիվանդության չբուժվելու հետ,

1/ Կիրառված ոչ ապացուցողական բժշկական մեթոդի, միջոցի, միջամտության հետևանքով առաջացած հոգեկան առողջության վնասն այնպիսի բացասական

¹ Տե՛ս **Waltz, J.R., Fred, E.I.** Medical jurisprudence. New York, Macmillan, 1971, p. 88: Սկզբունքն առաջին անգամ կիրառվել է հռոմեացի փիլիսոփա Մ.Տ. Ցիցերոնի կողմից իր՝ «Pro Tito Annio Milone ad iudicem oratio» (Տ. Աննիուս Միլոնի անունից ելույթ՝ ուղղված դատավորին) ճառում:

հոգեբանական վիճակը կամ խանգարումն է, որը գտնվում է անմիջական պատճառահետևանքային կապի մեջ տվյալ միջոցի, մեթոդի, միջամտության կիրառման հետ և պայմանավորված է բուժառուի հոգեկան վիճակի վրա դրա ազդեցությամբ:

Բազմաթիվ բույսեր ունեն հանգստացնող, հակադեպրեսանտ և նյարդամետաբոլիկ ազդեցություն և կիրառվում են ոչ ապացուցողական բժշկության մեջ: Օրինակ, Կատվախոտ դեղատոուն (լատ.՝ *Valeriana officinalis*), սովորական Սրոհունդը (լատ.՝ *Hypericum perforatum*) օգտագործվում են թեթև և միջին ծանրության դեպրեսիայի ժամանակ՝ ազդելով սերոտոնինի¹ մակարդակի վրա: Որոշ ադապտոգեն բույսեր², օրինակ՝ Ռոդիոլայի արմատը (լատ.՝ *Rhodiola rosea*)³, Շատավարին⁴ (լատին.՝ *Asparagus racemosus* կամ *shatavari*) նպաստում են սթրեսի հորմոնների կարգավորմանը: Սակայն հանգստացնող, հակադեպրեսանտ և նյարդամետաբոլիկ ազդեցություն ունեցող բույսերից շատերը պարունակում են ալկալոիդներ, հալյուցինոգեն տարրեր, որոնք կարող են առաջացնել հալյուցինացիաներ, շփոթվածություն, տագնապային նոպաներ, հիշողության կորուստ, իսկ նյարդային համակարգը հանգստացնող որոշ բույսեր երկարատև կիրառման դեպքում կարող են ունենալ սեդատիվ ազդեցություն՝ առաջացնելով կախվածություն: Վերջիններս այլ կերպ անվանվում են հոգեֆիզիոլոգիական վնասներ, քանի որ էական ազդեցություն են ունենում մարդու հոգեֆիզիոլոգիայի վրա՝ հոգեկան և ֆիզիոլոգիական համակարգերի փոխկապակցված գործունեության մակարդակներում: Ընդգծուն օրինակ են հալյուցինոգեն (ցնորածին, պսիլոցիբինային) սնկերը, որոնց հետազոտությունները ցույց են տվել, որ վերահսկվող պայմաններում դրանցում առկա պսիլոցիբին և պսիլոցին նյութերը կարող են օգնել ծանր դեպրեսիային, տագնապային խանգարումներին, սակայն նույն այդ սնկերն ընդգրկված են ՀՀ կառավարության 2018 թվականի հունիսի 27-ի № 707-Ն որոշման 2-րդ հավելվածում (8-րդ կետով), որով սահմանվում են շրջանառությունն արգելված թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն), խիստ ներգործող կամ թունավոր նյութեր պարունակող բույսերի ցանկը, դրանց մանր, զգալի, խոշոր և առանձնապես խոշոր չափերը:

¹ Մարդու գլխուղեղի կողմից արտադրվող կենսաբանական ակտիվ նյութ, որը հանդիսանում է կենտրոնական նյարդային համակարգի գործունեության խթանիչ:

² Բույսեր, որոնք պարունակում են այնպիսի բնական նյութեր, որոնք օգնում են ադապտացվել սթրեսին, հաղթահարել հիվանդությունները:

³ Տե՛ս <https://naturamedscientific.com/hy/product/rhodiola-root-extract-rhodiola-rosea/>, վերջին այցելությունը՝ 05.04.2026 թվականին:

⁴ Դեղաբույս, որը հիշատակվում է հնդկական Այուրվեդայի հնագույն բաղադրատոմսերում: Տե՛ս <https://hy.healthy-food-near-me.com/shatavari-for-women/>, վերջին այցելությունը՝ 05.04.2026 թվականին:

2/ Սխալ ախտորոշմամբ պայմանավորված սխալ բուժման հետևանքով առաջացած հոգեկան առողջության վնասը բխում է բուժառուի առողջական վիճակի սխալ գնահատումից և դրա հիման վրա ընտրված բուժումից:

Նման դեպքերը հաճախ պատահում են, երբ ոչ ապացուցողական բժշկության մասնագետը մարդու հոգեկան առողջությունը նրա ֆիզիկական առողջությունից տարանջատված է դիտարկում, այնինչ դրանք զուգահեռ են գործում:

Թեև նյարդագիտությունն այսօր առանձին գիտություն է համարվում, սակայն այն իր մեջ ներառում է մի շարք այլ գիտություններ, ինչպիսիք են նեյրոանատոմիան, նեյրոֆիզիոլոգիան, նեյրոհոգեբուժությունը, քանի որ դրանք անմիջականորեն են փոխկապակցված միմյանց հետ: Այդ պատճառով պատահում է, որ հոգեկան հիվանդությունները, խանգարումները և խնդիրները միայն հետևանք են մարդու գլխուղեղի այս կամ այն հատվածի վնասման կամ ճզմման, և խնդրի լուծումը գտնվում է նյարդագիտության դաշտում: Օրինակ՝ վնասվում է մարդու գլխուղեղի ճակատային բիլլը, որի հետևանքով վերջինիս մոտ առաջանում են վարքային և էմոցիոնալ փոփոխություններ (ագրեսիվություն, անտարբերություն), ինչը վկայում է, որ հոգեկան առողջության խանգարումը պայմանավորված է օրգանական հիմքով: Եթե ոչ ապացուցողական բժշկության մասնագետն ի սկզբանե անձին չի ուղղորդում հետազոտությունների, չի հայտնաբերվում բուն խնդիրը՝ գլխուղեղի վնասվածքը, այլ հոգեկան առողջության բուժումն իրականացնում է առանց բուն խնդրին լուծում տալու, նման դեպքերում քննարկման առարկա է վնասի և առողջության վատթարացման կանխման կամ դադարեցման հնարավորությունը բաց թողնելու համար վրա հասնող պատասխանատվությունը:

Չարլզ Ուիթմենի կատարած ոճիրն¹ առավելագույնս արտացոլում է այս իրավիճակը: Սպանություններ կատարած այս անձն ու տուժողները գտնվել են ազգակցական լավ հարաբերությունների մեջ, որևէ շարժառիթ չի եղել հանցագործությունները կատարելու համար, սակայն ուռուցքի առկայության պատճառով հանգամանքներն այլ կերպ են դասավորվել: Ի վերջո Չարլզն ինքնասպան է եղել՝ նախապես իր տեսրոում գրառում կատարելով այն մասին, որ խնդրում է, որ իր մահվանից հետո դիափերման ժամանակ բացեն իր գանգատուփը

¹ 1966 թվականի օգոստոսի 1-ին՝ գիշերվա և ցերեկվա ընթացքում Չարլզը, ընդհանուր առմամբ, սպանել էր 16 հոգու, ներառյալ մորն ու կնոջը, և վիրավորել՝ 33-ի: Նախորդ գիշեր նրա թողած նամակում առկա էր հետևյալ գրառումը. «Ես չեմ հասկանում, թե ինչ է կատարվում ինձ հետ այս օրերին: Ենթադրվում է, որ ես միջին վիճակագրական ողջամիտ, խելացի երիտասարդ եմ: Բայց վերջերս (չեմ հիշում, երբ դա սկսվեց) ես շատ անսովոր և իռացիոնալ մտքեր ունեմ»: Կնոջը սպանելուց հետո թողել է մեկ այլ նամակ. «Երկար ժամանակ խորհելուց հետո ես որոշեցի այս գիշեր սպանել իմ կնոջը՝ Քեթինին, ում շատ սիրում եմ, ով ինձ համար լավ կին էր, ինչպիսին երազում է ցանկացած տղամարդ: Ես չեմ կարող բացատրել, թե ինչն ինձ ստիպեց դա անել»: Տե՛ս Traumatic brain injury graphing: A case study of Charles Whitman, K.A. Strube, PMCID: PMC12223350, PMID: 40369769, <https://pmc.ncbi.nlm.nih.gov/articles/PMC12223350/>, վերջին այցելությունը՝ 05.04.2026 թվականին:

և հասկանան, թե ինչ կա իր գլխուղեղում: Դիափերձման ժամանակ պարզվել է, որ գլխուղեղում առկա էր մետաղադրամի չափի ուռուցք: Վերջինս, որը կոչվում է գլխորվաստոմա, աճել էր գլխուղեղի թալամուս (տեսաթումբ) կոչվող կառույցի տակ, որը ճնշում էր հիպոթալամուսը (ենթատեսաթումբը) և սեղմում ուղեղի երրորդ հատվածը՝ ամիգդալան, որը մասնակցում է հույզերի, հատկապես վախի և ագրեսիայի հետ կապված վարքագծի կարգավորմանը:

3/ Հիվանդության չբուժմամբ պայմանավորված հոգեկան առողջության վատթարացումն այնպիսի հոգեբանական փոփոխությունն է, որն առաջանում է հիվանդության պահպանման կամ բարդացման հետևանքով՝ ոչ ապացուցողական բուժման անարդյունավետության պայմաններում:

Անձը, ում հավաստիացրել են, որ ոչ ապացուցողական բժշկության մեթոդները անվերապահորեն բուժման կհանգեցնեն, իսկ արդյունքը բացասական է լինում կամ չի համապատասխանում ակնկալած արդյունքին կամ երկարաձգվում է, կարող է առաջացնել հիասթափություն, ինքնավստահության կորուստ, սթրես, դեպրեսիա, ապակենտրոնացում և շփոթվածություն: Բացի այդ՝ ոչ ապացուցողական մեթոդներում երբեմն կիրառվում է գաղափար, որ «հիվանդությունը ներսում է»: Սա կարող է հոգեբանական ծանր բեռ դառնալ՝ հատկապես բարդ կամ քրոնիկ հիվանդությունների դեպքում:

3/ Ապացուցողական բժշկության շրջանակներում ժամանակին բուժում ստանալու հնարավորության բացթողում:

Թեև աշխատանքում որպես ֆիզիկական վնասի երկրորդ տեսակ քննարկվել է բուժում ստանալու հնարավորության բացթողումը, սակայն դրա կարևորությամբ պայմանավորված՝ անհրաժեշտ է այն քննարկել նաև բուժառուի կողմից որպես բուժման ձև ընտրության տեսանկյունից: Ոչ ապացուցողական բժշկությունը նախընտրելը կարող է մի կողմից պայմանավորված լինել մարդու վստահությամբ դեպի ոչ ապացուցողական բժշկության մոտեցումները, մշակութային կամ անձնական նախապատվություններով, իսկ մյուս կողմից՝ ապացուցողական բժշկության համակարգի նկատմամբ անվստահությամբ, երբեմն նաև առողջապահական համակարգի կողմից առաջարկվող բժշկական ծառայությունների հասանելիության խնդիրներով: Սակայն այս ընտրությունը կարող է պարունակել բուժման ժամանակի կորստի էական ռիսկ: Երբ մարդը որոշում է ժամանակավորապես կամ մշտապես հրաժարվել ապացուցողական բժշկությունից՝ հույսը դնելով այլընտրանքային մեթոդների վրա, նա հաճախ կարող է բաց թողնել հիվանդության վաղ շրջանում այն բուժելու կամ կանխարգելելու հնարավորությունը ապացուցողական բժշկության մեթոդներով, որոնք ապացուցված արդյունավետություն ունեն: Շատ հիվանդությունների դեպքում ժամանակը որոշիչ գործոն է, որքան շուտ սկսվի գիտականորեն հիմնավորված բուժումը, այնքան մեծ են վերականգնման կամ



հիվանդության զարգացումը կամ բարդությունները կանխելու հնարավորությունները: Օրինակ՝ ուռուցքային հիվանդությունների դեպքում վաղ փուլում սկսված ապացուցողական բուժումն ունի զգալի առավելություններ՝ ինչպես կենսաապահովման տևողության, այնպես էլ կյանքի որակի պահպանման առումով: Սակայն եթե անձն այդ ընթացքում ընտրի դիմել ոչ ապացուցողական բժշկության մեթոդների, հիվանդությունն այս ընթացքում կարող է զարգանալ, և երբ հիվանդն ի վերջո վերադառնա ապացուցողական բժշկությանը, հնարավորությունները շատ ավելի սահմանափակ կլինեն: Այս դեպքում էլ հիվանդության ծանր փուլին ավելանում է նաև հոգեբանական հուսահատությունը:

Այսպիսով՝ ոչ ապացուցողական բժշկության ընտրությունը որպես հիմնական բուժման տարբերակ դիսկային կարող է լինել հատկապես որոշակի հիվանդությունների դեպքում: Այս առումով կարևոր հանգամանք է ոչ ապացուցողական բժշկությամբ զբաղվող անձի միջամտության հարցը: Վերջինիս առաքելությունը միայն հնարավոր բուժում առաջարկելը չէ, այլ նաև մարդու ընդհանուր բարեկեցությանն ու գիտակից ընտրություն կատարելու կարողությանը նպաստելը: Վերջինս պետք է ներկայացնի բուժառուին, որ իր կիրառած մեթոդը չունի գիտականորեն ապացուցված արդյունավետություն: Չպետք է խոստումներ տա լիարժեք բուժման մասին: Նա կարող է խոսել հնարավոր բարելավումների մասին՝ շեշտելով, որ դրանք անհատական են և սահմանափակ: Երբ ակնհայտ է, որ հիվանդը գտնվում է այնպիսի առողջական վիճակում, որը պահանջում է բժշկական միջամտություն (օրինակ՝ վարակ, սուր ցավ, նորագոյացություն, հոգեկան խանգարում, հորմոնալ կամ նյարդաբանական խնդիրներ), մասնագետը պետք է հստակ ուղղորդի անձին դիմել ապացուցողական բժշկությանը: Սա չի նշանակում հրաժարվել իր մեթոդից, այլ այն ներդնել որպես լրացուցիչ ազդեցություն, ոչ որպես լիարժեք փոխարինող բուժում: Ոչ ապացուցողական բժշկությամբ զբաղվող մասնագետը պետք է լավ իմանա, թե երբ կարող է իր միջամտությունը վտանգավոր կամ ոչ տեղին լինել: Օրինակ՝ եթե անձը հրաժարվում է ինսուլինից և փորձում շաքարախտը կարգավորել միայն սննդակարգով կամ խոտաբույսերով, դա կարող է մահացու լինել: Այդպիսի դեպքերում ոչ ապացուցողական բժշկությամբ զբաղվող մասնագետն ունի բարոյական պարտավորություն՝ միջամտելու և ուղղորդելու: Ոչ ապացուցողական բժշկության մեթոդների ներկայացուցիչները պետք է աշխատեն համագործակցային տրամաբանությամբ, ոչ թե հակադրեն իրենց բուժումը ապացուցողական բժշկությանը:

4/ Խոցելի խմբերին մոլորեցնող բժշկական գործառույթներ:

Խոցելի խմբերին մոլորեցնող բժշկական գործունեությունը լուրջ էթիկական ու հասարակական խնդիր է: Այս խմբերը հաճախ ոչ ապացուցողական բժշկության քողի տակ դառնում են խարդախությունների թիրախ: Տվյալ պարագայում խոցելի կարող



են համարվել այն անձինք, ովքեր իրենց տարիքային, սոցիալական, առողջական կամ տեղեկատվական դրությամբ ավելի հեշտ են մոլորեցվում: Ընդհանուր առմամբ, անհրաժեշտ է առանձնացնել հետևյալ խմբերը՝

- 1/ քրոնիկ կամ լուրջ հիվանդություններ ունեցողները,
- 2/ հուսահատ կամ հուսալքված այն մարդիկ, ովքեր կորցրել են վստահությունը ապացուցողական բժշկության նկատմամբ,
- 3/ համայնքների ներկայացուցիչներ, որոնց շրջանում տարածված են ավանդական հավատալիքները,

4/ ծերերը,

5/ դեռահասները,

6/ տեղեկատվությունից կտրված կամ ցածր կրթական ցենզ ունեցող անձինք:

Մոլորեցման տարբեր ձևեր կարող են լինեն, օրինակ՝ անիրական խոստումներ տալը (թուրմը բուժում է քաղցկեղը մեկ ամսում), վախի օգտագործում (ասել, որ ստանդարտ բուժումը քայքայում է օրգանիզմը), սոցիալական ճնշում (պատմել բազմաթիվ անձանց բուժված լինելու պատմություններ), տերմինաբանության չարաշահում (օրինակ՝ քվանտային լուսաթերապիա, էներգետիկ դաշտի մաքրման խորքային թերապիա) և այլն:

Եթե սահմանենք մոլորեցման ձևերը, ապա դրանք կլինեն այսպիսին.

ա/ Անիրական խոստումները դրսևորվում են այնպիսի պնդումների տեսքով, որոնցով առաջարկվող մեթոդներին, միջոցներին և միջամտություններին վերագրվում է բացարձակ արդյունավետություն՝ անկախ հիվանդության բնույթից, փուլից և բուժառուի անհատական առանձնահատկություններից:

բ/ Վախի օգտագործմամբ խոստումներն այնպիսի պնդումներն են, որոնց միջոցով բուժառուի վրա հոգեբանական ազդեցություն է գործադրվում՝ ապացուցողական բժշկության մեթոդների նկատմամբ անվստահություն և վախ ձևավորելու նպատակով:

գ/ Սոցիալական ճնշման միջոցով խոստումներն այն պնդումներն են, որոնցում բուժման արդյունավետությունը հիմնավորվում է ոչ թե գիտական ապացույցներով, այլ մյուս անձանց ենթադրյալ հաջող փորձով՝ ձևավորելով սոցիալական ազդեցություն և համապատասխանելու ակնկալիք (նվազախմբի վագոնի էֆեկտ¹):

դ/ Տերմինաբանության չարաշահմամբ խոստումներն այնպիսի պնդումներն են, որոնցում դիտավորյալ օգտագործվում են բարդ, կեղծ գիտական կամ սխալ կիրառված մասնագիտական տերմիններ՝ առաջարկվող մեթոդին գիտականության և հավաստիության պատրանք հաղորդելու նպատակով, ինչը բուժառուի մոտ կարող է ստեղծել մասնագիտական բարձր մակարդակի տպավորություն և նվազեցնել

¹ Անգլ.՝ bandwagon effect, կոչվում է նաև մեծամասնությանը միանալու էֆեկտ:

քննադատական գնահատման կարողությունը՝ պայմանավորված տեղեկատվական անհավասարությամբ:

Այսպիսով, ոչ ապացուցողական բժշկության կիրառման ընթացքում մարդու ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունքը պետք է լինի այն ուղենիշը, որի ապահովման արդյունքում միայն ոչ ապացուցողական բժշկությունը կարող է լինել թույլատրելի: Այդ իսկ պատճառով պետության կողմից պետք է իրավական առումով կարգավորվի և վերահսկողություն սահմանվի այս ոլորտի նկատմամբ: Նման պայմաններում կերաշխավորվի նաև մարդու ազատ գործելու իրավունքը:

Օգտագործված գրականության և էլեկտրոնային ռեսուրսների ցանկ

1. ՀՀ Սահմանադրություն:
2. Օվիեդոյի կոնվենցիա:
3. Օվիեդոյի կոնվենցիայի Մարդկային էակաների կլոնավորումն արգելելու մասին լրացուցիչ արձանագրություն (CETS No. 168):
4. Օվիեդոյի կոնվենցիայի Մարդկային ծագման օրգանների և հյուսվածքների փոխպատվաստման մասին լրացուցիչ արձանագրություն (CETS No. 186):
5. Օվիեդոյի կոնվենցիայի Կենսաբժշկական հետազոտությունների մասին լրացուցիչ արձանագրություն (CETS No. 195):
6. Օվիեդոյի կոնվենցիայի Բժշկական նպատակներով գենետիկական թեստավորման մասին լրացուցիչ արձանագրություն (CETS No. 203):
7. *Lambert and others v. France* (46043/14, judgment, 05.06.2015, Grand Chamber).
8. *V. C. v. Slovakia* (18968/07, judgment 08.11.2011, Section 4).
9. *Rakevich v. Russia* (58973/00, judgment 24.03.2004, Section 2).
10. *Costa and Pavan v. Italy* (54270/10, judgment 28.08.2012, Section 2).
11. ՄԻԵԴ «Մոսկվայի Յեհովայի վկաները և այլք ընդդեմ Ռուսաստանի» (դիմում թիվ 302/02, 10 հունիսի 2010թ.).
12. *Montgomery (Appellant) v Lanarkshire Health Board (Respondent)*, (Scotland), Case ID: UKSC/2013/0136, Judgment date: 11 March 2015.
13. Loi fondamentale pour la République fédérale d'Allemagne.
14. The Belmont Report: Ethical Principles and Guidelines for the Protection of Human Subjects of Research: Appendix Volume 2.
15. **Stapleton, J.** “Loss of the chance of cure for cancer”. Modern law review, 2005.
16. **Waltz, J.R., Fred, E.I.** Medical jurisprudence, New York, Macmillan, 1971.

17. **Strube, K.A.** Traumatic brain injury graphing: A case study of Charles Whitman, PMID: 40369769, PMCID: PMC12223350.

18. <https://www.coe.int>

19. <https://www.mfa.am>

20. <https://www.radiofrance.fr>

21. <https://www.btg-bestellservice.de>

22. <https://videocast.nih.gov>

23. <https://www.supremecourt.uk>

24. <https://naturmedscientific.com>

25. <https://hy.healthy-food-near-me.com>

26. <https://pmc.ncbi.nlm.nih.gov>

БАЛАНС МЕЖДУ ПРАВОМ ЧЕЛОВЕКА НА СВОБОДУ ДЕЙСТВИЙ И ПРАВОМ НА ФИЗИЧЕСКУЮ И ПСИХИЧЕСКУЮ НЕПРИКОСНОВЕННОСТЬ В КОНТЕКСТЕ НЕДОКАЗАТЕЛЬНОЙ МЕДИЦИНЫ

Аннотация

Распространение не основанной на доказательствах медицины в современном праве и биоэтике порождает дилемму взаимоотношений между правом человека на свободу действий и его правом на физическую и психическую неприкосновенность. Применение научно недоказанных методов часто сопровождается содержательным отсутствием информированного согласия пациента. Когда человеку четко не разъясняются степень научной обоснованности и потенциальные риски вмешательства, нарушается принцип его автономии, а полученное согласие носит чисто формальный характер. В результате возникает прямая угроза физическому или психическому здоровью человека, которому может быть нанесен непоправимый вред. Более того, одним из ключевых рисков обращения к недоказательной медицине является упущенная пациентом возможность своевременного и эффективного лечения в рамках доказательной медицины, что часто приводит к осложнению заболевания или летальному исходу. Ситуация усугубляется, когда альтернативное лечение применяется в отношении уязвимых групп населения с использованием их психологически беспомощного состояния. Государство и система здравоохранения несут позитивное обязательство защищать человека от вводящих в заблуждение медицинских практик и обеспечивать его безопасность, следовательно, право на свободу действий не может быть абсолютным. Целью работы является выявление и систематический анализ правовых и биоэтических проблем и рисков, возникающих в результате применения

недоказательной медицины. В частности, исследование направлено на раскрытие негативных последствий, связанных с содержательным отсутствием информированного согласия пациента, причинением вреда здоровью, упущенной возможностью своевременного получения медицинской помощи, а также с действиями, вводящими в заблуждение уязвимые группы, для обоснования необходимости регуляторного вмешательства со стороны государства.

Ключевые слова: недоказательная медицина, право на свободу действий, право на физическую и психическую неприкосновенность, информированное согласие, позитивное обязательство государства, уязвимые группы, биоэтика.

BALANCING THE RIGHT OF A HUMAN BEING TO ACT FREELY AND RIGHT TO PHYSICAL AND MENTAL INTEGRITY IN THE CONTEXT OF NON-EVIDENCE-BASED MEDICINE

Annotation

The proliferation of non-evidence-based medicine in modern law and bioethics gives rise to a dilemma regarding the interplay between an individual's right to freedom of action and their right to physical and mental integrity. The application of scientifically unproven methods is frequently accompanied by a substantive lack of informed consent from the patient. When the degree of scientific validity and the potential risks of an intervention are not clearly presented to an individual, the principle of autonomy is violated, and the consent obtained remains merely formal. Consequently, a direct threat is posed to the person's physical or mental health, which can suffer irreversible harm. Furthermore, a pivotal risk of resorting to non-evidence-based medicine is the patient's missed opportunity to receive timely and effective treatment within the framework of evidence-based medicine, often leading to complications or fatalities. The situation is further exacerbated when alternative treatments are administered to vulnerable groups, exploiting their psychologically helpless state. The state and the healthcare system bear a positive obligation to protect individuals from misleading medical practices and to ensure their safety; hence, the right to freedom of action cannot be absolute. The purpose of this study is to identify and systematically analyze the legal and bioethical issues and risks arising from the practice of non-evidence-based medicine. Specifically, the research aims to uncover the negative consequences associated with the substantive lack of informed consent, damage to health, the failure to receive timely medical treatment, and the practices misleading vulnerable groups, thereby substantiating the necessity for regulatory intervention by the state.

Keywords: non-evidence-based medicine, right to freedom of action, right to physical and mental integrity, informed consent, positive obligation of the state, vulnerable groups, bioethics.

Հոդվածը հանձնված է խմբագրություն 01.06.2026 թ., տրվել է գրախոսության 16.06.2026 թ., ընդունվել է տպագրության 19.06.2026 թ.:



DOI: 10.59560/18291155-2026.2-167

ԷԴՎԱՐԴ ՄՈՎՍԻՍՅԱՆ

«ԼԻԳԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ-ի
իրավաբանական դեպարտամենտի
պայմանագրահրավական և
ապահովագրական գործունեության
իրավական սպասարկման բաժնի
առաջատար մասնագետ,
ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի
մագիստրոս



ՍՈՒՐԵՆ ՍԼՈՅԱՆ

«ՀԱՊ» ՍՊԸ իրավաբան,
ՀՀ Փաստաբանների պալատի
անդամ, փաստաբան,
ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի
մագիստրոս

**ՀԱՅՑԱՅԻՆ ՎԱՂԵՄՈՒԹՅԱՆ ԿԻՐԱՌՈՒՄՆ ԸՆՏԱՆԵԿԱՆ
ԻՐԱՎԱՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ԲԽՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ**

Ամփոփագիր

Սույն գիտական հոդվածը նվիրված է ընտանեկան իրավահարաբե-
րություններում հայցային վաղեմության ինստիտուտի կիրառման հիմնախնդիրների
ուսումնասիրմանը: Աշխատանքում ներկայացվում է հայցային վաղեմության
ինստիտուտի էությունը, դրա նշանակությունը քաղաքացիական շրջանառության
կայունության, իրավական որոշակիության և դատական պաշտպանության
արդյունավետ իրականացման ապահովման տեսանկյունից: Վերլուծվում են ՀՀ
քաղաքացիական և ընտանեկան օրենսդրությունների փոխհարաբերությունը
կարգավորող իրավանորմերը՝ առանձնահատուկ ուշադրություն դարձնելով ՀՀ
Ընտանեկան օրենսգրքի 8-րդ հոդվածի բովանդակությանը և դրա կիրառման

ընթացքում առաջացող իրավական անորոշություններին: Հոդվածում ուսումնասիրվում են նաև ՀՀ Սահմանադրական և Վճռաբեկ դատարանների իրավական դիրքորոշումները հայցային վաղեմության ինստիտուտի վերաբերյալ:

Աշխատանքում ներկայացվում է այն մոտեցումը, որ ընտանեկան իրավահարաբերություններից բխող որոշ գույքային պահանջների, մասնավորապես՝ ամուսնական պայմանագրի և ալիմենտային համաձայնության անվավեր ճանաչման պահանջների նկատմամբ նպատակահարմար է կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված ընդհանուր կամ հատուկ հայցային վաղեմության ժամկետները: Կատարվում է նաև համեմատական իրավական վերլուծություն՝ անդրադառնալով մի շարք օտարերկրյա պետությունների օրենսդրական փորձին: Միջազգային փորձի ուսումնասիրման հիման վրա առաջարկվում են օրենսդրական փոփոխություններ, որոնք ուղղված են ընտանեկան իրավահարաբերություններում հայցային վաղեմության կիրառման հստակեցմանը և իրավական որոշակիության ապահովմանը:

Հիմնաբառեր. հայցային վաղեմություն, հայցային վաղեմության ժամկետ, դատական պաշտպանություն, ընտանեկան իրավահարաբերություններ, գույքային իրավունքներ, անձնական ոչ գույքային իրավունքներ:

Ներածություն

Ներկայումս ընտանեկան իրավահարաբերություններից բխող պահանջների նկատմամբ հայցային վաղեմության կիրառման հարցը ձեռք է բերել խիստ արդիականություն: Ընտանեկան իրավունքից բխող անձնական ոչ գույքային, այնպես էլ գույքային իրավահարաբերությունների առանձնահատկություններից ելնելով՝ հաճախ առաջանում են դժվարություններ՝ որոշելու, թե որ դեպքերում է կիրառելի հայցային վաղեմության ժամկետը: Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսդրության գործող իրավակարգավորումները, մասնավորապես՝ ընտանեկան հարաբերություններից բխող պահանջների նկատմամբ հայցային վաղեմության կիրառման հարցում, ամբողջությամբ չեն ապահովում իրավական որոշակիություն, ինչը կարող է առաջացնել տարակերպ մեկնաբանություններ իրավակիրառ պրակտիկայում:

Սույն հետազոտության նպատակն է ուսումնասիրել ընտանեկան իրավահարաբերություններից բխող պահանջների նկատմամբ հայցային վաղեմության կիրառման առանձնահատկությունները, բացահայտել առկա խնդիրները և առաջարկել դրանց կարգավորմանն ուղղված լուծումներ՝ հաշվի առնելով ինչպես հայրենական օրենսդրությունը, այնպես էլ միջազգային փորձը:

Հետազոտության նպատակին հասնելու համար առաջադրվել են հետևյալ խնդիրները՝

1. ուսումնասիրել հայցային վաղեմության ինստիտուտի էությունը և դրա նշանակությունը ընտանեկան իրավահարաբերություններում,
2. վերլուծել Հայաստանի Հանրապետության քաղաքացիական և ընտանեկան օրենսդրությունների փոխհարաբերությունը կարգավորող նորմերը,
3. ուսումնասիրել իրավակիրառ պրակտիկան և օտարերկրյա պետությունների օրենսդրական փորձը,
4. ներկայացնել առաջարկություններ՝ ուղղված ընտանեկան իրավահարաբերություններում հայցային վաղեմության կիրառման հստակեցմանը:

Հայցային վաղեմության ինստիտուտի կիրառման խնդիրները ընտանեկան իրավահարաբերություններում պայմանավորված են այն առանձնահատկություններով, որոնց պատճառով ընտանեկան օրենսդրությունը կոդիֆիկացվել է որպես իրավունքի առանձին ճյուղ: Ընտանեկան իրավահարաբերություններից բխող պահանջներով կիրառման ենթակա հայցային վաղեմության վերաբերյալ լրջագույն տարրնկալում է առկա, թե որ նորմատիվ իրավական ակտով պետք է առաջնորդվել՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքով, թե՞ ՀՀ ընտանեկան օրենսգրքով:

Նախ՝ անհրաժեշտ ենք համարում ընդհանրական անդրադառնալ հայցային վաղեմության ինստիտուտին: Հայցային վաղեմությունը քաղաքացիական իրավունքի կենտրոնական ինստիտուտներից մեկն է, քանի որ սահմանում է դատական կարգով սուբյեկտիվ իրավունքի պաշտպանության ժամանակային սահմանները, իսկ դատական պաշտպանությունը իրավունքների պաշտպանության հիմնական միջոցն է¹: Հայցային վաղեմությունը ժամանակային սահմանափակում է, որի սահմաններում հայցով ներկայացված պահանջը կարող է բավարարվել դատարանի կողմից: Ընդ որում՝ հիմնական մոտեցումն այն է, որ հայցային վաղեմության ժամկետի անցնելը չի դադարեցնում սուբյեկտիվ իրավունքը, և վերջինս շարունակում է գոյություն ունենալ ու կարող է նաև իրականացվել²: Հայցային վաղեմության ինստիտուտի հասկացությունն ու էությունը մեկնաբանվել է Կոստելլոն ընդդեմ ԱՄՆ-ի գործի³ շրջանակներում, որտեղ ԱՄՆ Գերագույն դատարանն արձանագրել է հետևյալը.

¹ Տե՛ս **Բարսեղյան Տ.Կ.**, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք: Առաջին մաս, 4-րդ հրատ., Երևան, «Տիգրան Մեծ» հրատ., 2014, էջ 279:

² Տե՛ս **Գաբրույան Բ.Ա.**, Հայցային վաղեմության ինստիտուտի էությունը: ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների նստաշրջանի նյութերի ժողովածու: Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2019, էջ 103:

³ Տե՛ս *Costello v. United States*, 365 U.S. 265 (1961)
<https://supreme.justia.com/cases/federal/us/365/265/> (18.04.2026):

«Այնուամենայնիվ, նույնիսկ եթե մենք ենթադրենք հայցային վաղեմության կիրառելիությունը, կարծում ենք, որ հայցվորը չի ապացուցել երկու տարրերն էլ, որոնց միաժամանակյա առկայությունը անհրաժեշտ է: Հայցային վաղեմությունը պահանջում է ապացույց առ այն որ (1) հայցվորի կողմից չի դրսևորվել պատշաճ ջանասիրություն և (2) վնաս է պատճառել պատասխանող կողմին»: Այս երկու պայմանների առկայության դեպքում միայն մենք կարող ենք խոսել հայցային վաղեմության կիրառման մասին:

Հայցային վաղեմության հետ կապված իրավահարաբերությունների կարգավորմանն է նվիրված ՀՀ քաղաքացիական օրենսգրքի¹ 21-րդ գլուխը: Սույն գլխի 331-րդ հոդվածի համաձայն՝ «Հայցային վաղեմություն է համարվում իրավունքը խախտված անձի հայցով իրավունքի պաշտպանության ժամանակահատվածը»:

ՀՀ Սահմանադրական դատարանը, անդրադառնալով հայցային վաղեմության ինստիտուտին, նշել է. «Հայցային վաղեմության ինստիտուտի նպատակն է կանոնակարգել քաղաքացիական շրջանառությունը, ստեղծել իրավական կապերի որոշակիություն ու կայունություն, ապահովել իրավահարաբերության մասնակիցների կարգապահությունը, նպաստել պայմանագրերի կատարմանը, ապահովել քաղաքացիական իրավահարաբերության սուբյեկտների իրավունքների և շահերի ժամանակին պաշտպանությունը: Խախտված քաղաքացիական իրավունքների պաշտպանության համար ողջամիտ ժամանակային սահմանափակումների բացակայությունը կհանգեցներ պատասխանողների և երրորդ անձանց իրավունքների ու շահերի խախտման, որոնք միշտ չէ, որ նախապես կարող էին հաշվի առնել գործի քննության համար նշանակություն ունեցող տեղեկությունների և փաստերի հավաքման ու պահպանման անհրաժեշտությունը: Միաժամանակ, հայցային վաղեմության կիրառումը քաղաքացիական շրջանառության մասնակիցներին պաշտպանում է անհիմն պահանջներից և միաժամանակ դրդում է նրանց ժամանակին հոգ տանել իրենց իրավունքների իրացման և պաշտպանության մասին»²:

ՀՀ Վճռաբեկ դատարանը ԵԿԴ/0881/02/12 գործով³ արձանագրել է՝ «Հայցային վաղեմության ժամկետն այն ժամանակահատվածն է, որն անձին հնարավորություն է տալիս դիմելու դատարան իր իրավունքների պաշտպանության հայցով»: Զարգացնելով հայցային վաղեմության վերաբերյալ վերը նշված դիրքորոշումները՝ ՀՀ Վճռաբեկ դատարանը «Այլանս պլյուս» ՍՊԸ-ն ընդդեմ «ԱրմենՏել» ՓԲԸ-ի թիվ

¹ Ընդունվել է 05.05.1998 թ., ուժի մեջ է մտել 01.01.1999 թ.: Տե՛ս ՀՀՊՏ 1998.08.10/18(51):

² Տե՛ս ՀՀ Սահմանադրական դատարանի 28.09.2021 թվականի ՍԴՈ-1611 որոշումը: Միասնական կայք 2021.10.04-2021.10.17 Պաշտոնական հրապարակման օրը 05.10.2021:

³ Տե՛ս թիվ ԵԿԴ/0881/02/12 քաղաքացիական գործով ՀՀ Վճռաբեկ դատարանի 28.11.2014 թվականի որոշումը: ՀՀՊՏ 2015.01.12/1(1090) Հոդ.8:



ԵԱԲԴ/4524/02/15 քաղաքացիական գործով 04.06.2019 թվականի որոշմամբ¹ նշել է՝ «Դատական պաշտպանության իրավունքն ունի իրացման որոշակի պայմաններ, որոնց չարաշահումը կարող է անբարենպաստ հետևանքներ առաջացնել այդ իրավունքից անբարեխիղճ օգտված անձի համար: Հետևաբար ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 337-րդ հոդվածի 1-ին կետում օրենսդրի կողմից կիրառված «պետք է իմացած լինել իր իրավունքի խախտման մասին» արտահայտությունը չպետք է սխալմամբ մեկնաբանվի այնպես, որ հայցային վաղեմության ժամկետի ընթացքը կարող է սկսվել հայցվորի կողմից իր իրավունքի խախտման մասին ենթադրելու հնարավորություն ունենալու օրվանից, ընդհակառակը՝ «պետք է իմացած լինել» ձևակերպմամբ, ինչպես և «իմացել է» ձևակերպման պարագայում օրենսդիրը կարևորել է հայցային վաղեմության ընթացքն սկսվելու հարցում հայցվորի կողմից իր իրավունքի խախտման մասին **հաստատապես** (ընդգծումը մերն է) իմանալու հանգամանքը»:

Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքի² (այսուհետ՝ ՀՀ ԸՕ) 8-րդ հոդվածը սահմանում է, որ ընտանեկան հարաբերություններից բխող պահանջների նկատմամբ հայցային վաղեմություն չի կիրառվում, **բացառությամբ սույն օրենսգրքով նախատեսված դեպքերի** (ընդգծումը մերն է): Օրենսդրի նպատակը արդարացված է. Նախ՝ սա կապված է տևական բնույթի անձնական ոչ գույքային հարաբերությունների գերակշռության հետ, որոնք, ըստ էության, վաղեմության ժամկետից դուրս են, քանի որ դրանց իրավական բնույթը ցանկացած պահի կարող է պահանջել խախտված սուբյեկտիվ իրավունքների պաշտպանություն³: Երկրորդ՝ գույքային այն պահանջները, որոնք անքակտելիորեն կապված են խիստ անձնական հարաբերությունների հետ, դուրս են մնացել հայցային վաղեմության ժամկետ կիրառելու շրջանակից⁴:

ՀՀ ԸՕ 2-րդ հոդվածը, սահմանելով ընտանեկան օրենսդրությամբ կարգավորվող իրավահարաբերությունները, դրանց մեջ ընդգրկել է ամուսնության, ամուսնությունը դադարելու և անվավեր ճանաչելու պայմաններն ու կարգը, անձնական ոչ գույքային և գույքային հարաբերություններն ընտանիքի անդամների միջև՝ ամուսինների, ծնողների և զավակների (որդեգրողների ու որդեգրվածների), իսկ ընտանեկան օրենսդրությամբ նախատեսված դեպքերում և շրջանակներում՝ մյուս ազգականների և այլ անձանց միջև, ինչպես նաև առանց ծնողական խնամքի մնացած երեխաների խնամքը և դաստիարակությունն ընտանիքում կազմակերպելու

¹ Տե՛ս թիվ ԵԱԲԴ/4524/02/15 քաղաքացիական գործով ՀՀ Վճռաբեկ դատարանի 04.06.2019 թվականի որոշումը: ՀՀՊՏ 2019.07.12/45(1498).1 Հոդ.603.10:

² Ընդունվել է 09.11.2004 թ., ուժի մեջ է մտել 19.04.2005 թ.: Տե՛ս ՀՀՊՏ 2005.01.19/4(376) Հոդ.60:

³ Տե՛ս **Пчелинцева Л.М.** Комментарий к Семейному кодексу РФ. – М.: Норма, 2006, էջ 51:

⁴ Տե՛ս **Новицкий И.Б.** Сделки. Исковая давность. – М.: Госюриздат, 1954, էջ 152-153:

ձևերն ու կարգը: Այսինքն՝ ՀՀ ԸՕ 2-րդ հոդվածից բխում է, որ 8-րդ հոդվածում կիրառվող «ընտանեկան հարաբերություններից բխող պահանջներ» բառակապակցությունը վերաբերում է, ինչպես անձնական ոչ գույքային, այնպես էլ գույքային իրավահարաբերություններից բխող պահանջներին: ՀՀ ԸՕ 8-րդ հոդվածի տառացի մեկնաբանությունից բխում է, որ հայցային վաղեմություն չի կիրառվում նաև ընտանեկան իրավունքի սուբյեկտների միջև առաջացող գույքային պահանջների նկատմամբ, ինչը անշուշտ չի համապատասխանում սեփականության անձեռնմխելիության սկզբունքին:

Գ.Հ. Ղարախանյանը, մեկնաբանելով սույն նորմը, նշում է. «Ընտր.Օր. 8-րդ հոդվ. համաձայն՝ ընտանեկան հարաբերություններից բխող պահանջների նկատմամբ հայցային վաղեմություն չի կիրառվում, բացառությամբ այն դեպքերի, երբ խախտված իրավունքի պաշտպանության համար ժամկետ է սահմանված ՀՀ ընտանեկան օրենսգրքով: Մասնավորապես, հայցային վաղեմություն չի տարածվում ամուսնությունը լուծելու, ամուսնությունն անվավեր ճանաչելու, ամուսնական պայմանագրի պայմանները վիճարկելու, հայրությունը որոշելու, երեխաների վերաբերյալ վեճերի, ալիմենտ բռնագանձելու, որդեգրումը վերացնելու և այլ պահանջների վրա: Դա բացատրվում է նշված պահանջների անձնական բնույթով, քանի որ հայցային վաղեմություն չի տարածվում անձնական ոչ գույքային իրավունքների վերաբերյալ պահանջների վրա, բացի օրենքով նախատեսված դեպքերից (ՔաղՕր. 344 հոդվ.)»¹: Գտնում ենք, որ քննարկվող հոդվածը չենք կարող նման կերպ մեկնաբանել: Հեղինակի մատնանշած պահանջներից «ամուսնական պայմանագրի պայմանները վիճարկելու» պահանջն ունի անձնական բնույթ, սակայն այն անձնական ոչ գույքային իրավահարաբերությունից չի բխում, ուստի, սույն պահանջի նկատմամբ կիրառելի չէ ՀՀ քաղ. օր. 344-րդ հոդվածը, քանի որ այն սահմանում է հայցային վաղեմությունը չտարածելու կանոն **անձնական ոչ գույքային իրավունքների** (ընդգծումը մերն է) նկատմամբ:

Միևնույն ժամանակ, գոյություն ունեն ընտանեկան իրավահարաբերություններից բխող տարբեր պահանջներ, որոնց դեպքում նպատակահարմար է նախատեսել հայցային վաղեմության ժամկետի կիրառման հնարավորություն: Անհրաժեշտ է հայցային վաղեմության ժամկետի կիրառման հնարավորություն նախատեսել ընտանեկան իրավահարաբերություններից բխող գործարքների՝ ամուսնական պայմանագրի և ալիմենտային համաձայնության անվավեր ճանաչելու պահանջների դեպքում: Այս հարցին անդրադարձել է ՌԴ Գերագույն դատարանը՝ նշելով, որ ամուսնական պայմանագրի անվավեր ճանաչելու պահանջի համար հայցային վաղեմություն նախատեսելն ուղղված է կայունության և իրավական

¹ Տե՛ս Ղարախանյան Գ.Հ., ՀՀ Ընտանեկան իրավունք 2-րդ հրատ., Եր., ԵՊՀ հրատ., 2008, էջ 104:

որոշակիության ապահովմանը¹: Նույն տրամաբանությունն ու իրավաչափ նպատակներն են առկա նաև ալիմենտային համաձայնության վերաբերյալ պահանջների դեպքում:

Հետաքրքրական են հայցային վաղեմության վերաբերյալ իրավակարգավորումները Հայաստանի ընտանիքի և ամուսնության օրենսգրքում² (այսուհետ՝ ՀՀ ԸԱ Օր.): Սույն օրենսգրքի 9-րդ հոդվածը սահմանում էր, որ ամուսնական և ընտանեկան հարաբերություններից բխող պահանջների վրա հայցային վաղեմություն չի տարածվում, բացառությամբ այն դեպքերի, երբ խախտված իրավունքի պաշտպանության ժամկետը սահմանված է ԽՍՀ Միության օրենսդրությամբ և սույն օրենսգրքով: Ի տարբերություն գործող Ընտանեկան օրենսգրքի, ՀՀ ԸԱ Օր. 21-րդ հոդվածի 2-րդ պարբերությամբ սահմանվում էր, որ ապահարգանված ամուսինների ընդհանուր համատեղ սեփականություն հանդիսացող գույքի բաժանման պահանջի համար սահմանվում է **հայցային վաղեմության եռամյա ժամկետ** (ընդգծումը մերն է): Այսինքն՝ սույն օրենսգրքով ուղղակիորեն սահմանվում էր իրավակարգավորում, որով նախատեսված էր հայցային վաղեմության ժամկետի կիրառման վերաբերյալ հատուկ կանոն: ՀՀ ԸՕ 8-րդ հոդվածում նախատեսված է հայցային վաղեմության ժամկետ չտարածելու ընդհանուր կանոն և դրան բացառություն, որը պետք է նախատեսված լիներ սույն օրենսգրքով, սակայն օրենսգրքի համալիր ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ այդպիսի դեպքեր ուղղակիորեն օրենսդիրը չի նախատեսում, ինչը անշուշտ չի բխում իրավական որոշակիության սկզբունքից: ՀՀ Սահմանադրական դատարանը, ՍԴՈ-1488 որոշմամբ անդրադառնալով իրավական որոշակիության սկզբունքին, նշել է. «Իրավական պետության սկզբունքը, ի թիվս այլնի, պահանջում է նաև իրավական օրենքի առկայություն: Վերջինս պետք է լինի բավականաչափ մատչելի՝ իրավունքի սուբյեկտները պետք է համապատասխան հանգամանքներում հնարավորություն ունենան կողմնորոշվելու, թե տվյալ դեպքում ինչ իրավական նորմեր են կիրառվում: Նորմը չի կարող համարվել «օրենք», եթե այն ձևակերպված չէ բավարար ճշգրտությամբ, որը թույլ կտա իրավաբանական և ֆիզիկական անձանց դրան համապատասխանեցնել իրենց վարքագիծը. նրանք պետք է հնարավորություն ունենան կանխատեսել այն հետևանքները, որոնք կարող է առաջացնել տվյալ գործողությունը»³:

¹ Տե՛ս Определение Верховного Суда РФ от 20 января 2015 г. №5-КГ14-144 <https://www.garant.ru/products/ipo/prime/doc/70772980/> (18.04.2026):

² Ընդունվել է 18.07.1969 թ., ուժի մեջ է մտել 01.01.1970 թ., ուժը կորցրել է 19.04.2005 թ.: Տե՛ս ՀՍՍՀԳՍ 1969/14:

³ Տե՛ս ՀՀ Սահմանադրական դատարանի 15.11.2019 թվականի ՍԴՈ-1488 որոշումը: ՀՀՊՏ 2019.11.27/83(1536) Հոդ.1064:

ՌԴ Ընտանեկան օրենսգրքի 9-րդ հոդվածի համաձայն՝ ընտանեկան իրավահարաբերություններից բխող պահանջների նկատմամբ հայցային վաղեմություն չի կիրառվում, չնայած դրան օրենքով նախատեսված են ընդհանուր սկզբունքից որոշ բացառություններ՝

1. ամուսնալուծված ամուսինների ընդհանուր համատեղ սեփականություն հանդիսացող գույքի բաժանման պահանջի համար սահմանվում է հայցային վաղեմության եռամյա ժամկետ,

2. ամուսիններից մեկի կողմից առանց մյուսի համաձայնության ամուսինների համատեղ գույքի վերաբերյալ կատարված գործարքի վիճարկման դեպքում նախատեսվում է մեկամյա ժամկետ:

3. ամուսնալուծության պահանջով, որը ներկայացվել է այն հիմքով, որ ամուսիններից մեկը ամուսնանալիս թաքցրել է մյուսից, որ ինքը տառապում է վեներական հիվանդությամբ կամ ՄԻԱՎ հարուցիչով, սահմանվում է մեկամյա ժամկետ:

Առաջին երկու բացառությունների մասին պետք է նշել, որ այդ իրավահարաբերություններն ունեն գույքային բնույթ և հայցային վաղեմության նախատեսումն անհրաժեշտ է քաղաքացիական շրջանառության կայունության ապահովման համար: Ինչ վերաբերում է երրորդ հիմքին, այն պայմանավորված է միայն անտեղյակ ամուսնու իրավունքների և շահերի խախտման հետ: Պահանջի անձնական բնույթը հաշվի առնելով՝ հայցային վաղեմության ժամկետ սահմանելու անհրաժեշտություն է առաջացել¹:

ՌԴ Սահմանադրական դատարանը, 2008 թ. հոկտեմբերի 21-ի № 651-Օ-Օ (ՕԿԸ) որոշմամբ վերլուծության ենթարկելով ՌԴ Ընտանեկան օրենսգրքի 9-րդ հոդվածը, արձանագրել է, որ հայցային վաղեմությունը սահմանված է միայն երեք բացառությունների համար, այս երեքից դուրս ցանկացած այլ ընտանեկան իրավունքները խախտող պահանջների դեպքում հայցային վաղեմություն չի կիրառվում, որը պայմանավորված է ընտանեկան իրավունքի առանձին իրավունքի ճյուղ լինելու և ընտանեկան օրենսդրության առանձնահատկությունների առկայության հանգամանքներով²:

Նախկինում ՌԴ Ընտանեկան օրենսգրքում առկա է եղել իրավակարգավորում, որը հայցային վաղեմության մեկամյա ժամկետ էր սահմանել հայրության վիճարկման պահանջի համար: Հետագայում այս նորմը դարձել է քննարկման առարկա Մարդու իրավունքների եվրոպական դատարանում «Շոֆմանն ընդդեմ ՌԴ-ի» գործի

¹ St'u **Давыдова А.И.** Специфика и проблемы применения норм об исковой давности к семейным правоотношениям // Юридический вестник молодых ученых. № 3. – Москва, 2016, էջ 12:

² St'u **Гладковская Е.И.** Применение исковой давности в семейных отношениях // Ученые записки Казанского университета. Серия: Гуманитарные науки. 2016. Том 158. № 2, էջ 388:

շրջանակներում: Դատարանը նշել է, որ այն փաստը, որ դիմումատուին արգելել են վիճարկել իր հայրությունը, քանի որ նա չգիտեր, որ ինքը չի կարող լինել երեխայի հայրը մինչև երեխայի նկատմամբ հայրության գրանցումից մեկ տարուց ավելի անցած, համաչափ չէ օրենքի հետապնդող նպատակներին: Հետևաբար, ընտանեկան հարաբերությունների իրավական որոշակիության պաշտպանության, ընդհանուր շահի և երեխայի հայր լինելու իրավական կանխավարկածը վերանայելու դիմումատուի իրավունքի միջև արդարացի հավասարակշռություն չի հաստատվել¹:

Ուկրաինայի Ընտանեկան օրենսգրքի² 20-րդ հոդվածի 1-ին մասն ունի հետևյալ բովանդակությունը. «Ընտանեկան հարաբերություններից բխող պահանջները հայցային վաղեմության ենթակա չեն, բացառությամբ Ընտանեկան օրենսգրքի 72-րդ հոդվածի երկրորդ մասով, 129-րդ հոդվածի երկրորդ մասով, 138-րդ հոդվածի երրորդ մասով, 139-րդ հոդվածի երրորդ մասով նախատեսված դեպքերի»: Ուկրաինայի Ընտանեկան օրենսգրքի 72-րդ հոդվածի 2-րդ մասը նշում է, որ ամուսնալուծությունից հետո ներկայացված գույքի բաժանման պահանջի նկատմամբ կիրառվում է հայցային վաղեմության եռամյա ժամկետ: Ուկրաինայի Ընտանեկան օրենսգրքի 129-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հայրության ճանաչման պահանջը ենթակա է մեկամյա հայցային վաղեմության ժամկետի, որը սկսվում է այն օրվանից, երբ անձը իմացել է կամ կարող էր իմանալ իր հայրության մասին: Ուկրաինայի Ընտանեկան օրենսգրքի 138-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ երեխայի ծննդյան վկայականը փոփոխելու մոր դիմումի համար սահմանվում է մեկամյա հայցային վաղեմության ժամկետ՝ սկսած երեխայի ծննդյան գրանցման օրվանից: Ուկրաինայի Ընտանեկան օրենսգրքի 139-րդ հոդվածի 3-րդ մասով՝ մայրության ճանաչման պահանջը ենթակա է մեկամյա հայցային վաղեմության ժամկետի, որը սկսվում է այն օրվանից, երբ անձը իմացել է կամ կարող էր իմանալ, որ ինքը երեխայի մայրն է:

Վերոգրյալից պարզ է դառնում, որ Ուկրաինայի օրենսդիրը հստակ նշել է հայցային վաղեմության վերաբերյալ բացառությունները, ինչը անշուշտ բացառում է նորմի վերաբերյալ բոլոր տարընկալումները և ապահովում է իրավական որոշակիություն և կանխատեսելիություն:

Ավստրիայի քաղաքացիական օրենսգրքի 1481-րդ հոդվածը սահմանում է, որ ընտանեկան և ընդհանրապես անձնական ոչ գույքային իրավունքներից բխող պահանջների նկատմամբ հայցային վաղեմություն չի տարածվում, սակայն նույն նորմում առկա են նաև հստակ բացառություններ³:

¹ St' u *Shofman v. Russia* (Application no. 74826/01), <https://hudoc.echr.coe.int/eng?i=001-71303> (18.04.2026):

² St' u Ուկրաինայի Քաղաքացիական օրենսգիրք, <https://urst.com.ua/ru/sku/razdel-1> (18.04.2026):

³ St' u **Маслов С.С.** Всеобщий гражданский кодекс Австрии. – М.: Инфотропик Медиа, 2011, էջ 256:



Ընտանեկան իրավահարաբերություններից բխող պահանջների նկատմամբ հայցային վաղեմության կիրառման հարցի վերաբերյալ Գերմանիայի օրենսդիրը տարբերվող մոտեցում է որդեգրել: Գերմանիայի քաղաքացիական օրենսգրքի 196-րդ հոդվածը նշում է, որ հայցային վաղեմություն չի տարածվում ընտանեկան իրավահարաբերություններից բխող այն պահանջների նկատմամբ, որոնք ուղղված են մինչև իրավունքի խախտումը եղած դրությունը վերականգնելուն: Միևնույն ժամանակ, մյուս բոլոր պահանջների նկատմամբ, որոնք բխում են ընտանեկան իրավահարաբերություններից, 197-րդ հոդվածում սահմանվել է 30 տարվա հայցային վաղեմության ժամկետ: Այսպիսով, օրենսդիրն ակնհայտորեն չի պահպանում ընտանեկան իրավունքի պահանջների վաղեմության ժամկետի բացառիկության գաղափարը¹:

Ֆրանսիայում վաղեմության ժամկետ հասկացության փոխարեն օգտագործվում է «մարման ժամկետ» բառակապակցությունը: Որպես այդպիսին, ֆրանսիական օրենսդրության մեջ առկա չէ հստակ սահմանում, սակայն կարելի է եզրակացնել, որ եթե անձը որոշակի ժամկետում չի օգտվում դատական պաշտպանության իր իրավունքից, ապա այն մարում է²:

Ամփոփելով՝ գտնում ենք, որ որպես հարցի վերջնական լուծում անհրաժեշտ է կատարել օրենսդրական փոփոխություններ, որոնց միջոցով միայն հնարավոր կլինի արդյունավետ կարգավորել ընտանեկան իրավունքից բխող պահանջների նկատմամբ հայցային վաղեմության ժամկետի կիրառման միատեսակ կիրառումը:

Եզրակացություն

1. Անհրաժեշտ է ՀՀ ԸՕ 8-րդ հոդվածում կատարել լրացում և հստակ նշել օրենսգրքի այն հոդվածները, որոնցով կարգավորվող իրավահարաբերությունների նկատմամբ կիրառվում է հայցային վաղեմության ընդհանուր կամ հատուկ ժամկետ: Միջազգային փորձի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ արտասահմանյան երկրների ազգային օրենսդրությունները որդեգրել են այն մոտեցումը, որ ընտանեկան հարաբերությունները կարգավորող օրենքներում պետք է հստակ նշվի, թե որ պահանջների նկատմամբ է կիրառվում հայցային վաղեմության ժամկետը:

2. Ամուսնական պայմանագրի և ալիմենտային համաձայնության հետ կապված պահանջների նկատմամբ պետք է կիրառվի ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի ընդհանուր հայցային վաղեմության եռամյա ժամկետը, բացառությամբ՝ առոչնչության և անվավերության պահանջների, որոնց դեպքում պետք է կիրառվեն ՀՀ

¹ Տե՛ս Գերմանիայի Քաղաքացիական օրենսգիրք, <https://www.gesetze-im-internet.de/bgb/> (18.04.2026):

² Տե՛ս Ֆրանսիայի Քաղաքացիական օրենսգիրք, <https://www.legifrance.gouv.fr/> (18.04.2026):

Քաղաքացիական օրենսգրքի դրանց համար նախատեսված հատուկ հայցային վաղեմության ժամկետները:

3. ՀՀ ԸՕ 26-րդ հոդվածը պետք է լրացվի հետևյալ կարգավորմամբ, ըստ որի «Ամուսինների ընդհանուր համատեղ սեփականություն հանդիսացող գույքի բաժանման պահանջի համար սահմանվում է հայցային վաղեմության եռամյա ժամկետ»: Այս կարգավորումը դրականորեն կազդի անձանց սեփականության իրավունքի պաշտպանության սկզբունքի իրացման ապահովման վրա:

Օգտագործված նորմատիվ իրավական ակտերի, դատական ակտերի և գրականության ցանկ

1. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրք (ընդունվել է 05.05.1998 թ., ուժի մեջ է մտել 01.01.1999 թ.: ՀՀՊՏ 1998.08.10/18(51)):
2. Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգիրք (ընդունվել է 09.11.2004 թ., ուժի մեջ է մտել 19.04.2005 թ.: ՀՀՊՏ 2005.01.19/4(376) Հոդ.60):
3. Հայաստանի ընտանիքի և ամուսնության օրենսգիրք (ընդունվել է 18.07.1969 թ., ուժի մեջ է մտել 01.01.1970 թ., ուժը կորցրել է 19.04.2005 թ.: ՀՍՍՀԳՍՏ 1969/14):
4. Ուկրաինայի քաղաքացիական օրենսգիրք, <https://urst.com.ua/ru/sku/razdel-1> (18.04.2026):
5. Գերմանիայի քաղաքացիական օրենսգիրք, <https://www.gesetze-im-internet.de/bgb/> (18.04.2026):
6. Ֆրանսիայի քաղաքացիական օրենսգիրք, <https://www.legifrance.gouv.fr/> (18.04.2026):
7. **Բարսեղյան Տ.Կ.**, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք: Առաջին մաս, 4-րդ հրատ., Երևան, «Տիգրան Մեծ» հրատ., 2014, էջ 560:
8. **Գաբուզյան Ք.Ա.**, Հայցային վաղեմության ինստիտուտի էությունը, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների նստաշրջանի նյութերի ժողովածու, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2019, էջ 121:
9. **Ղարախանյան Գ.Հ.**, ՀՀ Ընտանեկան իրավունք: 2-րդ հրատ., Եր., ԵՊՀ հրատ., 2008, էջ 304:
10. **Гладковская Е.И.** Применение исковой давности в семейных отношениях // Ученые записки Казанского университета. Серия: Гуманитарные науки. 2016. Том 158. № 2. - 390 с.

11. **Давыдова А.И.** Специфика и проблемы применения норм об исковой давности к семейным правоотношениям // Юридический вестник молодых ученых. № 3. – М., 2016. – 17 с.
12. **Маслов С.С.** Всеобщий гражданский кодекс Австрии. – М.: Инфотропик Медиа, 2011. – 272 с.
13. **Новицкий И.Б.** Сделки. Исковая давность. – М.: Госюриздат, 1954. – 247 с.
14. **Пчелинцева Л.М.** Комментарий к Семейному кодексу РФ. – М.: Норма, 2006. – 810 с.
15. ՀՀ Սահմանադրական դատարանի 28.09.2021 թվականի ՍԴՈ-1611 որոշումը: Միասնական կայք 2021.10.04-2021.10.17: Պաշտոնական հրապարակման օրը 05.10.2021:
16. ՀՀ Սահմանադրական դատարանի 15.11.2019 թվականի ՍԴՈ-1488 որոշումը: ՀՀՊՏ 2019.11.27/83(1536) Հոդ.1064:
17. Թիվ ԵԿԴ/0881/02/12 քաղաքացիական գործով ՀՀ Վճռաբեկ դատարանի 28.11.2014 թվականի որոշումը: ՀՀՊՏ 2015.01.12/1(1090) Հոդ.8:
18. Թիվ ԵԱԲԴ/4524/02/15 քաղաքացիական գործով ՀՀ Վճռաբեկ դատարանի 04.06.2019 թվականի որոշումը: ՀՀՊՏ 2019.07.12/45(1498).1 Հոդ.603.10:
19. Определение Верховного Суда РФ от 20 января 2015 г. №5-КГ14-144 <https://www.garant.ru/products/ipo/prime/doc/70772980/> (18.04.2026).
20. *Shofman v. Russia* (Application no. 74826/01), <https://hudoc.echr.coe.int/eng?i=001-71303> (18.04.2026).
21. *Costello v. United States*, 365 U.S. 265 (1961) <https://supreme.justia.com/cases/federal/us/365/265/> (18.04.2026).

ПРИМЕНЕНИЕ ИСКОВОЙ ДАВНОСТИ К ТРЕБОВАНИЯМ, ВЫТЕКАЮЩИМ ИЗ СЕМЕЙНЫХ ПРАВООТНОШЕНИЙ

Аннотация

Настоящая научная статья посвящена исследованию проблем применения института исковой давности в семейных правоотношениях. В работе раскрываются сущность института исковой давности и его значение с точки зрения обеспечения стабильности гражданского оборота, правовой определенности и эффективной реализации судебной защиты. Анализируются нормы, регулирующие соотношение гражданского и семейного законодательства Республики Армения, с особым акцентом на содержание статьи 8 Семейного кодекса РА и возникающие в процессе ее применения правовые неопределенности. Также в статье рассматриваются правовые позиции Конституционного Суда и Кассационного суда РА по вопросам исковой давности.

В работе обосновывается точка зрения о целесообразности применения общих или специальных сроков исковой давности, установленных Гражданским кодексом РА, к отдельным имущественным требованиям, вытекающим из семейных правоотношений, в частности — требованиям о признании недействительными брачного договора и алиментного соглашения. Проводится сравнительно-правовой анализ с обращением к законодательному опыту ряда зарубежных государств. На основе изучения международной практики предлагаются законодательные изменения, направленные на уточнение применения исковой давности в семейных правоотношениях и обеспечение правовой определенности, в частности — установление трехлетнего срока исковой давности по требованиям о разделе общего совместного имущества бывших супругов.

Ключевые слова: исковая давность, срок исковой давности, судебная защита, семейные отношения, имущественные права, личные неимущественные права.

APPLICATION OF THE STATUTE OF LIMITATIONS TO CLAIMS ARISING FROM FAMILY LEGAL RELATIONS

Annotation

This academic article is devoted to the study of issues related to the application of the statute of limitations in family legal relations. The paper examines the essence of the statute of limitations and its significance in ensuring the stability of civil turnover, legal certainty, and the effective implementation of judicial protection. It analyzes the norms governing the relationship between the civil and family legislation of the Republic of Armenia, with particular attention to the content of Article 8 of the RA Family Code and the legal uncertainties arising in its application. The article also explores the legal positions of the Constitutional Court and the Court of Cassation of the Republic of Armenia regarding the statute of limitations.

The paper advances the view that it is appropriate to apply general or special limitation periods established by the RA Civil Code to certain property claims arising from family legal relations, particularly claims for declaring a marriage contract and an alimony agreement invalid. A comparative legal analysis is also conducted, referring to the legislative experience of several foreign countries. Based on the study of international practice, legislative amendments are proposed to clarify the application of the statute of limitations in family legal relations and to ensure legal certainty, in particular, the establishment of a three-year limitation period for claims concerning the division of jointly owned property of former spouses.

Keywords: statute of limitations, limitation period, judicial protection, family legal relations, property rights, personal non-property rights.

Հոդվածը հանձնված է խմբագրություն 20.04.2026 թ., տրվել է գրախոսության 22.04.2026 թ., ընդունվել է տպագրության 08.05.2026 թ.:



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԹՎԻ ԱՌՆՎԱԶՆ
ՄԵԿ ՀԻՆԳԵՐՈՐԴԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ
17-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ «Գ» ԿԵՏԻ, 27-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 2.1-ԻՆ ՄԱՍԻ, 52.1-ԻՆ ՀՈԴՎԱԾԻ
1-3-ՐԴ ՄԱՍԵՐԻ ԵՎ «ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՄԱՐՄՆԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ 36-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 9-ՐԴ ՄԱՍԻ՝
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

12 մարտի 2026 թ.

Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանը՝ կազմով.

նախագահող՝
դատավորներ՝

Արման Դիլանյանի,
Արտակ Զեյնալյանի,
Դավիթ Խաչատուրյանի,
Երվանդ Խունդկարյանի,
Հովակիմ Հովակիմյանի,
Էդգար Շաթիրյանի,
Սեդա Սաֆարյանի,
Արթուր Վաղարշյանի (զեկուցող),

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

դիմողի՝

Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի
առնվազն մեկ հինգերորդի (այսուհետ նաև՝ Դիմող),

ներկայացուցիչներ՝

Ազգային ժողովի պատգամավոր Արծվիկ Մինասյանի,
փաստաբան Արամ Վարդևանյանի,

պատասխանողի՝

Ազգային ժողովի (այսուհետ նաև՝ Պատասխանող),

ներկայացուցիչներ՝

Ազգային ժողովի աշխատակազմի իրավաբանական
վարչության պետ Մարի Ստեփանյանի և նույն վարչու-
թյան պետի տեղակալ Էլեն Մնացականյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետի, 169-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22 և 68-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդի դիմումի հիման վրա՝ «Էներգետիկայի մասին» օրենքի 17-րդ հոդվածի «գ» կետի, 27-րդ հոդվածի 2.1-ին մասի, 52.1-ին հոդվածի 1-3-րդ մասերի և «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 36-րդ հոդվածի 9-րդ մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Ուսումնասիրելով դիմումը և կից ներկայացված փաստաթղթերը, Պատասխանողի գրավոր բացատրությունը, ինչպես նաև գործում առկա մյուս փաստաթղթերը, վերլուծելով վիճարկվող և վերջիններիս հետ փոխկապակցված այլ օրինադրույթներ՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. Վարույթը Սահմանադրական դատարանում

1. Գործի քննության առիթն Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդի՝ 2025 թվականի հուլիսի 11-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Դիմողը Սահմանադրական դատարան ներկայացրած դիմումով խնդրել է. «(...) որոշել ՀՀ «Էներգետիկայի մասին» օրենքի (ՀՕ-148) 17-րդ հոդվածի 1-ին մասի գ) ենթակետի¹, 27-րդ հոդվածի 2.1-րդ և 2.2-րդ մասերի, 52-րդ հոդվածի, 52.1-րդ հոդվածի և ՀՀ «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 36-րդ հոդվածի 9-րդ մասի դրույթների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 3-րդ, 59-րդ, 60-րդ, 73-րդ, 75-րդ, 78-րդ և 79-րդ հոդվածներին համապատասխանության հարցը»:

2. Սահմանադրական դատարանի 2026 թվականի մարտի 12-ի ՍԴԱՈ-32 աշխատակարգային որոշմամբ «Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդի դիմումի հիման վրա՝ «Էներգետիկայի մասին» օրենքի 17-րդ հոդվածի «գ» կետի, 27-րդ հոդվածի 2.1-ին և 2.2-րդ մասերի, 52-րդ հոդվածի, 52.1-ին հոդվածի և «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 36-րդ հոդվածի 9-րդ մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը մասամբ՝ «Էներգետիկայի մասին» օրենքի 27-րդ հոդվածի 2.2-րդ մասի, 52-րդ հոդվածի, 52.1-ին հոդվածի 4-10-րդ մասերի մասով, գործի վարույթը կարճվել է:

3. «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը (այսուհետ նաև՝ Օրենք) Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2001 թվականի մարտի 7-ին, Հանրապետության նախագահի կողմից ստորագրվել՝ 2001 թվականի մարտի 21-ին և ուժի մեջ է մտել 2001 թվականի ապրիլի 1-ին:

Օրենքի՝ «Հանձնաժողովի իրավասությունները» վերտառությամբ 17-րդ հոդվածի «գ» կետով սահմանված է.

«Հանձնաժողովն իրավասու է՝
(...)

¹ Սույն հոդվածը մասերով համարակալված չէ, ուստի՝ վիճարկվող դրույթը խնդրո առարկա օրենքի 17-րդ հոդվածի «գ» կետն է:

գ) իր սահմանած կարգով էներգետիկայի բնագավառում իրականացնելու լիցենզավորում՝ տրամադրելու լիցենզիաներ, երկարաձգելու դրանց գործողության ժամկետները, վերաձևակերպելու, կասեցնելու և դադարեցնելու դրանց գործողությունը, ինչպես նաև սահմանելու լիցենզիաների պայմանները, վերահսկելու դրանց կատարումը և կիրառելու սույն օրենքով սահմանված պատասխանատվության միջոցները»:

Նշյալ դրույթը շարադրվել է նոր խմբագրությամբ 07.02.2018 թ. ՀՕ-100-Ն օրենքով, փոփոխվել՝ 18.11.2021 թ. ՀՕ-365-Ն օրենքով:

4. Օրենքի՝ «Լիցենզիա ունեցող անձի գործարքային իրավունքների սահմանափակումը» վերտառությամբ 27-րդ հոդվածի 2.1-ին մասով սահմանված է.

«2.1. Սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերում նշված գործարք իրականացնելու մտադրության դեպքում Հայաստանի Հանրապետության կառավարությունը գործարքի առարկա գույքի կամ դրա նկատմամբ իրավունքի ձեռքբերման նախապայմանության իրավունք ունի: Սույն մասով սահմանված նախապայմանության իրավունքի իրացման նպատակով լիցենզիա ունեցող անձը ծանուցում է Հայաստանի Հանրապետության կառավարությանը համապատասխան գործարք իրականացնելու մտադրության մասին: Հայաստանի Հանրապետության կառավարությունը կարող է օգտվել իր նախապայմանության իրավունքից նշված ծանուցումն ստանալուց հետո՝ եռամսյա ժամկետում՝ լիցենզիա ունեցող անձին ծանուցելով այդ մասին: Նախապայմանության իրավունքը իրացնելու կարգը սահմանվում է Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ»:

Խնդրո առարկա դրույթները հիշատակված հոդվածում լրացվել են 03.07.2025 թ. ՀՕ-196-Ն օրենքով, որն ունի եզրափակիչ մաս և անցումային դրույթներ²:

5. Օրենքի՝ «Սպառողների շահերի պաշտպանության նպատակով կանխարգելիչ միջոցառումների կիրառումը» վերտառությամբ 52.1-ին հոդվածի 1-3-րդ մասերով սահմանված է.

«1. Սույն օրենքի 42-րդ հոդվածի 3-րդ, 5-րդ կամ 6-րդ մասերով սահմանված արարքը կատարելու հիմքով վարույթ հարուցելու մասին որոշմամբ հանձնաժողովի նախագահը կարող է կիրառել կանխարգելիչ միջոցառումներ: Կանխարգելիչ միջոցառումների կիրառման դեպքում, ի թիվս այլնի, հաշվի են առնվում նաև լիցենզավորված անձի կողմից նախկինում կատարված խախտումների քանակը, հաճախականությունը կամ բնույթը:

2. Սույն հոդվածով սահմանված կարգով հանձնաժողովի նախագահը իրավասու է կիրառելու հետևյալ կանխարգելիչ միջոցառումներից մեկը կամ մի քանիսը միասին.

1) սահմանել առերևույթ խախտումների կամ դրանց հետևանքների վերացման ծրագիր և լիցենզավորված անձից պահանջել իրականացնել դրանով սահմանված միջոցները.

2) հրավիրել լիցենզավորված անձի կառավարման մարմինների նիստեր (ժողովներ)՝ հանձնաժողովի նախագահի սահմանած օրակարգով.

3) պահանջել հանձնաժողովի նախագահի սահմանած ժամկետում կատարել լիցենզավորված անձի կանոնադրության փոփոխություն և դիմել պետական ռեգիստր կանոնադրության փոփոխությունների պետական գրանցումն ապահովելու նպատակով.

² ՀՕ-196-Ն օրենքի՝ «Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ» վերտառությամբ 4-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն օրենքով սահմանված կարգավորումները տարածվում են նաև մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը թույլ տրված խախտումների վրա:

4) պահանջել հանձնաժողովի նախագահի սահմանած ժամկետում կատարել լիցենզավորված անձի կառավարման մարմինների անդամի կամ անդամների փոփոխություն.

5) նշանակել լիցենզավորված անձի ժամանակավոր կառավարիչ:

3. Լիցենզավորված անձի ժամանակավոր կառավարչի նշանակմամբ և նրա գործունեության ամբողջ ընթացքում նրան են անցնում լիցենզավորված անձի գործադիր մարմնի բոլոր լիազորությունները՝ բացառելով ժամանակավոր կառավարիչ նշանակելու մասին որոշմամբ սահմանված ժամանակահատվածում լիցենզավորված անձի գործադիր մարմնի լիցենզավորված անձի գործադիր կառավարումն իրականացնելը: Լիցենզավորված անձի ժամանակավոր կառավարչի գործունեության ժամանակահատվածում լիցենզավորված անձի կառավարման այլ մարմիններն իրենց իրավասությունները (լիազորությունները) իրականացնում են ժամանակավոր կառավարչի համաձայնությամբ»:

Սույն օրենքը լրացվել է 52.1-ին հոդվածով՝ 03.07.2025 թ. ՀՕ-196-Ն օրենքով:

6. «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքն Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2003 թվականի դեկտեմբերի 25-ին, Հանրապետության նախագահի կողմից ստորագրվել՝ 2004 թվականի հունվարի 17-ին և ուժի մեջ է մտել 2004 թվականի փետրվարի 14-ին:

Նշված օրենքի՝ «Հանրային ծառայությունների ոլորտում հնարավոր իրավախախտման վերաբերյալ հաղորդման կամ դիմում-բողոքի քննարկման կարգը» վերտառությամբ 36-րդ հոդվածի 9-րդ մասով սահմանված է.

«9. Կառավարության լիազոր մարմնի հաղորդման առկայության դեպքում, որով առերևույթ հիմնավորվում է, որ վրանգվել է կամ կարող է վրանգվել էներգետիկայի բնագավառի բաղկացուցիչ համակարգի անվտանգությունը կամ հուսալիությունը, կամ հավանական խախտումը հանգեցրել է կամ կարող է հանգեցնել մի խումբ սպառողների իրավունքների կամ օրինական շահերի խախտման կամ լիցենզիայի պայմանների կոպիտ խախտման, հանձնաժողովի նախագահի նախաձեռնությամբ անհապաղ, բայց ոչ ուշ, քան հաղորդումը ստանալուց հետո՝ հինգօրյա ժամկետում, հարուցվում է վարչական վարույթ: Վարչական վարույթ հարուցելու մասին որոշմամբ կարող են կիրառվել «Էներգետիկայի մասին» օրենքի 52.1-ին հոդվածով սահմանված կանխարգելիչ միջոցառումները: Սույն մասով սահմանված դեպքում չեն կիրառվում սույն հոդվածով նախատեսված այլ կարգավորումները: Հանձնաժողովի նախագահի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից ենթակա է անհապաղ կատարման, և դրա բողոքարկումը չի կասեցնում դրա գործողությունը կամ կատարումը»:

Նշված օրենքի 36-րդ հոդվածը լրացվել է 9-րդ մասով՝ 03.07.2025 թ. ՀՕ-195-Ն օրենքով, որն ունի անցումային դրույթ³:

2. Դիմողի դիրքորոշումները

7. Դիմողը՝ Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդը, վկայակոչելով «Էներգետիկայի մասին» օրենքի 17-րդ հոդվածի «գ» կետը, գտնում է, որ Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) ստացել է լիազորություն՝ ուղղակիորեն դադարեցնելու լիցենզիան՝

³ ՀՕ-195-Ն օրենքի՝ «Եզրափակիչ մաս և անցումային դրույթ» վերտառությամբ 2-րդ մասով սահմանված է. «Սույն օրենքով սահմանված կարգավորումները տարածվում են նաև մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը թույլ տրված խախտումների վրա»:

առանց դատարան դիմելու: Ըստ Դիմողի՝ դատական կարգի նման շրջանցումը՝ տվյալ պարագայում Սահմանադրության 60-րդ հոդվածի 4-րդ մասով ամրագրված՝ դատական կարգով սեփականությունից զրկելու պահանջի խախտում է:

8. Դիմողի համոզմամբ՝ առանց լիցենզիայի տնտեսվարող սուբյեկտը, ձևական առումով պահպանելով իր գույքը, ընդհանրապես չի կարող այն օգտագործել իր ֆունկցիոնալ նպատակին համապատասխան, ուստի՝ տվյալ պարագայում գույքի օգտագործման իրավագործության վերացումը հավասարազոր է սեփականությունից զրկելուն: Դիմողը պնդում է, որ էներգետիկայի ոլորտում գործող ընկերությունների լիցենզիաները ևս պետք է դիտարկվեն որպես սեփականության իրավունքի օբյեկտ, իսկ քանի որ լիցենզիայից զրկումը հանդիսանում է սեփականությունից զրկում, ապա Հանձնաժողովին առանց դատարան դիմելու լիցենզիայի գործողությունը դադարեցնելու լիազորության ընձեռումը հակասում է Սահմանադրության 60-րդ հոդվածի 4-րդ մասին, և բացի դրանից, Հանձնաժողովի կողմից լիցենզիայի դադարեցման դեպքում չկա արդյունավետ դատական վերահսկողության կառուցակարգ:

9. Անդրադառնալով Օրենքի 27-րդ հոդվածի 2.1-ին և 2.2-րդ մասերի սահմանադրականության հարցին՝ Դիմողը գտնում է, որ էներգետիկայի ոլորտի տնտեսվարող սուբյեկտի բաժնեմասերի և ակտիվների նկատմամբ Կառավարության ընդհանուր նախապատվության իրավունքի դրույթն անհամատեղելի է Սահմանադրության հետ, քանի որ անհամաչափորեն միջամտում է տնտեսվարող սուբյեկտների տնտեսական գործունեության ազատությանը և սեփականության իրավունքին: Ըստ Դիմողի՝ Կառավարության օգտին նախապատվության իրավունքի սահմանումն անհրաժեշտ միջոց չէ, քանի որ նշյալ օրենքի 27-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերն արդեն իսկ նախատեսում են ոլորտի համար պատասխանատու Հանձնաժողովի իրավասությունը՝ նախապես տալու իր համաձայնությունը նախատեսվող գործարքներին՝ Հանձնաժողովի կողմից հաստատված էլեկտրաէներգետիկական շուկայի առևտրային և ցանցային կանոնների համաձայն: Կառավարության նախապատվության իրավունքը համարժեք չէ նաև տնտեսվարող սուբյեկտների տնտեսական գործունեության ազատությանը և սեփականության իրավունքին, քանի որ այն խաթարում է վստահությունը սեփականության և ներդրումների պաշտպանության նկատմամբ:

10. Դիմողը գտնում է, որ առանց նպատակի հստակության՝ Կառավարության օգտին նախապատվության իրավունքի սահմանումը՝ որպես միջոց, պիտանելիության խնդիրներ ունի: Այն նաև «(...) անհրաժեշտ միջոց չէ, քանի որ այդ օրենքի 27-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը արդեն իսկ նախատեսում են ոլորտի համար պատասխանատու հանձնաժողովի իրավասությունը՝ նախապես տալու իր համաձայնությունը նախատեսվող գործարքներին (...)»:

Դիմողի գնահատմամբ՝ «Հանձնաժողովի կողմից նախապես համաձայնություն տալու գործիքն ավելի մեղմ և միաժամանակ արդյունավետ գործիք է, (...) Կառավարության նախապատվության իրավունքը համարժեք չէ նաև տնտեսվարող սուբյեկտների տնտեսական գործունեության ազատությանը և սեփականության իրավունքին, քանի որ խաթարում է վստահությունը սեփականության և ներդրումների պաշտպանության նկատմամբ: Վնասի աստիճանը անհամաչափ է միջամտության օգուտին, ինչը նշանակում է, որ կարգավորումը անհամաչափ է նաև Սահմանադրության 78-րդ հոդվածի 2-րդ նախադասության իմաստով»:

11. Դիմողը գտնում է, որ **Օրենքի 52.1-ին հոդվածով** նախատեսված կանխարգելիչ միջոցառումների կիրառումը վարչական վարույթի փուլում, երբ դեռևս չկա իրավական

ուժ ունեցող ակտ, իսկ անձի պատասխանատվությունն իրավական գնահատականի չի ենթարկվել, անհամաչափ միջամտություն է ինչպես սեփականության իրավունքին, այնպես էլ Սահմանադրության 59-րդ հոդվածով երաշխավորված տնտեսական գործունեության ազատությանը:

12. Ըստ Դիմողի՝ Օրենքի 52.1-ին հոդվածով և «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 36-րդ հոդվածի 9-րդ մասով ներդրված կանխարգելիչ միջոցառումների կիրառումը տեղի է ունենում այնպիսի պայմաններում, երբ ընդհանրապես տնտեսվարող սուբյեկտի մեղավորությունը որևէ կերպ չի փաստվել: Ըստ Դիմողի՝ Սահմանադրության 78-րդ հոդվածով սահմանված համաչափության սկզբունքը պահանջում է, որ հիմնական իրավունքի սահմանափակման համար ընտրված միջոցը, պիտանի լինելուց զատ, լինի անհրաժեշտ, այսինքն՝ չկիրառվի ծայրահեղ միջոցը: «Մինչդեռ «Էներգետիկայի մասին» օրենքի 52.1-րդ հոդվածի 2-րդ մասը հանձնաժողովի նախագահին տալիս է հայեցողական լիազորություն՝ ընտրելու սահմանված հինգ միջոցներից մեկը կամ մի քանիսը: Ակնհայտ է, որ այդ միջոցներից առաջինը (սահմանել առերևույթ խախտումների կամ դրանց հետևանքների վերացման ծրագիր և լիցենզավորված անձից պահանջել դրանց իրականացումը) Սահմանադրության 59-րդ և 60-րդ հոդվածներին միջամտության ինտենսիվությամբ որևէ կերպ համեմատելի չէ հանձնաժողովի նախագահի՝ ժամանակավոր կառավարիչ նշանակելու կամ լիցենզավորված անձի կանոնադրությունը փոփոխելու պահանջի հետ: Այդուհանդերձ, վիճարկվող օրենքը, առանց ընտրված միջոցների անհրաժեշտության չափանիշի հաշվառման, այդ միջոցներից որևէ մեկի կամ բոլորի միաժամանակ կիրառումը վերապահում է հանձնաժողովի նախագահի հայեցողությանը»:

13. Դիմողը, վկայակոչելով **Օրենքի 52.1-ին հոդվածի 1-ին մասի 2-րդ նախադասությունը**, ինչպես նաև 03.07.2025 թ. ՀՕ-196-Ն օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասը, գտնում է՝ քանի որ մինչ Օրենքի «(...) վերջին փոփոխությունը ընդհանրապես գոյություն չի ունեցել կանխարգելիչ միջոցառումների իրականացման ինստիտուտ, ստացվում է, որ Էներգետիկայի մասին օրենքը ուղղակիորեն հետադարձ ուժ է տվել անձի իրավական վիճակը վատթարացնող դրույթին, քանի որ **օրենքի ընդունումից առաջ ավարտված փաստակազմի վրա** (նախկինում կատարված խախտումների քանակը, հաճախականությունը կամ բնույթը) տարածվում են **նոր իրավական հետևանքներ** (հիմք են կանխարգելիչ միջոցառումների իրականացման համար): Ուստի տվյալ պարագայում առկա է օրենքի իրական (իսկական) հետադարձ ուժի կիրառում, ինչը առանց որևէ վերապահման արգելված է Սահմանադրության 73-րդ հոդվածի 1-ին մասով»:

14. Անդրադառնալով «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 36-րդ հոդվածի 9-րդ մասի սահմանադրականության հարցին՝ Դիմողը փաստում է, որ իշխանությունների բաժանման սկզբունքի և ինքնավար մարմինների անկախության տեսանկյունից խնդրահարույց է նշյալ նորմով սահմանված՝ Կառավարության լիազոր մարմնի հաղորդման հիման վրա ինքնաշխատ կերպով վարչական վարույթի հարուցումը: Միևնույն ժամանակ, Դիմողը գտնում է, որ եթե ընդունելի կարելի է համարել նշյալ նորմի ուժով Կառավարության լիազոր մարմնի կողմից Հանձնաժողովին հաղորդում ներկայացնելու իրավունքը, «ապա այդ դրույթով նախատեսված վարչական վարույթ հարուցելու պարտականությունը Հանձնաժողովի նախագահի կողմից Հանձնաժողովի ինքնավարության և անկախության խախտում է»:

15. Ըստ Դիմողի՝ Հանձնաժողովի նախագահի կողմից միանձնյա կարգով կանխարգելիչ միջոցառումներ կիրառելու մասին որոշում կայացնելու լիազորությունը հակասում է Հանձնաժողովի կոլեգիալ բնույթին: Դիմողի համոզմամբ՝ Հանձնաժողովի նախագահի լիազորություններն ունեն բացառապես ներքին կազմակերպական և ներկայացուցչական բնույթ և չեն կարող ունենալ որևէ արտաքին ներգործություն, ուստի՝ տվյալ պարագայում հակասում են Սահմանադրության 122-րդ հոդվածին:

16. Դիմողը կարծում է, որ հաղորդում ներկայացնելիս Կառավարության լիազոր մարմնի վրա դրված է միայն «առերևույթ հիմնավորման» պարտականությունն առ այն, որ «կարող է վտանգվել Էներգետիկայի բնագավառի բաղկացուցիչ համակարգի անվտանգությունը կամ հուսալիությունը», կամ որ «**հավանական խախտումը հանգեցրել է կամ կարող է հանգեցնել մի խումբ սպառողների իրավունքների կամ օրինական շահերի խախտման կամ լիցենզիայի պայմանների կոպիտ խախտման**»: Դիմողը գտնում է, որ այդ ձևակերպումներն ակնհայտորեն հակասում են որոշակիության սահմանադրական սկզբունքին, որովհետև որևէ կերպ հասկանալի չէ, թե ինչ է նշանակում ընդհանրապես «առերևույթ հիմնավորում» եզրույթը: Նույն անորոշությունն է նաև, երբ վիճարկվող դրույթում խոսվում է այն մասին, որ «**հավանական խախտումը հանգեցրել է ... մի խումբ սպառողների իրավունքների կամ օրինական շահերի խախտման կամ լիցենզիայի պայմանների կոպիտ խախտման**»:

17. Դիմողն ամփոփելով եզրակացնում է, որ որևէ հիմնական իրավունքի կենսագործումը ենթադրում է նաև արդյունավետ իրացման խոչընդոտների, սահմանափակումների դեպքում դրանց հաղթահարման, վերացման նպատակով դատական վերահսկողության իրավունքի իրացման հնարավորության նախատեսում: Անձը չպետք է զրկվի իր հիմնական իրավունքների սահմանափակման իրավաչափությունը պատշաճ դատական վերահսկողության առարկա դարձնելու, անկախ և անաչառ մարմնի՝ դատարանի կողմից իր գործի քննության իրավունքից:

3. Պատասխանողի դիրքորոշումը

18. Պատասխանողը՝ Ազգային ժողովը, վերլուծելով «**Լիցենզավորման մասին**» օրենքով սահմանված իրավակարգավորումները, եզրակացնում է, որ լիցենզիայի գործողության դադարեցումը կատարվում է լիցենզավորող մարմնի դիմումի հիման վրա դատական կարգով, եթե օրենքով սահմանված չեն բացառություններ:

19. Պատասխանողն Օրենքի 17-րդ հոդվածի «գ» կետով սահմանված համապատասխան իրավակարգավորումները դիտարկում է որպես այդպիսի բացառություն: Էներգետիկայի ոլորտում լիցենզիայի դադարեցման՝ Օրենքով նախատեսված կարգը համարելով միջամտություն էներգետիկայի բնագավառում գործող անձանց իրավունքին/ազատությանը՝ Պատասխանողը գնահատում է այն օրենքով նախատեսված, իրավաչափ նպատակներ հետապնդող, բավարար և անհրաժեշտ, իսկ Օրենքի 17-րդ հոդվածի «գ» կետը՝ Սահմանադրությանը համապատասխանող:

20. Ըստ Պատասխանողի՝ Օրենքի 27-րդ հոդվածի 2.1-ին մասով սահմանված և Դիմողի կողմից վիճարկվող կարգավորումն առ այն, որ Կառավարությունն ունի գործարքի առարկա գույքի կամ դրա նկատմամբ իրավունքի ձեռքբերման նախապատվության իրավունք, պայմանավորված է Էներգետիկայի՝ պետության համար առանձնակի կարևորագույն ոլորտ լինելու հանգամանքից, բխում է հանրային անվտանգության, ազգային անվտանգության, էլեկտրաէներգիայի անխափան մատակարարման անվտան-

գույքան, սպառողների իրավունքների պաշտպանության, անձի կյանքի և անվտանգության ապահովման նպատակներից, որոնց իրականացման պարտավորությունը կրում է պետությունը: Հետևաբար՝ Պատասխանողը Կառավարության՝ գնելու նախապատվության իրավունքը՝ որպես պետության միջամտություն, գնահատում է որպես անհրաժեշտ ու բավարար միջոց վերոնշյալ հետապնդվող իրավաչափ նպատակներին հասնելու համար: Պատասխանողը եզրահանգում է, որ իրավաչափ նպատակի ապահովմանն ուղղված վիճարկվող դրույթներով սահմանված պետության միջամտությունը սահմանադրականության տեսանկյունից խնդրահարույց չէ:

21. Պատասխանողը, անդրադառնալով **Օրենքի 52.1-ին հոդվածի 1-ին մասի** սահմանադրականության հարցին, վկայակոչելով Ազգային ժողովի կողմից 2025 թվականի հուլիսի 3-ին ընդունված ««Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» օրենքի 4-րդ հոդվածը, պնդում է, որ անհրաժեշտ է տարբերակել վատթարացնող նորմը և որոշակի դեպքի կապակցությամբ իրավակարգավորման գնահատողական պայմանները կամ չափորոշիչները: Պատասխանողի համոզմամբ՝ վիճարկվող դրույթով նախատեսված կանխարգելիչ միջոցների վերաբերյալ իրավակարգավորումները ոչ թե վատթարացնող, այլ ընդամենը որոշակի չափորոշիչներ նախատեսող բնույթ են կրում: Այս համատեքստում նշյալ իրավակարգավորումը չի հանդիսանում անձի վիճակը վատթարացնող: Նախկինում անձի կողմից կատարված խախտումներն արդեն իսկ ազդակ են տվյալ տնտեսվարող սուբյեկտի ոչ բարեխիղճ գործունեության վերաբերյալ, ուստի՝ անհրաժեշտ են օրենսդրական հակակշռող միջոցառումներ՝ ուղղված դրանք կանխելուն, խափանելուն և նվազեցնելուն: Այսինքն՝ նախկին արարքի համար չի նախատեսվում պատասխանատվություն (պատժելի չէ), այն զուտ հաշվի է առնվում որպես բնութագրող հատկանիշ կամ պայման՝ անձի կողմից նոր խախտման համար պատասխանատվություն սահմանելիս: Ուստի՝ ըստ Պատասխանողի՝ օրենսդրի կողմից՝ լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնելու համար նոր իրավակարգավորումներով առաջադրված նոր պայմաններն ու պահանջներն առ այն, որ նախկինում անձի դրսևորած ոչ պատշաճ արարքը հաշվի է առնվելու, չի կարող դիտարկվել որպես վատթարացնող նորմ:

22. Վկայակոչելով «**Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 36-րդ հոդվածի 9-րդ մասը**, ինչպես նաև «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 41-րդ հոդվածը՝ Պատասխանողը գտնում է, որ նշյալ առաջին օրենքը սահմանում է ինչպես Հանձնաժողովի նախաձեռնությամբ հարուցված վարչական վարույթի, այնպես էլ Հանձնաժողովի նախագահի նախաձեռնությամբ հարուցված վարչական վարույթի դեպքերը, իսկ վարչական վարույթի իրականացումը վերապահված է Հանձնաժողովին, հետևաբար՝ համապատասխան որոշումները վարչական վարույթի վերջնարդյունքում ընդունվում են Հանձնաժողովի կողմից: Ուստի՝ Հանձնաժողովի նախագահի նախաձեռնությամբ վարչական վարույթի հարուցումը չի կարող մեկնաբանվել որպես Հանձնաժողովի գործունեության կոլեգիալ բնույթի խախտում:

23. Անդրադառնալով «**Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 36-րդ հոդվածի 9-րդ մասով** նախատեսված ձևակերպումներին՝ Պատասխանողը, վկայակոչելով Սահմանադրության 79-րդ հոդվածը, ինչպես նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ նաև՝ ՄԻԵԴ) վերաբերելի իրավական դիրքորոշումները, հարկ է համարում ընդգծել այն հանգամանքը, որ ձևակերպումներում առկա «անորոշությունը» կոչված է ապահովելու դրույթների ճկունու-

թյունը՝ այդպիսով ապահովելով իրավակարգավորման համապատասխան մեկնաբանություն և կիրառում:

24. Օրենքի 52.1-ին հոդվածի 2-րդ մասով նախատեսված Հանձնաժողովի նախագահի՝ կանխարգելիչ միջոցառումներից մեկը կամ մի քանիսը կիրառելու իրավասության վերաբերյալ Պատասխանողը փաստում է, որ նշված կանխարգելիչ միջոցառումները չունեն կանխակալ կամ կողմնակալ բնույթ, այլ վարույթի ընթացքում որոշակի հանգամանքները կանխարգելող գործողություններ են, որոնց կիրառման անհրաժեշտությունը որոշվում է՝ յուրաքանչյուր կոնկրետ դեպքի առանձնահատկությունները հաշվի առնելով: Ըստ Պատասխանողի՝ նման պայմաններում կանխարգելիչ միջոցառումները չեն կարող մեկնաբանվել որպես անձի պատասխանատվության իրավական գնահատականի վրա ազդեցություն ունեցող միջոցառումներ, քանի որ դրանք որոշակի արարքներ կատարելու հիմքով հարուցված վարույթի շրջանակներում սպառողների շահերի պաշտպանության նպատակով կատարվող ընթացիկ գործողություններ են՝ տնտեսվարող սուբյեկտի և սպառողների շահերի միջև արդարացի հավասարակշռություն ապահովելու մտադրությամբ:

25. Պատասխանողի համոզմամբ՝ ««Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքում լրացում կատարելու մասին» և ««Էներգետիկայի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» օրենքների նախագծերով հիմնավորվել է ակնկալվող փոփոխությունների անհրաժեշտությունը, որտեղ նշվել են նաև մինչ փոփոխությունը եղած կարգավիճակի և կարգավորման ենթակա խնդիրների մասին», իսկ համապատասխան օրենսդրական փոփոխության և նոր դրույթների նախատեսման անհրաժեշտությունը պայմանավորված է եղել էներգետիկայի բնագավառում գործունեության կարգավորման սահմանմամբ:

26. Պատասխանողը, վկայակոչելով Սահմանադրական դատարանի՝ անձի սեփականության իրավունքի սահմանափակման իրավաչափության վերաբերյալ դիրքորոշումները, անհրաժեշտ է համարել տարանջատել անձի սեփականության իրավունքը՝ գերակա հանրային շահով պայմանավորված դադարեցնելու, և որոշակի պայմանների և պահանջների պահպանման նախապայմանով տրված լիցենզիայի՝ որպես սեփականության իրավունքի՝ իբրև պատասխանատվության միջոց, դադարեցումը: Ըստ Պատասխանողի՝ նշված երկու իրավահարաբերությունների տարանջատման արդյունքում պարզ է դառնում, որ դրանց կարգավորումները չեն կարող նույնական լինել, կամ այդ հարաբերությունները չեն կարող նույնացվել: Պատասխանողը պնդում է, որ սեփականության իրավունքը սահմանափակվում է միայն օրենքով՝ հանրության շահերի կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով, և այն ունի կանխարգելիչ բնույթ՝ ապահովելով արդարացի հավասարակշռություն սահմանադրական իրավունքների միջև:

27. Պատասխանողի համոզմամբ՝ միջազգային փորձը ևս ցույց է տալիս, որ պետության միջամտությունն օրինաչափ է հասարակության անվտանգության, ազգային անվտանգության, էներգիայի մատակարարման անխափան աշխատանքի ապահովման, էներգետիկ շուկայի անվտանգության, սպառողների իրավունքների կամ օրինական շահերի պաշտպանության համատեքստում:

28. Տնտեսական գործունեության առանձին տեսակների համար պետությունը, ըստ Պատասխանողի, ելնելով առավել վտանգի սպառնալիք պարունակող գործունեության տեսակներով զբաղվողների նկատմամբ հսկողություն իրականացնելու նպատակից,

սահմանել է տվյալ գործունեության տեսակով զբաղվելու իրավունքը հաստատող պաշտոնական թույլտվություն: Այլ կերպ՝ պետության կողմից որոշակի տեսակի գործունեության լիցենզավորումն ինքնանպատակ չէ, այլ իրականացվում է ի պաշտպանություն հանրային շահերի, որոնք կարող են վտանգվել տնտեսվարողների գործունեության արդյունքում:

Պատասխանողը նշում է, որ քննարկվող դեպքում կարգավորումները սահմանված են օրենքով, վիճարկվող կարգավորումը բավարար չափով որոշակի է, և համապատասխան իրավահարաբերության սուբյեկտը լիարժեք կարող է կանխատեսել վիճարկվող կարգավորման պահանջները չկատարելու իրավական հետևանքները, ըմբռնել իրենից ակնկալվող վարքագծի բնույթը և, ըստ այդմ՝ իր վարքագիծը համապատասխանեցնել օրենսդրական գործող (նոր) պահանջներին: Լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնելիս լիցենզավորված անձինք պարտավոր են պահպանել տվյալ գործունեության իրականացման համար նախատեսված պարտադիր պայմանները և պահանջները:

29. Պատասխանողը հարկ է համարում նշել, որ առավել կոշտ կարգավորումները բխում են էներգետիկայի՝ պետության համար առանձնակի կարևորագույն ոլորտ լինելու հանգամանքից, ինչպես նաև հանրային անվտանգության ապահովման, ազգային անվտանգության ապահովման, էլեկտրաէներգիայի անխափան մատակարարման անվտանգության ապահովման, սպառողների իրավունքների պաշտպանության, սպառողների անվտանգության ապահովման, անձի կյանքի և անվտանգության երաշխիքներից:

30. Նշվածի տրամաբանությամբ անդրադառնալով լիցենզավորված գործունեության իրականացման համար անհրաժեշտ հիմնական գույքի կամ դրա նկատմամբ իրավունքի օտարման դեպքում Կառավարությանը նախապատվության իրավունք վերապահելու հարցին՝ Պատասխանողը գտնում է, որ դա բխում է այն իրավաչափ նպատակից, որի պաշտպանությունը գտնվում է պետության ներքո, և դրանով պայմանավորված՝ պետության միջամտությունը՝ նախապատվության իրավունքի դրսևորմամբ, իրավաչափ է: Հետևաբար՝ «(...) իրավաչափ նպատակի ապահովման նպատակով քննարկվող նորմերով սահմանված պետության միջամտությունը սահմանադրականության տեսանկյունից խնդրահարույց չէ»:

4. Սույն գործով պարզման ենթակա հանգամանքները

31. Սույն գործով վիճարկվող դրույթների սահմանադրականությունը գնահատելու նպատակով Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ, մասնավորապես, հետևյալ հարցադրումներին.

1) արդյո՞ք Օրենքի 17-րդ հոդվածի «գ» կետն այնքանով, որքանով Հանձնաժողովը, իր սահմանած կարգով էներգետիկայի բնագավառում լիցենզավորում իրականացնելով, կարող է դադարեցնել լիցենզիաների գործողությունը, ինչպես նաև Օրենքի 27-րդ հոդվածի 2.1-ին մասն այնքանով, որքանով նախատեսվում է Հայաստանի Հանրապետության կառավարության գործարքի առարկա գույքի կամ դրա նկատմամբ իրավունքի ձեռքբերման նախապատվության իրավունքը, համահունչ են Սահմանադրության 59 և 60-րդ հոդվածներով ամրագրված կարգավորումներին,

2) արդյո՞ք Օրենքի 52.1-ին հոդվածի 1-ին մասի առաջին նախադասությամբ և 2-րդ մասով սահմանված կանխարգելիչ միջոցառումների շրջանակը և դրանց կիրառման

կարգի վերաբերյալ իրավակարգավորումները համապատասխանում են Սահմանադրության 59 և 60-րդ հոդվածներով ամրագրված, համապատասխանաբար՝ տնտեսական գործունեության ազատության և սեփականության իրավունքներին, ինչպես նաև մրցակցության սահմանափակման սահմանադրական չափանիշներին,

3) արդյո՞ք Օրենքի 52.1-ին հոդվածի 1-ին մասի երկրորդ նախադասությունն այնքանով, որքանով կանխարգելիչ միջոցառումների կիրառման դեպքում հաշվի են առնվում նաև լիցենզավորված անձի կողմից նախկինում կատարված խախտումների քանակը, հաճախականությունը կամ բնույթը, համապատասխանում է Սահմանադրության 73-րդ հոդվածի 1-ին մասով ամրագրված՝ անձի իրավական վիճակը վարթարացնող օրենքների և այլ իրավական ակտերի հետադարձ ուժի արգելքի սկզբունքին:

4) արդյո՞ք Օրենքի 52.1-ին հոդվածի 3-րդ մասով նախատեսված իրավակարգավորման պայմաններում՝ կանխարգելիչ միջոցառման՝ լիցենզավորված անձի ժամանակավոր կառավարիչ նշանակելու պարագայում երաշխավորվում է շահագրգիռ անձի՝ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասով ամրագրված արդյունավետ դատական պաշտպանության իրավունքը,

5) արդյո՞ք «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 36-րդ հոդվածի 9-րդ մասը, ինչպես նաև Օրենքի 52.1-ին հոդվածի 1-ին մասն այնքանով, որքանով նախատեսում են Հանձնաժողովի նախագահի իրավասությունը՝ միանձնյա հարուցելու վարչական վարույթ և կիրառելու կանխարգելիչ միջոցառումներ, համահունչ են Սահմանադրության 122-րդ հոդվածին:

5. Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները

5.1. Էներգետիկայի բնագավառի առանձնահատկությունների և իրավական հատուկ կարգավորման անհրաժեշտության վերաբերյալ

32. Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում նախ բացահայտել էներգետիկ համակարգի առանձնահատկությունները, որոնք նախորդում ու պայմանավորում են էներգետիկայի ոլորտի իրավական կարգավորման յուրահատկությունները, համապատասխան իրավական ինստիտուտների առանձնահատուկ բովանդակությունը, որոնք ելակետային և որոշիչ նշանակություն ունեն սույն սահմանադրաիրավական վեճի լուծման համար:

33. Էներգետիկայի բնագավառը ժամանակակից պետության տնտեսական և հանրային կյանքի հիմքային ենթակառուցվածքային համակարգերից է, որի իրավական կարգավորումը պայմանավորված է ոչ միայն տնտեսական շրջանառության տրամաբանությամբ, այլև հանրային անվտանգության, սոցիալական արդարության, շրջակա միջավայրի պաշտպանության և պետական ինքնիշխանության ապահովման առաջնահերթություններով: Էներգետիկ հարաբերությունների բարդությունն ու բազմաշերտությունը, էներգետիկ համակարգի որոշ ենթակառուցվածքների **բնական մենաշնորհային բնութագրերը** պայմանավորում են դրանց նկատմամբ հատուկ իրավական ռեժիմի կիրառումը, ինչի հետևանքով այդ հարաբերությունների կարգավորումը տարբերվում է քաղաքացիաիրավական ընդհանուր կարգավորումից մի շարք առումներով՝ սակագնային կարգավորմամբ, սպառողների պարտադիր սպասարկման պահանջներով, բնական մենաշնորհները կրող սուբյեկտների նկատմամբ հատուկ վերահսկողությամբ և այլն:

34. Էներգամատակարարումը դիտարկվում է որպես հանրային նշանակության ծառայություն (*public utility*): Այն անմիջականորեն առնչվում է կյանքի, առողջության, կրթության, արդյունաբերության և ազգային անվտանգության ապահովմանը, հետևաբար՝ էներգետիկ հասանելիությունն ունի սոցիալական իրավունքների իրականացման բաղադրիչ, ինչը ենթադրում է ծառայության անընդհատություն (*continuity principle*), համընդհանուր հասանելիություն (*universal service obligation*), սակագների ձևավորման տնտեսական և սոցիալական գործոնների հավասարակշռում:

35. Էներգետիկ օբյեկտներն ունեն բարձր տեխնիկական ռիսկայնություն: Վթարները կարող են առաջացնել ոչ միայն գույքային, այլև լայնածավալ բնապահպանական և հումանիտար հետևանքներ, ուստի՝ դրանց իրավական կարգավորումը պետք է ներառի լիցենզավորման խիստ ընթացակարգեր, տեխնիկական և անվտանգության հստակ ստանդարտներ, պետական վերահսկողության մշտական կառուցակարգեր, հատուկ պատասխանատվության ռեժիմ:

36. Էներգետիկ ոլորտը բնութագրվում է հանրային և մասնավոր շահերի ինտենսիվ հատմամբ: Մի կողմից՝ ներդրողները ձգտում են շահութաբերության և ներդրումների վերադարձելիության, մյուս կողմից՝ պետությունը պարտավոր է երաշխավորել հանրային շահի պաշտպանությունը: Այս հակասությունը հանգեցնում է կարգավորվող շուկայի մոդելի ձևավորմանը, որտեղ գործում են մասնավոր սուբյեկտներ, սակայն նրանց գործունեությունը ենթարկվում է պետական վերահսկողության, իսկ պայմանագրային ազատությունը սահմանափակվում է հանրային շահերի նկատառումներով:

37. Հայաստանի Հանրապետությունը որդեգրել է կայուն տնտեսական զարգացման քաղաքականություն, որը, ի թիվս այլնի, ենթադրում է նաև տնտեսության համընթաց զարգացում, և այս համատեքստում էներգետիկան՝ որպես առանցքային ոլորտ, պետք է ապահովի պետության այնպիսի առաջընթաց, որը բնապահպանական խնդիրների ներդաշնակեցման և հավասարակշռման միջոցով նախադրյալներ կստեղծի ապագա սերունդների կայուն զարգացման համար:

38. Էներգետիկ համակարգն իր համակողմանի կարևորության և, դրանով պայմանավորված՝ գերակայության պատճառով ազգային ռազմավարության ու անվտանգության համակարգի հիմնարար բաղադրատարր է: Ազգային անվտանգությունը, իր հերթին, ամբողջությամբ և դրա առանձին տարրերը՝ տնտեսական, արտաքին տնտեսական, ֆինանսական, սոցիալական, էկոլոգիական, պաշտպանական և այլն, իրենց ապահովման մակարդակով էականորեն կախված են էներգետիկայի վիճակից, դրա ապահովման պահանջների իրացվածության աստիճանից և զարգացման ներուժից: Հայաստանի Հանրապետության պայմաններում էներգետիկ անվտանգությունը, հատկապես, կարևորություն է ձեռք բերում էներգետիկ ռեսուրսների ներմուծումից առավել կախվածության պատճառով, ինչն էներգամատակարարումը դարձնում է խոցելի՝ պայմանավորված արտաքին տնտեսական ու քաղաքական գործոններով:

39. Հանրային ծառայությունների ոլորտում էներգետիկան ունի առանձնահատուկ կարգավիճակ, քանի որ այն իր բնույթով ոչ միայն շուկայական արտադրանք է, այլև հանրային բարիք, որի անխափան մատակարարումը սահմանում է պետության սոցիալական պատասխանատվության իրականացման աստիճանը: Հանրային իշխանության մարմինները պարտավոր են մշակել և իրականացնել այնպիսի էներգետիկ քաղաքականություն, որը նվազեցնում է էներգետիկ ռեսուրսների գերակայող կախվածությունն արտաքին մատակարարներից՝ ապահովելով հասարակության համար էներ-

գետիկ մատչելիություն, կանխատեսելիություն և հավասար հասանելիություն՝ որպես մարդկային արժանապատիվ կյանքի նվազագույն պայման:

40. Սահմանադրական դատարանն ընդգծում է, որ էներգետիկ անվտանգությունը՝ որպես ազգային անվտանգության բաղադրիչ, ենթադրում է, որ սույն ոլորտում հանրային իշխանության մարմինները կարող են սահմանել սեփականության ներհատուկ սահմանափակումներ, օտարերկրյա ներդրումների վերահսկողություն և ռազմավարական օբյեկտների պաշտպանության հատուկ ռեժիմ:

41. էներգետիկայի բնագավառի հիշատակված գերակա նշանակությունից ելնելով՝ օրենսդիրը որդեգրել է այդ բնագավառի իրավական հատուկ կարգավորման տեսլական: Օրենքի՝ «**Հիմնական հասկացությունները**» վերտառությամբ 4-րդ հոդվածի 17-րդ կետի համաձայն՝ էներգետիկայի բնագավառի կարգավորումը պետական քաղաքականության մի մասն է (հոդված 8), որը ենթադրում է էլեկտրական էներգիայի արտադրության, էլեկտրական էներգիայի ու բնական գազի ներկրման, արտահանման և տարանցման հնարավորությունների, ինչպես նաև կանխատեսվող սպառման ծավալների հայտարարագրման ու պլանավորման և իրական ժամանակում էլեկտրական էներգիայի ու բնական գազի պահանջարկն ամբողջ ծավալով բավարարելու նպատակով էներգետիկական համակարգի տեխնոլոգիական կառավարման համար անհրաժեշտ գործընթացի և գործողությունների համախումբ, որը կապահովի սահմանված որակի էլեկտրական էներգիայի ու բնական գազի մատակարարումը՝ հուսալիության և անվտանգության ցուցանիշների պահպանմամբ:

42. Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն էներգետիկայի բնագավառում պետությունն իրականացնում է հատուկ քաղաքականություն, որի սկզբունքների շրջանակի և դրանց բովանդակության վերլուծությունը ցույց է տալիս, որ էներգետիկայի բնագավառում հատվում են տարբեր շահեր, մասնավորապես՝ ազգային անվտանգության, ոլորտում գործող տնտեսվարող սուբյեկտների, էներգիայի առանձին տեսակների սպառողների զանազան խմբերի, բնապահպանական և այլն: Օրենսդրական կարգավորման միջոցով՝ հանրային իշխանության միջամտության առարկան էներգետիկայի բնագավառում հատվող բոլոր տեսակի շահերի միջև հավասարակշռության ու ներդաշնակության հաստատումն է, ոլորտում տնտեսական գործունեություն իրականացնող անձանց, այդ թվում՝ սպառողների փոխհարաբերությունների կարգավորումը՝ նպատակ ունենալով ստեղծել էներգետիկայի բնագավառում պետական քաղաքականության սկզբունքների իրագործման կառուցակարգեր:

43. Ամփոփելով վերոգրյալը՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ էներգետիկական գերակա նշանակություն ունեցող ոլորտ է, ուստի՝ էներգետիկայի բնագավառում հանրային իշխանությանը կարգավորող օրենքներով վերապահված են միջամտող լիազորություններ, որոնք միտված են բազմազան շահերի հավասարակշռմանը, էլեկտրաէներգիայի մատակարարման հուսալիության, կայունության, օգտագործման համընդհանուր հասանելիության, էներգիայի գների տնտեսական մատչելիության, էկոլոգիական անվտանգության, էներգետիկայի առաջանցիկ զարգացման ապահովմանը և այլն:

5.2. էներգետիկայի բնագավառում հանրային իշխանության միջամտության սահմանադրաիրավական հիմքերի վերաբերյալ

44. Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում վերհանել էներգետիկայի բնագավառում հանրային իշխանության միջամտության սահմանադրական

հիմքերը, բնագավառում հատվող շահերի հավասարակշռումն ու պաշտպանությունն իրականացնող՝ Սահմանադրությամբ լիազորված հանրային սուբյեկտների շրջանակը, դրանց լիազորությունները:

45. Սահմանադրության 1-ին հոդվածով Հայաստանի Հանրապետությունը հռչակվել է ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն: «Ինքնիշխան պետություն» սահմանադրական կարգի հիմունքից բխում է, որ հանրային իշխանության մարմինները կրում են սահմանադրական պարտականություն՝ երկրի արտաքին և ներքին քաղաքականությունը կառուցել պետության ինքնիշխանության երաշխավորման սահմանադրահեն պահանջով, ձեռնարկել համակարգված, համալիր, անընդհատ միջոցառումներ պետության ինքնիշխանության ապահովման համար:

46. Պետության ինքնիշխանությունը պետականության գոյաբանական հիմքն է, պետական կամքի ինքնուրույնության կարողությունն ու աստիճանը, իսկ ինքնիշխանության ապահովման ուղղություններից է ազգային անվտանգության, ներառյալ՝ էներգետիկ անվտանգության ապահովումը: Առանց ազգային անվտանգության ապահովման՝ պետության ինքնիշխանությունը դառնում է խոցելի: Էներգետիկ համակարգի հուսալի գործունեությունն ու անվտանգությունը, դրա անկախությունն ու ինքնաբավությունը պետության ինքնիշխանության երաշխավորման նախապայմաններից են:

47. Էներգետիկան՝ որպես հանրային կենսագործունեության համակարգավորող և պետության ինստիտուցիոնալ կայունության չափորոշիչներից մեկը, հանդես է գալիս ոչ միայն որպես տնտեսական ենթակառուցվածք, այլև պետական ինքնիշխանության նյութակազմական հիմք և ազգային անվտանգության ռազմավարական հենասյուն, որը պայմանավորում է պետության ինքնիշխանության իրական աստիճանը, քաղաքական կայունությունը և ազգային անվտանգության մակարդակը: Այս առումով արդի ժամանակաշրջանում պետության անկախությունն ու ինքնիշխանությունը, ի շարս այլնի, չափվում են նաև էներգետիկայի բնագավառում պետության պաշտպանվածության, ինքնաբավության և կայունության ցուցիչով:

48. Պետության էներգետիկ անվտանգության քաղաքականությունը մշակելիս և կենսագործելիս հանրային իշխանությունը, ի թիվս սույն որոշման նախորդ կետում նշված նպատակների, պետք է հաշվի առնի դրա քաղաքական, տնտեսական, իրավական և այլ առումները, գնահատի դրանց հետևանքային ազդեցությունը պետության և հասարակության վրա: Հետևաբար՝ օրենսդիրն էներգետիկ համակարգի ռազմավարական կառավարման և կարգավորման օրենսդրական հիմքերն ամրագրելիս ընդգծում է, որ հանրային իշխանությունը պարտավոր է ապահովել իրավական կառուցակարգեր, որոնք (1) սահմանում են էներգետիկ բնագավառի որոշակի ենթակառուցվածքների հատուկ պաշտպանության կարգավիճակ ունենալու հանգամանքը և անվտանգությունը, (2) ապահովում են դրանց նկատմամբ մշտական պետական վերահսկողության իրավական հնարավորությունները, (3) կանխում են ռազմավարական նշանակության այս ենթակառուցվածքների անվերահսկելի շուկայական շրջանառությունը, (4) ելնում են էներգետիկ անկախության աստիճանական ամրապնդման քաղաքականությունից:

49. Վերոգրյալը վկայում է էներգետիկայի հանդեպ հանրային իշխանության մարմինների մշտական անշեղ ուշադրության և պետական շարունակական վերահսկողության, իսկ հարկ եղած դեպքում՝ պետական միջամտության անհրաժեշտության մասին: **Հետևաբար՝ էներգետիկայի ոլորտում իրավակարգավորումները թե՛ օրենս-**

դրական, թե՛ իրավակիրառ մակարդակում պետք է դիտվեն որպես պետական անվտանգային ռազմավարության հիմնարար բաղադրիչներ, ինչից բխում է, որ հանրային իշխանությունը կրում է այդ համատեքստում էներգետիկ անվտանգությունն ապահովելու պարտականություն, հետևաբար՝ այն սահմանադրի կողմից լիազորված է կանխելու և չեզոքացնելու համապատասխան սպառնալիքներն ու վտանգները՝ երաշխավորելով Հայաստանի Հանրապետության ինքնիշխանությունը, ներառյալ էներգետիկ անկախությունը:

50. Սահմանադրության՝ «Մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները և ազատությունները» վերտառությամբ 3-րդ հոդվածի 2-րդ մասով ամրագրված է հանրային իշխանության պարտականությունը՝ պաշտպանելու մարդու և քաղաքացու, այդ թվում՝ սպառողների հիմնական իրավունքները և ազատությունները, տվյալ դեպքում, համապատասխան շահերի հավասարակշռմանն ուղղված օրենքների շրջանակներում: Ձեռնարկատիրոջ տնտեսական գործունեությամբ զբաղվելու իրավունքը պետք է երաշխավորված լինի էներգետիկայի բնագավառի բոլոր սպառողների, ինչպես նաև բնագավառում հատվող այլ շահերի սահմանադրական հավասարակշռության պայմաններում, հետևաբար՝ հարգելով և պաշտպանելով էներգետիկայի բնագավառի տնտեսվարող սուբյեկտների շահերը՝ հանրային իշխանությունը չի կարող անտեսել ինչպես սպառողների, այնպես էլ հանրային շահերը, ուրեմն՝ պետք է տիրապետի համապատասխան գործիքակազմերի և պարտավոր է կիրառել դրանք՝ էներգետիկայի բնագավառում հատվող բոլոր շահերի հավասարակշռման համար:

51. Էներգետիկայի բնագավառում սպառողների շահերի պաշտպանության հանրային իշխանության պարտականությունը բխում է ոչ միայն Սահմանադրության 3-րդ հոդվածի 2-րդ մասից, այլև **«Պետության քաղաքականության հիմնական նպատակները»** վերտառությամբ 86-րդ հոդվածի 9-րդ կետից, համաձայն որի՝ տնտեսական ոլորտում պետության քաղաքականության հիմնական նպատակներից է սպառողների շահերի պաշտպանությունը, ծառայությունների և աշխատանքների որակի նկատմամբ վերահսկողությունը: Սահմանադրական այդ պարտականության իրացման երաշխիք է Սահմանադրության՝ **«Պետության քաղաքականության հիմնական նպատակների իրագործումը»** վերտառությամբ 87-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված իրավադրույթը, համաձայն որի՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն իրենց իրավասությունների և հնարավորությունների շրջանակում պարտավոր են իրագործել Սահմանադրության 86-րդ հոդվածով սահմանված նպատակները: Ընդ որում՝ Կառավարությունն Ազգային ժողով ներկայացրած իր տարեկան զեկույցի շրջանակներում (Սահմանադրության 156-րդ հոդված) տեղեկատվություն է ներկայացնում պետական քաղաքականության նպատակների, ներառյալ սպառողների շահերի պաշտպանության, ապրանքների, ծառայությունների և աշխատանքների որակի նկատմամբ վերահսկողության, իրագործման վերաբերյալ:

52. Էներգետիկայի բնագավառի կարևորությունից ելնելով՝ սպառողների շահերի պաշտպանության հիմնադրույթն Օրենքի հիմքում ընկած հայեցակարգային մոտեցումներից է, որն իր արտացոլումն է գտել նշված բնագավառի օրենսդրական կարգավորման առարկայի սահմանման մեջ (Օրենքի 1-ին հոդված), էներգետիկայի բնագավառի պետական քաղաքականության հիմնական սկզբունքներում (Օրենքի 5-րդ հոդված, «դ» կետ), կարգավորիչ Հանձնաժողովի իրավասությունում (Օրենքի 17-րդ հոդված, բ, ե, է, ը և այլ կետեր), էլեկտրաէներգետիկական շուկայի առևտրային և ցանցային կանոնների իրավակարգավորումներում (Օրենքի 39.6-րդ հոդված), սպառողների էներգամա-

տակարարման ապահովման տարաբնույթ երաշխիքներում (Օրենքի 9-րդ գլուխ, 45-56-րդ հոդվածներ): Այդ իրավակարգավորումներից բխում է, որ էլեկտրական էներգիայի բաշխման և երաշխավորված մատակարարման լիցենզիա ունեցող անձը կրում է սպառողների (բաժանորդների) հուսալի էլեկտրամատակարարումն ապահովելու, սահմանված ժամկետում սպառողների միացումը բաշխման ցանցին ապահովելու, առևտրային հաշվառքի սարքերի աշխատանքի ճշտությունն ապահովելու և մի շարք այլ պարտականություններ:

53. Վերոգրյալի հիման վրա՝ Սահմանադրական դատարանը եզրակացնում է, որ էներգետիկայի բնագավառում հանրային իշխանության մարմինների միջամտությունն իր հիմքում ունի ոչ միայն ոլորտում տնտեսվարող անձանց իրավունքների ու շահերի հարգումն ու պաշտպանությունը, այլ նաև սպառողների շահերի պաշտպանությունը, ապրանքների, ծառայությունների և աշխատանքների որակի նկատմամբ վերահսկողությունը, նշված երկու շահերի հավասարակշռության ու ներդաշնակության ապահովումը, ինչը բխում է Սահմանադրության 3-րդ հոդվածի 2-րդ մասից, 86-րդ հոդվածի 9-րդ կետից, ինչպես նաև 87 և 156-րդ հոդվածներից:

54. Սահմանադրության՝ «Տնտեսական կարգը» վերտառությամբ 11-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության տնտեսական կարգի հիմքը սոցիալական շուկայական տնտեսությունն է, որը հիմնված է մասնավոր սեփականության, տնտեսական գործունեության ազատության, ազատ տնտեսական մրցակցության վրա և պետական քաղաքականության միջոցով ուղղված է ընդհանուր տնտեսական բարեկեցությանը և սոցիալական արդարությանը: Սահմանադրական կարգի նշյալ հիմունքը Հայաստանի Հանրապետության տնտեսական կարգի հիմք է համարում սոցիալական շուկայական տնտեսությունը, որը, ինչպես և ազատ շուկայական տնտեսությունը, հիմնված է երեք հիմնադրույթների վրա՝ մասնավոր սեփականություն, տնտեսական գործունեության ազատություն, ազատ տնտեսական մրցակցություն: Նշյալ սկզբունքներով գործող շուկայական տնտեսությունը պետության կարգավորիչ քաղաքականության միջոցով պետք է ուղղված լինի ընդհանուր տնտեսական բարեկեցությանը և սոցիալական արդարությանը: Այս կապակցությամբ Սահմանադրական դատարանն ուշադրություն է հրավիրում այն հանգամանքի վրա, որ Սահմանադրական դատարանի մի շարք որոշումներով, մասնավորապես՝ 2023 թվականի ապրիլի 25-ի ՍԴՈ-1685 որոշմամբ, տնտեսվարողների իրավունքներին և ազատություններին միջամտության ուղենիշ են համարվել «(...) հնարավորինս կշռադատված, իրավական առումով՝ արդյունավետ» գործիքակազմերը, «ապահովվելով հանրային և մասնավոր շահերի ողջամիտ հավասարակշռությունը»:

55. Ամփոփելով վերոգրյալը՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ Սահմանադրության 11-րդ հոդվածից ևս բխում է, որ պետությանը վերապահված է «կշռադատված, իրավական առումով հիմնավորված, տնտեսական առումով արդյունավետ» կարգավորիչ միջամտության իրավասություն, որը նպատակամղված է ընդհանուր տնտեսական բարեկեցության և սոցիալական արդարության հաստատմանը:

56. Սահմանադրության՝ «Շրջակա միջավայրի պահպանությունը և կայուն զարգացումը» վերտառությամբ 12-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ պետությունը խթանում է շրջակա միջավայրի պահպանությունը, բարելավումը և վերականգնումը, բնական պաշարների ողջամիտ օգտագործումը՝ ղեկավարվելով կայուն զարգացման սկզբունքով և հաշվի առնելով պատասխանատվությունն ապագա սերունդների առջև: Այս իրավակարգավորումից բխում է, որ Հայաստանի Հանրապետությունը և՛

ընդհանրապես, և՛ տնտեսական ոլորտում՝ մասնավորապես, Սահմանադրության ուժով որդեգրել է կայուն զարգացման քաղաքականություն, որը, ի թիվս այլնի, ենթադրում է երկրի և դրա տնտեսության և այս համատեքստում էներգետիկայի՝ որպես առանցքային ոլորտի համընթաց զարգացում, որը պետք է ապահովի երկրի առաջընթացը բնապահպանական խնդիրների ներդաշնակեցման և հավասարակշռման միջոցով, որպեսզի նախադրյալներ ստեղծվեն ապագա սերունդների կայուն զարգացման համար:

57. Սահմանադրական այս դրույթից բխում է նաև, որ շրջակա միջավայրի պահպանության, բարելավման և վերականգնման, բնական պաշարների ողջամիտ օգտագործման համար Սահմանադրությամբ սահմանված պատասխանատու սուբյեկտը պետությունն է, որը պետք է ոչ միայն խթանի, այլև ապահովի բնապահպանական խնդիրների լուծումները:

58. Վերագրյալը հիմք ընդունելով՝ Սահմանադրական դատարանը եզրակացնում է, որ Սահմանադրության 12-րդ հոդվածի համատեքստում հանրային իշխանությունը էներգետիկայի բնագավառում ունի Սահմանադրությամբ սահմանված և կարգավորող օրենքներով մանրամասնեցված միջամտող լիազորություններ, որոնք բնապահպանական խնդիրների ներդաշնակեցման և հավասարակշռման միջոցով նպատակամղված են կայուն զարգացման համար նախադրյալների ստեղծմանը:

5.3. Էներգետիկայի բնագավառում հանրային իշխանության միջամտության սահմանադրաչափության գնահատումը տնտեսական գործունեության ազատության և սեփականության հիմնական իրավունքների համատեքստում

59. Սահմանադրության՝ «Տնտեսական գործունեության ազատությունը և տնտեսական մրցակցության երաշխավորումը» վերտառությամբ 59-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի տնտեսական, ներառյալ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունք: Այս իրավունքի իրականացման պայմանները և կարգը սահմանվում են օրենքով:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ մրցակցության սահմանափակումը, մենաշնորհի հնարավոր տեսակները և դրանց թույլատրելի չափերը կարող են սահմանվել միայն օրենքով՝ հանրային շահերի պաշտպանության նպատակով:

60. Սահմանադրության նշյալ հոդվածի բովանդակությունից բխում է, որ տնտեսական գործունեության ազատությունը և տնտեսական մրցակցությունը դիտարկվում են միասնության մեջ, այսինքն՝ հնարավորություն ընձեռելով իրականացնելու տնտեսական գործունեություն՝ պետությունը միևնույն ժամանակ պետք է երաշխավորի տնտեսական մրցակցությունը: Պետության տնտեսական քաղաքականությունը պետք է ուղղված լինի բոլոր տնտեսվարողների համար ոչ միայն անհրաժեշտ և հավասար պայմաններ ապահովելուն, որպեսզի յուրաքանչյուրն ազատորեն, առանց խոչընդոտների իրականացնի տնտեսական գործունեություն, այլև տնտեսական գործունեությանը բնորոշ առողջ մրցակցություն երաշխավորելուն՝ բացառելով շուկայում մենաշնորհ կամ գերիշխող դիրքի չարաշահումը, անբարեխիղճ մրցակցությունը և հակամրցակցային համաձայնությունները:

61. Սահմանադրական դատարանի 1999 թվականի հունվարի 27-ի ՍԴՈ-152 որոշման համաձայն՝ «Ազատ տնտեսական մրցակցության սկզբունքն իր հերթին բխում է տնտեսական ազատության և հավասարության սկզբունքներից և նշանակում է շուկայական տնտեսության ներսում բոլոր տնտեսավարող սուբյեկտների հավասարու-

թյուն, պետության կողմից նրանց համար հավասար պայմանների և հնարավորությունների ապահովում:

Միաժամանակ, ՀՀ Սահմանադրության դրույթների, սահմանադրականության միջազգային սկզբունքների վերլուծությունը վկայում է, որ ազատ տնտեսական մրցակցությունը չի բացառում պետության ու հասարակության անվտանգության և օրինական շահերի, հասարակական կարգի, հանրության առողջության ու բարքերի, այլոց իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով պետության կողմից արգելված, պետական լիցենզավորման ենթակա, բնական կամ պետական մենաշնորհի հանդիսացող կամ բացառիկ իրավունքներով կարգավորվող գործունեության տեսակների առկայությունը:

Նման ոլորտների հստակեցումը, տնտեսական գործունեության ազատության և ազատ տնտեսական մրցակցության շրջանակների հնարավոր սահմանափակումները սակայն կանոնակարգվում են Սահմանադրությամբ և օրենքներով՝ ապահովելու համար նաև հակամենաշնորհային այնպիսի քաղաքականության իրականացում, որը երաշխավորում է բարեխիղճ մրցակցություն և տնտեսական ու սոցիալական առաջընթաց»:

62. Սահմանադրությամբ ամրագրված տնտեսական գործունեության ազատությունը և տնտեսական մրցակցությունը պետության տնտեսական զարգացման հիմնարար անկյունաքարերն են, որոնք հնարավորություն են ընձեռում յուրաքանչյուրին՝ ազատ, բարեխիղճ, հավասար և մրցակցային պայմաններում իրականացնելու տնտեսական գործունեություն:

63. Սահմանադրական դատարանն ուշադրություն է հրավիրում այն փաստի վրա, որ տնտեսական, ներառյալ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու հիմնական իրավունքի բովանդակության սահմանորոշման համար Սահմանադրության 59-րդ հոդվածի 1-ին մասի երկրորդ նախադասությունը հղում է անում օրենքին՝ մասնավորապես սահմանելով, որ այդ հիմնական իրավունքի իրականացման պայմանները և կարգը սահմանվում են օրենքով: Սահմանադրական նման կարգավորման պայմաններում տվյալ հիմնական իրավունքի/ազատության օրենսդրական կարգավորման և այդ համատեքստում սահմանափակման չափանիշներ են հանդիսանում Սահմանադրության 78 և 79-րդ հոդվածներով ամրագրված՝ համաչափության և իրավական որոշակիության սկզբունքների չափորոշիչները, ինչպես նաև 80-րդ հոդվածով ամրագրված՝ հիմնական իրավունքի էության անխախտելիության արգելքը:

64. Միևնույն ժամանակ Սահմանադրական դատարանը գտնում է, որ Սահմանադրության 59-րդ հոդվածի 1-ին մասը պետք է մեկնաբանել՝ Սահմանադրության 11 և 60-րդ հոդվածների հետ համակարգային և գործառույթային սերտ կապերից ելնելով: Սահմանադրական դատարանը Սահմանադրության 11-րդ հոդվածի՝ վերը կատարված վերլուծությունների հիման վրա եզրահանգել է, որ պետությանը վերապահվում է **«կշռադատված, իրավական առումով հիմնավորված, տնտեսական առումով արդյունավետ»** կարգավորիչ միջամտության իրավասություն, որը նպատակամղված է **ընդհանուր տնտեսական բարեկեցության և սոցիալական արդարության հաստատմանը**:

65. Տնտեսական գործունեության ազատության և տնտեսական մրցակցության երաշխավորման **իրավունքը սերտորեն փոխկապակցված է և առնչվում է սեփականու-**

թյան սահմանադրական իրավունքի հետ: Սահմանադրական դատարանը, իր որոշումներում անդրադառնալով այդ խնդրին, արձանագրել է.

(1) «(...) **տնտեսական գործունեության ազատությունը** խաթարվում է սեփականության հիմնական իրավունքի վրա՝ Սահմանադրության 60-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված դրա երեք իրավազորություններով հանդերձ, որը Սահմանադրության ուժով ենթակա է սահմանափակումների: Տնտեսական գործունեության ազատությունը սեփականության իրավունքի իրավազորություններից առնվազն որևէ մեկի իրականացման եղանակ է, ուստի այդ ազատությունը և սեփականության իրավունքը բովանդակային առումով փոխկապակցված են: Հետևապես՝ սեփականության իրավունքի՝ օրենքով նախատեսվող սահմանափակումները ներգործում են տնտեսական գործունեության ազատության վրա՝ *mutatis mutandis* հնարավոր դարձնելով այդ ազատության սահմանափակումները նաև Սահմանադրության 60-րդ հոդվածով նախատեսված հիմքերով (...)»: (2020 թվականի մայիսի 12-ի ՍԴՈ-1530),

(2) «Տնտեսական գործունեության ազատության և տնտեսական մրցակցության երաշխավորման ու սեփականության իրավունքի փոխկապակցվածությունը դրսևորվում է նրանում, որ ազատ տնտեսական գործունեության և տնտեսական մրցակցության արդյունքում սեփականության ծավալն ավելացնելու նոր նախադրյալներ են ստեղծվում, ինչն, իր հերթին, իրական հնարավորություն է ընձեռում նաև ազատ տնտեսական գործունեության շրջանակն ընդլայնելու համար»: (2023 թվականի ապրիլի 25-ի ՍԴՈ-1685),

(3) «(...) **ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու ազատությունն** ուղղակիորեն փոխկապակցված է սեփականության իրավունքի հետ, ըստ այդմ՝ **ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելը** ոչ միայն ուղղված է շահույթ (գույք) ստանալուն, այլ նաև իրականացվում է, ի թիվս այլնի, սեփականատիրոջ կողմից իր գույքի օգտագործման, տիրապետման և տնօրինման եղանակով»: (2025 թվականի մարտի 18-ի ՍԴՈ-1773):

66. Սահմանադրության՝ «**Սեփականության իրավունքը**» վերտառությամբ 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի օրինական հիմքով ձեռք բերած սեփականությունն իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավունք: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ սեփականության իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ հանրության շահերի կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով, իսկ նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ ոչ ոք չի կարող զրկվել սեփականությունից, բացառությամբ դատական կարգով՝ օրենքով սահմանված դեպքերի:

67. Սահմանադրական դատարանն իր մի շարք որոշումներում անդրադարձել է սեփականության իրավունքին, մասնավորապես՝ նշելով.

«(...) **սեփականության իրավունքը** ճանաչելով որպես յուրաքանչյուրի հիմնական իրավունք, բացահայտվում է այդ իրավունքի բովանդակությունը, այն է՝ իր սեփականությունը տիրապետելու, օգտագործելու, տնօրինելու և կտակելու իրավազորությունները՝ միաժամանակ որպես դրանց իրացման նախապայման սահմանելով սեփականատիրոջ հայեցողությունը: Սահմանադրական այս նորմում «իր հայեցողությամբ» ձևակերպման շեշտադրմամբ սեփականության իրավունքի իրացման հիմքում դրվել է սեփականատիրոջ հստակ արտահայտված կամքը, վերջինս դիտարկվում է որպես սեփականության իրավունքի իրացման պարտադիր նախապայման, և սեփականության իրացման

գործընթացում վճռորոշ դերակատարություն է հաղորդվում անձի կամաարտահայտությանը: Այս դրույթի բովանդակությունը հանգում է նրան, որ գույքային իրավունքների իրացումը պետք է իրականացվի սեփականության անձեռնմխելիության և պայմանագրային ազատության սկզբունքների հիման վրա, որոնք ենթադրում են, ի թիվս այլնի, քաղաքացիաիրավական հարաբերությունների մասնակիցների կամքի ինքնավարություն և գույքային ինքնուրույնություն:

(...)

(...) ՀՀ Սահմանադրությունը թույլատրում է բացառապես երկու դեպք, այն է՝ 31-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով նախատեսված դեպքերը, երբ սեփականատիրոջ կամքն առաջնային չէ, և սեփականության իրավունքի իրացումը չի բխում սեփականատիրոջ հայեցողությունից: Հետևաբար, ցանկացած այլ դեպքում սեփականության իրավունքի իրացման գործընթացում միջամտությունը սեփականատիրոջ հայեցողությանը, սեփականատիրոջ գույքի տնօրինումն առանց այդ հայեցողության հստակ արտահայտման և դրսևորման չի կարող համարվել իրավաչափ և կհանդիսանա սեփականության իրավունքի խախտում»: (2012 թվականի փետրվարի 24-ի ՍԴՈ-1009 որոշում):

Ելնելով սեփականության իրավունքի պաշտպանության՝ Հայաստանի Հանրապետության սահմանադրական կարգի բաղադրիչ լինելու հիմնարար սահմանադրական արժեքից՝ Սահմանադրության 60-րդ հոդվածով նախատեսվել են սեփականության իրավունքին միջամտությունների՝

(1) սեփականության իրավունքի ընդհանուր սահմանափակումների,

(2) սեփականությունից զրկման և

(3) հանրության գերակա շահերի ապահովման նպատակով (հասարակության և պետության կարիքների համար) սեփականության օտարման նպատակները, իրավական հիմքը և պայմանները:

Մասնավորապես, 2023 թվականի նոյեմբերի 7-ի ՍԴՈ-1699 որոշմամբ արձանագրված է. «Սահմանադրության 60-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված նորմը գործում է որպես սեփականության իրավունքին հանրային իշխանության կողմից միջամտության ընդհանուր կանոն (*lex generalis*):

Միաժամանակ, սեփականության իրավունքի առավել խիստ միջամտության երկու հատուկ ձևերի՝ սեփականությունից զրկելու և հանրության գերակա շահերի ապահովման նպատակով (հասարակության և պետության կարիքների համար) սեփականությունը օտարելու իրավահարաբերությունների կարգավորման նպատակով Սահմանադրության, համապատասխանաբար, 60-րդ հոդվածի 4-րդ մասով և 60-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանվել են հատուկ նորմեր, որոնք Սահմանադրության 60-րդ հոդվածի 3-րդ մասի նկատմամբ հանդես են գալիս որպես հատուկ նորմեր (*lex specialis*), որոնք, դրանցով նախատեսված միջամտության խստության աստիճանով և իրավահարաբերությունների բնույթով պայմանավորված, նախատեսել են սեփականության իրավունքին միջամտության սահմանադրաչափության հատուկ և պարտադիր այլ պայմաններ: Մասնավորապես՝ Սահմանադրության 60-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված ընդհանուր պայմանների հետ մեկտեղ սեփականությունից զրկվելու ձևով միջամտության սահմանադրաչափության անհրաժեշտ պայման է նաև Սահմանադրության 60-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված «դատական կարգի» ապահովումը, ինչպես նաև սեփականությունից զրկվելու դեպքի «օրենքով սահմանված» լինելը»:

68. Սահմանադրական դատարանը բացահայտել է նաև «սեփականությունից զրկելու» ինստիտուտի իրավական բովանդակությունը: Այսպես՝ Սահմանադրական դատարանն իր՝ 2013 թվականի հունվարի 30-ի ՍԴՈ-1073 որոշմամբ նշել է. «(...) անձի բացառիկ իրավունքն է իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու, տնօրինելու և կտրակելու իր սեփականությունը՝ պայմանով, որ այդ իրավունքի իրացումը չխախտի այլ անձանց, հանրության և պետության իրավունքներն ու օրինական շահերը, վնաս չպատճառի շրջակա միջավայրին: Իսկ որպես սեփականության անձեռնմխելիության ապահովման երաշխիք՝ սկզբունքային նշանակություն ունի նաև Սահմանադրության 31-րդ հոդվածի երկրորդ մասում հաստատված սեփականագրվման՝ բացառությամբ դատական կարգով և օրենքով նախատեսված դեպքերում իրականացման սկզբունքը, որը, ի տարբերություն օտարման ընթացակարգի (<< Սահմ. 31-րդ հոդվածի 3-րդ մաս), ենթադրում է օրենքով սահմանված իրավական պատասխանատվության համապատասխան միջոցի կիրառում»:

69. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ նաև՝ Կոնվենցիա) թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ ունի իր գույքից անարգել օգտվելու իրավունք: Ոչ ոքի չի կարելի զրկել նրա գույքից, բացառությամբ ի շահ հանրության և այն պայմաններով, որոնք նախատեսված են օրենքով ու միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքներով:

70. ՄԻԵԴ պրակտիկայի համաձայն՝ Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածով ամրագրված՝ իր գույքից անարգել օգտվելու իրավունքի իմաստով գույք է համարվում ոչ միայն գոյություն ունեցող նյութական միջոցը, այլև նյութական միջոցը ձեռք բերելու լեգիտիմ ակնկալիքը (տե՛ս Trgo v. Croatia, Application no. 35298/04, 11.06.2009, Final 11.09.2009, §44):

71. Ըստ ՄԻԵԴ-ի՝ «գույքը» կարող է լինել «գոյություն ունեցող սեփականությունը» կամ «ակտիվները», ներառյալ՝ պահանջները, որոնց առնչությամբ դիմումատուն կարող է վիճարկել, որ առնվազն ունի սեփականության իրավունքից անարգել օգտվելու «իրավաչափ ակնկալիք» (տե՛ս J. A. Pye (Oxford) Ltd and J. A. Pye (Oxford) Land Ltd v. United Kingdom, Application no. 44302/02, 30.08.2007, §61):

Իր հերթին՝ «ակնկալիքը» համարվում է իրավաչափ, եթե այն հիմնված է օրենսդրական դրույթի կամ քննարկվող գույքի վերաբերյալ իրավական ակտի վրա (տե՛ս Saghinadze and others v. Georgia, Application no. 18768/05, 27.05.2010, Final 27.08.2010, §103): Այդ առնչությամբ Սահմանադրական դատարանն իր՝ 2024 թվականի հոկտեմբերի 15-ի ՍԴՈ-1757 որոշմամբ արձանագրել է. «(...) *ինքնին գույքային շահը կամ հավակնությունը, որը զուրկ է իրավական հիմքից, չի կարող հանդես գալ որպես Սահմանադրության 60-րդ հոդվածի 1-ին մասի պաշտպանության երաշխիքների ներքո «օրինական ակնկալիք»:*

72. Հատկանշական է, որ ՄԻԵԴ նախադեպային պրակտիկայի շրջանակներում Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի իմաստով՝ որպես «գույք» է դիտարկվում նաև լիցենզիան. գործարարական գործունեություն իրականացնելու համար անհրաժեշտ լիցենզիան թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի իմաստով գույք է. այն ուժը կորցրած ճանաչելը ենթադրում է նշված հոդվածով երաշխավորված իրավունքին միջամտություն (տե՛ս Bimer S. A. v. Moldova, Application no. 15084/03, 10.07.2007, Final 10.10.2007, §49): Այսպես՝ ՄԻԵԴ-ը նաև նշում է, որ «(...) Եվրոպական դատարանի

համար դժվար թե հնարավոր լինի չդիտարկել լիցենզիան, որը ժամանակին երաշխավորում էր դիմումատուի շրջանառության զգալի մասը (...), որպես «սեփականություն» թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի նպատակների համար (...): Դատարանը հետագայում հիշեցնում է, որ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու լիցենզիան հետ վերցնելը հավասարազոր է թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածով ամրագրված գույքի խաղաղ օգտագործման իրավունքին միջամտելուն (...): Եվրոպական դատարանը գտնում է, որ հայտատուի ծխախոտային արտադրատեսակների արտադրության լիցենզիայի չեղյալ հայտարարելը և չվերականգնելը հանդիսանում են Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի երկրորդ կետի գործողության ներքո գտնվող գույքի օգտագործման նկատմամբ վերահսկողության միջոց» (տե՛ս Vékony v. Hungary, Application no. 65681/13, 13.01.2015, FINAL 01.06.2015, §29):

73. Այսպիսով, ՄԻԵԴ-ի կողմից «գույք» հասկացության ընդլայնումը և լիցենզիաների ներառումն այդ շրջանակում ունեն հիմնարար նշանակություն, քանի որ Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի իմաստով՝ կարևորվում է ոչ միայն սեփականության ֆորմալ ճանաչումը, այլև դրա իրական՝ գործառնական (ֆունկցիոնալ) նշանակությունը՝ որպես անձի տնտեսական գործունեությունն ու եկամուտ (շահույթ) ստանալու հնարավորություններն ապահովող միջոց:

74. Միաժամանակ, սեփականության իրավունքը ենթակա է սահմանափակման, և այդ առնչությամբ նախանշված են այն իրավաչափ նպատակները, որոնց առկայության պարագայում նշված իրավունքին միջամտությունը կարող է լինել սահմանադրաչափ: Սահմանադրության 60-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ սեփականության իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ **հանրության շահերի կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով**, իսկ 59-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ մրցակցության սահմանափակումը, մենաշնորհի հնարավոր տեսակները և դրանց թույլատրելի չափերը կարող են սահմանվել միայն օրենքով՝ **հանրային շահերի պաշտպանության նպատակով**:

5.4. Էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզիա ստացած անձանց լիցենզիայի դադարեցմամբ համապատասխան գործունեության իրականացմանը միջամտության վերաբերյալ

75. Օրենքի՝ «Հանձնաժողովի իրավասությունները» վերտառությամբ 17-րդ հոդվածի «գ» կետն ամրագրված է «Կարգավորումները Էներգետիկայի բնագավառում» վերտառությամբ 3-րդ գլխի ներքո: Օրենքի իմաստով՝ «կարգավորում» հիմնական հասկացությունը նշանակում է. «Էլեկտրական էներգիայի արտադրության, էլեկտրական էներգիայի ու բնական գազի ներկրման, արտահանման և տարանցման հնարավորությունների, ինչպես նաև կանխատեսվող սպառման ծավալների հայտարարագրման ու պլանավորման և իրական ժամանակում էլեկտրական էներգիայի ու բնական գազի պահանջարկն ամբողջ ծավալով բավարարելու նպատակով Էներգետիկական համակարգի տեխնոլոգիական կառավարման համար անհրաժեշտ գործընթացի և գործողությունների համախումբ, որը կապահովի սահմանված որակի էլեկտրական էներգիայի ու բնական գազի մատակարարումը՝ հուսալիության և անվտանգության ցուցանիշների պահպանմամբ» (Օրենքի 4-րդ հոդվածի 17-րդ կետ):

76. Օրենքի՝ «Էներգետիկայի բնագավառի կարգավորումը» վերտառությամբ 8-րդ հոդվածի համաձայն՝ Էներգետիկայի բնագավառի կարգավորումը պետական

քաղաքականության մի մասն է, որի նպատակն է հանձնաժողովին վերապահված իրավասությունների իրականացմամբ հավասարակշռել սպառողների և լիցենզիա ունեցող անձանց շահերը, լիցենզիա ունեցող անձանց համար ստեղծել գործունեության միատեսակ պայմաններ և նպաստել մրցակցային շուկայի ձևավորմանն ու զարգացմանը՝ երաշխավորելով սպառողների իրավունքները:

77. Օրենքի նշյալ և այլ վերաբերելի իրավադրույթների համալիր վերլուծությունից բխում է, որ էներգետիկայի բնագավառի կարգավորման նպատակների շրջանակը, բացի սպառողների շահերի, իրավունքների երաշխավորման ապահովումից, ներառում է նաև ազգային անվտանգության, շրջակա միջավայրի պահպանության և մի շարք այլ շահերի ապահովումը և/կամ երաշխավորումը: Այս նպատակներին համապատասխան՝ Օրենքի՝ **«Կարգավորումը էներգետիկայի բնագավառում»** վերտառությամբ 3-րդ գլուխը սահմանում է էներգետիկայի բնագավառի կարգավորման հիմնական միջոցները, Հանձնաժողովի իրավասությունները, էներգետիկայի բնագավառում կնքվող որոշ տեսակի պայմանագրերի հաշվառման կամ գրանցման պահանջը:

78. Օրենքի 17-րդ հոդվածի «գ» կետով Հանձնաժողովին վերապահվում է իրավասություն՝ իր սահմանած կարգով էներգետիկայի բնագավառում իրականացնելու լիցենզավորում, տրամադրելու լիցենզիաներ, երկարաձգելու դրանց գործողության ժամկետները, վերաձևակերպելու, կասեցնելու և դադարեցնելու դրանց գործողությունը, ինչպես նաև սահմանելու լիցենզիաների պայմանները, վերահսկելու դրանց կատարումը և կիրառելու Օրենքով սահմանված պատասխանատվության միջոցները:

79. «Լիցենզավորման մասին» օրենքի՝ **«Լիցենզավորող մարմինները»** վերտառությամբ 8-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ պարբերության համաձայն՝ էներգետիկայի, էլեկտրոնային հաղորդակցության բնագավառներում և ջրային ոլորտում լիցենզավորման առանձնահատկությունները սահմանվում են համապատասխանաբար՝ «էներգետիկայի մասին», «էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքներով, Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքով և դրանց համաձայն ընդունված լիցենզավորման կարգերով:

«Լիցենզավորման մասին» օրենքի՝ **«Լիցենզավորման կարգերը»** վերտառությամբ 10-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից տրվող լիցենզիաների լիցենզավորման կարգերը հաստատում է տվյալ Հանձնաժողովը:

Նույն օրենքի՝ **«Լիցենզավորման ենթակա գործունեության տեսակների ցանկը»** վերտառությամբ 43-րդ հոդվածին համապատասխան՝ լիցենզավորման ենթակա գործունեության տեսակ է, ի թիվս այլնի, էներգետիկայի բնագավառում բնական գազի փոխադրումը, բաշխումը, ներկրումը, արտահանումը, էլեկտրական էներգիայի արտադրությունը (ներառյալ՝ էլեկտրական և ջերմային էներգիայի համակցված արտադրությունը), հաղորդումը, բաշխումը, էլեկտրական էներգիայի մատակարարումը (ներառյալ՝ երաշխավորված), մեծածախ առևտուրը, ջերմային էներգիայի արտադրությունը, փոխադրումը, բաշխումը, էլեկտրաէներգետիկական և գազամատակարարման համակարգերի օպերատորի ծառայությունները, էներգետիկական շուկայի օպերատորի ծառայությունները:

80. Տնտեսական գործունեության առանձին տեսակների համար պետությունը, ելնելով անձանց կյանքին, առողջությանը, գույքին, հանրային շահերին, բնության, մշակութային ժառանգության պահպանությանն առավել վտանգի սպառնալիք պարու-

նակող գործունեության տեսակներով զբաղվողների նկատմամբ վերահսկողություն իրականացնելու նպատակից, սահմանել է տվյալ գործունեության տեսակով զբաղվելու իրավունքը հաստատող պաշտոնական թույլտվություն, ուստի՝ պետության կողմից որոշակի տեսակի գործունեության լիցենզավորումն ինքնանպատակ չէ, այլ իրականացվում է նաև՝ ի պաշտպանություն տարատեսակ շահերի, որոնք կարող են վտանգվել տնտեսվարողների գործունեության արդյունքում:

81. Սահմանադրական դատարանը փաստում է, որ էներգետիկայի բնագավառում պետության կողմից վերահսկողության իրականացման իրավական եղանակներից է նաև համապատասխան ինքնավար մարմնի՝ Հանձնաժողովի կողմից լիցենզավորումը, ներառյալ՝ լիցենզիայի գործողությունը դադարեցնելը, որը, որպես միջամտություն, ունի հստակ սահմանված սահմանադրական իրավական հիմքեր, կոչված է ապահովելու ոլորտում հատվող բոլոր շահերի ողջամիտ հավասարակշռությունը:

82. Սահմանադրական դատարանը հարկ է համարում նշել, որ Օրենքի 17-րդ հոդվածի «գ» կետի իրավական որոշակիության սկզբունքին համապատասխանության հարցը պետք է դիտարկել լիցենզիայի դադարեցման հիմքերի, այսինքն՝ համապատասխան սահմանափակումների հիմքերի որոշակիության համատեքստում: Օրենքի վերլուծությունը ցույց է տալիս, որ օրենսդրորեն հստակ ամրագրված են լիցենզավորված անձի լիցենզիայի գործողության դադարեցման հիմքերը, մասնավորապես՝ Օրենքի՝ **«Գործունեության լիցենզիայի կասեցումը և դադարեցումը»** վերտառությամբ 30.1-ին հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Լիցենզավորված անձի գործունեության լիցենզիան կարող է դադարեցվել «Լիցենզավորման մասին» օրենքով, սույն օրենքով կամ այլ օրենքներով, ինչպես նաև հետևյալ դեպքերում.

ա) արտադրության լիցենզիա ունեցող անձը լիցենզիայով սահմանված կառուցման ժամանակահատվածում չի ավարտել կայանի կառուցման աշխատանքները, Հանձնաժողովի սահմանած կարգով չի դիմել լիցենզիայի պայմաններում փոփոխություններ կատարելու համար, կամ Հանձնաժողովը մերժել է փոփոխություններ կատարելու դիմումը, և արտադրության լիցենզիա ունեցող անձը մինչև կառուցման ժամանակահատվածի ավարտը չի վերացրել մերժման հիմքերը և Հանձնաժողով չի ներկայացրել համապատասխան հիմնավորող փաստաթղթեր:

բ) արտադրության լիցենզիա ունեցող անձը լիցենզիայով սահմանված կառուցման ժամանակահատվածում չի ավարտել կայանի կառուցման աշխատանքները, Հանձնաժողովի սահմանած կարգով չի դիմել լիցենզիայով սահմանված կառուցման ժամանակահատվածը երկարաձգելու հայտով, կամ Հանձնաժողովը մերժել է ներկայացված հայտը, և արտադրության լիցենզիա ունեցող անձը մինչև կառուցման ժամանակահատվածի ավարտը չի վերացրել մերժման հիմքերը և Հանձնաժողով չի ներկայացրել համապատասխան հիմնավորող փաստաթղթեր:

գ) արտադրության լիցենզիայով ամրագրված կառուցման (վերակառուցման) ժամանակահատվածում Հանձնաժողովը կասեցրել է արտադրության լիցենզիան, և մինչև կառուցման (վերակառուցման) ժամանակահատվածի ավարտը լիցենզիայի կասեցումը չի վերացվել:

դ) էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիա ունեցող անձի՝ տվյալ կայանի համար տրամադրված ջրօգտագործման թույլտվությունն ուժը կորցրած ճանաչվելու կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ջրօգտագործման թույլտվության գործողության ժամկետը չերկարաձգվելու դեպքում՝ ջրային

ռեսուրսների կառավարման և պահպանության մարմնի կամ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած ակտի հիման վրա.

ե) արտադրության լիցենզիա ստանալու, այդ թվում՝ արտադրության (վերակառուցման) ժամանակահատված ամրագրելու համար անհրաժեշտ իրավունքն օրենսդրությամբ սահմանված կարգով դադարելու դեպքում (այդ թվում՝ իրավունքը հավաստող փաստաթղթի գործողության ժամկետը չերկարաձգվելու դեպքում)՝ պետական իրավասու մարմնի կամ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած ակտի կամ համապատասխան պայմանագրի գործողության դադարեցման հիմքով»:

83. Նշյալ հոդվածում գործածված «**սույն օրենքով**» ձևակերպման իմաստով՝ լիցենզավորված անձի գործունեության լիցենզիայի դադարեցման հիմքերն Օրենքի՝ «**Հանձնաժողովի կողմից կիրառվող պատասխանատվությունը**» վերտառությամբ 42-րդ հոդվածով նախատեսված իրավախախտումներն են, մասնավորապես՝

(1) «Էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզիա ունեցող անձի կողմից, բացառությամբ սույն հոդվածի 7-րդ մասով սահմանված անձանց, սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված արարքը կատարելը, որի հետևանքով վտանգվել է կամ կարող էր վտանգվել համակարգի անվտանգությունը կամ հուսալիությունը, կամ այն ուղղակիորեն հանգեցրել է մի խումբ սպառողների իրավունքների կամ օրինական շահերի խախտման կամ լիցենզիայի պայմանների կոպիտ խախտման կամ էներգետիկայի բնագավառում այլ լիցենզավորված անձի օրինական շահերի խախտման կամ լիցենզավորված գործունեության խոչընդոտմանը կամ լիցենզիայի պայմանների չկատարմանը կամ ոչ պատշաճ կատարմանը, կամ սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված արարքը վարչական տույժ նշանակելու մասին որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, կրկին կատարելն առաջացնում է տուգանք՝ քսան միլիոն դրամից քառասուն միլիոն դրամի չափով, կամ լիցենզիայի գործողության կասեցում կամ լիցենզիայի գործողության դադարեցում» (Օրենքի 42-րդ հոդվածի 3-րդ մաս):

(2) «Էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզիա ունեցող անձի կողմից, բացառությամբ սույն հոդվածի 7-րդ մասով սահմանված անձանց, սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված արարքը վարչական տույժ նշանակելու մասին որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, կրկին կատարելն առաջացնում է տուգանք՝ հինգ միլիոն դրամից տասը միլիոն դրամի չափով, կամ լիցենզիայի գործողության կասեցում կամ լիցենզիայի գործողության դադարեցում» (Օրենքի 42-րդ հոդվածի 5-րդ մաս):

(3) «Էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզիա ունեցող անձի կողմից, բացառությամբ սույն հոդվածի 7-րդ մասով սահմանված անձանց, սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված արարքը կատարելը, որի հետևանքով վտանգվել է կամ կարող էր վտանգվել համակարգի անվտանգությունը կամ հուսալիությունը, կամ այն ուղղակիորեն հանգեցրել է մի խումբ սպառողների իրավունքների կամ օրինական շահերի խախտման կամ լիցենզիայի պայմանների կոպիտ խախտման կամ էներգետիկայի բնագավառում այլ լիցենզավորված անձի օրինական շահերի խախտման կամ լիցենզավորված գործունեության խոչընդոտմանը կամ լիցենզիայի պայմանների չկատարմանը կամ ոչ պատշաճ կատարմանը կամ խոչընդոտել է կարգավորող մարմնի՝ կարգավորման գործառույթների պատշաճ իրականացմանն առաջացնում է տուգանք՝ տասը միլիոն դրամից քսան միլիոն դրամի չափով, կամ լիցենզիայի գործողության

կասեցում կամ լիցենզիայի գործողության դադարեցում» (Օրենքի 42-րդ հոդվածի 6-րդ մաս):

(4) «Սույն հոդվածի 7-րդ մասով սահմանված անձի կողմից սույն հոդվածի 7-րդ մասով սահմանված արարքը կատարելը, որի հետևանքով վտանգվել է կամ կարող էր վտանգվել համակարգի անվտանգությունը կամ հուսալիությունը, կամ այն ուղղակիորեն հանգեցրել է մի խումբ սպառողների իրավունքների կամ օրինական շահերի խախտման կամ էներգետիկայի բնագավառում այլ լիցենզավորված անձի օրինական շահերի խախտման կամ լիցենզավորված գործունեության խոչընդոտմանը կամ լիցենզիայի պայմանների չկատարմանը կամ ոչ պատշաճ կատարմանը, կամ սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված արարքը վարչական տույժ նշանակելու մասին որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, կրկին կատարելն առաջացնում է տուգանք՝ մեկ միլիոն հինգ հարյուր հազար դրամից երկու միլիոն դրամի չափով, կամ լիցենզիայի գործողության կասեցում կամ լիցենզիայի գործողության դադարեցում» (Օրենքի 42-րդ հոդվածի 8-րդ մաս):

(5) «Սույն հոդվածի 7-րդ մասով սահմանված անձի կողմից սույն հոդվածի 9-րդ մասով սահմանված արարքը վարչական տույժ նշանակելու մասին որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, կրկին կատարելն առաջացնում է տուգանք՝ հինգ հարյուր հազար դրամից մեկ միլիոն դրամի չափով, կամ լիցենզիայի գործողության կասեցում կամ լիցենզիայի գործողության դադարեցում» (Օրենքի 42-րդ հոդվածի 10-րդ մաս):

(6) «Սույն հոդվածի 7-րդ մասով սահմանված անձի կողմից սույն հոդվածի 9-րդ մասով սահմանված արարքը կատարելը, որի հետևանքով վտանգվել է կամ կարող էր վտանգվել համակարգի անվտանգությունը կամ հուսալիությունը, կամ այն ուղղակիորեն հանգեցրել է մի խումբ սպառողների իրավունքների կամ օրինական շահերի խախտման կամ լիցենզիայի պայմանների կոպիտ խախտման կամ էներգետիկայի բնագավառում այլ լիցենզավորված անձի օրինական շահերի խախտման կամ լիցենզավորված գործունեության խոչընդոտմանը կամ լիցենզիայի պայմանների չկատարմանը կամ ոչ պատշաճ կատարմանը կամ խոչընդոտել է կարգավորող մարմնի՝ կարգավորման գործառույթների պատշաճ իրականացմանը, առաջացնում է տուգանք՝ մեկ միլիոն դրամից մեկուկես միլիոն դրամի չափով, կամ լիցենզիայի գործողության կասեցում կամ լիցենզիայի գործողության դադարեցում» (Օրենքի 42-րդ հոդվածի 11-րդ մաս):

84. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ վիճարկվող կարգավորումը բավարար չափով որոշակի է, իսկ համապատասխան իրավահարաբերության սուբյեկտը լիարժեք կարող է կանխատեսել Օրենքի պահանջները չկատարելու պարագայում՝ վիճարկվող կարգավորման ուժով Հանձնաժողովի կողմից կիրարկվող միջոցն ու դրա արդյունքում վրա հասնող իրավական հետևանքները, ըմբռնել իրենից ակնկալվող վարքագծի բնույթը և, ըստ այդմ՝ իր վարքագիծը համապատասխանեցնել օրենսդրական գործող պահանջներին:

85. Սահմանադրական դատարանը փաստում է նաև, որ Օրենքը լիցենզիայի գործողության դադարեցմամբ լիցենզիայից զրկված անձի համար սահմանում է որոշակի նյութական ու ընթացակարգային իրավական երաշխիքներ: Մասնավորապես՝ Օրենքի՝ «Սպառողների շահերի պաշտպանության երաշխիքները» վերտառությամբ 52-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե անձի լիցենզիայի գործողությունը դադարեցվել է, ապա Կառավարությունն այդ անձի բաժնետերերին (մասնակիցներին) առաջարկում է իր

հետ համաձայնեցված կարգով օտարել այդ ընկերության բաժնետոմսերը (բաժնեմասերը), գույքը կամ լիցենզավորված գործունեությունն ապահովող՝ իր սեփականությունը հանդիսացող գույքային համալիրը: Այդ օտարումը եռամսյա ժամկետում չիրականացվելու դեպքում, որպես բացառիկ միջոց, բաժնետոմսերը (բաժնեմասերը), գույքը կամ լիցենզավորված գործունեությունն ապահովող գույքային համալիրը կարող են օտարվել Սահմանադրության 60-րդ հոդվածին համապատասխան:

86. Բացի դրանից, թեև լիցենզիայի գործողության դադարեցումն իրականացվում է Հանձնաժողովի կողմից՝ վարչական կարգով, օրենսդիրը՝ ի ապահովումն Սահմանադրության 61-րդ հոդվածի պահանջների, լիցենզավորված անձին իրավունք է վերապահում դատական կարգով բողոքարկելու լիցենզիայի գործողության դադարեցման վերաբերյալ Հանձնաժողովի որոշումը, իսկ Սահմանադրության՝ «Վնասի հատուցման իրավունքը» վերտառությամբ 62-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց ոչ իրավաչափ գործողություններով կամ անգործությամբ, իսկ օրենքով սահմանված դեպքերում՝ նաև իրավաչափ վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման իրավունք, որի պայմանները և կարգը սահմանվում են օրենքով:

87. Սահմանադրական դատարանը, հիմք ընդունելով վերը կատարված իրավական վերլուծությունները, ինչպես նաև Հանձնաժողովի լիցենզիայի գործողության դադարեցման օրենքով սահմանված իրավասությունը դիտարկելով համաչափության սահմանադրական սկզբունքի պահանջների լույսի ներքո, գտնում է, որ Հանձնաժողովի՝ որպես ինքնավար մարմնի կողմից լիցենզավորում իրականացնելը, այդ թվում նաև՝ լիցենզիայի գործողությունը դադարեցնելը, էներգետիկայի բնագավառում պետության կողմից վերահսկողության իրականացման իրավական եղանակներից է, որը որպես միջամտություն ունի սահմանադրական իրավական հիմքեր՝ հանդիսանալով տնտեսական գործունեության ազատությանը և սեփականության իրավունքին միջամտություն, հետապնդում է ինչպես ընդհանուր սահմանադրաչափ, այնպես էլ կոնկրետ իրավաչափ նպատակներ:

88. Լիցենզավորված անձի գործունեության լիցենզիայի դադարեցումը, նախ՝ իրավախախտման հետևանքով վրա հասնող պատասխանատվության միջոց է, հետևաբար՝ այն «Լիցենզավորման մասին» օրենքով, Օրենքի 30.1-ին հոդվածի 2-րդ մասով և 42-րդ հոդվածով և այլ օրենքներով սահմանված հիմքերի առկայության պայմաններում **պիտանի միջոց է**, քանի որ պետությանը հնարավորություն է ընձեռում ունենալու իրավական գործիքակազմ՝ իր համար առանձնահատուկ և հստակ ուրվագծված հանրային շահերից ելնելով վերահսկողություն իրականացնելով՝ հնարավոր դարձնել Սահմանադրությամբ նախանշված իրավաչափ նպատակների կենսագործմանը հասնելը: Ավելին, սույն միջոցը պիտանի է, քանի որ այն նպատակադրված է, ի թիվս ավնի, նաև բացառիկ նշանակության այս ենթակառուցվածքի շարունակական անխափան աշխատանքի երաշխավորմանը՝ ապահովելով նաև հանրային շահի երաշխավորումը:

Պետության կողմից էներգետիկայի բնագավառում վերահսկողական գործառույթները վերապահված են նաև Հանձնաժողովին, որը, ի թիվս այլ լիազորությունների, կարող է օրենքով նախատեսված հիմքերի առկայության դեպքում, որպես իրավախախտման հետևանք՝ դադարեցնել լիցենզավորված անձի համապատասխան գործունեության լիցենզիան՝ վարչական կարգով՝ չգրկելով անձին դատական պաշտպանության հիմնական իրավունքից:

89. Համաչափության սկզբունքի մյուս տարրի՝ սահմանադրորեն առկա **իրավաչափ նպատակին հասնելու համար ընտրված միջոցի անհրաժեշտության** հարցի կապակցությամբ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Սահմանադրությամբ սահմանված հիմնարար նշանակություն ունեցող հանրային շահերի պաշտպանության նպատակով հանրային ծառայությունների ոլորտում, այդ թվում՝ էներգետիկայի բնագավառում, կարգավորում իրականացնող ինքնավար մարմինը՝ Հանձնաժողովը, իրականացնում է հանրային ծառայությունների ոլորտի կարգավորումը՝ նպատակ ունենալով օրենքով սահմանված իր իրավասությունների իրականացմամբ, ոլորտային ռազմավարական քաղաքականությանը համահունչ հավասարակշռել ոլորտում առկա տարատեսակ շահերը, սպառողների և հանրային ծառայությունների ոլորտում կարգավորվող գործունեություն իրականացնող անձանց շահերը, վերջիններիս համար ստեղծել գործունեության միատեսակ պայմաններ, նպաստել մրցակցային շուկաների ձևավորմանն ու զարգացմանը և խթանել ռեսուրսների արդյունավետ օգտագործումը:

90. Վերոնշյալի հաշվառմամբ՝ Սահմանադրական դատարանի գնահատմամբ օրենսդրի կողմից ընտրված միջոցը **հետապնդվող նպատակին հասնելու համար անհրաժեշտ է**, քանի որ իր սահմանած կարգով էներգետիկայի բնագավառում լիցենզավորում իրականացնելը՝ լիցենզիաներ տրամադրելը, դրանց գործողության ժամկետները երկարաձգելը, վերաձևակերպելը, դրանց գործողությունը կասեցնելը և դադարեցնելը, ինչպես նաև լիցենզիաների պայմանները սահմանելը, դրանց կատարումը վերահսկելը և օրենքով սահմանված պատասխանատվության միջոցները կիրառելը Հանձնաժողովի՝ որպես ինքնավար մարմնի բացառիկ լիազորությունն է, ուստի՝ միայն Հանձնաժողովը կարող է էներգետիկայի բնագավառում լիցենզավորում իրականացնել՝ ընդունելով համապատասխան որոշումներ:

91. Համաչափության սկզբունքի **համարժեքության** տարրի կապակցությամբ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ լիցենզիա ստացած անձանց տնտեսական գործունեության ազատությունը և սեփականության իրավունքը սահմանափակելն առավել նվազ նշանակություն և հետևանքային ազդեցություն ունի, քան Սահմանադրությամբ ամրագրված այն հիմնարար արժեքները, որոնց պաշտպանության նպատակով սահմանվել են նշված սահմանափակումները:

5.5. Լիցենզիա ունեցող անձի գործարքային իրավունքները Կառավարության՝ գնելու նախապատվության իրավունքով սահմանափակելու վերաբերյալ

92. Օրենքի՝ «Լիցենզիա ունեցող անձի գործարքային իրավունքների սահմանափակումը» վերտառությամբ 27-րդ հոդվածի 2.1-ին մասում սահմանված գնելու նախապատվության իրավունքն իր առաջացման հիմքով՝ օրենքով սահմանված (ex lege), իսկ ըստ շահերի բավարարման՝ հանրային իրավունք է, որի հիմքով առաջացող իրավահարաբերության մասնակիցներ են լիցենզիա ունեցող անձը՝ որպես սեփականատեր, հնարավոր գնորդը՝ որպես գնման կամ այլ կերպ օտարման հավակնորդ, և Հայաստանի Հանրապետությունը՝ ի դեմս Կառավարության:

93. Կառավարությանը գործարքի առարկա գույքի կամ դրա նկատմամբ իրավունքի ձեռքբերման նախապատվության իրավունքի վերապահումը հետապնդում է ողջամիտ և իրավաչափ նպատակ, որպեսզի կենսական ու անվտանգային նշանակություն ունեցող գույքը երրորդ անձին օտարելը պայմանավորված չլինի միայն և բացառապես տնտեսական շահերով կամ առավել ևս լինի ինքնաբերական, այլ կառավարելի և

կանխատեսելի դարձվի երրորդ անձի (գնորդի) ընտրության գործընթացը, և դրանով իսկ ապահովվի ազգային անվտանգության և ներքին շուկայի սպառողների շահերը, էներգետիկ համակարգի հուսալիությունն ու կայունությունը և այլ որակները:

94. Ի տարբերություն գնելու նախապատվության մասնավոր իրավահարաբերության սուբյեկտի, որը հետապնդում է մասնակիցների կազմի անփոփոխելիության ապահովման նպատակը՝ ելնելով իր մասնավոր շահերից, Կառավարությունը՝ որպես գնելու նախապատվության իրավունքի կրող, գործում է ընդհանուր հասարակական/հանրային շահերով դրդված, որովհետև Սահմանադրության ուժով՝ այդ շահերի ապահովման հավաքական պատասխանատու սուբյեկտն է:

Եթե գնելու նախապատվության ինստիտուտի մասնավոր տեսակում արտոնությունը հավասարակշռում է համատեղ իրավունքը կրողների (համասեփականատերերի, մասնակիցների) մասնավոր շահերը, ապա վիճարկվող իրավակարգավորման մեջ Կառավարությունը՝ որպես գնելու նախապատվության իրավունքը կրող սուբյեկտ, կոչված է գնելու նախապատվության իրավունքի իրականացմամբ ապահովելու հանրային և մասնավոր շահերի հավասարակշռությունը: Էներգետիկայի բնագավառում այդ **հավասարակշռության ապահովումը խիստ անհրաժեշտություն է**, իսկ դրա ապահովման **պիտանի միջոցը** նախապատվության իրավունքի կենսագործման միջոցով լայն իմաստով պետության անվտանգային համակարգ երրորդ անձանց անվերահսկելի մուտքը կանխելու լեգիտիմ հնարավորությունն է:

95. Մինչույն ժամանակ Սահմանադրական դատարանը հարկ է համարում արձանագրել, որ Կառավարության կողմից իր նախապատվության իրավունքի իրացումից հրաժարումը չի ենթադրում օտարվող գույքի նկատմամբ քաղաքացիական շրջանառության այլ սուբյեկտների գնման իրավունքի իրացման անհնարինություն: Այլ կերպ՝ քաղաքացիական շրջանառության համապատասխան սուբյեկտները կարող են հավակնել օտարվող գույքի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերելուն՝ ընդունելով էներգետիկայի բնագավառում հիշատակված պատճառաբանությամբ պետության բացառիկ վերահսկողությունը:

96. Հաշվի առնելով վերոգրյալը՝ Սահմանադրական դատարանը եզրահանգում է, որ ձեռնարկատիրական գործունեության ազատության և օրինական հիմքով ձեռք բերած սեփականությունն իր հայեցողությամբ տնօրինելու իրավունքների համատեքստում Օրենքի 27-րդ հոդվածի 2.1-ին մասում նախատեսված՝ Կառավարության՝ գնելու նախապատվության իրավունքը՝ որպես այդ իրավունքների ազատ իրականացման սահմանափակում, **(1)** լինելով անհրաժեշտ և պիտանի սահմանափակման միջոց, համարժեք է այն հանրային շահերին, որոնք բավարարվում են հիմնական իրավունքը/ազատությունը սահմանափակող միջոցի օգնությամբ, **(2)** պիտանի միջոց է ոչ միայն հանրային, այլև տնտեսավարող այլ սուբյեկտների շահերի ապահովման համար՝ **(3)** սահմանափակելով վաճառողի՝ գնորդին ազատորեն ընտրելու առավել ինքնավարության հնարավորությունը, չի խախտում նրա հիմնական իրավունքի էությունը, **(4)** հետևաբար՝ սահմանադրաչափ է և կոչված է օրենքով սահմանված ընթացակարգով ապահովելու այդ իրավունքի հիմքով առաջացած իրավահարաբերության բոլոր մասնակիցների շահերի հավասարակշռումը:

5.6. Օրենքի 52.1-ին հոդվածի 1-3-րդ մասերով սահմանված կանխարգելիչ միջոցառումների և դրանց կիրառման կարգի վերաբերյալ

97. Օրենքի՝ 52.1-ին հոդվածը («Սպառողների շահերի պաշտպանության նպատակով կանխարգելիչ միջոցառումների կիրառումը») լրացվել է **«Սպառողների էներգամատակարարման ապահովման երաշխիքները»** վերտառությամբ 9-րդ գլխում, որի 47-56-րդ հոդվածները կարգավորում են սպառողների էներգամատակարարման, արտադրված էլեկտրաէներգիայի փոխանցման, էներգամատակարարման անխուսափելի սահմանափակումներ պահանջող իրավիճակների, արտակարգ իրավիճակների, սպառողների շահերի պաշտպանության հետ կապված մի շարք այլ հարաբերություններ:

Օրենքի 52.1-ին հոդվածը սահմանում է, որ Հանձնաժողովի նախագահը՝ Օրենքով սահմանված հիմքով վարույթ հարուցելու մասին որոշմամբ կարող է կիրառել կանխարգելիչ միջոցառումներ, որոնք սահմանված են Օրենքի 52.1-ին հոդվածի 2-րդ մասի 1-5-րդ կետերում, ընդ որում՝ Հանձնաժողովի նախագահն իրավունք ունի կիրառել «կանխարգելիչ միջոցառումներից մեկը կամ մի քանիսը»:

98. Օրենքի 52.1-ին հոդվածի 1-ին և 2-րդ մասերի և դրանց հետ համակարգային առումով փոխկապակցված **«Պատասխանատվության միջոցներ»** գլխի իրավակարգավորումների համեմատական վերլուծությունից երևում են 52.1-ին հոդվածի իրավակարգավորումների էությունը և նպատակային նշանակությունը, ինչպես նաև դրանով սահմանված կանխարգելիչ միջոցառումների կիրառման հիմքերը, մասնավորապես՝ **(1)** Օրենքի 52.1-ին հոդվածում ամրագրված կանխարգելիչ միջոցառումներից յուրաքանչյուրի կիրառումը լիցենզավորված անձի համար հանգեցնում է որոշակի իրավական հետևանքների, որոնք, համապատասխանաբար, կարող են հանգեցնել լիցենզավորված անձի իրավական կարգավիճակի փոփոխության, սակայն, այդուհանդերձ, դրանք իրենց նշանակությամբ իրավական պատասխանատվության միջոցներ չեն: Կանխարգելիչ միջոցառումներն ուղղված են հարուցվող վարչական վարույթի անխոչընդոտ ընթացքի ապահովմանը, ռազմավարական նշանակության օբյեկտ հանդիսացող կառույցի անխափան ու բնականոն աշխատանքի երաշխավորմանը, սպառողների շահերի պաշտպանությանը, էներգետիկայի բնագավառում ռիսկերի նվազեցմանը, դրա կայուն ու շարունակական զարգացման ապահովմանը, **(2)** կանխարգելիչ միջոցառումները կարող են Հանձնաժողովի նախագահի կողմից կիրառվել Օրենքի 42-րդ հոդվածի 3-րդ, 5-րդ կամ 6-րդ մասերով սահմանված արարքներ կատարելու հիմքով վարույթ հարուցելու մասին որոշմամբ:

99. Այսպիսով, օրենսդիրը սպառողների շահերի պաշտպանության նպատակով կանխարգելիչ միջոցառումների կիրառման իմպերատիվ պայման է սահմանել վերոնշյալ դրույթներով սահմանված արարքներից որևիցե մեկը կատարելու հիմքով վարչական վարույթի հարուցումը: Ընդ որում՝ Օրենքի 42-րդ հոդվածի համալիր ուսումնասիրությունը հիմք է տալիս փաստելու, որ օրենսդիրը սահմանել է, որ սպառողների շահերի պաշտպանության նպատակով կանխարգելիչ միջոցառումները կարող են կիրառվել նշյալ հոդվածով ամրագրված ոչ թե բոլոր իրավախախտումների համար, այլ բացառապես **(1)** կրկին կատարված արարքների կամ **(2)** այն արարքների, որոնց հետևանքով վտանգվել է կամ կարող էր վտանգվել համակարգի անվտանգությունը կամ հուսալիությունը, կամ այն ուղղակիորեն հանգեցրել է մի խումբ սպառողների իրավունքների կամ օրինական շահերի խախտման կամ լիցենզիայի պայմանների կոպիտ խախտման կամ

Էներգետիկայի բնագավառում այլ լիցենզավորված անձի օրինական շահերի խախտման կամ լիցենզավորված գործունեության խոչընդոտմանը կամ լիցենզիայի պայմանների չկատարմանը կամ ոչ պատշաճ կատարմանը կամ խոչընդոտել է կարգավորող մարմնի՝ կարգավորման գործառույթների պատշաճ իրականացմանը:

100. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Օրենքի 52.1-ին հոդվածի 2-րդ մասում սահմանված կանխարգելիչ միջոցառումներն իրենց իրավական բնույթով պատասխանատվության միջոցներ չեն, այլ միջոցառումներ են, որոնցից յուրաքանչյուրի ինչպես առանձին, այնպես էլ համակցված կիրառումը, մի կողմից՝ հետապնդում է էներգետիկայի բնագավառում հանրային շահերի առավել համապարփակ պաշտպանությունը՝ հաշվի առնելով էներգետիկայի բնագավառի կարևորությունն ու այդ բնագավառի նկատմամբ պետության՝ ի դեմս Հանձնաժողովի, միջամտության անհրաժեշտությունն ու չափավորությունը (համաչափությունը), մյուս կողմից՝ կոչված է նպաստելու կամ պայմաններ ստեղծելու հարուցված վարույթի պատշաճ իրականացման, վարույթ հարուցելու համար հիմք հանդիսացած իրավախախտումների քննության և հանգամանքների բացահայտման համար:

101. Միաժամանակ «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հանձնաժողովի իրավական ակտերը կարող են բողոքարկվել դատական կարգով, ինչից բխում է, որ բողոքարկելի են նաև կանխարգելիչ միջոցառումների կիրառմանը վերաբերող ակտերը:

102. Ամփոփելով՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Օրենքի 52.1-ին հոդվածի 2-րդ մասում սահմանված կանխարգելիչ միջոցառումները **(1)** նպատակ են հետապնդում, մասնավորապես, կանխել գործունեության լիցենզիա ունեցող անձանց կողմից ոչ իրավաչափ վարքագծի դրսևորումը, ապահովել հարուցված վարչական վարույթի անխոչընդոտ ու բնականոն ընթացքը, ինչպես նաև էներգետիկ համակարգի կայունության ու գործառույթային ամբողջականությունը, էլեկտրաէներգետիկական համակարգի բնականոն և անխափան գործունեության շարունակականությունը, **(2)** կանխարգելիչ միջոցառումների կիրառումը ոչ թե պարտադիր պահանջ է, այլ հարուցվող վարույթի հիմք հանդիսացող իրավախախտումների բնույթով և գործի կոնկրետ հանգամանքներով պայմանավորված նպատակահարմարություն, ինչով և պայմանավորված է կանխարգելիչ միջոցառումների ողջ համակցությունից մեկի կամ մի քանիսի կիրառման իրավական հնարավորություն նախատեսելը, **(3)** կարող են կիրառվել վարչական վարույթի հարուցման պահին կամ դրա իրականացման հետագա ընթացքում, մինչև դրա ավարտը, և դրանց կիրառումը կապ չունի իրավախախտի մեղքի հաստատման հետ, **(4)** ի վերջո, կանխարգելիչ միջոցառումների կիրառումը վարչական վարույթի շրջանակներում համապատասխան անձի սեփականության իրավունքի տարր համարվող օգտագործման (կառավարման) իրավագործությունը ժամանակավոր սահմանափակող միջամտություն է, որը չի խաթարում այդ իրավունքի էությունը:

103. Ելնելով վերոգրյալից՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ Օրենքի 52.1-ին հոդվածի 2-րդ մասով ամրագրված՝ սպառողների շահերի պաշտպանության նպատակով կիրառվող կանխարգելիչ միջոցառումները՝ որպես տնտեսական գործունեության ազատության և սեփականության հիմնական իրավունքներին միջամտություն, սահմանադրաչափ են, հետապնդում են ինչպես ընդհանուր սահմանադրական հիմքեր ունեցող նպատակներ, այնպես էլ կոնկրետ իրավաչափ նպատակներ, բուն սահմանափակումն ամրագրված է ոլորտը կարգավորող օրենքով, որպես օրենսդրական

կարգավորումներ սահմանված են բավարար աստիճանի հստակությամբ, ինչը թույլ է տալիս սահմանափակման հասցեատիրոջը դրան համապատասխանեցնելու իր վարքագիծը, կանխատեսելու Օրենքի պահանջները չկատարելու պարագայում՝ վիճարկվող կարգավորումների ուժով Հանձնաժողովի կողմից կիրարկվող միջոցներն ու դրա արդյունքում վրա հասնող իրավական հետևանքները, ըմբռնելու իրենից ակնկալվող վարքագծի բնույթը և, ըստ այդմ՝ իր վարքագիծը համապատասխանեցնելու օրենսդրական գործող պահանջներին:

104. Սահմանադրական դատարանը, Օրենքի 52.1-ին հոդվածի 1-2-րդ մասերով սահմանված՝ սպառողների շահերի պաշտպանության նպատակով սահմանված և կիրառվող կանխարգելիչ միջոցառումները դիտարկելով Սահմանադրության 78-րդ հոդվածով սահմանված համաչափության սկզբունքի համատեքստում, գտնում է, որ Օրենքով սահմանված կանխարգելիչ միջոցառումները որոշակի իրավախախտումների կատարման կապակցությամբ հարուցված վարչական վարույթի շրջանակներում՝ իրավախախտումների բնույթով և գործի կոնկրետ հանգամանքներով պայմանավորված, կանխարգելիչ նշանակություն ունեցող միջոցառումներ են, որոնք **պիտանի են** հարուցվող վարչական վարույթի անխոչընդոտ ընթացքի ապահովման, անվտանգային ու կենսական նշանակության օբյեկտ հանդիսացող համակարգի անխափան ու բնականոն աշխատանքի երաշխավորման, սպառողների շահերի պաշտպանության, էներգետիկայի բնագավառում ռիսկերի նվազեցման, դրա կայուն ու շարունակական զարգացման ապահովման համար:

105. Վերոնշյալ լեգիտիմ նպատակներից ելնելով՝ Օրենքով սահմանված կանխարգելիչ միջոցառումները որոշակի դեպքերում նաև անհրաժեշտ են սահմանված նպատակներին արդյունավետորեն հասնելու համար, որովհետև դրանց չկիրառելը կարող է լրջագույն սպառնալիքի տակ դնել համակարգի անվտանգությունը կամ հուսալիությունը, կամ հանգեցնել սպառողների լայն շրջանակի իրավունքների կամ օրինական շահերի՝ ընդհուպ անդառնալի հետևանքներով խախտման և այլն:

106. Օրենքի 52.1-ին հոդվածի 2-րդ մասում սահմանված միջոցառումները՝ որպես առանձին կամ համակցված կիրառված կանխիչ նշանակություն ունեցող միջամտություններ, կոչված են, մի կողմից՝ նպաստելու կամ պայմաններ ստեղծելու հարուցված վարույթի պատշաճ իրականացման, վարույթ հարուցելու համար հիմք հանդիսացած իրավախախտումների քննության և հանգամանքների բացահայտման համար, իսկ մյուս կողմից՝ հետապնդում են էներգետիկայի բնագավառում հանրային շահերի առավել համապարփակ պաշտպանությունը՝ հաշվի առնելով էներգետիկայի բնագավառի կարևորությունը, հետևաբար՝ կանխարգելիչ միջոցառումների վերաբերյալ իրավադրույթները համարժեք միջամտություն են տնտեսական գործունեության ազատության և սեփականության հիմնական իրավունքներին:

107. Սահմանադրական դատարանն Օրենքի 52.1-ին հոդվածի 1-2-րդ մասերով սահմանված՝ սպառողների շահերի պաշտպանության նպատակով սահմանված և կիրառվող կանխարգելիչ միջոցառումների՝ Սահմանադրությանը համապատասխանության վերացական ստուգման արդյունքներով գտնում է, որ սահմանված նպատակին հասնելու համար սահմանափակող միջոցները **պիտանի են** և **անհրաժեշտ**, ինչպես նաև սահմանափակվող հիմնական իրավունքի/ազատության նշանակությանը համարժեք:

108. Օրենքի 52.1-ին հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Լիցենզավորված անձի ժամանակավոր կառավարչի նշանակմամբ և նրա գործունեության ամբողջ ընթացքում

նրան են անցնում լիցենզավորված անձի գործադիր մարմնի բոլոր լիազորությունները՝ բացառելով ժամանակավոր կառավարիչ նշանակելու մասին որոշմամբ սահմանված ժամանակահատվածում լիցենզավորված անձի գործադիր մարմնի լիցենզավորված անձի գործադիր կառավարումն իրականացնելը: Լիցենզավորված անձի ժամանակավոր կառավարչի գործունեության ժամանակահատվածում լիցենզավորված անձի կառավարման այլ մարմիններն իրենց իրավասությունները (լիազորությունները) իրականացնում են ժամանակավոր կառավարչի համաձայնությամբ»:

109. Օրենսդրի կողմից նման մոտեցումը նպատակ է հետապնդում համապատասխան կառուցակարգերի ներդրման միջոցով կանխելու գործունեության լիցենզիա ունեցող անձանց կողմից ոչ իրավաչափ վարքագծի դրսևորումը՝ ապահովելով գործունեության լիցենզիա ունեցող անձանց կողմից Օրենքի դրույթները, Հանձնաժողովի ընդունած իրավական ակտերը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքերում հարուցված վարչական վարույթի անխոչընդոտ ընթացքը, ինչն էլ վերջնարդյունքում միտված է էլեկտրաէներգետիկական համակարգի բնականոն և անխափան գործունեության շարունակականության երաշխավորմանը:

110. Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք: Սահմանադրական դատարանը բազմիցս անդրադարձել է արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի սահմանադրաիրավական բովանդակության բացահայտմանը՝ այդ առնչությամբ, մասնավորապես, արտահայտելով ներքոնշյալ իրավական դիրքորոշումները. **(1)** «Անձի դատական պաշտպանության սահմանադրական իրավունքից ածանցվում է պետության պոզիտիվ պարտականությունը՝ ապահովել այն թե՛ նորմասպեղծ, թե՛ իրավակիրառման գործունեություն իրականացնելիս: Դա ենթադրում է, մի դեպքում, օրենսդրի պարտականությունը՝ լիարժեք դատական պաշտպանության հնարավորություն և մեխանիզմներ ամրագրել օրենքներում, մյուս կողմից, իրավակիրառողի պարտականությունը՝ առանց բացառությունների քննարկման ընդունել անձանց՝ օրինական կարգով իրենց ուղղված դիմումները, որոնցով նրանք հայցում են իրավական պաշտպանություն իրենց իրավունքների ենթադրյալ խախտումներից» (2007 թվականի նոյեմբերի 28-ի ՍԴՈ-719 որոշում), **(2)** «(...) դատավարական որևէ առանձնահատկություն կամ ընթացակարգ չի կարող խոչընդոտել կամ կանխել դատարան դիմելու իրավունքի արդյունավետ իրացման հնարավորությունը, իմաստագրվել ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածով երաշխավորված իրավունքը կամ դրա իրացման արգելք հանդիսանալ» (2015 թվականի դեկտեմբերի 22-ի ՍԴՈ-1249 որոշում), **(3)** «Դատարան դիմելու՝ անձի իրավունքի իրացման երաշխավորումն իրավական առաջնահերթ նախապայման է անձի սահմանադրական իրավունքներն ու ազատությունները դատական կարգով պաշտպանելու համար» (2016 թվականի մարտի 10-ի ՍԴՈ-1257 որոշում):

111. Դատական պաշտպանության ինստիտուտն իրավունքի գերակայության կենդանի մարմնավորումն է: Այդ համատեքստում, անդրադառնալով Հանձնաժողովի և դրա նախագահի իրավական ակտերի՝ դատական կարգով բողոքարկման հարցին՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է հետևյալը.

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի՝ «**Վարչական դատարան դիմելու իրավունքը**» վերտառությամբ 3-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձի իրավունքը՝ Օրենսգրքով սահմանված

հիմքերով ու կարգով դիմելու վարչական դատարան, եթե վերջինս համարում է, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կամ դրա պաշտոնատար անձի վարչական ակտով, գործողությամբ կամ անգործությամբ՝

1) խախտվել են կամ անմիջականորեն կարող են խախտվել նրա՝ Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, օրենքներով կամ այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքները և ազատությունները.

2) նրա վրա ոչ իրավաչափորեն դրվել է որևէ պարտականություն.

3) նա վարչական կարգով ոչ իրավաչափորեն ենթարկվել է վարչական պատասխանատվության:

112. Այսպիսով, վարչական դատարանին վարչական մարմինների կողմից ընդունված վարչական ակտերի, ինչպես նաև վերջիններիս կողմից դրսևորված գործողության կամ անգործության նկատմամբ դատական վերահսկողություն իրականացնելու իրավասություն վերապահելը կոչված է ապահովելու մարդու իրավունքների և օրինական շահերի և գործադիր իշխանության գործունեության միջև ողջամիտ հավասարակշռվածություն, ուստի՝ վարչական արդարադատության անկյունաքարային խնդիրներից է, ի թիվս այլնի, նաև ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանությունը հանրային իշխանության, այդ թվում նաև՝ ինքնավար մարմինների և դրանց նախագահների ոչ իրավաչափ գործողություններից (կամ անգործությունից) և որոշումներից:

113. «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի՝ **«Հանձնաժողովի իրավական ակտերի բողոքարկումը»** վերտառությամբ 23-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հանձնաժողովի իրավական ակտերը կարող են բողոքարկվել դատական կարգով: Հատկանշական է, որ Սահմանադրական դատարանը դեռևս 2007 թվականի հունվարի 16-ի ՍԴՈ-673 որոշման շրջանակներում նշել է, որ «(...) հանձնաժողովի որոշման բողոքարկման հարց քննելիս՝ դատական վերահսկողության խնդիրը ոչ թե այդ մարմնի՝ օրենքով սահմանված բացառիկ գործառնությունների կրկնօրինակումն է, մասնավորապես՝ հանրային ծառայությունների սակագների դրույքաչափ սահմանելու, փոփոխելու միջոցով, կամ անկախ գործելու իրավասությամբ օժտված մարմնի գործունեությանը շարունակական և գործառնական վերահսկողությամբ միջամտելը, այլ՝ հիմնվելով հանրային ծառայությունների բնագավառում Հանձնաժողովի սակագնային և լիցենզավորման (գործունեության թույլտվություն տրամադրող) գործունեության, ինչպես նաև սպառողների իրավունքների պաշտպանության սահմանադրաիրավական և օրենսդրական չափանիշների վրա, այդ մարմնի որոշումների՝ այդ թվում նաև սակագների սահմանման վերաբերյալ, օրինականությունը վերահսկելը»:

114. Վերոնշյալի հաշվառմամբ՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ հաշվի առնելով Հանձնաժողովի բացառիկ իրավասությունը՝ էներգետիկայի բնագավառում իրականացնելու լիցենզավորում (տրամադրելու լիցենզիաներ, երկարաձգելու դրանց գործողության ժամկետները, վերաձևակերպելու, կասեցնելու և դադարեցնելու դրանց գործողությունը, ինչպես նաև սահմանելու լիցենզիաների պայմանները, վերահսկելու դրանց կատարումը) և կիրառելու Օրենքով սահմանված պատասխանատվության միջոցները, ինչը ենթադրում է համապատասխան վարույթային որոշումների կայացում, այդ թվում նաև՝ կանխարգելիչ միջոցառումների կիրառում՝ **օրենսդիրը Սահմանադրությամբ երաշխավորված արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի ապահովման համատեքստում նախատեսել է Հանձնաժողովի ու դրա**

նախագահի իրավական ակտերի՝ դատական կարգով բողոքարկման իրավական հնարավորություն:

5.7. Օրենքի 52.1-ին հոդվածի 1-ին մասի 2-րդ նախադասությամբ սահմանված իրավակարգավորման հետադարձ ուժի վերաբերյալ

115. 2025 թվականի հուլիսի 3-ին ընդունված ՀՕ-196-Ն⁴ օրենքով Օրենքը լրացվել է «Սպառողների շահերի պաշտպանության նպատակով կանխարգելիչ միջոցառումների կիրառումը» վերտառությամբ 52.1-ին հոդվածով, որի 1-ին մասի երկրորդ նախադասության համաձայն՝ կանխարգելիչ միջոցառումների կիրառման դեպքում, «**ի թիվս այլնի, հաշվի են առնվում նաև լիցենզավորված անձի կողմից նախկինում կատարված խախտումների քանակը, հաճախականությունը կամ բնույթը**»: Անձի իրավական վիճակի վրա այս իրավակարգավորման բարելավող կամ վատթարացնող ազդեցությունը պարզելու համար Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում Սահմանադրության 73-րդ հոդվածի լույսի ներքո վերհանել Օրենքի 52.1-ին հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ նախադասությունների իրավական բովանդակությունը:

116. Սահմանադրական դատարանն անձի իրավական վիճակը վատթարացնող օրենքների և այլ իրավական ակտերի հետադարձ ուժն արգելող սահմանադրական դրույթի առնչությամբ, մասնավորապես, նշել է, որ այդ իմպերատիվ արգելքը «(...) հանդիսանում է պետական իշխանության նկատմամբ վստահության և իրավական պետության սկզբունքների կարևոր բաղադրատարրերից մեկը: Այդ սկզբունքը միաժամանակ հանդես է գալիս որպես իրավական որոշակիության սկզբունքի ապահովման կարևոր երաշխիք: Օրենքի հետադարձ ուժի մերժման սկզբունքից բխում է այն արգելքը, համաձայն որի՝ անթույլատրելի է այն իրավունքների սահմանափակումը կամ վերացումը, որոնք ամրագրվել են նախկինում գործող նորմերի հիման վրա: Նման պարտավորություն է ստանձնել Հայաստանի Հանրապետությունը մի շարք միջազգային պայմանագրերով» (2008 թվականի հունվարի 15-ի ՍԴՈ-723): Այդ որոշմամբ Սահմանադրական դատարանն արձանագրել է նաև, որ անձի իրավական վիճակը վատթարացնող նորմերի հետադարձ ուժի արգելման սկզբունքից պետության համար ծագում է պարտականություն՝ երաշխավորելու հիմնական իրավունքների առնչությամբ լեգիտիմ ակնկալիքների հանդեպ հարգանքի և իրավական որոշակիության սկզբունքների իրացումը:

117. Սահմանադրական դատարանն արտահայտել է իրավական դիրքորոշում առ այն, որ «Հասարակական հարաբերությունների այդպիսի ընդհանուր սկզբունքով կարգավորումը կանխատեսելի է և իրավաչափ, քանի որ իրավահարաբերությունների սուբյեկտները՝ օժտված լինելով փոխադարձ իրավունքներով ու պարտականություններով և ժամանակի մեջ դրանք գործադրելու իրավազորությամբ, ունակ են ձևավորել նորմատիվ պահանջներին համարժեք լեգիտիմ ակնկալիքներ և դրսևորել համապատասխան վարքագիծ, որը, որպես կանոն, հաջորդում է նախապես կանխորոշված այս կամ այն փաստի ծագմանը (առաջացմանը): Այլ է իրավահարաբերությունների բովանդակությունն այն դեպքերում, երբ օբյեկտիվ պատճառներով առաջացած փաստերի հիմքով այնպես է փոխվում դրանք կարգավորող նորմերի բովանդակությունը, որ անձը,

⁴ ՀՕ-196-Ն օրենքի՝ «Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ» վերտառությամբ 4-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «սույն օրենքով սահմանված կարգավորումները տարածվում են նաև մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը թույլ տրված խախտումների վրա»:

գործելով արդեն իսկ օրենքով կարգավորված հարաբերությունների շրջանակներում, ունենալով որոշակի իրավունքներ և պարտականություններ, օրենքի (նորմի) փոփոխման պարճառով հայտնվում է համեմատաբար ավելի վատթար իրավական վիճակում (...):

(...)

Սահմանադրական դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում, ելնելով իրավունքի գերակայության սկզբունքից, անհրաժեշտ է իրավական ակտի փոփոխության կամ լրացման արդյունքում նոր իրավակարգավորումները ժամանակի մեջ և անձանց նկատմամբ գործողության մեջ դնելու այնպիսի կանոնների պահպանումը, որոնց գործադրմամբ երաշխավորվեն նրանց իրավունքների իրացման իրավաչափ պայմաններ: Դա Սահմանադրության 73-րդ հոդվածի 1-ին մասի համապատասխան առավել կարևոր է հասկանալ այն դեպքերում, երբ խնդիրն առնչվում է հնարավոր փոփոխությունների արդյունքում անձի իրավունքների իրացման պայմանների վատթարացմանը (խստացմանը)» (2018 թվականի դեկտեմբերի 14-ի ՍԴՈ-1437):

118. Օրենքի 52.1-ին հոդվածի 1-ին մասի առաջին նախադասությամբ սահմանված է, որ օրենքի 42-րդ հոդվածի 3, 5 կամ 6-րդ մասերով սահմանված արարքը կատարելու հիմքով վարույթ հարուցելու մասին որոշմամբ Հանձնաժողովի նախագահը կարող է կիրառել կանխարգելիչ միջոցառումներ, իսկ 52.1-ին հոդվածի 2-րդ մասը թվարկում է կիրառվելիք կանխարգելիչ միջոցառումները:

Սահմանադրական դատարանն այս կապակցությամբ մեկ անգամ ևս ուշադրություն է հրավիրում նախորդիվ արդեն պատճառաբանված այն եզրակացության վրա, որ Օրենքի 52.1-ին հոդվածով սահմանված կանխարգելիչ միջոցառումներն իրավական պատասխանատվության միջոցներ չեն: Էներգետիկայի բնագավառում իրավախախտումների օբյեկտիվ կողմի նկարագրությունն ու Հանձնաժողովի կողմից դրանց համար կիրառվող պատասխանատվությունը 2025 թվականի հուլիսի 3-ին ընդունված՝ ««Էներգետիկայի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» ՀՕ-196-Ն օրենքի ընդունմամբ մնացել է անփոփոխ, ինչը նշանակում է, որ նշյալ օրենքով չի սահմանվել անձի իրավական վիճակը վատթարացնող պատասխանատվություն ենթադրող որևիցե դրույթ, այլ ընդամենը սահմանվել է սպառողների շահերի պաշտպանությանն ուղղված կանխարգելիչ միջոցառումների շրջանակ, որոնցից յուրաքանչյուրի կիրառման համաչափության ապահովման համար անհրաժեշտ է հաշվի առնել լիցենզավորված անձի կողմից նախկինում կատարված խախտումների քանակը, հաճախականությունը կամ բնույթը:

119. Մյուս կողմից՝ անհրաժեշտ է նկատի ունենալ, որ ընդհանրապես իրավական պատասխանատվության, ինչպես նաև այդ առնչությամբ վարույթների ընթացքում կանխարգելման կամ խափանման միջոցներ կիրառելու իրավական սկզբունքներից է դրանց անհատականացումը, ինչից հետևում է, որ իրավակիրառը համապատասխան վարույթներով պետք է հնարավորություն ունենա հաշվի առնելու կատարված իրավախախտման բնույթը, խախտողի անձը, մեղմացնող կամ ծանրացնող և այլ հանգամանքները: Թվարկվածներից «**խախտողի անձի**» բնութագրերը ենթադրում են բազմաթիվ հանգամանքներ, ներառյալ՝ «նախկինում կատարված խախտումների քանակը, դրանց հաճախականությունը կամ բնույթը»:

120. Հետևաբար՝ Սահմանադրական դատարանը խնդրո առարկա իրավակարգավորումը դիտարկում է ոչ թե որպես օրենքով սահմանված նոր կարգավորում, որի վրա տարածվում են Սահմանադրության 73-րդ հոդվածի 1-ին մասի երաշխիքները, այլ

անհատականացման սկզբունքի պահանջներից բխող «խախտողի անձ» ընդհանուր հասկացության կոնկրետացում՝ հաշվի առնվելիք հանգամանքների որոշակի շրջանակի սահմանման միջոցով:

121. Վարչական վարույթ հարուցելու համար հիմք հանդիսացած իրավախախտման կոնկրետ առանձնահատկություններով պայմանավորված՝ կարող են ի հայտ գալ բազմաթիվ հանգամանքներ ու գործոններ, որոնք, վարույթի պատշաճության, արդյունավետության, բազմակողմանիության, լրիվության, օբյեկտիվության ապահովման նկատառումներից ելնելով, կպահանջեն օրենքով սահմանված կանխարգելիչ միջոցառումներից մեկի կամ մի քանիսի միաժամանակյա կիրառումը: Այս համատեքստում Օրենքի 52.1-ին հոդվածի 1-ին մասի երկրորդ նախադասությունը հնարավորություն է տալիս, ի թիվս այլնի, հաշվի առնել նաև լիցենզավորված անձի կողմից նախկինում կատարված խախտումների քանակը, հաճախականությունը կամ բնույթը, հետևաբար՝ այն իրավակիրառողից պահանջում է կանխարգելիչ միջոցառումների կիրառման նպատակահարմարության հիմքում դնել (հաշվի առնել) նաև այդ հանգամանքները:

122. Սահմանադրական դատարանը հարկ է համարում ևս մեկ անգամ արձանագրել, որ Օրենքի 52.1-ին հոդվածի 2-րդ մասում թվարկված միջոցառումները կրում են կանխարգելիչ բնույթ, քանի որ դրանցից յուրաքանչյուրի ինչպես առանձին, այնպես էլ համակցված կիրառումը հետապնդում է մեկ միասնական նպատակ՝ երաշխավորել էներգետիկայի բնագավառում հանրային շահերի առավել համապարփակ պաշտպանությունը՝ հաշվի առնելով էներգետիկայի բնագավառի կարևորությունն ու այդ բնագավառի նկատմամբ պետության՝ ի դեմս Հանձնաժողովի նախագահի, միջամտության անհրաժեշտությունն ու չափավորությունը (համաչափությունը), որպիսի պայմանների ապահովմանն էլ միտված է լիցենզավորված անձի կողմից նախկինում կատարված խախտումների քանակը, հաճախականությունը կամ բնույթը հաշվի առնելու օրենսդրական հնարավորությունը:

123. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ Օրենքի 52.1-ին հոդվածի 1-ին մասի 2-րդ նախադասությունն այնքանով, որքանով սահմանում է, որ կանխարգելիչ միջոցառումների կիրառման դեպքում, ի թիվս այլնի, հաշվի են առնվում նաև լիցենզավորված անձի կողմից նախկինում կատարված խախտումների քանակը, հաճախականությունը կամ բնույթը, չի հակասում Սահմանադրության 73-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված՝ անձի իրավական վիճակը վատթարացնող օրենքների և այլ իրավական ակտերի հետադարձ ուժի արգելքի սկզբունքին:

5.8. Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի կոլեգիալության վերաբերյալ

124. Սահմանադրության «Ինքնավար մարմինները» վերտառությամբ 122-րդ հոդվածն ամրագրել է ինքնավար մարմինների ստեղծման և կարգավիճակի հետևյալ տարրերը՝ **(1)** ինքնավար մարմինների ստեղծման միասնական նպատակներն են՝ «հիմնական իրավունքների և ազատությունների իրականացման ապահովումը», ինչպես նաև «Սահմանադրությամբ սահմանված հիմնարար նշանակություն ունեցող հանրային շահերի պաշտպանությունը», **(2)** ինքնավար մարմինների ստեղծման վերաբերյալ օրենքներն ընդունվում են պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ, **(3)** ինքնավար մարմինների անդամները նշանակվում են Ազգային ժողովի

կողմից՝ պատգամավորների ընդհանուր թվի ծայների մեծամասնությամբ, **(4)** ինքնավար մարմիններին օրենքով կարող է վերապահվել ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր ընդունելու իրավասություն, **(5)** ինքնավար մարմինների լիազորությունները, անկախության երաշխիքները, անդամներին ներկայացվող պահանջները և գործունեության կարգը սահմանվում են օրենքով:

125. Նշված սահմանադրական չափորոշիչն համապատասխան՝ «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 4-րդ հոդվածը հանրային ծառայությունների ոլորտում իրականացվող կարգավորումը բնորոշում է որպես պետական քաղաքականության մի մաս «(...)», որի նպատակն է կարգավորող մարմնի կողմից օրենքներով սահմանված իր իրավասությունների իրականացմամբ ոլորտային ռազմավարական քաղաքականությանը համահունչ հավասարակշռել սպառողների և հանրային ծառայությունների ոլորտում կարգավորվող գործունեություն իրականացնող անձանց (այսուհետ՝ կարգավորվող անձինք) շահերը, կարգավորվող անձանց համար ստեղծել գործունեության միատեսակ պայմաններ, նպաստել մրցակցային շուկաների ձևավորմանն ու զարգացմանը և խթանել ռեսուրսների արդյունավետ օգտագործումը»:

126. Ինքնավար մարմինների ստեղծման և գործունեության սահմանադրական վերոբերյալ կարգավորումներին համապատասխան՝ «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը սահմանում են, որ հանրային ծառայությունների ոլորտում կարգավորումն իրականացնում է Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը, որը՝ որպես ինքնավար պետական մարմին, ստեղծվում է օրենքով սահմանված կարգով և գործում է Սահմանադրությանը և «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքին և այլ իրավական ակտերին համապատասխան ու ինքնուրույն է իր իրավասություններն իրականացնելիս:

127. Հանձնաժողովի ինքնավարության և անկախության երաշխավորման համար «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքը նախատեսել է Հանձնաժողովի կազմավորման, գործունեության կազմակերպագործառնական, իրավասությունների իրականացման, ֆինանսական տարատեսակ երաշխիքների համակարգ:

128. Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ Հանձնաժողովի կազմավորման և իրավասության իրականացման գործընթացում կոլեգիալության սկզբունքի դրսևորման և իրավական բովանդակության առանձնահատկություններին՝ ելնելով Դիմողի բարձրացրած խնդիրների և այդ առնչությամբ ներկայացված հիմնավորումների բովանդակությունից:

129. Սահմանադրական դատարանն ընդգծում է, որ Սահմանադրության 122-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ ինքնավար մարմինների գործունեության կարգը սահմանվում է օրենքով, ինչից հետևում է, որ ինքնավար մարմինների, տվյալ դեպքում՝ Հանձնաժողովի գործունեության կարգի սահմանումը գտնվում է օրենսդրի՝ Ազգային ժողովի իրավասության տիրույթում: «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի առաջին նախադասության համաձայն՝ Հանձնաժողովը կազմված է հինգ անդամից՝ Հանձնաժողովի նախագահ և չորս անդամ, իսկ 14-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ Հանձնաժողովն օրենքով վերապահված իրավասությունների սահմաններում ընդունում է որոշումներ՝ նիստում, իսկ հիշյալ օրենքով նախատեսված դեպքերում՝ գրավոր քվեարկությամբ:

130. Ինքնավար մարմնի կոլեգիալությանն առնչվող օրենսդրական կարգավորումների սահմանադրականության գնահատման համար էական նշանակություն ունի

ինքնավար մարմնի կողմից ընդունվող որոշումների բնույթն ու տեսակը: Ինքնավար մարմնի կողմից ընդունվող որոշման՝ այդ մարմնի գործունեության ընթացակարգային/վարութային կառուցակարգում ունեցած տեղից ու իրավաբանական նշանակությունից է կախված այն հարցի պատասխանը, թե արդյո՞ք տվյալ իրավակարգավորումը հակասում է ինքնավար մարմնի կազմավորման ու գործունեության (որոշումների ընդունման) կոլեգիալության սկզբունքին, թե՞ ոչ:

131. Վարութային որոշումները, ըստ վերջիններիս ընդունման ժամանակի և գործով հետագա ընթացքի վրա ազդեցության (որոշակի վարութներում նաև նյութաիրավական վեճի լուծման հետ փոխկապվածության), լինում են նախնական (սկզբնական), միջանկյալ և վերջնական կամ եզրափակիչ որոշումներ: Նախնական վարութային որոշումները սկզբնավորում են վարութը, միջանկյալներն ընդունվում են վարութի որոշակի փուլի շրջանակում՝ նախապատրաստող, ապահովող կամ կազմակերպական պայմաններ ստեղծելով վարութը եզրափակելու համար: Վերջնական կամ եզրափակիչ վարութային ակտերն ավարտում են վարութը (լուծում են գործն ըստ էության): Վարութային որոշումների հիշյալ տեսակները կարևոր նշանակություն ունեն դրանց ընդունման կարգի սահմանադրականության գնահատման մեթոդաբանության համար:

132. «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի՝ **«Հանձնաժողովի որոշումները»** վերտառությամբ 14-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հանձնաժողովն օրենքով վերապահված իրավասությունների սահմաններում ընդունում է հետևյալ որոշումները՝ **ենթաօրենսդրական նորմատիվ, անհատական, ներքին իրավական ակտեր:** Թվարկելով Հանձնաժողովի ընդունած վերջնական որոշումների տեսակները՝ հիշյալ օրենքի 14-րդ հոդվածը սահմանում է դրանց ընդունման կարգը, այն է՝ նիստում կամ գրավոր քվեարկությամբ, այսինքն՝ այդ իրավակարգավորումները վերաբերում են միայն եզրափակիչ որոշումների քվեարկությամբ (նիստում կամ գրավոր) ընդունմանը:

133. «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 42-րդ հոդվածի 3, 5 կամ 6-րդ մասերով սահմանված արարքը կատարելու հիմքով վարչական վարութ հարուցելու և Օրենքի 52.1-ին հոդվածի 2-րդ մասով սահմանված կանխարգելիչ միջոցառումները կիրառելու իրավասությունը Հանձնաժողովի նախագահին վերապահելու օրենսդրական ընդհանուր հիմքը «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետն է, համաձայն որի՝ Հանձնաժողովի նախագահին իրավասու է «իրականացնել օրենքով իրեն վերապահված այլ լիազորություններ»:

134. Վարչական վարութ հարուցելու և կանխարգելիչ միջոցառումներ կիրառելու մասին Հանձնաժողովի նախագահի որոշումներն ընդունվում են այն բացառիկ իրավիճակներում, երբ «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 36-րդ հոդվածի 9-րդ մասով սահմանված կարգով Կառավարության լիազոր մարմնի կողմից ներկայացվում է հաղորդում, որով առերևութ հիմնավորվում է, որ վտանգվել է կամ կարող է վտանգվել Էներգետիկայի բնագավառի բաղկացուցիչ համակարգի անվտանգությունը կամ հուսալիությունը, կամ հավանական խախտումը հանգեցրել է կամ կարող է հանգեցնել մի խումբ սպառողների իրավունքների կամ օրինական շահերի խախտման կամ լիցենզիայի պայմանների կոպիտ խախտման և որպիսի հետևանքների կանխումն անհրաժեշտաբար պահանջում է անհապաղ միջամտություն:

135. Սահմանադրական դատարանը փաստում է, որ թեև քննարկվող դեպքում վարչական վարույթ հարուցող և կանխարգելիչ միջոցառումներ կիրառող իրավասու սուբյեկտը Հանձնաժողովի նախագահն է, այդուհանդերձ, վերջինիս կողմից՝ վարչական վարույթ հարուցելու որոշման հիմքում ընկած առերևույթ իրավախախտման վերաբերյալ հիմնավորումների ու փաստերի առնչությամբ իրականացվող վարույթի ընթացիկ և եզրափակիչ փուլերն ամբողջությամբ գտնվում են Հանձնաժողովի կողեգիալ կազմի իրավասության տիրույթում: Այլ կերպ՝ Հանձնաժողովի նախագահի կողմից հարուցված վարչական վարույթի «ճակատագիրը» որոշվում է բացառապես Հանձնաժողովի կողեգիալ կազմով, ինչը ենթադրում է նաև Հանձնաժողովի նախագահի կողմից հարուցված վարչական վարույթը՝ համապատասխան օրենսդրական հիմքերի առկայության պարագայում, Հանձնաժողովի կողմից կարճելու տարբերակը:

136. Սահմանադրական դատարանն ուշադրություն է հրավիրում նաև այն հանգամանքի վրա, որ «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասով ամրագրված «հնարավոր իրավախախտման վերաբերյալ հաղորդում», 9-րդ մասով՝ «առերևույթ հիմնավորում», «հավանական խախտում» ձևակերպումները չեն կարող առաջացնել իրավակարգավորման անորոշության խնդիրներ Սահմանադրության 79-րդ հոդվածի համատեքստում: Այդ ձևակերպումները շեշտադրում են այն հանգամանքը, որ Կառավարության լիազոր մարմնի հաղորդմամբ առաջ քաշված իրավախախտման հիմնավորումներն ընդամենը նախնական և ենթադրվող վարկած են, որոնց առկայությունը կամ բացակայությունը հաստատվելու է բացառապես Հանձնաժողովի կողմից՝ վարույթի ըստ էության քննության փուլում և արձանագրվելու է Հանձնաժողովի վերջնական (եզրափակիչ) որոշման մեջ:

137. Վերոգրյալի հիման վրա՝ Սահմանադրական դատարանը եզրահանգում է, որ «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 36-րդ հոդվածի 9-րդ մասն այնքանով, որքանով Հանձնաժողովի նախագահին վերապահում է Կառավարության լիազոր մարմնի հաղորդման հիման վրա վարչական վարույթ հարուցելու և համապատասխան դեպքերում կանխարգելիչ միջոցառումներ կիրառելու լիազորություն, համահունչ է Սահմանադրության 122-րդ հոդվածին:

138. Ամփոփելով՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ «Էներգետիկայի մասին» օրենքի 17-րդ հոդվածի «գ» կետը, 27-րդ հոդվածի 2.1-ին մասը, 52.1-ին հոդվածի 1-3-րդ մասերը, «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 36-րդ հոդվածի 9-րդ մասը՝ Դիմողի ներկայացրած հիմնավորումների շրջանակում Սահմանադրությանը համապատասխանության վերացական ստուգման արդյունքներով, համապատասխանում են Սահմանադրությանը: Միևնույն ժամանակ, խնդրո առարկա նորմերի՝ կոնկրետ գործերի շրջանակներում մեկնաբանությունը եռաստիճան դատական համակարգի դատարանների իրավասության տիրույթում է: Այս առումով Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ իրավակիրառ պրակտիկան պետք է զարգանա սույն որոշման մեջ տեղ գտած իրավական դիրքորոշումներին համահունչ:

Ելնելով գործի քննության արդյունքներից և հիմք ընդունելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետը, 169-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը, 170-րդ հոդվածի 1-ին և 5-րդ մասերը, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 68-րդ հոդվածները՝ Սահմանադրական դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց .

1. «Էներգետիկայի մասին» օրենքի 17-րդ հոդվածի «գ» կետը համապատասխանում է Սահմանադրությանը:
2. «Էներգետիկայի մասին» օրենքի 27-րդ հոդվածի 2.1-ին մասը համապատասխանում է Սահմանադրությանը:
3. «Էներգետիկայի մասին» օրենքի 52.1-ին հոդվածի 1-ին, 2 և 3-րդ մասերը համապատասխանում են Սահմանադրությանը:
4. «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 36-րդ հոդվածի 9-րդ մասը համապատասխանում է Սահմանադրությանը:
5. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Ա. ԴԻԼԱՆՅԱՆ

12 մարտի 2026 թվականի
ՍԴՈ-1819

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ «ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ
ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԹՎԻ ԱՌՆՎԱԶՆ ՄԵԿ ՀԻՆԳԵՐՈՐԴԻ
ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ 17-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ
«Գ» ԿԵՏԻ, 27-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 2.1-ԻՆ ՄԱՍԻ, 52.1-ԻՆ ՀՈԴՎԱԾԻ
1-3-ՐԴ ՄԱՍԵՐԻ ԵՎ «ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՄԱՐՄՆԻ
ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ 36-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 9-ՐԴ ՄԱՍԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾՈՎ 2026
ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 12-ԻՆ ԿԱՅԱՑՎԱԾ ՍԴՈ-1819 ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Սահմանադրական դատարանը, դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննելով «Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդի դիմումի հիման վրա՝ «Էներգետիկայի մասին» օրենքի 17-րդ հոդվածի «գ» կետի, 27-րդ հոդվածի 2.1-ին մասի, 52.1-ին հոդվածի 1-3-րդ մասերի և «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 36-րդ հոդվածի 9-րդ մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը, 2026 թվականի մարտի 12-ի ՍԴՈ-1819 որոշմամբ (հրապարակվել է 2026 թվականի մարտի 16-ին) որոշել է.

1. «Էներգետիկայի մասին» օրենքի 17-րդ հոդվածի «գ» կետը համապատասխանում է Սահմանադրությանը:

2. «Էներգետիկայի մասին» օրենքի 27-րդ հոդվածի 2.1-ին մասը համապատասխանում է Սահմանադրությանը:

3. «Էներգետիկայի մասին» օրենքի 52.1-ին հոդվածի 1-ին, 2 և 3-րդ մասերը համապատասխանում են Սահմանադրությանը:

4. «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 36-րդ հոդվածի 9-րդ մասը համապատասխանում է Սահմանադրությանը (...):

Համաձայն չլինելով Սահմանադրական դատարանի 2026 թվականի մարտի 12-ի ՍԴՈ-1819 որոշմանը՝ Սահմանադրական դատարանի դատավոր Ե. Խունդկարյանս շարադրում են դրա վերաբերյալ իմ հատուկ կարծիքը՝ որոշման պատճառաբանական և եզրափակիչ մասերի վերաբերյալ:

Նախքան հատուկ կարծիքի պատճառաբանություններին անդրադառնալը՝ հարկ եմ համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Սահմանադրական դատարանի դատավորը պարտավոր է մասնակցել քվեարկությանը և քվեարկել կողմ կամ դեմ Սահմանադրական դատարանի համապատասխան որոշման կամ եզրակացության ընդունմանը: Նույն հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-4-րդ և 7-րդ կետերով նախատեսված հարցերով որոշում կամ եզրակացություն ընդունելու օրվան հաջորդող տասնօրյա ժամկետում Սահմանադրական դատարանի դատավորը կարող է ներկայացնել հատուկ կարծիք որոշման կամ եզրակացության ինչպես եզրափակիչ, այնպես էլ պատճառաբանական մասի վերաբերյալ, որն անհապաղ հրապարակվում է Սահմանադրական դատարանի պաշտոնական կայքէջում, ինչպես նաև հրապարակվում

է նորմատիվ իրավական ակտերի պաշտոնական հրապարակման օրենքով սահմանված կարգով և Սահմանադրական դատարանի տեղեկագրում:

Վերոգրյալ հոդվածի բովանդակությունից հետևում է, որ Սահմանադրական դատարանի կողմից որոշումներ և եզրակացություններն ընդունելիս քվեարկությանը մասնակցելը և Սահմանադրական դատարանի համապատասխան որոշման կամ եզրակացության ընդունմանը կողմ կամ դեմ քվեարկելը Սահմանադրական դատարանի դատավորի պարտականությունն է:

Հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտերի՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերի քննության արդյունքում Սահմանադրական դատարանի կողմից ընդունվող որոշումների (դրանցում արտահայտվող իրավական դիրքորոշումների) նշանակությունը իրավաստեղծ և իրավակիրառ պրակտիկայի համար՝ հանրությանը պետք է հասանելի լինեն այդպիսի գործով ընդունված որոշմանը Սահմանադրական դատարանի դատավորի անհամաձայնության պատճառները, իսկ օրենքով սահմանված է Սահմանադրական դատարանի դատավորի՝ ընդունված որոշումից տարբերվող դիրքորոշումը պաշտոնապես ներկայացնելու մեկ եղանակ՝ հատուկ կարծիք շարադրելը: Հետևաբար կարծում եմ, որ նշված գործերի քննության արդյունքում համապատասխան որոշման ընդունմանը դեմ քվեարկելու փաստից ուղղակիորեն բխում է հատուկ կարծիք ներկայացնելու՝ իմ՝ որպես Սահմանադրական դատարանի դատավորի պարտականությունը, ինչով էլ պայմանավորված ներկայացնում եմ իմ հատուկ կարծիքը:

1. Անդրադառնալով «Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդի դիմումի հիման վրա՝ «Էներգետիկայի մասին» օրենքի 17-րդ հոդվածի «գ» կետի, 27-րդ հոդվածի 2.1-ին մասի, 52.1-ին հոդվածի 1-3-րդ մասերի և «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 36-րդ հոդվածի 9-րդ մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով Սահմանադրական դատարանի կայացրած որոշման պատճառաբանություններին և եզրահանգմանը, հարկ եմ համարում նշել հետևյալը.

Նախևառաջ, կարևորելով էներգետիկայի ոլորտի նշանակությունը ժամանակակից պետության տնտեսական զարգացման, հասարակական կյանքի կազմակերպման և ազգային անվտանգության ապահովման տեսանկյունից, որի իրավական կարգավորումը պայմանավորված է ոչ միայն տնտեսական շրջանառության տրամաբանությամբ, այլև հանրային անվտանգության, սոցիալական արդարության, շրջակա միջավայրի պաշտպանության և պետական ինքնիշխանության ապահովման առաջնահերթություններով, հայտնում եմ համաձայնությունս Սահմանադրական դատարանի 2026 թվականի մարտի 12-ի ՍԴՈ-1819 որոշման եզրափակիչ մասի 1-ին և 2-րդ կետերին և դրանց վերաբերյալ ներկայացված պատճառաբանություններին: Միաժամանակ, հայտնում եմ անհամաձայնությունս (սույն հատուկ կարծիքում նշված որոշակի դեպքերում նաև մասնակի անհամաձայնությունս) նշված որոշման 3-րդ և 4-րդ կետերի մասով, որոնց վերաբերյալ դիրքորոշումս կներկայացնեմ ստորև.

ԲԱԺԻՆ I

1.1. «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 36-րդ հոդվածի 9-րդ մասի, ինչպես նաև «Էներգետիկայի մասին» օրենքի 52.1-ին հոդվածի 1-ին և 2-րդ մասերի վերաբերյալ.

Վերոնշյալ դրույթների սահմանադրականության հարցն անհրաժեշտ են համարում քննարկման առարկա դարձնել Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ նաև՝ Հանձնաժողով) նախագահի իրավասությունը՝ միանձնյա կարգով վարչական վարույթ հարուցելու և կանխարգելիչ միջոցառումներ կիրառելու՝ Սահմանադրության 122-րդ հոդվածով ամրագրված՝ ինքնավար մարմինների գործունեության սահմանադրաիրավական հիմքը կազմող կոլեգիալության սկզբունքի երաշխավորման համատեքստում:

Այսպես՝ Սահմանադրության 4-րդ հոդվածն ամրագրում է իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքը, որը ժողովրդավարական, իրավական պետությունում հանրային իշխանության կազմակերպման հիմնարար սկզբունքներից է:

Իշխանությունների բաժանման գործառույթային և ինստիտուցիոնալ համակարգում ուրույն դեր ունեն ինքնավար մարմինները, որոնց գործունեությունը միտված է ապահովել առանձին հանրային նշանակություն ունեցող ոլորտների անկախ և արդյունավետ կարգավորումը:

Սահմանադրության՝ «Ինքնավար մարմինները» վերտառությամբ 122-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների իրականացումն ապահովելու, ինչպես նաև Սահմանադրությամբ սահմանված հիմնարար նշանակություն ունեցող հանրային շահերի պաշտպանության նպատակով պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ ընդունված օրենքով կարող են ստեղծվել ինքնավար մարմիններ:

Վերոնշյալ դրույթից հետևում է, որ սահմանադիրն ինքնավար մարմինների ձևավորման սահմանադրաիրավական առաքելությունը պայմանավորել է երկու նպատակներով, այն է՝ (1) մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների իրականացման ապահովմամբ, ինչպես նաև (2) Սահմանադրությամբ սահմանված հիմնարար նշանակություն ունեցող հանրային շահերի պաշտպանությամբ: Սահմանադիրը միաժամանակ սահմանել է, որ ինքնավար մարմինների անդամները նշանակվում են պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ, և այդ մարմինների լիազորությունները, անկախության երաշխիքները, անդամներին ներկայացվող պահանջները և գործունեության կարգը սահմանվում են օրենքով¹:

Սահմանադրության 122-րդ հոդվածի իմաստով՝ ինքնավար մարմին է հանդիսանում նաև Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող Հանձնաժողովը, որի ստեղծման և գործունեության կարգը, լիազորությունները և անկախության երաշխիքները սահմանվել են «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքով:

Հանրային ծառայությունների ոլորտում կարգավորումն իրականացնող Հանձնաժողովի ձևավորումը նպատակ է հետապնդում ապահովել Սահմանադրությամբ սահմանված հիմնարար նշանակություն ունեցող հանրային շահերի պաշտպանությունը: Ըստ «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի՝ նշված ոլորտն

¹ Սահմանադրության 122-րդ հոդվածի 2-րդ և 4-րդ մասեր:

իր մեջ ներառում է, ի թիվս այլնի, նաև էներգետիկայի բնագավառը, որը ներառում է էլեկտրաէներգետիկական, ջերմամատակարարման, գազամատակարարման համակարգերը²: Հանրային ծառայությունների ոլորտում կարգավորումը պետական քաղաքականության մի մասն է, որի նպատակն է կարգավորող մարմնի կողմից օրենքներով սահմանված իր իրավունքների և պարտականությունների իրականացմամբ հավասարակշռել սպառողների և հանրային ծառայությունների ոլորտում կարգավորվող գործունեություն իրականացնող անձանց շահերը, կարգավորվող անձանց համար ստեղծել գործունեության միատեսակ պայմաններ, նպաստել մրցակցային շուկաների ձևավորմանն ու զարգացմանը և խթանել ռեսուրսների արդյունավետ օգտագործումը³:

Սահմանադրության 122-րդ հոդվածի 2-րդ մասից և «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի կարգավորումներից հետևում է, որ Հանձնաժողովը կազմված է հինգ անդամից՝ հանձնաժողովի նախագահից և չորս անդամից, ովքեր նշանակվում են Ազգային ժողովի կողմից՝ հինգ տարի ժամկետով⁴: Այսինքն՝ Հանձնաժողովի նախագահը և մյուս անդամները նշանակվում են նույն սահմանադրաիրավական ընթացակարգով և ունեն համահավասար սահմանադրաիրավական կարգավիճակ: Բացի այդ, նշված ինքնավար պաշտոնների թեկնածուներն առաջադրվում են տարբեր սուբյեկտների կողմից՝ Կառավարության, Ազգային ժողովի կառավարող և ընդդիմադիր խմբակցությունների կողմից⁵:

«Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի կարգավորումներից հետևում է, որ Հանձնաժողովը, ի թիվս այլնի, ընդունում է նաև որոշումներ, իսկ այդ որոշումները համարվում են ընդունված, եթե դրանց կողմ է քվեարկել հանձնաժողովի առնվազն երեք անդամ⁶: Միաժամանակ սահմանվում է, որ Հանձնաժողովը՝ որպես ինքնավար պետական մարմին, **ինքնուրույն է** իր իրավասություններն իրականացնելիս⁷: Իսկ որպես կարգավորման հիմնական սկզբունք, ի թիվս այլնի, նախատեսվել է նաև կարգավորող մարմնի որոշումների ընդունման **կոլեգիալությունը և անկախությունը**⁸:

Այսպիսով, ելնելով Հանձնաժողովի գործառության և ինստիտուցիոնալ առանձնահատկությունների վերաբերյալ սահմանադրի և օրենսդրի կողմից նախատեսված դրույթների համալիր բովանդակությունից՝ գտնում են, որ Հանձնաժողովի գործունեության հիմքը կազմում է կոլեգիալության սկզբունքը, որը կոչված է ապահովելու հանրային նշանակություն ունեցող գործառույթների արդյունավետ իրականացումը՝ սուբյեկտիվիզմի ու կամայականությունների դրսևորման բացառման, բազմակարծության, օբյեկտիվիզմի բարձր մակարդակի երաշխավորման պայմաններում:

² տե՛ս՝ «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը:

³ տե՛ս՝ «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասը:

⁴ «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 7-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասեր:

⁵ «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մաս:

⁶ «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասեր:

⁷ տե՛ս՝ «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը:

⁸ տե՛ս՝ «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը:

Սահմանադրական դատարանն իր՝ 2017 թվականի նոյեմբերի 10-ի ՍԴՈ-1384 որոշմամբ, անդրադառնալով «կոլեգիալություն» եզրույթի սահմանադրաիրավական բովանդակության բացահայտմանը, արձանագրել է հետևյալը. «(...) կոլեգիալությունը կառավարման սկզբունք է, որի պայմաններում ղեկավարումն իրականացվում է մի խումբ լիազորված անձանց կողմից: Կոլեգիալության կարգով որոշումների կայացումը ենթադրում է կարծիքների նախնական քննարկում և կոլեկտիվ քննարկման արդյունքում պաշտոնական փաստաթղթի մշակում ու ընդունում:

(...) Կոլեգիալ կառավարման անհրաժեշտությունը, մասնավորապես, նպատակ ունի բազմակարծության ապահովման (2015թ. փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 8-րդ հոդված), սուբյեկտիվիզմի և կամայականության հաղթահարման, ինչպես նաև հանրության օբյեկտիվ շահերի առավել արտահայտման միջոցներով երաշխավորել տվյալ մարմնի առջև Սահմանադրությամբ և օրենքներով առաջադրված հանրային կարևորություն ունեցող գործառույթների արդյունավետ իրականացումը»:

Այսպիսով, գտնում եմ, որ կոլեգիալության սկզբունքը հանդիսանում է որպես ինքնավար մարմինների ինքնավարության, գործունեության արդյունավետության և հաշվետվողականության ապահովման կարևոր երաշխիք: Այն ապահովում է, որ տվյալ մարմնի ընդունած որոշումները ձևավորվեն անդամների համատեղ քննարկման արդյունքում՝ արտահայտելով ոչ թե առանձին անդամի, այլ մարմնի հավաքական կամքը:

Ուստի և՛ սահմանադրի, և՛ օրենսդրի կողմից այս սկզբունքի ամրագրման կարևորությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ Հանձնաժողովին վերապահված են հանրային նշանակություն ունեցող այնպիսի կարևոր լիազորություններ, որոնց իրականացումը պահանջում է բազմակողմանի և հավասարակշռված ինստիտուցիոնալ մոտեցում: Հետևաբար Հանձնաժողովի լիազորությունների իրականացումը չի կարող պայմանավորված լինել առանձին պաշտոնատար անձի կամքով կամ միանձնյա որոշմամբ: Հակառակ մոտեցումը կարող է հանգեցնել այնպիսի իրավիճակի, երբ հանրային նշանակություն ունեցող որոշումների ընդունումը կախված կլինի մեկ անձի կամքից՝ նվազեցնելով որոշումների նկատմամբ հանրային վստահությունը: Ուստի Հանձնաժողովի գործունեության, այդ թվում՝ որոշումների կայացման առնչությամբ կոլեգիալության սկզբունքի սահմանումը ձևավորում է զսպումների և հակակշիռների ներքին մեխանիզմ, որի միջոցով կանխվում է կամայականությունների դրսևորումը և ապահովվում է Հանձնաժողովի գործունեության նկատմամբ հանրային վստահությունը:

Վերոգրյալից ելնելով՝ գտնում եմ, որ Հանձնաժողովի գործունեության, այդ թվում՝ որոշումների կայացման ընթացակարգերի վերաբերյալ օրենսդրական կարգավորումները պետք է ապահովեն կոլեգիալության սկզբունքի արդյունավետ իրացումը: Մասնավորապես՝ օրենսդիրը պետք է Հանձնաժողովի գործունեության, այդ թվում՝ որոշումների կայացման ընթացակարգերի վերաբերյալ համապատասխան կարգավորումները սահմանի այնպես, որ այն որոշումները, որոնք իրենց բնույթով լիցենզավորված անձի իրավունքների նկատմամբ առաջացնում են ինտենսիվ միջամտություն, ընդունվեն կոլեգիալ քննարկման և քվեարկության արդյունքում: Նման մոտեցումը մի կողմից՝ կապահովի Հանձնաժողովի անդամների հավասար մասնակցությունը որոշումների կայացման գործընթացին, իսկ մյուս կողմից՝ կկանխի այնպիսի իրավիճակների առաջացումը, երբ լիցենզավորված անձի իրավունքների նկատմամբ ինտենսիվ միջամտություն առաջացնող որոշումների ընդունումը կարող է կախված լինել միայն մեկ անձի հայեցողությունից:

Վերոնշյալ դիրքորոշումների համատեքստում անդրադառնալով վիճարկվող դրույթներից «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 36-րդ հոդվածի 9-րդ մասի սահմանադրականությանը՝ հարկ եմ համարում արձանագրել հետևյալը.

Նշված օրենքի 36-րդ հոդվածի 9-րդ մասի 1-ին նախադասության համաձայն՝ **կառավարության լիազոր մարմնի հաղորդման առկայության դեպքում**, որով առերևույթ հիմնավորվում է, որ վտանգվել է կամ կարող է վտանգվել էներգետիկայի բնագավառի բաղկացուցիչ համակարգի անվտանգությունը կամ հուսալիությունը, կամ հավանական խախտումը հանգեցրել է կամ կարող է հանգեցնել մի խումբ սպառողների իրավունքների կամ օրինական շահերի խախտման կամ լիցենզիայի պայմանների կոպիտ խախտման, **հանձնաժողովի նախագահի նախաձեռնությամբ անհապաղ, բայց ոչ ուշ, քան հաղորդումը ստանալուց հետո՝ հինգօրյա ժամկետում, հարուցվում է վարչական վարույթ:**

Վերոնշյալ դրույթի բովանդակությունից հետևում է, որ Հանձնաժողովի նախագահին չի վերապահվում հայեցողական լիազորություն՝ ինքնուրույն որոշելու վարչական վարույթ հարուցելու նպատակահարմարությունը կամ անհրաժեշտությունը: Իրավակարգավորման տրամաբանությունից հետևում է, որ վարչական վարույթի հարուցումը պայմանավորված է կոնկրետ իրավաբանական փաստի, այն է՝ կառավարության լիազոր մարմնի հաղորդման առկայությամբ: Այլ կերպ ասած՝ հաղորդման ներկայացումը օրենքով նախատեսված այն նախապայմանն է, որի առկայության դեպքում վարույթի հարուցումը դառնում է պարտադիր պահանջ: Ուստի գտնում եմ, որ Հանձնաժողովի նախագահի կողմից վարչական վարույթի հարուցումը տվյալ դեպքում կրում է ոչ թե հայեցողական, այլ պարտադիր բնույթ: Հանձնաժողովի նախագահը հանդես է գալիս ոչ թե որպես ինքնուրույն որոշում կայացնող սուբյեկտ, այլ որպես օրենքով նախատեսված ընթացակարգի իրականացումն ապահովող պաշտոնատար անձ, որի գործողությունը պայմանավորված է օրենքով սահմանված կոնկրետ իրավաբանական փաստի առկայությամբ: Բացի այդ, հարկ եմ համարում ընդգծել, որ տվյալ դրույթը սահմանում է նաև հստակ ժամկետ վարչական վարույթ հարուցելու որոշման կայացման համար, այն է՝ հաղորդումը ստանալուց հետո անհապաղ, սակայն ոչ ուշ, քան հինգօրյա ժամկետում: Գտնում եմ, որ նման ժամկետային սահմանափակումը ևս վկայում է այն մասին, որ օրենսդիրը նախագահի առջև դրել է ոչ թե գնահատողական կամ ընտրության հնարավորություն պարունակող լիազորություն, այլ իրավական պարտականություն՝ ապահովելու օրենքով նախատեսված ընթացակարգի գործարկումը:

Հետևաբար՝ «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 36-րդ հոդվածի 9-րդ մասի՝ կառավարության լիազոր մարմնի հաղորդման առկայության դեպքում Հանձնաժողովի նախագահի կողմից կայացված միանձնյա որոշմամբ վարչական վարույթ հարուցվելու կարգավորման՝ Սահմանադրությանը համապատասխանելու մասով կիսում եմ Սահմանադրական դատարանի եզրափակիչ եզրահանգումը, բայց վերը նշված իմ պատճառաբանությունների հիմքով:

Մինչդեռ, իմ գնահատմամբ, այլ է իրավիճակը «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 36-րդ հոդվածի 9-րդ մասի մյուս կարգավորման և «էներգետիկայի մասին» օրենքի 52.1-ին հոդվածի 1-ին և 2-րդ մասերի պարագայում:

Մասնավորապես՝ «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 36-րդ հոդվածի 9-րդ մասի 2-րդ նախադասությամբ սահմանվում է, որ վարչական վարույթ հարուցելու մասին որոշմամբ կարող են կիրառվել «Էներգետիկայի մասին» օրենքի 52.1-ին հոդվածով սահմանված կանխարգելիչ միջոցառումները: Իսկ «Էներգետիկայի մասին» օրենքի 52.1-ին հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ նույն օրենքի 42-րդ հոդվածի 3-րդ⁹, 5-րդ¹⁰ կամ 6-րդ¹¹ մասերով սահմանված արարքը կատարելու հիմքով վարույթ հարուցելու մասին որոշմամբ **հանձնաժողովի նախագահը կարող է կիրառել կանխարգելիչ միջոցառումներ**: Կանխարգելիչ միջոցառումների կիրառման դեպքում, ի թիվս այլնի, հաշվի են առնվում նաև լիցենզավորված անձի կողմից նախկինում կատարված խախտումների քանակը, հաճախականությունը կամ բնույթը:

Նույն հոդվածի 2-րդ մասը մասնավորեցնում է, որ նույն հոդվածով սահմանված կարգով հանձնաժողովի նախագահը իրավասու է կիրառելու հետևյալ կանխարգելիչ միջոցառումներից մեկը կամ մի քանիսը միասին.

1) սահմանել առերևույթ խախտումների կամ դրանց հետևանքների վերացման ծրագիր և լիցենզավորված անձից պահանջել իրականացնել դրանով սահմանված միջոցները.

2) հրավիրել լիցենզավորված անձի կառավարման մարմինների նիստեր (ժողովներ)՝ հանձնաժողովի նախագահի սահմանած օրակարգով.

⁹ «Էներգետիկայի մասին» օրենքի 42-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզիա ունեցող անձի կողմից, բացառությամբ սույն հոդվածի 7-րդ մասով սահմանված անձանց, սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված արարքը կատարելը, որի հետևանքով վտանգվել է կամ կարող էր վտանգվել համակարգի անվտանգությունը կամ հուսալիությունը, կամ այն ուղակիորեն հանգեցրել է մի խումբ սպառողների իրավունքների կամ օրինական շահերի խախտման կամ լիցենզիայի պայմանների կոպիտ խախտման կամ էներգետիկայի բնագավառում այլ լիցենզավորված անձի օրինական շահերի խախտման կամ լիցենզավորված գործունեության խոչընդոտմանը կամ լիցենզիայի պայմանների չկատարմանը կամ ոչ պատշաճ կատարմանը, կամ սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված արարքը վարչական տույժ նշանակելու մասին որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, կրկին կատարելն առաջացնում է տուգանք՝ քսան միլիոն դրամից քառասուն միլիոն դրամի չափով, կամ լիցենզիայի գործողության կասեցում կամ լիցենզիայի գործողության դադարեցում»:

¹⁰ «Էներգետիկայի մասին» օրենքի 42-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ «Էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզիա ունեցող անձի կողմից, բացառությամբ սույն հոդվածի 7-րդ մասով սահմանված անձանց, սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված արարքը վարչական տույժ նշանակելու մասին որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, կրկին կատարելն առաջացնում է տուգանք՝ հինգ միլիոն դրամից տասը միլիոն դրամի չափով, կամ լիցենզիայի գործողության կասեցում կամ լիցենզիայի գործողության դադարեցում»:

¹¹ «Էներգետիկայի մասին» օրենքի 42-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ Էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզիա ունեցող անձի կողմից, բացառությամբ սույն հոդվածի 7-րդ մասով սահմանված անձանց, սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված արարքը կատարելը, որի հետևանքով վտանգվել է կամ կարող էր վտանգվել համակարգի անվտանգությունը կամ հուսալիությունը, կամ այն ուղակիորեն հանգեցրել է մի խումբ սպառողների իրավունքների կամ օրինական շահերի խախտման կամ լիցենզիայի պայմանների կոպիտ խախտման կամ էներգետիկայի բնագավառում այլ լիցենզավորված անձի օրինական շահերի խախտման կամ լիցենզավորված գործունեության խոչընդոտմանը կամ լիցենզիայի պայմանների չկատարմանը կամ ոչ պատշաճ կատարմանը կամ խոչընդոտել է կարգավորող մարմնի՝ կարգավորման գործառնությունների պատշաճ իրականացմանն առաջացնում է տուգանք՝ տասը միլիոն դրամից քսան միլիոն դրամի չափով, կամ լիցենզիայի գործողության կասեցում կամ լիցենզիայի գործողության դադարեցում:

3) պահանջել հանձնաժողովի նախագահի սահմանած ժամկետում կատարել լիցենզավորված անձի կանոնադրության փոփոխություն և դիմել պետական ռեգիստր կանոնադրության փոփոխությունների պետական գրանցումն ապահովելու նպատակով.

4) պահանջել հանձնաժողովի նախագահի սահմանած ժամկետում կատարել լիցենզավորված անձի կառավարման մարմինների անդամի կամ անդամների փոփոխություն.

5) նշանակել լիցենզավորված անձի ժամանակավոր կառավարիչ:

Սահմանադրական դատարանն իր՝ 2026 թվականի մարտի 12-ի ՍԴՈ-1819 որոշմամբ Հանձնաժողովի նախագահին վերապահված՝ կանխարգելիչ միջոցառումներ կիրառելու լիազորության՝ Սահմանադրությանը համապատասխանելու եզրահանգմանը հիմնականում եկել է հետևյալ պատճառաբանությունների հիման վրա.

- «**133.** «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 42-րդ հոդվածի 3, 5 կամ 6-րդ մասերով սահմանված արարքը կատարելու հիմքով վարչական վարույթ հարուցելու և Օրենքի 52.1-ին հոդվածի 2-րդ մասով սահմանված կանխարգելիչ միջոցառումները կիրառելու իրավասությունը Հանձնաժողովի նախագահին վերապահելու օրենսդրական ընդհանուր հիմքը «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետն է, համաձայն որի՝ Հանձնաժողովի նախագահն իրավասու է «իրականացնել օրենքով իրեն վերապահված այլ լիազորություններ»»,

- «**135.** Սահմանադրական դատարանը փաստում է, որ թեև քննարկվող դեպքում վարչական վարույթ հարուցող և կանխարգելիչ միջոցառումներ կիրառող իրավասու սուբյեկտը Հանձնաժողովի նախագահն է, այդուհանդերձ, վերջինիս կողմից՝ վարչական վարույթ հարուցելու որոշման հիմքում ընկած առերևույթ իրավախախտման վերաբերյալ հիմնավորումների ու փաստերի առնչությամբ իրականացվող վարույթի ընթացիկ և եզրափակիչ փուլերն ամբողջությամբ գտնվում են Հանձնաժողովի կոլեգիալ կազմի իրավասության տիրույթում: Այլ կերպ՝ Հանձնաժողովի նախագահի կողմից հարուցված վարչական վարույթի «ճակատագիրը» որոշվում է բացառապես Հանձնաժողովի կոլեգիալ կազմով, ինչը ենթադրում է նաև Հանձնաժողովի նախագահի կողմից հարուցված վարչական վարույթը՝ համապատասխան օրենսդրական հիմքերի առկայության պարագայում, Հանձնաժողովի կողմից կարճելու տարբերակը»:

Ելնելով վերոնշյալ վիճարկվող դրույթների բովանդակությունից՝ գտնում են, որ Հանձնաժողովի նախագահի կողմից լիցենզավորված անձի նկատմամբ կանխարգելիչ միջոցառումներ կիրառելու վերաբերյալ օրենսդրական կարգավորումներն էապես տարբերվում են վարչական վարույթ հարուցելու մասին որոշման ընդունման կարգավորումից: Մասնավորապես՝ ինչպես արդեն վերը նշվեց վարչական վարույթ հարուցելու դեպքում Հանձնաժողովի նախագահի գործողությունը պայմանավորված է օրենքով նախատեսված իրավաբանական փաստի՝ կառավարության լիազոր մարմնի հաղորդման առկայությամբ, և այդ պայմաններում Հանձնաժողովի նախագահը գործում է օրենքով նախատեսված պարտադիր ընթացակարգի շրջանակներում: Մինչդեռ կանխարգելիչ միջոցառումների կիրառման հարցում օրենսդիրը Հանձնաժողովի նախագահին վերապահել է միանձնյա կարգով որոշում կայացնելու լիազորություն. ըստ այդմ, վերջինս իրավասու է որոշելու՝ կոնկրետ իրավիճակում արդյո՞ք անհրաժեշտ է

կիրառել կանխարգելիչ միջոցառում, թե՛ ոչ, և եթե այո, ապա օրենքով նախատեսված միջոցառումներից ո՞րը կամ որո՞նք ընտրել:

Փաստորեն, օրենսդիրը լիցենզավորված անձի նկատմամբ կանխարգելիչ միջոցառումների կիրառման հարցում Հանձնաժողովի նախագահին վերապահել է հայեցողական լիազորություն: Մասնավորապես՝ այդ մասին է վկայում այն հանգամանքը, որ վիճարկվող դրույթներով Հանձնաժողովի նախագահին տրվել է լիազորություն՝ կիրառելու մեկ կամ մի քանի կանխարգելիչ միջոցառում՝ հաշվի առնելով նաև լիցենզավորված անձի կողմից նախկինում կատարված խախտումների քանակը, հաճախականությունը կամ բնույթը: Նշվածից հետևում է, որ Հանձնաժողովի նախագահի կողմից լիցենզավորված անձի նկատմամբ կանխարգելիչ միջոցառումների կիրառման վերաբերյալ լիազորությունը ենթադրում է տվյալ անձի կողմից հայեցողական և գնահատողական վարքագծի դրսևորում:

Իսկ հայեցողական լիազորությունը պետական մարմին կամ պաշտոնատար անձին օրենքով վերապահված այնպիսի լիազորությունն է, որի շրջանակում վերջինս, ելնելով կոնկրետ գործի հանգամանքներից և հանրային շահի ապահովման անհրաժեշտությունից, իրավասու է ընտրել օրենքով թույլատրելի մի քանի հնարավոր իրավաչափ լուծումներից որևէ մեկը: Բայցևայնպես, հայեցողական լիազորությունը չի կարող մեկնաբանվել որպես անսահմանափակ լիազորություն. այն ենթակա է նաև սահմանափակումների և պետք է իրականացվի համաչափության և կամայականության արգելքի սկզբունքների պահպանմամբ:

Վերոնշյալի համատեքստում կարևոր են համարում քննարկման առարկա դարձնել լիցենզավորված անձի նկատմամբ կիրառվող կանխարգելիչ միջոցառումների բովանդակությունը: Այսպես՝ «Էներգետիկայի մասին» օրենքի 52.1-ին հոդվածի 2-րդ մասով նախատեսված կարգավորումից հետևում է, որ կանխարգելիչ միջոցառումներն իրենց բնույթով այնպիսին են, որ լիցենզավորված անձի իրավունքների նկատմամբ առաջացնում են ինտենսիվ միջամտություն: Մասնավորապես, ի թիվս այլնի, դրանք կարող են դրսևորվել լիցենզավորված անձի կառավարման մարմինների գործունեության վրա ազդեցության, կանոնադրական փոփոխությունների, կառավարման մարմինների անդամների փոփոխության կամ ժամանակավոր կառավարչի նշանակման տեսքով: Հետևաբար նման միջոցառումներն իրենց բնույթով հանդիսանում են սահմանափակող և միջամտող իրավական միջոցներ, որոնք էական և ինտենսիվ միջամտություն են լիցենզավորված անձի իրավունքների և օրինական շահերի վրա:

Ելնելով վերոնշյալից և հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հանձնաժողովի գործունեության հիմքում սահմանադրի կողմից դրվել է կոլեգիալության սկզբունքը (հակառակ դեպքում սահմանադիրը չէր կարևորի Հանձնաժողովի՝ մի քանի անդամներից բաղկացած լինելու հանգամանքը և այդ անդամներին Ազգային ժողովի պատգամավորների կողմից նշանակելու հանգամանքը), գտնում են, որ այնպիսի որոշումների կայացումը, որոնք լիցենզավորված անձանց իրավունքների նկատմամբ կարող են առաջացնել ինտենսիվ միջամտություն, ինչպիսիք են օրինակ՝ վերջիններիս նկատմամբ կանխարգելիչ միջոցառումների կիրառումը, պետք է ընդունվեն կոլեգիալ քննարկման և քվեարկության արդյունքում:

Միաժամանակ, Հանձնաժողովի նախագահի կողմից լիցենզավորված անձի նկատմամբ կանխարգելիչ միջոցառումների միանձնյա կիրառման վերաբերյալ օրենսդրական դրույթի՝ Սահմանադրությանը համապատասխանելու վերաբերյալ

Սահմանադրական դատարանի այն պատճառաբանությունը, համաձայն որի՝ «(...) իրականացվող վարույթի ընթացիկ և եզրափակիչ փուլերն ամբողջությամբ գտնվում են Հանձնաժողովի կոլեգիալ կազմի տիրույթում», իմ կարծիքով՝ չի կարող բավարար փաստարկ հանդիսանալ նշված կարգավորումը Սահմանադրությանը համապատասխանող ճանաչելու համար հետևյալ պատճառաբանությամբ.

թեև վարույթի հետագա փուլերում որոշումների կայացումը կարող է իրականացվել կոլեգիալ կարգով, այնուամենայնիվ մինչև այդ փուլերի վրա հասնելը Հանձնաժողովի նախագահի կողմից միանձնյա կարգով կանխարգելիչ միջոցառումների կիրառումն ինքնին արդեն առաջացնում է լիցենզավորված անձի իրավունքների և գործունեության նկատմամբ միջամտող ու սահմանափակող իրավական հետևանքներ: Հետևաբար այն հանգամանքը, որ վարույթի հետագա փուլերը կարող են իրականացվել կոլեգիալ կարգով, չի վերացնում այն փաստը, որ լիցենզավորված անձի իրավունքների վրա անմիջական ազդեցություն ունեցող կանխարգելիչ միջոցառումները կիրառվում են միանձնյա կարգով կայացված որոշմամբ:

Բացի այդ, գտնում եմ, որ Հանձնաժողովի նախագահի կողմից միանձնյա կարգով և բացառապես վերջինիս հայեցողությամբ կանխարգելիչ միջոցառումների կիրառումը կարող է առաջացնել մի շարք ռիսկեր: Նախ՝ նման կարգավորումը կարող է հանգեցնել այնպիսի իրավիճակի, երբ լիցենզավորված անձանց նկատմամբ սահմանափակող և միջամտող հետևանքներ առաջացնող միջոցառումները կիրառվեն մեկ պաշտոնատար անձի սուբյեկտիվ գնահատականի հիման վրա: Բացի այդ, նման կարգավորումը կարող է առաջացնել նաև տրամադծորեն հակառակ բնույթի ռիսկեր: Մասնավորապես՝ այն դեպքերում, երբ հանրային շահով պայմանավորված անհրաժեշտություն կլինի անհապաղ կիրառելու կանխարգելիչ միջոցառումներ, դրանց կիրառումը կարող է կախված լինել միայն Հանձնաժողովի նախագահի կամքից կամ նախաձեռնությունից: Բացի այդ, հատկանշական է նաև այն հանգամանքը, որ թեև Հանձնաժողովն Ազգային ժողովի կողմից նշանակված մի քանի անդամներից բաղկացած կոլեգիալ մարմին է, այդուհանդերձ, այդ կոլեգիալ մարմնի մյուս անդամները, օրենսդրական նման կարգավորման արդյունքում, լիցենզավորված անձի նկատմամբ կանխարգելիչ միջոցառումներ կիրառելու կամ չկիրառելու վերաբերյալ հարցի լուծմանը մասնակցություն ունենալու որևէ օրենսդրական հնարավորություն չունեն:

Վերոնշյալից բացի, հարկ եմ համարում քննարկման առարկա դարձնել նաև Հանձնաժողովի նախագահի գործառույթները Սահմանադրական դատարանի այն պատճառաբանության համատեքստում, ըստ որի՝ «(...) կանխարգելիչ միջոցառումները կիրառելու իրավասությունը Հանձնաժողովի նախագահին վերապահելու օրենսդրական ընդհանուր հիմքը «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետն է, համաձայն որի՝ Հանձնաժողովի նախագահն իրավասու է «իրականացնել օրենքով իրեն վերապահված այլ լիազորություններ»»:

Այսպես՝ «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 8-րդ հոդվածով սահմանվում են Հանձնաժողովի նախագահի գործառույթները: Մասնավորապես՝ նշված հոդվածի համաձայն՝ Հանձնաժողովի նախագահը համակարգում և ապահովում է Հանձնաժողովի բնականոն աշխատանքը, հրավիրում և նախագահում է հանձնաժողովի նիստերը, ստորագրում է հանձնաժողովի որոշումները և պաշտոնական այլ փաստաթղթեր, ընդունում է հրամաններ, տալիս է հանձնաժողովի անունից հանդես գալու լիազորագրեր, կնքում է պայմանագրեր, կազմակերպում է

հանձնաժողովի ընդունած որոշումների կատարումը, հաստատում է հանձնաժողովի հաստիքացուցակը, հանձնաժողովի անդամների և իր կողմից նշանակվող աշխատողների համար հանդես է գալիս որպես գործատուի ներկայացուցիչ, ինչպես նաև ներկայացնում է հանձնաժողովը Հայաստանի Հանրապետությունում, այլ պետություններում և միջազգային կազմակերպություններում:

Նշված գործառույթների համակարգային վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրը Հանձնաժողովի նախագահին վերապահել է հիմնականում կազմակերպարարական և վարչակազմակերպչական բնույթի գործառույթներ, որոնք ուղղված են հանձնաժողովի գործունեության կազմակերպմանը և դրա բնականոն աշխատանքի ապահովմանը:

Միաժամանակ «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 8-րդ հոդված 1-ին մասի 7-րդ կետով նախատեսվում է, որ Հանձնաժողովի նախագահին իրականացնում է նաև օրենքով իրեն վերապահված այլ լիազորություններ: Ելնելով վերոնշյալ գործառույթների համակարգային վերլուծությունից՝ գտնում են, որ նշված դրույթը պետք է մեկնաբանվի նույն հոդվածում թվարկված գործառույթների ընդհանուր բնույթի և նպատակների համատեքստում: Հետևաբար նշված դրույթի ներքո պետք է հասկանալ այնպիսի լրացուցիչ լիազորություններ, որոնք իրենց բովանդակությամբ համահունչ են Հանձնաժողովի նախագահի հիմնական գործառույթների բնույթին և ուղղված են հանձնաժողովի գործունեության կազմակերպմանը և բնականոն աշխատանքի ապահովմանը: Մինչդեռ Սահմանադրական դատարանի կողմից նշված դրույթը մեկնաբանվել է նույն հոդվածի մյուս դրույթների համատեքստից դուրս՝ անտեսելով նույն հոդվածում թվարկված մյուս լիազորությունների բնույթը, որի արդյունքում ստացվում է մի իրավիճակ, որ Սահմանադրության 122-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով կոլեգիալ մարմնի անդամներ նշանակված անդամներից մեկը (Հանձնաժողովի նախագահը) օժտված է մյուս անդամների հանդեպ «արտոնյալ» կարգավիճակով և կարող է քննարկել հարց ու լիցենզավորված անձի իրավունքների նկատմամբ ինտենսիվ միջամտություն պարունակող կանխարգելիչ միջոցառումներ կիրառել՝ առանց որևէ կերպ հաշվի առնելու նշված կոլեգիալ մարմնի որևէ այլ անդամի կարծիքը կամ դիրքորոշումը, որպիսի վարքագիծն էլ չի կարող համահունչ լինել Սահմանադրության 122-րդ հոդվածում սահմանադրի կողմից արտահայտված կամքին:

Ելնելով վերոնշյալից՝ գտնում են, որ «այլ լիազորություններ» ձևակերպման ներքո չեն կարող ներառվել այնպիսի լիազորություններ, որոնց գործադրումը կարող են առաջացնել միջամտող կամ սահմանափակող իրավական հետևանքներ լիցենզավորված անձանց համար: Ուստի գտնում են, որ Հանձնաժողովի նախագահի կողմից լիցենզավորված անձի նկատմամբ միանձնյա կարգով կանխարգելիչ միջոցառումներ կիրառելու լիազորությունը չի կարող դիտարկվել որպես Հանձնաժողովի նախագահի կազմակերպարարական կամ վարչակազմակերպչական գործառույթների շարունակություն և չի կարող ներառվել «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով նախատեսված «այլ լիազորությունների» շրջանակում:

1.2. Ամփոփելով վերոնշյալը՝ գտնում են, որ «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 36-րդ հոդվածի 9-րդ մասը և «Էներգետիկայի մասին» օրենքի 52.1-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը՝ այնքանով, որքանով

Հանձնաժողովի նախագահին վերապահում են իրավասություն միանձնյա կարգով լիցենզավորված անձի նկատմամբ կիրառելու կանխարգելիչ միջոցառումներ, հակասում են Սահմանադրության 122-րդ հոդվածին:

ԲԱԺԻՆ II

2.1. «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 36-րդ հոդվածի 9-րդ մասի և «Էներգետիկայի մասին» օրենքի 52.1-րդ հոդվածի 3-րդ մասի վերաբերյալ.

Նկատի ունենալով, որ սույն դիմումի վերացական վերահսկողության դաշտում Սահմանադրական դատարանն արժևորել է և իր՝ 2026 թվականի մարտի 12-ի ՍԴՈ-1819 որոշմամբ անդրադարձ է կատարել Հանձնաժողովի իրավական ակտերի դատական բողոքարկման իրավական հնարավորության հարցին, հարկ եմ համարում «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 36-րդ հոդվածի 9-րդ մասի և «Էներգետիկայի մասին» օրենքի 52.1-րդ հոդվածի 3-րդ մասի սահմանադրականությունը քննարկման առարկա դարձնել նաև այդ տեսանկյունից:

Այսպես, Սահմանադրականը դատարանը, վերոնշյալ որոշմամբ անդրադառնալով Հանձնաժողովի իրավական ակտերի դատական բողոքարկման իրավական հնարավորության հարցին, ընդամենը մատնանշելով Վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասը, «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասը և «Էներգետիկայի մասին» օրենքի 52.1-ին հոդվածի 3-րդ մասը, զուտ արձանագրել է հետևյալը.

«114. (...) հաշվի առնելով Հանձնաժողովի բացառիկ իրավասությունը՝ Էներգետիկայի բնագավառում իրականացնելու լիցենզավորում (տրամադրելու լիցենզիաներ, երկարաձգելու դրանց գործողության ժամկետները, վերաձևակերպելու, կասեցնելու և դադարեցնելու դրանց գործողությունը, ինչպես նաև սահմանելու լիցենզիաների պայմանները, վերահսկելու դրանց կատարումը) և կիրառելու [«Էներգետիկայի մասին» օրենքով] սահմանված պատասխանատվության միջոցները, ինչը ենթադրում է համապատասխան վարության իրողությունների կայացում, այդ թվում նաև՝ կանխարգելիչ միջոցառումների կիրառում՝ օրենսդիրը Սահմանադրությամբ երաշխավորված արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի ապահովման համատեքստում նախատեսել է Հանձնաժողովի ու դրա նախագահի իրավական ակտերի՝ դատական կարգով բողոքարկման իրավական հնարավորություն»:

Անդրադառնալով Հանձնաժողովի իրավական ակտերի դատական բողոքարկման իրավական հնարավորության հարցին՝ հարկ եմ համարում նշել հետևյալը.

Նախ, անկախ ինքնավար մարմինների սահմանադրաիրավական կարգավիճակի առանձնահատկություններից՝ ի ապահովումն իշխանությունների բաժանման և հավասարակշռման սահմանադրական սկզբունքի, վերջիններիս որոշումները ենթակա են վերանայման դատարանի կողմից: Ինքնավար մարմինների անկախությունը ենթադրում է դրանց ինքնուրույնություն և ինքնավարություն հանրային իշխանության այլ մարմիններից, սակայն չի կարող բացառել վերջիններիս գործունեության նկատմամբ դատական վերահսկողության իրականացումը: Այսպես.

Սահմանադրության՝ «Դատական պաշտպանության իրավունքը և մարդու իրավունքների պաշտպանության միջազգային մարմիններ դիմելու իրավունքը» վերտառությամբ 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:

Սահմանադրական դատարանը բազմիցս անդրադարձել է արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի սահմանադրաիրավական բովանդակության բացահայտմանը՝ այդ առնչությամբ, մասնավորապես, արտահայտելով ներքոնշյալ իրավական դիրքորոշումները.

- «Անձի դատական պաշտպանության սահմանադրական իրավունքից ածանցվում է պետության պոզիտիվ պարտականությունը՝ ապահովել այն թե՛ նորմաստեղծ, թե՛ իրավակիրառման գործունեություն իրականացնելիս: Դա ենթադրում է, մի դեպքում, օրենսդրի պարտականությունը՝ լիարժեք դատական պաշտպանության հնարավորություն և մեխանիզմներ ամրագրել օրենքներում, մյուս կողմից, իրավակիրառողի պարտականությունը՝ առանց բացառությունների քննարկման ընդունել անձանց՝ օրինական կարգով իրենց ուղղված դիմումները, որոնցով նրանք հայցում են իրավական պաշտպանություն իրենց իրավունքների ենթադրյալ խախտումներից» (2007 թվականի նոյեմբերի 28-ի ՍԴՈ-719 որոշում):

- «(...) դատավարական որևէ առանձնահատկություն կամ ընթացակարգ չի կարող խոչընդոտել կամ կանխել դատարան դիմելու իրավունքի արդյունավետ իրացման հնարավորությունը, իմաստազրկել ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածով երաշխավորված իրավունքը կամ դրա իրացման արգելք հանդիսանալ» (2015 թվականի դեկտեմբերի 22-ի ՍԴՈ-1249 որոշում):

- «Դատարան դիմելու՝ անձի իրավունքի իրացման երաշխավորումն իրավական առաջնահերթ նախապայման է անձի սահմանադրական իրավունքներն ու ազատությունները դատական կարգով պաշտպանելու համար» (2016 թվականի մարտի 10-ի ՍԴՈ-1257 որոշում):

Այսպիսով՝ մարդու հիմնարար իրավունքների և ազատությունների պաշտպանության առանցքային մեխանիզմը դատական պաշտպանության ինստիտուտն է: Վերջինս այն իրավական գործիքակազմն է, որը հնարավորություն է տալիս որոշակի դատավարական ընթացակարգի միջոցով գործնականում ապահովել իրավակիրառ մարմնի սխալների բացահայտումը՝ դրանով իսկ նպաստելով մարդու իրավունքների հնարավոր խախտումների հայտնաբերմանն ու դրանց վերացմանը:

Օրենսդիրը, ելնելով դատական պաշտպանության մեխանիզմներ ամրագրելու պարտականությունից, Հանձնաժողովի իրավական ակտերի դատական բողոքարկման մասով նախատեսել է հետևյալ կարգավորումները.

Այսպես՝ «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ Հանձնաժողովի իրավական ակտերը կարող են **բողոքարկվել դատական կարգով:**

Հատկանշական է, որ Սահմանադրական դատարանը դեռևս 2007 թվականի հունվարի 16-ի ՍԴՈ-673 որոշման շրջանակներում նշել է, որ «(...) Հանձնաժողովի որոշման բողոքարկման հարց քննելիս՝ դատական վերահսկողության խնդիրը ոչ թե այդ մարմնի՝ օրենքով սահմանված բացառիկ գործառույթների կրկնօրինակումն է, մասնավորապես՝ հանրային ծառայությունների սակագների դրույքաչափի սահմանելու,

փոփոխելու միջոցով, կամ անկախ գործելու իրավասությամբ օժտված մարմնի գործունեությանը շարունակական և գործառնական վերահսկողությամբ միջամտելը, այլ՝ հիմնվելով հանրային ծառայությունների բնագավառում Հանձնաժողովի սակագնային և լիցենզավորման (գործունեության թույլտվություն տրամադրող) գործունեության, ինչպես նաև սպառողների իրավունքների պաշտպանության սահմանադրաիրավական և օրենսդրական չափանիշների վրա, այդ մարմնի որոշումների՝ այդ թվում նաև սակագների սահմանման վերաբերյալ, օրինականությունը վերահսկելը»:

Այսպիսով, հաշվի առնելով Հանձնաժողովի բացառիկ իրավասությունն էներգետիկայի բնագավառում իրականացնելու լիցենզավորում, մասնավորապես՝ տրամադրելու լիցենզիաներ, երկարաձգելու դրանց գործողության ժամկետները, վերաձևակերպելու, կասեցնելու և դադարեցնելու դրանց գործողությունը, ինչպես նաև սահմանելու լիցենզիաների պայմանները, վերահսկելու դրանց կատարումը և կիրառելու «էներգետիկայի մասին» օրենքով սահմանված պատասխանատվության միջոցները, ինչը ենթադրում է համապատասխան վարույթային որոշումների կայացում, այդ թվում նաև՝ կանխարգելիչ միջոցառումների կիրառում՝ օրենսդիրը Սահմանադրությամբ երաշխավորված արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի ապահովման համատեքստում նախատեսել է Հանձնաժողովի իրավական ակտերի դատական կարգով բողոքարկման իրավական հնարավորություն:

Վերոնշյալի համատեքստում նկատի ունենալով, որ սույն գործի հարուցման հիմք հանդիսացող դիմումով վիճարկման առարկա են հանդիսանում «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի և «էներգետիկայի մասին» օրենքի փոփոխությունների արդյունքում ընդունված կարգավորումները (համապատասխանաբար՝ 2025 թվականի հուլիսի 3-ի թիվ ՀՕ-195-Ն օրենք և 2025 թվականի հուլիսի 3-ի թիվ ՀՕ-196-Ն օրենք), ապա Հանձնաժողովի իրավական ակտերի դատական կարգով բողոքարկման իրավական հնարավորության հարցը հարկ եմ համարում քննարկման առարկա դարձնել լիցենզավորված անձի՝ Հանձնաժողովի նախագահի կողմից վարույթ հարուցելու և կանխարգելիչ միջոցառումների կիրառման վերաբերյալ որոշումների դատական բողոքարկման իրավունքի իրացման համատեքստում:

Այսպես՝ «էներգետիկայի մասին» օրենքի 52.1-րդ հոդվածի 1-ին մասով և 2-րդ մասի 5-րդ կետով սահմանվում է, որ վարույթ հարուցելու մասին որոշմամբ Հանձնաժողովի նախագահը կարող է կիրառել կանխարգելիչ միջոցառումներ, որոնցից է, ի թիվս այլնի, լիցենզավորված անձի ժամանակավոր կառավարիչ նշանակելը: Իսկ նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ լիցենզավորված անձի ժամանակավոր կառավարչի նշանակմամբ և նրա գործունեության ամբողջ ընթացքում նրան են անցնում լիցենզավորված անձի գործադիր մարմնի բոլոր լիազորությունները՝ բացառելով ժամանակավոր կառավարիչ նշանակելու մասին որոշմամբ սահմանված ժամանակահատվածում լիցենզավորված անձի գործադիր մարմնի լիցենզավորված անձի գործադիր կառավարումն իրականացնելը: Լիցենզավորված անձի ժամանակավոր կառավարչի գործունեության ժամանակահատվածում լիցենզավորված անձի կառավարման այլ մարմիններն իրենց իրավասությունները (լիազորությունները) իրականացնում են ժամանակավոր կառավարչի համաձայնությամբ:

Այսպիսով, վերոնշյալ օրենսդրական կարգավորումներից հետևում է, որ Հանձնաժողովի նախագահի կողմից կանխարգելիչ միջոցառման կիրառման արդյունքում լիցենզավորված անձի գործադիր կառավարման իրականացումը փոխանցվում է

Ժամանակավոր կառավարչին, իսկ լիցենզավորված անձի գործադիր մարմինը փաստացի ժամանակավորապես զրկվում է իր կառավարման լիազորություններն իրականացնելու հնարավորությունից: Գտնում են, որ նման կարգավորումը պայմանավորված է էներգետիկայի ոլորտի առանձնահատկություններով և նպատակ ունի կանխելու այնպիսի իրավիճակների առաջացումը, որոնք կարող են վտանգել ոլորտի կայուն և անվտանգ գործունեությունը: Այս տեսանկյունից օրենսդիրը նպատակ է հետապնդել ստեղծելու այնպիսի գործիքակազմ, որը հնարավորություն կտա Հանձնաժողովին անհրաժեշտության դեպքում ապահովելու լիցենզավորված անձի գործունեության արդյունավետ կառավարումը:

Այդուհանդերձ, նման կարգավորումը մի կողմից՝ ապահովում է արդյունավետ կառավարումը հանրային կարևորություն ունեցող ոլորտում, իսկ մյուս կողմից՝ կարող է սահմանափակել լիցենզավորված անձի կողմից իր իրավունքների արդյունավետ պաշտպանության հնարավորությունները, այդ թվում՝ դատական պաշտպանության իրավունքի, մասնավորապես այն դեպքերում, երբ ժամանակավոր կառավարչի և լիցենզավորված անձի կառավարման մարմինների իրավական դիրքորոշումները չհամընկնեն:

Անդրադառնալով Հանձնաժողովի նախագահի վարույթ հարուցելու և կանխարգելիչ միջոցառումների կիրառման վերաբերյալ որոշումների դատական բողոքարկման հնարավորությանը՝ հարկ է նշել, որ «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 36-րդ հոդվածի 9-րդ մասը նախատեսել է, որ Կառավարության լիազոր մարմնի հաղորդման հիման վրա Հանձնաժողովի նախագահի կողմից կայացված վերոնշյալ որոշումներն ուժի մեջ մտնելու օրվանից ենթակա են անհապաղ կատարման, և դրանց **բողոքարկումը** չի կասեցնում դրանց գործողությունը կամ կատարումը:

Այսպիսով, նշված կարգավորումից հետևում է, որ Հանձնաժողովի նախագահի կողմից վարույթ հարուցելու և կանխարգելիչ միջոցառումների կիրառման վերաբերյալ որոշումները ևս ենթակա են դատական կարգով բողոքարկման: Մինչդեռ, ինչպես վերը նշվեց, ժամանակավոր կառավարչի նշանակմամբ լիցենզավորված անձի գործադիր մարմինը ժամանակավորապես զրկվում է իր լիազորություններն իրականացնելու հնարավորությունից, այդ թվում՝ դատական պաշտպանության միջոցների կիրառման վերաբերյալ որոշումներ կայացնելու լիազորությունից: Ստացվում է, որ Հանձնաժողովի նախագահի կողմից ընդունված՝ վարույթ հարուցելու և կանխարգելիչ միջոցառումների կիրառման վերաբերյալ որոշումների բողոքարկման իրավասությունը ևս վերապահվում է հենց ժամանակավոր կառավարչին: Հատկանշական է, որ Հանձնաժողովի նախագահի կողմից վարույթ հարուցելու մասին որոշման կայացմամբ կարող են ընդունվել նաև կանխարգելիչ միջոցառումների կիրառման վերաբերյալ որոշումներ, որոնց շարքին է դասվում նաև ժամանակավոր կառավարիչ նշանակելու մասին որոշումը: Մինչդեռ ակնհայտ է, որ ժամանակավոր կառավարիչը, որպես հենց այդ որոշման հիման վրա նշանակված անձ, օբյեկտիվորեն չի կարող շահագրգռված լինել վիճարկելու վարույթ հարուցելու և դրա արդյունքում իրեն ժամանակավոր կառավարիչ նշանակելու վերաբերյալ Հանձնաժողովի նախագահի կողմից կայացված որոշումները: Ուստի գտնում են, որ նման իրավակարգավորման պայմաններում «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքով նախատեսված դատական բողոքարկման իրավունքը ձեռք է բերում ձևական բնույթ, քանի որ տվյալ իրավունքի իրացումը դառնում

է առկախված այնպիսի սուբյեկտից, որը ողջամտորեն չի կարող դիտվել որպես այդ իրավունքի արդյունավետ իրականացնող:

Ամփոփելով վերոնշյալը՝ գտնում են, որ «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 36-րդ հոդվածի 9-րդ մասը՝ «Էներգետիկայի մասին» օրենքի 52.1-ին հոդվածի 3-րդ մասի համակցված կիրառությամբ չի ապահովում լիցենզավորված անձի արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի ռեալ (իրական) իրացումը Հանձնաժողովի նախագահի վարույթ հարուցելու և կանխարգելիչ միջոցառումներ կիրառելու վերաբերյալ որոշումների բողոքարկման առնչությամբ:

Ավելին՝ կանխարգելիչ միջոցառման կիրառմամբ լիցենզավորված անձի ժամանակավոր կառավարիչ նշանակվելու պայմաններում լիցենզավորված անձի՝ Հանձնաժողովի իրավական ակտերի դատական բողոքարկման իրավունքի իրացման հարցի առնչությամբ առկա է նաև ձևավորված դատական պրակտիկա: Մասնավորապես՝ 2026 թվականի փետրվարի 2-ին «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի կողմից Սահմանադրական դատարան մուտքագրված (մուտք՝ ԱԴ-14) անհատական դիմումի և կից փաստաթղթերի ուսումնասիրությունից հետևում է, որ լիցենզավորված անձի գործադիր մարմնի ղեկավարի անունից ընդդեմ Հանձնաժողովի հայցադիմում է ներկայացվել Վարչական դատարան, որը վերադարձվել է այն պատճառաբանությամբ, որ լիցենզավորված անձի նկատմամբ կիրառվել է կանխարգելիչ միջոցառում և նշանակվել է ժամանակավոր կառավարիչ, ուստի վերջինիս է անցել լիցենզավորված անձի գործադիր մարմնի բոլոր լիազորությունները: Ըստ այդմ՝ Վարչական դատարանը նշել է, որ լիցենզավորված անձի գործադիր մարմնի ղեկավարի կողմից տրված լիազորագիրը չի կարող հանդիսանալ լիցենզավորված անձի գործը դատարանում վարելու համար լիազորությունները հավաստող պատշաճ ապացույց (տե՛ս՝ թիվ ՎԴ/19878/05/25 վարչական գործը): Ավելին՝ Վարչական դատարանի՝ «Հայցադիմումը վերադարձնելու մասին» որոշումը վերաքննության և համապատասխանաբար վճռաբեկության կարգով բողոքարկման արդյունքում մնացել է անփոփոխ:

Բացի այդ, վերոնշյալ անհատական դիմումում մատնանշվել է նաև մեկ այլ դատական գործ, այն է՝ ՎԴ/13316/05/25 վարչական գործը, որի շրջանակում կայացված դատական ակտերի ուսումնասիրությունից հետևում է, որ լիցենզավորված անձը, դիմելով Վարչական դատարան, պահանջել է ճանաչել լիազոր մարմնի հաղորդման հիման վրա Հանձնաժողովի նախագահի «Վարչական վարույթ հարուցելու և կանխարգելիչ միջոցառում կիրառելու մասին» որոշման՝ վարույթ հարուցելու մասով իրավահարաբերության բացակայությունը: Մինչդեռ, Վարչական դատարանը հայցադիմումի ընդունումը մերժել է այն պատճառաբանությամբ, որ լիցենզավորված անձի նկատմամբ կիրառվել է կանխարգելիչ միջոցառում և նշանակվել է լիցենզավորված անձի ժամանակավոր կառավարիչ, ուստի վերջինիս է անցել լիցենզավորված անձի գործունեության ամբողջ ընթացքում գործադիր մարմնի բոլոր լիազորությունները՝ բացառելով ժամանակավոր կառավարիչ նշանակելու մասին որոշմամբ սահմանված ժամանակահատվածում լիցենզավորված անձի գործադիր մարմնի գործադիր կառավարումն իրականացնելը: Հետևաբար, Վարչական դատարանը փաստել է, որ լիցենզավորված անձի գործադիր մարմնի ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատարի կողմից տրված լիազորագիրն այլևս չի կարող հանդիսանալ լիցենզավորված անձի գործը դատարանում վարելու համար լիազորությունները հավաստող պատշաճ ապացույց, ըստ այդմ, Վարչական դատարանը գտել է, որ հայցադիմումը ներկայացվել է

դրա իրավունքն ակնհայտորեն չունեցող անձի կողմից: Միաժամանակ, Վարչական դատարանի՝ «Հայցադիմումի ընդունումը մերժելու մասին» որոշումը լիցենզավորված անձի գլխավոր տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարի կողմից բողոքարկվել է վերաքննության կարգով: Իսկ Վերաքննիչ վարչական դատարանը կայացրել է «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշում այն պատճառաբանությամբ, որ լիցենզավորված անձը Վերաքննիչ վարչական դատարան է ներկայացրել վերաքննիչ բողոքը հետ վերցնելու մասին դիմում, որը լիցենզավորված անձի անունից ստորագրել է վերջինիս ժամանակավոր կառավարիչը: Իսկ Վերաքննիչ վարչական դատարանի «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշման դեմ լիցենզավորված անձի անունից ներկայացված վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը Վճռաբեկ դատարանի վարչական պալատի կողմից մերժվել է:

Այսպիսով, ձևավորված դատական պրակտիկայից ևս հետևում է, որ լիցենզավորված անձի կողմից դատական պաշտպանության իրավունքի իրացումը ենթարկվել է սահմանափակման՝ պայմանավորված ժամանակավոր կառավարչի նշանակմամբ: Մասնավորապես, ժամանակավոր կառավարչի նշանակման պայմաններում լիցենզավորված անձը, իրավաբանորեն ունենալով այդ ակտերը վիճարկելու օրենսդրական հնարավորություն, փաստացի զրկվել է դատական պաշտպանության իր իրավունքը ինքնուրույն իրացնելու հնարավորությունից: Ելնելով վերոնշյալից՝ գտնում եմ, որ քննարկվող հարցի վերաբերյալ ձևավորված դատական պրակտիկան ևս հաստատում է «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 36-րդ հոդվածի 9-րդ մասի և «Էներգետիկայի մասին» օրենքի 52.1-ին հոդվածի 3-րդ մասի գործնական կիրառման արդյունքում առաջացող խնդիրները:

Մինչդեռ, նշված խնդրի առկայության պայմաններում Սահմանադրական դատարանը, ընդամենը սահմանափակվելով Վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի, «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի և «Էներգետիկայի մասին» օրենքի 52.1-ին հոդվածի 3-րդ մասի մատնանշմամբ, որոնք համապատասխանաբար վերաբերում են ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից վարչական դատարան դիմելու իրավունքին, Հանձնաժողովի իրավական ակտերը դատական կարգով բողոքարկելու հնարավորությանը և լիցենզավորված անձի ժամանակավոր կառավարչի կառավարման լիազորություններին, նշել է, որ օրենսդիրը նախատեսել է Հանձնաժողովի ու դրա նախագահի իրավական ակտերի՝ դատական կարգով բողոքարկման իրավական հնարավորություն:

Իմ գնահատմամբ, Սահմանադրական դատարանը չի կատարել Հանձնաժողովի իրավական ակտերը դատական կարգով բողոքարկելու իրավունքի առնչությամբ ամբողջական և համակարգային վերլուծություն, մասնավորապես՝ չի անդրադարձել լիցենզավորված անձի կողմից Հանձնաժողովի նախագահի վարույթ հարուցելու և կանխարգելիչ միջոցառումներ կիրառելու վերաբերյալ որոշումների դատական կարգով բողոքարկելու իրավունքի իրացման ռեալ (իրական) հնարավորությանը, և դրա վերաբերյալ տրված դատական մեկնաբանությունների արդյունքում քննարկվող նորմերի սահմանադրականության հարցին:

Ուստի գտնում եմ, որ Սահմանադրական դատարանի դիրքորոշման բացակայությունը՝ կապված ժամանակավոր կառավարչի նշանակման պայմաններում

լիցենզավորված անձի կողմից Հանձնաժողովի նախագահի վարույթ հարուցելու և կանխարգելիչ միջոցառումներ կիրառելու վերաբերյալ որոշումների դատական բողոքարկման իրավունքի իրացման ռեալ (իրական) հնարավորությունների հետ, հանգեցնում է նրան, որ դատական պաշտպանության իրավունքի վերաբերյալ կատարված ընդհանուր և անորոշ բնույթի արձանագրումները դառնում են ձևական: Մինչդեռ, ըստ իս, վիճարկվող դրույթների սահմանադրականությունը գնահատելիս անհրաժեշտ է հաշվի առնել ոչ միայն օրենքով նախատեսված դատական պաշտպանության միջոցների զուտ առկայությունը, այլև դրանց իրական, գործնականում արդյունավետ իրացման հնարավորությունը: Հետևաբար, նման պայմաններում, երբ Սահմանադրական դատարանը սահմանափակվել է բացառապես օրենսդրությամբ նախատեսված դատական բողոքարկման իրավունքի առկայության փաստի զուտ արձանագրմամբ՝ առանց գնահատելու լիցենզավորված անձի կողմից Հանձնաժողովի նախագահի վարույթ հարուցելու և կանխարգելիչ միջոցառումներ կիրառելու վերաբերյալ որոշումների կապակցությամբ դատական բողոքարկման իրավունքի իրացման ռեալ (իրական) և արդյունավետ հնարավորությունը, ապա լիցենզավորված անձի՝ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված իրավունքի արդյունավետ պաշտպանության հարցը շարունակում է մնալ խնդրահարույց: Նման պայմաններում գտնում են, որ Հանձնաժողովի իրավական ակտերի դատական բողոքարկման իրավունքի վերաբերյալ Սահմանադրական դատարանի ընդհանուր և անորոշ բնույթի վերլուծությունները չեն կարող դիտվել սույն գործով վիճարկվող «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի և «Էներգետիկայի մասին» օրենքի փոփոխությունների արդյունքում ընդունված կարգավորումների (համապատասխանաբար՝ 2025 թվականի հուլիսի 3-ի թիվ ՀՕ-195-Ն օրենք և 2025 թվականի հուլիսի 3-ի թիվ ՀՕ-196-Ն օրենք) լիարժեք սահմանադրաիրավական գնահատում:

Վերոնշյալ դիրքորոշումների համատեքստում անդրադառնալով լիցենզավորված անձի կողմից Հանձնաժողովի նախագահի վարույթ հարուցելու և կանխարգելիչ միջոցառումներ կիրառելու վերաբերյալ որոշումների դատական բողոքարկման հնարավորությանը՝ գտնում են, որ «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 36-րդ հոդվածի 9-րդ մասը և «Էներգետիկայի մասին» օրենքի 52.1-ին հոդվածի 3-րդ մասը չեն ապահովում լիցենզավորված անձի՝ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի լիարժեք իրացումը: Թեև ժամանակավոր կառավարչի ինստիտուտի նպատակն է ապահովել լիցենզավորված անձի գործունեության կայուն իրականացումը, այնուամենայնիվ, գտնում են, որ լիցենզավորված անձի դատական պաշտպանության իրավունքի ամբողջական փոխանցումը մեկ սուբյեկտի՝ առանց համապատասխան երաշխիքների, հանգեցնում է այդ իրավունքի անհամաչափ սահմանափակման: Նման պայմաններում գտնում են, որ օրենսդրությամբ պետք է ապահովվեն այնպիսի իրավական երաշխիքներ, որոնք Հանձնաժողովի նախագահի վարույթ հարուցելու և կանխարգելիչ միջոցառումներ կիրառելու վերաբերյալ որոշումների բողոքարկման պարագայում կբացառեն լիցենզավորված անձի՝ դատարան դիմելու իրավունքի իրացման կախվածությունը ժամանակավոր կառավարչի հայեցողությունից և կապահովեն այդ իրավունքի ռեալ (իրական) իրացումը:

Այսպիսով, հաշվի առնելով արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի իրացման իրական հնարավորության ապահովման անհրաժեշտությունը՝ գտնում են, որ հարուցված վարույթի շրջանակներում լիցենզավորված անձը չպետք է զրկված լինի իր՝ Սահմանադրությամբ երաշխավորված արդյունավետ դատական պաշտպանության իրավունքն իրացնելու իրական հնարավորությունից: Մասնավորապես՝ վարույթի հարուցման պահից ի վեր, լիցենզավորված անձը պետք է ունենա Հանձնաժողովի նախագահի վարույթ հարուցելու և կանխարգելիչ միջոցառումներ կիրառելու վերաբերյալ որոշումների կապակցությամբ դատարան դիմելու հնարավորություն՝ անկախ այն հանգամանքից, որ դատարան դիմելու պահի դրությամբ նշանակված է լիցենզավորված անձի ժամանակավոր կառավարիչ: Հակառակ պարագայում՝ «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքով ամրագրված՝ Հանձնաժողովի նախագահի վարույթ հարուցելու և կանխարգելիչ միջոցառումներ կիրառելու վերաբերյալ որոշումների դատական բողոքարկման հնարավորության վերաբերյալ կարգավորումները կկորցնեն իրենց իրավական նշանակությունն ու գործնական արդյունավետությունը:

2.2. Այսպիսով՝ ելնելով վերոնշյալ վերլուծություններից՝ գտնում են, որ «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 36-րդ հոդվածի 9-րդ մասը և «Էներգետիկայի մասին» օրենքի 52.1-ին հոդվածի 3-րդ մասը համապատասխանում են Սահմանադրությանն այնպիսի մեկնաբանությամբ, համաձայն որի՝ Հանձնաժողովի կողմից լիցենզավորված անձի ժամանակավոր կառավարիչ նշանակվելու հանգամանքից անկախ՝ պետք է երաշխավորվի լիցենզավորված անձի՝ Հանձնաժողովի նախագահի վարույթ հարուցելու և կանխարգելիչ միջոցառումներ կիրառելու վերաբերյալ որոշումների դատական կարգով բողոքարկման իրավունքի լիարժեք իրացման հնարավորությունը:

ԲԱԺԻՆ III

3.1 «Էներգետիկայի մասին» օրենքի 52.1-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ նախադասության վերաբերյալ.

Վերոնշյալ դրույթը, այնքանով, որքանով կանխարգելիչ միջոցառումների կիրառման դեպքում, ի թիվս այլնի, հաշվի է առնում նաև լիցենզավորված անձի կողմից նախկինում կատարված խախտումների քանակը, հաճախականությունը կամ բնույթը, հարկ են համարում քննարկման առարկա դարձնել Սահմանադրության 73-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված՝ անձի իրավական վիճակը վատթարացնող օրենքների և այլ իրավական ակտերի հետադարձ ուժի արգելքի համատեքստում:

Այսպես՝ Սահմանադրության՝ «Օրենքների և այլ իրավական ակտերի հետադարձ ուժը» վերտառությամբ 73-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ անձի իրավական վիճակը վատթարացնող օրենքները և այլ իրավական ակտերը հետադարձ ուժ չունեն:

Սահմանադրական դատարանն իր մի շարք որոշումներում (ՍԴՈ-649, ՍԴՈ-723, ՍԴՈ-758, ՍԴՈ-881, ՍԴՈ-1000, ՍԴՈ-1061, ՍԴՈ-1142, ՍԴՈ-1224, ՍԴՈ-1326, ՍԴՈ-1437), անդրադառնալով անձի իրավական վիճակը վատթարացնող օրենքների և այլ իրավական ակտերի հետադարձ ուժի արգելքի սահմանադրաիրավական խնդրին, արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումները.

«(...) անձի իրավական վիճակը վատթարացնող օրենքների և այլ իրավական ակտերի հետադարձ ուժի արգելքի սկզբունքը.

- պետական իշխանության նկատմամբ վստահության և իրավական պետության սկզբունքների կարևոր բաղադրատարրերից մեկն է,
- իրավական անվտանգության սկզբունքի հետ մեկտեղ կոչված է ապահովելու հարգանքը լեգիտիմ ակնկալիքների հանդեպ,
- ընդհանուր կանոն է, իսկ իրավական ակտերի հետադարձ ուժով գործողության հնարավորությունը՝ բացառություն ընդհանուր կանոնից, ինչը բխում է մարդու իրավունքների երաշխավորման, իրավակիրառ մարմինների կողմից կամայականությունների կանխարգելման նկատառումներից,
- իրավական որոշակիության սկզբունքի ապահովման կարևոր երաշխիք է, միաժամանակ, այդ սկզբունքից բխում է այն արգելքը, համաձայն որի՝ անթույլատրելի է այն իրավունքների սահմանափակումը կամ վերացումը, որոնք ամրագրվել են նախկինում գործող նորմերի հիման վրա, ինչը կհակասեր նաև մի շարք միջազգային պայմանագրերով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորություններին»:

Վերոնշյալ դիրքորոշումից հետևում, որ օրենքների և այլ իրավական ակտերի հետադարձ ուժի արգելքը հանդիսանում է իրավական անվտանգության կարևորագույն բաղադրիչ, որն ապահովում է իրավունքի գերակայություն, մարդու հիմնարար իրավունքների և ազատությունների երաշխավորվածություն, ինչպես նաև բարձրացնում է հանրային վստահությունը պետական իշխանության նկատմամբ:

Այս սահմանադրական սկզբունքն իր ամրագրումն է ստացել նաև «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքում, որը սահմանում է, որ նորմատիվ իրավական ակտի գործողությունը տարածվում է դրա ուժի մեջ մտնելուց հետո գործող հարաբերությունների վրա, եթե Սահմանադրությամբ, օրենքով կամ տվյալ նորմատիվ իրավական ակտով այլ բան նախատեսված չէ¹²: Միաժամանակ օրենսդիրն ընդգծում է, որ Սահմանադրության 73-րդ հոդվածին համապատասխան անձի իրավական վիճակը վատթարացնող օրենքները և այլ իրավական ակտերը հետադարձ ուժ չունեն¹³:

Անդրադառնալով իրավական ակտերի հետադարձ ուժի արգելքին՝ գտնում են, որ այդ սկզբունքը սերտորեն առնչվում է իրավական որոշակիության սկզբունքի հետ: Վերջինս ենթադրում է, որ իրավակարգավորումները պետք է լինեն կանխատեսելի, հստակ և հասկանալի, որպեսզի անձը կարողանա իր վարքագիծը դրսևորել գործող իրավական նորմերի հիման վրա՝ ողջամտորեն կանխատեսելով դրանցից բխող իրավական հետևանքները: Դրան ի հակառակ, երբ բացասական իրավական հետևանք առաջացնող նոր իրավակարգավորումը տարածվում է նախկինում կատարված գործողությունների վրա, անձը փաստացի զրկվում է տվյալ պահին իր վարքագիծը իրավաչափ ձևով դրսևորելու հնարավորությունից, քանի որ տվյալ պահին գործող իրավակարգավորումը չի պարունակել համապատասխան սահմանափակում կամ միջամտություն: Ուստի իրավական ակտերին հետադարձ ուժ տալն այն դեպքում, երբ դրանք սահմանում են նոր պարտավորություններ կամ ինքնին վատթարացնում անձի իրավական վիճակը, հակասում են իրավական որոշակիության սկզբունքին: Հետևաբար, անթույլատրելի է այնպիսի իրավական նորմերի հետադարձ կիրառումը, որոնք տարածվում են դրանց ուժի մեջ մտնելուց առաջ ծագած հարաբերությունների վրա և որևէ կերպ առաջացնում են անձի իրավական վիճակի վատթարացում:

¹² «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մաս:

¹³ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 28-րդ հոդվածի 2-րդ մաս:

Տվյալ դեպքում «Էներգետիկայի մասին» օրենքը, 2025 թվականի հուլիսի 3-ին ընդունված՝ ««Էներգետիկայի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» ՀՕ-196-Ն օրենքի 3-րդ հոդվածին համապատասխան, լրացվել է «Սպառողների շահերի պաշտպանության նպատակով կանխարգելիչ միջոցառումների կիրառումը» վերտառությամբ 52.1-ին հոդվածով, որի 1-ին մասի համաձայն՝ նույն օրենքի 42-րդ հոդվածի 3-րդ, 5-րդ կամ 6-րդ մասերով սահմանված արարքը կատարելու հիմքով վարույթ հարուցելու մասին որոշմամբ հանձնաժողովի նախագահը կարող է կիրառել կանխարգելիչ միջոցառումներ: **Կանխարգելիչ միջոցառումների կիրառման դեպքում, ի թիվս այլնի, հաշվի են առնվում նաև լիցենզավորված անձի կողմից նախկինում կատարված խախտումների քանակը, հաճախականությունը կամ բնույթը:**

2025 թվականի հուլիսի 3-ին ընդունված՝ ««Էներգետիկայի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» ՀՕ-196-Ն օրենքի «Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ» վերտառությամբ 4-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանվել է, որ նույն օրենքով սահմանված կարգավորումները տարածվում են նաև մինչև նույն օրենքն ուժի մեջ մտնելը թույլ տրված խախտումների վրա:

Այսպիսով, օրենսդրական փոփոխությամբ նախատեսվել է նոր կարգավորում, որի համաձայն՝ Հանձնաժողովի նախագահի կողմից կանխարգելիչ միջոցառումների կիրառման շրջանակում հաշվի է առնվում նաև լիցենզավորված անձի նախկինում կատարված խախտումների քանակը, հաճախականությունը և բնույթը: Միաժամանակ, օրենսդրական փոփոխության անցումային դրույթներով նախատեսվել է դրա տարածումը նաև մինչև օրենքի ուժի մեջ մտնելը թույլ տրված խախտումների վրա: Այսինքն՝ օրենսդիրը նախատեսել է նոր կարգավորման հետադարձ կիրառություն:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ «Էներգետիկայի մասին» օրենքի 52.1-ին հոդվածի 1-ին մասի 2-րդ նախադասության սահմանադրականությունը հարկ եմ համարում գնահատել Սահմանադրության 73-րդ հոդվածի լույսի ներքո՝ պարզելու համար, թե արդյոք տվյալ դեպքում առկա է անձի իրավական վիճակը վատթարացնող նորմի հետադարձ կիրառություն:

Նախ, գտնում եմ, որ «Էներգետիկայի մասին» օրենքի 52.1-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված կանխարգելիչ միջոցառումներն իրենց բովանդակությամբ և հետևանքներով լիցենզավորված անձի իրավունքների նկատմամբ առաջացնում են ինտենսիվ միջամտություն: Իսկ այն հանգամանքը, որ այդ միջոցառումների կիրառման հիմքում դրվում են նաև լիցենզավորված անձի կողմից նախկինում կատարված խախտումների քանակը, հաճախականությունը կամ բնույթը, վկայում է այն մասին, որ նոր կարգավորումը փաստացի փոխում է նախկինում դրսևորված վարքագծի նշանակությունը՝ այն կապելով այնպիսի հետևանքների հետ, որոնք նախկինում նախատեսված չէին:

Իսկ մինչև նշված փոփոխությունների ուժի մեջ մտնելը գործող իրավակարգավորման պայմաններում լիցենզավորված անձը չէր կարող ողջամտորեն կանխատեսել, որ իր կողմից թույլ տրված խախտումներն ապագայում կարող են հիմք հանդիսանալ նոր՝ իր իրավունքների նկատմամբ ինտենսիվ միջամտություն նախատեսող կանխարգելիչ միջոցառումների կիրառման համար:

Ելնելով վերոնշյալից՝ գտնում եմ, որ «Էներգետիկայի մասին» օրենքի 52.1-ին հոդվածի 1-ին մասի 2-րդ նախադասությամբ սահմանված կարգավորման (այն է՝ կանխարգելիչ միջոցառումների կիրառման դեպքում, ի թիվս այլնի, հաշվի են առնվում

նաև լիցենզավորված անձի կողմից նախկինում կատարված խախտումների քանակը, հաճախականությունը կամ բնույթը) տարածումը մինչև օրենքի ուժի մեջ մտնելը թույլ տրված խախտումների վրա, հանգեցնում է լիցենզավորված անձի իրավական վիճակի վատթարացման՝ թույլ տալով նախկինում կատարված վարքագծի հիման վրա վերջինիս իրավունքների նկատմամբ կիրառել նոր, ինտենսիվ միջամտություն նախատեսող իրավական հետևանքներ (կանխարգելիչ միջոցառումների տեսքով): Նման պայմաններում գտնում են, որ «Էներգետիկայի մասին» օրենքի 52.1-ին հոդվածի 1-ին մասի 2-րդ նախադասությունը հակասում է Սահմանադրության 73-րդ հոդվածով ամրագրված՝ անձի իրավական վիճակը վատթարացնող նորմերի հետադարձ ուժի արգելքի սկզբունքին, քանի որ այն լիցենզավորված անձի համար առաջացնում է ինտենսիվ միջամտություն նախատեսող իրավական հետևանքներ:

Մինչդեռ նշված հարցի առնչությամբ Սահմանադրական դատարանն իր՝ 2026 թվականի մարտի 12-ի ՍԴՈ-1819 որոշմամբ եկել է այն եզրահանգման, որ «Էներգետիկայի մասին» օրենքի 52.1-ին հոդվածի 1-ին մասի 2-րդ նախադասությունը համապատասխանում է Սահմանադրությանը: Սահմանադրական դատարանը նշված եզրահանգմանը եկել է հետևյալ պատճառաբանությունների հիման վրա.

- «**118.** (...) Սահմանադրական դատարանն այս կապակցությամբ մեկ անգամ ևս ուշադրություն է հրավիրում նախորդիվ արդեն պատճառաբանված այն եզրակացության վրա, որ [«Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի] 52.1-ին հոդվածով սահմանված կանխարգելիչ միջոցառումներն իրավական պատասխանատվության միջոցներ չեն: Էներգետիկայի բնագավառում իրավախախտումների օբյեկտիվ կողմի նկարագրությունն ու Հանձնաժողովի կողմից դրանց համար կիրառվող պատասխանատվությունը 2025 թվականի հուլիսի 3-ին ընդունված՝ ««Էներգետիկայի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» ՀՕ-196-Ն օրենքի ընդունմամբ մնացել է անփոփոխ, ինչը նշանակում է, որ նշյալ օրենքով չի սահմանվել անձի իրավական վիճակը վատթարացնող պատասխանատվություն ենթադրող որևիցե դրույթ, այլ ընդամենը սահմանվել է սպառողների շահերի պաշտպանությանն ուղղված կանխարգելիչ միջոցառումների շրջանակ, որոնցից յուրաքանչյուրի կիրառման համաչափության ապահովման համար անհրաժեշտ է հաշվի առնել լիցենզավորված անձի կողմից նախկինում կատարված խախտումների քանակը, հաճախականությունը կամ բնույթը»,

- «**120.** (...) Սահմանադրական դատարանը խնդրո առարկա իրավակարգավորումը դիտարկում է ոչ թե որպես օրենքով սահմանված նոր կարգավորում, որի վրա տարածվում են Սահմանադրության 73-րդ հոդվածի 1-ին մասի երաշխիքները, այլ անհատականացման սկզբունքի պահանջներից բխող «խախտողի անձ» ընդհանուր հասկացության կոնկրետացում՝ հաշվի առնվելիք հանգամանքների որոշակի շրջանակի սահմանման միջոցով»:

Փաստորեն, Սահմանադրական դատարանը «Էներգետիկայի մասին» օրենքի 52.1-ին հոդվածի 1-ին մասի 2-րդ նախադասության՝ Սահմանադրությանը համապատասխանելու հիմքում հիմնականում դրել է այն պատճառաբանությունը, որ «Էներգետիկայի մասին» օրենքի 52.1-րդ հոդվածով նախատեսված կանխարգելիչ միջոցառումները իրավական պատասխանատվության միջոցներ չեն և, հետևաբար, Սահմանադրության 73-րդ հոդվածի 1-ին մասի գործողությունը չի տարածվում վիճարկվող դրույթի վրա:

Նշված դիրքորոշման առնչությամբ հարկ են համարում նշել հետևյալը.

Նախ՝ Սահմանադրության 73-րդ հոդվածի 1-ին մասի բովանդակությունը սահմանափակված չէ բացառապես «պատասխանատվություն» սահմանող նորմերով: Սահմանադրական դրույթի բովանդակությունից հետևում է, որ այն վերաբերում է անձի իրավական վիճակը վատթարացնող օրենքներին և այլ իրավական ակտերին՝ առանց դրանք կապելու միայն պատասխանատվության ինստիտուտի հետ: Այսինքն՝ հետադարձ ուժի սահմանադրական արգելքն ավելի ընդգրկուն է և տարածվում է բոլոր այն իրավակարգավորումների վրա, որոնք անձի համար առաջացնում են անբարենպաստ իրավական հետևանքներ:

Բացի այդ, էական է ոչ թե օրենքների և այլ իրավական ակտերի անվանումը («պատասխանատվություն», «կանխարգելիչ միջոցառում» և այլն), այլ դրանց ազդեցությունն անձի իրավական վիճակի վրա: Ուստի միայն այն հանգամանքը, որ միջոցառումը բնութագրվում է որպես «կանխարգելիչ», ինքնին չի բացառում դրա՝ Սահմանադրության 73-րդ հոդվածի իմաստով վատթարացնող լինելու հանգամանքը: Նկատի ունենալով այն հանգամանքը, որ կանխարգելիչ միջոցառման կիրառումը հանգեցնում է լիցենզավորված անձի իրավունքների նկատմամբ ինտենսիվ միջամտության, գտնում են, որ այն իր էությամբ պետք է դիտարկվի որպես անձի վիճակը վատթարացնող իրավական հետևանք:

Այդուհանդերձ, Սահմանադրական դատարանի դիրքորոշման պարագայում ստացվում է, որ օրենսդիրը կարող է ցանկացած նոր սահմանափակող կամ միջամտող կարգավորում հետադարձ ուժով կիրառել՝ պարզապես այն չորակելով որպես «պատասխանատվություն»: Մինչդեռ, իմ գնահատմամբ, այսպիսի մեկնաբանությունը հանգեցնում է Սահմանադրության 73-րդ հոդվածով ամրագրված երաշխիքների արժեզրկման:

Միաժամանակ անդրադառնալով Սահմանադրական դատարանի այն պատճառաբանությանը, ըստ որի՝ վիճարկվող դրույթը «նոր կարգավորում չէ», այլ ընդամենը «խախտողի անձ» հասկացության կոնկրետացում է, ապա այն, ըստ իս, չի կարող համարվել հիմնավորված:

Նշված պատճառաբանության առնչությամբ հարկ են համարում նշել, որ մինչև 2025 թվականի հուլիսի 3-ին ընդունված՝ ««Էներգետիկայի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» ՀՕ-196-Ն օրենքով լրացում կատարելը «Էներգետիկայի մասին» օրենքում կանխարգելիչ միջոցառումների կիրառման վերաբերյալ որևէ գործիքակազմ նախատեսված չի եղել: Հետևաբար, իմ գնահատմամբ, օրենսդիրը ոչ թե «կոնկրետացրել» է առկա՝ «խախտողի անձ» հասկացությունը, այլ ստեղծել է նոր իրավական կարգավորում, որի շրջանակում նախկինում կատարված խախտումները ստացել են նոր իրավական նշանակություն՝ դառնալով նոր սահմանափակումների, այն է՝ կանխարգելիչ միջոցառումների կիրառման հիմք:

Ամփոփելով վերոնշյալը՝ գտնում են, որ Սահմանադրական դատարանի այն մոտեցումը, ըստ որի՝ իրավական ակտի հետադարձ ուժի արգելքը կիրառելի է միայն պատասխանատվություն սահմանող նորմերի նկատմամբ, և որ վիճարկվող դրույթը նոր չէ, այլ ընդամենը «խախտողի անձ» հասկացության կոնկրետացում է, չի բխում Սահմանադրության 73-րդ հոդվածի բովանդակությունից:

3.2. Այսպիսով՝ ելնելով վերոնշյալ վերլուծություններից՝ գտնում են, որ «Էներգետիկայի մասին» օրենքի 52.1-ին հոդվածի 1-ին մասի 2-րդ

նախադասությունը, այնքանով, որքանով կանխարգելիչ միջոցառումների կիրառման դեպքում, ի թիվս այլնի, հաշվի են առնվում նաև լիցենզավորված անձի կողմից նախկինում (մինչև 2025 թվականի հուլիսի 3-ին ընդունված՝ ««Էներգետիկայի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» ՀՕ-196-Ն օրենքի ուժի մեջ մտնելու պահը) կատարված խախտումների քանակը, հաճախականությունը կամ բնույթը, հակասում է Սահմանադրության 73-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված՝ անձի իրավական վիճակը վարթարացնող օրենքների և այլ իրավական ակտերի հետադարձ ուժի արգելքի սկզբունքին:

4. ԱՄՓՈՓԻՉ ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ

4.1. Հիմք ընդունելով Բաժին I-ում արտահայտված իրավական դիրքորոշումները՝ գտնում են, որ «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 36-րդ հոդվածի 9-րդ մասը և «Էներգետիկայի մասին» օրենքի 52.1-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը՝ այնքանով, որքանով Հանձնաժողովի նախագահին վերապահում են իրավասություն միանձնյա կարգով լիցենզավորված անձի նկատմամբ կիրառելու կանխարգելիչ միջոցառումներ, հակասում են Սահմանադրության 122-րդ հոդվածին:

4.2. Հիմք ընդունելով Բաժին II-ում արտահայտված իրավական դիրքորոշումները՝ գտնում են, որ «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 36-րդ հոդվածի 9-րդ մասը և «Էներգետիկայի մասին» օրենքի 52.1-ին հոդվածի 3-րդ մասը համապատասխանում են Սահմանադրությանն այնպիսի մեկնաբանությամբ, համաձայն որի՝ Հանձնաժողովի կողմից լիցենզավորված անձի ժամանակավոր կառավարիչ նշանակվելու հանգամանքից անկախ՝ պետք է երաշխավորվի լիցենզավորված անձի՝ Հանձնաժողովի նախագահի վարույթ հարուցելու և կանխարգելիչ միջոցառումներ կիրառելու վերաբերյալ որոշումների դատական կարգով բողոքարկման իրավունքի լիարժեք իրացման հնարավորությունը:

4.3. Հիմք ընդունելով Բաժին III-ում արտահայտված իրավական դիրքորոշումները՝ գտնում են, որ «Էներգետիկայի մասին» օրենքի 52.1-ին հոդվածի 1-ին մասի 2-րդ նախադասությունը, այնքանով, որքանով կանխարգելիչ միջոցառումների կիրառման դեպքում, ի թիվս այլնի, հաշվի են առնվում նաև լիցենզավորված անձի կողմից նախկինում (մինչև 2025 թվականի հուլիսի 3-ին ընդունված՝ ««Էներգետիկայի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» ՀՕ-196-Ն օրենքի ուժի մեջ մտնելու պահը) կատարված խախտումների քանակը, հաճախականությունը կամ բնույթը, հակասում է Սահմանադրության 73-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված՝ անձի իրավական վիճակը վարթարացնող օրենքների և այլ իրավական ակտերի հետադարձ ուժի արգելքի սկզբունքին:

ԴԱՏԱՎՈՐ՝

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ

«20» մարտի 2026թ.

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ՝ «ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐ-
ՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԹՎԻ ԱՌՆՎԱԶՆ ՄԵԿ ՀԻՆԳԵՐՈՐԴԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝
«ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ 17-ՐԴ ՀՈՂՎԱԾԻ «Գ» ԿԵՏԻ, 27-ՐԴ
ՀՈՂՎԱԾԻ 2.1-ԻՆ ՄԱՍԻ, 52.1-ԻՆ ՀՈՂՎԱԾԻ 1-3-ՐԴ ՄԱՍԵՐԻ ԵՎ «ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՄԱՐՄՆԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ 36-ՐԴ
ՀՈՂՎԱԾԻ 9-ՐԴ ՄԱՍԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ
ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾՈՎ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 12-ԻՆ
ԿԱՅԱՑՎԱԾ ՍԴՈ-1819 ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Սահմանադրական դատարանի վերոնշյալ որոշումը հրապարակվել է 2026 թվականի մարտի 12-ին:

Գործի քննության առիթն Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդի՝ 2025 թվականի հուլիսի 11-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Սույն գործով Դիմող է հանդիսացել Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդը (այսուհետ նաև՝ Դիմող), ներկայացուցիչներ՝ Ազգային ժողովի պատգամավոր Արծվիկ Մինասյան, փաստաբան Արամ Վարդևանյան, պատասխանող՝ Ազգային ժողովը (այսուհետ նաև՝ Պատասխանող), ներկայացուցիչներ՝ Ազգային ժողովի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ՝ Մարի Ստեփանյան և նույն վարչության պետի տեղակալ Էլեն Մնացականյան:

Դիմողը Սահմանադրական դատարան ներկայացրած դիմումով խնդրել է. «(...) որոշել ՀՀ «Էներգետիկայի մասին» օրենքի (ՀՕ-148) 17-րդ հոդվածի 1-ին մասի գ) ենթակետի, 27-րդ հոդվածի 2.1-րդ և 2.2-րդ մասերի, 52-րդ հոդվածի, 52.1-րդ հոդվածի և ՀՀ «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 36-րդ հոդվածի 9-րդ մասի դրույթների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 3-րդ, 59-րդ, 60-րդ, 73-րդ, 75-րդ, 78-րդ և 79-րդ հոդվածներին համապատասխանության հարցը»:

Սահմանադրական դատարանի 12.03.2026 թ. ՍԴԱՌ-32 աշխատակարգային որոշմամբ «Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդի դիմումի հիման վրա՝ «Էներգետիկայի մասին» օրենքի 17-րդ հոդվածի «գ» կետի, 27-րդ հոդվածի 2.1-ին և 2.2-րդ մասերի, 52-րդ հոդվածի, 52.1-ին հոդվածի և «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 36-րդ հոդվածի 9-րդ մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը մասամբ՝ «Էներգետիկայի մասին» օրենքի 27-րդ հոդվածի 2.2-րդ մասի, 52-րդ հոդվածի, 52.1-ին հոդվածի 4-10-րդ մասերի մասով, կարճվել է:

Սահմանադրական դատարանը դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննելով «Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդի դիմումի հիման վրա՝ «Էներգետիկայի մասին» օրենքի 17-րդ հոդվածի «գ» կետի, 27-րդ հոդվածի 2.1-ին մասի, 52.1-ին հոդվածի 1-3-րդ մասերի և «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 36-րդ հոդվածի 9-րդ մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը որոշել է՝

«1. «Էներգետիկայի մասին» օրենքի 17-րդ հոդվածի «գ» կետը համապատասխանում է Սահմանադրությանը:

2. «Էներգետիկայի մասին» օրենքի 27-րդ հոդվածի 2.1-ին մասը համապատասխանում է Սահմանադրությանը:

3. «Էներգետիկայի մասին» օրենքի 52.1-ին հոդվածի 1-ին, 2 և 3-րդ մասերը համապատասխանում են Սահմանադրությանը:

4. «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 36-րդ հոդվածի 9-րդ մասը համապատասխանում է Սահմանադրությանը:

5. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից»:

Համաձայն լինելով 2026 թվականի մարտի 12-ին կայացված որոշման (այսուհետ նաև՝ Որոշում) եզրափակիչ մասի հետ՝ միաժամանակ անհրաժեշտ են համարում արտահայտել անհամաձայնությունս Որոշման պատճառաբանական մասում դատական պաշտպանության իրավունքի սահմանադրականության հարցին անդրադառնալու առնչությամբ՝ հիմք ընդունելով ստորև ներկայացված հիմնավորումները:

Դիմողն իր դիմումում անդրադարձել է հետևյալ հարցերին.

Վկայակոչելով «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի «գ» կետը, Դիմողը գտել է, որ Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) ստացել է լիազորություն՝ ուղղակիորեն դադարեցնելու լիցենզիան՝ առանց դատարան դիմելու: Ըստ Դիմողի՝ դատական կարգի նման շրջանցումը՝ տվյալ պարագայում Սահմանադրության 60-րդ հոդվածի 4-րդ մասով ամրագրված՝ դատական կարգով սեփականությունից զրկելու պահանջի խախտում է:

Դիմողի համոզմամբ՝ առանց լիցենզիայի տնտեսվարող սուբյեկտը, ձևական առումով պահպանելով իր գույքը, ընդհանրապես չի կարող այն օգտագործել իր ֆունկցիոնալ նպատակին համապատասխան, ուստի՝ տվյալ պարագայում գույքի օգտագործման իրավազորության վերացումը հավասարազոր է սեփականությունից զրկելուն:

Դիմողը պնդում է, որ Էներգետիկայի ոլորտում գործող ընկերությունների լիցենզիաները ևս պետք է դիտարկվեն որպես սեփականության իրավունքի օբյեկտ, իսկ քանի որ լիցենզիայից զրկումը հանդիսանում է սեփականությունից զրկում, ապա Հանձնաժողովին առանց դատարան դիմելու լիցենզիայի գործողությունը դադարեցնելու լիազորության ընձեռումը հակասում է Սահմանադրության 60-րդ հոդվածի 4-րդ մասին և, բացի դրանից, Հանձնաժողովի կողմից լիցենզիայի դադարեցման դեպքում չկա արդյունավետ դատական վերահսկողության կառուցակարգ:

Անդրադառնալով Օրենքի 27-րդ հոդվածի 2.1-ին և 2.2-րդ մասերի սահմանադրականության հարցին՝ Դիմողը գտել է, որ Էներգետիկայի ոլորտի տնտեսվարող սուբյեկտի բաժնեմասերի և ակտիվների նկատմամբ Կառավարության ընդհանուր նախապատվության իրավունքի դրույթն անհամատեղելի է Սահմանադրության հետ, քանի որ անհամաչափորեն միջամտում է տնտեսվարող սուբյեկտների տնտեսական գործունեության ազատությանը և սեփականության իրավունքին: Ըստ Դիմողի՝ Կառավարության օգտին նախապատվության իրավունքի սահմանումն անհրաժեշտ միջոց չէ, քանի որ նշյալ օրենքի 27-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերն արդեն իսկ նախատեսում են ոլորտի համար պատասխանատու Հանձնաժողովի իրավասությունը՝ նախապես տալու իր համաձայնությունը նախատեսվող գործարքներին՝ Հանձնաժողովի կողմից հաստատված էլեկտրաէներգետիկական շուկայի առևտրային և ցանցային կանոնների համաձայն: Կառավարու-

թյան նախապատվության իրավունքը համարժեք չէ նաև տնտեսվարող սուբյեկտների տնտեսական գործունեության ազատությանը և սեփականության իրավունքին, քանի որ այն խաթարում է վստահությունը սեփականության և ներդրումների պաշտպանության նկատմամբ:

Դիմողը գտել է, որ առանց նպատակի հստակության՝ Կառավարության օգտին նախապատվության իրավունքի սահմանումը, որպես միջոց, ունի պիտանելիության խնդիրներ: Այն նաև «(...) անհրաժեշտ միջոց չէ, քանի որ այդ օրենքի 27-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը արդեն իսկ նախատեսում են ոլորտի համար պատասխանատու հանձնաժողովի իրավասությունը՝ նախապես տալու իր համաձայնությունը նախատեսվող գործարքներին (...):»:

Դիմողի գնահատմամբ՝ «Հանձնաժողովի կողմից նախապես համաձայնություն տալու գործիքն ավելի մեղմ և միաժամանակ արդյունավետ գործիք է, (...) Կառավարության նախապատվության իրավունքը համարժեք չէ նաև տնտեսվարող սուբյեկտների տնտեսական գործունեության ազատությանը և սեփականության իրավունքին, քանի որ խաթարում է վստահությունը սեփականության և ներդրումների պաշտպանության նկատմամբ: Վնասի աստիճանը անհամաչափ է միջամտության օգուտին, ինչը նշանակում է, որ կարգավորումը անհամաչափ է նաև Սահմանադրության 78-րդ հոդվածի 2-րդ նախադասության իմաստով»:

Դիմողի կարծիքով՝ Օրենքի 52.1-ին հոդվածով նախատեսված կանխարգելիչ միջոցառումների կիրառումը վարչական վարույթի փուլում, երբ դեռևս չկա իրավական ուժ ունեցող ակտ, իսկ անձի պատասխանատվությունն իրավական գնահատականի չի ենթարկվել, անհամաչափ միջամտություն է ինչպես սեփականության իրավունքին, այնպես էլ Սահմանադրության 59-րդ հոդվածով երաշխավորված տնտեսական գործունեության ազատությանը:

Ըստ Դիմողի՝ Օրենքի 52.1-ին հոդվածով և «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 36-րդ հոդվածի 9-րդ մասով ներդրված կանխարգելիչ միջոցառումների կիրառումը տեղի է ունենում այնպիսի պայմաններում, երբ ընդհանրապես տնտեսվարող սուբյեկտի մեղավորությունը որևէ կերպ չի փաստվել: Ըստ Դիմողի՝ Սահմանադրության 78-րդ հոդվածով սահմանված համաչափության սկզբունքը պահանջում է, որ հիմնական իրավունքի սահմանափակման համար ընտրված միջոցը, պիտանի լինելուց զատ, լինի անհրաժեշտ, այսինքն՝ չկիրառվի ծայրահեղ միջոցը: «Մինչդեռ «Էներգետիկայի մասին» օրենքի 52.1-րդ հոդվածի 2-րդ մասը հանձնաժողովի նախագահին տալիս է հայեցողական լիազորություն՝ ընտրելու սահմանված հինգ միջոցներից մեկը կամ մի քանիսը: Ակնհայտ է, որ այդ միջոցներից առաջինը (սահմանել առերևույթ խախտումների կամ դրանց հետևանքների վերացման ծրագիր և լիցենզավորված անձից պահանջել դրանց իրականացումը) Սահմանադրության 59-րդ և 60-րդ հոդվածներին միջամտության ինտենսիվությամբ որևէ կերպ համեմատելի չէ հանձնաժողովի նախագահի՝ ժամանակավոր կառավարիչ նշանակելու կամ լիցենզավորված անձի կանոնադրությունը փոփոխելու պահանջի հետ: Այդուհանդերձ, վիճարկվող օրենքը, առանց ընտրված միջոցների անհրաժեշտության չափանիշի հաշվառման, այդ միջոցներից որևէ մեկի կամ բոլորի միաժամանակ կիրառումը վերապահում է հանձնաժողովի նախագահի հայեցողությանը»:

Դիմողը, վկայակոչելով Օրենքի 52.1-ին հոդվածի 1-ին մասի 2-րդ նախադասությունը, ինչպես նաև 03.07.2025 թ. ՀՕ-196-Ն օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասը, գտնում

է՝ քանի որ մինչ Օրենքի «(...) վերջին փոփոխությունը ընդհանրապես գոյություն չի ունեցել կանխարգելիչ միջոցառումների իրականացման ինստիտուտ, ստացվում է, որ էներգետիկայի մասին օրենքը ուղղակիորեն հետադարձ ուժ է տվել անձի իրավական վիճակը վատթարացնող դրույթին, քանի որ **օրենքի ընդունումից առաջ ավարտված փաստակազմի վրա** (նախկինում կատարված խախտումների քանակը, հաճախականությունը կամ բնույթը) տարածվում են **նոր իրավական հետևանքներ** (հիմք են կանխարգելիչ միջոցառումների իրականացման համար): Ուստի տվյալ պարագայում առկա է օրենքի իրական (իսկական) հետադարձ ուժի կիրառում, ինչը առանց որևէ վերապահման արգելված է Սահմանադրության 73-րդ հոդվածի 1-ին մասով»:

Անդրադառնալով «**Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին**» **օրենքի 36-րդ հոդվածի 9-րդ մասի** սահմանադրականության հարցին՝ Դիմողը փաստում է, որ իշխանությունների բաժանման սկզբունքի և ինքնավար մարմինների անկախության տեսանկյունից խնդրահարույց է նշյալ նորմով սահմանված՝ Կառավարության լիազոր մարմնի հաղորդման հիման վրա ինքնաշխատ կերպով վարչական վարույթի հարուցումը: Միևնույն ժամանակ, Դիմողը գտնում է, որ եթե ընդունելի կարելի է համարել նշյալ նորմի ուժով կառավարության լիազոր մարմնի կողմից Հանձնաժողովին հաղորդում ներկայացնելու իրավունքը, «ապա այդ դրույթով նախատեսված վարչական վարույթ հարուցելու պարտականությունը Հանձնաժողովի նախագահի կողմից՝ Հանձնաժողովի ինքնավարության և անկախության խախտում է»:

Ըստ Դիմողի՝ Հանձնաժողովի նախագահի կողմից միանձնյա կարգով կանխարգելիչ միջոցառումներ կիրառելու մասին որոշում կայացնելու լիազորությունը հակասում է Հանձնաժողովի կոլեգիալ բնույթին: Դիմողի համոզմամբ՝ Հանձնաժողովի նախագահի լիազորություններն ունեն բացառապես ներքին կազմակերպական և ներկայացուցչական բնույթ և չեն կարող ունենալ որևէ արտաքին ներգործություն, ուստի՝ տվյալ պարագայում հակասում են Սահմանադրության 122-րդ հոդվածին:

Դիմողը կարծում է, որ հաղորդում ներկայացնելիս Կառավարության լիազոր մարմնի վրա դրված է միայն «առերևույթ հիմնավորման» պարտականությունն առ այն, որ «**կարող է** վտանգվել էներգետիկայի բնագավառի բաղկացուցիչ համակարգի անվտանգությունը կամ հուսալիությունը», կամ որ «**հավանական խախտումը հանգեցրել է կամ կարող է հանգեցնել մի խումբ սպառողների իրավունքների կամ օրինական շահերի խախտման կամ լիցենզիայի պայմանների կոպիտ խախտման**»: Դիմողը գտնում է, որ այդ ձևակերպումներն ակնհայտորեն հակասում են որոշակիության սահմանադրական սկզբունքին, որովհետև որևէ կերպ հասկանալի չէ, թե ինչ է նշանակում ընդհանրապես «**առերևույթ հիմնավորում**» եզրույթը: Նույն անորոշությունն է նաև, երբ վիճարկվող դրույթում խոսք է գնում այն մասին, որ «**հավանական խախտումը հանգեցրել է...** մի խումբ սպառողների իրավունքների կամ օրինական շահերի խախտման կամ լիցենզիայի պայմանների կոպիտ խախտման»:

Դիմողն իր դիմումն ավարտել է հետևյալ ընդհանրական նախադասությամբ.

«(...) Անվիճելի է, որ որևէ հիմնական իրավունքի արդյունավետ իրացում ենթադրում է նաև արդյունավետ իրացման խոչընդոտների, սահմանափակումների դեպքում դրանց հաղթահարման, վերացման նպատակով դատական վերահսկողության իրավունքի իրացման հնարավորության նախատեսում: Անձը չպետք է զրկվի իր հիմնական իրավունքների սահմանափակման իրավաչափությունը պատշաճ վերահսկողության

առարկա դարձնելու, անկախ և անաչառ դատարանի՝ դատարանի կողմից իր գործի քննության իրավունքից»:

Այնուհետև՝ «Սահմանադրական դատարան ներկայացվող խնդրանք» բաժնում ձևակերպել է իր խնդրանքը.

«Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի և «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 68-րդ հոդվածով խնդրում եմ՝ որոշել ՀՀ «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի (ՀՕ-148) 17-րդ հոդվածի 1-ին մասի գ) ենթակետի 27-րդ հոդվածի 2.1-րդ և 2.2-րդ մասերի, 52-րդ հոդվածի, 52.1-րդ հոդվածի և «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 36-րդ հոդվածի 9-րդ մասի դրույթների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 3-րդ, 59-րդ, 60-րդ, 73-րդ, 75-րդ, 78-րդ և 79-րդ հոդվածներին համապատասխանության հարցը»:

Վերը նշված պայմաններում, նկատի ունենալով, որ Դիմողի կողմից Սահմանադրության 61-րդ հոդվածով երաշխավորված դատական պաշտպանության իրավունքի սահմանադրականության հարցը որպես ինքնուրույն վիճարկման առարկա չի բարձրացվել, հարկ եմ համարում արձանագրել, որ Սահմանադրական դատարանը Որոշման «Սույն գործով պարզման ենթակա հանգամանքներ» բաժնի 4-րդ կետում սեփական նախաձեռնությամբ ձևակերպել և քննության առարկա է դարձրել հետևյալ հարցը.

«(...) արդյոք Օրենքի 52.1-ին հոդվածի 3-րդ մասով նախատեսված իրավակարգավորման պայմաններում՝ կանխարգելիչ միջոցառման՝ լիցենզավորված անձի ժամանակավոր կառավարիչ նշանակելու պարագայում երաշխավորվում է շահագրգիռ անձի՝ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասով ամրագրված արդյունավետ դատական պաշտպանության իրավունքը»:

Այնուհետև, նույն Որոշման «Օրենքի 52.1-ին հոդվածի 1-3-րդ մասերով սահմանված կանխարգելիչ միջոցառումների և դրանց կիրառման կարգի վերաբերյալ» 5.6-րդ թվագրված բաժնի 108-114-րդ կետերում Սահմանադրական դատարանն անդրադարձել է դատական պաշտպանության իրավունքի վերաբերյալ դրույթներին և վկայակոչել է ինչպես ՄԻԵԴ-ի, այնպես էլ Սահմանադրական դատարանի նախադեպային որոշումներ:

Սակայն նշված անդրադարձը, դիտարկելով այն դիմումի բովանդակության ամբողջության մեջ, ստեղծում է անորոշություն, քանի որ ներկայացված իրավական հղումները չեն ստանում որևէ ինքնուրույն կամ նոր սահմանադրաիրավական նշանակություն սույն գործի շրջանակներում:

Մասնավորապես՝ Սահմանադրական դատարանը սահմանափակվել է համապատասխան իրավական դրույթների և նախադեպերի շարադրմամբ՝ առանց բացահայտելու դրանց կիրառելիությունը և ազդեցությունը սույն գործի փաստական և իրավական հանգամանքների վրա:

Նման պայմաններում բացակայում է այն վերլուծությունը, որը պետք է ցույց տար, թե վկայակոչված դիրքորոշումներն ի՛նչ դեր ունեն վիճարկվող դրույթների սահմանադրականության գնահատման հարցում:

Արդյունքում, գտնում եմ, որ Սահմանադրական դատարանը, ըստ էության, չի տվել դատական պաշտպանության իրավունքի վերաբերյալ բարձրացված (կամ իր նախաձեռնությամբ դիտարկված) հարցի լիարժեք և հիմնավորված լուծում, իսկ պատճառաբանական մասում ներկայացված դիրքորոշումները կրում են հպանցիկ և ձևական բնույթ:

Այսպես.

Սահմանադրական դատարանը 101-րդ կետում արձանագրել է՝ «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հանձնաժողովի իրավական ակտերը կարող են բողոքարկվել դատական կարգով, ինչից բխում է, որ բողոքարկելի են նաև կանխարգելիչ միջոցառումների կիրառմանը վերաբերվող ակտերը:

Արդյո՞ք ընդգծված ձևակերպում-հետևությունն ունի հիմնավորում, երբ հարցը վերաբերվում է ժամանակավոր կառավարիչ նշանակելու և գործադիր տնօրենի ու գործադիր լիազորությունները ժամանակավոր կառավարչին փոխանցելու առանձնահատուկ պայմաններում դատական վիճարկումների հնարավորության չափին:

Վերը շարադրվածից պարզորոշ երևում է, որ Դիմողի կողմից բարձրացված հարցերում բացակայում են դատական պաշտպանության իրավունքի ապահովմանը վերաբերվող հարցերը, հետևապես՝ դրանք չէին կարող դառնալ Սահմանադրական դատարանում քննության առարկա: Այն, որ Դիմողի կողմից դատական պաշտպանության իրավունքի հարց բարձրացված չի եղել, և դատարանի կողմից դրսևորվել է այն բարձրացնելու նախաձեռնություն, հաստատում է նաև Պատասխանողի՝ Ազգային ժողովի ներկայացրած գրավոր բացատրությունը, որում իրավաչափորեն որևէ անդրադարձ չկա տվյալ հարցին:

2. Անդրադառնալով վերացական վերահսկողության առնչությամբ դիմումին առաջադրվող պահանջներին հայտնում եմ հետևյալը.

«(...) օրենսդիրը, ի տարբերություն Սահմանադրական դատարանի դիմելու իրավասություն ունեցող այլ սուբյեկտների կողմից ներկայացվող դիմումների, կոնկրետ սահմանադրական վերահսկողության շրջանակներում անհատական դիմումների ընդունելության մերժման հիմք է սահմանել, ի թիվս այլնի, դիմումի ակնհայտ անհիմն լինելը: Սահմանադրական դատարանի դիմող այլ սուբյեկտների պարագայում, որպիսիք են, օրինակ, Ազգային ժողովը, պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդը, Ազգային ժողովի խմբակցությունը, Հանրապետության նախագահը, Կառավարությունը և այլն, օրենսդիրը սահմանափակվել է Սահմանադրական դատարանի ներկայացվող դիմումին առաջադրվող ընդհանուր և ձևական բնույթի պահանջների շարադրմամբ: **Սահմանադրական դատարանը գտնում է, որ հիշատակված սուբյեկտները, ելնելով իրենց սահմանադրաիրավական բարձր կարգավիճակից, պետք է ցուցաբերեն առավել բարձր մակարդակի փութաջանություն և, յուրաքանչյուր կոնկրետ դեպքում վիճարկելով այս կամ այն իրավական ակտի կամ դրա դրույթի /դրույթների/ սահմանադրականությունը, պարզաճ կերպով հիմնավորեն վիճարկվող դրույթի և Սահմանադրությամբ պահպանվող արժեքի /իրավունքի հնարավոր խախտման միջև պարճառահետևանքային կապը» (2021 թվականի դեկտեմբերի 3, ՍԴԱՌ-248):**

Ներկայացված դիրքորոշումը համահունչ է «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի՝ «Դիմումին ներկայացվող ընդհանուր պահանջներ» վերտառությամբ 24-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետին, որի համաձայն՝ Սահմանադրական դատարանի ներկայացվող դիմումին վերագրվող պահանջներից մեկը հիմնականն է՝ ներկայացնել սեփական հիմնավորումները և փաստարկները:

Միաժամանակ, Սահմանադրական դատարանի ներկայացվող դիմումների քննության և դրանց լուծման իրավաչափությունն անքակտելիորեն կապված է այն հանգամանքի հետ, որ հարցը պետք է անպայմանորեն բարձրացված լինի Դիմողի դիմումում և լուծվի համաչափ եզրահանգմամբ՝ հիմնավորված ձևով:

Հետևապես՝ կարծում եմ, որ Սահմանադրական դատարանը պետք է խուսափի տարբերակված մոտեցումներից՝ անգամ հիմնարար իրավունքի ապահովման նպատակով՝ պայմանավորված ներկայումս գործող սահմանադրաիրավական օրենսդրական կարգավորումների անփոփոխության սկզբունքով:

3. Սահմանադրական դատարանն իր բազմաթիվ աշխատակարգային որոշումներում¹ (ՍԴԱՌ-76, 2024 թվական մայիսի 13, ՍԴԱՌ-6, 2023 թվական հունվարի 24) արձանագրել է, որ Սահմանադրական դատարանը չի կարող նախաձեռնող լինել այս կամ այն դրույթի կամ հարցի վիճարկելի լինելուն՝ Դիմողների անունից կամովին բարձրացնելով հարցեր՝ լուծելով նաև բարձրացված հարցերի ընթացքը: Իհարկե, Սահմանադրական դատարանն ունի լայն մեկնաբանման ազատություն, մասնավորապես, բարձրացված հարցերի համակարգային փոխկապակցության պայմաններում այլ դրույթի սահմանադրականությունը գնահատելու հարցում, սակայն նման լիազորությունը տարբերվում է Դիմողի կողմից հարցը բարձրացրած չլինելու և հիմնավորումների բացակայության պայմաններում կատարված անդրադարձին:

Անշուշտ, հարգելով «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայով, Սահմանադրությամբ և այլ իրավական փաստաթղթերով ամրագրված անձի դատական պաշտպանության իրավունքի հիմնարար սկզբունքը, ինչպես նաև իրավական պաշտպանության անհրաժեշտ միջոցների ապահովման կարևորությունը՝ պետք է նշել, որ սույն գործով Դիմողը չի բարձրացրել դատական պաշտպանության իրավունքի *խախտման կամ խախտման վրանգի հարց, որևէ նորմ, որը Սահմանադրության 61-րդ հոդվածի սահմանադրականության իմաստով խնդրահարույց է*, որին համաչափ՝ Սահմանադրական դատարանը, արձանագրելով իրավունքի միջամտության իրավաչափ նպատակի և հիմքի առկայությունը, խորքային վերլուծությամբ և հիմնավորմամբ կառաջադրեր սահմանադրաիրավական վեճից բխող լուծումներ: Տվյալ դեպքում՝ հարցը պատշաճ մակարդակի բարձրացված լինելու պարագայում, անհրաժեշտ կլիներ բացահայտել ժամանակավոր կառավարիչ նշանակելու պայմաններում տվյալ իրավահարաբերությունում առաջացած ենթադրյալ բախվող շահերի և դատական պաշտպանություն իրականացնելու սուբյեկտային կազմի և բողոքարկվող որոշումների շրջանակը՝ գնահատելով ինչպես տվյալ ոլորտի առանձնահատկությունը, այնպես էլ կանխարգելիչ միջոց կիրառելու նպատակի կարևորությունը, պատճառները և առանձնահատկությունները:

¹ (...) Նույնը, սակայն, վերաբերելի չէ դիմումի առարկայի շրջանակի որոշակիացման հարցում Սահմանադրական դատարանի իրավասությանը, երբ Սահմանադրական դատարանի հայեցողությամբ (proprio motu) սահմանադրական արդարադատություն հայցելու վերաբերյալ դիմումի առարկայի շրջանակի փոփոխությունը դրանում վիճարկվող դրույթներից բացի այլ դրույթներ ներառելու միջոցով (բացառությամբ՝ Սահմանադրական օրենքի 68-րդ հոդվածի 10-րդ մասով նախատեսված դեպքի, որի նախադրյալները, սակայն, սույն գործում առկա չեն): Հակառակ դեպքում, Սահմանադրական դատարանը սահմանադրական վեճ լուծող ատյանից վերաձվելու է սահմանադրական վեճ նախաձեռնող կողմի, ինչն անհամատեղելի է Սահմանադրական դատարանի անկախ և անաչառ սահմանադրական արդարադատության ատյանի իր սահմանադրական կարգավիճակի հետ, ինչպես նաև հակասելու է Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող անձի՝ իր պահանջի որոշակիացման հարցում տնօրինչականության սկզբունքին կամ հանրային իշխանության մարմնի դեպքում՝ նրա համապատասխան իրավասության իրականացման հայեցողությանը:

Հետևապես գտնում եմ, որ Սահմանադրական դատարանի 2026 թվականի մարտի 12-ի ՍԴՈ-1819 որոշման մեջ իրավական դրույթների ուղղակի հիշատակումները՝ անգամ հարցի բարձրացված չլինելն անտեսելու պայմաններում, չի նախանշում դատական պաշտպանության հասցեատերերի՝ սույն դիմումի առարկային առնչվող սուբյեկտների դատական պաշտպանության իրականացման կարգը, ուստի՝ այն չի նպաստել իրավակիրառ պրակտիկայի ճիշտ ընթացքին:

Ուստի՝ կարևոր է, որ իրավակիրառ պրակտիկայում դատարաններն իրենց գործիքակազմով ձևավորեն սույն հարցին վերաբերող դիրքորոշումներ:

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ԴԱՏԱՎՈՐ**

Ս. ՍԱՖԱՐՅԱՆ

23 մարտի 2026 թվականի

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ՝ «ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐ-
ՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԹՎԻ ԱՌՆՎԱԶՆ ՄԵԿ ՀԻՆԳԵՐՈՐԴԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝
«ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ 17-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ «Գ» ԿԵՏԻ, 27-ՐԴ
ՀՈԴՎԱԾԻ 2.1-ԻՆ ՄԱՍԻ, 52.1-ԻՆ ՀՈԴՎԱԾԻ 1-3-ՐԴ ՄԱՍԵՐԻ ԵՎ «ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՄԱՐՄՆԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ 36-ՐԴ ՀՈԴ-
ՎԱԾԻ 9-ՐԴ ՄԱՍԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾՈՎ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 12-ԻՆ ԿԱՅԱՑՎԱԾ
ՍԴՈ-1819 ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Սահմանադրական դատարանը, դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննե-
լով «Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդի
դիմումի հիման վրա՝ «Էներգետիկայի մասին» օրենքի 17-րդ հոդվածի «գ» կետի, 27-րդ
հոդվածի 2.1-ին մասի, 52.1-ին հոդվածի 1-3-րդ մասերի և «Հանրային ծառայությունները
կարգավորող մարմնի մասին» օրենքի 36-րդ հոդվածի 9-րդ մասի՝ Սահմանադրությանը
համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը, 2026 թվականի մարտի
12-ին ընդունեց ՍԴՈ-1819 որոշումը (հրապարակվել է 2026 թվականի մարտի 16-ին):

Համաձայն լինելով Սահմանադրական դատարանի ՍԴՈ-1819 որոշմանը՝ ես՝ Սահ-
մանադրական դատարանի դատավոր Ա. Վաղարշյանս, սույն հատուկ կարծիքով
նպատակ ունեմ արտահայտել խնդրո առարկայի վերաբերյալ հետևյալ կարևոր վերլու-
ծություններ, որոնք որոշման մեջ չեն արտացոլվել:

1. Սույն գործով Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ
հինգերորդը (այսուհետ նաև՝ Դիմող) իր դիմումի պատճառաբանություններով առաջ է
քաշում «Էներգետիկայի մասին» օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) մի շարք
իրավադրույթների (17-րդ հոդվածի «գ» ենթակետում սահմանված՝ Հանձնաժողովի
լիցենզավորման հետ կապված լիազորությունների, 27-րդ հոդվածի 2.1-ին մասում ամրա-
գրված՝ Կառավարության գնելու նախապատվության իրավունքի, 52.1-ին հոդվածի 1-ին և
3-րդ մասերով ամրագրված՝ սպառողների շահերի պաշտպանության նպատակով
կիրառվող կանխարգելիչ միջոցառումների, «Հանրային ծառայությունները կարգավորող
մարմնի մասին» օրենքի 36-րդ հոդվածի 9-րդ մասով ամրագրված՝ Հանձնաժողովի
նախագահի կողմից միանձնյա կարգով Կառավարության լիազոր մարմնի հաղորդման
հիման վրա վարչական վարույթ հարուցելու և կանխարգելիչ միջոցառումներ կիրառելու
մասին որոշում կայացնելու լիազորությունը)՝ Սահմանադրությանը հակասելու վարկածը՝
այդ իրավակարգավորումները որակելով անհամաչափ ինտենսիվ միջամտություն
ոլորտում գործող անձանց իրավունքին/ազատությանը, մասնավորապես՝ տնտեսվարող
սուբյեկտների տնտեսական գործունեության ազատության և սեփականության
հիմնական իրավունքներին¹:

¹ Սահմանադրական դատարանի 2026 թվականի մարտի 12-ի ՍԴԱՈ-32 աշխատակարգային
որոշմամբ «Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդի դիմումի
հիման վրա՝ «Էներգետիկայի մասին» օրենքի 17-րդ հոդվածի «գ» կետի, 27-րդ հոդվածի 2.1-ին և 2.2-
րդ մասերի, 52-րդ հոդվածի, 52.1-ին հոդվածի և «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի
մասին» օրենքի 36-րդ հոդվածի 9-րդ մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը

1. Դատական պաշտպանության իրավունքի մասով

2. Վիճարկվող դրույթների հակասահմանադրականությունը հիմնավորելիս Դիմողն իր դիմումի որոշ մասերում հպանցիկ շոշափում է նաև դատական պաշտպանության իրավունքի հարցերը, մասնավորապես՝ ըստ Դիմողի՝ «Հանձնաժողովի կողմից լիցենզիայի դադարեցման դեպքում չկա արդյունավետ դատական վերահսկողության կառուցակարգ»:

Միաժամանակ՝ դիմումի վերջնամասում՝ 58-րդ կետում, Դիմողը նշում է, որ որևէ հիմնական իրավունքի կենսագործումը ենթադրում է նաև արդյունավետ իրացման խոչընդոտների, սահմանափակումների դեպքում դրանց հաղթահարման, վերացման նպատակով դատական վերահսկողության իրավունքի իրացման հնարավորության նախատեսում: Անձը չպետք է զրկվի իր հիմնական իրավունքների սահմանափակման իրավաչափությունը պատշաճ դատական վերահսկողության առարկա դարձնելու, անկախ և անաչառ մարմնի՝ դատարանի կողմից իր գործի քննության իրավունքից:

3. Դիմողի բարձրացրած խնդրի համառոտ հիմնավորումներին Սահմանադրական դատարանն արձագանքել է Սահմանադրական դատարանի 2026 թվականի մարտի 12-ի ՍԴՈ-1819 որոշման մի շարք հատվածներում.

1) Էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզիա ստացած անձանց լիցենզիայի դադարեցմամբ համապատասխան գործունեության իրականացմանը միջամտության սահմանադրականությունը գնահատելիս Սահմանադրական դատարանն արձանագրել է հետևյալ դիրքորոշումը. **«86. Բացի դրանից, թեև լիցենզիայի գործողության դադարեցումն իրականացվում է Հանձնաժողովի կողմից՝ վարչական կարգով, օրենսդիրը՝ ի ապահովումն Սահմանադրության 61-րդ հոդվածի պահանջների, լիցենզավորված անձին իրավունք է վերապահում դատական կարգով բողոքարկելու լիցենզիայի գործողության դադարեցման վերաբերյալ Հանձնաժողովի որոշումը, իսկ Սահմանադրության՝ «Վնասի հատուցման իրավունքը» վերտառությամբ 62-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց ոչ իրավաչափ գործողություններով կամ անգործությամբ, իսկ օրենքով սահմանված դեպքերում՝ նաև իրավաչափ վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման իրավունք, որի պայմանները և կարգը սահմանվում են օրենքով»:**

2) Օրենքի 52.1-ին հոդվածի 1-3-րդ մասերով սահմանված կանխարգելիչ միջոցառումների և դրանց կիրառման կարգի սահմանադրականությունը գնահատելիս Սահմանադրական դատարանը, հիմք ընդունելով Սահմանադրական դատարանի 2007 թվականի հունվարի 16-ի ՍԴՈ-673, 2007 թվականի նոյեմբերի 28-ի ՍԴՈ-719, 2015 թվականի դեկտեմբերի 22-ի ՍԴՈ-1249, 2016 թվականի մարտի 10-ի ՍԴՈ-1257 որոշումները, ՍԴՈ-1819 որոշման 111 և 113-րդ կետերում արձանագրել է. **«111. Դատական պաշտպանության ինստիտուտն իրավունքի գերակայության կենդանի մարմնավորումն է»:** Այդ համատեքստում, Սահմանադրական դատարանն արտահայտել է իրավական դիրքորոշում այն մասին, որ հաշվի առնելով Հանձնաժողովի բացառիկ իրավասությունը՝ էներգետիկայի բնագավառում իրականացնելու լիցենզավորում և կիրառելու Օրենքով սահմանված կանխարգելիչ միջոցառումներ ու պատասխանատվության միջոցները, «...

որոշելու վերաբերյալ» գործի վարույթը մասամբ՝ «Էներգետիկայի մասին» օրենքի 27-րդ հոդվածի 2.2-րդ մասի, 52-րդ հոդվածի, 52.1-ին հոդվածի 4-10-րդ մասերի մասով, կարճվել է:

օրենսդիրը Սահմանադրությամբ երաշխավորված արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի ապահովման համատեքստում նախատեսել է Հանձնաժողովի ու դրա նախագահի իրավական ակտերի՝ դատական կարգով բողոքարկման իրավական հնարավորություն»:

4. Վերոգրյալը նկատի ունենալով՝ անհրաժեշտ է հաշվի առնել, որ Սահմանադրական դատարանը 2019 թվականի սեպտեմբերի 24-ի ՍԴՈ-1477 որոշմամբ արտահայտել է հետևյալ դիրքորոշումը.

«4.1. Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է.

«1. Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք»:

Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է.

«1. Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք»:

Սահմանադրական դատարանը Սահմանադրության 61 և 63-րդ հոդվածները բազմիցս դիտարկել է որպես մեկ միասնական իրավական երևույթ: Դա, մասնավորապես, վերաբերում է արդարադատության մատչելիության իրավունքին՝ որպես արդար դատաքննության իրավունքի տարրի:

Այնուհանդերձ, Սահմանադրության 63-րդ հոդվածի իրավակարգավորումը կազմում է արդար դատաքննության իրավունքի առանցքը, քանի որ այդ իրավունքի կիրառության շրջանակն ամրագրելուց բացի սահմանում է նաև դրա առավել ընդհանրական երաշխիքները:

Սահմանադրական դատարանը հարկ է համարում արձանագրել, որ Սահմանադրության 61 և 63-րդ հոդվածների իրավակարգավորման հիմքում դրված են անձի իրավունքների և ազատությունների դատական պաշտպանության իրավունքի երաշխավորման սահմանադրաիրավական այն սկզբունքները, որոնց համադրությամբ Սահմանադրական դատարանն իր որոշումներում արտահայտել է իրավական դիրքորոշումներ: Այդ դիրքորոշումներն արտացոլում են նաև միջազգային իրավական փորձի համալիր ուսումնասիրության արդյունքները:

Սահմանադրական դատարանը կարևորել է իրավակարգավորման սկզբունքներ (չափանիշներ), որոնք սույն գործով վեճի առարկա նորմի սահմանադրականության գնահատման տեսանկյունից ունեն սկզբունքային նշանակություն, մասնավորապես.

- ընթացակարգային որևէ առանձնահատկություն չի կարող մեկնաբանվել որպես Սահմանադրության 63-րդ հոդվածով երաշխավորված դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակման հիմնավորում,

- դատարանի (արդարադատության) մատչելիությունը կարող է ունենալ որոշակի սահմանափակումներ, որոնք չպետք է խաթարեն այդ իրավունքի բուն էությունը,

- դատարան դիմելիս անձը չպետք է ծանրաբեռնվի ավելորդ ձևական պահանջներով,

- դատական ակտի դեմ ներկայացված բողոքի ընդունելիության պայմաններ. բողոքարկման ժամկետ սահմանելիս պետք է գերակայեն դատարանի մատչելիության իրավունքի ապահովման երաշխիքները,

- դատական ակտի պարճառաբանվածությունը, ըստ որի ընդունվում կամ մերժվում է անձի դիմումը, ինչպես նաև դատական ակտի բողոքարկման իրավունքը մատչելիության իրավունքի իրացման երաշխիքներ են,

- օրենսդրական կանոնակարգումը չի կարող սոցիալական անհամաչափ ծանրաբեռնվածություն առաջացնել անձանց համար՝ կախված նրանց ֆինանսական հնարավորություններից, արդյունքում չապահովելով դատարանի մատչելիության իրավունքը»:

5. Սահմանադրական դատարանի՝ Սահմանադրության 61 և 63-րդ հոդվածների վերոբերյալ մեկնաբանության համատեքստում՝ բողոքարկման ենթակա են ոչ միայն Հանձնաժողովի և դրա նախագահի ակտերը, այլև ժամանակավոր կառավարչի ակտերը, իսկ բողոքարկման սուբյեկտներ են նաև լիցենզավորված իրավաբանական անձի իրավասու մարմինները, ներառյալ գործադիր մարմինը, որը ժամանակավոր կառավարչի գործունեության շրջանում գրկվում է գործադիր լիազորություններից, բայց **ոչ իրավաբանական անձի իրավունքների իրավապաշտպան գործառույթից**: Դրա ակնհայտ հիմնավորումն է համարվում Օրենքի 52.1-ին հոդվածի 10-րդ մասը, որը, որպես բացառող իրավակարգավորում, սահմանում է, որ կանխարգելիչ միջոցառումների կիրառման և Օրենքի 52-րդ հոդվածով սահմանված ժամանակահատվածում դատարանում չի կարող քննության առարկա դառնալ լիցենզավորված անձի սնանկության կամ սնանկության վտանգի վերաբերյալ դիմումը (սնանկ ճանաչելու հարցը), և նման դիմումները (դրանք վարույթ ընդունելը) ենթակա են մերժման:

Կարգավորման նման տրամաբանությունից բխում է, որ հնարավոր այլ դիմումներ կարող են ներկայացվել դատարան, բայց դրանք կազմող և ներկայացնող իրավասու սուբյեկտը իրավաբանական անձի իրավասու մարմինն է և/կամ նրա կողմից լիազորված անձը:

2. Օրենքի 52.1-ին հոդվածի 1-ին մասի 2-րդ նախադասությամբ կանխարգելիչ միջոցառումների կիրառման դեպքում հաշվի առնվող հանգամանքների գործողությանը հետադարձ ուժ տալու մասով

6. Օրենքը, 2025 թվականի հուլիսի 3-ին ընդունված՝ ««Էներգետիկայի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» ՀՕ-196-Ն օրենքի 3-րդ հոդվածին համապատասխան, լրացվել է «Սպառողների շահերի պաշտպանության նպատակով կանխարգելիչ միջոցառումների կիրառումը» վերտառությամբ 52.1-ին հոդվածով, որի 1-ին մասի 2-րդ նախադասության համաձայն՝ կանխարգելիչ միջոցառումների կիրառման դեպքում, **ի թիվս այլնի, հաշվի են առնվում նաև լիցենզավորված անձի կողմից նախկինում կատարված խախտումների քանակը, հաճախականությունը կամ բնույթը**:

7. Դիմողի տեսանկյունից՝ Օրենքի 52.1-ին հոդվածի 2-րդ նախադասությամբ օրենսդիրն «ուղղակիորեն հետադարձ ուժ է տվել անձի իրավական վիճակը վատթարացնող դրույթին, քանի որ Օրենքի ընդունումից առաջ ավարտված փաստակազմի վրա (նախկինում կատարված խախտումների քանակը, հաճախականությունը կամ բնույթը) տարածում են իրավական հետևանքներ (հիմք են կանխարգելիչ միջոցառումների իրականացման համար)»: Դիմողի գնահատմամբ՝ Օրենքում կատարված լրացումը հետադարձ ուժ է տալիս «նոր՝ անբարենպաստ իրավական հետևանքներ» առաջացնող իրավակարգավորմանը, հետևաբար՝ առկա է Օրենքի իրական (իսկական) հետադարձ ուժի կիրառում, ինչն առանց որևէ վերապահման արգելված է Սահմանադրության 73-րդ հոդվածի 1-ին մասով:

Դիմողն իր պատճառաբանություններում, մի կողմից՝ օգտագործում է «նոր իրավական հետևանքներ» ձևակերպումը, մյուս կողմից՝ առաջ է քաշում օրենքի իրական (իսկական) հետադարձ ուժի իսպառ արգելման ենթադրությունը:

8. Դիմողի կողմից բարձրացված այս հարցադրումների համատեքստում անհրաժեշտ է բացահայտել անձի իրավական վիճակը վատթարացնող օրենքների և այլ իրավական ակտերի հետադարձության սահմանադրական արգելքի բովանդակությունը և դրանում օգտագործված հիմնական հասկացությունների նշանակությունը, որոնք էլ հիմք են հանդիսացել ՍԴՈ-1819 որոշման մեջ տեղ գտած իրավական դիրքորոշումների համար:

Սահմանադրության 73-րդ հոդվածի իրավադրույթների իրավաբանական բովանդակությունը հիմնված է «անձի իրավական վիճակ», «վատթարացնող օրենքներ և այլ իրավական ակտեր», «բարելավող օրենքներ և այլ իրավական ակտեր», «հետադարձ ուժ» իրավական հասկացությունների վրա:

9. «Անձի իրավական վիճակ» հասկացությունն արտացոլում է անձի՝ հասարակության մեջ իրավաբանորեն ամրագրված դրությունը, որի հիմնական տարրերից են նրա՝ Սահմանադրությամբ և օրենքներով երաշխավորված իրավունքները (ազատությունները) և պարտականությունները, իրավունքների և ազատությունների իրավական երաշխիքները, իրավական պատասխանատվությունը՝ իր էական տարրով (օրենքով արգելված արարքն իր իրավաբանական կազմի տարրերի բոլոր հատկանիշներով հանդերձ, իրավախախտի նկատմամբ կիրառվող և պատասխանատվության միջոց համարվող օրենքով սահմանված հարկադրանքը, ինչպես նաև իրավական պատասխանատվության ենթարկելու օրենքով սահմանված այլ էական հանգամանքներ):

10. «Օրենքի և այլ իրավական ակտերի հետադարձ ուժը» հասկացությունը դրանցով սահմանված իրավադրույթների կիրառումն է մինչ դրանց իրավաբանական ուժի մեջ մտնելը առաջացած (ծագած) հարաբերությունների վրա: Իրավական ակտերի գործողությունը, որպես ընդհանուր կանոն, տարածվում է դրանց ուժի մտնելուց հետո ծագող հարաբերությունների վրա, ինչը պայմանավորված է որոշակի և կանխատեսելի իրավական կարգավորումներ ունենալու, նախատեսված իրավակարգավորումներին համահունչ վարքագիծ դրսևորելու և դրա հետևանքները նախատեսելու նկատառումներով: Ժամանակի մեջ գործողության տեսանկյունից բավարար չափով որոշակի և կանխատեսելի իրավական կարգավորումների անհրաժեշտությունը պայմանավորված է ոչ միայն այն հանգամանքով, որ անձինք դրսևորեն այդ կարգավորումներին համահունչ վարքագիծ, այլև այն հանգամանքով, որ մարդկանց համար կանխատեսելի լինեն, թե ինչ իրավական հետևանքներ է առաջացնելու նախատեսված կարգավորումներից շեղվող վարքագծի դրսևորումը:

11. «Վատթարացնող կամ բարելավող օրենքներ և այլ իրավական ակտեր» իրավաբանական ձևակերպումներն ընդհանուր առմամբ ենթադրում են բոլոր տեսակի այն իրավական ակտերը, որոնք իրենց գործողությամբ անձի համար ունեն կամ առաջացնում են բացասական կամ դրական ազդեցություն: Սահմանադրական դատարանը գտնում է, որ անձի իրավական վիճակը վատթարացնող կամ բարելավող օրենքների և այլ իրավական ակտերի հետադարձության արգելքի սկզբունքի համատեքստում վիճարկվող ցանկացած դրույթի սահմանադրականությունը գնահատելիս անհրաժեշտ է, առաջին հերթին, պարզել՝ վիճարկվող կարգավորումը վերաբերո՞ւմ է արդյոք անձի

իրավական վիճակին, այնուհետև՝ այն վատթարացնում, թե՛ բարելավում է անձի իրավական վիճակը:

12. Սահմանադրության 73-րդ հոդվածի 1-ին մասում նախատեսված արգելքի վերաբերյալ վերոբերյալ իրավական դիրքորոշումները կիրառելի են նաև սույն գործով վիճարկվող իրավակարգավորումների սահմանադրականությունը գնահատելիս: Միաժամանակ, վերոբերյալ իրավական դիրքորոշումներից հնարավոր է քաղել **«վատթարացնող օրենքներ և այլ իրավական ակտեր»** ընդհանուր բանաձևի որոշ կոնկրետ դրսևորումներ, այն է՝ «նախկինում գործող ակտերով ամրագրված իրավունքների սահմանափակումը, վերացումը» կամ դրանցից «զրկումը»², «օրենքի գործող դրույթի փոփոխման պատճառով անձին համեմատաբար ավելի վատթար իրավական վիճակում դնելը», «հնարավոր փոփոխությունների արդյունքում անձի իրավունքների իրացման պայմանների խստացումը»³ և այլն:

13. Այսպիսով, անհրաժեշտ է ուշադրություն դարձնել այն հանգամանքերի վրա, որ **(1)** Սահմանադրության 73-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված իրավադրույթը, սահմանելով անձի իրավական վիճակը վատթարացնող օրենքների և այլ իրավական ակտերի հետադարձ ուժի արգելքը, երաշխավորում է անձի նկատմամբ դրանց կիրառման հնարավորության բացառումը, **(2)** վատթարացնող (բացասական ազդեցություն ունեցող) կամ բարելավող իրավադրույթները պետք է վերաբերեն անձի իրավական վիճակին և դրա տարրերին: Հետևաբար՝ օրենքների և այլ իրավական ակտերի ոչ բոլոր փոփոխություններն ու լրացումներն են, որ կարող են ձեռք բերել անձի համար վատթարացնող կամ բարելավվող ազդեցություն ունեցող իրավադրույթների նշանակություն, այլ միայն այն իրավադրույթները, որոնք, նախ, վերաբերում են անձի իրավական վիճակի որևէ տարրին, և միաժամանակ իրավական վիճակի այդ տարրում ներմուծում են վատթարացնող կամ բարելավող ազդեցություն առաջացնող իրավական փոփոխություններ կամ լրացումներ, **(3)** անձի իրավական վիճակի վրա «վատթարացնող» կամ «բարելավող» ազդեցություններն իրավունքի զանազան ճյուղերում ունեն ամրագրման ձևի ու բովանդակության դրսևորման ոլորտային առանձնահատկություններ: Միաժամանակ, ազդեցության որակական գնահատականները բոլոր դեպքերում ուղղակիորեն չեն արտացոլվում օրենքներում, հատկապես որ օրենսդիրը միշտ չէ, որ սահմանում է բոլոր իրավադրույթների հետադարձ ուժի կանոնները: Հետևաբար՝ իրավադրույթի վատթարացնող/բարելավող ազդեցության գնահատականի գործիքակազմում կարևորվում է կիրառման պրակտիկայում կատարված ճշգրիտ մեկնաբանման դերը, ինչը և արել է Սահմանադրական դատարանը սույն գործով ընդունված որոշմամբ:

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ԴԱՏԱՎՈՐ**

Ա. ՎԱՂԱՐՇՅԱՆ

23 մարտի 2026 թվականի

² Տե՛ս 2015 թվականի հուլիսի 7-ի ՍԴՈ-1224 որոշման 17-րդ կետը:

³ Տե՛ս 2012 թվականի դեկտեմբերի 14-ի ՍԴՈ-1061 որոշման 7-րդ կետը:



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2014 թվականի ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 14-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ «ՖԻՆԱՆՍԱԿԱՆ
ՀԱՇԻՎՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՎՏՈՄԱՏ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ
ՄԱՍԻՆ» ԻՐԱՎԱՍՈՒ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԲԱԶՄԱԿՈՂՄ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԼՐԱՑՄԱՆ
ՄԵՋ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

17 մարտի 2026 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով.
Նախագահող՝
դատավորներ՝

Արման Դիլանյանի (զեկուցող),
Արտակ Զեյնալյանի,
Դավիթ Խաչատուրյանի,
Երվանդ Խունդկարյանի,
Հովակիմ Հովակիմյանի,
Սեդա Սաֆարյանի,
Արթուր Վաղարշյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

Կառավարության ներկայացուցիչ՝ Պետական եկամուտների կոմիտեի,

Նախագահի տեղակալ Ռաֆայել Գևորգյանի

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի
3-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական
օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի, 40 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2014 թվականի հոկտեմբերի 14-
ին ստորագրված՝ «Ֆինանսական հաշիվների վերաբերյալ տեղեկությունների ավտոմատ
փոխանակման մասին» իրավասու մարմինների բազմակողմ համաձայնագրի լրացման
մեջ ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխա-
նության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Կառավարությունն իր՝ 2026 թվականի հունվարի 8-ի N 12-Ա որոշմամբ հավա-
նություն է տվել «2014 թվականի հոկտեմբերի 14-ին ստորագրված՝ «Ֆինանսական
հաշիվների վերաբերյալ տեղեկությունների ավտոմատ փոխանակման մասին» իրավասու
մարմինների բազմակողմ համաձայնագրի լրացումը վավերացնելու մասին» օրենքի
նախագծի վերաբերյալ Կառավարության օրենսդրական նախաձեռնությանը և որոշել է

դրանում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու նպատակով դիմել Սահմանադրական դատարան:

Գործի քննության առիթը Կառավարության՝ 2026 թվականի հունվարի 9-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով վերոնշյալ համաձայնագրի լրացումը, հետազոտելով սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. «2014 թվականի հոկտեմբերի 14-ին ստորագրված «Ֆինանսական հաշիվների վերաբերյալ տեղեկությունների ավտոմատ փոխանակման մասին» իրավասու մարմինների բազմակողմ համաձայնագիրը Հայաստանի Հանրապետության կողմից վավերացվել է 2023 թվականի հոկտեմբերի 3-ին ՀՕ-294-Ն օրենքով (2023 թվականի հուլիսի 28-ի ՍԴՈ-1697):

«Ֆինանսական հաշիվների վերաբերյալ տեղեկությունների ավտոմատ փոխանակման մասին» իրավասու մարմինների բազմակողմ համաձայնագրի (ՄՀՍ ԻՄԲՀ) (այսուհետ նաև՝ Համաձայնագիր) լրացումը (այսուհետ՝ Լրացում) ստորագրվել է 2025 թվականի հոկտեմբերի 30-ին՝ հարկային օրենսդրությունը բարելավելու և հարկերից խուսափելու դեմ պայքարն ուժեղացնելու միջոցով Համաձայնագրի արդյունավետության բարձրացմանը նպաստելու նպատակով:

2. Լրացմամբ Հայաստանի Հանրապետությունը, ի թիվս ՄՀՍ ԻՄԲՀ-ով ստանձնած պարտավորությունների, պարտավորվում է նաև ապահովել, որ Լրացման 2-րդ բաժնի 2-րդ պարբերության «ա» ենթապարբերության «i» կետի համաձայն արված ծանուցմանը համապատասխան՝ ՄՀՍ ԻՄԲՀ-ի 2-րդ բաժնի 2-րդ պարբերության համաձայն մեկ այլ պետության յուրաքանչյուր հաշվետու հաշվի վերաբերյալ փոխանակվելիք լրացուցիչ տեղեկությունները ներառեն հետևյալը.

տեղեկություն յուրաքանչյուր հաշվետիրոջ համար վավեր ինքնահավաստագրի տրամադրման մասին,

տեղեկություն դերի (դերերի) մասին, որի (որոնց) ուժով կազմակերպություն հանդիսացող հաշվետիրոջ վերահսկող անձ հանդիսացող յուրաքանչյուր հաշվետու անձ կազմակերպության վերահսկող անձ է, և յուրաքանչյուր այդպիսի հաշվետու անձի համար վավեր ինքնահավաստագրի տրամադրման մասին,

տեղեկություն հաշվի տեսակի մասին՝ արդյոք հաշիվը նախկինում գոյություն ունեցող հաշիվ է, թե նոր հաշիվ, և արդյոք հաշիվը համատեղ հաշիվ է, ներառյալ՝ համատեղ հաշվետերերի քանակը,

ինչպես նաև տեղեկություն իրավահարաբերություն հանդիսացող ներդրումային կազմակերպությունում ցանկացած բաժնային մասնակցության դեպքում՝ այն դերի (դերերի) մասին, որի (որոնց) ուժով հաշվետու անձը բաժնային մասնակցության սեփականատեր է (Բաժին 1):

3. Լրացման 2-րդ բաժնով սահմանվում է դրա ուժի մեջ մտնելու պայմանը, ըստ որի. «(...) Սույն Լրացումն ուժի մեջ կլինի այն իրավասու մարմինների համար, որոնք նույնպես Լրացումը ստորագրող կողմեր են: Այն կլինի ՄՀՍ ԻՄԲՀ-ի անքակտելի մասը, և ՄՀՍ ԻՄԲՀ-ի դրույթները կկիրառվեն mutatis mutandis սույն Լրացման նկատմամբ»:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2014 թվականի հոկտեմբերի 14-ին ստորագրված՝ «Ֆինանսական հաշիվների վերաբերյալ տեղեկությունների ավտոմատ փոխանակման մասին» իրավասու մարմինների բազմակողմ համաձայնագրի լրացման մեջ ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Ա. ԴԻԼԱՆՅԱՆ

17 մարտի 2026 թվականի
ՍԴՈ-1820



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄ**

2025 թվականի մարտի 26-ին ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՖՐԱՆՍԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ (ԶՖԳ) ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՄԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ (ՊՐՈՊԱՐԿՈ) ՀԻՄՆԱԴՐՄԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» 2018 թվականի մարտի 28-ի ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

17 մարտի 2026 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով.
դատավորներ՝

Արման Դիլանյանի (նախագահող),
Արտակ Զեյնալյանի,
Դավիթ Խաչատուրյանի,
Երվանդ Խունդկարյանի,
Հովակիմ Հովակիմյանի (զեկուցող),
Սեդա Սաֆարյանի,
Արթուր Վաղարշյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝
Կառավարության ներկայացուցիչ՝ Էկոնոմիկայի նախարար
Գևորգ Պապոյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի, 40 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2025 թվականի մայիսի 26-ին ստորագրված՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ֆրանսիայի Հանրապետության կառավարության միջև «Հայաստանում Զարգացման Ֆրանսիական Գործակալության (ԶՖԳ) և Տնտեսական համագործակցության խթանման և մասնակցության ընկերության (ՊՐՈՊԱՐԿՈ) հիմնադրման և գործունեության մասին» 2018 թվականի մայիսի 28-ի համաձայնագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու

մասին» արձանագրությունում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Կառավարությունն իր՝ 2026 թվականի հունվարի 15-ի N 57-Ա որոշմամբ հավանություն է տվել «2025 թվականի մայիսի 26-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության և Ֆրանսիայի Հանրապետության կառավարության միջև «Հայաստանում Զարգացման Ֆրանսիական Գործակալության (ԶՖԳ) և Տնտեսական համագործակցության խթանման և մասնակցության ընկերության (ՊՐՈՊԱՐԿՈ) հիմնադրման և գործունեության մասին» 2018 թվականի մայիսի 28-ի համաձայնագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» արձանագրությունը վավերացնելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ Կառավարության օրենսդրական նախաձեռնությունը և որոշել է նշված արձանագրությամբ ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու նպատակով դիմել Սահմանադրական դատարան:

Գործի քննության առիթը Կառավարության՝ 2026 թվականի հունվարի 16-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով վերոնշյալ արձանագրությունը, հետազոտելով սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ֆրանսիայի Հանրապետության կառավարության միջև «Հայաստանում Զարգացման ֆրանսիական գործակալության (ԶՖԳ) և Տնտեսական համագործակցության խթանման և մասնակցության ընկերության (Պրոպարկո) հիմնադրման և գործունեության մասին» համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) ստորագրվել է 2018 թվականի մայիսի 28-ին Երևան քաղաքում՝ նպատակ ունենալով հստակեցնելու ԶՖԳ-ի և ՊՐՈՊԱՐԿՈ-ի՝ Հայաստանի Հանրապետությունում հիմնադրման, ինչպես նաև դրանց գործունեության նկատմամբ կիրառելի կանոնները, մասնավորապես՝ իրավաբանական, հարկային, ֆինանսական կամ այլ պայմանները՝ Համաձայնագրի, Կողմերի պետությունների օրենսդրության և համապատասխան միջազգային պարտավորությունների համաձայն (Սահմանադրական դատարանի 2021 թվականի դեկտեմբերի 10-ի ՍԴԴ-1620 որոշում, կետ 1):

2. 2025 թվականի մայիսի 26-ին Երևանում ստորագրվել է ««Հայաստանում Զարգացման ֆրանսիական Գործակալության (ԶՖԳ) և Տնտեսական համագործակցության խթանման և մասնակցության ընկերության (ՊՐՈՊԱՐԿՈ) հիմնադրման և գործունեության մասին» համաձայնագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» արձանագրությունը (այսուհետ՝ Արձանագրություն)՝ ԶՖԳ-ի և ՊՐՈՊԱՐԿՈ-ի գործունեության ընդլայնման և Հայաստանի տնտեսական ոլորտի բարեփոխումների գործընթացում ֆրանսիական կողմից ավելի լայն ներգրավվածության ապահովման նպատակով:

3. Արձանագրության նպատակն է տարածել Համաձայնագրի կիրառումը «Էքսպերտիզ ֆրանս» գործակալության վրա՝ որպես ԶՖԳ խմբի անդամի (հոդված 1):

4. Արձանագրությունը կցված է Համաձայնագրին և կազմում է նրա անբաժանելի մասը (հոդված 4):

5. Արձանագրությամբ Հայաստանի Հանրապետությունը ստանձնում է հետևյալ պարտավորությունները.

5.1. համաձայնել, որ Համաձայնագիրը փոփոխվի այնպես, որ Համաձայնագրում ՁՖԳ-ին և ՊՐՈՊԱՐԿՈ-ին կատարվող բոլոր հղումներն ընդգրկեն նաև «Էքսպերտիզ ֆրանս» գործակալությունը (հոդված 2, կետ 1),

5.2. համաձայնել, որ Համաձայնագրի 7-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն ՊՐՈՊԱՐԿՈ-ին տրամադրված այն հնարավորությունները, որոնք նրան թույլ են տալիս դիմելու առանձին ներկայացուցչություն բացելու խնդրանքով, տրվեն նաև «Էքսպերտիզ ֆրանս» գործակալությանը (հոդված 2, կետ 2),

5.3. Համաձայնագրի համաձայն՝ Հայաստանի տարածքում ՁՖԳ-ին և ՊՐՈՊԱՐԿՈ-ին հայկական կողմի կողմից վերապահված առավելությունները և արտոնությունները տարածել «Էքսպերտիզ ֆրանս» գործակալության վրա՝ որպես ՁՖԳ խմբի անդամի, ինչպես նաև նրա վարձած էքսպատրիանտների (գործուղված մասնագետների) վրա՝ այնքանով, որքանով դա անհրաժեշտ է առաքելությունների իրականացման համար (հոդված 3):

6. Արձանագրությունը կարող է ցանկացած ժամանակ փոփոխվել Կողմերի փոխադարձ համաձայնությամբ: Այդ փոփոխությունները ձևակերպվում են արձանագրություններով (հոդված 5, կետ 2):

7. Արձանագրության մեկնաբանման և կիրառման շուրջ ծագած բոլոր տարաձայնությունները լուծվում են բարեկամաբար՝ Կողմերի միջև խորհրդակցությունների և բանակցությունների միջոցով (հոդված 5, կետ 3):

8. Արձանագրությունը կնքվում է անորոշ ժամկետով: Կողմերից յուրաքանչյուրը կարող է ցանկացած պահի դադարեցնել դրա գործողությունը՝ վեց ամիս առաջ այդ մասին գրավոր ծանուցելով մյուս Կողմին: Այս ժամկետը հաշվարկվում է նշված ծանուցումը մյուս Կողմի ստանալու օրվանից: Արձանագրության գործողության դադարեցումը չի ազդում ընթացքում գտնվող ծրագրերի և պայմանավորվածությունների առնչությամբ Համաձայնագրից բխող՝ Կողմերի իրավունքների և պարտականությունների վրա (հոդված 5, կետ 4):

9. Արձանագրությունն ուժի մեջ մտնելու պահից կիրառվում է ընթացքում գտնվող ծրագրերի, պայմանավորվածությունների և ցանկացած համագործակցության նկատմամբ (հոդված 5, կետ 5):

10. Սահմանադրական դատարանը գտնում է, որ Արձանագրությամբ Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները համահունչ են Սահմանադրության 13-րդ հոդվածով ամրագրված՝ միջազգային իրավունքի հիման վրա՝ բոլոր պետությունների հետ բարիդրացիական, փոխշահավետ հարաբերությունների հաստատմանն ուղղված արտաքին քաղաքականության իրականացման նպատակներին:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2025 թվականի մայիսի 26-ին ստորագրված՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ֆրանսիայի Հանրապետության կառավարության միջև «Հայաստանում Զարգացման Ֆրանսիական Գործակալության (ԶՖԳ) և Տնտեսական համագործակցության խթանման և մասնակցության ընկերության (ՊՐՈՊԱՐԿՈ) հիմնադրման և գործունեության մասին» 2018 թվականի մայիսի 28-ի համաձայնագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» արձանագրությունում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Ա. ԴԻԼԱՆՅԱՆ

17 մարտի 2026 թվականի
ՍԴՈ-1821



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ 5-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ 3-ՐԴ ԿԵՏԻ, 8-ՐԴ ԿԵՏԻ (ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՄ ԿԱՄ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՈՂ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԱՍՈՎ), 7-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 3-ՐԴ ՄԱՍԻ (ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՎԵՐԱՀՍԿՈՂ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ ՎԵՐԱՀՍԿՈՂԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍՈՎ) ԵՎ «ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ 95-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 6-ՐԴ ՄԱՍԻ (ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՄ ԿԱՄ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՈՂ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝ «ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍՈՎ)՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

24 մարտի 2026 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով.

նախագահող՝
դատավորներ՝

Արման Դիլանյանի,
Արտակ Զեյնալյանի,
Դավիթ Խաչատուրյանի,
Երվանդ Խունդկարյանի,
Հովակիմ Հովակիմյանի,
Էդգար Շաթիրյանի (զեկուցող),
Սեդա Սաֆարյանի,
Արթուր Վաղարշյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝
դիմողի՝

Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանի
(այսուհետ նաև՝ Դիմող),

պատասխանողի՝
ներկայացուցիչ՝

Ազգային ժողովի (այսուհետ նաև՝ Պատասխանող)
Ազգային ժողովի աշխատակազմի իրավա-
բանական վարչության պետ Մարի Ստեփանյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետի, 169-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22 և 70-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Երևանի քաղաքապետի դիմումի հիման վրա՝ «Պետական վերահսկողական ծառայության մասին» օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, 8-րդ կետի (տեղական ինքնակառավարման մարմիններում կամ համայնքային հիմնարկներում գնումների գործընթացը կանոնակարգող օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ վերահսկողության մասով), 7-րդ հոդվածի 3-րդ մասի (տեղական ինքնակառավարման մարմինների կողմից վերահսկվող ոլորտներում վերահսկողական գործառույթներ իրականացնելու մասով) և «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 95-րդ հոդվածի 6-րդ մասի (տեղական ինքնակառավարման մարմիններում կամ համայնքային հիմնարկներում գնումների գործընթացը կանոնակարգող օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ վերահսկողությունը՝ «Պետական վերահսկողական ծառայության մասին» օրենքով սահմանված կարգով իրականացնելու մասով)՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ՝ գործը:

Ուսումնասիրելով դիմումը և գործում առկա այլ փաստաթղթերը, նյութերը, կողմերի գրավոր բացատրությունները, ինչպես նաև վերլուծելով վիճարկվող և վերաբերելի այլ օրինադրությունները՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

Վարույթը Սահմանադրական դատարանում

1. Գործի քննության առիթը Երևանի քաղաքապետի՝ 2025 թվականի օգոստոսի 29-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է, որով Դիմողը խնդրել է.

«Որոշել «Պետական վերահսկողական ծառայության մասին» օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, 8-րդ կետի /տեղական ինքնակառավարման մարմիններում կամ համայնքային հիմնարկներում գնումների գործընթացը կանոնակարգող օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ վերահսկողության մասով/, 7-րդ հոդվածի 3-րդ մասի /տեղական ինքնակառավարման մարմինների կողմից վերահսկվող ոլորտներում վերահսկողական գործառույթներ իրականացնելու մասով/ և «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 95-րդ հոդվածի 6-րդ մասի /տեղական ինքնակառավարման մարմիններում կամ համայնքային հիմնարկներում գնումների գործընթացը կանոնակարգող օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ վերահսկողությունը՝ «Պետական վերահսկողական ծառայության մասին» օրենքով սահմանված կարգով իրականացնելու մասով/՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը»:

2. «Պետական վերահսկողական ծառայության մասին» օրենքը (այսուհետ նաև՝ Օրենք) Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2018 թվականի մարտի 23-ին, Հանրապետության նախագահի կողմից ստորագրվել՝ 2018 թվականի մարտի 30-ին և ուժի մեջ է մտել նույն թվականի ապրիլի 9-ին:

2025 թվականի մայիսի 25-ին ընդունված, նույն թվականի հունիսի 26-ին Հանրապետության նախագահի կողմից ստորագրված և հունիսի 28-ին ուժի մեջ մտած՝ «Պետական վերահսկողական ծառայության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՕ-187-Ն օրենքի 1-ին հոդվածին համապատասխան՝ վերոնշյալ օրենքը շարադրվել է նոր խմբագրությամբ:

Օրենքի՝ **«Պետական վերահսկողական ծառայության լիազորությունները»** վերտառությամբ 5-րդ հոդվածի 1-ին մասի 3 և 8-րդ կետերի համաձայն՝

«1. Սույն օրենքով սահմանված նպատակով Ծառայությունը սույն օրենքով սահմանված կարգով՝

(...)

3) տեղական ինքնակառավարման մարմիններում իրականացնում է վերահսկողություն տրամադրված սուբսիդիաների, սուբվենցիաների կամ դոտացիաների կառավարման օրինականության կամ դրանց տրամադրման համար հիմք հանդիսացող տեղեկատվության արժանահավաստության գնահատման նպատակով.

(...)

8) տեղական ինքնակառավարման մարմիններում, պետական կամ համայնքային հիմնարկներում իրականացնում է վերահսկողություն գնումների գործընթացը կանոնակարգող օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ.»:՝

Օրենքի՝ **«Պետական վերահսկողական ծառայության իրավասությունները»** վերտառությամբ 7-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝

«3. Պետական կառավարման համակարգի մարմինների և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից վերահսկվող ոլորտներում վերահսկողական գործառույթներ իրականացնելու անհրաժեշտություն առաջանալու դեպքում Ծառայությունն այդ մասին հայտնում է վարչապետին, որը կարող է հիմք հանդիսանալ համապատասխանաբար հանձնարարության կամ առաջարկության իրավասու մարմին՝ իրականացնելու տվյալ մարմնին օրենքով վերապահված և իր լիազորություններից բխող վերահսկողություն՝ արդյունքների վերաբերյալ տեղեկացնելով Ծառայությանը»:

3. «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքն Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2002 թվականի մայիսի 7-ին, Հանրապետության նախագահի կողմից ստորագրվել՝ 2002 թվականի հունիսի 5-ին և ուժի մեջ է մտել նույն թվականի հունիսի 21-ին:

«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի՝ **«Տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների իրականացման նկատմամբ հսկողության հիմնական սկզբունքները»** վերտառությամբ 95-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝

«6. Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից իրականացվող բյուջետային կամ ֆինանսատնտեսական գործունեության նկատմամբ իրականացվում է ֆինանսական հսկողություն՝ «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դեպքերում և կարգով, իսկ տեղական ինքնակառավարման մարմիններում կամ համայնքային հիմնարկներում գնումների գործընթացը կանոնակարգող օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ վերահսկողությունը՝ «Պետական վերահսկողական ծառայության մասին» օրենքով սահմանված կարգով.:

«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 95-րդ հոդվածի 6-րդ մասը «կարգով» բառից հետո լրացվել է «, իսկ տեղական ինքնակառավարման մարմիններում կամ համայնքային հիմնարկներում գնումների գործընթացը կանոնակարգող օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ վերահսկողությունը՝ «Պետական վերահսկողական ծառայության մասին» օրենքով սահմանված կարգով» բառերով՝ 2025 թվականի մայիսի 29-ի ՀՕ-194-Ն օրենքի 1-ին հոդվածին համապատասխան:

4. Սահմանադրական դատարանի՝ 2025 թվականի սեպտեմբերի 30-ի ՍԴԱՌ-142 աշխատակարգային որոշմամբ գործն ընդունվել է քննության, գործի դատաքննությունը նշանակվել է 2026 թվականի հունվարի 16-ին, և որոշվել է գործի դատաքննությունն անցկացնել գրավոր ընթացակարգով:

5. Սահմանադրական դատարանի՝ 2026 թվականի հունվարի 13-ի ՍԴԱՌ-4 աշխատակարգային որոշմամբ գործի դատաքննությունը հետաձգվել է և նշանակվել 2026 թվականի փետրվարի 24-ին:

Սահմանադրական դատարանի՝ 2026 թվականի փետրվարի 24-ի ՍԴԱՌ-21 աշխատակարգային որոշմամբ գործի դատաքննությունը հետաձգվել է, գործի քննության ժամկետը՝ երկարաձգվել, և գործի դատաքննությունը նշանակվել է 2026 թվականի մարտի 24-ին:

Դիմողի դիրքորոշումները

6. Դիմողը Սահմանադրական դատարանի առջև բարձրացրել է հետևյալ հարցադրումները՝

ա. Պետական վերահսկողական ծառայության (այսուհետ նաև՝ Ծառայություն)՝ որպես վարչապետի վերահսկողական լիազորություններն իրականացնող մարմնի կողմից տեղական ինքնակառավարման մարմիններում (նաև նրանց կողմից վերահսկվող ոլորտներում և համայնքային հիմնարկներում) վերահսկողություն իրականացնելն արդյո՞ք բխում է վարչապետի սահմանադրական իրավասություններից:

բ. տեղական ինքնակառավարման մարմիններում (նաև նրանց կողմից վերահսկվող ոլորտներում և համայնքային հիմնարկներում) վերահսկողություն իրականացնելու մասով Ծառայությանը վերապահված լիազորություններն արդյո՞ք համապատասխանում են Սահմանադրության 188-րդ հոդվածով տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների իրականացման նկատմամբ իրավական և մասնագիտական հսկողության վերաբերյալ սահմանված պահանջներին:

7. Վերոնշյալի համատեքստում ներկայացնելով ներպետական և միջազգային իրավակարգավորումները, ինչպես նաև վկայակոչելով Սահմանադրական դատարանի վերաբերելի որոշումներում արտացոլված իրավական դիրքորոշումները՝ Դիմողը, մասնավորապես, նշում է, որ տեղական ինքնակառավարման մարմիններն օժտված են տեղական ինքնակառավարման իրավունքով, որը վերաբերում է, համայնքի բնակիչների շահերից ելնելով, համայնքային նշանակության հանրային հարցերը սեփական պատասխանատվությամբ լուծելուն: Սահմանադրական ամրագրում է ստացել նաև տեղական ինքնակառավարման մարմինների ինքնուրույնությունը, որի համաձայն՝ վերջիններս իրենց վերապահված լիազորություններն իրականացնում են սեփական պատասխանատվությամբ, ինչը պետությանն արգելում է միջամտել տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների իրականացմանը:

8. Ըստ Դիմողի՝ ներպետական օրենսդրությամբ և Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայով (այսուհետ նաև՝ Խարտիա) սահմանվել են այն սկզբունքները, որոնց վրա հիմնվում է տեղական ինքնակառավարումը՝ դրանց շարքում ներառելով նաև հետևյալ սկզբունքները՝ տեղական ինքնակառավարման իրավունքի իրականացումը՝ ինքնուրույն և սեփական պատասխանատվությամբ, ընդհանուր, հավասար, ազատ ընտրական իրավունքի հիման վրա ընտրված տեղական ինքնակառավարման մարմին-

ների միջոցով («Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետ):

9. Դիմողը նշում է. «Հայաստանի Հանրապետությունը՝ որպես Խարտիային մասնակցող պետություն, ստանձնել է տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության օրինականությունն ապահովող միջազգային մի շարք պարտավորություններ:

(...)

- Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայով տեղական ինքնակառավարման մարմինների ինքնուրույնությունը և դրա պաշտպանությունը երաշխավորում է պետությունը՝ բացառելով այդ մարմինների գործունեության անհարկի միջամտությունը:

- տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության նկատմամբ հսկողության նման բնույթի ընթացակարգերը, հսկողության ձևը և միջամտության աստիճանը պետք է նախատեսված լինեն պետության Սահմանադրությամբ կամ օրենքներով:

- Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայով և Սահմանադրությամբ որոշակի տարբերակում է մտցվել տեղական ինքնակառավարման մարմինների սեփական և պետության կողմից պատվիրակված լիազորությունների իրականացման նկատմամբ հսկողության ձևերի միջև:

- վերահսկող մարմինները պետք է խստորեն պահպանեն օրենքով սահմանված ընթացակարգերը /եղանակ, իրավասություն և այլն/»:

10. Դիմողի պնդմամբ՝ Սահմանադրության 188-րդ հոդվածը հստակ սահմանում է տեղական ինքնակառավարման մարմինների նկատմամբ վարչական հսկողության կարգը՝ առանձնացնելով իրավական և մասնագիտական հսկողության ձևերը: Համայնքի սեփական խնդիրների նկատմամբ կարող է իրականացվել միայն իրավական հսկողություն, իսկ պետության պատվիրակված լիազորությունների իրականացման նկատմամբ՝ իրավական և մասնագիտական հսկողություն: Ընդ որում, Սահմանադրությամբ, որպես իրավական և մասնագիտական հսկողություն իրականացնող մարմին, նշված է «Կառավարության լիազոր մարմինը»:

11. Դիմողը նշում է, որ վարչապետը չի կարող ունենալ տեղական ինքնակառավարման մարմիններում սուբսիդիաների, սուբվենցիաների կամ դոտացիաների կառավարման օրինականության, դրանց տրամադրման համար հիմք հանդիսացող տեղեկատվության արժանահավատության գնահատման և տեղական ինքնակառավարման մարմիններում, համայնքային հիմնարկներում գնումների գործընթացը կանոնակարգող օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ վերահսկողական լիազորություններ, քանի որ դրանք չեն բխում վարչապետի՝ Սահմանադրության 152-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված իրավասությունների շրջանակից: Ըստ Դիմողի՝ Սահմանադրության 188-րդ հոդվածի բովանդակությունից պարզ է դառնում, որ տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների նկատմամբ հսկողություն կարող են իրականացնել Կառավարության լիազոր մարմինները:

12. Ըստ Դիմողի՝ «(...) ստացվում է, որ «Պետական վերահսկողական ծառայության մասին» օրենքով նախատեսվում է պետական վերահսկողություն իրականացնել տեղական ինքնակառավարման մարմինների սեփական լիազորությունների իրականացման նկատմամբ»: Մինչդեռ, Խարտիայի և Սահմանադրության համապատասխան դրույթների համաձայն՝ տեղական ինքնակառավարման մարմինների սեփական լիազոր-

րությունների իրականացման նկատմամբ կարող է իրականացվել բացառապես իրավական հսկողություն:

13. Դիմողը նշում է, որ այն դեպքերում, երբ օրենքից պարզ չէ՝ վերահսկողական գործառույթն ինչպիսի հսկողություն է ներկայացնում՝ իրավական, թե մասնագիտական, և, ըստ էության, պարունակում է մասամբ առաջինի, մասամբ էլ՝ երկրորդի հատկանիշները՝ դրանով իսկ չունենալով հստակ պատկանելություն հսկողության որևէ ձևին, ապա այդպիսի օրենքը չի կարող երաշխավորել իրավական որոշակիության սկզբունքի ապահովումը, մասնավորապես՝ այն, որ իրավահարաբերությունների բոլոր սուբյեկտների, այդ թվում՝ իշխանության կրողի գործողությունները լինեն կանխատեսելի և իրավաչափ:

14. Դիմողը փաստում է, որ Սահմանադրությամբ և Խարտիայով երաշխավորված է տեղական ինքնակառավարման ինքնուրույնությունը, այդ թվում՝ գույքային, որը ենթադրում է տեղական ինքնակառավարման մարմինների իրավունքը սեփական պատասխանատվությամբ և ինքնուրույն տնօրինելու համայնքի սեփականությունը հանդիսացող գույքը և կառավարելու այն: Այդ առնչությամբ Դիմողը նշում է, որ Հայաստանի Հանրապետությունում ճանաչվում և պաշտպանվում է սեփականության իրավունքը, որից բխում է պետության հանրային-իրավական համարժեք պարտավորությունը: Այդ պարտավորության իրացման նախապայմանն այն է, որ Սահմանադրության 60-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք իրավունք ունի իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու, տնօրինելու օրինական հիմքով ձեռք բերած սեփականությունը: Սահմանադրական այդ իրավունքը չի կարող օրենքով սահմանափակվել, քանի դեռ առկա չեն Սահմանադրության 60-րդ հոդվածով նախատեսված հիմքերը: Սահմանադրությունը իրավունք է վերապահում պետությանը՝ որպես առանձին հանրային իրավունքի իրավաբանական անձի, կառավարելու բացառապես պետական սեփականությունը: Անձանց կամ տեղական ինքնակառավարման մարմինների սեփականության կառավարումը՝ որպես գործառույթ, օրենքով չի կարող ընդգրկվել այդ իրավունքի իրացման շրջանակներում:

15. Դիմողը նշում է. «(...) ինչպես և առաջավոր եվրոպական երկրներում, այնպես էլ Եվրոպայի խորհրդի անդամ հանդիսացող Հայաստանի Հանրապետությունում (որն ամբողջությամբ է վավերացրել Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիան և դրա բաղկացուցիչ մաս հանդիսացող Ուտրեխտի լրացուցիչ արձանագրությունը) համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիան համայնքներին է տրամադրվում առանց պայմանների, առանց նպատակային նշանակությամբ ծախսելու պահանջների և դրանով հնարավորություն է տրվում տեղական ինքնակառավարման մարմիններին ինքնուրույն տնօրինելու դոտացիայի ձևով համայնքի սեփականություն դարձած դրամական միջոցները և ինքնուրույն լուծելու համայնքային նշանակության հարցերը»:

16. Դիմողը նաև նկատում է. «(...) Դոտացիաների տրամադրումը չպետք է վնասի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից իրենց իրավասությունների շրջանակում վարվող քաղաքականությանը, իսկ նախադրեալով ընթացակարգերը կամ միջոցառումները չպետք է սահմանափակեն տեղական ինքնակառավարման մարմինների գործողությունների ազատությունը, որոնք նրանք կարող են իրականացնել իրենց լիազորությունների շրջանակում: Պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների փոխհարաբերությունների հիմքում ընկած է համայնքի գործերին պետության, դրա մարմինների միջամտության անթույլա-

տրելիության սկզբունքը, իսկ դոպացիաների կառավարման նկատմամբ վերահսկողություն իրականացնելով խախտվում է տեղական ինքնակառավարման մարմինների իրավունքը՝ ինքնուրույն և սեփական պարասխանաբարությանը լուծելու համայնքային նշանակության հանրային հարցերը՝ համայնքի սեփականությունը հանդիսացող գույքը ազատ փոխանցելու իրավունքի համապատասխան, միջամտում որոշումների ազատ կայացման և սեփականության ազատ կառավարման գործընթացին, ինչպես նաև խախտում համայնքների բյուջեների ինքնուրույնության սկզբունքը և Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի 9-րդ հոդվածով սահմանված երաշխիքները: Արդյունքում, օրենքով սահմանված միջամտությունը հակասում է Սահմանադրությանը, Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիային՝ խախտելով դրանցով սահմանված տեղական ինքնակառավարման երաշխիքները»:

17. Դիմողը եզրահանգում է, որ Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, 8-րդ կետով /տեղական ինքնակառավարման մարմիններում կամ համայնքային հիմնարկներում գնումների գործընթացը կանոնակարգող օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ վերահսկողության մասով/, 7-րդ հոդվածի 3-րդ մասով /տեղական ինքնակառավարման մարմինների կողմից վերահսկվող ոլորտներում վերահսկողական գործառույթներ իրականացնելու մասով/, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 95-րդ հոդվածի 6-րդ մասով /տեղական ինքնակառավարման մարմիններում կամ համայնքային հիմնարկներում գնումների գործընթացը կանոնակարգող օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ վերահսկողությունը՝ Օրենքով սահմանված կարգով իրականացնելու մասով/ վարչապետին և Ծառայությանը վերապահված լիազորությունները հակասում են Սահմանադրության 1-ին, 5-րդ հոդվածներին, 6-րդ հոդվածով ամրագրված օրինականության սկզբունքին, վարչապետի՝ Սահմանադրության 152-րդ հոդվածով սահմանված իրավասություններին և Սահմանադրության 188-րդ հոդվածով նախատեսված տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության նկատմամբ իրավական և մասնագիտական հսկողության պայմաններին:

Ըստ Դիմողի՝ «Տվյալ հարաբերությունը կարգավորող տարբեր կարգավորումների միջև հակասությունների առկայությունն ինքնին խոչընդոտում է օրենքի կանխատեսելիությունը և ըստ այդմ՝ Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իրավական որոշակիության սկզբունքի պահպանումը, իսկ այդ սկզբունքին չհամապատասխանող դրույթը չի կարող համարվել «օրենք» և բավարարել Խարտիայով նախատեսված տեղական ինքնակառավարման իրավունքի պաշտպանության «նվազագույն նշաճողին», այն է՝ տեղական ինքնակառավարման մարմինների վերահսկողության ոլորտում սահմանված օրինականության սկզբունքը (Խարտիայի 8-րդ հոդված): Դրանով իսկ խախտվում են նաև Սահմանադրության 80-րդ հոդվածով սահմանված հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ դրույթների էության անխախտելիության երաշխիքը և 81-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված այն երաշխիքը, ըստ որի հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակումները չեն կարող գերազանցել Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված սահմանափակումները»:

18. Դիմողը եզրահանգում է նաև, որ Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով նախատեսված՝ տեղական ինքնակառավարման մարմիններին տրամադրված դոպացիաների կառավարման օրինականության կամ դրանց տրամադրման համար հիմք

հանդիսացող տեղեկատվության արժանահավատության գնահատման նպատակով տեղական ինքնակառավարման մարմիններում վերահսկողություն իրականացնելու վերաբերյալ կարգավորումը հակասում է Սահմանադրության 1-ին, 9, 10, 60, 179, 184-186-րդ հոդվածներին՝ հանգեցնելով Սահմանադրության 60, 78-81-րդ հոդվածներով սահմանված հիմնական սահմանադրական իրավունքների և երաշխիքների խախտման:

Պատասխանողի դիրքորոշումները

19. Պատասխանողը, վկայակոչելով և վերլուծելով Սահմանադրության և օրենսդրության վերաբերելի դրույթները՝ մասնավորապես, նշում է. «(...) Կառավարության քաղաքականության հիմնական ուղղություններին համապատասխան վերահսկողական իրավասություններ ունենալը ոչ թե հակասում, այլ բխում է Կառավարության գործունեության կարգի տրամաբանությունից: Սակայն միաժամանակ վերահսկողության սահմանները ընդգծվում են այն ոլորտները և մարմինները համակարգող իրավական կարգավորումներով, որտեղ իրականացվում է այդ վերահսկողությունը: Հետևաբար վերահսկողությունը ինքնին չի կարող լինել բացարձակ»:

20. Պատասխանողը նշում է նաև, որ Ծառայությունն իրացնում է Կառավարության քաղաքականության հիմնական ուղղությունների և Կառավարության գործունեության կարգի տրամաբանությունից բխող վերահսկողական իրավասությունը: Ծառայությունը տեղական ինքնակառավարման մարմիններում իրականացնում է վերահսկողություն տրամադրված սուբսիդիաների, սուբվենցիաների կամ դոտացիաների կառավարման օրինականության կամ դրանց տրամադրման համար հիմք հանդիսացող տեղեկատվության արժանահավատության գնահատման նպատակով: Ըստ Պատասխանողի՝ **«Նշված պայմաններում Պետական վերահսկողական ծառայությունը մասնագիտական կամ տեղեկատվական դիրքորոշում է ներկայացնում, վերջինս վարչարարություն չի իրականացնում, նշված դիրքորոշումը կրում է տեղեկատվական բնույթ, չունի որևէ իրավական հետևանք կամ ներգործություն, որևէ պատասխանատվություն չի սահմանում: Վարչապետի՝ Կառավարության քաղաքականության ուղղությունների որոշման իրավասության և կառավարության գործունեության կարգի տրամաբանության համատեքստում բոլոր դեպքերում այդ տեղեկությունները կարող է և պետք է հասանելի լինի»:**

21. Պատասխանողի պնդմամբ՝ երբ տարանջատվում են վերահսկողության նպատակը, ձևաչափը և չափորոշիչը, հերքվում է Դիմողի դիրքորոշումն առ այն, որ վարչապետը, վերջինիս ենթակա մարմինը չեն կարող տեղավորվել Սահմանադրության 188-րդ հոդվածով նախատեսված «Կառավարության լիազոր մարմին» եզրույթի ներքո:

Ըստ Պատասխանողի՝ Ծառայությունը վերահսկողություն է իրականացնում պետական միջոցների և պետական սեփականության օրինական ու արդյունավետ կառավարման, ինչպես նաև պետական կառավարման ոլորտում օրինականության պահպանման նպատակով, *որի արդյունքում վարչապետին անկողմնակալ և ամբողջական տեղեկատվություն կամ մասնագիտական դիրքորոշում է ներկայացվում:* Նման տրամաբանությամբ վերահսկողության իրականացումը չի կարող նույնացվել ֆինանսական կառավարման բնագավառում լիազորված մարմնի գործունեության հետ: Ըստ Պատասխանողի՝ «Մասնավորապես առերևույթ է, որ ֆինանսական հսկողության դրսևորում չունի պետական վերահսկողական ծառայության իրավասության իրացումը:

(...)

Ֆինանսների նախարարությունը գնումների ոլորտում հանդես է գալիս որպես պետական քաղաքականություն ձևավորող և համակարգող մարմին, որի գործառույթներն ունեն նորմատիվ, համակարգային և մեթոդաբանական բնույթ:

(...)

Վերահսկողական գործառույթները, իրենց հերթին, վերապահված են պետական վերահսկողական ծառայությանը, որը ապահովում է օրինականության պահպանման վերահսկողությունը: Այս դեպքում ևս որևէ միջամտություն, ներգործություն չի իրականացվում, այլ վերահսկողության արդյունքում կազմված դիրքորոշումը կրում է տեղեկատվական, մասնագիտական, խորհրդատվական բնույթ»:

22. Պատասխանողը նշում է, որ սուբսիդիաների, սուբվենցիաների կամ դոտացիաների կառավարման օրինականության կամ դրանց տրամադրման համար հիմք հանդիսացող տեղեկատվության արժանահավատության գնահատումն ու վերահսկողությունը «չի իրականացվում այդ միջոցների կառավարմանը միջամտելու կամ ուղղությունները որոշելու նկատառումով, կամ որևէ ֆինանսական հսկողության տարր չի ներառվում քննարկվող վերահսկողության համատեքստում, այլ իրականացվում է օրինականության կամ դրանց տրամադրման համար հիմք հանդիսացող տեղեկատվության արժանահավատության գնահատման նպատակով: Այս դեպքում ևս չկա որևէ միջամտություն, որևէ ներգործություն, որևէ վարչարարություն, և այդ վերահսկողությունը չի առաջացնում որևէ իրավական հետևանք, այն կրում է միայն խորհրդատվական և տեղեկատվական բնույթ»:

23. Պատասխանողը նշում է. «(...) Դիմողի փաստարկները վիճարկվող կարգավորումների օրենքներին և կամ Սահմանադրական նորմերին հակասելու մասով հերքվում են այն պայմաններում, երբ տարանջատվում է պետական վերահսկողական ծառայության կողմից վերահսկողության սահմանները՝ բացահայտելով դրա նպատակը, վերահսկման ձևաչափը, վերահսկման իրացման կարգը և դրա արդյունքում կազմված դիրքորոշման իրավական հետևանքները: Բացի այդ Սահմանադրության 188-րդ հոդվածի 1-ին մասից է բխում պետական վերահսկողական ծառայության վերահսկողական իրավասությունները, որը միտված է օրինականության և սուբսիդիաների, սուբվենցիաների կամ դոտացիաների տրամադրման համար հիմք հանդիսացող տեղեկատվության արժանահավատության գնահատմանը, ինչը հանդիսանում է իրավական հսկողության դրսևորում»:

24. Պատասխանողը, վկայակոչելով Խարտիայի համապատասխան դրույթները, նշում է, որ «(...) սահմանվում է վարչական վերահսկողության հնարավորություն, որը կարող է իրականացվել օրինականության կամ նպատակահարմարության տեսանկյունից, ինչպես նաև այդ վերահսկողությունը չպետք է սահմանափակի տեղական ինքնակառավարման մարմինների ինքնուրույնությունը: Միաժամանակ վերահսկողությունը պետք է իրականացվի Սահմանադրությամբ կամ օրենքով նախատեսված ձևերով և դեպքերում»:

25. Ըստ Պատասխանողի՝ քննարկման առարկա վերահսկողությունն իր իրավաբանական նշանակությամբ ուղղված է բացառապես օրինականության և իրավական հսկողության ապահովմանը, չի խախտում համայնքի սեփականության իրավունքը և չի կարող սահմանափակել համայնքի իրավասությունը՝ ազատ տնօրինել իր սեփականությունը կամ ինքնուրույն որոշումներ ընդունել համայնքային կարիքների համար:

26. Ըստ Պատասխանողի՝ վիճարկվող դրույթների կիրառումը չի առաջացնում իրավական անորոշություն կամ կամայական մեկնաբանման վտանգ և լիովին համահունչ է իրավական որոշակիության սկզբունքին:

27. Պատասխանողը խնդրում է սույն գործով ընդունել որոշում՝ վիճարկվող դրույթները Սահմանադրությանը համապատասխանող ճանաչելու մասին:

Սահմանադրական վեճի քննության շրջանակը

28. Սույն գործով սահմանադրական վեճը հանգում է Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, նույն հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի՝ գնումների գործընթացը կանոնակարգող օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ տեղական ինքնակառավարման մարմիններում կամ համայնքային հիմնարկներում Ծառայությանն Օրենքով սահմանված կարգով վերահսկողություն իրականացնելու լիազորություն վերապահելու մասով, Օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասի՝ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից վերահսկվող ոլորտներում վերահսկողական գործառույթներ իրականացնելու մասով, ինչպես նաև «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 95-րդ հոդվածի 6-րդ մասի՝ տեղական ինքնակառավարման մարմիններում կամ համայնքային հիմնարկներում գնումների գործընթացը կանոնակարգող օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ վերահսկողությունը՝ Օրենքով սահմանված կարգով իրականացնելու մասով, սահմանադրականության հարցերին՝ Սահմանադրության 188-րդ հոդվածի համապատասխան՝ Սահմանադրության 74-րդ հոդվածի ուժով համայնքի՝ որպես Սահմանադրության 180-րդ հոդվածի 2-րդ մասին համապատասխան՝ հանրային իրավունքի իրավաբանական անձի՝ Սահմանադրության 60-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված հիմնական իրավունքի ապահովման լույսի ներքո:

Գործի շրջանակներում պարզման ենթակա հանգամանքները

29. Վիճարկվող օրինադրույթների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը գնահատելու համար Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ, մասնավորապես, ներքոնշյալին՝

- Օրենքի վիճարկվող դրույթները, որոնցով Ծառայությանը վերապահվել են տրամադրված սուբսիդիաների, սուբվենցիաների կամ դոտացիաների կառավարման օրինականության կամ դրանց տրամադրման համար հիմք հանդիսացող տեղեկատվության արժանահավատության գնահատման նպատակով տեղական ինքնակառավարման մարմիններում, գնումների գործընթացը կանոնակարգող օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ տեղական ինքնակառավարման մարմիններում կամ համայնքային հիմնարկներում Օրենքով սահմանված կարգով վերահսկողություն իրականացնելու լիազորություններ՝ նախատեսելով նաև տեղական ինքնակառավարման մարմինների կողմից վերահսկվող ոլորտներում վերահսկողական գործառույթների առնչությամբ կարգավորում, իսկ «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի վիճարկվող դրույթը՝ նախատեսելով, որ տեղական ինքնակառավարման մարմիններում կամ համայնքային հիմնարկներում գնումների գործընթացը կանոնակարգող օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ վերահսկողություն իրականացվում է Օրենքով սահմանված կարգով, համահունչ են արդյո՞ք Սահմանադրության՝ «Իրավական և մասնագիտական հսկողությունը» վերտառությամբ 188-րդ հոդվածին՝ Սահմանադրության 60-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված սեփականության իրավունքի ապահովման լույսի ներքո՝ Սահմանադրության 74-րդ հոդվածի ուժով՝ այնքանով,

որքանով հիշյալ հիմնական իրավունքն իր էությանմբ կիրառելի է հանրային իրավունքի իրավաբանական անձի նկատմամբ:

30. Սույն սահմանադրական վեճի լուծմանը վերաբերելի Սահմանադրության հիմնական դրույթներն են՝

30.1. «Հայաստանի Հանրապետությունն (...), ժողովրդավարական, (...), իրավական պետություն է» (1-ին հոդված).

30.2. «Հայաստանի Հանրապետությունում երաշխավորվում է տեղական ինքնակառավարումը՝ որպես ժողովրդավարության էական հիմքերից մեկը» (9-րդ հոդված).

30.3. «1. Յուրաքանչյուր ոք ունի օրինական հիմքով ձեռք բերած սեփականությունն իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավունք» (60-րդ հոդվածի 1-ին մաս).

30.4. «Հիմնական իրավունքները և ազատությունները տարածվում են նաև իրավաբանական անձանց վրա այնքանով, որքանով այդ իրավունքները և ազատություններն իրենց էությամբ կիրառելի են դրանց նկատմամբ» (74-րդ հոդված).

30.5. «2. Հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակումները չեն կարող գերազանցել Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված սահմանափակումները» (81-րդ հոդվածի 2-րդ մաս).

30.6. «Պետական կառավարման համակարգի մարմիններն են նախարարությունները, ինչպես նաև Կառավարությանը, վարչապետին և նախարարություններին ենթակա այլ մարմիններ, որոնց կազմավորման կարգը և լիազորությունները սահմանվում են օրենքով» (159-րդ հոդված).

30.7. «Տեղական ինքնակառավարումը տեղական ինքնակառավարման մարմինների իրավունքն ու կարողությունն է՝ համայնքի բնակիչների շահերից ելնելով, Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան, սեփական պատասխանատվությամբ լուծելու համայնքային նշանակության հանրային հարցերը» (179-րդ հոդվածի 1-ին մաս).

30.8. «Համայնքը հանրային իրավունքի իրավաբանական անձ է» (180-րդ հոդվածի 2-րդ մաս).

30.9. «1. Տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները լինում են սեփական՝ համայնքի պարտադիր և կամավոր խնդիրների լուծման նպատակով, ինչպես նաև պետության կողմից պատվիրակված: Համայնքի պարտադիր խնդիրները սահմանվում են օրենքով (...):

2. Պետական մարմինների լիազորությունների առավել արդյունավետ իրականացման նպատակով դրանք օրենքով կարող են պատվիրակվել տեղական ինքնակառավարման մարմիններին:

(...)

5. Տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները սահմանվում են օրենքով» (182-րդ հոդվածի 1-ին, 2, 5-րդ մասեր).

30.10. «2. Համայնքի բյուջեի եկամուտների ձևավորման և ծախսերի իրականացման կարգը սահմանվում է օրենքով» (185-րդ հոդվածի 2-րդ մաս).

30.11. «1. Համայնքի պարտադիր խնդիրների լուծման նպատակով օրենքով սահմանվում են հարկային և ոչ հարկային այնպիսի աղբյուրներ, որոնք անհրաժեշտ են այդ խնդիրների իրականացումն ապահովելու համար:

2. Համայնքներին պետության կողմից պատվիրակված լիազորությունները ենթակա են պետական բյուջեից պարտադիր ֆինանսավորման:

3. Պետությունն իր հնարավորությունների շրջանակներում միջոցներ է հատկացնում համայնքների համաչափ զարգացումն ապահովելու համար» (186-րդ հոդված)։

30.12. «1. Համայնքի սեփական խնդիրների իրականացման նկատմամբ Կառավարության լիազոր մարմինն օրենքով սահմանված դեպքերում և կարգով իրականացնում է իրավական հսկողություն։

2. Պետության կողմից պատվիրակված լիազորությունների իրականացման նկատմամբ Կառավարության լիազոր մարմիններն օրենքով սահմանված դեպքերում և կարգով իրականացնում են իրավական և մասնագիտական հսկողություն» (188-րդ հոդված)։

Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները

31. Սահմանադրության 1-ին հոդվածի համաձայն՝ «Հայաստանի Հանրապետությունն (...), ժողովրդավարական, (...), իրավական պետություն է»։

Սահմանադրության՝ «**Տեղական ինքնակառավարման երաշխավորումը**» վերտառությամբ 9-րդ հոդվածի համաձայն՝ «Հայաստանի Հանրապետությունում երաշխավորվում է տեղական ինքնակառավարումը՝ որպես ժողովրդավարության էական հիմքերից մեկը»։

Ժողովրդավարական պետության հիմնարար բաղադրիչներից մեկն իշխանության տարածական կազմակերպման ապակենտրոնացումն է, որի բարձրագույն արտահայտությունը տեղական ինքնակառավարումն է։ Տեղական ինքնակառավարման համակարգի առկայության պայմաններում պետությունը և համայնքը գոյակցում են իրավական փոխհամաձայնության սկզբունքով։

Սահմանադրության՝ «**Տեղական ինքնակառավարման իրավունքը**» վերտառությամբ 179-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Տեղական ինքնակառավարումը տեղական ինքնակառավարման մարմինների իրավունքն ու կարողությունն է՝ համայնքի բնակիչների շահերից ելնելով, Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան, սեփական պատասխանատվությամբ լուծելու համայնքային նշանակության հանրային հարցերը»։

32. Խարտիայի 3-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ տեղական ինքնակառավարումը նշանակում է տեղական ինքնակառավարման մարմինների իրավունքը և կարողությունը՝ օրենքի շրջանակներում կանոնակարգելու և կառավարելու հանրային գործերի զգալի մասը՝ սեփական պատասխանատվությամբ և տեղական բնակչության շահերից ելնելով։

Տեղական ինքնակառավարումը ժողովրդավարության հենասյուներից է, որը միավորում է պետական իշխանության միասնականությունը և տեղական իշխանության ինքնուրույնությունը՝ ապահովելով համայնքի բնակչության անմիջական մասնակցությունը համայնքային կյանքի կազմակերպմանը։

33. Սահմանադրական դատարանի՝ 2021 թվականի մայիսի 14-ի ՍԴՈ-1593 որոշմամբ արձանագրված է.

«(...) յուրաքանչյուր համայնքի գոյության ընթացքում տեղական ինքնակառավարման մարմիններն օժտված են **տեղական ինքնակառավարման իրավունքով**, որը վերաբերում է համայնքի բնակիչների շահերից ելնելով, համայնքային նշանակության հանրային հարցերը սեփական պատասխանատվությամբ լուծելուն։ Ընդ որում, տեղական ինքնակառավարումը տեղական ինքնակառավարման մարմինների ոչ միայն իրավունքն է, այլև **կարողությունը**, քանի որ նշված իրավունքն իրացնելու համար վերջիններս պետք

է ունենան համապատասխան ռեսուրսների ձևավորման աղբյուրներ (օրինակ՝ ֆինանսական, կազմակերպական, մարդկային)» (4.1-ին կետ):

34. Տեղական ինքնակառավարման՝ որպես հանրային իշխանության ինքնուրույն մակարդակի, սահմանադրաիրավական գործառույթների իրականացման համար պահանջվում է ոչ միայն իրավական մակարդակում ճանաչում/ամրագրում, այլև արդյունավետ ինքնուրույնության ինստիտուցիոնալ երաշխավորում: Որպես սահմանադրական պատվիրան՝ այն արտահայտում է տեղական ինքնակառավարման՝ իրավական, կազմակերպական, ֆինանսական և տնտեսական առումներով ինքնուրույնությունը պետությունից՝ միաժամանակ պահպանելով միասնական հանրային իշխանության համակարգի ամբողջականությունը: Այդ առումով, ինչպես Սահմանադրությամբ, այնպես էլ Խարտիայով ամրագրված են մի շարք երաշխիքներ, որոնք կոչված են լիարժեքորեն ապահովելու տեղական ինքնակառավարման իրավունքի կյանքի կոչումը:

35. *Նորմատիվ իրավական երաշխիքներ*, այդ թվում՝

- *սահմանադրական երաշխիքներ*. տեղական ինքնակառավարման իրավունքը ճանաչվում և երաշխավորվում է Սահմանադրությամբ: Սահմանադրության 9-րդ հոդվածով, ապա 9-րդ գլխով ամրագրված կարգավորումներից հետևում է, որ պետությունը չի կարող կամայականորեն վերացնել կամ սահմանափակել համայնքային իշխանության շրջանակները՝ առանց սահմանադրական հիմքի.

- *Խարտիայի երաշխիքներ*. Խարտիայի 3-րդ հոդվածով ամրագրված է տեղական ինքնակառավարման իրավունքը՝ որպես տեղական ինքնակառավարման մարմինների «իրավունքը և կարողությունը՝ կանոնակարգելու և կառավարելու պետական գործերի զգալի մասը (օրենքի շրջանակներում)՝ սեփական պատասխանատվությամբ և տեղական բնակչության շահերից ելնելով»: Սույն ձևակերպումը ոչ միայն ճանաչում է տեղական ինքնակառավարման ինքնուրույնությունը, այլև այն դիտարկում է որպես պետության համար իրավական պարտավորություն՝ չմիջամտելու տեղական մակարդակում կառավարմանը, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:

36. *Կազմակերպական երաշխիքներ*. այս առումով պետք է հստակ տարբերակված լինեն պետական և համայնքային իրավասությունները, ինչը նաև ապահովում է որոշումների կայացման հարցում տեղական ինքնակառավարման մարմինների իրական ինքնուրույնությունը:

Խարտիայի 4-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ տեղական ինքնակառավարման մարմինների հիմնական լիազորությունները սահմանվում են Սահմանադրությամբ կամ օրենքով: Սակայն այդ դրույթը չի խանգարում, որ տեղական ինքնակառավարման մարմիններին, օրենքին համապատասխան, որոշակի նպատակներով որոշակի լիազորություններ վերապահվեն:

Խարտիայի 4-րդ հոդվածի 2-րդ մասին համապատասխան՝ տեղական ինքնակառավարման մարմինները, օրենքով սահմանված շրջանակներում, ունեն գործողությունների լիակատար ազատություն՝ իրականացնելու իրենց նախաձեռնությունները ցանկացած հարցի հետ կապված, որը դուրս չէ իրենց իրավասություններից և վերապահված չէ իշխանության այլ մարմնի:

Համայնքի բնակչությունն ընտրում է տեղական ինքնակառավարման մարմիններին՝ ձևավորելով նրանց *ժողովրդավարական լեգիտիմությունը*, որում *մարմնավորվում է տեղական ինքնակառավարման մարմինների ինքնուրույնության ամենաբարձր ձևը. իշխանությունը բխում է անմիջապես համայնքի բնակչությունից, ոչ թե պետական*

Կենտրոնական իշխանությունից: Տեղական ինքնակառավարման մարմիններն իրավասու են սահմանելու ներքին կառուցվածքային տարրեր, աշխատանքային ընթացակարգեր և որոշումների ընդունման ձևեր՝ առանց գործադիր իշխանության ուղղակի ցուցումների:

Սահմանադրության 181-րդ հոդվածով սահմանված են *տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների*, իսկ 182-րդ հոդվածով՝ *համայնքի խնդիրների և դրանց լուծմանը համահունչ՝ տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների վերաբերյալ առանցքային կարգավորումները*:

37. Ֆինանսատնտեսական երաշխիքներ. համայնքային իշխանության ինքնուրույնությունն անհնարին է՝ առանց իրական ֆինանսական ինքնուրույնության: Համայնքային իշխանությունը կարող է գործել արդյունավետ միայն այն դեպքում, երբ ունի բավարար ֆինանսական միջոցներ, որոնց գոյացումն ու օգտագործումն ամբողջությամբ կախված չեն պետական իշխանությունից: Համայնքներին պետք է վերապահվի սեփական եկամուտների ձևավորման իրավասություն՝ հարկերի, տուրքերի և այլ համապատասխան ֆինանսական աղբյուրների տեսքով: Պետական բյուջեից փոխանցումները կարող են ունենալ լրացուցիչ բնույթ, սակայն դրանք չպետք է փոխարինեն համայնքների՝ սեփական ֆինանսական աղբյուրներին:

Խարտիայի 9-րդ հոդվածի 2-րդ մասին համապատասխան՝ տեղական ինքնակառավարման մարմինների ֆինանսական միջոցները պետք է համաչափ լինեն Սահմանադրությամբ կամ օրենքով նրանց վերապահված լիազորություններին:

Սահմանադրության՝ **«Համայնքների ֆինանսավորումը»** վերտառությամբ 186-րդ հոդվածի համաձայն՝ համայնքի պարտադիր խնդիրների լուծման նպատակով օրենքով սահմանվում են հարկային և ոչ հարկային այնպիսի աղբյուրներ, որոնք անհրաժեշտ են այդ խնդիրների իրականացումն ապահովելու համար: Համայնքներին պետության կողմից պատվիրակված լիազորությունները ենթակա են պետական բյուջեից պարտադիր ֆինանսավորման: Պետությունն իր հնարավորությունների շրջանակներում միջոցներ է հատկացնում համայնքների համաչափ զարգացումն ապահովելու համար:

Վերոնշյալը համայնքների ֆինանսական ինքնուրույնության ապահովման կարևոր երաշխիք է: Ֆինանսատնտեսական ինքնուրույնությունը ոչ միայն բյուջետային անկախության հարց է, այլև համայնքների՝ իրենց առաջնահերթություններն ինքնուրույն որոշելու իրավունքի իրացման միջոց:

38. Իրավական պաշտպանության երաշխիքներ. ինքնուրույնությունը չի կարող լինել լիարժեք՝ առանց արդյունավետ իրավական պաշտպանության կառուցակարգերի, որոնք համայնքներին հնարավորություն են ընձեռում պաշտպանելու իրենց իրավունքները պետական միջամտությունից: Պետական իշխանության մարմնի կողմից համայնքի ինքնակառավարման իրավունքի խախտման դեպքում համայնքը կարող է դիմել դատարան: Այդ առնչությամբ, Խարտիայի 11-րդ հոդվածով ամրագրված է, որ տեղական ինքնակառավարման մարմիններն իրենց լիազորությունների ազատ իրականացման ապահովման և Սահմանադրությամբ կամ ներպետական օրենսդրությամբ ամրագրված տեղական ինքնակառավարման սկզբունքների պահպանման համար պետք է ունենան դատական պաշտպանություն:

39. Տեղական ինքնակառավարման ինքնուրույնության սահմանադրաիրավական երաշխիքների համակարգը ոչ միայն երաշխավորում է տեղական ինքնակառավարումը և պաշտպանում համայնքների իրավունքը՝ ինքնուրույն լուծելու համայնքային նշանակության հանրային հարցերը, այլև ծառայում է ժողովրդավարական պետության կայացմանը

և իշխանության բաշխմանը տարածական հարթությունում: Այդ իմաստով, տեղական ինքնակառավարումն արտահայտում է պետական իշխանության ապակենտրոնացման, ժողովրդավարացման և հանրային պատասխանատվության սկզբունքների նյութականացված ձևը, որոնք Սահմանադիրը դրել է տեղական ինքնակառավարման արժեքանության հիմքում:

40. Սահմանադրության՝ «Համայնքի խնդիրները և տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները» վերտառությամբ 182-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները լինում են սեփական՝ համայնքի պարտադիր և կամավոր խնդիրների լուծման նպատակով, ինչպես նաև պետության կողմից պատվիրակված: Համայնքի պարտադիր խնդիրները սահմանվում են օրենքով, իսկ կամավոր խնդիրները՝ համայնքի ավագանու որոշումներով:

Սահմանադրության 182-րդ հոդվածի 2-րդ մասին համապատասխան՝ պետական մարմինների լիազորությունների առավել արդյունավետ իրականացման նպատակով դրանք օրենքով կարող են պատվիրակվել տեղական ինքնակառավարման մարմիններին:

Սահմանադրության հիշյալ հոդվածի 5-րդ մասով ամրագրված է, որ տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները սահմանվում են օրենքով:

Համայնքի խնդիրների և տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների ընդհանուր բնութագիրը սահմանված է «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 10-րդ հոդվածով: Ըստ այդմ՝ **համայնքի խնդիրները** լինում են **պարտադիր**՝ հանրային նշանակության խնդիրներ, որոնց լուծմամբ ապահովվում է համայնքի բնականոն կյանքի ընթացքը, և **կամավոր**, որոնցով համայնքային կյանքի բնականոն ընթացքն ուղղակիորեն պայմանավորված չէ և կարող են իրականացվել, միայն պարտադիր խնդիրների լուծման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցներից բացի, հավելյալ ֆինանսական միջոցների առկայության դեպքում (1-3-րդ մասեր):

Համայնքի պարտադիր խնդիրները սահմանված են «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածով: Հիշյալ օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի երկրորդ պարբերության համաձայն՝ տեղական ինքնակառավարման մարմինների՝ նշված օրենքի իմաստով սահմանված սեփական լիազորություններն ուղղված են բացառապես համայնքի պարտադիր խնդիրների լուծմանը:

Տեղական ինքնակառավարման մարմինների **սեփական լիազորությունները** վերաբերում են տեղական նշանակության այն հարցերին, որոնք ուղղակիորեն կապված են համայնքի բնակչության առօրյա կարիքների և համայնքի զարգացման հետ, իրականացվում են (1) համայնքի անունից, (2) համայնքի բնակչության շահերից ելնելով, (3) սեփական պատասխանատվությամբ և (4) ֆինանսական ռեսուրսներով: Այս լիազորությունները համայնքի ինքնուրույնության առանցքային երաշխիքն են:

Պետության կողմից պատվիրակված լիազորությունների իրականացումը միտված է պետական մարմինների լիազորությունների առավել արդյունավետ իրականացմանը: Պատվիրակված լիազորություններն իրականացնելիս համայնքը պարտավոր է պահպանել պետական քաղաքականության ընդհանուր ուղղությունները և հաշվետու է պետական իշխանությանը, ընդ որում՝ նշված խումբ լիազորությունների իրականացումն անբաժան է ֆինանսական ապահովվածությունից. առանց համապատասխան ֆինանսական միջոցների տրամադրման՝ լիազորությունների պատվիրակումը կխաթարի

համայնքային իշխանության ինքնուրույնությունը: Այդ առնչությամբ, Սահմանադրության 186-րդ հոդվածի 2-րդ մասով ամրագրված է, որ *համայնքներին պետության կողմից պարտավորակված լիազորությունները ենթակա են պետական բյուջեից պարտադիր ֆինանսավորման:*

41. Տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների արդյունավետ իրականացումը հնարավոր է միայն այն դեպքում, երբ դրանք համապատասխանում են համայնքի ֆինանսական և ինստիտուցիոնալ հնարավորություններին: Այդ առումով, բացառիկ կարևորություն ունի *ֆինանսական ինքնուրույնության երաշխավորումը, որն ապահովում է, մի կողմից՝ տեղական ինքնակառավարման մարմինների՝ սեփական լիազորություններն իրականացնելու հնարավորությունը, մյուս կողմից՝ կառավարման հաշվետվողականությունը (սեփական լիազորությունների մասով՝ բնակչությանը, պարտավորակված լիազորությունների մասով՝ պետությանը), ինչպես նաև պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների միջև համագործակցային կառավարումը:*

42. Տեղական ինքնակառավարումը՝ որպես հանրային իշխանության ապակենտրոնացման և բազմաբնույթ կառուցվածքի կարևորագույն դրսևորում, թեև տարանջատված է պետական իշխանության համակարգից, սակայն *այդ ինքնուրույնությունը չի ենթադրում պետական իշխանությունից լիակատար մեկուսացում:* Տեղական ինքնակառավարումն իրականացվում է հանրային իշխանության միասնականության գաղափարի (միասնական համակարգի) շրջանակներում, որտեղ պետությունը, պահպանելով համայնքային ինքնուրույնության սկզբունքը, իրավասու է ապահովելու վերջինիս գործունեության օրինականությունը՝ Սահմանադրությամբ և օրենքներով սահմանված կարգով՝ *տեղական նշանակության հարցերի կարգավորման և համայնքային շահերի արտահայտման ու պաշտպանության գործառնությունների համապրեքսում:*

Սահմանադրության՝ **«Իրավական և մասնագիտական հսկողությունը»** վերտառությամբ 188-րդ հոդվածի համաձայն՝ *համայնքի սեփական խնդիրների իրականացման նկատմամբ Կառավարության լիազոր մարմինն օրենքով սահմանված դեպքերում և կարգով իրականացնում է իրավական հսկողություն: Պետության կողմից պարտավորակված լիազորությունների իրականացման նկատմամբ Կառավարության լիազոր մարմիններն օրենքով սահմանված դեպքերում և կարգով իրականացնում են իրավական և մասնագիտական հսկողություն:*

43. Սահմանադրական դատարանի՝ 2021 թվականի մայիսի 14-ի ՍԴՈ-1593 որոշմամբ արձանագրված է. «Սահմանադրական ամրագրում է ստացել նաև **տեղական ինքնակառավարման մարմինների ինքնուրույնությունը**, որի համաձայն՝ վերջիններս իրենց վերապահված լիազորություններն իրականացնում են սեփական պատասխանատվությամբ, ինչը պետությանն արգելում է տեղական ինքնակառավարման մարմիններին հրահանգել, թե նրանք իրենց իրավասությանը վերապահված ո՞ր հարցը լուծեն կամ ինչպե՞ս իրականացնեն իրենց լիազորությունները: Միաժամանակ, տեղական ինքնակառավարման մարմիններին հակակշռելու, նրանց կողմից օրենքների պահպանումն ապահովելու համար սահմանադիրը տեղական ինքնակառավարման մարմինների նկատմամբ սահմանել է հսկողություն իրականացնելու իրավասություն, այն է՝ համայնքի սեփական խնդիրների իրականացման նկատմամբ Կառավարության լիազոր մարմինն օրենքով սահմանված դեպքերում և կարգով իրականացնում է **իրավական հսկողություն**, իսկ պետության կողմից պարտավորակված լիազորությունների իրականացման նկատմամբ

Կառավարության լիազոր մարմիններն օրենքով սահմանված դեպքերում և կարգով իրականացնում են **իրավական և մասնագիտական հսկողություն** (Սահմանադրության 188-րդ հոդված):

Տեղական ինքնակառավարման մարմիններն առաջնորդվում են **համայնքի բնակիչների շահերով**: Հարկ է նշել է, որ տեղական ինքնակառավարումը «սեփական պատասխանատվությամբ» և «համայնքի բնակիչների շահերից ելնելով» իրականացնելու հանգամանքին անդրադարձել է նաև Եվրոպայի խորհրդի Տեղական և տարածքային իշխանությունների կոնգրեսը՝ նշելով, որ «(...) տեղական ինքնակառավարման մարմիններն իրենց լիազորությունները պետք է իրականացնեն «սեփական պատասխանատվությամբ» և «տեղական բնակչության շահերից ելնելով»: Հետևաբար, տեղական ինքնակառավարման մարմինները չպետք է սահմանափակվեն միայն բարձր իշխանության գործակալների դերում հանդես գալով: Նրանք կարող են որոշել իրենց քաղաքական առաջնահերթությունները, կազմել ռազմավարություններ և հանրային քաղաքականություններ՝ ի շահ տեղական բնակչության: Նրանք օրենքի սահմաններում իրենց որոշումների համար հաշվետու չեն բարձր մակարդակի իշխանություններին, բայց քաղաքականապես հաշվետու են համայնքի բնակիչների առջև: Ուստի տեղական ինքնակառավարման մարմինների կենտրոնական խնդիրն է պաշտպանել և խթանել տեղական հանրային շահը:

Քննարկվող իրավունքն իրացվում է Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան, այսինքն՝ Սահմանադրությամբ և օրենքներով ուրվագծվում է այն շրջանակը, որում գործում են տեղական ինքնակառավարման մարմինները» (4.1-ին կետ):

44. Խարտիայի՝ «Տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության վարչական վերահսկողությունը» վերտառությամբ 8-րդ հոդվածի համաձայն՝ «1. Տեղական ինքնակառավարման մարմինների ցանկացած վարչական վերահսկողություն կարող է իրականացվել միայն Սահմանադրությամբ կամ օրենքով նախատեսված ընթացակարգերով և դեպքերում:

2. Տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության ցանկացած վարչական վերահսկողություն պետք է ծառայի միայն օրինականությանը և սահմանադրական սկզբունքների ապահովմանը: Այդուհանդերձ, վարչական վերահսկողությունը կարող է ներառել նաև վերադաս մարմինների կողմից տեղական ինքնակառավարման մարմիններին պատվիրակված լիազորությունների կատարման հսկողությունը:

3. Տեղական ինքնակառավարման մարմինների վարչական վերահսկողությունը պետք է իրականացվի այնպես, որ վերահսկող մարմնի միջամտության աստիճանը համաչափ լինի այն շահերի կարևորության աստիճանին, որոնք նա նպատակ ունի պաշտպանելու»:

45. Սահմանադրական դատարանը նկատում է, որ հսկողությունը և վերահսկողությունը պետական և տեղական ինքնակառավարման մարմինների փոխհարաբերությունների համակարգում օրինականության և իրավակարգի ապահովման հիմնարար ձևեր են, որոնք ուղղված են հանրային իշխանության իրականացման սահմանադրականության, օրինականության, արդյունավետության և հաշվետվողականության ապահովմանը, ուստի՝ դրանց իրավական բնույթի հստակեցումը պայմանավորում է տեղական ինքնակառավարման մարմինների ինքնուրույնության և պետական իշխանության մարմինների սահմանադրաչափ միջամտության սահմանները:

Հսկողությունը բնութագրվում է որպես այդպիսի գործառույթ ունեցող մարմնի կողմից իրականացվող համալիր, համակարգային և կանխարգելիչ իրավական ազդեցություն, որն ուղղված է հսկվող մարմնի *գործունեության օրինականության, նպատակահարմարության և արդյունավետության ապահովմանը*: Այն կարող է դրսևորվել (1) նախնական (ex ante) ձևով՝ որոշումների ընդունման /գործողության կատարման փուլում, (2) հետադարձ (ex post) ձևով՝ որոշման ընդունումից/գործողության կատարումից հետո, ինչպես նաև (3) շարունակական եղանակով՝ ընթացակարգերի և գործողությունների նկատմամբ մշտադիտարկման իրականացմամբ: Այդ առումով, հսկողությունը կարող է ընդգրկել հսկվող մարմնի գործունեության կազմակերպարարական, ֆինանսատնտեսական ոլորտները: Ընդ որում՝ հսկողությունը վերջնարդյունքում կարող է հանգեցնել *պարտադիր ցուցումների տեսքով միջամտության*՝ բացառելով որոշումների անմիջականորեն վերացման կամ վերանայման հնարավորությունը:

Վերահսկողության պայմաններում շեշտադրումը կատարվում է առավելապես վերահսկվող մարմնի որոշումների և գործողությունների (անգործության) օրինականությունը/իրավաչափությունը ստուգելու/գնահատելու վրա: Վերահսկողությունը, որպես կանոն, չի ներառում նպատակահարմարության գնահատումը¹, քանզի այն, իր իրավական էության մեջ, առավելապես *վերանայման կառուցակարգ* է, որը վերջնարդյունքում օրինականության որակի բացակայության պայմաններում կարող է հանգեցնել առավել լուրջ հետևանքների, ընդհուպ մինչև՝ *որոշումների վերացման՝ չեզոքացնելով դրանց իրավական հետևանքները*:

46. Խարտիայի 8-րդ հոդվածի 1-ին մասի առնչությամբ Խարտիայի բացատրական զեկույցի վերաբերյալ Եվրոպայի խորհրդի Տեղական և տարածաշրջանային իշխանությունների կոնգրեսի Ժամանակակից մեկնաբանության համաձայն՝ «125. (...) Հետևաբար՝ 8-րդ հոդվածի իմաստով «վերահսկողություն» է համարվում տեղական ինքնակառավարման մարմնի որոշումների ընդունման գործընթացին ցանկացած միջամտություն, որի միջոցով ավելի բարձր վարչական մակարդակ ունեցող մարմինը բացահայտ կամ լռելյայն հաստատում, համաձայնեցնում, թույլատրում, կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում տեղական միավորի կողմից ընդունված առաջարկը կամ վերջնական որոշումը, նորմատիվ ակտը կամ ծրագիրը: Նման վերահսկողության օրինակներ են, inter alia, տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունված որոշումների վերաբերյալ հաշվետվությունների ներկայացումը վերահսկող մարմնին, որոշակի գործո-

¹ Խարտիայի բացատրական զեկույցի վերաբերյալ Եվրոպայի խորհրդի Տեղական և տարածաշրջանային իշխանությունների կոնգրեսի Ժամանակակից մեկնաբանությունը Խարտիայի 8-րդ հոդվածի 2-րդ մասի առնչությամբ. «134. Խարտիայով արգելված չէ նպատակահարմարության (expediency) հիմքով վերահսկողության իրականացումը, սակայն այն խիստ սահմանափակված է, քանի որ համարվում է հակասական տեղական ինքնակառավարման իրական էությանը: Նպատակահարմարության վրա հիմնված վարչական վերահսկողությունը պետք է սահմանափակվի միայն այն գործառույթներով (խնդիրներով), որոնք բարձր մակարդակի մարմինները (վերահսկող մարմինները) պատվիրակել են տեղական իշխանություններին: Հետևաբար՝ տեղական իշխանության բնույթը (տեսակը) էական նշանակություն ունի՝ որոշելու համար այն վարչական վերահսկողության բնույթն ու շրջանակը, որը բարձր վարչական մարմինները կարող են իրականացնել Խարտիայի պահանջներին համապատասխան» (A contemporary commentary by the Congress on the explanatory report to the European Charter of Local Self-Government, Report CG-FORUM (2020) 02-05 final, 7 December 2020, <https://rm.coe.int/contemporary-commentary-by-the-congress-on-the-explanatory-report-to-t/1680a06149>):

ղություններ իրականացնելու համար նախնական թույլտվություն ստանալու պահանջը, որոշումների ուժի մեջ մտնելու համար դրանց հաստատման անհրաժեշտությունը, տեղական ինքնակառավարման մարմնի որոշումները չեղարկելու լիազորությունը, հաշվապահական (ֆինանսական) վերահսկողությունը և այլն:

(...)

130. Տեղական իշխանությունների գործունեության նկատմամբ վերահսկողության վերաբերյալ անդամ պետություններին ուղղված իր հիմնարար 2019 թվականի հանձնարարականում (Recommendation CM/Rec(2019)3 of the Committee of Ministers to member States on supervision of local authorities' activities (adopted by the Committee of Ministers on 4 April 2019 at the 1343rd meeting of the Ministers' Deputies)) Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեն ընդգծել է վերահսկողության ոլորտում կիրառելի մի շարք առանցքային սկզբունքներ և ուղեցույցներ: Նախ՝ Նախարարների կոմիտեն հայտարարել է, որ լավ ժողովրդավարական կառավարման (Good Democratic Governance) 12 սկզբունքները կիրառելի են նաև վերահսկողության նկատմամբ: Այդ սկզբունքները ներառում են հրապարակայնությունն ու թափանցիկությունը, իրավունքի գերակայությունը, ինչպես նաև իրավասությունների ու կարողությունների զարգացումը: Նախարարների կոմիտեն նաև տարբերակել է վերահսկողության երեք տեսակ՝ վարչական, ֆինանսական և ժողովրդավարական, որոնցից միայն առաջինն է ընդգրկվում Խարտիայի 8-րդ հոդվածի կիրառության շրջանակում: Վարչական վերահսկողության գոյությունը հիմնավորվում է «իրավունքի գերակայության սկզբունքին և տարբեր հանրային մարմինների հստակ սահմանված գործառնություններին համապատասխանությունն ապահովելու, ինչպես նաև քաղաքացիների իրավունքների պաշտպանության և հանրային սեփականության արդյունավետ կառավարման անհրաժեշտությամբ»: Վերջապես, վարչական վերահսկողությունը պետք է կարգավորվի մի շարք սկզբունքներով և ուղեցույցներով, որոնք ներառում են.

i. վերահսկողության ենթակա գործունեությունը պետք է հստակ սահմանված լինի օրենքով.

ii. պարտադիր ինքնաշխատ (compulsory automatic) վարչական վերահսկողությունը պետք է սահմանափակվի որոշակի նշանակության գործունեությամբ.

iii. վարչական վերահսկողությունը, որպես կանոն, պետք է իրականացվի լիազորությունների իրականացումից հետո (a posteriori).

iv. նախնական (a priori) վարչական վերահսկողությունը պետք է նվազագույնի հասցվի և, որպես կանոն, վերապահվի պատվիրակված լիազորություններին.

v. օրենքով պետք է սահմանվի այն ժամկետը կամ ժամանակահատվածը, որի ընթացքում վերահսկող մարմինը պետք է իրականացնի վերահսկողությունը. Նախնական վերահսկողության դեպքում վերահսկող մարմնի կողմից սահմանված ժամկետում որոշում չկայացնելը պետք է նշանակի, որ նախատեսված գործունեությունը կարող է ուժի մեջ մտնել»:

47. Վերոնշյալի համատեքստում՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ *գործող օրենսդրությամբ «հսկողություն» և «վերահսկողություն» եզրույթները հստակ սահմանված և տարբերակված չեն, որպիսի պայմաններում առկա է համապատասխան իրավակարգավորումների՝ սահմանադրական արժեքանությունից շեղվող կիրառման հնարավորություն. հետևաբար՝ համապատասխան օրենսդրական կարգավորումները*

պետք է լինեն այնպիսին, որ բացառվի իրավակիրառ պրակտիկայում դրանց հակասահմանադրական հունով զարգանալու հնարավորությունը:

48. «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 95-րդ հոդվածի 3 և 4-րդ մասերին համապատասխան՝ **իրավական հսկողությունը սահմանափակվում է բացառապես տեղական ինքնակառավարման մարմինների սեփական լիազորությունների իրականացման ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունված որոշումների օրինականությունը ստուգելով, իսկ մասնագիտական հսկողությունն իրականացվում է պետության պարզիրական լիազորությունների իրականացման արդյունավետությունն ու միասնականությունը ստուգելու նպատակով:**

49. **Իրավական հսկողությունն** օրինականության պահպանման ինստիտուցիոնալ երաշխիք է: Այն ոչ թե միջամտություն է տեղական ինքնակառավարման քաղաքական կամ հայեցողական շերտին, այլ իրավակարգի պահպանումն ապահովող նորմատիվ գործիք, որի միջոցով պետությունն ապահովում է, որ տեղական ինքնակառավարման մարմինների ինքնուրույնությունը չվերաժվի իրավական ինքնաբավության կամ նորմատիվ ինքնակամության: Այդ առումով, իրավական հսկողությունը հանդես է գալիս որպես իրավունքի գերակայության սկզբունքի օբյեկտիվ արտահայտություն, որը սահմանափակում է տեղական ինքնակառավարման մարմինների կամքը բացառապես իրավունքի շրջանակներով: Իրավական հսկողության՝ միայն ընդունված որոշումների օրինականության ստուգմամբ սահմանափակման հանգամանքն ունի հիմնարար սահմանադրաիրավական նշանակություն. այն սահմանագծում է իրավական հսկողության և վարչաքաղաքական ղեկավարման միջև անանցանելի սահմանը, որը ծառայում է տեղական ինքնակառավարման ինքնուրույնության իրական (բովանդակային) երաշխավորմանը՝ բացառելով հսկողության վերածումը նպատակահարմարության, արդյունավետության կամ քաղաքական նպատակների գնահատման գործիքի:

Օրենսդրական «**սահմանափակվում է բացառապես**» **ձևակերպումն** իր բնույթով արտահայտում է տեղական ինքնակառավարման մարմինների ինքնավարության իրավունքի երաշխավորման անհրաժեշտության սահմանադրաիրավական հրամայականը, որով հստակորեն նշագծվում են պետական իշխանության հսկողության թույլատրելի սահմանները՝ բացառելով տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության նկատմամբ որևէ այլ՝ օրինականության ստուգումից դուրս միջամտություն:

Իրավական հսկողությունն այդ համատեքստում գործում է որպես **օրինականության պահպանման երաշխիք**, այլ ոչ թե որպես վարչական ենթակայություն կամ ուղղակի վերահսկողություն՝ ապահովելով պետական և տեղական իշխանությունների միջև իրավաչափ և հավասարակշռված փոխհարաբերություն²:

² Խարտիայի բացատրական զեկույցի վերաբերյալ Եվրոպայի խորհրդի Տեղական և տարածաշրջանային իշխանությունների կոնգրեսի Ժամանակակից մեկնաբանությունը Խարտիայի 8-րդ հոդվածի 2-րդ մասի առնչությամբ. «133. Օրինականության նկատմամբ ստուգումները կարող են ունենալ տարբեր ինստիտուցիոնալ և ընթացակարգային ձևեր: Որոշ երկրներում բարձր վարչական մարմինը կարող է միջնորդություն կամ պահանջ ուղղել տեղական ինքնակառավարման մարմին՝ խնդրելով փոփոխել կամ չեղարկել վիճարկվող որոշումը: Եթե այս խնդրանքը անտեսվում է, բարձր վարչական մարմինը կարող է դատական բողոք ներկայացնել տեղական ինքնակառավարման մարմնի դեմ, ինչը նշանակում է, որ օրինականության ստուգման նպատակահարմարությունը, ի վերջո, անկախության պայմաններում պետք է որոշվի դատարանի կողմից: Որոշ երկրներում վերահսկող մարմինն օժտված է նաև ապահովիչ միջոցներ կիրառելու լիազորությամբ՝ դատարանում գործի

50. Մասնագիտական հսկողությունը պայմանավորված է ոչ թե տեղական ինքնակառավարման սուբյեկտայնությամբ, այլ պետական գործառույթի իրականացմամբ: Պետության կողմից պատվիրակված լիազորությունների իրականացման պարագայում տեղական ինքնակառավարման մարմինները հանդես են գալիս որպես հանրային իշխանության միասնական կառուցակարգի բաղադրիչ տարրեր՝ իրականացնելով ոչ թե համայնքի ինքնուրույն կամարտահայտությունը, այլ պետության կողմից սահմանված հանրային քաղաքականությունը: Այդ համատեքստում մասնագիտական հսկողությունը հանդես է գալիս որպես պետության կենտրոնական ապարատի պատասխանատվության շարունակություն, որի նպատակն է ապահովել պետական գործառույթների մասնագիտական պատշաճությունը, արդյունավետությունը և տարածքային միասնական կիրառումը:

Հետևաբար՝ մասնագիտական հսկողության սահմանադրաիրավական էությունն արտահայտվում է ոչ թե ենթակայության հաստատմամբ, այլ գործառույթային վերագրումով:

Սահմանադիրը մասնագիտական հսկողություն է սահմանել միայն տեղական ինքնակառավարման մարմինների՝ պետության պատվիրակված լիազորությունների իրականացման նկատմամբ, որի բովանդակության երկու բաղադրատարրերն են *արդյունավետությունը և միասնականությունը*:

Արդյունավետության ստուգումը նշանակում է, որ պետության պատվիրակված լիազորությունները պետք է իրականացվեն այնպես, որ՝

- *հասնեն նախատեսված նպատակին (արդյունքին),*
- *ռեսուրսներն օգտագործվեն խնայողաբար և ռացիոնալ,*
- *ապահովեն պարզաճ որակ և մարչելիություն (առանց ձգձգումների, սխալների կամ չարաշահումների):*

Այսպիսով, *արդյունավետության հսկողությունը բովանդակային է՝ ուղղված իրական արդյունքը գնահատելուն:*

Միասնականության ստուգումը նշանակում է, որ պետության պատվիրակված լիազորությունների իրականացումը պետք է համապատասխանի՝

- *պետական քաղաքականության ընդհանուր ուղղություններին,*
- *նույն ոլորտում գործող միասնական չափանիշներին, կանոններին և մեթոդաբանությանը (այսինքն՝ նույն բնույթի պետական լիազորությունն իրականացվի նույն սկզբունքներով, մեթոդներով և մակարդակով):*

Այսպիսով, *միասնականության հսկողությունը մեթոդաբանական է՝ ուղղված համակարգային առումով համաչափության ապահովմանը:*

Վերոգրյալից կարելի է եզրահանգել, որ մասնագիտական հսկողությունը նշված համատեքստում գործում է որպես *պետական քաղաքականության միասնականության և արդյունավետ վարչարարության ապահովման երաշխիք՝* ուղղված պետության կողմից

քննության ընթացքում կասեցնելու տեղական ինքնակառավարման մարմնի որոշման գործողությունը, թեև նման լիազորությունը, որպես կանոն, սահմանափակվում է օրենքի էական խախտումների դեպքերով կամ ազգային կամ գերակա հանրային շահ ներկայացնող հարցերով:

Ամեն դեպքում, այնպիսի կառուցակարգի առկայությունը, որով ազգային կամ տարածաշրջանային մարմինները կարող են (իրենց նախաձեռնությամբ կամ վարչական բողոքարկման կարգով) վերացնել կամ ուժը կորցրած ճանաչել տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունված որոշումները, անհամատեղելի է 8-րդ հոդվածի պահանջների հետ»:

պատվիրակված լիազորությունների կատարման արդյունքների և սահմանված նպատակների համապատասխանության և ոլորտային քաղաքականության ընդհանուր սկզբունքների ու չափանիշների ապահովման ստուգմանը:

51. Տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության նկատմամբ հսկողություն իրականացնող մարմինների իրավասությունները սահմանված են «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 98-րդ հոդվածով:

Նշված օրենքի 99-րդ հոդվածով սահմանված են *իրավական և մասնագիտական հսկողության իրականացման ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինների իրավական երաշխիքները*: Մասնավորապես՝ տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների իրականացման նկատմամբ հսկողություն իրականացնող մարմինների կատարած գործողությունները կամ ցուցաբերած անգործությունը, ինչպես նաև ընդունած իրավական ակտերը տեղական ինքնակառավարման մարմինների կողմից կարող են բողոքարկվել դատարան: Դրանով իսկ ապահովվում է սահմանադրական հավասարակշռությունը հսկողության և տեղական ինքնակառավարման ինքնավարության միջև:

52. Վերոնշյալի համադրությամբ կարելի է եզրահանգել, որ իրավական և մասնագիտական հսկողության երկբևեռ մոդելը ձևավորում է սահմանադրական համակեցության այնպիսի ճարտարապետություն, որի պայմաններում տեղական ինքնակառավարման ինքնուրույնությունը և պետական իշխանության ամբողջականությունը ոչ թե հակադրվում, այլ փոխլրացնում են միմյանց: Իրավական հսկողությունը հանդես է գալիս որպես «ինքնուրույնության սահմանադրական պահապան», իսկ մասնագիտական հսկողությունը՝ որպես «պատվիրակված լիազորությունների արդյունավետության մասով պետական իշխանության պատասխանատվություն»: Նման կառուցակարգը տեղական ինքնակառավարման իրական ինքնավարության անհրաժեշտ նախապայման է:

53. Նկատի առնելով սույն գործով սահմանադրական վեճի քննության շրջանակը՝ Սահմանադրական դատարանը փաստում է, որ տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների նկատմամբ իրականացվող իրավական և մասնագիտական հսկողությունը կարող է սահմանադրաչափ գնահատվել Սահմանադրի կողմից նախանշված սահմանադրաիրավական պայմանների առկայության դեպքում, որոնց շարքում առանձնանում է համապատասխան **հսկողություն իրականացնող սուբյեկտը**, որին այդ առաքելությունը վերապահել է Սահմանադիրը: Սահմանադրության 4-րդ հոդվածով ամրագրված իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքին համապատասխան՝ Սահմանադրության 188-րդ հոդվածի ուժով իրավական և մասնագիտական հսկողություն իրականացնելու սահմանադրական առաքելությունը վերապահվել է **բացառապես Կառավարության լիազոր մարմին (մարմիններին)**, ինչը, մի կողմից՝ ապահովում է վերահսկողության օրգանական միասնությունը, մյուս կողմից՝ երաշխավորում պետական քաղաքականության ամբողջական իրականացումը՝ կենտրոնացնելով իրավական և քաղաքական պատասխանատվությունը Կառավարության շրջանակներում՝ որպես պետության ներքին քաղաքականություն իրականացնող սուբյեկտի:

Այդ համատեքստում, վիճարկվող դրույթների սահմանադրականության գնահատումն անհրաժեշտաբար պայմանավորում է Սահմանադրության 188-րդ հոդվածի իմաստով՝ «Կառավարության լիազոր մարմին» ձևակերպման ներքո Ծառայությանը դիտարկելու հարցադրումը:

Սահմանադրության 146-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *Կառավարությունը գործադիր իշխանության բարձրագույն մարմինն է*:

Սահմանադրության 147-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *Կառավարությունը կազմված է վարչապետից, փոխվարչապետներից և նախարարներից*:

Սահմանադրության 159-րդ հոդվածի համաձայն՝ *պետական կառավարման համակարգի մարմիններն են նախարարությունները, ինչպես նաև Կառավարությանը, վարչապետին և նախարարություններին ենթակա այլ մարմիններ, որոնց կազմավորման կարգը և լիազորությունները սահմանվում են օրենքով*:

54. «Պետական կառավարման համակարգի մարմինների մասին» օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչապետին ենթակա մարմինները գործում են ազգային անվտանգության, պետական վերահսկողության, պետական պահպանության և արտաքին հետախուզության ոլորտներում: Հիշյալ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասում սպառնիչ թվարկված են **վարչապետին ենթակա մարմինները**՝ Ազգային անվտանգության ծառայությունը, **Պետական վերահսկողական ծառայությունը**, Արտաքին հետախուզության ծառայությունը և Պետական պահպանության ծառայությունը:

55. Օրենքի 3-րդ հոդվածին համապատասխան՝ *Ծառայությունը «Պետական կառավարման համակարգի մարմինների մասին» օրենքով սահմանված վարչապետին ենթակա մարմին է, որն իրականացնում է վարչապետի վերահսկողական լիազորությունները Օրենքով իրեն վերապահված լիազորությունների իրականացման միջոցով*: Ծառայության կողմից վարչապետի վերահսկողական լիազորություններն իրացվում են Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 1-12-րդ կետերով Ծառայությանը վերապահված լիազորությունների իրականացմամբ:

56. Օրենքի իմաստով՝ *պետական վերահսկողությունը* վարչապետի վերահսկողական լիազորությունների իրականացման ապահովմանն ուղղված նույն օրենքով սահմանված գործունեությունն է, *վերահսկողությունը*՝ Ծառայության կողմից ուսումնասիրությունների (այդ թվում՝ հանդիպակաց), մշտադիտարկումների իրականացումը, *ուսումնասիրությունը*՝ վարչապետի հանձնարարությամբ կամ վարչապետի հետ համաձայնեցված՝ Ծառայության ղեկավարի տված հանձնարարագրի հիման վրա Ծառայությունում կամ վերահսկվող օբյեկտում հիշյալ օրենքով Ծառայությանը վերապահված իրավասությունների իրականացման ամբողջությունը, *հանդիպակաց ուսումնասիրությունը*՝ ուսումնասիրության շրջանակներում Ծառայությանն անհրաժեշտ տեղեկություններ ստանալու նպատակով հիշյալ օրենքով սահմանված կարգով իրականացվող վերահսկողությունը, իսկ *մշտադիտարկումը*՝ Ծառայությանը հասանելի կամ Ծառայությունում՝ նշված օրենքով սահմանված կարգով ստացված տեղեկությունների հիման վրա ուսումնասիրություն (այդ թվում՝ հանդիպակաց) սկսելու հիմքերի առկայությունը կամ բացակայությունը ստուգելու նպատակով Ծառայության ղեկավարի հրամանով սահմանված առանձին հարցերի պարզաբանման համար Ծառայությունում Օրենքով Ծառայությանը վերապահված իրավասությունների իրականացման ամբողջությունը (Օրենքի՝ «Օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները» վերտառությամբ 2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 2, 9-11-րդ կետեր):

57. «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի՝ **«Իրավական և մասնագիտական հսկողության մարմինները»** վերտառությամբ 96-րդ հոդվածի համաձայն՝ «1. Տեղական ինքնակառավարման մարմինների սեփական լիազորությունների իրականացման նկատմամբ իրավական հսկողությունը Հայաստանի Հանրապետության կառա-

վարության լիազոր մարմինը կարող է իրականացնել անմիջականորեն կամ մարզպետների միջոցով՝ իր հաստատած հարցաշարերի հիման վրա:

2. Պետության պատվիրակած լիազորությունների իրականացման նկատմամբ իրավական և մասնագիտական հսկողությունն իրականացնում են Հայաստանի Հանրապետության կառավարության այն լիազոր մարմինները, որոնց իրավասության մեջ են մտնում այդ լիազորությունները՝ անմիջականորեն կամ մարզպետների միջոցով՝ համաձայնեցնելով սույն օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր մարմնի հետ: Հայաստանի Հանրապետության կառավարության համապատասխան լիազոր մարմինները պետության պատվիրակած լիազորությունների իրականացման նկատմամբ իրավական և մասնագիտական հսկողությունն իրականացնում են իրենց հաստատած հարցաշարերի հիման վրա, որոնք նախապես համաձայնեցվում են իրավական հսկողություն իրականացնող՝ Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր մարմնի հետ:

2.1. Սույն օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 27.1-ին կետով և 59-րդ հոդվածի 2-րդ մասի 5.1-ին կետով սահմանված լիազորության նկատմամբ մասնագիտական հսկողություն է իրականացնում տարածքային կառավարման բնագավառի պետական լիազոր մարմինը:

3. Իրավական և մասնագիտական հսկողությունն իրականացվում է սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր մարմնի հաստատած ամենամյա աշխատանքային ծրագրին համապատասխան: Սույն մասով նախատեսված աշխատանքային ծրագրում չընդգրկված դեպքերում իրավական և մասնագիտական հսկողություն կարող է իրականացվել միայն սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր մարմնի գրավոր համաձայնությամբ»:

58. Սահմանադրական դատարանի՝ 2017 թվականի նոյեմբերի 10-ի ՍԴՈ-1384 որոշմամբ արձանագրված է. «(...) ՀՀ Սահմանադրության (2015թ. փոփոխություններով) 5-րդ հոդվածը, սահմանելով իրավական նորմերի աստիճանակարգությունը, հստակ ամրագրել է, որ ՀՀ Սահմանադրությունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ: Հետևաբար, օրենքներ ընդունելիս օրենսդիր մարմնի հայեցողությունը բացարձակ չէ, այն սահմանափակված է ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված հիմնարար սկզբունքներով, իրավակարգավորումների ընդհանուր տրամաբանությամբ և կոնկրետ նորմատիվ պահանջներով: ՀՀ Սահմանադրության անփոփոխելի 1-ին հոդվածում ամրագրված իրավական պետության միջուկն օրինականության սկզբունքն է (ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդված), որը որպես ամբողջ հանրային իշխանության իրականացման հիմք սահմանում է ՀՀ Սահմանադրությունը կամ օրենքը: ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածն օրինականության սկզբունքն ընդգրկում է լայն առումով՝ դրանում ներառելով ոչ միայն Ազգային ժողովի կողմից կամ հանրաքվեի միջոցով ընդունվող օրենքը, այլ նաև իրավական նորմերի աստիճանակարգության մեջ բարձրագույն տեղն զբաղեցնող ՀՀ Սահմանադրությունը (5-րդ հոդվածի 1-ին մաս): Նման ամրագրման միջոցով ՀՀ Սահմանադրությունը հանրային իշխանության բոլոր մարմիններին, ներառյալ օրենսդիր իշխանությանը, կաշկանդում է Սահմանադրությամբ (Սահմանադրության գերակայությամբ): ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի 1-ին մասից բխում է, որ օրենքն իրավական է այնքանով, որքանով որ այն համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը: Իսկ որոշակիության սկզբունքը պահանջում է, որ օրենսդիրը, մասնավորապես,

կանխորոշի հանրային իշխանության գործունեությունն այնպիսի ծավալով, որ օրինականության տեսանկյունից հասանելի և գնահատելի լինեն իշխանության մարմինների սահմանադրաիրավական կարգավիճակին համարժեք գործողությունների էական նախադրյալներն ու բովանդակությունը» (7-րդ կետ):

59. Վերոնշյալի համատեքստում, փաստելով, որ Օրենքի վիճարկվող դրույթները գործող խմբագրությամբ շարադրվել են ««Պետական վերահսկողական ծառայության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» 2025 թվականի մայիսի 29-ի ՀՕ-187-Ն օրենքով, իսկ «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի վիճարկվող դրույթը լրացվել է 2025 թվականի մայիսի 29-ի ՀՕ-194-Ն օրենքով, Սահմանադրական դատարանն արձանագրում է.

Հայաստանի Հանրապետությունում պետական վերահսկողության համակարգը կառուցված է աստիճանակարգության սկզբունքով, որպիսի պայմաններում *հստակ տարանջատված են Կառավարությանը և վարչապետին ենթակա մարմինների իրավասությունները*: Նշված համակարգում **Ծառայությունը, լինելով վարչապետին ենթակա մարմին, իրականացնում է վարչապետի վերահսկողական լիազորությունները, որոնք բխում են վարչապետի սահմանադրական կարգավիճակից**, հետևաբար՝ վերջինիս վերապահված լիազորությունները չեն կարող նույնացվել **Կառավարության լիազոր մարմնի** հսկողական լիազորությունների հետ³:

Այլ կերպ՝ Ծառայությունը չի կարող հանդես գալ որպես Կառավարության լիազոր մարմին, որը Սահմանադրությամբ իրավասու է իրականացնելու տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների իրականացման նկատմամբ համապատասխան հսկողություն, քանզի Սահմանադրության 188-րդ հոդվածին համապատասխան՝ **համայնքի սեփական խնդիրների իրականացման նկատմամբ օրենքով սահմանված դեպքերում և կարգով իրավական հսկողությունն իրականացնում է Կառավարության լիազոր մարմինը, իսկ պետության կողմից պարզվիրակված լիազորությունների իրականացման նկատմամբ իրավական և մասնագիտական հսկողությունը՝ օրենքով սահմանված դեպքերում և կարգով՝ Կառավարության լիազոր մարմինները**:

60. Այդ համատեքստում, Սահմանադրական դատարանի գնահատմամբ *վարչապետին ենթակա մարմնի՝ Ծառայության կողմից տեղական ինքնակառավարման մարմիններում տրամադրված սուբսիդիաների, սուբվենցիաների կամ դոտացիաների կառավարման օրինականության, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմիններում կամ համայնքային հիմնարկներում գնումների գործընթացը կանոնակարգող օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու վերաբերյալ Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի և 8-րդ կետերի վիճարկվող օրինադրույթները բովանդակային առումով համահունչ չեն Սահմանադրության 188-րդ հոդվածին՝ նախատեսելով տեղական ինքնակառավարման մարմինների ինքնուրույն գործունեությանն ուղղակի միջամտություն՝ դրանով իսկ ձևախեղելով համայնքային ինքնավարության սահմանադրական սկզբունքը և խարխլելով պետական ու տեղական իշխանությունների միջև լիազորությունների տարանջատման հիմքերը*:

³ Պետական վերահսկողական ծառայության կողմից իրականացվող ուսումնասիրության և մշտադիտարկման իրականացման ընթացակարգերը սահմանված են վարչապետի՝ 2025 թվականի նոյեմբերի 27-ի թիվ 1095-Լ որոշմամբ՝ համաձայն Օրենքի 6-րդ հոդվածի 7-րդ մասի:

61. Նշված միջամտությունը չի բխում նաև Խարտիայի 8-րդ հոդվածի դրույթներից, մասնավորապես 1-ին մասից, որի համաձայն՝ *տեղական ինքնակառավարման մարմինների ցանկացած վարչական վերահսկողություն կարող է իրականացվել միայն Սահմանադրությամբ կամ օրենքով նախատեսված ընթացակարգերով և դեպքերում:*

Վերոնշյալ դրույթի առնչությամբ Խարտիայի բացատրական զեկույցի վերաբերյալ Եվրոպայի խորհրդի Տեղական և տարածաշրջանային իշխանությունների կոնգրեսի Ժամանակակից մեկնաբանության համաձայն՝ «128. Խարտիան տեղական ինքնակառավարման մարմինների նկատմամբ միջկառավարական վերահսկողության ոլորտում ամրագրում է կարևորագույն սկզբունք. վերահսկողության ցանկացած ձև պետք է նախատեսված լինի Սահմանադրությամբ կամ օրենքով, այսինքն՝ Խարտիան տեղական ինքնակառավարման մարմինների նկատմամբ վերահսկողության ոլորտում ներմուծում է օրինականության սկզբունքը: Այս հույժ կարևոր սկզբունքն ունի մի շարք իրավական հետևանքներ: Նախ՝ վերահսկողության բոլոր ձևերը պարտադիր պետք է ունենան իրավական հիմք, ինչը նշանակում է, որ ad hoc բնույթի (չկարգավորված վերահսկողության) ընթացակարգերն արգելվում են: Վերահսկողությունը չի կարող իրականացվել կամ սահմանվել վերադաս մակարդակի կողմից, առանց հստակ իրավական հիմքի: Սրանով պայմանավորված՝ որպես ածանցյալ հետևանք, պետական իշխանության վերադաս մակարդակները չեն կարող ունենալ տեղական ինքնակառավարման մարմինների նկատմամբ ընդհանուր կամ ներհատուկ վերահսկողության լիազորություն և իրավունք ունեն կիրառելու միայն այն վերահսկողական մեթոդները, որոնք խստիվ սահմանված են օրենքով»:

62. Հետևաբար՝ *վարչապետին ենթակա մարմնի՝ Ծառայության կողմից տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների իրականացման նկատմամբ համապատասխան իրավական և մասնագիտական հսկողության իրականացումը դուրս է ինչպես սահմանադրական կարգավորումների տրամաբանությունից, այնպես էլ միջազգային իրավական վերաբերելի չափանիշների շրջանակներից:*

63. Վերոնշյալի համատեքստում գնահատելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 95-րդ հոդվածի 6-րդ մասի վիճարկվող դրույթի սահմանադրականությունը՝ Սահմանադրական դատարանը փաստում է, որ վիճարկվող դրույթով սահմանված՝ *տեղական ինքնակառավարման մարմիններում կամ համայնքային հիմնարկներում գնումների գործընթացը կանոնակարգող օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ վերահսկողությունն իր բնույթով իրավական հսկողություն է, ընդ որում՝ բացառապես գնումների գործընթացում համապատասխան ոլորտը կանոնակարգող օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ:* Նշված մոտեցումը բխում է իրավական հսկողության սահմանադրաիրավական էությունից, որը միտված է ապահովելու օրենքի գերակայությունն ու հանրային միջոցների օգտագործման օրինականությունը՝ միաժամանակ հարգելով և պահպանելով համայնքային ինքնավարության սահմանադրական երաշխիքները և կանխելով գործադիր իշխանության անհամաչափ միջամտությունը տեղական ինքնակառավարման համակարգին (համայնքային ինքնուրույն որոշումների կայացման գործընթացին):

64. Այդ համատեքստում՝ *գնումների գործընթացը կանոնակարգող օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ վերահսկողությունը պետք է դիտարկվի ոչ թե որպես տեղական ինքնակառավարման ինքնուրույնության սահմանափակում, այլ որպես հանրային իշխանության միասնականության և հաշվեպնդականության սկզբունքի*

դրսևորում, քանզի պետական վերահսկողությունը՝ ի տարբերություն ենթակայության կամ վարչական աստիճանակարգության, չի ենթադրում ուղղակի միջամտություն համայնքային որոշումների կայացման ինքնուրույն գործընթացին, այլ ուղղված է դրանց օրինականությունն ապահովելուն, հանրային միջոցների նպատակային, օրինական օգտագործումը վերահսկելուն և պետության համընդհանուր շահերը պաշտպանելուն: Սահմանադրականության առումով, նշված հսկողությունը պետք է իրականացվի համաչափության, համայնքային ինքնավարության, ինչպես նաև հանրային շահի առաջնայնության սկզբունքներին համահունչ: Հսկողական միջամտությունը կարող է համարվել իրավաչափ միայն այն դեպքում, երբ այն ուղղված է իրավակարգի վերականգնմանը կամ հանրային միջոցների անբարեխիղճ օգտագործումը կանխարգելելուն, և երբ այն չի հանգեցնում տեղական ինքնակառավարման գործառույթների՝ բովանդակային առումով յուրացման:

65. Գործադիր իշխանության վերահսկողական լիազորությունները տեղական ինքնակառավարման ոլորտում ունեն սահմանադրական վերաբերելի կարգավորումներին համահունչ սահմանափակ բնույթ՝ ապահովելով հանրային իշխանության միասնականությունը՝ առանց խաթարելու տեղական ինքնակառավարման ինստիտուտի ինքնուրույնության և պատասխանատվության հիմքերը: Հետևաբար՝ օրենսդրի կողմից տեղական ինքնակառավարման մարմիններում կամ համայնքային հիմնարկներում գնումների գործընթացը կանոնակարգող օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ վերահսկողության սահմանումը, ինքնին, սահմանադրականության առումով խնդրահարույց չէր լինի՝ Կառավարության լիազոր մարմնի կողմից դրա իրականացման դեպքում, և չէր ձևախեղի տեղական ինքնակառավարման մարմինների ինքնավարության սկզբունքը՝ երաշխավորելով նաև համայնքի՝ որպես հանրային իրավունքի իրավաբանական անձի՝ Սահմանադրության 60-րդ հոդվածի 1-ին մասով ամրագրված սեփականության իրավունքը:

66. Նկատի առնելով, որ «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 95-րդ հոդվածի 6-րդ մասին համապատասխան՝ տեղական ինքնակառավարման մարմիններում կամ համայնքային հիմնարկներում գնումների գործընթացը կանոնակարգող օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ վերահսկողությունն իրականացվում է Օրենքով սահմանված կարգով, ուստի՝ վերահսկող սուբյեկտի առումով այդ վերահսկողության իրականացման լիազորությունը վերապահված է վարչապետին ենթակա մարմնին՝ Ծառայությանը, Սահմանադրական դատարանը վերոնշյալի համապետրոսում գտնում է, որ «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի վիճարկվող դրույթը համահունչ չէ Սահմանադրության 188-րդ հոդվածին՝ Սահմանադրության 74-րդ հոդվածի ուժով հանգեցնելով համայնքի՝ որպես Սահմանադրության 180-րդ հոդվածի 2-րդ մասին համապատասխան՝ հանրային իրավունքի իրավաբանական անձի՝ Սահմանադրության 60-րդ հոդվածի 1-ին մասով ամրագրված սեփականության իրավունքի սահմանափակման:

67. Սահմանադրության՝ «Համայնքի բյուջեն, տեղական հարկերը, տուրքերը և վճարները» վերտառությամբ 185-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ համայնքի բյուջեի եկամուտների ձևավորման և ծախսերի իրականացման կարգը սահմանվում է օրենքով:

«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 86-րդ հոդվածով սահմանված են համայնքի բյուջեի ձևավորման աղբյուրները, ներառյալ՝ պաշտոնական դրամաշնորհների ձևով ստացվող հատկացումները, այդ թվում՝ պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաները, պետական բյուջեից

տրամադրվող այլ դատացիաները և ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումները (սուբվենցիաներ), այլ աղբյուրներից ստացվող պաշտոնական դրամաշնորհները:

68. Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետին համապատասխան՝ Օրենքով սահմանված նպատակով Ծառայությունը նույն օրենքով սահմանված կարգով՝ տեղական ինքնակառավարման մարմիններում իրականացնում է վերահսկողություն՝

ա. պետության կողմից տրամադրված սուբսիդիաների, սուբվենցիաների կամ դոտացիաների կառավարման օրինականության գնահատման նպատակով,

բ. պետության կողմից սուբսիդիաների, սուբվենցիաների կամ դոտացիաների տրամադրման համար հիմք հանդիսացող տեղեկատվության արժանահավատության գնահատման նպատակով:

69. Սուբսիդիաները պետական բյուջեից անհատույց և անվերադարձ կարգով համապատասխան սուբյեկտներին տրամադրվող/հատկացվող դրամական միջոցներն են նրանց գործունեության արդյունքում առաջացած վնասները փոխհատուցելու կամ համապատասխան գործունեությունը խթանելու նպատակով: Սուբսիդիան, որպես կանոն, ուղղված է ապրանքի կամ ծառայության ինքնարժեքի (կամ շուկայական գնի) և փաստացի կիրառվող գնի միջև առաջացած տարբերությունը ծածկելուն:

Սուբսիդիան ոչ թե համայնքի ինքնավարության ընդլայնման միջոց է, այլ պետության կողմից հանրային շահի ապահովման իրավական-ֆինանսական գործիք, որը կիրառվում է տեղական մակարդակում իրականացվող հանրային ծառայությունների կայունությունն ու մատչելիությունը երաշխավորելու համար:

«Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 20-րդ հոդվածի 4-րդ մասի «բ» կետով սահմանված է, որ պետական բյուջեի ծախսերում կարող են նաև նախատեսվել համայնքների բյուջեներին հատկացվող **սուբվենցիաներ**՝ համայնքի կողմից իրականացվող առանձին նպատակային ծախսատեսակի (ծրագրի) կատարման համար անհատույց և անվերադարձ կարգով տրվող դրամական միջոցներ: Կառավարությունն իրավասու է հետ պահանջել համայնքից պետական բյուջեից համայնքին հատկացված սուբվենցիաների ոչ նպատակային ծախսված գումարները: Սուբվենցիաների տրամադրումն իրականացվում է Կառավարության կողմից սահմանված կարգով:

Սահմանադրության՝ «**Համայնքի ֆինանսավորումը**» վերտառությամբ 186-րդ հոդվածի 2-րդ մասին համապատասխան՝ համայնքներին պետության կողմից պատվիրակված լիազորությունները ենթակա են պետական բյուջեից պարտադիր ֆինանսավորման:

«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 10-րդ հոդվածի 8-րդ մասին համապատասխան՝ պետության պատվիրակած լիազորությունները ենթակա են պետական բյուջեից պարտադիր ֆինանսավորման՝ պետության պատվիրակած լիազորությունների ֆինանսավորման նպատակով նախատեսված հատկացումների հաշվին:

«Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 28³-րդ հոդվածով սահմանված է, որ համայնքների բյուջեներից պետության կողմից տեղական ինքնակառավարման մարմիններին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորումը կատարվում է պետական բյուջեից այդ նպատակով տրամադրվող հատկացումների հաշվին: Պատվիրակված լիազորություն-

ները (այդ թվում՝ դրանց իրականացման ծախսերի ֆինանսավորումը) իրականացվում են օրենքով կամ Կառավարության սահմանած կարգով:

70. Համայնքների բյուջեների կատարման վերահսկողության հիմնական խնդիրները սահմանված են «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 34-րդ հոդվածի 3-րդ մասով:

Սահմանադրական դատարանը նկատում է, որ «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի՝ մինչև 29.05.2025 թ. ՀՕ-188-Ն օրենքով կատարված փոփոխությունները գործող խմբագրությամբ **«Համայնքների բյուջեների կատարման վերահսկողությունը»** վերտառությամբ 34-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված էր, որ *համայնքի բյուջեի կատարման վերահսկողությունն իրականացնում են* համայնքի ավագանին, Ազգային ժողովը և **Կառավարությունը**՝ օրենքով իրենց վերապահված լիազորությունների շրջանակներում: Նշված օրենքի 34-րդ հոդվածի 2՝ -ին մասով սահմանված էր, որ **Կառավարությունը** համայնքի բյուջեի կատարման վերահսկողությունն իրականացնում է պետական բյուջեից համայնքին տրված նպատակային հատկացումների (սուբվենցիաների, պետական գույքի մասնավորեցումից սույն օրենքի համաձայն համայնքի բյուջե մասհանված գումարների, պետության կողմից համայնքին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման նպատակով տրված միջոցների) օգտագործման, ինչպես նաև պետական բյուջեից և օրենքով թույլատրված այլ աղբյուրներից ներգրավված փոխառու միջոցների օգտագործման և դրանց մարման ծրագրի նկատմամբ՝ իր կողմից սահմանված կարգով պետական կառավարման լիազորած մարմնի միջոցով:

««Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» 29.05.2025 թ. ՀՕ-188-Ն օրենքի 2-րդ հոդվածով «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի **«կառավարությունը»** բառը փոխարինվել է **«պետական վերահսկողական ծառայությունը»** բառերով, իսկ 2.1-ին մասն ուժը կորցրած է ճանաչվել:

71. Սահմանադրական դատարանը նաև նկատում է, որ «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի՝ մինչև 29.05.2025 թ. ՀՕ-190-Ն օրենքով կատարված փոփոխությունը գործող խմբագրությամբ **«Երևանի բյուջեի կատարման վերահսկողությունը»** վերտառությամբ 81-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված էր, որ *պետությունը* Երևանի բյուջեի կատարման վերահսկողությունն իրականացնում է Հաշվեքննիչ պալատի և **Կառավարության միջոցով**՝ օրենքով իրենց վերապահված լիազորությունների շրջանակում:

««Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» 29.05.2025 թ. ՀՕ-190-Ն օրենքի 1-ին հոդվածով ««Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 81-րդ հոդվածի 3-րդ մասում **«Հայաստանի Հանրապետության կառավարության»** բառերը փոխարինվել են **«պետական վերահսկողական ծառայության»** բառերով»:

72. Սահմանադրական դատարանի գնահատմամբ՝ վերոնշյալ փոփոխություններով օրենսդրի կողմից համայնքի բյուջեի կատարման նկատմամբ վերահսկողություն իրականացնող սուբյեկտների շարքում Կառավարությանը Ծառայությամբ **«փոխարինումը»** առաջ է բերել ինստիտուցիոնալ առումով խնդիր: Մասնավորապես, նշված օրենսդրական կարգավորումը հանգեցնում է գործադիր իշխանության կառուցվածքի և սահմանադրական լիազորությունների առնչությամբ Սահմանադրու-

թյամբ ամրագրված համապատասխան կարգավորումների շրջանցման, քանզի Ծառայությանը՝ որպես վարչապետին ենթակա մարմին, որն ունի վարչապետի վերահսկողական լիազորություններն իրականացնող մարմնի կարգավիճակ, ուղղակիորեն համայնքի բյուջեի կապարման վերահսկողություն իրականացնող սուբյեկտի կարգավիճակ վերագրելը (Կառավարության փոխարեն) շեղում է հանրային իշխանության սահմանադրական կառուցակարգման տրամաբանությունից:

73. Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում «կառավարման օրինականության գնահատում» ձևակերպումն անհրաժեշտ է մեկնաբանել սահմանադրական համատեքստում՝ որպես Սահմանադրությամբ թույլատրելի միջամտություն, որը չի խախտում տեղական ինքնակառավարման մարմինների ինքնուրույնության սկզբունքը: Սահմանադրի համար ընդունելի է այն կարգավորումը, երբ Կառավարության լիազոր մարմնի կողմից իրականացվող վերահսկողությունը սահմանափակվում է բացառապես պետության կողմից տրամադրված սուբսիդիաների և սուբվենցիաների կառավարման, այսինքն՝ դրանց օգտագործման և մարման ծրագրի վերաբերյալ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից կայացված որոշումների օրինականության ստուգմամբ: Այդ վերահսկողությունը ներառում է ինչպես իրավական հսկողության, այնպես էլ մասնագիտական հսկողության տարրեր. առաջինը վերաբերում է որոշումների և գործողությունների համապատասխանությանը օրենսդրական պահանջներին, իսկ երկրորդը՝ այդ միջոցների օգտագործման նպատակահարմարության և արդյունավետության գնահատմանը՝ պետության կողմից պատվիրակված լիազորությունների կատարման արդյունքների և սահմանված նպատակների համապատասխանության, ինչպես նաև ոլորտային քաղաքականության ընդհանուր սկզբունքների և չափանիշների ապահովման տեսանկյունից:

Այսպիսով, **վերահսկողությունը սահմանադրորեն արդարացված է միայն այն չափով, որ չափով այն ուղղված է պետական միջոցների նպատակային և իրավաչափ օգտագործման ապահովմանը՝ առանց տեղական ինքնակառավարման մարմինների ինքնուրույն գործառույթները սահմանափակելու:**

Այդուհանդերձ, **պետության կողմից տրամադրված սուբսիդիաների, սուբվենցիաների կառավարման օրինականության գնահատման նպատակով վերահսկողություն իրականացնելու լիազորությունը Ծառայությանը վերապահելու վերաբերյալ օրենսդրական կարգավորումը հակասում է «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի տրամաբանությանը, վերջնարդյունքում՝ Սահմանադրության 188-րդ հոդվածին՝ Սահմանադրության 74-րդ հոդվածի ուժով հանգեցնելով համայնքի՝ որպես Սահմանադրության 180-րդ հոդվածի 2-րդ մասին համապատասխան՝ հանրային իրավունքի իրավաբանական անձի՝ Սահմանադրության 60-րդ հոդվածի 1-ին մասով ամրագրված սեփականության իրավունքի սահմանափակման:**

74. Սահմանադրության 186-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ **պետությունն իր հնարավորությունների շրջանակներում միջոցներ է հատկացնում համայնքների համաչափ զարգացումն ապահովելու համար:**

«Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ **համայնքների ներդաշնակ զարգացումն ապահովելու նպատակով պետական բյուջեի ծախսերում նախատեսվում են համայնքների բյուջեներին ֆինանսական համահարթեցման սկզբունքով՝ համայնքների ընթացիկ ծախսերի ծածկման համար անհատույց և անվերադարձ կարգով տրվող դրամական միջոցներ՝ ֆինանսական համահարթեցման դոպացիաներ:**

Հիշյալ օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ մասի առաջին նախադասության համաձայն՝ *համայնքներին չի կարող պարտադրվել ֆինանսական համահարթեցման սկզբունքով հատկացված ֆինանսական միջոցների ուղղում կոնկրետ ծախսերի իրականացմանը:*

Նույն օրենքի 20-րդ հոդվածի 4-րդ մասի «ա» կետին համապատասխան՝ *պետական բյուջեի ծախսերում կարող են նաև նախատեսվել համայնքների բյուջեներին հատկացվող այլ դոտացիաներ՝ համայնքի բյուջեի ընթացիկ ծախսերի ֆինանսավորմանն աջակցելու նպատակով որևէ ծախսատեսակի (ծրագրի) իրականացման հետ չկապակցված, անհատույց և անվերադարձ կարգով տրվող դրամական միջոցներ:*

«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 87-րդ հոդվածի 1-ին մասով ամրագրված է, որ համայնքների ներդաշնակ զարգացումն ապահովելու նպատակով *պետական բյուջեից համայնքների բյուջեներին համահարթեցման սկզբունքով հատկացվում են դոտացիաներ:* Համայնքներին չեն կարող պարտադրվել ֆինանսական համահարթեցման սկզբունքով հատկացված ֆինանսական միջոցներն օգտագործել որևէ կոնկրետ ծախս իրականացնելու կամ հաշվանցում կատարելու համար:

75. «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 8-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Բյուջեների ինքնուրույնության սկզբունքը նշանակում է՝

ա) պետական և տեղական ինքնակառավարման մարմինների իրավունքը բյուջետային համակարգի յուրաքանչյուր մակարդակում օրենսդրությանը համապատասխան ինքնուրույն իրականացնել բյուջետային գործընթացը.

բ) բյուջետային համակարգի յուրաքանչյուր մակարդակի բյուջեների մուտքերի՝ օրենսդրությանը համապատասխան որոշվող սեփական աղբյուրների առկայություն.

գ) պետական և տեղական ինքնակառավարման մարմինների իրավունքը՝ օրենսդրությանը համապատասխան ինքնուրույն որոշելու համապատասխան բյուջեների միջոցների ծախսման ուղղությունները.

(...):»:

«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետին համապատասխան՝ տեղական ինքնակառավարումը հիմնվում է համայնքների բյուջեների ինքնուրույնության սկզբունքի վրա, որը տեղական ինքնակառավարման մարմինների օրենքով սահմանված աղբյուրներից համայնքային բյուջե ձևավորելու և սեփական պատասխանատվությամբ այն տնօրինելու հնարավորությունն է:

«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 85-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված է, որ բյուջետային գործընթացի նկատմամբ պետական լիազորված մարմինն իրականացնում է իրավական հսկողություն:

76. «Պետական կառավարման համակարգի մարմինների մասին» օրենքի 2-րդ հոդվածով ամրագրված է, որ Սահմանադրության 159-րդ հոդվածին համապատասխան՝ *պետական կառավարման համակարգի մարմիններն են նախարարությունները, ինչպես նաև Կառավարությանը, վարչապետին և նախարարություններին ենթակա մարմինները:*

Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով տրված է նույն օրենքի իմաստով **«պետական բյուջեի կադարման նկատմամբ հսկողություն» հասկացության սահմանումը**, որից հետևում է, որ *Ծառայությունը պետական բյուջեի կադարման նկատմամբ հսկողություն է իրականացնում՝ պետական բյուջեով նախատեսված բյուջետային ծրագրերի կարգադրիչ, բյուջետային եկամուտների հավաքագրման պատասխանատու հանդիսացող պետական կառավարման համակարգի մարմինների նկատմամբ, որոնց կազմում տրամաբանորեն ներառված չեն տեղական ինքնակառավարման մարմինները կամ համայնքային հիմնարկները:*

77. Վերոնշյալ իրավանորմերի համադրման արդյունքում ակնհայտ է, որ **դոտացիան, ի տարբերություն նպատակային բնույթ ունեցող սուբսիդիայի կամ սուբվենցիայի, չի հանդիսանում պետության կողմից պարվիրակված որևէ լիազորության իրականացման ֆինանսական միջոց, այլ ուղղակիորեն ներառվում է համայնքի բյուջեի ընդհանուր կազմի մեջ՝ որպես ֆինանսական համահարթեցման գործիք՝ համայնքի ներդաշնակ զարգացման և ընթացիկ ծախսերի ֆինանսավորմանն աջակցելու նպատակով:** **Հերևաբար՝ դոտացիան անհատույց և անվերադարձ կարգով համայնքին է տրամադրվում՝ առանց որևէ կոնկրետ ծախսատեսակի կամ ծրագրի իրականացման «պարտադրանքի»:**

78. Համայնքը՝ որպես Սահմանադրության 180-րդ հոդվածի 2-րդ մասին համապատասխան՝ հանրային իրավունքի իրավաբանական անձ, սեփական բյուջեի ձևավորման և կառավարման գործընթացում գործում է սեփական իրավասությունների շրջանակում, և դրա վրա տարածելի է Սահմանադրության 60-րդ հոդվածով երաշխավորված սեփականության իրավունքը: Համայնքի բյուջեի բաղկացուցիչ մաս հանդիսացող դոտացիաների նկատմամբ պետական վերահսկողական լիազորությունների ընդլայնումը սահմանադրական առումով խախտում է ինչպես համայնքի ֆինանսական ինքնավարությունը, այնպես էլ սեփականության իրավունքը: Արդյունքում առաջանում է սահմանադրաիրավական հակասություն՝ տեղական ինքնակառավարման մարմինների՝ Սահմանադրությամբ երաշխավորված ինքնուրույնության, համայնքային սեփականության իրավունքի և պետության վերահսկողական լիազորությունների միջև, որի բացառումը պահանջում է սահմանափակ և համաչափ վերահսկողության կիրառում՝ առանց խախտելու համայնքի ֆինանսական ինքնուրույնության սկզբունքը:

79. Այդ համատեքստում, **դոտացիաների «կառավարման օրինականության գնահատում»** ձևակերպման ներքո պետական վերահսկողական մարմնի միջամտությունը սահմանադրական վերաբերելի կարգավորումների համարեքստում անթույլատրելի է, քանզի հանգեցնում է **տեղական ինքնակառավարման մարմինների ֆինանսական և կազմակերպական ինքնուրույնության սկզբունքի խախտման:** **Դոտացիայի՝ որպես համայնքի սեփական բյուջեի բաղկացուցիչ մասի, Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետին համապատասխան՝ կառավարման օրինականության գնահատման նպատակով տեղական ինքնակառավարման մարմիններում վերահսկողություն իրականացնելու վերաբերյալ կարգավորումը համահունչ չէ ոչ միայն Օրենքի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի տրամաբանությանը՝ ընդհանուր առմամբ, բյուջետային անկախության սկզբունքին, այլև դուրս է Սահմանադրության 9-րդ գլխով ամրագրված տեղական ինքնակառավարման ինքնուրույնության**

սահմանադրական երաշխիքների շրջանակից, հետևաբար՝ հակասում է Սահմանադրության 188-րդ հոդվածին՝ հանգեցնելով Սահմանադրության 74-րդ հոդվածի ուժով համայնքի՝ որպես Սահմանադրության 180-րդ հոդվածի 2-րդ մասին համապատասխան՝ հանրային իրավունքի իրավաբանական անձի՝ Սահմանադրության 60-րդ հոդվածի 1-ին մասով ամրագրված հիմնական իրավունքի սահմանափակման:

Վերոնշյալի համատեքստում, Սահմանադրության 81-րդ հոդվածի 2-րդ մասին համապատասխան՝ հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակումները չեն կարող գերազանցել Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված սահմանափակումները:

80. Սահմանադրական դատարանը նկատում է, որ Սահմանադրության՝ **«Հաշվեքննիչ պալատի գործառույթները և լիազորությունները»** վերտառությամբ 198-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *Հաշվեքննիչ պալատն անկախ պետական մարմին է, որը հանրային ֆինանսների և սեփականության ոլորտում հաշվեքննություն է իրականացնում պետական բյուջեի և համայնքային բյուջեների միջոցների, սրացած փոխառությունների ու վարկերի, պետական և համայնքային սեփականության օգտագործման օրինականության և արդյունավետության նկատմամբ: Հաշվեքննիչ պալատն իրավաբանական անձանց մոտ ստորագումներ կատարելու իրավունք ունի միայն օրենքով սահմանված դեպքերում:*

«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 95-րդ հոդվածի 7-րդ մասով ամրագրված է, որ համայնքային բյուջեների միջոցների, ստացած փոխառությունների ու վարկերի, համայնքի սեփականության օգտագործման օրինականության և արդյունավետության նկատմամբ հաշվեքննություն է իրականացնում Հաշվեքննիչ պալատը՝ **«Հաշվեքննիչ պալատի մասին»** օրենքով սահմանված դեպքերում:

«Հաշվեքննիչ պալատի մասին» օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ Հաշվեքննիչ պալատը հաշվեքննություն է իրականացնում պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու հիմնարկների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության հիմնադրած՝ պետական գործառույթներով օժտված այլ իրավաբանական անձանց նկատմամբ՝ անկախ դրանց գործունեությունն արտահայտող ֆինանսական գործառնությունների՝ պետական և համայնքային բյուջեներում արտացոլված լինելու հանգամանքից կամ եղանակից:

Վերոնշյալից ակնհայտ է, որ *հանրային ֆինանսների և սեփականության օգտագործման ոլորտում Հաշվեքննիչ պալատի կողմից իրականացվող հաշվեքննությունն ընդգրկում է պետական և համայնքային բյուջեների միջոցների, սրացած փոխառությունների ու վարկերի, ինչպես նաև պետական և համայնքային սեփականության արդյունավետության և օրինականության գնահատումը:*

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ **Հաշվեքննիչ պալատին սահմանադրական մակարդակում համայնքային բյուջեների միջոցների նկատմամբ հաշվեքննություն իրականացնելու լիազորությամբ օժտելը միտված է տեղական ինքնակառավարման մարմինների ինքնավարությունը և բյուջեարային անկախությունն ապահովելուն:**

81. Սուբսիդիաների, սուբվենցիաների կամ դոտացիաների տրամադրման համար հիմք հանդիսացող **տեղեկատվության արժանահավատության գնահատման նպատակով** տեղական ինքնակառավարման մարմիններում վերահսկողություն իրականացնելու վերաբերյալ օրենսդրական կարգավորման առնչությամբ Սահմանադրական դատարանն

արձանագրում է, որ Օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ *Ծառայության գործունեության խնդիրը պետական միջոցների և պետական սեփականության օրինական ու արդյունավետ կառավարման, ինչպես նաև պետական կառավարման ոլորտում օրինականության պահպանման նպատակով վարչապետին Օրենքով նախատեսված լիազորությունների շրջանակում անկողմնակալ և ամբողջական տեղեկավարություն կամ մասնագիտական դիրքորոշում ներկայացնելն է:*

Պետության կողմից տեղական ինքնակառավարման մարմիններին տրամադրվող սուբսիդիաների, սուբվենցիաների և դոտացիաների նկատմամբ վերահսկողությունը պետք է քննարկման առարկա դառնա՝ ելնելով դրա իրականացման փուլային բնույթից: Այլ կերպ՝ անհրաժեշտ է տարբերակել պետական միջոցների տրամադրման *նախապատրաստական փուլում իրականացվող վերահսկողությունը*, որն ուղղված է դրանց տրամադրման հիմքերի *արժանահավատությունն ու իրավաչափությունը գնահատելուն*, և նշված միջոցների *տրամադրումից հետո իրականացվող վերահսկողությունը*, որն առնչվում է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից այդ միջոցների օգտագործման ընթացքին: Մասնավորապես, եթե վերահսկողությունը վերաբերում է այդ միջոցների տրամադրման հիմք հանդիսացող տեղեկատվության արժանահավատությունն ու իրավաչափությունը գնահատելուն, ապա այն սահմանադրական վերաբերելի կարգավորումների համատեքստում թույլատրելի է, *քանզի ուղղված է պետական բյուջեից ելքագրվող միջոցների օրինական և նպատակային օգտագործումն ապահովելուն (պետական բյուջեից տրամադրվող միջոցների տնօրինման նախնական գործընթաց)*՝ որպես հանրային ֆինանսների կառավարման օրինականության երաշխիք: Սակայն, երբ վերահսկողության ազդեցությունը տարածվում է համայնքային բյուջե արդեն ներգրավված միջոցների տնօրինման գործընթացի վրա, դա հակասում է տեղական ինքնակառավարման մարմինների ֆինանսական ինքնուրույնության սկզբունքին, քանզի այդպիսի միջամտությունը ենթադրում է ոչ թե իրավական կամ մասնագիտական հսկողություն **(որպիսի իրավասությունը Սահմանադրությամբ վերապահված է Կառավարության լիազոր մարմինին)**, այլ ուղղակի վարչական ենթակայություն՝ խաթարելով տեղական իշխանության ինքնուրույն գործունեության սահմանադրական երաշխիքները:

82. Թե՛ Սահմանադրությունը, թե՛ Խարտիան հաստատում են այն հիմնարար սկզբունքը, որի համաձայն՝ *վերահսկողությունը պետք է ծառայի ոչ թե ենթակայության, այլ օրինականության և հաշվետվողականության հավասարակշռված ապահովման նպատակին՝ պահպանելով տեղական ինքնակառավարման մարմինների ֆինանսական և գործառնական ինքնուրույնությունը:*

83. Հաշվի առնելով վերոնշյալը՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ **սուբսիդիաների, սուբվենցիաների կամ դոտացիաների տրամադրման համար հիմք հանդիսացող տեղեկատվության արժանահավատության գնահատման նպատակով տեղական ինքնակառավարման մարմիններում վերահսկողություն իրականացնելու լիազորությունն օրենսդրի կողմից Ծառայությանը վերապահելն արդարացված է, և Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով ամրագրված համապատասխան կարգավորումը սահմանադրականության առումով խնդրահարույց չէ:** Այդ վերահսկողությունն ուղղված է ոչ թե տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության սահմանադրական ինքնուրույնությանը, համայնքային որոշումների ընդունման ազատությանը միջամտելուն, այլ պետական բյուջեից ելքագրվող միջոցների տնօրինման նախնական փուլում դրանց տրամադրման հիմքերի իրավաչափությունը և հիմնավորվածությունը ստուգելուն, ինչը բխում է պետության պարտա-

կանությունից՝ երաշխավորել պետական ֆինանսների օրինական և նպատակային օգտագործման ապահովման հանրային շահը:

84. Օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասի՝ **տեղական ինքնակառավարման մարմինների կողմից վերահսկվող ոլորտներում վերահսկողության իրականացման մասով**, Սահմանադրությանը հակասելու վերաբերյալ Դիմողի պնդման առնչությամբ Սահմանադրական դատարանն արձանագրում է.

Օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասով ամրագրված է, որ **տեղական ինքնակառավարման մարմինների կողմից վերահսկվող ոլորտներում վերահսկողական գործառույթներ իրականացնելու անհրաժեշտություն առաջանալու դեպքում** Ծառայությունն այդ մասին հայտնում է վարչապետին, որը կարող է հիմք հանդիսանալ համապատասխանաբար հանձնարարության կամ առաջարկության իրավասու մարմին՝ իրականացնելու տվյալ մարմինն օրենքով վերապահված և իր լիազորություններից բխող վերահսկողություն՝ արդյունքների վերաբերյալ տեղեկացնելով Ծառայությանը:

Վերոնշյալ օրինադրույթի բովանդակությունից բխում է, որ օրենսդիրը հստակ սահմանել է Ծառայության գործառույթային սահմանները՝ բացառելով վերջինիս կողմից ինքնուրույն վերահսկողական լիազորությունների իրականացումն այն ոլորտներում, որոնք վերահսկվում են տեղական ինքնակառավարման մարմինների կողմից: Հիշյալ կարգավորումից ակնհայտ է, որ նշված դեպքերում Ծառայությունը կարող է միայն *հայտնել/տեղեկացնել* վարչապետին վերահսկողական գործառույթներ իրականացնելու անհրաժեշտություն առաջանալու մասին: **Վարչապետին հայտնելը/տեղեկացնելը, ինքնին, չի նշանակում վերահսկողական իրավասության իրացում, այլ հանդիսանում է ընդամենը նախնական ազդակ կամ հիմք՝ վարչապետի կողմից հեղափոխական արձագանքի համար, որը կարող է դրսևորվել վարչապետի՝ իրավասու մարմնին հանձնարարության կամ առաջարկության ձևով՝ վերահսկողություն իրականացնելու վերաբերյալ՝ արդյունքների մասին տեղեկացնելով Ծառայությանը:** Հետևաբար՝ **Ծառայության դերը նշված համատեքստում սահմանափակվում է բացառապես տեղեկատվական, նախաձեռնողական բնույթի գործողություններով՝ առանց վերահսկողական իրավասության ինքնուրույն իրացման, իսկ վերահսկողության իրականացումը մնում է այն մարմնի բացառիկ իրավասության ներքո, որին այն վերապահված է:**

Վերահսկողություն իրականացնող իրավասու մարմնի կողմից վերահսկողության արդյունքների վերաբերյալ Ծառայությանը տեղեկացնելու վերաբերյալ կարգավորման առնչությամբ հարկ է նշել, որ այն ենթակայական հաշվետվության ներկայացում կամ վերահսկողական բնույթի ենթակայության դրսևորում չէ, այլ պետական և տեղական կառավարման համակարգում համագործակցության և հաշվետվողականության կառուցակարգ, որը ենթադրում է վերջիններիս միջև գործառույթային կապի արտահայտում՝ տեղեկատվության փոխանակման, համակարգման և հաշվետվողականության ձևով՝ առանց որևէ մեկի ինքնուրույնության սահմանափակման: Վերահսկողություն իրականացնող իրավասու մարմնի կողմից վերահսկողության արդյունքների վերաբերյալ Ծառայությանը տեղեկացնելը ծառայում է վերահսկողական համակարգի ընդհանուր արդյունավետությանն ու թափանցիկությանը՝ միաժամանակ պահպանելով յուրաքանչյուր մարմնի անկախությունն և իրավասությունների ինքնուրույն բնույթը⁴:

⁴ Խարտիայի բացատրական զեկույցի վերաբերյալ Եվրոպայի խորհրդի Տեղական և տարածաշրջանային իշխանությունների կոնգրեսի ժամանակակից մեկնաբանությունը Խարտիայի 8-րդ հոդվածի

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 167-րդ հոդվածի 1-ին մասով, 168-րդ հոդվածի 1-ին կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-5-րդ մասերով, ինչպես նաև հիմք ընդունելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 70-րդ հոդվածները՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. «Պետական վերահսկողական ծառայության մասին» օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետը՝ գնումների գործընթացը կանոնակարգող օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ Պետական վերահսկողական ծառայությանը նույն օրենքով սահմանված կարգով տեղական ինքնակառավարման մարմիններում կամ համայնքային հիմնարկներում վերահսկողություն իրականացնելու լիազորություն վերապահելու մասով, և «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 95-րդ հոդվածի 6-րդ մասը՝ հիշյալ վերահսկողությունը՝ «Պետական վերահսկողական ծառայության մասին» օրենքով սահմանված կարգով իրականացնելու մասով, ճանաչել Սահմանադրության 60-րդ հոդվածի 1-ին մասին և 188-րդ հոդվածին հակասող և անվավեր:

2. «Պետական վերահսկողական ծառայության մասին» օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը՝ տրամադրված սուբսիդիաների, սուբվենցիաների կամ դոտացիաների կառավարման օրինականության գնահատման նպատակով Պետական վերահսկողական ծառայությանը նույն օրենքով սահմանված կարգով տեղական ինքնակառավարման մարմիններում վերահսկողություն իրականացնելու լիազորություն վերապահելու մասով, ճանաչել Սահմանադրության 60-րդ հոդվածի 1-ին մասին և 188-րդ հոդվածին հակասող և անվավեր:

3. «Պետական վերահսկողական ծառայության մասին» օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը՝ սուբսիդիաների, սուբվենցիաների կամ դոտացիաների տրամադրման համար հիմք հանդիսացող տեղեկատվության արժանահավատության գնահատման նպատակով Պետական վերահսկողական ծառայությանը նույն օրենքով սահմանված կարգով տեղական ինքնակառավարման մարմիններում վերահսկողություն իրականացնելու լիազորություն վերապահելու մասով, համապատասխանում է Սահմանադրությանը:

4. «Պետական վերահսկողական ծառայության մասին» օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասը՝ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից վերահսկվող ոլորտներ-

3-րդ մասի առնչությամբ. «137. Սույն դրույթը ամրագրում է տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության նկատմամբ վերադաս մարմինների կողմից իրականացվող վարչական վերահսկողության համաչափության սկզբունքը: Այս սկզբունքը լայնորեն ճանաչված է և կիրառվում է տարբեր իրավական համատեքստերում: Տվյալ դեպքում այն արտահայտում է այն հիմնադրույթը, որի համաձայն՝ վերահսկող մարմնի միջամտությունը պետք է լինի համաչափ այն շահերի կարևորությանը, որոնց պաշտպանությունն այն նպատակ ունի ապահովել: Այդ առնչությամբ, 2019 թվականին Նախարարների կոմիտեն հանձնարարել է, որ անդամ պետությունների իշխանությունները ձեռնարկեն համապատասխան միջոցներ «ձևավորելու տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության նկատմամբ վերահսկողության այնպիսի իրավական, ինստիտուցիոնալ և կարգավորող շրջանակ, որն իրավական հարթությունում և գործնականում կլինի համաչափ այն շահերին, որոնց պաշտպանության համար նախատեսված է» (Recommendation CM/Rec(2019)3 of the Committee of Ministers to member States on supervision of local authorities' activities):

րում վերահսկողական գործառույթներ իրականացնելու հարցի մասով, համապատասխանում է Սահմանադրությանը:

5. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Ա. ԴԻԼԱՆՅԱՆ

24 մարտի 2026 թվականի
ՍԴՈ-1822



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ
ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ՝ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 12-Ի ԹԻՎ ԲԴԽ-27-Ո-24
ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ
ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅԱՆ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

1 ապրիլի 2026 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով.

դատավորներ՝

Արման Դիլանյանի (նախագահող),

Արտակ Զեյնալյանի,

Երվանդ Խունդկարյանի,

Հովակիմ Հովակիմյանի,

Էդգար Շաթիրյանի (զեկուցող),

Սեդա Սաֆարյանի,

Արթուր Վաղարշյանի,

Վլադիմիր Վարդանյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

դիմողի՝

Հանրապետության նախագահի (այսուհետ նաև՝

Դիմող),

ներկայացուցիչներ՝

Հանրապետության նախագահի աշխատակազմի

իրավաբանական վարչության պետի

պարտականությունները կատարող,

ներման և քաղաքացիության բաժնի պետ Անի Մուրադյանի,

իրավաբանական վարչության մոնիթորինգի

և վերլուծության բաժնի պետ Անդրանիկ Ռաշիդյանի,

պատասխանողի՝

Բարձրագույն դատական խորհրդի

(այսուհետ նաև՝ Պատասխանող),

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետի, 169-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22 և 86-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Հանրապետության նախագահի դիմումի հիման վրա՝ Բարձրագույն դատական խորհրդի՝ 2026 թվականի մարտի 12-ի թիվ ԲԴԽ-27-Ո-24 որոշմամբ Հանրապետության նախագահին ներկայացված առաջարկության՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Ուսումնասիրելով դիմումը, կողմերի գրավոր բացատրությունները և գործում առկա այլ փաստաթղթերը, նյութերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց.**

Վարույթը Սահմանադրական դատարանում

1. Գործի քննության առիթը Հանրապետության նախագահի՝ 2026 թվականի մարտի 23-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է, որով Դիմողը խնդրել է.

«(...) որոշել Բարձրագույն դատական խորհրդի 2026 թվականի մարտի 12-ի ԲԴԽ-27-Ո-24 որոշմամբ Հանրապետության նախագահին ներկայացված առաջարկության՝ Սահմանադրության 1-ին հոդվածին և 50-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխանության հարցը»:

2. 2026 թվականի մարտի 25-ին ընդունվել է Սահմանադրական դատարանի ՍԴԱՈ-38 աշխատակարգային որոշումը՝ Սահմանադրական դատարանի դատավոր Դավիթ Խաչատուրյանի՝ սույն գործի քննությանը մասնակցելու անհնարինության մասին՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով:

3. Սահմանադրական դատարանի՝ 2026 թվականի մարտի 25-ի ՍԴԱՈ-39 աշխատակարգային որոշմամբ գործն ընդունվել է քննության, գործի դատաքննությունը նշանակվել է 2026 թվականի մարտի 31-ին, որոշվել է գործի դատաքննությունն անցկացնել գրավոր ընթացակարգով:

Սահմանադրական վեճի նախապատմությունը

4. Բարձրագույն դատական խորհրդի՝ 2022 թվականի սեպտեմբերի 29-ի թիվ ԲԴԽ-92-Ո-293 որոշմամբ 2022 թվականի սեպտեմբերի 26-ին, 27-ին և 29-ին Բարձրագույն դատական խորհրդում կայացած հարցազրույցների արդյունքների ամփոփման նպատակով իրականացված քվեարկությունների արդյունքների հիման վրա կազմվել և հաստատվել է դատավորների թեկնածուների հավակնորդների ցուցակը՝ քրեական և քաղաքացիական մասնագիտացման բաժիններով՝ համաձայն հավելվածի: Վերջինիս համաձայն՝ դատավորների թեկնածուների հավակնորդների քրեական մասնագիտացման բաժնի ցուցակում (10-րդ կետ) ներառվել է նաև Վազգեն Տիգրանի Սահակյանը:

5. Բարձրագույն դատական խորհրդի՝ 2023 թվականի հոկտեմբերի 10-ի թիվ ԲԴԽ-86-Ո-261 որոշմամբ կազմվել և հաստատվել է դատավորների թեկնածուների ցուցակը՝ քրեական, քաղաքացիական մասնագիտացման բաժիններով և հակակոռուպցիոն մասնագիտացման բաժնի կոռուպցիոն հանցագործությունների քննության ենթաբաժնով՝ համաձայն հավելվածի: Վերջինիս համաձայն՝ դատավորների թեկնածուների քրեական մասնագիտացման բաժնի ցուցակում (11-րդ կետ) ներառվել է նաև Վազգեն Տիգրանի Սահակյանը:

6. Բարձրագույն դատական խորհրդի՝ 2026 թվականի մարտի 12-ի թիվ ԲԴԽ-27-Ո-24 որոշմամբ Հանրապետության նախագահին առաջարկվել է Վազգեն Տիգրանի

Սահակյանի թեկնածությունը՝ Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի քրեական մասնագիտացման դատավորի պաշտոնի թափուր տեղում նշանակելու համար: Որոշումը կայացվել է դռնփակ դատական նիստում և նույն օրը թիվ ԲԴԽ-1-ԴԴ-765-26 գրությամբ ներկայացվել է Հանրապետության նախագահին:

Առաջարկությանը կից ներկայացվել է թեկնածուի անձնական գործը, ներառյալ՝ թեկնածուի վերաբերյալ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի եզրակացությունը:

7. 2026 թվականի մարտի 16-ին Հանրապետության նախագահը, հիմք ընդունելով Սահմանադրության 139-րդ հոդվածի 2-րդ մասը, իր առարկությամբ Բարձրագույն դատական խորհուրդ է վերադարձրել Բարձրագույն դատական խորհրդի՝ 2026 թվականի մարտի 12-ի թիվ ԲԴԽ-27-Ո-24 որոշմամբ ներկայացված առաջարկությունն այն հիմնավորմամբ, որ թեկնածուի բարեվարքության վերաբերյալ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի տրամադրած եզրակացությունում մատնանշված՝ դատավորի թեկնածուի գույքային դրության տվյալների արժանահավատությանն առնչվող ողջամիտ հարցադրումների և պարզաբանման կարիք ունեցող փաստահանգամանքների հիմնավորման կամ հերքման մասով Բարձրագույն դատական խորհրդի կարծիքի բացակայության պայմաններում հնարավոր չէ օբյեկտիվ և ամբողջական դիրքորոշում ձևավորել տվյալ թեկնածուի նշանակման հիմնավորվածության վերաբերյալ: Հանրապետության նախագահը նշել է, որ անհրաժեշտ է առանձնահատուկ ուշադրություն դարձնել վերոնշյալ եզրակացությանը՝ վերջինս դարձնելով Բարձրագույն դատական խորհրդի կողմից ըստ էության ուսումնասիրման և քննարկման առարկա, և դրա արդյունքների հիման վրա վերստին քննարկել տվյալ անձի թեկնածությունը կրկին ներկայացնելու նպատակահարմարությունը:

8. 2026 թվականի մարտի 20-ին Հանրապետության նախագահի աշխատակազմը ստացել է Բարձրագույն դատական խորհրդի նախագահի ստորագրությամբ 2026 թվականի մարտի 19-ի թիվ ԲԴԽ-1 ԴԴ/869-26 գրությունը, որով Հանրապետության նախագահի քննարկմանն է կրկին ներկայացվել Բարձրագույն դատական խորհրդի՝ 2026 թվականի մարտի 12-ի թիվ ԲԴԽ-27-Ո-24 որոշումը:

Հիշյալ գրության մեջ, մասնավորապես, նշված է. «Բարձրագույն դատական խորհրդի 2026 թվականի մարտի 19-ի նիստում քննարկվել է (...) առարկությունը (...) քննարկման արդյունքում Բարձրագույն դատական խորհուրդն արձանագրել է հետևյալը. (...)

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 108-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ դատավորների թեկնածուների հավակնորդների ցուցակը կազմելու համար քվեարկությունն իրականացնելիս Բարձրագույն դատական խորհրդի անդամները հաշվի են առնում որակավորման գրավոր քննության և հարցազրույցի արդյունքները և հավակնորդի վերաբերյալ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի տրամադրած՝ բարեվարքության վերաբերյալ խորհրդատվական եզրակացությունը:

Վերոգրյալ իրավանորմից ակնհայտ է, որ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի տրամադրած բարեվարքության վերաբերյալ եզրակացությունը Բարձրագույն դատական խորհրդի համար ունի խորհրդատվական բնույթ և այն հաշվի է առնվում որակավորման գրավոր քննության ու հարցազրույցի արդյունքների հետ միասնության մեջ:

Տվյալ դեպքում Բարձրագույն դատական խորհրդի համար Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից տրված (...) եզրակացությունն ինքնին հիմք չի հանդիսացել Վազգեն Սահակյանին՝ դատավորների թեկնածուների ցուցակում չներառելու համար, ուստի վերջինս 2022 թվականի սեպտեմբերի 29-ի թիվ ԲԴԽ-92-Ո-293 որոշմամբ ներառվել է դատավորների թեկնածուների հավակնորդների ցուցակում:

Ընդ որում, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից Վազգեն Սահակյանի վերաբերյալ (...) բարեվարքության եզրակացությունը տրվել է 2022 թվականին, որի 2-րդ պարբերության համաձայն՝ դրանում նշված տեղեկությունները ներկայացվում են բացառապես անձին՝ դատավորների թեկնածուների հավակնորդների ցուցակում ընդգրկելու վերաբերյալ որոշում կայացնելու գործընթացում օգտագործելու նպատակով»:

Դիմողի դիրքորոշումները

9. Դիմողը նշում է, որ Բարձրագույն դատական խորհրդի նախագահի թիվ ԲԴԽ-1 ԴԴ/869-26 գրությունից պարզ չէ, թե ինչպիսի փաստական հանգամանքներ է հիմք ընդունել Բարձրագույն դատական խորհուրդը՝ ընդունելով իր որոշումը, որի պարագայում Հանրապետության նախագահի առարկությունում բարձրացված մտահոգությունները չեն փարատվել և ողջամտորեն չէին կարող փարատվել:

10. Վկայակոչելով Սահմանադրության և «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի համապատասխան կարգավորումները՝ Դիմողը, մասնավորապես, նշում է. «(...) վերոնշյալ նորմերի համադրված վերլուծությունից հետևում է, որ Հայաստանի Հանրապետությունում՝ որպես ժամանակակից իրավական պետությունում, **պատճառաբանված պետք է լինեն պետական մարմինների իրավակիրառ բոլոր ակտերը: Իրավական ակտերի պատճառաբանվածությունը (հիմնավորվածությունը, փաստարկված լինելը) ճանաչվում է որպես իրավունքի ընդհանուր սկզբունք:**

(...)

(...) Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր նախադեպային իրավունքում հաստատել է, որ պետական մարմինները չեն կարող սահմանափակվել միայն իրավական նորմերին հղումով և պարտավոր են ներկայացնել իրենց որոշումների փաստական հիմքերը (օրինակ՝ Al-Nashif v Bulgaria, C.G. and others v Bulgaria, Akçay and Others v. Russia): Թեև, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքում ձևավորված մոտեցումներն ուղղակիորեն կիրառելի չեն տվյալ սահմանադրաիրավական հարաբերությունների նկատմամբ, այնուամենայնիվ, ունեն ուղեցույցային նշանակություն և արտացոլում են իրավական պետության սկզբունքից թխող պատճառաբանվածության (հիմնավորվածության) պահանջը:

(...) Ակնհայտ է, որ վկայակոչված սահմանադրական նորմերն ուղղակիորեն տարածվում են Օրենսգրքի [«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենք] 117-րդ հոդվածի 1-4-րդ մասերի վրա: Այսինքն, դատավորի պաշտոնում նշանակման գործընթացում Խորհրդի գործողությունները և դրանց արդյունքում ընդունվող որոշումները պետք է լինեն պատճառաբանված (հիմնավորված), **վերաբերելի փաստական տվյալների վկայակոչմամբ:**

Մինչդեռ, (...) Խորհուրդը սահմանափակվել է միայն իր լիազորությունը սահմանող իրավական նորմերի մեխանիկական հիշատակմամբ՝ առանց բացահայտելու՝

Ըստ էության, գերծ լինելով պետության ներքին և արտաքին քաղաքականության մշակմանը, ինչպես նաև կառավարմանը բովանդակային առումով մասնակցելու գործառույթից և չկրելով դրանց պատասխանատվությունը՝ Հանրապետության նախագահին սահմանադրորեն պատվիրակվել է **լինել անաչառ և առաջնորդել**

բացառապես համապետական և համազգային շահերով (Սահմանադրության 123-րդ հոդվածի 3-րդ մաս): Ըստ այդմ՝ Հանրապետության նախագահին սահմանադրորեն վերապահվել է **վերկուսակցական արբիտրի դեր**, որն իր լիազորությունների իրականացման ընթացքում չի կարող լինել որևէ կուսակցության անդամ (Սահմանադրության 124-րդ հոդվածի 5-րդ մաս): Միևնույն ժամանակ, վերկուսակցական (ապակուսակցական) արբիտրի դերը, որը հիմնված է թե՛ Հանրապետության նախագահի՝ որպես պետության գլխի ինտեգրող գործառույթի, թե՛ նրա անաչառության վրա, ենթադրում է Սահմանադրության պահպանմանը հետևելու գործառույթի իրականացում, ինչը ևս ուղղակիորեն ամրագրված է Սահմանադրությամբ (Սահմանադրության 123-րդ հոդվածի 2-րդ մաս): Բացի դրանից, Սահմանադրության պահպանմանը հետևելու գործառույթը, իր հերթին, ենթադրում է, որ **Հանրապետության նախագահը պետք է ունենա զսպումների և հակակշիռների միջոցով այդ գործառույթն արդյունավետորեն իրականացնելու հնարավորություն**, ուստի՝ նա պետք է ոչ միայն կարողանա կատարված փաստերից հետո գնահատել ենթադրյալ հակասահմանադրական գործողությունները (անգործությունը) կամ որոշումները, այլև պետք է կարողանա, նախևառաջ, **կանխել դրանց ի հայտ գալը՝ օժտված լինելով կանխարգելիչ սահմանադրական վերահսկողության որոշակի լիազորություններով**»:

14. Դիմողը գտնում է, որ Բարձրագույն դատական խորհրդի՝ 2026 թվականի մարտի 12-ի թիվ ԲԴԽ-27-Ո-24 որոշմամբ Հանրապետության նախագահին ներկայացված առաջարկությունն այնքանով, որքանով չի պարունակում փաստական և հիմնավոր պատճառաբանվածություն, հակասում է Սահմանադրությամբ ամրագրված իրավական պետության և պատշաճ վարչարարության սկզբունքներին:

Պատասխանողի դիրքորոշումները

15. Պատասխանողը, վկայակոչելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 108-րդ հոդվածի 8-րդ մասը, նշում է, որ հիշյալ իրավանորմից ակնհայտ է, որ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի տրամադրած բարեվարքության վերաբերյալ եզրակացությունը Բարձրագույն դատական խորհրդի համար ունի խորհրդատվական բնույթ և հաշվի է առնվում որակավորման գրավոր քննության ու հարցազրույցի արդյունքների հետ միասնության մեջ:

16. Բարձրագույն դատական խորհրդի՝ 2022 թվականի սեպտեմբերի 29-ի թիվ ԲԴԽ-92-Ո-293 որոշմամբ Վազգեն Սահակյանը ներառվել է դատավորների թեկնածուների հավակնորդների ցուցակում: Այդ առնչությամբ Պատասխանողը նշում է, որ Բարձրագույն դատական խորհրդի համար Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից Վազգեն Սահակյանի վերաբերյալ տրված բարեվարքության եզրակացությունը, ունենալով խորհրդատվական բնույթ, ինքնին հիմք չի հանդիսացել Վազգեն Սահակյանին դատավորների թեկնածուների հավակնորդների ցուցակում չներառելու համար՝ հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ թեկնածուն գրավոր առարկել է նշված եզրակացության դեմ, ինչը պնդել է նաև հարցազրույցի փուլում՝ պատասխանելով Բարձրագույն դատական խորհրդի՝ եզրակացության վերաբերյալ հարցադրումներին: Որոշում կայացնելիս հաշվի են առնվել նաև թեկնածուի գրավոր քննության և հարցազրույցի փուլի արդյունքները, ինչպես նաև խորհրդակցական ծայնի իրավունքով հարցազրույցի փուլում հոգեբանի կողմից տրված՝ ի թիվս այլ հատկանիշների, բարեվարքության վերաբերյալ դրական որակում պարունակող հոգեբանական

գնահատականը: Այսինքն՝ որոշումը կայացվել է ոչ թե վերը նշված փաստական տվյալները մեկը մյուսից անջատ, ինքնավար հետազոտման եղանակով, այլ դրանց համակցության մեջ գնահատելու արդյունքում:

17. Պատասխանողը հավելում է, որ Բարձրագույն դատական խորհրդի՝ 2023 թվականի հոկտեմբերի 10-ի թիվ ԲԴԽ-86-Ո-261 որոշմամբ, հիմք ընդունելով Արդարադատության ակադեմիայի ռեկտորի համապատասխան գրությունները, կազմվել և հաստատվել է դատավորների թեկնածուների ցուցակը, որի քրեական մասնագիտացման բաժնում ներառվել է նաև Վազգեն Սահակյանը:

18. Պատասխանողը նշում է. «(...) Խորհրդի 2026 թվականի մարտի 12-ի թիվ ԲԴԽ-27-Ո-24 որոշման կայացման հիմքում դրվել են ինչպես վերը նշված հանգամանքները, այնպես էլ այն հանգամանքը, որ Հանձնաժողովի կողմից Վազգեն Սահակյանի վերաբերյալ (...) եզրակացությունը տրամադրվել է դեռևս 4 տարի առաջ՝ 2022 թվականին, որի 2-րդ պարբերության համաձայն՝ դրանում նշված տեղեկությունները ներկայացվել են բացառապես անձին՝ դատավորների թեկնածուների հավակնորդների ցուցակում ընդգրկելու վերաբերյալ որոշում կայացնելու գործընթացում օգտագործելու նպատակով, իսկ օրենսդիրը Խորհրդին չի օժտել դատավորի պաշտոնի թափուր տեղում նշանակելու համար Հանրապետության նախագահին առաջարկություն ներկայացնելուց առաջ Հանձնաժողովից նոր եզրակացություն ստանալու գործիքակազմով և թեկնածուի համար նման պարտականություն ևս չի սահմանել:

Վերը նշված հանգամանքների ամբողջությունն է դրվել նաև Խորհրդի 2026 թվականի մարտի 19-ի՝ Նախագահի առարկությունը չընդունելու մասին որոշման կայացման հիմքում (...): Այսինքն՝ վկայակոչվել և մատնացույց են արվել որոշման կայացման (առաջարկության ներկայացման) համար հիմք ծառայած հանգամանքները, որոնք Խորհրդի գնահատմամբ բավարար են եղել որոշումը (առաջարկությունը) պատճառաբանված համարելու համար»:

19. Պատասխանողը վկայակոչում է Սահմանադրական դատարանի՝ 2023 թվականի հունիսի 2-ի ՍԴՈ-1691 որոշումը՝ Բարձրագույն դատական խորհրդի՝ Սահմանադրության 175-րդ հոդվածի 1-ին մասի 2-4-րդ կետերով ամրագրված լիազորություններն իրականացնելիս կայացվող որոշումների պատճառաբանվածության հարցի համատեքստում այն առումով, որ հիշյալ սահմանադրական լիազորությունների իրականացմամբ որոշումներ կայացնելիս Բարձրագույն դատական խորհուրդը, անշուշտ, պետք է ունենա համապատասխան որոշման պատճառաբանության խորությունը և ծավալը որոշելու հայեցողություն, որը, սակայն, պետք է իրականացվի դատավորների մասնագիտական առաջխաղացման և դրա վրա ազդող որոշումների համար հիմք ծառայող չափորոշիչների հիման վրա:

20. Ըստ Պատասխանողի՝ «Հիմք ընդունելով Խորհրդի կողմից գնահատված վերոգրյալ փաստական տվյալների համակցությունը և Սահմանադրությամբ ու օրենքով Խորհրդին վերապահված լիազորությունների իրականացման ընթացքում վերջինիս ունեցած հայեցողությունը՝ պետք է արձանագրել, որ Խորհրդի 2026 թվականի մարտի 12-ի որոշումը բավարար պատճառաբանված է, ուստի նշված որոշմամբ ներկայացված առաջարկությունը համապատասխանում է Սահմանադրությանը»:

Սահմանադրական վեճի քննության շրջանակը

21. Սույն գործով սահմանադրական վեճը հանգում է դատավորի թեկնածուի հավակնորդի բարեվարքության վերաբերյալ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի տրամադրած համապատասխան եզրակացության առկայության պայմաններում Բարձրագույն դատական խորհրդի կողմից համապատասխան անձի թեկնածությունը՝ դատավորի պաշտոնի թափուր տեղում նշանակելու համար Հանրապետության նախագահին ներկայացված առաջարկության պատճառաբանվածության հարցին:

Այդ համատեքստում, հաշվի առնելով Սահմանադրության 139-րդ հոդվածի 2-րդ մասի վերաբերելի կարգավորումները և հիմք ընդունելով Սահմանադրության 167-րդ հոդվածի 3-րդ մասով և «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 86-րդ հոդվածով ամրագրված կարգավորումները՝ Սահմանադրական դատարանի գնահատմամբ՝ Բարձրագույն դատական խորհրդի կողմից Հանրապետության նախագահին ներկայացված համապատասխան առաջարկության՝ վերջինիս պատճառաբանվածության առումով, սահմանադրականության գնահատումը շրջանակային առումով չի կարող սահմանափակվել բացառապես Բարձրագույն դատական խորհրդի՝ 2026 թվականի մարտի 12-ի թիվ ԲԴԽ-27-Ո-24 որոշմամբ Հանրապետության նախագահին ներկայացված համապատասխան առաջարկությամբ՝ նկատի առնելով, որ առաջարկություն ներկայացնելուն նախորդող գործընթացը տվյալ դեպքում չի կարող դիտարկվել մեկուսի, քանզի դրա շրջանակներում ևս Բարձրագույն դատական խորհրդի կողմից ընդունվել են որոշումներ (մասնավորապես՝ Բարձրագույն դատական խորհրդում կայացած հարցազրույցների արդյունքների ամփոփման նպատակով իրականացված քվեարկությունների արդյունքների հիման վրա դատավորների թեկնածուների հավակնորդների ցուցակը, այնուհետև՝ դատավորների թեկնածուների ցուցակը կազմելու և հաստատելու մասին), որպիսի պայմաններում Բարձրագույն դատական խորհրդի կողմից Հանրապետության նախագահին ներկայացված համապատասխան առաջարկության՝ վերջինիս պատճառաբանվածության առումով, սահմանադրականության ստուգումը պահանջում է համալիր մոտեցում՝ ամբողջ գործընթացի ընդգրկմամբ:

Սահմանադրական դատարանը շեշտում է, որ սույն սահմանադրական վեճի քննության ընթացքում Բարձրագույն դատական խորհրդի վերաբերելի որոշումների, ինչպես նաև Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի՝ դատավորի թեկնածուի հավակնորդի բարեվարքության վերաբերյալ եզրակացության, նշված մարմինների գործողությունների օրինականությունը կամ իրավաչափությունը գնահատման ենթակա չեն. Սահմանադիրը Սահմանադրական դատարանին այդպիսի լիազորություն չի վերապահել: Հետևաբար՝ Սահմանադրական դատարանն անդրադառնալու է Բարձրագույն դատական խորհրդի կողմից Հանրապետության նախագահին ներկայացված համապատասխան առաջարկության՝ վերջինիս պատճառաբանվածության առումով, սահմանադրականության հարցին նախորդ պարբերությունում նշված մոտեցման շրջանակում:

Գործի շրջանակներում պարզման ենթակա հանգամանքը

22. Սույն գործով վիճարկվող առաջարկության՝ Սահմանադրությանը համապատասխանությունը գնահատելու համար Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ, մասնավորապես, ներքոնշյալ հարցադրմանը.

- արդյո՞ք դատավորի թեկնածուի հավակնորդի բարեվարքության վերաբերյալ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից տրամադրված համապատասխան եզրակացության առկայության պայմաններում Բարձրագույն դատական խորհրդի՝ 2026 թվականի մարտի 12-ի թիվ ԲԴԽ-27-Ո-24 որոշմամբ Հանրապետության նախագահին ներկայացված առաջարկությունն այնքանով, որքանով չի պարունակում հիմնավոր պատճառաբանվածություն, համապատասխանում է Սահմանադրությանը:

23. Սույն սահմանադրական վեճի լուծմանը վերաբերելի Սահմանադրության հիմնական դրույթներն են՝

23.1. «Պետական իշխանությունն իրականացվում է Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան՝ օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բաժանման ու հավասարակշռման հիման վրա» (4-րդ հոդված).

23.2. «1. Հանրապետության նախագահը պետության գլուխն է:

2. Հանրապետության նախագահը հետևում է Սահմանադրության պահպանմանը: (...)

4. Հանրապետության նախագահն իր գործառույթներն իրականացնում է Սահմանադրությամբ սահմանված լիազորությունների միջոցով (123-րդ հոդվածի 1-ին, 2 և 4-րդ մասեր).

23.3. «Հանրապետության նախագահը Սահմանադրության (...) 166-րդ հոդվածի (...) 6-րդ (...) մասերով սահմանված դեպքերում կարող է համապատասխան ակտը եռօրյա ժամկետում իր առարկություններով վերադարձնել առաջարկություն ներկայացնող (...) մարմին: Եթե իրավասու մարմինը չի ընդունում այդ առարկությունը, ապա Հանրապետության նախագահը ստորագրում է համապատասխան ակտը կամ դիմում է Սահմանադրական դատարան» (139-րդ հոդվածի 2-րդ մաս).

23.4. «Առաջին ատյանի (...) դատարանների դատավորներին նշանակում է Հանրապետության նախագահը՝ Բարձրագույն դատական խորհրդի առաջարկությամբ» (166-րդ հոդվածի 6-րդ մաս).

23.5. «Բարձրագույն դատական խորհուրդն անկախ պետական մարմին է, որը երաշխավորում է դատարանների և դատավորների անկախությունը» (173-րդ հոդված).

23.6. «1. Բարձրագույն դատական խորհուրդը՝

1) կազմում և հաստատում է դատավորների թեկնածուների (...) ցուցակները.

2) Հանրապետության նախագահին առաջարկում է նշանակման ենթակա (...) դատավորների թեկնածուներին.» (175-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետեր).

Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները

24. Սահմանադրության 173-րդ հոդվածի համաձայն՝ Բարձրագույն դատական խորհուրդն անկախ պետական մարմին է, որը երաշխավորում է դատարանների և դատավորների անկախությունը:

Սահմանադրության 173-րդ հոդվածի և «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Դատական օրենսգիրք) 79-րդ հոդվածի 1-ին մասի կարգավորումներից հետևում է, որ *դատարանների և դատավորների անկախությունը երաշխավորվում է Բարձրագույն դատական խորհրդի՝ Սահմանադրությամբ և Դատական օրենսգրքով սահմանված լիազորություններն իրականացնելու միջոցով:*

25. Բարձրագույն դատական խորհուրդն *առանձնահատուկ կարգավիճակ ունեցող անկախ սահմանադրական մարմին է*: Այդ առնչությամբ Սահմանադրական դատարանի 2021 թվականի հունիսի 10-ի ՍԴՈ-1598 որոշմամբ արձանագրված է. «(...) Բարձրագույն դատական խորհրդի կազմում հավասարապես ներկայացված են օրենսդիր և դատական իշխանությունների կողմից ընտրված անդամները, ինչով և շահեկանորեն ընդգծված է այս ատյանի ժողովրդավարական լեգիտիմությունը, որպես պետական իշխանության 2 ճյուղերի կողմից համատեղ ձևավորված ատյան, որի սահմանադրական լիազորությունների իրականացումը ապահովվում է պետական իշխանության նշված երկու ճյուղերի կողմից Բարձրագույն դատական խորհրդում ընտրված անդամների համաձայնությամբ» (4.8-րդ կետ):

26. Բարձրագույն դատական խորհրդի սահմանադրական լիազորություններն ամրագրված են Սահմանադրության 175-րդ հոդվածով: Ընդ որում՝ Սահմանադրության 175-րդ հոդվածի 4-րդ մասին համապատասխան՝ Բարձրագույն դատական խորհրդի այլ լիազորությունները սահմանված են Դատական օրենսգրքով:

Սահմանադրության 175-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ *Բարձրագույն դատական խորհուրդը* համապատասխանաբար կազմում և հաստատում է դատավորների թեկնածուների, ներառյալ առաջխաղացման ենթակա թեկնածուների ցուցակները և *Հանրապետության նախագահին առաջարկում է նշանակման ենթակա, ներառյալ առաջխաղացման կարգով նշանակման ենթակա դատավորների թեկնածուներին*:

Սահմանադրության 175-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով Բարձրագույն դատական խորհրդի լիազորությունն ամրագրող դրույթները փոխկապակցված են Սահմանադրության՝ **«Դատավորների ընտրության և նշանակման կարգը»** վերտառությամբ 166-րդ հոդվածի 6-րդ մասի հետ, որի համաձայն՝ *առաջին ատյանի և վերաքննիչ դատարանների դատավորներին նշանակում է Հանրապետության նախագահը՝ Բարձրագույն դատական խորհրդի առաջարկությամբ*:

27. Սահմանադրական վերոնշյալ կարգավորումներից հետևում է, որ առաջին ատյանի և վերաքննիչ դատարանների դատավորների նշանակման գործընթացն իրականացվում է սահմանադրական երկու մարմինների՝ Բարձրագույն դատական խորհրդի և Հանրապետության նախագահի մասնակցությամբ:

28. Սահմանադրության՝ **«Հանրապետության նախագահի կարգավիճակը և գործառույթները»** վերտառությամբ 123-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հանրապետության նախագահը պետության գլուխն է: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Հանրապետության նախագահը հետևում է Սահմանադրության պահպանմանը, իսկ 4-րդ մասի համաձայն՝ Հանրապետության նախագահն իր գործառույթներն իրականացնում է Սահմանադրությամբ սահմանված լիազորությունների միջոցով:

29. Սահմանադրական դատարանը, 2020 թվականի մարտի 31-ի ՍԴՈ-1518 որոշմամբ անդրադառնալով Հանրապետության նախագահի սահմանադրաիրավական կարգավիճակի առանձնահատկություններին, արձանագրել է. «Հանրապետության նախագահը, Սահմանադրության «Իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքը» վերտառությամբ 4-րդ հոդվածի ուժով գործառութային առումով դասվելով գործադիր իշխանությանը, այդուհանդերձ, ամբողջովին դուրս դրվեց գործադիր իշխանության ինստիտուցիոնալ համակարգից, և, ի տարբերություն գործառութային առումով գործադիր իշխանությանը պատկանող այլ անկախ կամ ինքնավար

մարմինների, պետության գլուխն է և ունի այդ կարգավիճակին բնորոշ գործառնություններ և դրանցից ածանցվող լիազորություններ: Ըստ այդմ՝ Հանրապետության նախագահը՝ որպես պետության գլուխ (Սահմանադրության 123-րդ հոդվածի 1-ին մաս), **հանրությանը և պետությանն ինտեգրող, ազգային միասնությունը խորհրդանշող սահմանադրական մարմինն է:**

Ըստ էության, զերծ լինելով պետության ներքին և արտաքին քաղաքականության մշակմանը, ինչպես նաև կառավարմանը բովանդակային առումով մասնակցելու գործառնությից և չկրելով դրանց պատասխանատվությունը՝ Հանրապետության նախագահին սահմանադրորեն պատվիրակվել է **լինել անաչառ և առաջնորդվել բացառապես համապետական և համազգային շահերով** (Սահմանադրության 123-րդ հոդվածի 3-րդ մաս): Ըստ այդմ՝ Հանրապետության նախագահին սահմանադրորեն վերապահվել է **վերկուսակցական արբիտրի դեր**, որն իր լիազորությունների իրականացման ընթացքում չի կարող լինել որևէ կուսակցության անդամ (Սահմանադրության 124-րդ հոդվածի 5-րդ մաս): Միևնույն ժամանակ վերկուսակցական (ապակուսակցական) արբիտրի դերը, որը հիմնված է թե՛ Հանրապետության նախագահի՝ որպես պետության գլխի, ինտեգրող գործառնությի, թե՛ նրա անաչառության վրա, ենթադրում է **Սահմանադրության պահպանմանը հետևելու գործառնությի իրականացում**, ինչը ևս ուղղակիորեն ամրագրված է Սահմանադրությամբ (Սահմանադրության 123-րդ հոդվածի 2-րդ մաս): Բացի դրանից, Սահմանադրության պահպանմանը հետևելու գործառնությի, իր հերթին, ենթադրում է, որ **Հանրապետության նախագահը պետք է ունենա զսպումների և հակակշիռների միջոցով այդ գործառնության արդյունավետորեն իրականացնելու հնարավորություն**, ուստի նա պետք է ոչ միայն կարողանա կատարված փաստերից հետո գնահատել ենթադրյալ հակասահմանադրական գործողությունները (անգործությունը) կամ որոշումները, այլև պետք է կարողանա, նախևառաջ, **կանխել դրանց ի հայտ գալը՝ օժտված լինելով կանխարգելիչ սահմանադրական վերահսկողության որոշակի լիազորություններով**» (4.1-ին կետ):

30. Սահմանադրական դատարանը, 2020 թվականի մարտի 31-ի ՍԴՈ-1518 որոշմամբ անդրադառնալով Հանրապետության նախագահի լիազորություններին ու դրանց դասակարգմանը, արձանագրել է. «(...) Հանրապետության նախագահի լիազորությունները, կախված սահմանադրորեն կանխորոշված նպատակներից, իրենց բնույթով ինչպես **պարտադիր են**, այնպես էլ **հայեցողական**: Հանրապետության նախագահի պարտադիր և հայեցողական լիազորությունները ինքնուրույն կամ ոչ ինքնուրույն (կաշկանդված) են: Ոչ ինքնուրույն լիազորություններն իրականացվում են կա՛մ Սահմանադրությամբ սահմանված նախադրյալների առկայությամբ, կա՛մ սահմանադրական այլ մարմնի (իրավասու սուբյեկտի) լիազորությունների իրականացման հիմքով» (4.2-րդ կետ):

31. Սահմանադրական դատարանը փաստում է, որ **Հանրապետության նախագահի՝ Սահմանադրության պահպանմանը հետևելու սահմանադրական գործառնությի արդյունավետ իրացման շրջանակներում կենսական նշանակություն ունի կանխարգելիչ սահմանադրական վերահսկողություն նախաձեռնելու լիազորությունը նախադրեսելը՝** Հանրապետության նախագահին այնպիսի վերահսկողական լիազորություններ վերապահելը, որոնք թույլ կտան **բովանդակային առումով վերահսկողություն իրականացնելու միջոցով ապահովել իշխանությունների բաժանման և հավասարակշռման սահմանադրական կարգավորումների արդյունավետ իրացումը՝ Սահմանադրության 4-րդ հոդվածով ամրագրված սկզբունքին համահունչ:** Սահմա-

նադրության՝ **«Հանրապետության նախագահի հրամանագրերը և կարգադրությունները»** վերտառությամբ 139-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Հանրապետության նախագահը Սահմանադրության 166-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված դեպքում կարող է համապատասխան ակտը եռօրյա ժամկետում իր առարկություններով վերադարձնել առաջարկություն ներկայացնող մարմին: Եթե իրավասու մարմինը չի ընդունում այդ առարկությունը, ապա Հանրապետության նախագահը ստորագրում է համապատասխան ակտը կամ դիմում է Սահմանադրական դատարան: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե Հանրապետության նախագահը չի կատարում Սահմանադրության 139-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջները, ապա համապատասխան ակտն ուժի մեջ է մտնում իրավունքի ուժով:

32. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Սահմանադրության 139-րդ հոդվածի 2-րդ մասով Հանրապետության նախագահին վերապահված է **կանխարգելիչ սահմանադրական վերահսկողություն նախաձեռնելու** լիազորություն: **Իրավասու մարմնի առաջարկության սահմանադրականությունը հնարավոր է գնահատել բացառապես Հանրապետության նախագահի՝ Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետին համապատասխան՝ Սահմանադրական դատարան դիմելու դեպքում:**

33. Սահմանադրության 166-րդ հոդվածի 6-րդ մասով ամրագրված կարգավորման ուժով՝ Հանրապետության նախագահը նշանակում է առաջին արյանի դատարանների դատավորներին՝ Բարձրագույն դատական խորհրդի առաջարկությամբ, իսկ Սահմանադրության 139-րդ հոդվածի 2-րդ մասով Հանրապետության նախագահին վերապահված է լիազորություն՝ համապատասխան ակտը եռօրյա ժամկետում իր առարկություններով վերադարձնել առաջարկություն ներկայացնող մարմին, և եթե իրավասու մարմինը չի ընդունում այդ առարկությունը, ապա Հանրապետության նախագահն ունի այլընտրանք՝ (1) ստորագրելու համապատասխան ակտը կամ (2) դիմելու Սահմանադրական դատարան:

Սահմանադրության 139-րդ հոդվածի 3-րդ մասին համապատասխան՝ եթե Հանրապետության նախագահը չի կատարում նույն հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջները, այսինքն՝ ձեռնպահ է մնում Սահմանադրության 139-րդ հոդվածի 2-րդ մասում նշված որևէ գործողությունից, ապա համապատասխան ակտն ուժի մեջ է մտնում իրավունքի ուժով:

34. Դատական օրենսգրքի՝ **«Դատավորի նշանակման կարգը»** վերտառությամբ 117-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Հանրապետության նախագահի կողմից Բարձրագույն դատական խորհրդի առաջարկությունն առարկություններով վերադարձվելու դեպքում Բարձրագույն դատական խորհուրդը պարտավոր է նիստ հրավիրել: Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ Բարձրագույն դատական խորհուրդը Հանրապետության նախագահի առարկությունը չընդունելու հարցը քննարկում և որոշում է կայացնում խորհրդակցական սենյակում՝ բաց քվեարկությամբ: Եթե Բարձրագույն դատական խորհուրդը չի ընդունում Հանրապետության նախագահի առարկությունը, ապա Հանրապետության նախագահը եռօրյա ժամկետում ընդունում է ներկայացված թեկնածուին նշանակելու վերաբերյալ հրամանագիր կամ դիմում է Սահմանադրական դատարան:

35. Բարձրագույն դատական խորհրդի՝ 2020 թվականի հոկտեմբերի 22-ի՝ «Հայաստանի Հանրապետության բարձրագույն դատական խորհրդի աշխատակարգը

հաստատելու մասին» թիվ ԲԴԽ-68-Ն-15 որոշման (այսուհետ՝ Որոշում) 1-ին հավելվածի 53-րդ կետի համաձայն՝ Բարձրագույն դատական խորհրդի որոշումներն ընդունվում են բաց քվեարկությամբ՝ բացառությամբ Դատական օրենսգրքով սահմանված դեպքերի: Բաց քվեարկությունն իրականացվում է ձեռք բարձրացնելու միջոցով: Բաց քվեարկության ընթացքում ձայները հաշվում է նիստը նախագահողը:

Որոշման 1-ին հավելվածի 55-րդ կետի համաձայն՝ *Բարձրագույն դատական խորհրդի որոշումները ձևակերպվում են առանձին ակտի ձևով՝ բացառությամբ արձանագրային որոշումների¹, որոնք արտացոլվում են խորհրդի նիստի արձանագրության մեջ:*

Որոշման 1-ին հավելվածի 56-րդ կետի համաձայն՝ առանձին ակտի ձևով կազմված որոշումները ստորագրում է նիստը նախագահողը:

Որոշման 1-ին հավելվածի 73-րդ կետի համաձայն՝ Հանրապետության նախագահի կողմից Բարձրագույն դատական խորհրդի՝ դատավորի թափուր տեղի համար նշանակելու վերաբերյալ առաջարկությունն առարկություններով վերադարձվելու դեպքում խորհուրդը 5-օրյա ժամկետում նիստ է հրավիրում՝ Հանրապետության նախագահի առարկությունը քննարկելու օրակարգով և բաց քվեարկությամբ կայացնում որոշում:

36. Վերոնշյալ իրավակարգավորումներից հետևում է, որ *Բարձրագույն դատական խորհրդի համապատասխան առաջարկությունը Հանրապետության նախագահի կողմից առարկություններով վերադարձվելու դեպքում խորհուրդը սահմանված ժամկետում պետք է նիստ հրավիրի, որը պետք է եզրափակվի համապատասխան առարկության փաստական և իրավական հիմքերի վերաբերյալ հիմնավորված դիրքորոշումներ պարունակող որոշմամբ:*

37. Այդ առնչությամբ Պատասխանողի՝ սույն թվականի մարտի 27-ին Սահմանադրական դատարան մուտքագրված գրավոր բացատրության (թիվ ԲԴԽ-1 Ե-2262, 27 մարտի 2026 թ., Բարձրագույն դատական խորհրդի նախագահի պարտականությունները կատարող Է. Հովհաննիսյանի ստորագրությամբ) համաձայն՝ «Խորհուրդը 2026 թվականի մարտի 19-ի նիստում քննարկել է Նախագահի կողմից առարկությամբ ներկայացված նկատառումները և խորհրդակցական սենյակում՝ բաց քվեարկությամբ որոշել է Նախագահի առարկությունը չընդունել և Խորհրդի 2026 թվականի մարտի 12-ի (...) թիվ ԲԴԽ-27-Ո-24 որոշումը կրկին ներկայացնել Նախագահի քննարկմանը»:

Սույն թվականի մարտի 31-ին Սահմանադրական դատարան է մուտքագրվել Բարձրագույն դատական խորհրդի նախագահի պարտականությունները կատարող Է. Հովհաննիսյանի ստորագրությամբ 2026 թվականի մարտի 31-ի թիվ ԲԴԽ-1 Ե-2323 ի լրումն գրությունը, որով Սահմանադրական դատարանին են տրամադրվել Բարձրագույն դատական խորհրդի՝ 2026 թվականի մարտի 12-ի և 19-ի նիստերի արձանագրությունների քաղվածքները և դրանց վերաբերյալ խորհրդակցական սենյակում բաց քվեարկության արձանագրությունների պատճենները:

¹ Որոշման 1-ին հավելվածի 57-րդ կետի համաձայն՝ *արձանագրային որոշումներ են Բարձրագույն դատական խորհրդի գործունեության կազմակերպչական հարցերի վերաբերյալ որոշումները, եթե դրանք առանձին ակտի ձևով չեն ընդունվում:*

Բարձրագույն դատական խորհրդի՝ 2026 թվականի մարտի 19-ի նիստի արձանագրության քաղվածքի համաձայն՝ **«խորհուրդն արձանագրային որոշում կայացրեց՝ Հանրապետության նախագահի կողմից 2026 թվականի մարտի 16-ի գրությամբ Բարձրագույն դատական խորհրդի 2026 թվականի մարտի 12-ի (...) թիվ ԲԴԽ-27-Ո-24 որոշման վերաբերյալ ներկայացված առարկությունը չընդունել և Բարձրագույն դատական խորհրդի 2026 թվականի մարտի 12-ի թիվ ԲԴԽ-27-Ո-24 որոշումը կրկին ներկայացնել Հանրապետության նախագահի քննարկմանը»:**

Համաձայն գործի նյութերի՝ 2026 թվականի մարտի 20-ին Հանրապետության նախագահի աշխատակազմը ստացել է Բարձրագույն դատական խորհրդի նախագահի ստորագրությամբ 2026 թվականի մարտի 19-ի թիվ ԲԴԽ-1 ԴԴ/869-26 **գրությունը**, որով Հանրապետության նախագահի քննարկմանն է կրկին ներկայացվել Բարձրագույն դատական խորհրդի՝ 2026 թվականի մարտի 12-ի թիվ ԲԴԽ-27-Ո-24 որոշումը:

38. Անդրադառնալով Բարձրագույն դատական խորհրդի համապատասխան առաջարկության պատճառաբանվածության հարցին՝ Սահմանադրական դատարանը փաստում է.

Դատական օրենսգրքի՝ **«Հարցազրույցի անցկացումը»** վերտառությամբ 108-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ դատավորների թեկնածուների հավակնորդների ցուցակը կազմելու համար քվեարկությունն իրականացնելիս Բարձրագույն դատական խորհրդի անդամները հաշվի են առնում որակավորման գրավոր քննության և հարցազրույցի արդյունքները և հավակնորդի վերաբերյալ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի տրամադրած՝ բարեվարքության վերաբերյալ խորհրդատվական եզրակացությունը:

«Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի՝ **«Հանձնաժողովի գործառույթները»** վերտառությամբ 23-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովի գործառույթներից է օրենքով սահմանված դեպքերում ու կարգով դատավորների թեկնածուների հավակնորդների բարեվարքության վերաբերյալ խորհրդատվական եզրակացություններ ներկայացնելը, որոնք ենթակա չեն հրապարակման:

Վերոնշյալ իրավակարգավորումների համակարգային մեկնաբանման արդյունքներով Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ դատավորների թեկնածուների հավակնորդների բարեվարքության վերաբերյալ **Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից տրամադրված եզրակացությունն ունի խորհրդատվական բնույթ**, ինչը նշանակում է, որ թեև վերջինս չի կաշկանդում Բարձրագույն դատական խորհրդին համապատասխան որոշում(ներ) կայացնելիս, սակայն **հաշվի է առնվում** որակավորման գրավոր քննության և հարցազրույցի արդյունքների հետ միասին՝ *համակցության մեջ*: Մասնավորապես՝ դատավորի թեկնածուի հավակնորդի բարեվարքության վերաբերյալ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից տրամադրված *համապատասխան եզրակացությունը*, ինքնին, արգելք չէ դատավորի թեկնածությունն առաջարկելու համար, *սակայն հաշվի առնելով, որ առաջին աստիճանի դատարանի դատավորի նշանակման գործընթացին (լայն առումով), Բարձրագույն դատական խորհրդից բացի, մասնակցում է նաև Հանրապետության նախագահը, վերջինիս Սահմանադրության 166-րդ հոդվածի 6-րդ մասով ամրագրված լիազորության պատշաճ իրականացման համար անհրաժեշտ է համապատասխան հիմքերի առկայություն, տվյալ դեպքում՝ դատավորի թեկնածուի հավակնորդի*

բարեվարքության վերաբերյալ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից համապատասխան եզրակացության առկայության պայմաններում՝ Բարձրագույն դատական խորհրդի կողմից դատավորի թեկնածությունն առաջարկելու հիմքում ընկած պատճառաբանված որոշման առկայությունը:

39. Սահմանադրական դատարանը, 2023 թվականի հունիսի 2-ի ՍԴՈ-1691 որոշմամբ անդրադառնալով Բարձրագույն դատական խորհրդի՝ Սահմանադրության 175-րդ հոդվածի 1-ին մասի 2-4-րդ կետերով ամրագրված լիազորությունների իրականացմամբ կայացված որոշումների պատճառաբանվածության հարցին, նշել է. «Սահմանադրական դատարանն ընդգծում է, որ Խորհրդի՝ Սահմանադրության 175-րդ հոդվածի 1-ին մասի 2-4-րդ կետերով նախատեսված լիազորություններն իրականացնելիս կայացվող որոշումների պատճառաբանվածության պահանջն առանձնակի կարևորվում է այդ որոշումների բողոքարկման սահմանափակման պայմաններում: Հիշյալ սահմանադրական լիազորությունների իրականացմամբ որոշումներ կայացնելիս Խորհուրդը, անշուշտ, պետք է ունենա համապատասխան որոշման պատճառաբանության խորությունը և ծավալը որոշելու հայեցողություն, որը, սակայն պետք է իրականացվի դատավորների մասնագիտական առաջխաղացման և դրա վրա ազդող որոշումների համար հիմք ծառայող չափորոշիչների հիման վրա: Նշվածը կնպաստի դատավորների, դատարանների նախագահների և Վճռաբեկ դատարանի պալատների նախագահների թեկնածուների ընտրության, դատավորների առաջխաղացման, վերջնարդյունքում՝ դատավորների, դատարանների նախագահների և Վճռաբեկ դատարանի պալատների նախագահների նշանակման/ընտրության գործընթացներում հանրային հաշվետվողականության ապահովմանը և կամայականությունների բացառմանը:

Սահմանադրական դատարանը Խորհրդի կողմից նշված լիազորությունների իրականացման շրջանակներում ընդունված և դատավորների կամ դատավորների թեկնածուների մասնագիտական առաջխաղացման վրա ազդեցություն ունեցող որոշումների պատճառաբանվածության անհրաժեշտության համարեքստում անհրաժեշտ է համարում նշել, որ Խորհրդի՝ քննության առանցքում գտնվող սահմանադրական երեք լիազորությունները վերաբերում են իրավական գործընթացների, որոնցում որոշիչ դերակատարություն ունեն նաև Հանրապետության նախագահը (Սահմանադրության 175-րդ հոդվածի 1-ին մասի 2-3-րդ կետեր) և Ազգային ժողովը (Սահմանադրության 175-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետ): Այդ երկու սահմանադրական մարմինների որոշումների համար Խորհրդի որոշումներում պատճառաբանությունն անհրաժեշտ է տեղեկացված որոշում կայացնելու համար, քանի որ, թեպետ այս մարմինները սահմանափակված չեն ներկայացված դատավորների կամ թեկնածուների ընտրության հարցերի համար անհրաժեշտ այլ թույլատրելի աղբյուրներից տեղեկատվություն ստանալ, Խորհրդի հեղինակավոր դիրքորոշումը չի կարող փոխարինվել այլ մարմինների կողմից տրամադրված պատճառաբանություններով:

Ավելին, Սահմանադրական դատարանը սույն գործի շրջանակներում հատուկ շեշտադրում է Հանրապետության նախագահի՝ Սահմանադրության 139-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված՝ համապատասխան ակտն առարկություններով Խորհրդին վերադարձնելու և այդ առարկությունները Խորհրդի կողմից չընդունվելու դեպքում Սահմանադրական դատարանի դիմելու լիազորության արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ պայմաններ ստեղծելու հնարավորությունը, որն առաջնահերթությամբ Խորհրդի որոշման համար հիմք ծառայած պատճառաբանությունների

առկայությունն է: Այս կապակցությամբ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Խորհրդի հիշյալ որոշումների պատճառաբանվածությունը Հանրապետության նախագահի համար Խորհրդի որոշման առնչությամբ Սահմանադրական դատարան դիմելու և նման դիմումի անհրաժեշտության գնահատականի համար հիմք է (...):

Մյուս կողմից՝ օբյեկտիվ չափորոշիչների հիման վրա խնդրո առարկա լիազորությունների իրականացման արդյունքում Խորհրդի որոշումների պատճառաբանվածությունը կոչված է համոզելու, որ դատավորի կամ թեկնածուի մասնագիտական առաջխաղացման վերաբերյալ կայացված որոշման հիմքում ընկած են ոչ թե անհատական կամ խմբային մոտեցումներ ու շահեր կամ տվյալ դատավորի կամ թեկնածուի անձի նկատմամբ սուբյեկտիվ և քողարկված վերաբերմունքը, այլ՝ Խորհրդի սահմանադրական առաքելության շրջանակին համատեղելի նպատակային նկատառումներ (*տես՝ mutatis mutandis, 2022 թվականի փետրվարի 1-ի ՍԴՈ-1628 որոշում, կետ 5.3*)»:

40. Վերահաստատելով Սահմանադրական դատարանի վերոնշյալ որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները՝ Սահմանադրական դատարանը փաստում է, որ դատավորի թեկնածուի հավակնորդի բարեվարքության վերաբերյալ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից տրամադրված համապատասխան եզրակացության առկայության պայմաններում Բարձրագույն դատական խորհրդի կողմից Հանրապետության նախագահին ներկայացվող համապատասխան առաջարկության պատճառաբանվածությունն ու հիմնավորվածությունն անհրաժեշտ են.

ա. սահմանադրական մարմնի կողմից հիմնավոր որոշում կայացնելու համար,

բ. դատավորի նշանակման գործընթացն առավել թափանցիկ դարձնելու, դատավորի բարձր կարգավիճակին և առաքելությանը համապատասխան՝ վերջինիս և դատական իշխանության հեղինակությունն ապահովելու և, ըստ այդմ՝ արդարադատության համակարգի նկատմամբ հանրային վստահությունն ամրապնդելու համար,

գ. Հանրապետության նախագահի առարկությունները Բարձրագույն դատական խորհրդի կողմից չընդունվելու դեպքում Սահմանադրական դատարան դիմելու լիազորության արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ պայմաններ ստեղծելու համար:

41. Դատավորի թեկնածուի հավակնորդի բարեվարքության վերաբերյալ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի համապատասխան եզրակացության առկայության պայմաններում Բարձրագույն դատական խորհրդի համապատասխան որոշմամբ ներկայացվող առաջարկությունը պետք է պարունակի ոչ միայն իրավական և փաստական հիմքեր, այլև *որակավորման գրավոր քննության և հարցազրույցի արդյունքների հետ* համակցության մեջ վերոնշյալ եզրակացությանը *նվազ նշանակություն տալու, դրանով իսկ՝ այդ եզրակացությամբ վերհանված փաստերը հաղթահարելու* վերաբերյալ *հիմնավորումներն ու պատճառաբանությունները*, իսկ ներկայացված առաջարկությունը Հանրապետության նախագահի կողմից առարկությամբ վերադարձնելու պայմաններում այդ առարկությունը պետք է հաղթահարվի դրա փաստական և իրավական հիմքերի վերաբերյալ **Բարձրագույն դատական խորհրդի փաստարկված դիրքորոշումների համադրված վերլուծություն բովանդակող համապատասխան որոշմամբ:**

42. Պատճառաբանված որոշումն ինչպես իրավասու մարմիններին, այնպես էլ անաչառ դիտորդին պետք է հնարավորություն ընձեռի՝ վստահելու Բարձրագույն

դատական խորհրդի առաջարկության լեգիտիմությանը՝ հիմք ընդունելով սահմանադրահեն այն գաղափարը, որ դատավորի նշանակման գործընթացում իրավասու մարմինների միջև առաջ եկած հարցերը չստվերեն դատավորի անբիծ հեղինակությունը, պատիվն ու արժանապատվությունը՝ դրանով իսկ հանգեցնելով տվյալ դատավորի և, ըստ այդմ՝ դատական իշխանության նկատմամբ հանրային վստահության նվազեցմանը: Հանրության շրջանում պետք է համոզմունք ձևավորվի, որ դատավորի թեկնածուն արժանի է դատավորի բարձր կարգավիճակին և համապատասխան առաքելությունը ստանձնելուն. հակառակ մոտեցման պայմաններում կստվերվի արդարադատության լեգիտիմությունը:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 167-րդ հոդվածի 1-ին մասով, 168-րդ հոդվածով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-5-րդ մասերով, ինչպես նաև հիմք ընդունելով Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 86-րդ հոդվածները՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**:

1. Բարձրագույն դատական խորհրդի՝ 2026 թվականի մարտի 12-ի թիվ ԲԴԽ-27-Ո-24 որոշմամբ Հանրապետության նախագահին ներկայացված առաջարկությունը ճանաչել Սահմանադրության 175-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետին հակասող:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Ա. ԴԻԼԱՆՅԱՆ

1 ապրիլի 2026 թվականի
ՍԴՈ-1823



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 3-ԻՆ ՍԵՆ ԴԵՆԻՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ՖՈՒՏԲՈԼԱՅԻՆ
ԽԱՂԵՐԻ ԵՎ ՄԱՐԶԱԿԱՆ ԱՅԼ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ,
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՄՈՏԵՑՄԱՆ
ՄԱՍԻՆ» ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՐԴԻ ԿՈՆՎԵՆՑԻԱՅՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒ-
ԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

21 ապրիլի 2026 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով.

նախագահող՝
դատավորներ՝

Արման Դիլանյանի,
Արտակ Զեյնալյանի,
Դավիթ Խաչատուրյանի,
Երվանդ Խունդկարյանի,
Հովակիմ Հովակիմյանի,
Էդգար Շաթիրյանի,
Սեդա Սաֆարյանի,
Արթուր Վաղարշյանի (զեկուցող),
Վլադիմիր Վարդանյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

Կառավարության ներկայացուցիչ՝

Կրթության, գիտության, մշակույթի և
սպորտի նախարարի տեղակալ Արթուր
Մարտիրոսյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի, 40 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2016 թվականի հուլիսի 3-ին ՍԵՆ ԴԵՆԻՈՒՄ ստորագրված «Ֆուտբոլային խաղերի և մարզական այլ միջոցառումների ժամանակ ապահովության, անվտանգության և սպասարկման խնդիրներին միասնական մոտեցման մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիայում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Կառավարությունն իր՝ 2026 թվականի փետրվարի 12-ի N 129-Ա որոշմամբ հավանություն է տվել 2016 թվականի հուլիսի 3-ին Սեն Դենիում ստորագրված՝ «Ֆուտբոլային խաղերի և մարզական այլ միջոցառումների ժամանակ ապահովության, անվտանգության և սպասարկման խնդիրներին միասնական մոտեցման մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիան վավերացնելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ Կառավարության օրենսդրական նախաձեռնությանը և որոշել է դրանում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու նպատակով դիմել Սահմանադրական դատարան:

Գործի քննության առիթը Կառավարության՝ 2026 թվականի փետրվարի 13-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով վերոնշյալ Կոնվենցիան, հետազոտելով սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. «Ֆուտբոլային խաղերի և մարզական այլ միջոցառումների ժամանակ ապահովության, անվտանգության և սպասարկման խնդիրներին միասնական մոտեցման մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիան (այսուհետ՝ Կոնվենցիա) ստորագրման համար բացվել է 2016 թվականի հուլիսի 3-ին:

Հայաստանի Հանրապետության կողմից Կոնվենցիան ստորագրվել է 2018 թվականի հունվարի 24-ին՝ հայտարարությամբ՝ Ադրբեյջանի Հանրապետության կողմից կատարված հայտարարության կապակցությամբ:

Քննության առարկա Կոնվենցիայի նպատակը ֆուտբոլային խաղերի և այլ մարզական միջոցառումների ժամանակ ապահով, անվտանգ և հյուրընկալ միջավայր ապահովելն է (հոդված 2):

Սույն Կոնվենցիայի ընդունմանը նախորդել է 1985 թվականի օգոստոսի 19-ին Ստրասբուրգում ստորագրության համար բացված «Մարզական միջոցառումների և հատկապես ֆուտբոլային խաղերի ժամանակ հանդիսականների կողմից բռնության և վատ վարքագծի մասին» Կոնվենցիայի ընդունումը (թիվ 120 կոնվենցիա): Վերջինիս սահմանադրականությանը ՀՀ Սահմանադրական դատարանն անդրադարձել է 2001 թվականի հունիսի 5-ի ՍԴԴ-302 որոշմամբ, իսկ Ազգային ժողովն այն վավերացրել է 2004 թվականի փետրվարի 18-ի Ն-069-3 որոշմամբ¹:

Կոնվենցիան բաղկացած է նախաբանից և 22 հոդվածներից: Կոնվենցիան ուժի մեջ է մտնում այն օրվանից հետո մեկամսյա ժամկետի ավարտին հաջորդող ամսվա առաջին օրը, երբ Եվրոպայի խորհրդի երեք անդամ պետություններ, 16-րդ հոդվածին

¹ Սահմանադրական դատարանի և Ազգային ժողովի նշված որոշումներում ԵԴԾ թիվ 120 կոնվենցիան /Convention on Spectator Violence and Misbehaviour at Sports Events, in particular Football Matches/ նշելու համար օգտագործվել է՝ «Մարզական միջոցառումների, մասնավորապես ֆուտբոլային խաղերի ժամանակ հանդիսատեսի կողմից ցուցաբերված անկարգությունների մասին» հայերեն վերտառությունը: Ներկայումս Սահմանադրական դատարան ներկայացված «Ֆուտբոլային խաղերի և մարզական այլ միջոցառումների ժամանակ ապահովության, անվտանգության և սպասարկման խնդիրներին միասնական մոտեցման մասին» կոնվենցիայի նախաբանի հայերեն թարգմանությունում նույն կոնվենցիայի վերտառությունը բնօրինակից հայերեն է թարգմանվել «Մարզական միջոցառումների և հատկապես ֆուտբոլային խաղերի ժամանակ հանդիսականների կողմից բռնության և վատ վարքագծի մասին» կոնվենցիա:

համապատասխան, հայտնած կլինեն Կոնվենցիայով սահմանված պարտավորություններն ստանձնելու վերաբերյալ իրենց համաձայնությունը (հոդված 17):

2. Կոնվենցիայով Հայաստանի Հանրապետությունը՝ փոխադարձության հիման վրա, ստանձնում է հետևյալ պարտավորությունները.

2.1. ձեռնարկել անհրաժեշտ քայլեր՝ Կոնվենցիայի՝ մասնագիտացված ֆուտբոլային ակումբների ու ազգային հավաքականների կողմից ՀՀ տարածքում անցկացվող ֆուտբոլային խաղերի ու մրցաշարերի վերաբերյալ դրույթները կիրարկելու նպատակով (հոդված 1, պարբերություն 1),

2.2. ֆուտբոլային խաղերի և մարզական այլ միջոցառումների ժամանակ ապահով, անվտանգ և հյուրընկալ միջավայր ապահովելու նպատակով՝

2.2.1. ընդունել ապահովությանը, անվտանգությանը և սպասարկմանն ուղղված միասնական, համալիր և հավասարակշռված մոտեցում՝ հիմնված տեղական, ազգային և միջազգային արդյունավետ գործընկերության ու համագործակցության մթնոլորտի վրա (հոդված 2, պարբերություն «ա»),

2.2.2. ապահովել, որ պետական ու մասնավոր գործակալությունները և մյուս շահագրգիռ կողմերն ընդունեն, որ ապահովությունը, անվտանգությունը և սպասարկման իրականացումը չեն կարող դիտարկվել առանձին, և դրանցից յուրաքանչյուրը կարող է անմիջական ազդեցություն ունենալ մյուս երկու բաղադրիչների իրագործման վրա (հոդված 2, պարբերություն «բ»),

2.2.3. հաշվի առնել ապահովության, անվտանգության և սպասարկման միասնական մոտեցման մշակման լավագույն գործելակերպը (հոդված 2, պարբերություն «գ»),

2.3. ապահովել, որ ազգային և տեղական մակարդակում ապահովության, անվտանգության և սպասարկման համալիր միասնական մոտեցման մշակման և իրականացման նպատակով սահմանվեն համակարգմանն ուղղված ազգային ու տեղական կարգավորումներ (հոդված 4, պարբերություն 1),

2.4. ապահովել ապահովության, անվտանգության և սպասարկման հետ կապված ռիսկերի հայտնաբերման, վերլուծության և գնահատման, ինչպես նաև ռիսկերի գնահատման վերաբերյալ թարմացված տեղեկությունների փոխանակումը հնարավոր դարձնելու նպատակով համակարգմանն ուղղված կարգավորումների սահմանումը (հոդված 4, պարբերություն 2),

2.5. ապահովել, որ համակարգմանն ուղղված կարգավորումներում ներգրավված լինեն միջոցառման հետ կապված ապահովության, անվտանգության և սպասարկման հարցերի համար պատասխանատու բոլոր կարևոր պետական և մասնավոր մարմիններն ինչպես միջոցառման անցկացման վայրում, այնպես էլ դրանից դուրս (հոդված 4, պարբերություն 3),

2.6. ապահովել, որ համակարգմանն ուղղված կարգավորումներում լիարժեքորեն հաշվի առնվեն Կոնվենցիայով սահմանված՝ ապահովության, անվտանգության և սպասարկման սկզբունքները, և որ մշակվեն, պարբերաբար գնահատվեն ու բարելավվեն ազգային և տեղական ռազմավարությունները՝ հաշվի առնելով ազգային և միջազգային փորձն ու լավագույն գործելակերպը (հոդված 4, պարբերություն 4),

2.7. ապահովել, որ ազգային իրավական, կարգավորիչ կամ վարչական նորմերով հստակեցվեն համապատասխան գործակալությունների համապատասխան գործա-

ռույթներն ու պարտականությունները, և որ այդ գործառույթները լինեն փոխլրացնող, հետևողական՝ միասնական մոտեցմանը և լայնորեն ընկալվեն ռազմավարական ու ընթացիկ գործունեության մակարդակներում (հոդված 4, պարբերություն 5),

2.8. ապահովել, որ ազգային իրավական, կարգավորիչ կամ վարչական նորմերով միջոցառումների կազմակերպիչներից պահանջվի մասնակիցների և հանդիսականների համար ապահով ու անվտանգ միջավայր ապահովել՝ խորհրդակցելով համագործակից գործակալությունների հետ (հոդված 5, պարբերություն 1),

2.9. ապահովել, որ իրավասու պետական գերատեսչությունները սահմանեն մարզադաշտերի լիցենզավորման ընթացակարգերի, հավաստագրման կարգավորումների և, ընդհանուր առմամբ, անվտանգության կանոնների արդյունավետությունը երաշխավորող կանոններ կամ կարգավորումներ և ապահովեն դրանց կիրառումը, մոնիթորինգն ու կատարումը (հոդված 5, պարբերություն 2),

2.10. պահանջել համապատասխան գործակալություններից ապահովել, որ մարզադաշտերի նախագիծը, ենթակառուցվածքները և դրանց հետ կապված՝ մարդկանց մեծ խմբերի կառավարմանն ուղղված կարգավորումները համապատասխանեն ազգային և միջազգային չափանիշներին ու լավագույն գործելակերպին (հոդված 5, պարբերություն 3),

2.11. խրախուսել համապատասխան գործակալություններին մարզադաշտերում ստեղծել հասարակության բոլոր հատվածների, այդ թվում՝ երեխաների, մեծահասակների և հաշմանդամություն ունեցող անձանց համար ներառական ու հյուրընկալ միջավայր և մասնավորապես՝ ապահովել համապատասխան սանիտարահիգիենիկ ու սննդի սպասարկման հարմարություններ և միջոցառումը դիտելու լավ պայմաններ բոլոր հանդիսականների համար (հոդված 5, պարբերություն 4),

2.12. ապահովել, որ մարզադաշտերի շահագործման կարգավորումները լինեն համապարփակ, նախատեսեն ոստիկանության, փրկարար ծառայությունների և գործընկեր այլ գործակալությունների հետ արդյունավետ փոխգործակցություն և ներառեն մարդկանց մեծ խմբերի կառավարման և դրա հետ կապված ապահովության ու անվտանգության ռիսկերի վրա հնարավոր ազդեցություն ունեցող խնդիրների լուծման հստակ քաղաքականություն և ընթացակարգեր, մասնավորապես՝ հրատեխնիկայի օգտագործում, ցանկացած բռնի և այլ արգելված վարքագիծ և ցանկացած ռասայական կամ այլ խտրական վարքագիծ (հոդված 5, պարբերություն 5),

2.13. պահանջել համապատասխան գործակալություններից ապահովել, որ ֆուտբոլային խաղերը և մարզական մյուս միջոցառումներն ապահով, անվտանգ ու հյուրընկալ դարձնելու գործում ներգրավված պետական կամ մասնավոր հատվածների ամբողջ անձնակազմն իր գործառույթներն արդյունավետորեն և պատշաճորեն կատարելու համար ունենա համապատասխան միջոցներ և անցած լինի համապատասխան պատրաստություն (հոդված 5, պարբերություն 6),

2.14. խրախուսել ՀՀ իրավասու գործակալություններին խաղացողների, մարզիչների և մասնակցող թիմերի այլ ներկայացուցիչների համար ընդգծել անհրաժեշտությունը՝ գործելու սպորտում ընդունված այնպիսի կարևոր սկզբունքներին համապատասխան, ինչպիսիք հանդուրժողականությունը, հարգանքն ու արդար խաղն են, և ընդունելու, որ բռնի, ռասիստական կամ այլ սադրիչ վերաբերմունք հանդիսականի վարքագծի վրա կարող է ունենալ բացասական ազդեցություն (հոդված 5, պարբերություն 7),

2.15. խրախուսել հասարակական վայրերում ֆուտբոլային խաղերի և մարզական այլ միջոցառումների կազմակերպման գործում ներգրավված բոլոր մարմիններին ու շահագրգիռ կողմերին, այդ թվում՝ տեղական ինքնակառավարման մարմիններին, ոստիկանությանը, տեղական համայնքներին ու բիզնեսներին, երկրպագուների ներկայացուցիչներին, ֆուտբոլային ակումբներին ու ազգային ասոցիացիաներին, աշխատել միասին՝ հատկապես Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին պարբերության «ա» և «բ» ենթապարբերություններով ներկայացված հարցերի շուրջ (հոդված 6, պարբերություն 1),

2.16. ապահովել, որ ռիսկերը գնահատելիս և ապահովության ու անվտանգության միջոցառումներն իրագործելիս հաշվի առնվի դեպի մարզադաշտ և հետադարձ ուղևորությունը (հոդված 6, պարբերություն 2),

2.17. ապահովել չնախատեսված և արտակարգ իրավիճակների դեպքում գործողությունների համալիր ծրագրերի մշակումը և պարբերաբար իրականացվող համատեղ վարժանքների ժամանակ այդ ծրագրերի փորձարկումն ու կատարելագործումը, ինչպես նաև ազգային իրավական, կարգավորիչ կամ վարչական նորմերով հստակեցնել, թե որ գործակալությունն է պատասխանատու վարժանքների նախաձեռնման, վերահսկողության և հավաստագրման համար (հոդված 7),

2.18. խրախուսել բոլոր մարմիններին մշակել ու իրականացնել հիմնական շահագրգիռ կողմերի, այդ թվում՝ երկրպագուների ներկայացուցիչների և տեղական համայնքների հետ նախաձեռնողական ու կանոնավոր հաղորդակցության քաղաքականություն՝ հիմնվելով երկխոսության սկզբունքի վրա և գործընկերության մթնոլորտ ու դրական համագործակցություն ձևավորելու, ինչպես նաև հնարավոր խնդիրների լուծումները գտնելու նպատակով (հոդված 8, պարբերություն 1),

2.19. խրախուսել պետական և մասնավոր մարմիններին ու մյուս շահագրգիռ կողմերին, այդ թվում՝ տեղական համայնքներին և երկրպագուների ներկայացուցիչներին, նախաձեռնել ու մասնակցել սոցիալական, կրթական, հանցագործությունների կանխարգելման և այլ համայնքային համալիր նախագծերին, որոնք ուղղված են փոխադարձ հարգանք և փոխըմբռնում խթանելուն՝ հատկապես երկրպագուների, սպորտային ակումբների ու ասոցիացիաների, ինչպես նաև ապահովության և անվտանգության համար պատասխանատու գործակալությունների շրջանում (հոդված 8, պարբերություն 2),

2.20. ապահովել, որ մշակվեն, պարբերաբար գնահատվեն և կատարելագործվեն ոստիկանության ռազմավարություններ՝ հաշվի առնելով ազգային և միջազգային փորձն ու լավագույն գործելակերպը, և համապատասխանեն ապահովության, անվտանգության և սպասարկման խնդիրներին ավելի լայն, միասնական մոտեցմանը (հոդված 9, պարբերություն 1),

2.21. ապահովել, որ ոստիկանական ռազմավարություններում հաշվի առնվի լավագույն գործելակերպը, ներառյալ՝ մասնավորապես հետախուզական տեղեկությունների հավաքումը, ռիսկերի շարունակական գնահատումը, ռիսկերի վրա հիմնված տեղաբաշխումը, ռիսկերի կամ անկարգությունների տարածումը կանխարգելելուն ուղղված համաչափ միջամտությունը, երկրպագուների և համայնքի ավելի լայն հատվածների հետ արդյունավետ երկխոսությունը, հանցավոր գործունեության վերաբերյալ ապացույցների հավաքումը, ինչպես նաև հետապնդման համար

պատասխանատու իրավասու մարմինների հետ այդպիսի ապացույցների փոխանակումը (հոդված 9, պարբերություն 2),

2.22. ապահովել, որ ֆուտբոլային խաղերը և մարզական մյուս միջոցառումներն ապահով, անվտանգ և հյուրընկալ դարձնելու գործում ոստիկանությունն աշխատի կազմակերպիչների, երկրպագուների, տեղական համայնքների և այլ շահագրգիռ կողմերի հետ համագործակցությամբ (հոդված 9, պարբերություն 3),

2.23. ձեռնարկել բոլոր հնարավոր միջոցառումները՝ ուղղված անհատների և խմբերի կողմից բռնության կամ անկարգությունների դեպքերին մասնակցության կամ դրանք կազմակերպելու ռիսկի նվազեցմանը (հոդված 10, պարբերություն 1),

2.24. ազգային և միջազգային իրավունքին համապատասխան՝ ապահովել, որ գործեն ռիսկի բնույթին և վայրին համապատասխան որոշակի անձանց ներկայությունը բացառող արդյունավետ կարգավորումներ՝ բռնության կամ անկարգությունների դեպքերը կանխելու և կանխարգելելու համար (հոդված 10, պարբերություն 2),

2.25. ազգային և միջազգային իրավունքին համապատասխան՝ համագործակցել մյուս կողմերի հետ՝ նպատակ ունենալով ապահովելու, որ արտերկրում հանցագործություն կատարող անհատների նկատմամբ կիրառվեն համապատասխան պատժամիջոցներ՝ լինի դա այն երկրում, որտեղ կատարվել է հանցագործությունը, թե իրենց բնակության կամ քաղաքացիության երկրում (հոդված 10, պարբերություն 3),

2.26. անհրաժեշտության դեպքում և ազգային ու միջազգային իրավունքին համապատասխան՝ դիտարկել ֆուտբոլային խաղերի հետ կապված բռնության և (կամ) անկարգությունների դեպքերի պատճառ դարձած կամ դրանց նպաստած անհատների նկատմամբ պատժամիջոցներ կիրառելու պարտականությունը կրող դատական և վարչական մարմիններին այլ երկրում անցկացվող ֆուտբոլային միջոցառումների համար ճամփորդելու վրա սահմանափակումներ դնելու հնարավորությամբ օժտելու հարցը (հոդված 10, պարբերություն 4),

2.27. սերտորեն համագործակցել մյուս կողմերի հետ Կոնվենցիայում ընդգրկված բոլոր հարցերի, ինչպես նաև հարակից հարցերի հետ կապված՝ միջազգային իրադարձությունների ժամանակ փոխգործակցությունն առավելագույնի հասցնելու, փորձի փոխանակման և լավագույն գործելակերպի ձևավորմանը մասնակցելու նպատակով (հոդված 11, պարբերություն 1),

2.28. չխախտելով գործող ազգային, մասնավորապես՝ տարբեր ծառայությունների և մարմինների միջև լիազորությունների բաշխման վերաբերյալ դրույթները, ոստիկանության ուժերում հիմնել կամ նշանակել ֆուտբոլային ազգային տեղեկատվական կետ (ՖԱՏԿ) (հոդված 11, պարբերություն 2),

2.29. ապահովել, որ ՖԱՏԿ-ը տրամադրի ֆուտբոլային կարգուկանոնի պահպանմանն ուղղված միջոցառումների, երկրպագուների դինամիկայի և դրանց հետ կապված ապահովության ու անվտանգության ռիսկերի վերաբերյալ փորձագիտական տեղեկատվության ազգային աղբյուր (հոդված 11 պարբերություն 3),

2.30. գրավոր ծանուցել Կոնվենցիայով ստեղծված՝ Մարզական միջոցառումների ժամանակ ապահովության և անվտանգության հարցերով կոմիտեին՝ ՀՀ ՖԱՏԿ-ի անվանման և կոնտակտային տվյալների ու դրա առնչությամբ հետագա ցանկացած փոփոխության մասին (հոդված 11, պարբերություն 4),

2.31. համագործակցել միջազգային մակարդակում լավագույն գործելակերպի և կանխարգելիչ, կրթական ու տեղեկատվական նախագծերի վերաբերյալ տեղեկու-

թյունների փոխանակման և տեղական համայնքի ու երկրպագուների վրա կենտրոնացած կամ դրանց վրա հիմնված՝ ազգային և տեղական նախաձեռնություններում ներգրավված բոլոր գործակալությունների հետ գործընկերության հաստատման հարցերով (հոդված 11, պարբերություն 5),

2.32. Կոնվենցիայի պայմաններին համապատասխանելու նպատակով ՀՀ կողմից ձեռնարկված օրենսդրական և այլ միջոցառումների վերաբերյալ համապատասխան տեղեկատվությունը, լինի դա ֆուտբոլի, թե այլ մարզաձևերի հետ կապված, Եվրոպայի խորհրդի պաշտոնական լեզուներից որևէ մեկով ուղարկել Մարզական միջոցառումների ժամանակ ապահովության և անվտանգության հարցերով կոմիտե (հոդված 12):

3. Սահմանադրական դատարանը գտնում է, որ Կոնվենցիայով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները համահունչ են Սահմանադրության 13-րդ հոդվածով ամրագրված՝ միջազգային իրավունքի հիման վրա՝ բոլոր պետությունների հետ բարիդրացիական, փոխշահավետ հարաբերությունների հաստատմանն ուղղված արտաքին քաղաքականության իրականացման նպատակներին: Կոնվենցիայի նորմերը համահունչ են նաև քաղաքացիների առողջության պահպանման, սպորտի զարգացման, այլոց իրավունքների և ազատությունների պաշտպանության վերաբերյալ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության դրույթներին:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.


1. 2016 թվականի հուլիսի 3-ին Սեն Դենիում ստորագրված «Ֆուտբոլային խաղերի և մարզական այլ միջոցառումների ժամանակ ապահովության, անվտանգության և սպասարկման խնդիրներին միասնական մոտեցման մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիայում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Ա. ԴԻԼԱՆՅԱՆ

21 ապրիլի 2026 թվականի
ՍԴՈ-1824



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱ-
ԼՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԶՀԱՍՏԱՏՎԱԾ ՎԱՐԿԱՅԻՆ ԳԻԾ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԹԻՎ
CAM 1029 ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒ-
ԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

28 ապրիլի 2026 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով.

նախագահող՝
դատավորներ՝

Արման Դիլանյանի (զեկուցող),
Արտակ Զեյնալյանի,
Դավիթ Խաչատուրյանի,
Երվանդ Խունդկարյանի,
Հովակիմ Հովակիմյանի,
Էդգար Շաթիրյանի,
Սեդա Սաֆարյանի,
Արթուր Վաղարշյանի,
Վլադիմիր Վարդանյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

Կառավարության ներկայացուցիչ՝ Տարածքային կառավարման և ենթակառուց-
վածքների նախարարության ջրային կոմիտեի
նախագահ Արամազդ Ղալամքարյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-
րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական
օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի, 40 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Հայաստանի Հանրապետության
և Զարգացման ֆրանսիական գործակալության միջև չհաստատված վարկային գիծ
տրամադրելու մասին թիվ CAM 1029 շրջանակային համաձայնագրում» ամրագրված
պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու
վերաբերյալ» գործը:

Կառավարությունն իր՝ 2026 թվականի փետրվարի 19-ի N 175-Ա որոշմամբ
հավանություն է տվել «Հայաստանի Հանրապետության և Զարգացման ֆրանսիական
գործակալության միջև չհաստատված վարկային գիծ տրամադրելու մասին թիվ CAM 1029
շրջանակային համաձայնագիրը վավերացնելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ

Կառավարության օրենսդրական նախաձեռնությանը և որոշել է դրանում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու նպատակով դիմել Սահմանադրական դատարան:

Գործի քննության առիթը Կառավարության՝ 2026 թվականի փետրվարի 23-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

«Հայաստանի Հանրապետության և Զարգացման ֆրանսիական գործակալության միջև չհաստատված վարկային գիծ տրամադրելու մասին թիվ CAM 1029 շրջանակային համաձայնագրում (այսուհետ նաև՝ Շրջանակային համաձայնագիր) ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը դատաքննության նախապատրաստելու ընթացքում հայտնաբերվել են մի շարք թերություններ ինչպես համաձայնագրի անգլերեն բնօրինակ տեքստում, այնպես էլ հայերեն թարգմանված պաշտոնական տեքստում:

Վերոհիշյալ թերությունների մասով պատրաստվել և դիմողի ներկայացուցչին են ուղարկվել հայտնաբերված թերությունները վերացնելու պահանջի վերաբերյալ Սահմանադրական դատարանի նախագահի համապատասխան գրությունները:

18.04.2026 թ. Սահմանադրական դատարան է մուտքագրվել Կառավարության ներկայացուցչի գրությունը՝ կից Շրջանակային համաձայնագրի շտկված բնօրինակը և հայերեն պաշտոնական թարգմանությունը:

Ուսումնասիրելով Շրջանակային համաձայնագիրը, հետազոտելով սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. Շրջանակային համաձայնագիրը ստորագրվել է 2025 թվականի դեկտեմբերի 18-ին և 19-ին՝ ՀՀ Սյունիքի մարզում ոռոգման ենթակառուցվածքների բարելավման, ինչպես նաև «Հայաստանում ջրային ռեսուրսների և գյուղատնտեսության ոլորտի համալիր զարգացում»/WAIDA (որը ներառում է նաև Զրային և ոռոգման ծառայությունների բարելավման ծրագիրը)/WISE) ջրային ծրագրի իրականացման համար վարկային միջոցների տրամադրման նպատակով:

Շրջանակային համաձայնագրի 5.3-րդ կետի համաձայն՝ որպես իրականացնող մարմին է նշանակվել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության Զրային կոմիտեն:

2. Շրջանակային համաձայնագիրն ունի 10 հավելված. Հավելված 1. «Ծրագրի նկարագրությունը», Հավելված 2. «Սահմանումները և մեկնաբանությունը», Հավելված 3. «Նախապայմանները», Հավելված 4. «Վարկի հասանելիության ձևը», Հավելված 5. «Վարկի շրջանակներում մասհանումների ձևը», Հավելված 6. «Տեղեկություններ, որոնք կարող են հրապարակվել Ֆրանսիայի Կառավարության կայքում և Վարկատուի կայքում», Հավելված 7. «Բնապահպանական և սոցիալական այն փաստաթղթերի ոչ սպառիչ ցանկը, որոնց բացահայտումը Վարկառուն թույլատրում է ԲՄ բողոքների կառավարման մեխանիզմի ընթացակարգի շրջանակներում», Հավելված 8. «Կենսաբազմազանության վերաբերյալ տվյալների փոխանակում», Հավելված 9. «ԶՖԳ-ի բարեվարչության մասին հայտարարությունը», Հավելված 10. «Բնապահպանական և սոցիալական հանձնառությունների պլան»:

Ըստ Շրջանակային համաձայնագրի 18.10-րդ կետի՝ Շրջանակային համաձայնագիրն կից ներկայացվող հավելվածները, Գնումների ուղեցույցը և Շրջանակային

համաձայնագրի փաստաթղթի ներածական դրույթները Շրջանակային համաձայնագրի մասն են կազմում և ունեն նույն իրավաբանական ուժը, ինչպես նաև Շրջանակային համաձայնագրի շրջանակներում Վարկի հաստատումները ենթակա չեն ՀՀ խորհրդարանի (Ազգային ժողովի) կողմից վավերացման և Հայաստանի Հանրապետության անունից կստորագրվեն ՀՀ ֆինանսների նախարարի կողմից:

3. Շրջանակային համաձայնագրի 1-ին հավելվածի համաձայն՝ Ծրագրի նպատակն է ազգային մակարդակով բարելավել ջրային ռեսուրսների կառավարման կայունությունն ու արդյունավետությունը ոռոգման, խմելու ջրի մատակարարման և սանիտարական մաքրման համար՝ կլիմայի փոփոխության համատեքստում, ոռոգման ոլորտի վերականգնման հիման վրա աջակցել Սյունիքի տարածքի ներառական և համապարփակ զարգացմանը և ամրապնդել դրա դիմակայունությունը, խրախուսել գյուղական վայրերում արժանապատիվ աշխատատեղերի պահպանումը և ամրապնդել Հայաստանի պարենային անվտանգությունն ու ինքնիշխանությունը:

Ծրագիրն ունի երկու հիմնական բաղադրիչ՝

Առաջին բաղադրիչը («WISE», ազգային մակարդակով, համաֆինանսավորված Համաշխարհային բանկի առաջնորդությամբ) նվիրված է ոռոգման ենթակառուցվածքի և խմելու ջրի հասանելիության ոլորտում ներդրումներին՝ ծրագրային մոտեցման կիրառմամբ, և ոլորտի ինստիտուցիոնալ կարողությունների ամրապնդմանը:

Երկրորդ բաղադրիչը (տեղական մակարդակով)՝ փորձնական հիմունքներով, Սյունիքի մարզի ներառական և համապարփակ զարգացման համար, որը ներառում է ներդրումներ ոռոգման համակարգերի վերականգնման ու արդիականացման մեջ՝ փուլային մոտեցման կիրառմամբ, ինչպես նաև աջակցություն տեխնիկական օժանդակության և ներդրումային դրամաշնորհների ձևով՝ ջրային ռեսուրսների կառավարումը բարելավելու և դիմակայուն, կայուն և ներառական գյուղատնտեսություն զարգացնելու նպատակով:

4. Ըստ Շրջանակային համաձայնագրի 1-ին հավելվածի՝ «WAIDA» ծրագրի ընդհանուր արժեքը գնահատվում է մոտ 200 միլիոն եվրո, որը ֆինանսավորվում է հետևյալ կերպ.

«WISE» բաղադրիչում «ներդրումների» համար՝ ԶՖԳ-ից մինչև 70 միլիոն եվրո պետական երաշխավորությամբ տրամադրվող վարկի միջոցով՝ երկու տրանշով (30 միլիոն եվրո՝ 1-ին տրանշի համար, որը սույն դրամաշնորհի խնդրո առարկան է, և առավելագույնը 40 միլիոն եվրո երկրորդ տրանշի համար, որը նախատեսվում է տրամադրել 2027 թվականին), և Համաշխարհային բանկի կողմից տրամադրվող 80 միլիոն ԱՄՆ դոլար վարկի միջոցով (առաջատար) և Հայաստանի Հանրապետությունից 31 միլիոն ԱՄՆ դոլարի համարժեք ֆինանսավորում,

Սյունիքի բաղադրիչի «ներդրումների» համար՝ ԶՖԳ-ից մինչև 30 միլիոն եվրո պետական երաշխավորությամբ տրամադրվող վարկի միջոցով՝ մեկ տրանշով, որը ներառված է ներկայիս հատկացման շրջանակում,

Երկու բաղադրիչների տեխնիկական աջակցության ծրագրի համար՝ 12 միլիոն եվրո՝ պատվիրակված դրամաշնորհի միջոցով: Դրանք կլինեն Եվրոպական միության Հարևանության ներդրումային հարթակի (Հարևանության և ընդլայնման բանակցությունների գլխավոր տնօրինության (DG NEAR)) կողմից պատվիրակված միջոցներ:

ՁԳԳ-ի՝ պետական երաշխավորությամբ տրամադրվող վարկային ֆինանսավորումը՝ ընդհանուր առավելագույնը 100 միլիոն եվրոյի չափով, կտրամադրվի երեք տրանշից բաղկացած Բազմատրանշ վարկային գծի ձևով:

Այնուամենայնիվ՝ համաձայն քննության առարկա Շրջանակային համաձայնագրի 5.2-րդ կետի՝ Շրջանակային համաձայնագրով սահմանված դրույթները որևէ դեպքում չեն համարվում ՁԳԳ-ի կողմից Հայաստանի Հանրապետությանը որևէ Վարկ տրամադրելու պարտավորություն:

5. Վարկերի ընդհանուր գումարը, որը կարող է շնորհվել Շրջանակային համաձայնագրի շրջանակներում, չի կարող գերազանցել հարյուր միլիոն եվրոն (100.000.000 եվրո), Սյունիքի բաղադրիչի ֆինանսավորման համար առաջին Վարկի գումարի առավելագույն չափը կազմում է երեսուն միլիոն եվրո (30.000.000 եվրո), «WISE» բաղադրիչի ֆինանսավորման համար առաջին տրանշի համար երկրորդ Վարկի գումարի առավելագույն չափը կազմում է երեսուն միլիոն եվրո (30.000.000 եվրո), «WISE» բաղադրիչի ֆինանսավորման համար երկրորդ տրանշի համար երրորդ Վարկի առավելագույն գումարի չափը կազմում է քառասուն միլիոն եվրո (40.000.000 եվրո), իսկ Շրջանակային համաձայնագրի շրջանակներում տրամադրվող Վարկերի թիվը չի կարող գերազանցել երեքը (3):

6. Համաձայն Շրջանակային համաձայնագրի 20.1-ին կետի՝ Շրջանակային համաձայնագիրը կարգավորվում է Ֆրանսիայի իրավունքով, իսկ 20.2-րդ կետի համաձայն՝ Շրջանակային համաձայնագրից բխող կամ դրա հետ կապված ցանկացած վեճ ուղարկվում է արբիտրաժի և վերջնականապես կարգավորվում է դրա միջոցով՝ արբիտրաժային վարույթն սկսվելու օրվա դրությամբ կիրառելի՝ Առևտրի միջազգային պալատի հաշտարարության և արբիտրաժային կանոնների համաձայն, այդ Կանոններին համապատասխան նշանակված մեկ կամ մի քանի արբիտրների կողմից: Արբիտրաժի վայրը Փարիզն է, իսկ արբիտրաժի լեզուն՝ անգլերենը:

Շրջանակային համաձայնագրի 20.2-րդ կետով նաև սահմանվում է, որ Կողմերը բացահայտ համաձայնում են, որ Շրջանակային համաձայնագիրն Ուժի մեջ մտնելու ամսաթվից Հայաստանի Հանրապետությունն անդառնալիորեն հրաժարվում է անձեռնմխելիության բոլոր իրավունքներից՝ կապված իրավազորության կամ կատարման հետ, որոնց վրա նա հակառակ դեպքում կարող էր հիմնվել:

7. Շրջանակային համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է հետևյալ պարտավորությունները.

7.1. ՁԳԳ-ի կողմից Ֆինանսական պայմանների վերաբերյալ առաջարկ ստանալու դեպքում ընդունել այդ ֆինանսական պայմանները՝ Ֆինանսական պայմանների վերաբերյալ առաջարկի վրա դնելով ստորագրությունն ու նշելով ամսաթիվը (կետ 4.1, պարբերություն 3),

7.2. Վարկի շրջանակներում փոխառված ամբողջ գումարն օգտագործել բացառապես Ծրագրի բաղադրիչի Թույլատրելի ծախսերը ֆինանսավորելու համար՝ առանց Հարկերի, Ծրագրի բաղադրիչի նկարագրությանը և Վարկի հաստատման հավելվածում ներկայացված Ֆինանսավորման պլանին համապատասխան (կետ 5.3, պարբերություն 1),

7.3. Ստորագրման ամսաթվից ոչ ուշ Կարկատուին տրամադրել Շրջանակային համաձայնագրի 3-Ա հավելվածի (*Նախապայմանները*) I մասով (*Շրջանակային համաձայնագիրն ստորագրելու նախապայմանները*) սահմանված բոլոր փաստաթղթերը՝ Կարկատուին բավարարող ձևով և բովանդակությամբ (կետ 5.5, (ա)),

7.4. Կարկ տրամադրելու վերաբերյալ հայտ ներկայացվելուց հետո և Կարկի հաստատման ստորագրման ամսաթվին հաստատել, որ Շրջանակային համաձայնագրի 13-րդ կետում (*Շրջանակային համաձայնագրի և յուրաքանչյուր Կարկի շրջանակներում արվող հավաստիացումները և երաշխիքները*) սահմանված բոլոր հավաստիացումները ճշգրիտ են (կետ 5.5, (գ)),

7.5. Մասհանման հայտ չներկայացնել Կարկատուին՝ Շրջանակային համաձայնագրի 5.5 (դ) կետում սահմանված դեպքերում (կետ 5.5 (դ)),

7.6. երաշխավորել, որ Իրականացնող մարմինը Մասհանման իր հայտերը միաժամանակ կուղարկի ինչպես ԶՖԳ-ին, այնպես էլ Համաշխարհային բանկին, և կապահովի, որ հայցվող գումարները հաշվարկվեն «WISE» բաղադրիչի ֆինանսավորման համար նախատեսված Կարկի ֆինանսավորման մասով յուրաքանչյուր Համաֆինանսավորողի բաժնի համամասնության հիմքով (իդում՝ 1-ին ավելվածի (Ծրագրի նկարագրությունը) «Արժեքը և ֆինանսավորումը» բաժնին) (կետ 5.5, (գ)(i)),

7.7. երաշխավորել, որ Իրականացնող մարմինը Համաֆինանսավորողներին (ԶՖԳ և Համաշխարհային բանկ) կտրամադրի համապատասխան փաստաթղթեր՝ կապված նրանց համապատասխան ֆինանսավորման համաձայնագրերի հետ, և յուրաքանչյուր Մասհանման հայտի համար պատճենը կուղարկի մյուս Համաֆինանսավորողին (կետ 5.5, (գ)(ii)),

7.8. ապահովել, որ Իրականացնող մարմինը տեղեկացվի, որ յուրաքանչյուր հատկացումից առաջ յուրաքանչյուր Համաֆինանսավորող մյուսին էլեկտրոնային փոստով հաստատի, որ իր վարկային համաձայնագրով սահմանված նախապայմանները կատարվել են, և որ ոչինչ չի խոչընդոտում հատկացման կատարումը (կետ 5.5, (գ)(iii)),

7.9. ապահովել Շրջանակային համաձայնագրի 6.2-րդ կետով սահմանված մասհանման հայտին ներկայացվող պահանջների կատարումը (կետ 6.2),

7.10. ապահովել, որ Իրականացնող մարմինը բացի և վարի հաշիվ(ներ) յուրաքանչյուր Ծրագրի բաղադրիչի անվանմամբ (**Ծրագրի բաղադրիչի հաշիվ**), Հայաստանի կենտրոնական բանկում (**Հաշվի բանկ**)՝ միայն Մասհանման միջոցների ստացման և յուրաքանչյուր Ծրագրի բաղադրիչի Թույլատրելի ծախսերի վճարման նպատակով (կետ 6.4.1, պարբերություն 1),

7.11. ապահովել, որ Իրականացնող մարմինը հրաժարվի և ապահովի, որ Հաշվի բանկը հրաժարվի այդ կողմի կողմից յուրաքանչյուր Ծրագրի բաղադրիչի հաշվի և Հաշվի բանկում Իրականացնող մարմնի անվամբ բացված ցանկացած այլ հաշվի կամ Իրականացնող մարմնի ցանկացած այլ պարտքի նկատմամբ հաշվանցման ցանկացած իրավունքից (կետ 6.4.1, պարբերություն 2),

7.12. ապահովել, որ Իրականացնող մարմինը Շրջանակային համաձայնագրի 6.4.5-րդ կետով սահմանված ժամկետներում ուղղակիորեն և Համաֆինանսավորողի միջոցով Կարկատուին տրամադրի հիշյալ կետով սահմանված փաստաթղթերը (կետ 6.4.5),

7.13. Ծրագրի բաղադրիչի որևէ Թույլատրելի ծախս եվրոյից բացի այլ արժույթով արտահայտված լինելու դեպքում ապահովել, որ Իրականացնող մարմինը հաշիվ-վավերագրի գումարը փոխարկի եվրոյով համարժեք գումարի՝ օգտագործելով

Հայաստանի կենտրոնական բանկի կողմից կիրառվող համապատասխան արժույթի փոխարժեքը (կետ 6.4.6),

7.14. համաձայնել և ապահովել, որ Իրականացնող մարմինը համաձայնի, որ Կանխավճարների տեսքով վճարված բոլոր ֆինանսական միջոցներն ամբողջությամբ օգտագործվեն Ծրագրի բաղադրիչի Թույլատրելի ծախսերը վճարելու համար ոչ ուշ, քան մինչև Վարկի հաստատման մեջ նշված վերջնաժամկետը (կետ 6.4.7),

7.15. համաձայնել, որ Մասհանման ժամանակահատվածում յուրաքանչյուր Ծրագրի բաղադրիչի հաշվին աուդիտի ենթարկվի Համաֆինանսավորողի վարկային համաձայնագրի և Ծրագրի գործառնական ձեռնարկի դրույթներին համապատասխան, որոնք կիրականացվեն Հայաստանի Հանրապետության կամ Իրականացնող մարմնի կողմից նշանակված անկախ և հեղինակավոր աուդիտորական ընկերության կողմից՝ պայմանով, որ Համաֆինանսավորողը չառարկի աուդիտի առաքելության տեխնիկական առաջադրանքի վերաբերյալ, և պայմանով, որ Համաֆինանսավորողը չառարկի նշանակված աուդիտորական ընկերության վերաբերյալ, ինչպես նաև վճարել աուդիտորական բոլոր ծախսերը՝ աուդիտի հաշվետվությունները տրամադրելով Վարկատուին Համաֆինանսավորողի միջոցով (կետ 6.4.8),

7.16. Վարկատուին մարել Շրջանակային համաձայնագրի 6.4.9-րդ կետով սահմանված գումարները Վարկատուից այդպիսի ծանուցում ստանալու օրվանից հետո քսան (20) օրացուցային օրվա ընթացքում (կետ 6.4.9, պարբերություն 2),

7.17. հանձնարարել Իրականացնող մարմնին պահպանել յուրաքանչյուր Ծրագրի բաղադրիչի հաշվի և Կանխավճարների օգտագործման հետ կապված փաստաթղթային ապացույցները և այլ փաստաթղթեր՝ վերջնական Կանխավճարի Մասհանման ամսաթվից տասը (10) տարի ժամկետով, ինչպես նաև այդ փաստաթղթային ապացույցները և մյուս փաստաթղթերը տրամադրել Վարկատուին կամ Վարկատուի կողմից նշանակված ցանկացած աուդիտորական ընկերության՝ Վարկատուի պահանջով (կետ 6.4.10),

7.18. Մասհանման (Մասհանումների) համար հաշվեգրված տոկոսագումարը վճարել յուրաքանչյուր Վճարման ամսաթվի, իսկ համապատասխան Վճարման ամսաթվին Տոկոսների հաշվարկման համապատասխան ժամանակահատվածի համար վճարման ենթակա տոկոսագումարը հավասար է Հայաստանի Հանրապետության կողմից յուրաքանչյուր Մասհանման համար Մայր գումարի չմարված մնացորդի մասով վճարման ենթակա տոկոսագումարին, որը հաշվարկվում է Շրջանակային համաձայնագրի 7.2-րդ կետով սահմանված կարգով (կետ 7.2),

7.19. Վարկատուին վճարման ենթակա՝ Ֆինանսական փաստաթղթով նախատեսված որևէ գումար (մայր գումարի մարում, Կանխավճարի փոխհատուցում, ցանկացած տեսակի վճար կամ չնախատեսված ծախս՝ բացառությամբ չվճարված ժամկետանց տոկոսների) դրա վճարման ամսաթվին չվճարելու դեպքում վճարել ժամկետանց գումարի մասով օրենսդրությամբ թույլատրված չափով հաշվեգրված տոկոս՝ մարման ամսաթվից մինչև փաստացի վճարման ամսաթիվը ներառող ժամանակահատվածի համար (ինչպես արբիտրաժային որոշում կայացվելուց առաջ, այնպես էլ հետո, եթե առկա է այդպիսի որոշում)՝ Տոկոսի հաշվարկման ընթացիկ ժամանակահատվածի (պարտավորությունների չկատարման դեպքում հաշվարկվող տոկոս) նկատմամբ կիրառելի Տոկոսադրույքով, որին գումարվում է երեք ամբողջ հինգ տոկոս (3.5%) (ժամկետանց վճարման դեպքում հաշվարկվող տոկոս) (կետ 7.3, (ա)),

7.20. վճարել սահմանված ժամկետում չվճարված տոկոսագումարների նկատմամբ օրենքով թույլատրված չափով հաշվարկված տոկոսները՝ Տոկոսի հաշվարկման ընթացիկ ժամանակահատվածի (պարտավորությունների չկատարման դեպքում հաշվարկվող տոկոս) նկատմամբ կիրառելի Տոկոսադրույքով, որին գումարվում է երեք ամբողջ հինգ տոկոս (3.5%) (ժամկետանց վճարման դեպքում հաշվարկվող տոկոս) այնքանով, որքանով այդ Տոկոսը ենթակա է եղել վճարման առնվազն մեկ (1) տարվա ընթացքում, և վճարել Շրջանակային համաձայնագրի 7.3-րդ կետով (*ժամկետանց վճարման և պարտավորությունների չկատարման դեպքում հաշվարկվող տոկոսը*) սահմանված ցանկացած չմարված տոկոս Վարկատուի կողմից ներկայացված պահանջից անմիջապես հետո կամ չմարված գումարի վճարման ժամկետին հաջորդող յուրաքանչյուր Վճարման ամսաթվի (կետ 7.3, (բ)),

7.21. ընդունել և համաձայնել, որ եթե տեղի ունենա Հրապարակված դրույքաչափի փոխարինման դեպք, և Շրջանակային համաձայնագրի տնտեսական հավասարակշռությունը պահպանելու նպատակով, Վարկատուն կարող է Հրապարակված դրույքաչափը փոխարինել մեկ այլ դրույքաչափով (**Փոխարինող բազային դրույքաչափ**), որը կարող է ներառել ճշգրտման թույլատրելի սահմանաչափ՝ Կողմերի միջև տնտեսական արժեքի փոխանցումից (առկայության դեպքում) խուսափելու համար (**Ճշգրտման թույլատրելի սահմանաչափ**), և Վարկատուն կորոշի այն ամսաթիվը, որից սկսած՝ Փոխարինող բազային դրույքաչափով և առկայության դեպքում՝ Ճշգրտման թույլատրելի սահմանաչափով կփոխարինվի Հրապարակված դրույքաչափը, ինչպես նաև որոշում կկայացնի Հրապարակված դրույքաչափը Փոխարինող բազային դրույքաչափով փոխարինելու արդյունքում Շրջանակային համաձայնագրի ցանկացած այլ փոփոխության անհրաժեշտության վերաբերյալ (կետ 8.2.2),

7.22. Վարկի հաստատման ստորագրման ամսաթվից հետո վեց (6) ամիսը լրանալու ամսաթվից սկսած՝ Վարկատուին վճարել տարեկան զրո ամբողջ հինգ տոկոս (0.5%) կոմիսիոն վճար, որը ենթակա է վճարման՝ յուրաքանչյուր Վճարման ամսաթվի այնքան ժամանակ, քանի դեռ Հասանելի վարկը զրոյից մեծ է, Մասհանման ժամանակահատվածի վերջին օրվան հաջորդող Վճարման ամսաթվին, Հասանելի վարկն ամբողջությամբ չեղարկելու դեպքում՝ այդ չեղարկման փաստացի ամսաթվին հաջորդող Վճարման ամսաթվին և Հասանելի բոլոր վարկերն ամբողջությամբ չեղարկվելու դեպքում՝ այդ չեղարկման փաստացի ամսաթվին (կետ 9.1, պարբերություններ 1 և 4),

7.23. ոչ ուշ, քան Վարկի հաստատման ստորագրման ամսաթվից հետո տասնհինգ (15) օրվա ընթացքում և մինչև Վարկի առաջին Մասհանումը Վարկատուին վճարել զրո ամբողջ հինգ տոկոս (0.5%) գնահատման վճար, որը հաշվարկվում է յուրաքանչյուր Վարկի առավելագույն գումարի նկատմամբ (կետ 9.2),

7.24. Արտոնյալ ժամկետը լրանալուց հետո Վարկատուին վճարել յուրաքանչյուր Վարկի մայր գումարը՝ մի քանի վճարումներով, որոնք սահմանված են Վարկի հաստատման մեջ և ենթակա են վճարման յուրաքանչյուր Վճարման ամսաթվի, ընդ որում՝ վերջին վճարման ամսաթիվը ոչ ուշ, քան 2048 թվականի դեկտեմբերի 31-ն է (կետ 10, պարբերություն 1),

7.25. մինչև Արտոնյալ ժամկետի ավարտը չկատարել Վարկի՝ կանխավճարի ձևով ամբողջական կամ դրա որևէ մասի վճարում (կետ 11.1, պարբերություն 1),

7.26. անհապաղ Կանխավճարի ձևով վճարել Վարկը կամ Վարկերն ամբողջությամբ կամ դրա կամ դրանց մի մասը Շրջանակային համաձայնագրի 11.2-րդ կետում

շարադրված իրադարձություններից որևէ մեկի մասին Վարկատուից ծանուցում ստանալուց հետո (կետ 11.2),

7.27. կանխավճարի ձևով չվճարել կամ չեղարկել Վարկն ամբողջությամբ կամ դրա որևէ մաս՝ բացառությամբ Ֆինանսական փաստաթղթերով հստակ նախատեսված ժամկետների և կարգի (կետ 11.5, (բ)),

7.28. Ֆինանսական փաստաթղթով նախատեսված ցանկացած կանխավճար կատարել կանխավճարի ձևով վճարված գումարի նկատմամբ հաշվեգրված տոկոսների, չմարված վճարների և Շրջանակային համաձայնագրի 12.3-րդ կետում (*Կանխավճարի մասով փոխհատուցումը*) նշված Կանխավճարի փոխհատուցման գումարի հետ միասին (կետ 11.5, (գ)),

7.29. ուղղակիորեն վճարել կամ կիրառելիության դեպքում Վարկատուին հատուցել Վարկատուի կողմից կատարված կանխավճարի հետ կապված բոլոր ծախսերի և ծախքերի (ներառյալ իրավաբանական վճարները) գումարը, որոնք Վարկատուն կրել է՝ կապված այն Ֆինանսական փաստաթղթերի շուրջ բանակցելու, դրանք պատրաստելու և ստորագրելու հետ, որի կողմ է Վարկատուն, կամ կապված Ֆինանսական փաստաթղթում նշված ցանկացած այլ փաստաթղթի (այդ թվում՝ ցանկացած իրավաբանական կարծիքի) հետ (կետ 12.1.1),

7.30. Ֆինանսական փաստաթղթերից որևէ մեկում փոփոխություն կատարելու պահանջի դեպքում, որի կողմ է Վարկատուն, Վարկատուին հատուցել բոլոր այն ծախսերը (ներառյալ իրավաբանական վճարները), որոնք ողջամտորեն կրել են այդպիսի անհրաժեշտությանն արձագանքելու, այն գնահատելու, դրա շուրջ բանակցելու կամ այդ պահանջին համապատասխանելու համար (կետ 12.1.2),

7.31. Վարկատուին հատուցել բոլոր այն ծախսերն ու ծախքերը (ներառյալ իրավաբանական վճարները), որոնք այն կրել է իր իրավունքներից ցանկացածի իրականացման կամ պահպանման համար, որը սահմանված է այն Ֆինանսական փաստաթղթով, որի կողմ է Վարկատուն (կետ 12.1.3),

7.32. ուղղակիորեն վճարել կամ կիրառելիության դեպքում Վարկատուին հատուցել վերջինիս կողմից կատարված կանխավճարի հետ կապված բոլոր ծախսերի և ծախքերի (ներառյալ իրավաբանական վճարները) գումարը՝ կապված Փարիզից Հայաստանի Հանրապետությանը կամ նրա հաշվին Վարկատուի հետ համաձայնեցված որևէ վայր ֆինանսական միջոցների փոխանցման, ինչպես նաև Վարկի շրջանակներում վճարման ենթակա բոլոր գումարների մարման հետ կապված փոխանցման համար գանձվող միջնորդավճարների և ծախքի հետ (կետ 12.1.4),

7.33. Շրջանակային համաձայնագրի 11.3-րդ կետի (*Վարկառուի կողմից Վարկի չեղարկումը*) և (կամ) 11.4-րդ կետի (*Վարկատուի կողմից Վարկի չեղարկումը*) «ա», «բ» և «գ» պարբերությունների պայմաններին համապատասխան Վարկն ամբողջությամբ կամ մասամբ չեղարկվելու դեպքում վճարել չեղարկման համար փոխհատուցման գումարը, որը հաշվարկվում է Վարկի չեղարկված գումարի երկու ամբողջ հինգ տոկոսի (2.5%) չափով, և յուրաքանչյուր այդպիսի փոխհատուցում վճարել Վարկի ամբողջական կամ դրա մի մասի չեղարկմանն անմիջապես հաջորդող Վճարման ամսաթվին (կետ 12.2),

7.34. Հաշվի առնելով Շրջանակային համաձայնագրի 11.1-ին կետին (*Կամավոր կանխավճարը*) կամ 11.2-րդ կետին (*Պարտադիր կանխավճարը*) համապատասխան Վարկն ամբողջությամբ կամ դրա որևէ մաս կանխավճարի ձևով վճարելու հետևանքով Վարկատուի կրած ցանկացած կորուստ՝ Վարկատուին վճարել փոխհատուցում, որը

հավասար է Կանխավճարի փոխհատուցման և Վարկատուի կողմից կանխավճարի ձևով վճարված գումարի հետ կապված տոկոսադրույքի հեջավորման սվոփի գործարքների ընդհատման հետևանքով առաջացած ցանկացած ծախսի հանրագումարին (կետ 12.3),

7.35. ուղղակիորեն վճարել կամ կիրառելիության դեպքում Վարկատուին կողմից կանխավճարի կատարման դեպքում հատուցել Վարկատուի ցանկացած Ֆինանսական փաստաթղթի և այն Ֆինանսական փաստաթղթի ցանկացած հնարավոր փոփոխության հետ կապված բոլոր պետական տուրքերը, գրանցման և համանման այլ հարկերի ծախսերը, որի կողմ է Վարկատուն (կետ 12.4.1),

7.36. երաշխավորել, որ այն Ֆինանսական փաստաթղթերի համաձայն Վարկատուին արվող բոլոր վճարումները, որոնց կողմ է Վարկատուն, զերծ կլինեն Պահվող հարկերից, և օրենքով Պահվող հարկի պահանջ նախատեսվելու դեպքում ցանկացած այդպիսի վճարման գումար վերահաշվարկել այնպիսի գումարի նկատմամբ, որի արդյունքում Վարկատուն կստանա վճարմանը համարժեք այն գումարը, որը կվճարվեր, եթե չպահանջվեր Պահվող որևէ հարկ, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության հաշվին Վարկատուին հատուցել բոլոր այն ծախսերը և (կամ) Հարկերը, որոնք վճարվել են Վարկատուի կողմից (եթե կիրառելի է)՝ բացառությամբ Ֆրանսիայում վճարման ենթակա որևէ Հարկի (կետ 12.4.2),

7.37. Վարկատուի կողմից պահանջ ներկայացվելուց հետո հինգ (5) Բանկային օրվա ընթացքում Վարկատուին վճարել Վարկատուի կողմից կատարված բոլոր այն Լրացուցիչ ծախսերը, որոնք առաջացել են որևէ նոր օրենք կամ կարգավորում ուժի մեջ մտնելու, որևէ փոփոխության կամ որևէ գործող օրենքի կամ կարգավորման մեկնաբանման կամ կիրառման հետ կապված որևէ փոփոխության կամ Վարկի հաստատման ստորագրման ամսաթվից հետո ուժի մեջ մտած որևէ օրենքի կամ կարգավորման համապատասխանություն ապահովելու անհրաժեշտության արդյունքում (կետ 12.5, պարբերություն 1),

7.38. ապահովել Շրջանակային համաձայնագրի 12.6-րդ կետով սահմանված՝ արժույթի մասով փոխհատուցմանը ներկայացվող պահանջների կատարումը (կետ 12.6),

7.39. Շրջանակային համաձայնագրի 12-րդ կետի (*Լրացուցիչ վճարումներ կատարելու պարտավորությունները*) համաձայն Վարկատուին վճարման ենթակա ցանկացած փոխհատուցում կամ հատուցում վճարել վճարման համապատասխան փոխհատուցման կամ հատուցման անհրաժեշտություն առաջացրած հանգամանքներին անմիջապես հաջորդող Վճարման ամսաթվին, և չնայած վերոնշյալին՝ Շրջանակային համաձայնագրի 12.3-րդ կետին (*Կանխավճարի մասով փոխհատուցումը*) համապատասխան՝ կանխավճարի առնչությամբ վճարման ենթակա ցանկացած փոխհատուցում վճարել համապատասխան կանխավճարի ամսաթվին (կետ 12.7),

7.40. Բացառությամբ Շրջանակային համաձայնագրի 13.10-րդ (*Ծրագրի փաստաթղթերը*), 13.11-րդ (*Ծրագրի թույլտվությունները*) և 13.14-րդ (*Ֆինանսական միջոցների օրինական ծագումը*) կետերի համաձայն արված հավաստիացումների և երաշխիքների՝ Շրջանակային համաձայնագրի 13-րդ կետով (*Շրջանակային համաձայնագրի և յուրաքանչյուր Վարկի շրջանակներում արվող հավաստիացումները և երաշխիքները*) սահմանված բոլոր հավաստիացումները և երաշխիքները հոգուտ Վարկատուի անել և տալ Վարկի հաստատման ստորագրման ամսաթվին (կետ 13, պարբերություն 1),

7.41. երաշխավորել, որ Հայաստանի Հանրապետության դատարանների և արբիտրաժային տրիբունալների կողմից կճանաչվի և կկիրարկվի Ֆրանսիայի իրավունքի՝

որպես Ֆինանսական փաստաթղթերը կարգավորող իրավունքի ընտրությունը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում ճանաչել և կատարել Ֆինանսական փաստաթղթերի առնչությամբ ֆրանսիական դատարանի կողմից կայացված ցանկացած վճիռ կամ արբիտրաժային տրիբունալի որոշում (կետ 13.7),

7.42. հավաստիացնել և երաշխավորել, որ Ծրագրի իրականացման համար ներդրված կամ ներդրվելիք՝ Վարկի միջոցներից բացի բոլոր մյուս ֆինանսական միջոցները, եթե առկա են, ամբողջությամբ տրամադրված են պետական բյուջեից, Ծրագիրը (մասնավորապես՝ Վարկի շրջանակներում ֆինանսավորվող որևէ պայմանագրի վերաբերյալ բանակցությունները, դրա շնորհումը և կատարումը) չի առաջացրել որևէ Արգելված գործելակերպ, Հայաստանի Հանրապետությունը չի կատարել որևէ գործողություն կամ չի մասնակցել որևէ գործողության, որը հակասում է փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին կիրառելի օրենքին, և ըստ իր ունեցած տեղեկությունների՝ ինքը չի տրամադրել ուղղակի կամ անուղղակի նյութական աջակցություն կամ այլ ռեսուրսներ որևէ անձի կամ կազմակերպության, որը կատարում է, փորձում է կատարել, պաշտպանում է ահաբեկչական գործողությունների կատարումը, նպաստում կամ մասնակցում է դրանց, կամ կատարել է, փորձել է կատարել, պաշտպանել է ահաբեկչական գործողությունների կատարումը, նպաստել կամ մասնակցել է դրանց (կետ 13.14),

7.43. հավաստիացնել և երաշխավորել, որ որևէ դեպք կամ հանգամանք, որը հավանական է, որ էական բացասական ազդեցություն կունենա, տեղի չի ունեցել կամ հավանական չէ, որ տեղի ունենա (կետ 13.15, պարբերություն 1),

7.44. համապատասխանել և ապահովել, որ Իրականացնող մարմինը համապատասխանի բոլոր հարցերում բոլոր օրենքներին ու կարգավորումներին, որոնք տարածվում են իր և (կամ) Ծրագրի վրա, մասնավորապես՝ շրջակա միջավայրի պաշտպանության, անվտանգության մասին և աշխատանքային կիրառելի բոլոր օրենքներին, ինչպես նաև Արգելված գործելակերպերի կանխարգելմանն ու պայքարին, և Ծրագրի փաստաթղթերով սահմանված իր բոլոր պարտավորություններին (կետ 14.1),

7.45. անհապաղ ձեռք բերել կիրառելի իրավունքով կամ կարգավորմամբ պահանջվող ցանկացած Թույլտվություն, պահպանել դրան համապատասխանությունը և ձեռնարկել բոլոր գործողությունները, որոնք անհրաժեշտ են այն լիակատար ուժի և գործողության մեջ պահելու համար, և ապահովել, որ Իրականացնող մարմինն անհապաղ ձեռք բերի կիրառելի իրավունքով կամ կարգավորմամբ պահանջվող ցանկացած Թույլտվություն, պահպանի դրան համապատասխանությունը և ձեռնարկի բոլոր գործողությունները, որոնք անհրաժեշտ են այն լիակատար ուժի և գործողության մեջ պահելու համար, որպեսզի կարողանա կատարել Ֆինանսական փաստաթղթերով և Ծրագրի փաստաթղթերով սահմանված իր պարտավորությունները և ապահովել դրանց օրինականությունը, վավերությունը, կատարման ենթակա լինելն ու ընդունելիությունը որպես Ֆինանսական փաստաթղթերի կամ Ծրագրի փաստաթղթերի ապացույց (կետ 14.2),

7.46. կատարել և ապահովել, որ Իրականացնող մարմինն իրականացնի Ծրագիրը՝ լայնորեն ընդունված անվտանգության սկզբունքներին և գործող տեխնիկական չափանիշներին համապատասխան, և պահպանի իր ակտիվները և Ծրագրի ակտիվները լավ աշխատանքային պայմաններում՝ կիրառելի բոլոր օրենքներին և կարգավորումներին համապատասխան, և օգտագործի այդ ակտիվներն իրենց նպատակին և կիրառելի բոլոր

օրենքներին ու կարգավորումներին համապատասխան (կետ 14.4),

7.47. Ծրագրի կամ դրա որևէ մասի իրականացման նպատակով կնքված և Վարկային գծով ֆինանսավորվող պայմանագրերի գնման, շնորհման և կատարման հետ կապված՝ պահպանել և իրականացնել Գնումների կիրառելի ընթացակարգերի դրույթները, երաշխավորել, որ Իրականացնող մարմինը կպահպանի և կիրականացնի Գնումների կիրառելի ընթացակարգերը, ինչպես նաև ձեռնարկել բոլոր գործողություններն ու քայլերը, որոնք անհրաժեշտ են Գնումների կիրառելի ընթացակարգերի արդյունավետ իրականացման համար (կետ 14.5, պարբերություններ 1 և 2),

7.48. հետագա վերանայման ենթակա պայմանագրերի դեպքում աուդիտի տեխնիկական առաջադրանքը ներկայացնել Վարկատուին՝ վերջինիս հավանությունը ստանալու համար, համաձայն Շրջանակային համաձայնագրի «*Վերահսկողությունը. աուդիտը*» կետի (կետ 14.5, պարբերություն 10),

7.49. բացահայտ թույլատրել Վարկատուին՝ բացահայտելու փորձագետներին (ինչպես սահմանված է Բնապահպանական և սոցիալական բողոքների կառավարման մեխանիզմի կանոնակարգում) և համապատասխանության վերանայման և (կամ) հաշտեցման գործընթացներում ներգրավված կողմերին բնապահպանական և սոցիալական բողոքին ընթացք տալու համար անհրաժեշտ բնապահպանական և սոցիալական հարցերի վերաբերյալ Ծրագրի փաստաթղթերը, այդ թվում՝ 7-րդ հավելվածում (*Բնապահպանական և սոցիալական այն փաստաթղթերի ոչ սպառիչ ցանկը, որոնց հրապարակումը Վարկատուն թույլատրում է ԲՄ-ի բողոքների կառավարման մեխանիզմի կանոնակարգի առնչությամբ*) թվարկված փաստաթղթերը, սակայն չսահմանափակվելով դրանցով (կետ 14.6.2, պարբերություն «բ»),

7.50. կենսաբազմազանության վերաբերյալ տվյալների փոխանակումը խթանելու նպատակով և կենսաբազմազանության վերաբերյալ գիտելիքների և դրանց փոխանակման հետ կապված միջազգային թիրախներին համապատասխան՝ փոխանակել կամ ապահովել, որ Հայաստանի Հանրապետության՝ երրորդ կողմ հանդիսացող կապալառուները փոխանակեն Ծրագրի իրականացման առնչությամբ ստացված՝ կենսաբազմազանության վերաբերյալ տվյալները (ինչպես չմշակված, այնպես էլ մշակված) Կենսաբազմազանության տեղեկատվական գլոբալ կենտրոնի (ԿՏԳԿ[GBIF]) համաշխարհային տվյալների բազայի հետ՝ դրանց հրապարակումը հնարավոր դարձնելու համար (կետ 14.6.3, պարբերություն 1),

7.51. Շրջանակային համաձայնագրի 14.6.3-րդ կետի 1-ին պարբերությունում շարադրված նպատակով ձեռնարկել համապատասխան բոլոր միջոցները Հայաստանի Հանրապետության՝ երրորդ կողմ հանդիսացող կապալառուների նկատմամբ, որպեսզի նրանք թույլ տան ԿՏԳԿ-ի համաշխարհային տվյալների շտեմարանում փոխանակվել կենսաբազմազանության վերաբերյալ մշակված տվյալներով, որոնց նկատմամբ նրանք կարող են ունենալ մտավոր սեփականության իրավունքներ՝ անկախ կրիչի տեսակից (կետ 14.6.3, պարբերություն 2),

7.52. չփոփոխել կամ չձևափոխել Ֆինանսավորման որևէ պլան՝ առանց Վարկատուի նախնական գրավոր համաձայնության, և ֆինանսավորել Ֆինանսավորման պլանով չնախատեսված ցանկացած լրացուցիչ ծախս այն պայմաններով, որոնք ապահովում են Վարկի (Վարկերի) մարումը (կետ 14.7),

7.53. ապահովել, որ Ֆինանսական փաստաթղթերով սահմանված՝ Վարկատուի պահանջները մշտապես առնվազն ըստ *pari passu* սկզբունքի դասակարգվեն Հայաս-

տանի Հանրապետության մյուս ներկա և ապագա չապահովված և ոչ առաջնահերթ պարտավորությունների հետ, որևէ այլ վարկատուի չտրամադրել առաջնահերթություն կամ երաշխիքներ՝ բացառությամբ այն դեպքերի, երբ նույն առաջնահերթությունը կամ երաշխիքները տրամադրվում են Հայաստանի Հանրապետության կողմից հոգուտ Վարկատուի՝ վերջինիս կողմից այդպիսի պահանջ ներկայացվելու դեպքում (կետ 14.8),

7.54. Վարկատուի կողմից այլ բանի շուրջ գրավոր համաձայնության չգալու դեպքում փոփոխություններ կատարել Ապահովագրական պոլիսներում, որ Վարկատուին ներառի որպես որևէ ապահովագրական փոխհատուցման միակ շահառու՝ մինչև Ֆինանսական փաստաթղթերի համաձայն վճարման ենթակա բոլոր գումարների ամբողջական մարումը և Վարկատուին զիջել Մատակարարի երաշխիքների օգուտը (կետ 14.9),

7.55. ապահովել, որ Իրականացնող մարմինը բացի, վարի և ֆինանսավորի յուրաքանչյուր Ծրագրի բաղադրիչի հաշիվը՝ համաձայն Համաֆինանսավորողի վարկային համաձայնագրի և Շրջանակային համաձայնագրի պայմանների (կետ 14.10),

7.56. լիազորել Վարկատուին և նրա ներկայացուցիչներին՝ իրականացնելու ստուգումներ, որոնց նպատակը կլինի գնահատել Ծրագրի յուրաքանչյուր բաղադրիչի իրականացումն ու գործողությունները, ինչպես նաև Ծրագրի բաղադրիչի ազդեցությունն ու նպատակների իրագործումը, այդպիսի ստուգումներ իրականացնելիս համագործակցել և Վարկատուին և նրա ներկայացուցիչներին տրամադրել ողջամիտ ամբողջ աջակցությունը և բոլոր տեղեկությունները, Վարկատուին փոխհատուցել տարեկան մեկ ստուգման հետ կապված Վարկատուի կրած բոլոր ծախսերը և ապահովել, որ Իրականացնող մարմինը պահպանի և Վարկատուի կողմից իրականացվող ստուգումների համար հասանելի դարձնի Ծրագրի յուրաքանչյուր բաղադրիչի Թույլատրելի ծախսերի վերաբերյալ բոլոր փաստաթղթերը՝ Ֆինանսական միջոցների մասհանման վերջնաժամկետից հետո տասը (10) տարվա ընթացքում (կետ 14.11),

7.57. Ծրագրի բաղադրիչի գնահատումն իրականացնել Շրջանակային համաձայնագրի 14.12-րդ կետով սահմանված կարգով (կետ 14.12),

7.58. ապահովել, որ Ծրագրի որևէ միջոց կամ տնտեսական ռեսուրս ուղղակիորեն կամ անուղղակիորեն հասանելի չդարձվի կամ չօգտագործվի հոգուտ որևէ անձի, խմբի կամ մարմնի, որը ներառված է Ֆինանսական պատժամիջոցների որևէ ցանկում, ինչպես նաև չֆինանսավորել, ձեռք չբերել կամ չտրամադրել որևէ այնպիսի մատակարարում կամ չմիջամտել այնպիսի ոլորտներում, որոնք ենթակա են Էմբարգոյի Միավորված ազգերի կազմակերպության, Եվրոպական միության կամ Ֆրանսիայի կողմից (կետ 14.13),

7.59. ապահովել, որ Իրականացնող մարմինը կատարի Շրջանակային համաձայնագրի 14.14-րդ կետով սահմանված պահանջները (կետ 14.14),

7.60. Վարկատուին տրամադրել այնպիսի տեղեկություններ, որոնք Վարկատուն կարող է ողջամտորեն պահանջել՝ կապված Վարկառուի արտաքին և ներքին պարտքերի, ինչպես նաև որևէ երաշխավորված վարկի կարգավիճակի հետ (կետ 15.1),

7.61. ընթացքի վերաբերյալ հաշվետվությունը Վարկատուին տրամադրել Շրջանակային համաձայնագրի 15.2-րդ կետով սահմանված կարգով (կետ 15.2),

7.62. անհապաղ տեղեկացնել Վարկատուին Համաֆինանսավորողի կողմից ցանկացած չեղարկման (ամբողջությամբ կամ մասամբ) կամ կանխավճարի մասին (կետ 15.3),

7.63. Վարկատուին և Համաֆինանսավորողին տրամադրել Շրջանակային համա-

ծայնագրի 15.4-րդ կետով սահմանված տեղեկությունները (կետ 15.4),

7.64. Վարկառուի կողմից Վարկատուին կատարվելիք ցանկացած վճար կատարել վճարման ենթակա ամսաթվին, մինչև ոչ ուշ, քան ժամը 11:00-ը (Փարիզի ժամանակով) Շրջանակային համաձայնագրի 17.6-րդ կետում նշված բանկային հաշվին (կետ 17.6, (բ)),

7.65. որևէ ձևով չգիջել կամ չփոխանցել Ֆինանսական փաստաթղթով սահմանված Հայաստանի Հանրապետության բոլոր իրավունքներն ու պարտավորությունները կամ դրանցից որևէ մեկը՝ առանց Վարկառուի նախնական գրավոր համաձայնության (կետ 18.2, պարբերություն 1),

7.66. ապահովել Շրջանակային համաձայնագրի 18.3-րդ կետով սահմանված՝ գաղտնիությանն ու տեղեկությունների բացահայտմանը ներկայացվող պահանջների կատարումը (կետ 18.3),

7.67. Հայաստանի Հանրապետության կողմից տրամադրվող բոլոր փաստաթղթերի նկատմամբ կիրառել Շրջանակային համաձայնագրի 3-րդ հավելվածում շարադրված պայմանները՝ որպես նախապայմաններ (Հավելված 3, նախաբան),

7.68. ապահովել Շրջանակային համաձայնագրի 3-րդ հավելվածի I և II մասերով սահմանված՝ **Շրջանակային համաձայնագրի ստորագրման և յուրաքանչյուր Վարկի հաստատման ստորագրման նախապայմանների կատարումը** (Հավելված 3, մասեր I և II),

7.69. ապահովել Շրջանակային համաձայնագրի 3-րդ հավելվածի III մասով սահմանված՝ Վարկի շրջանակներում առաջին մասհանմանը ներկայացվող նախապայմանների կատարումը (Հավելված 3, մաս III):

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. Հայաստանի Հանրապետության և Զարգացման ֆրանսիական գործակալության միջև չհաստատված վարկային գիծ տրամադրելու մասին թիվ CAM 1029 շրջանակային համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Ա. ԴԻԼԱՆՅԱՆ

28 ապրիլի 2026 թվականի
ՍԴՈ-1825



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԹՎԻ ԱՌՆՎԱԶՆ ՄԵԿ
ՀԻՆԳԵՐՈՐԴԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 236-ՐԴ
ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ
ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

29 ապրիլի 2026 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով.
նախագահող՝
դատավորներ՝

Արման Դիլանյանի,
Արտակ Զեյնալյանի,
Դավիթ Խաչատուրյանի,
Երվանդ Խունդկարյանի,
Հովակիմ Հովակիմյանի,
Էդգար Շաթիրյանի,
Սեդա Սաֆարյանի,
Արթուր Վաղարշյանի
(զեկուցող),
Վլադիմիր Վարդանյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝
դիմողի՝ Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ
հինգերորդի (այսուհետ նաև՝ Դիմող),
ներկայացուցիչ՝ պատգամավոր Արծվիկ Մինասյանի,
պատասխանողի՝ Ազգային ժողովի (այսուհետ նաև՝ Պատասխանող),
ներկայացուցիչ՝ Ազգային ժողովի աշխատակազմի իրավաբանական վարչության
պետ Մարի Ստեփանյանի,
համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետի, 169-րդ հոդվածի 1-ին
մասի 2-րդ կետի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանա-
դրական օրենքի 22 և 68-րդ հոդվածների,
դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Ազգային ժողովի պատգա-
մավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդի դիմումի հիման վրա՝ ՀՀ
քրեական օրենսգրքի 236-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Սահմանադրությանը համապա-
տասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Ուսումնասիրելով դիմումը և դրան կից ներկայացված փաստաթղթերը, Դիմողի և
Պատասխանողի գրավոր բացատրությունները, դիրքորոշումները, Վենետիկի հանձնա-

ժողովի CDL-AD (2025)037 խորհրդատվական կարծիքը, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի օժանդակ կարծիքը, ինչպես նաև վերլուծելով վիճարկվող և վերաբերելի այլ օրինադրույթներ՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

Ա. Վարույթը Սահմանադրական դատարանում

1. Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրքը (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2021 թվականի մայիսի 5-ին, Հանրապետության նախագահի կողմից ստորագրվել՝ 2021 թվականի մայիսի 27-ին և ուժի մեջ է մտել 2022 թվականի հուլիսի 1-ին:

2. Օրենսգրքի՝ «**Հավաք անցկացնելուն կամ դրան մասնակցելուն խոչընդոտելու կամ հարկադրելու, ինչպես նաև հավաքին մասնակցելու կամ հավաքին մասնակցելուց հրաժարվելու նպատակով նյութապես շահագրգռելը**» վերտառությամբ 236-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանվում է.

«2. Օրինական կամ անօրինական հավաքին մասնակցելուն հարկադրելն անձի կամ նրա մերձավոր ազգականի կամ մերձավորի նկատմամբ բռնություն գործադրելու, գույքը ոչնչացնելու, վնասելու կամ վերցնելու սպառնալիքով կամ շանտաժի միջոցով, ինչպես նաև հավաքին մասնակցելու կամ հավաքին մասնակցելուց հրաժարվելու նպատակով նյութապես շահագրգռելը՝

պատժվում է պուզանքով՝ տասնապատիկից երեսնապատիկի չափով, կամ հանրային աշխատանքներով՝ հարյուրից երկու հարյուր ժամ տևողությամբ, կամ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ երկուսից հինգ տարի ժամկետով, կամ ազատության սահմանափակմամբ՝ մեկից երեք տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ մեկից երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով»:

3. Քննության առարկա հոդվածը լրացվել է 2022 թվականի հունիսի 9-ին ՀՕ- 240-Ն օրենքով, որով կատարվել են հետևյալ փոփոխությունները՝

1) վերնագիրը «հարկադրելը» բառից հետո լրացնել «, ինչպես նաև հավաքին մասնակցելու կամ հավաքին մասնակցելուց հրաժարվելու նպատակով նյութապես շահագրգռելը» բառերով.

2) 2-րդ մասը «միջոցով» բառից հետո լրացնել «, ինչպես նաև հավաքին մասնակցելու կամ հավաքին մասնակցելուց հրաժարվելու նպատակով նյութապես շահագրգռելը» բառերով:

4. Գործի քննության առիթն Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդի՝ 2024 թվականի հունիսի 21-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

5. Սահմանադրական դատարանի 2024 թվականի հուլիսի 3-ի ՍԴԱՌ-107 աշխատակարգային որոշմամբ գործն ընդունվել է քննության, և սույն գործի դատաքննությունը նշանակվել է 2024 թվականի հոկտեմբերի 15-ին:

6. Սույն գործով զեկուցող դատավորի 2024 թվականի օգոստոսի 6-ի ՍԴԴ-28 գրությամբ ՀՀ քննչական կոմիտեից պահանջվել է ամփոփ տեղեկատվություն՝ ՀՀ քրեական օրենսգրքի 236-րդ հոդվածի 2-րդ մասով նախաձեռնված, մինչդատական վարույթում գտնվող քրեական վարույթների և նախաձեռնված այն քրեական վարույթների վերաբերյալ, որոնց կապակցությամբ կայացվել է քրեական վարույթը կարճելու

մասին որոշում: ՀՀ քննչական կոմիտեի պատասխան գրությունը Սահմանադրական դատարան է մուտքագրվել 2024 թվականի օգոստոսի 14-ին:

7. Սույն գործով զեկուցող դատավորի 2024 թվականի օգոստոսի 6-ի ՍԴԴ-29 գրությամբ ՀՀ գլխավոր դատախազությունից պահանջվել է ամփոփ տեղեկատվություն՝ ՀՀ քրեական օրենսգրքի 236-րդ հոդվածի 2-րդ մասով նախաձեռնված, մինչդատական վարույթում գտնվող քրեական վարույթների և նախաձեռնված այն քրեական վարույթների վերաբերյալ, որոնց կապակցությամբ կայացվել է քրեական վարույթը կարճելու մասին որոշում: ՀՀ գլխավոր դատախազության պատասխան գրությունը Սահմանադրական դատարան է մուտքագրվել 2024 թվականի օգոստոսի 19-ին:

8. Սույն գործով զեկուցող դատավորի 2024 թվականի օգոստոսի 6-ի ՍԴԴ-30 գրությամբ Դատական դեպարտամենտից պահանջվել է ամփոփ տեղեկատվություն՝ ՀՀ իրավասու դատարաններում, ըստ մեղադրանքի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 236-րդ հոդվածի 2-րդ մասով քննվող և քննված քրեական գործերի վերաբերյալ: Դատական դեպարտամենտի պատասխան գրությունը Սահմանադրական դատարան է մուտքագրվել 2024 թվականի օգոստոսի 9-ին:

9. Սահմանադրական դատարանի 2024 թվականի հոկտեմբերի 11-ի ՍԴԱՈ-156 աշխատակարգային որոշմամբ սույն գործի վարույթը կասեցվել է «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 56-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի հիմքով՝ մինչև «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Վենետիկի հանձնաժողով) կողմից հետևյալ հարցի կապակցությամբ խորհրդատվական կարծիք (amicus curiae) ստանալը՝ *արդյո՞ք ՀՀ քրեական օրենսգրքի 236-րդ հոդվածի 2-րդ մասի «հավաքին մասնակցելու կամ հավաքին մասնակցելուց հրաժարվելու նպատակով նյութապես շահագրգռելը» ձևակերպումը համահունչ է իրավական որոշակիության սկզբունքի եվրոպական չափանիշներին:*

10. 2025 թվականի հոկտեմբերի 13-ին ստացվել է Վենետիկի հանձնաժողովի 2025 թվականի հոկտեմբերի 13-ի CDL-AD(2025)037 խորհրդատվական կարծիքը (թիվ 1252/2025) (այսուհետ նաև՝ Խորհրդատվական կարծիք)¹:

11. Սույն գործով զեկուցող դատավորի 2025 թվականի դեկտեմբերի 19-ի ՍԴԴ-65 գրությամբ ՀՀ քննչական կոմիտեից պահանջվել է տրամադրել ՀՀ քրեական օրենսգրքի 236-րդ հոդվածի 2-րդ մասով նախաձեռնված, մինչդատական վարույթում գտնվող քրեական վարույթներով քրեական հետապնդում հարուցելու մասին որոշումների, ինչպես նաև նշված դրույթն ուժի մեջ մտնելու պահից ի վեր նախաձեռնված քրեական վարույթներով վարույթը կարճելու մասին որոշումների պատճենները: ՀՀ քննչական կոմիտեից պահանջված փաստաթղթերի պատճենները Սահմանադրական դատարան են մուտքագրվել 2025 թվականի դեկտեմբերի 29-ին:

12. Սույն գործով զեկուցող դատավորի 2025 թվականի դեկտեմբերի 19-ի ՍԴԴ-66 գրությամբ Դատական դեպարտամենտից պահանջվել է տրամադրել ՀՀ իրավասու դատարաններում ըստ մեղադրանքի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 236-րդ հոդվածի 2-րդ մասով քննվող քրեական գործերով մեղադրական եզրակացությունների պատճենները: Դատական դեպարտամենտից պահանջված փաստաթղթերի պատճենները Սահմանադրական դատարան են մուտքագրվել 2026 թվականի հունվարի 15-ին:

¹ Հասանելի է հետևյալ հղմամբ՝ [https://www.venice.coe.int/webforms/documents/?pdf=CDL-AD\(2025\)037-e](https://www.venice.coe.int/webforms/documents/?pdf=CDL-AD(2025)037-e):

13. Սահմանադրական դատարանի 2026 փետրվարի 6-ի ՍԴԱՌ-15 աշխատակարգային որոշմամբ գործի վարույթը վերսկսվել է, և գործի դատաքննությունը նշանակվել է 2026 թվականի ապրիլի 14-ին: Սահմանադրական դատարանի 2026 ապրիլի 14-ի ՍԴԱՌ-53 աշխատակարգային որոշմամբ գործի դատաքննությունը հետաձգվել է, և նոր դատաքննությունը նշանակվել է ս. թ. ապրիլի 28-ին:

Բ. Դիմողի դիրքորոշումները

14. Դիմողի համոզմամբ հավաքների ազատությունը կարող է հանգեցնել հանրային շահերի կամ այլոց իրավունքների խաթարմանը բացառապես այն դեպքերում, երբ խախտվում են Սահմանադրությամբ ամրագրված հիմնադրույթները, վտանգվում են այլոց իրավունքներն ու ազատությունները և/կամ դրանց պաշտպանությունն ու երաշխավորումը, որը որևէ աղերս չունի հավաքի մասնակցին նյութապես շահագրգռելն արգելելու ենթադրյալ նպատակի հետ: Այդպիսի նպատակ որևէ կերպ սահմանված չէ թե՛ ներպետական, թե՛ միջազգային իրավունքի աղբյուրներով: Ավելին, միջազգային փորձը միանշանակ վկայում է, որ հավաքի մասնակցին ձևական առումով նյութապես շահագրգռելը որոշ դեպքերում ոչ միայն տարածված է, այլև կրում է խիստ կանոնակարգված բնույթ:

15. Ըստ Դիմողի՝ ՀՀ քրեական օրենսգրքով արգելված է ճանաչվել և ընդհուպ քրեական պատասխանատվություն է սահմանվել մի արարքի համար, որը Սահմանադրության 44-րդ հոդվածի ուժով անմիջապես խաղաղ հավաքների ազատությանն առնչվող հարաբերությունները կարգավորելու համար կոչված օրենքով ընդհանրապես չի դիտարկվել որպես արգելված արարք:

16. Դիմողը պնդում է, որ «Սահմանադրությամբ ընդհանրապես սահմանված չէ խաղաղ հավաքների ազատության համատեքստում հավաքին մասնակցությունը գրավիչ դարձնելը, այդ թվում՝ նյութապես շահագրգռելու եղանակով, բացառելու որևէ նպատակ: Հատկապես, «նյութապես շահագրգռել» բառակապակցության բազմիմաստության պարագայում առավել քան ընդգծուն է դառնում. հավաքների առնչությամբ և հավաքների ազատության հետ կապված քրեական օրենսդրության դրույթները պետք է ունենան այնպիսի կարգավորումներ, որոնք համահունչ են և որևէ կերպ չեն սահմանափակում հավաքների ազատության՝ ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված երաշխիքը»:

17. Դիմողը, անդրադառնալով նյութապես շահագրգռելու հանրային վտանգավորությանը՝ որպես Սահմանադրությամբ սահմանված անհրաժեշտություն ազատության սահմանափակման համար, նշում է, որ ցանկացած հավաք ենթադրում է նաև որոշակի շահագրգռվածություն, այդ թվում՝ նյութական: Ավելին, հավաքների ընթացքում հնչող կոչերը, առաջարկները և խոստումները կարող են նաև ունենալ նյութական շահագրգռման իմաստ: Դիմողը որպես օրինակ է բերում տարբեր հարկեր, տուրքեր, տուգանքներ և վճարներ նվազեցնելու կամ առհասարակ վերացնելու, դրանց մասով համաներում կիրառելու, աշխատավարձեր և կենսաթոշակներ բարձրացնելու վերաբերյալ կոչեր, որոնք, իր կարծիքով, նույնպես պարունակում են վիճարկվող դրույթով նկարագրված արարքի հանցակազմի պարտադիր բաղադրիչները, «(...) մինչդեռ դրանով պայմանավորված ապօրինի և ոչ իրավաչափ, Սահմանադրությանը հակասող եղանակով զրկվում է անձանց քաղաքական գործունեությամբ զբաղվելու և ազատ գործելու հնարավորությունից»:

18. Դիմողը նշում է նաև, որ հավաքին մասնակցելու կամ հավաքին մասնակցելուց հրաժարվելու նպատակով «նյութապես շահագրգռելը» տերմինը խնդրահարույց է նաև այն տեսանկյունից, որ հավաքի կազմակերպչի կողմից հավաքին մասնակցելուն ֆինանսական տեսանկյունից նյութապես օժանդակելու վերաբերյալ բոլոր գործողությունները, որոնք ըստ էության կազմակերպչական են, կարող են դիտարկվել որպես հանցագործություններ, օրինակ՝ տրանսպորտային ծախսերի հատուցումը կամ փոխհատուցումը, սննդի և այլ կարիքների մասին հոգ տանելը և այլն, ուստի՝ պատասխանատու վարքագծի տեսանկյունից ողջամտորեն ենթադրելի և հետևաբար՝ անթույլատրելի է հիշատակված հանգամանքների հաշվանցմամբ այնպիսի օրենսդրության ձևավորումը, որը դուրս է անհրաժեշտության և պիտանելիության սկզբունքներից և/կամ հակասում է դրանց:

19. Դիմողը պնդում է, որ «նյութապես շահագրգռել» տերմինն ինքնին որևէ որոշակիություն չունի: Նման անորոշության պայմաններում հավանական է այնպիսի իրավիճակ, երբ անձը քրեական հետապնդման և պատասխանատվության ենթարկվի նաև այնպիսի պայմաններում, երբ նյութական շահագրգռվածությունը մեկնաբանվում է որպես ցանկացած աջակցություն՝ տրանսպորտային ապահովում, սննդի ու կեցության կազմակերպում, ընդհուպ մինչև՝ պաստառների պատրաստում և տրամադրում, ինչը դուրս է ողջամտության սահմաններից, իրավական տեսանկյունից անորոշ է, ինչով պայմանավորված դրա հասցեատերերն ի վիճակի չեն դրսևորելու համապատասխան վարքագիծ:

20. Հղում կատարելով Սահմանադրական դատարանի կողմից արտահայտված մի շարք իրավական դիրքորոշումների՝ Դիմողը նշում է, որ վիճարկվող դրույթը պասիվ և անորոշ միջամտություն է նախատեսում անձի անձնական ազատության հիմնական իրավունքին, ձևակերպված է այնքան անորոշ, որ հնարավորություն չի տալիս ընկալելու դրա իմաստը, դրանով իսկ այն կարող է հանգեցնել անկանխատեսելի, հետևապես՝ նաև կամայական կիրառման, և թույլ է տալիս ընդլայնել հանցագործության սահմանները՝ պայմանավորված չափազանց բարձր վերացականության աստիճան ունեցող սահմանադրական նորմերին հղում անելու հանգամանքով:

21. Դիմողը եզրահանգել է, որ անորոշության բարձր աստիճանն ինքնին այսքան խնդրահարույց չէր լինի, եթե հանցակազմի դիսպոզիցիայի այս դրսևորումը ձևակերպված լիներ հստակ և թույլ տար ողջամտորեն նույնականացնելու նկարագրվող արարքի արտահայտման եղանակը: Մինչդեռ այս ձևակերպման պայմաններում անձը, իրացնելով իր սահմանադրական իրավունքները, կազմակերպելով և անցկացնելով հավաք կամ հանդես գալով նման նախապատրաստական աշխատանքներով, կարող է քրեական հետապնդման ենթարկվել հավաքից առաջ կամ դրա ընթացքում խոստումներ, ծրագրեր ներկայացնելու համար այն դեպքում, երբ դրանք ունեն նյութական հենք կամ ուղղակիորեն փոխկապակցված են սոցիալ-իրավական հարցերին, կամ անձը կարող է քրեական հետապնդման ենթարկվել այն դեպքում, երբ որպես կազմակերպիչ հոգում է որոշակի բնական, ողջամտորեն ենթադրելի և կանխատեսելի ծախսեր:

22. Դիմողը գտնում է, որ նորմի անորոշության բարձր աստիճանը, սահմանված պատասխանատվության ակնհայտ անհամաչափությունը, իրավակիրառ պրակտիկայում դրա դրսևորումներն էականորեն ազդում են Սահմանադրությամբ երաշխավորված՝ մարդու այլ հիմնական իրավունքների վրա, այդ թվում՝ կարծիքի արտահայտման ազատության, միավորումների ազատության և այլն, որոնք փաստացի արգելափակվում

են՝ խաթարելով մարդու հիմնական իրավունքների սահմանադրական և կոնվենցիոնալ երաշխիքները:

23. Դիմողը միջազգային մի շարք փաստաթղթերի վերլուծության արդյունքում եզրակացնում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 236-րդ հոդվածով նախատեսված՝ «հավաքին մասնակցելու նպատակով նյութապես շահագրգռելու» վիճարկվող նորմը չի համապատասխանում Սահմանադրությանը, քանի որ դրանով չի հետապնդվում Սահմանադրությամբ սահմանված որևէ նպատակ, և դրանով նախատեսված սահմանափակումը գերազանցում է ԵԱՀԿ-ի կողմից սահմանված սահմանափակումները, և այն հաշվի չի առնում Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկան:

Գ. Պատասխանողի դիրքորոշումները

24. Պատասխանողը նշում է, որ հավաքը հանրային հետաքրքրություն ներկայացնող հարցերի շուրջ ընդհանուր կարծիք ձևավորելու կամ արտահայտվելու անձի իրավունքն է, որը բացարձակ բնույթ չի կրում և կարող է սահմանափակվել որոշակի շահերի պաշտպանության նպատակով:

25. Պատասխանողի կարծիքով հավաքներին մասնակցելու, արտահայտվելու և կարծիք արտահայտելու իրավունքների իրացմանը հարկադրելը կամ նյութապես շահագրգռելը չի բխում այդ իրավունքի էությունից, այլ հանդիսանում է ուղղակի միջամտություն անձի սահմանադրական իրավունքին: Անձնական կարծիքը ձևավորվում է անձի ներքին համոզմունքների հիման վրա, և ստիպել անձին մտածել իր համոզմունքներին հակառակ կամ նյութական արժեքի դիմաց հարկադրել արտահայտելու այնպիսի կարծիք, որը չի արտահայտում իր ներքին համոզմունքները, խախտում է անձի սահմանադրական իրավունքը:

26. Նյութապես շահագրգռելու միջոցով անձանց հավաքին մասնակցելուն հարկադրելը, ըստ Պատասխանողի, կասկածի տակ է դնում հավաքի իրական լինելու փաստը: Այսինքն՝ եթե անձը մասնակցում է հավաքներին միայն «վարձատրվելու» պատճառով, ապա խարխլվում են անձնական համոզմունքներով հավաքներին մասնակցելու և ընդհանրապես հավաքի բնույթն ու գաղափարը: Այսպիսով, անձանց խաղաղ հավաքին մասնակցել ստիպելու կամ պարտադրելու ցանկացած փորձ խախտում է նրանց սահմանադրական իրավունքները և խաթարում հավաքների և միավորումների կամավոր բնույթը:

27. Պատասխանողը եզրակացնում է, որ Սահմանադրության 44-րդ հոդվածով սահմանված՝ անձի սահմանադրական իրավունքից օգտվելը անձի սեփական հայեցողությունն է: Անձին նյութապես շահագրգռելու միջոցով ստիպել իրացնել հավաքներին մասնակցելու իր իրավունքը, կամ հարկադրել իրացնել իր այդ իրավունքը, արդեն իսկ միջամտություն է անձի սահմանադրական իրավունքին: Հաշվի առնելով հավաքների կամավոր բնույթը, դրանց անցկացման էությունը, գաղափարը, նպատակը և/կամ հաշվի առնելով անձի արտահայտվելու, կարծիք արտահայտելու, հավաքներին մասնակցելու ազատության սահմանադրական իրավունքները և հիմքում ունենալով այդ իրավունքների արդյունավետ իրացման հնարավոր խաթարումների ռիսկերը՝ օրենսդրի կողմից քրեականացվել է արարքը, որպեսզի բացառվի և/կամ կանխվի անձի հարկադրաբար մասնակցությունը կամ սին համոզմունքի արտահայտումը հավաքներին:

28. Պատասխանողը պնդում է, որ Սահմանադրության 44-րդ հոդվածով նախատեսված իրավունքից ազատ օգտվելու հնարավորությունը երաշխավորելու և այդ իրավունքի իրացման հնարավոր խոչընդոտներից խուսափելու նպատակով Օրենսգրքի 236-րդ հոդվածի 2-րդ մասով հստակ նախատեսվել է, որ օրինական կամ անօրինական հավաքին մասնակցելուն հարկադրելը, ինչպես նաև հավաքին մասնակցելու կամ հավաքին մասնակցելուց հրաժարվելու նպատակով նյութապես շահագրգռելը պատժվում են:

29. Պատասխանողը նշում է, որ խաղաղ հավաքների ժամանակ տրված խոստումները, բողոքի ակցիաները կամ ցույցերն արտացոլում են սովորաբար մասնակիցների պահանջները, դժգոհությունները կամ ձգտումները, ցանկությունները: Այդ խոստումները տարբեր են՝ կախված կոնկրետ համատեքստից և/կամ բարձրացված խնդիրներից, հարցերից:

30. Ըստ Պատասխանողի՝ ցանկացած շարժառիթ կարող է ազդեցություն ունենալ անձի իրական համոզմունքի վրա: Հետևաբար՝ հավաքների ազատության անձի սահմանադրական իրավունքին միջամտությունը կանխելու նպատակով օրենսդրի կողմից նախատեսվել է քրեական պատասխանատվություն բոլոր այն դեպքերի համար, երբ անձին հարկադրում են մասնակցել հավաքին, ինչպես նաև, երբ անձին նյութապես շահագրգռում են հավաքին մասնակցելու կամ հավաքին մասնակցելուց հրաժարվելու համար: «Նման մոտեցումն ինքնանպատակ չէ, կոչված է երաշխավորելու անձի սահմանադրական իրավունքի անխոչընդոտ իրացումը՝ կանխելով որոշակի հանգամանքով կաշկանդված կամ որոշակի հանգամանքից կախվածության մեջ գտնվելով անձի սին կարծիքի արտահայտումը կամ ստիպված կերպով հավաքին մասնակցությունը»:

31. Պատասխանողի համոզմամբ քաղաքական խոստումները, այդ թվում՝ քաղաքական գործունեության ընթացքում օրենսդրական փոփոխությունները, բարեփոխումները կամ դրանք իրագործելու մասին խոստումները չպետք է նույնացնել հավաքներին մասնակցելուն անձին նյութապես շահագրգռելուն, քանի որ Օրենսգրքի 236-րդ հոդվածի 2-րդ մասում հանցանքի էությունը տվյալ հոդվածի, գլխի, բաժնի և ընդհանրապես տվյալ նորմատիվ իրավական ակտի կարգավորման համատեքստում մեկնաբանելիս միանշանակ պարզ է և հստակ, որ հավաքին մասնակցելու կամ հավաքին մասնակցելուց հրաժարվելու նպատակով նյութապես շահագրգռելն արարք է, որի նպատակը տվյալ հավաքին անձի մասնակցության բացակայությունն է կամ հակառակը՝ անձի մասնակցությունն ապահովելն է, այլ ոչ թե ապագայում իրագործվելիք քաղաքական գործունեությամբ պայմանավորված բարեփոխումներ կատարելու խոստումը: Այսինքն՝ Օրենսգրքի 236-րդ հոդվածով նախատեսված արարքի նպատակին հասնելու միջոցը նյութապես շահագրգռելն է, «(...) որի միջոցով ենթադրյալ հանցանք կատարած անձն իրագործում է իր նպատակը՝ հավաքին անձի մասնակցելուց հրաժարվելուն դիտավորությամբ հասցնելը կամ հակառակը՝ անձի հավաքին մասնակցելն ապահովելը, իսկ հավաքի ընթացքում հնչեցված քաղաքական հայտարարություններն ու կոչերը, արդեն իսկ մասնակցող անձանց, չի կարող բնութագրվել որպես Օրենսգրքի 236-րդ հոդվածով նախատեսված հանցագործության միջոց, հետևաբար դուրս է նշյալ դրույթի կարգավորման շրջանակներից»:

32. Պատասխանողը եզրակացնում է, որ վիճարկվող դրույթի համատեքստում «նյութապես շահագրգռել» հասկացությունը նշանակում է այնպիսի հանգամանք, որի միջոցով կամ որով շահագրգռված կամ կաշկանդված՝ անձը մասնակցում կամ հրաժարվում է մասնակցել հավաքին, ու անհրաժեշտ է տարբերակել հավաքին մասնակցելու

կամ մասնակցելուց հրաժարվելու դիմաց տրված խոստումը (նյութապես շահագրգռել) ապագայում իրագործվելիք բարեփոխումներն իրականացնելու հաստատականություն արտահայտելու խոստումից:

33. Այսպիսով, սահմանափակումների հիմքերը և ծավալը պետք է լինեն բավարար չափով որոշակի, որպեսզի այդ իրավունքների և ազատությունների կրողները և հասցեատերերն ի վիճակի լինեն դրսևորելու համապատասխան վարքագիծ, այսինքն՝ իրավակարգավորումը պետք է լինի հնարավորինս հստակ և ապահովի կանխատեսելիություն:

34. «Նյութապես շահագրգռել» բառակապակցությունն օգտագործվում է նաև Օրենսգրքի 46 և 210-րդ հոդվածներում, և այդ հոդվածների համատեքստում քննարկվող հասկացության մեկնաբանումը բացահայտում է նաև վիճարկվող հոդվածում նշված «նյութապես շահագրգռել» հասկացության իմաստը: Ինքնին վիճարկվող դրույթում կիրառված հասկացությունը միանշանակ է, որոշակի, իմաստային բացահայտված և չի առաջացնում անորոշություն: Ըստ Պատասխանողի՝ վիճարկվող դրույթը չի սահմանափակում անձին՝ ձևավորելու իր վարքագիծը կամ կանխատեսելու, թե ինչպիսին կարող են լինել հանրային իշխանության գործողությունները, և ինչ հետևանքներ կառաջանան տվյալ իրավակարգավորման կիրառման արդյունքում, այսինքն՝ անձը գրկված չէ իր վարքագիծը դրույթին համապատասխանեցնելու հնարավորությունից:

35. Պատասխանողը գտնում է, որ Օրենսգրքի 236-րդ հոդվածի 2-րդ մասը որոշակիության տեսանկյունից խնդրահարույց չէ, ինչպես նաև խնդրահարույց չէ համաչափության սկզբունքին համապատասխանելու տեսանկյունից, քանի որ վիճարկվող դրույթով ընտրվել են այնպիսի միջոցներ, որոնք համաչափ են անձի՝ խաղաղ, առանց զենքի հավաքներին ազատորեն մասնակցելու և դրանք կազմակերպելու սահմանադրական իրավունքի իրականացման դեմ ուղղված ոտնձգությունը պատժելու հարցում: Պատասխանողը պնդում է, որ նշյալ հոդվածում հիմնական իրավունքին միջամտելն անհրաժեշտ է, քանի որ հետապնդվող նպատակին անհնար է հասնել մեկ այլ, սակայն նույնչափ արդյունավետ ճանապարհով, որն ավելի քիչ կսահմանափակի խնդրո առարկա հիմնական իրավունքով պաշտպանված իրավական բարիքը:

36. Ըստ Պատասխանողի՝ վիճարկվող դրույթը համապատասխանում է Սահմանադրությանը:

Դ. Սահմանադրաիրավական վեճի շրջանակները

37. Սույն սահմանադրական վեճով իրականացվելիք վերացական ստուգման շրջանակում գործի քննությունը վերաբերելու է Դիմողի կողմից ներկայացված հիմնավորումների սահմաններում Օրենսգրքի 236-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված՝ հավաքին մասնակցելու կամ հավաքին մասնակցելուց հրաժարվելու նպատակով նյութապես շահագրգռելու հանցավոր արարքի օրենսդրական ձևակերպման սահմանադրականությանը՝ Սահմանադրության 44-րդ հոդվածով ամրագրված հավաքների ազատության իրավունքին և 79-րդ հոդվածով երաշխավորված որոշակիության սկզբունքին համապատասխանության համատեքստում:

Ե. Գործի շրջանակներում պարզման ենթակա հարցադրումները

38. Սույն գործով վիճարկվող դրույթի սահմանադրականությունը գնահատելու նպատակով Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ, մասնավորապես, հետևյալ հարցադրումներին.

ա) արդյո՞ք հավաքին մասնակցելու կամ հավաքին մասնակցելուց հրաժարվելու նպատակով նյութապես շահագրգռելու համար քրեական պատասխանատվության նախատեսումը համապատասխանում է Սահմանադրության 44-րդ հոդվածով ամրագրված հավաքների ազատության սահմանադրական կարգավորումներին,

բ) արդյո՞ք վիճարկվող իրավակարգավորումը, իրավական պետության չափորոշիչներին համապատասխան, ձևակերպված է այնքան որոշակի և հստակ, որ հնարավորություն է տալիս ընկալելու օրենսդրի պահանջը, կանխատեսելու դրա հետևանքները և անձի վարքագիծը համապատասխանեցնելու այդ պահանջներին՝ Սահմանադրության 79-րդ հոդվածով ամրագրված իրավական որոշակիության սկզբունքի լույսի ներքո:

2. Վեճի լուծմանը վերաբերելի սահմանադրական դրույթները

39. Սահմանադրության 1-ին հոդված. «Հայաստանի Հանրապետությունն (...) ժողովրդավարական, (...) իրավական պետություն է»:

40. Սահմանադրության «Մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները և ազատությունները» վերտառությամբ 3-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը .

«1. Հայաստանի Հանրապետությունում մարդը բարձրագույն արժեք է: Մարդու անօտարելի արժանապատվությունն իր իրավունքների և ազատությունների անքակտելի հիմքն է:

2. Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների հարգումն ու պաշտպանությունը հանրային իշխանության պարտականություններն են»:

Սահմանադրության «Մարդու արժանապատվությունը» վերտառությամբ 23-րդ հոդված. «Մարդու արժանապատվությունն անխախտելի է»:

41. Սահմանադրության «Հավաքների ազատությունը» վերտառությամբ 44-րդ հոդված.

«1. Յուրաքանչյուր ոք ունի խաղաղ, առանց զենքի հավաքներին ազատորեն մասնակցելու և դրանք կազմակերպելու իրավունք:

(...)

4. Հավաքների ազատության իրականացման և պաշտպանության պայմաններն ու կարգը սահմանվում են օրենքով:

5. Հավաքների ազատությունը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, հանցագործությունների կանխման, հասարակական կարգի պաշտպանության, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով»:

42. Սահմանադրության «Որոշակիության սկզբունքը» վերտառությամբ 79-րդ հոդված. «Հիմնական իրավունքները և ազատությունները սահմանափակելիս օրենքները պետք է սահմանեն այդ սահմանափակումների հիմքերը և ծավալը, լինեն բավարար չափով որոշակի, որպեսզի այդ իրավունքների և ազատությունների կրողները և հասցեատերերն ի վիճակի լինեն դրսևորելու համապատասխան վարքագիծ»:

Է. Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները

ա) Հավաքների ազատության հիմնական իրավունքի սահմանադրական դրույթների բովանդակության և դրանց համակարգային հարաբերակցության վերաբերյալ

43. Սույն սահմանադրական վեճի լուծման համար կարևոր նշանակություն ունի Սահմանադրության 44-րդ հոդվածով ամրագրված հավաքների ազատության հիմնական իրավունքի իրավական բովանդակության, ինչպես նաև այդ իրավունքի սահմանափակման հիմքերի և կարգի հարաբերակցության բացահայտումը:

44. Սահմանադրության 44-րդ հոդվածի 1-ին մասի տառացի բովանդակությունից բխում է, որ հավաքների ազատության իրավունքը ենթադրում է երկու առանձին իրավական հնարավորություններ. **(1)** յուրաքանչյուր ոք իրավունք ունի ազատորեն, խաղաղ, առանց զենքի հավաքների մասնակցելու իրավունք (հավաքներին մասնակցելու իրավունք), **(2)** յուրաքանչյուր ոք իրավունք ունի ազատորեն կազմակերպելու խաղաղ, առանց զենքի հավաքներ (հավաքներ կազմակերպելու իրավունք):

45. Սահմանադրությունից բխում է, որ **հավաքներին մասնակցելու հիմնական իրավունքի** կրող է յուրաքանչյուր ոք, որի առջև պարտավոր սուբյեկտներ են բոլորը և յուրաքանչյուրը, ինչպես նաև հանրային իշխանությունը: Դրան համապատասխան՝ «Հավաքների ազատության մասին» 2011 թվականի ապրիլի 14-ի օրենքի (այսուհետև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերը սահմանում են, որ հավաքի մասնակից է այն անձը, որը հավաքի անցկացման ժամանակ գտնվում է հավաքի վայրում՝ հավաքին մասնակցելու նպատակով, և ոչ ոք իրավունք չունի պարտադրելու անձին մասնակցել որևէ հավաքի կամ խոչընդոտել նրա մասնակցությունը որևէ հավաքի:

46. Հավաքներին մասնակցելու սահմանադրական սուբյեկտիվ իրավունքի իրականացման պայմաններ են խաղաղ, առանց զենքի և ազատորեն մասնակցությունը, այսինքն՝ մասնակցությունը պետք է ընթանա խաղաղ կամ կրի խաղաղ բնույթ, մասնակցությունը պետք է լինի առանց զենքի, իսկ մասնակցի կողմից մասնակցության վերաբերյալ որոշումը պետք է կայացվի սեփական ազատ կամքով և կամ արտահայտությամբ, այլ կերպ ասած՝ մասնակցող սուբյեկտի մասնակցությունը հավաքին պետք է զերծ լինի հարկադրանքից՝ սպառնալիքից, շանտաժից և կամքի ազատության վրա այլ բնույթի ազդեցություններից:

47. Հետևաբար՝ հավաքներին մասնակցելու իրավունքի հասցեատերերը՝ այլք և հանրային իշխանությունը, պարտավոր են ձեռնպահ մնալ հավաքներին մասնակցելուն խոչընդոտելուց, ինչպես նաև դրան մասնակցելուն հարկադրելուց (սպառնալիք, շանտաժ և այլն) կամ բնույթով հանրորեն վտանգավոր այլ եղանակներով մասնակցելը կամ չմասնակցելն ապահովելուց:

48. **Հավաքներ կազմակերպելու** սահմանադրական իրավունքով օժտված սուբյեկտը հավաքի կազմակերպիչն է: Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հավաքի կազմակերպիչ կարող է լինել հավաքին մասնակցելու իրավունք ունեցող յուրաքանչյուր ոք, ինչպես նաև ցանկացած իրավաբանական անձ: Նույն օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հավաքի կազմակերպիչը հավաքի ղեկավարն է, եթե նա հավաքի ղեկավարումը չի հանձնարարել այլ անձի:

49. Հավաքի կազմակերպչի՝ որպես իրավատիրոջ առջև հիմնական պարտավոր կողմը հանրային իշխանությունն է, որը կրում է պարտականություն՝ Սահմանադրությամբ սահմանված չափորոշիչներին և օրենքով սահմանված կարգին համապատասխան

ապահովել հավաք անցկացնելու կազմակերպչի սահմանադրական իրավունքը: Այս իրավահարաբերության իրացման պայմանները նույն են՝ խաղաղ, առանց զենքի և ազատորեն: Սակայն հավաքներ կազմակերպելու ազատության իրավունքի դեպքում «ազատորեն» սահմանադրական հասկացությունը ձեռք է բերում նոր իմաստ և ուղղված է հավաքի կազմակերպման ազատ ընթացակարգի երաշխավորմանը, որպեսզի կազմակերպիչներն առանց խոչընդոտների կարողանան իրականացնել հավաք կազմակերպելու իրենց իրավունքը:

50. Եթե հավաքներին մասնակցելու ազատության իրավունքի դեպքում «ազատորեն» սահմանադրական հասկացությունը առաջին հերթին ենթադրում է մասնակցի կամքի ինքնավարություն ու ազատություն, ապա հավաքներ կազմակերպելու իրավունքի դեպքում այն առաջին հերթին նշանակում է հավաքի անցկացման ազատական ընթացակարգ, որի ապահովման երաշխավորը հանրային իշխանությունն է, որը պարտավոր է սահմանել հավաքի կազմակերպման այնպիսի կարգ, որը հնարավորություն կտա ազատորեն, առանց ավելորդ արգելքների ու խոչընդոտների կազմակերպել և անցկացնել հավաքը:

51. Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում հատուկ անդրադառնալ Սահմանադրության 44-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված «ազատորեն» եզրույթի սահմանադրաիրավական բովանդակության բացահայտմանը՝ ելնելով այն հանգամանքից, որ այն իրավական հարուստ բովանդակություն կրող առանցքային հասկացություն է, որը պարունակում է հավաքների ազատության իրավունքի բովանդակային ծավալի (սահմանների) և իրականացման սահմանադրական կարևորագույն պայմաններ:

52. Ազատության՝ որպես մարդու իրավունքների հիմնական սահմանադրական արժեքի փիլիսոփայությանը համապատասխան՝ Սահմանադրության 44-րդ հոդվածի 1-ին մասում առկա «ազատորեն» եզրույթի բովանդակային կառուցվածքը ներառում է սուբյեկտիվ սահմանադրական իրավունքի բովանդակությունը կազմող որոշակի գործողություններ կատարելու իրական հնարավորությունները, ազատությունն այլոց ոչ լեգիտիմ միջամտությունից այդ իրավունքն իրականացնելիս, ինչպես նաև իրավունքը կրողի սեփական կամային ինքնավարությունը, ինքնորոշումը, որոնք, որպես ներքին և արտաքին տարրերի ամբողջություն, կազմում են հավաքների ազատության իրավունքի սահմանադրաիրավական բովանդակության առանցքը:

53. Սահմանադրական դատարանը՝ վերոնշյալ մեթոդաբանությանը համահունչ, հավաքների ազատության իրավունքի տարրերից մեկի՝ հավաքներին ազատորեն մասնակցելու (հավաքներին մասնակցելու) իրավունքի սահմանադրական բովանդակության մեջ առանձնացնում է այդ իրավունքը կրողի ազատության առնվազն երեք նշանակություն՝ **դրական ազատություն, բացասական ազատություն, կամքի ազատություն:**

54. Հավաքներին մասնակցելու իրավունքի սահմանադրական բանաձևում «ազատորեն» հասկացությունը ենթադրում է **դրական ազատություն (status activus)**, ինչը նշանակում է ինչ-որ բան անելու (գործելու) ազատություն, որն օբյեկտիվ իրավունքում արտահայտվում է հավաքին մասնակցելու և դրանից բխող սուբյեկտիվ այլ իրավունքներով, ենթադրում է անձի՝ որպես սուբյեկտիվ իրավունքի կրողի գործնական-վարքագծային ազատություն, որպիսի պայմաններում նա ունի ինչ-որ բան անելու

իրական հնարավորություն, կոնկրետ դեպքում՝ մասնակցելու հավաքներին, դրանում արտահայտելու իր տեսակետները և այլն:

55. Հավաքներին մասնակցելու իրավունքի սահմանադրական բանաձևում «ազատորեն» հասկացությունը ենթադրում է բացասական ազատություն (status negativus), որն արտահայտվում է այլ սուբյեկտներից ելնող խոչընդոտներից ու սահմանափակումներից, բռնությունից ազատ (զերծ) լինելու անհատի կարգավիճակում և իրավաբանորեն ամրագրվում է որպես իրավահավասարության, խտրականության արգելքի, անձնական անվտանգության, ինքնավարության և այլնի երաշխավորում: Բացասական ազատությունն այլ անձանց և հանրային իշխանության համար ծնում է պարտականություն՝ ձեռնպահ մնալ հավաքին մասնակցող սուբյեկտի իրավունքների ու շահերի խախտումներից: Հանրային իշխանությունը միաժամանակ կրում է նաև հավաքներին մասնակցելու իրավունքի բացասական ազատության երաշխավորի պարտականություն:

56. Հավաքներին մասնակցելու իրավունքի կառուցվածքում բացասական ազատությունը վերաբերում է այն իրավական և փաստական միջավայրին, որի պայմաններում անձը կարող է գործել և իրացնել իր իրավունքը, որը, ի թիվս այլնի, ներառում է՝ **(1) հանրային իշխանության անհամաչափ միջամտության բացակայություն,** որին համապատասխան այն պարտավոր է ձեռնպահ մնալ անհարկի միջամտություններից (օրինակ՝ չհիմնավորված արգելքներ, վարչական խոչընդոտներ և այլն), **(2) կամայական սահմանափակումների բացառում,** ինչը ենթադրում է, որ պետք է բացառվեն վարչական կամ օրենսդրական այնպիսի կարգավորումները, որոնք իրենց բնույթով կամ կիրառմամբ կամայական են և անհամաչափորեն սահմանափակում են հիմնական իրավունքը, **(3) հավասար հասանելիություն.** իրավունքը պետք է իրացվի առանց խտրականության. «ազատորեն» հասկացությունը ներառում է սահմանադրաիրավական պահանջն առ այն, որ յուրաքանչյուր ոք պետք է ունենա հավասար հնարավորություն՝ մասնակցելու հավաքներին՝ անկախ, ի շարս այլնի, նաև իր քաղաքական կամ այլ հայացքներից, **(4) իրավունքի կենսագործման համար նպաստավոր պայմանների ապահովում.** «ազատորեն» հասկացությունը չի սահմանափակվում միայն չմիջամտելու պահանջով, այլ ներառում է նաև պետության դրական պարտականությունը՝ ապահովելու այնպիսի միջավայր, որտեղ հավաքներին մասնակցելու ազատությունը կարող է արդյունավետ իրացվել (օրինակ՝ անվտանգության ապահովում, հակառակ խմբերի բախումների կանխում և այլն):

57. Հավաքներին մասնակցելու իրավունքի սահմանադրական բանաձևում «ազատորեն» հասկացությունը ենթադրում է կամքի ազատություն (status libertas voluntatis), ինչն անհատի ներքին բնութագիրն է, նրա՝ որպես մարդու բնական հատկությունը: Կամքի ազատությունն օրենսդիրն առաջին հերթին պայմանավորում է անձի իրավասուբյեկտությամբ: Այսպես՝ Օրենքի 8-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ մինչև 14 տարեկան անձինք հավաք կարող են կազմակերպել միայն իրենց օրինական ներկայացուցիչների գրավոր համաձայնությամբ: Սակայն իրավունքը կրող սուբյեկտի կամքի ազատության անհրաժեշտ դրսևորում է նաև նրա՝ որպես մարդու ինքնորոշումը, անկախությունը և ինքնավարությունը, հնարավորությունը մտածել և գործել՝ մասնակցել հավաքներին սեփական կամքով՝ առանց կամքի վրա արտաքին բացասական գործոնների ազդեցության:

58. Հավաքներին մասնակցելու իրավունքի իրացման գործընթացում կամքի ազատությունը հանգում է անձի ներքին ինքնավարությանը՝ առանց արտաքին ճնշման և բացասական այլ ազդեցության ձևավորելու իր վարքագիծը, որը ենթադրում է. **(1) կամքի ինքնավարություն.** «ազատորեն» սահմանադրաիրավական որակը ենթադրում է, որ հավաքին մասնակցելու որոշումը կայացվում է անձի կողմից՝ առանց հարկադրանքի, սպառնալիքի և նման բնույթի այլ բացասական ազդող գործոնի: Այստեղ առանցքային է կամքի ձևավորման ազատությունը՝ որպես իրավունքի իրացման նախադրյալ, **(2) ինքնադրսևորման ազատություն.** հավաքը՝ որպես կոլեկտիվ արտահայտման ձև, ենթադրում է, որ անձը կարող է ազատորեն արտահայտել իր կարծիքը, դիրքորոշումը կամ պահանջները: «Ազատորեն» հասկացությունն այս համատեքստում ապահովում է, որ այդ արտահայտումը չլինի նախապես պայմանավորված կամ սահմանափակված գաղափարական գրաքննությամբ կամ այլ հանգամանքով, **(3) ներքին համոզմունքների անձեռնմխելիություն.** անձը ոչ միայն ազատ է մասնակցելու կամ չմասնակցելու հավաքին, այլև ազատ է իր համոզմունքների ձևավորման և պահպանման հարցում՝ առանց պետության կամ այլ սուբյեկտների ներգործության:

59. Այսպիսով, Սահմանադրության 44-րդ հոդվածի 1-ին մասում Սահմանադրի կողմից ամրագրված «**ազատորեն**» եզրույթը պետք է դիտարկել որպես յուրաքանչյուրի՝ խաղաղ, առանց զենքի հավաքներին մասնակցելու իրավունքի որակական բնութագիր, անձի իրավաչափ գործողությունների, բացասական ազդեցություններից զերծ լինելու և մասնակցության կամավորության ազատություն: Ժողովրդավարության շարունակական զարգացման հանձնառությունն ստանձնած հանրային իշխանությունը պետք է վարի իրավական և գործնական համալիր քաղաքականություն, որի առանցքում պետք է լինի անձի՝ հավաքներին մասնակցելու և դրանք կազմակերպելու իրավունքն իրապես ազատորեն կենսագործելու համար նպաստավոր միջավայրի ձևավորումը, որտեղ անձի կամքի ինքնավարությունը կլինի իրական, գործունակ և արդյունավետորեն երաշխավորված:

60. Հանրային իշխանությունը՝ որպես հավաքներին մասնակցելու իրավահարաբերության պարտավոր կողմ, ունի հավաքների ազատության իրավունքի սահմանադրական պայմանների՝ խաղաղ բնույթի և առանց զենքի, ինչպես նաև դրա ազատության երեք առումների երաշխավորի պարտականություն, ինչից բխում է, որ հանրային իշխանությունը պետք է ձևավորի այնպիսի երաշխիքների և կառուցակարգերի (ներառյալ իրավական) համալիր, որոնք կապահովեն հավաքներին մասնակցության ազատության սահմանադրական պայմանները, ընդհուպ մինչև մասնակցության ազատությունը ոտնձգող հանրորեն վտանգավոր արարքների համար իրավական պատասխանատվության սահմանումը:

61. Սահմանադրության 44-րդ հոդվածի 2-րդ մասը վերաբերում է հավաքների կազմակերպման ազատության իրավունքին, իսկ 4-րդ մասն ազդարարում է, որ հավաքների ազատության իրականացման և պաշտպանության պայմանները և կարգը սահմանվում են օրենքով: Այսպիսով, Սահմանադրության 44-րդ հոդվածում ամրագրված հավաքների ազատության հիմնական իրավունքի բովանդակային հիմնական դրույթները՝ որպես սուբյեկտիվ իրավունքի սահմաններ, ամրագրված են նշյալ հոդվածի 1-ին և 2-րդ մասերում, մանրամասնեցված են Օրենքով: Սահմանադրության 44-րդ հոդվածի 3-րդ և 5-րդ մասերում ամրագրված են հավաքների ազատության հիմնական իրավունքի սահմանափակման ընդհանուր և հատուկ իրավակարգավորումները, որոնք,

սակայն, բովանդակային և համակարգային առնչություն չունեն Օրենսգրքի 236-րդ հոդվածի՝ որպես արգելիչ իրավադրույթի հետ. մատնանշված իրավակարգավորումը ոչ թե խնդրո առարկա հիմնական իրավունքի սահմանադրական բովանդակության սահմանափակման եղանակ է, այլ նշված հիմնական իրավունքի սահմանադրական բովանդակության մաս կազմող «ազատության» սկզբունքի քրեաիրավական երաշխիք:

62. Հիմք ընդունելով այս ելակետային եզրակացությունը՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ այս տեսանկյունից անհիմն են դիմողի այն հիմնավորումները, ըստ որոնց՝ Օրենսգրքի 236-րդ հոդվածի 2-րդ մասը՝ հավաքին մասնակցելու կամ հավաքին մասնակցելուց հրաժարվելու նպատակով նյութապես շահագրգռելու համար պատասխանատվություն սահմանելու մասով, հիմնական իրավունքի սահմանափակում է և որպես այդպիսին հակասում է Սահմանադրության 44-րդ հոդվածին, 78-րդ հոդվածով ամրագրված համաչափության սկզբունքին, 81-րդ հոդվածին²:

63. Ամփոփելով՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ Օրենսգրքի 236-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված հանցավոր արարքները, մասնավորապես նաև «օրինական կամ անօրինական հավաքին (...) մասնակցելու կամ հավաքին մասնակցելուց հրաժարվելու նպատակով նյութապես շահագրգռելը», հանդիսանում են հավաքներին մասնակցելու ազատության սահմանադրական պայմանի քրեաիրավական երաշխիքներ:

բ) Հավաքին մասնակցելու կամ հավաքին մասնակցելուց հրաժարվելու նպատակով նյութապես շահագրգռելու քրեականացման մասով

64. Սահմանադրական դատարանը, Օրենսգրքի 236-րդ հոդվածը որպես իրավակարգավորում դիտարկելով ոչ թե խնդրո առարկա հիմնական իրավունքի սահմանադրական բովանդակության սահմանափակման դրսևորում, այլ նշված հիմնական իրավունքի սահմանադրական բովանդակության մաս կազմող «ազատություն» սկզբունքի երաշխիք, անհրաժեշտ է համարում այդ համատեքստում անդրադառնալ Սահմանադրությամբ ամրագրված հիմնական իրավունքների երաշխավորման հարցում հանրային իշխանության սահմանադրական պարտականություններին:

65. Հավաքների ազատության իրավունքի սահմանադրական ամրագրումը ենթադրում է այն երաշխավորված՝ իրական և արդյունավետ դարձնելու հանրային իշխանության ինչպես բացասական (negative), այնպես էլ դրական (positive) պարտականությունները: Հանրային իշխանությունը պարտավոր է ձեռնպահ մնալ խաղաղ հավաքների կազմակերպման և անցկացման գործընթացին միջամտելուց, եթե բացակայում է սահմանադրորեն հիմնավորված պատճառաբանությունը: Սակայն ցանկացած իրավունքի գործնական իրացումը, կենսագործման արդյունավետությունը պահանջում են նաև պետության դրական՝ ակտիվ դերակատարում: Եթե հավաքների ազատության երաշխավորման առումով պետության բացասական պարտականությունը հանգում է

² Սահմանադրական դատարանը հարկ է համարում նշել, որ դիմումի 14-21-րդ էջերում միջազգային պայմանագրերին և խորհրդատվական փաստաթղթերին կատարված հղումները, դրանցից, ինչպես նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի «Աշուղայն ընդդեմ Հայաստանի» 17.07.2008 թ. և «Մկրտչյան ընդդեմ Հայաստանի» 11.07.2007 թ. վճիռներից կատարված մեջբերումները վերաբերում են հավաքների կազմակերպման, անցկացման ազատության հարցերին կամ հավաքներին մասնակցելու ազատության status activus կամ status negativus առումներին, բայց ոչ status libertas voluntatis տարրին:

հանրային իշխանության միջամտության սահմանների որոշմանը, ապա դրական պարտականությունը՝ իրավունքի կենսունակության իրավական, գաղափարական, ինստիտուցիոնալ, նյութական և ընթացակարգային բաղադրիչներին ու պայմաններին, որոնք կոչված են երաշխավորելու իրավունքի կենսագործման գաղափարական, իրավական և վարչարարական (կազմակերպական) կանխատեսելի ու թափանցիկ միջավայրը: Դրական պարտականության առանցքային բաղադրիչներից է հավաքի մասնակիցների պաշտպանությունը երրորդ անձանց միջամտությունից:

66. Այսպիսով, առանց հիմնական իրավունքների նկատմամբ հարգանք և պաշտպանություն ապահովող արդյունավետ օրենսդրական կառուցակարգերի ու երաշխիքների դրանք կվերածվեն հոչակագրային և գործնականում անիրագործելի իրավունքների: Ընդ որում՝ հանրային իշխանությունը՝ ի դեմս օրենսդրի, կարող է նախընտրել հիմնական իրավունքների երաշխավորման ու պաշտպանության քրեաիրավական գործիքակազմը:

67. Սահմանադրական դատարանը գտնում է, որ հավաքներին մասնակցելու իրավունքի սահմանադրական բովանդակության անքակտելի մասը կազմող ազատության բոլոր առումների, հատկապես կամքի ազատության՝ որպես սահմանադրական արժեքների պաշտպանության անհրաժեշտությունն անկասկած իրավական աքսիոմ է, հետևաբար՝ այդ իրավական տրամաբանությունից ելնելով՝ օրենսդիրը հանցագործություն է համարել «Հավաք անցկացնելուն կամ դրան մասնակցելուն խոչընդոտելը կամ հարկադրելը, ինչպես նաև հավաքին մասնակցելու կամ հավաքին մասնակցելուց հրաժարվելու նպատակով նյութապես շահագրգռելը» և Օրենսգրքի 236-րդ հոդվածի 2-րդ մասում՝ որպես պատժի սպառնալիքով արգելված արարք ամրագրվել է «օրինական կամ անօրինական հավաքին մասնակցելուն հարկադրելն անձի կամ նրա մերձավոր ազգականի կամ մերձավորի նկատմամբ բռնություն գործադրելու, գույքը ոչնչացնելու, վնասելու կամ վերցնելու սպառնալիքով կամ շանտաժի միջոցով, ինչպես նաև հավաքին մասնակցելու կամ հավաքին մասնակցելուց հրաժարվելու նպատակով նյութապես շահագրգռելը»:

68. Վերոգրյալը նկատի ունենալով՝ Սահմանադրական դատարանը եզրակացնում է, որ հիմնական իրավունքի իրականացման սահմանադրական պայմանները ոտնձգող արարքների համար իրավական պատասխանատվության սահմանումը չի կարող դիտարկվել որպես հիմնական իրավունքի խախտում օրենսդրի կողմից: Մյուս կողմից Սահմանադրական դատարանն ուշադրություն է հրավիրում այն հանգամանքի վրա, որ քրեականացման օբյեկտիվ հիմքը, այն է՝ որոշակի սահմանադրական արժեքների քրեաիրավական պաշտպանության անհրաժեշտությունն անքակտելիորեն պայմանավորված է նաև հասարակության քաղաքական-իրավական գիտակցության մակարդակով, ժողովրդավարական ինստիտուտների կայացման աստիճանով, սոցիալական ու տնտեսական առանձնահատկություններով, անցյալի քաղաքական փորձով և բազում այլ գործոններով:

69. Հասարակության սոցիալ-տնտեսական ոչ բավարար զարգացածության պայմաններում հասարակական հարաբերությունները հաճախ բնութագրվում են նյութական կախվածությունների բարձր աստիճանով: Այդպիսի միջավայրում հասարակության անդամների մի զգալի հատված, գտնվելով սոցիալապես անապահով վիճակում, առավել խոցելի է արտաքին ներգործություններից, ինչը կարող է հանգեցնել նաև նյութական խթանման միջոցով հասարակական և քաղաքական գործընթացներին

ներգրավմանը: Այս համատեքստում հավաքներին մասնակցելու կամ դրանց մասնակցելուց հրաժարվելու համար նյութապես շահագրգռելը դադարում է լինել «անմեղ» խթանման ձև և վերաժվում է ժողովրդավարական ինստիտուտների էության խաթարման գործիքի: Այն փոխակերպում է հավաքների ազատությունը՝ որպես ինքնավար և ազատ կամարտահայտման ձև, կառավարվող և արհեստականորեն խթանվող «մասնակցության», ինչը փաստացի քայքայում է հրապարակային քննարկման իսկությունը:

70. Ժողովրդավարական հասարակությունում հավաքներին մասնակցությունը ենթադրում է ոչ թե հարկադրված, նյութապես ուղղակի վարձատրվող մասնակցություն, այլ գիտակցված, ինքնուրույն և անկաշկանդ կամարտահայտում: Երբ մասնակցությունը պայմանավորվում է նյութական շահագրգռվածությամբ, տեղի է ունենում կամքի ձևախեղում՝ այն վերածելով շուկայական փոխանակման առարկայի, ինչն անթույլատրելի է: Այս երևույթն օբյեկտիվորեն սաղմնավորում է մի շարք համակարգային սպառնալիքներ, այդ թվում՝ հասարակական և քաղաքական գործընթացների լեգիտիմության նվազում, քանի որ հավաքներում դրսևորված հասարակական կարծիքը դադարում է արտացոլել իրական տրամադրությունները, հիմնական իրավունքի իրացման գործընթացում ֆինանսական առավել ռեսուրսներ ունեցող անձինք ձեռք են բերում անհամաչափ ազդեցություն, տեղի է ունենում հանրային ինստիտուտների նկատմամբ հասարակական վստահության արհեստական անկում:

71. Վերոգրյալի լույսի ներքո՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ հավաքին մասնակցելու կամ հավաքին մասնակցելուց հրաժարվելու նպատակով նյութապես շահագրգռելու պարագայում իրապես առկա են ազատ կամարտահայտման սահմանադրական հրամայականը խոցելի դարձնող հանրային վտանգներ ու սպառնալիքներ. հասարակական-քաղաքական գործընթացները կարող են պայմանավորվել «ֆինանսական մանիպուլյացիաներով»՝ վերջնարդյունքում հանգեցնելով հավաքների ազատության սահմանադրական էության և բովանդակության կորստի: Այս պայմաններում քրեականացումը **(1)** հանդես է գալիս ոչ թե որպես հավաքներին մասնակցության իրավունքի սահմանափակում, այլ որպես դրա իրական սահմանադրական բովանդակության երաշխավորման և պահպանման միջոց, **(2)** նպատակամղված է ժողովրդավարության ուղին բռնած պետության սահմանադրական հիմքերը վտանգող միտումների, այն է՝ հասարակական-քաղաքական գործընթացների առևտրայնացման, սոցիալական խոցելիության շահագործման, ժողովրդավարության էության խաթարման հաղթահարմանը, **(3)** հետապնդում է ոչ թե հավաքներին մասնակցության սահմանափակման կամ արգելման, այլ այդ մասնակցության իսկության երաշխավորման նպատակ՝ կանխելով սոցիալապես խոցելի խմբերին նյութական վարձատրության միջոցով քաղաքական գործիքի վերածելը:

72. Սահմանադրական դատարանը, նախկինում արտահայտված դիրքորոշումներում անդրադառնալով մարդու արժանապատվության՝ որպես բարձրագույն արժեքի սահմանադրական իրավական բովանդակությանը³, հիմք ընդունելով Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի՝ Նախաբանի այն հիմնարար դրույթը, որ «մարդու իրավունքները բխում են մարդկային անհատին ներհատուկ արժանապատվությունից», գտել է, որ «(...) մարդու արժանապատվությունը,

³ Տե՛ս Սահմանադրական դատարանի 2006 թվականի հոկտեմբերի 4-ի ՍԴՈ-649, 2010 թվականի սեպտեմբերի 14-ի ՍԴՈ-913, 2013 թվականի նոյեմբերի 5-ի ՍԴՈ-1121, 2021 թվականի հոկտեմբերի 5-ի ՍԴՈ-1612 որոշումները:

լինելով բոլոր իրավունքների և ազատությունների հիմք, կանխորոշում է իրավունքների և ազատությունների թե՛ բովանդակությունը, թե՛ իրացման սահմանները» (ՍԴՈ-1612), և ի թիվս այլնի, մարդու արժանապատվության առանցքային բաղադրատարր է նաև «(...) անհատական հատկանիշներով պայմանավորված բարոյական տառապանքներից զերծ մնալը» (ՍԴՈ-1121)⁴: Այս համատեքստում Սահմանադրական դատարանի գնահատմամբ՝ վերոնշյալ հանրային վտանգներն ու սպառնալիքները ունենում են Սահմանադրության 3-րդ հոդվածի երկրորդ նախադասությամբ սահմանված՝ «Մարդու անօտարելի արժանապատվությունն իր իրավունքների և ազատությունների անքակտելի հիմքն է» սահմանադրական կարգի հիմունքը, հակասում են Սահմանադրության 23-րդ հոդվածով ամրագրված՝ «Մարդու արժանապատվությունն անխախտելի է» հիմնադրույթին:

73. Ամփոփելով վերոգրյալը՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ Օրենսգրքի 236-րդ հոդվածի 2-րդ մասով ամրագրված՝ օրինական կամ անօրինական հավաքին մասնակցելու կամ հավաքին մասնակցելուց հրաժարվելու նպատակով նյութապես շահագրգռելու համար քրեական պատասխանատվության սահմանումը բխում է Սահմանադրության 1-ին հոդվածով հռչակված ժողովրդավարական պետության, ինչպես նաև 3 և 23-րդ հոդվածներով ամրագրված մարդու արժանապատվության անօտարելիության ու անխախտելիության սկզբունքներից և կոչված է երաշխավորելու Սահմանադրության 44-րդ հոդվածով ամրագրված՝ խաղաղ, առանց զենքի հավաքներին ազատորեն մասնակցելու իրավունքը:

գ) «Հավաքին մասնակցելու կամ հավաքին մասնակցելուց հրաժարվելու նպատակով նյութապես շահագրգռել» քրեաիրավական ձևակերպման որոշակիության մասով

74. Իրավական որոշակիության սահմանադրական սկզբունքն իրավադրույթներին ներկայացվող հստակության, մատչելիության և կանխատեսելիության պահանջներով առանցքային երաշխիք է իրավական պետություն սահմանադրական կարգի հիմունքից բխող իրավունքի գերակայության և իրավական անվտանգության գաղափարներն իրավական համակարգում նյութականացնելու համար, ինչը կարևորվել է Սահմանադրական դատարանի բազմաթիվ որոշումներում (2006 թվականի ապրիլի 18-ի ՍԴՈ-630, 2008 թվականի մայիսի 13-ի ՍԴՈ-753, 2014 թվականի ապրիլի 18-ի ՍԴՈ-1148, 2016 թվականի մայիսի 3-ի ՍԴՈ-1270): Այդ որոշումներում Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռներում արտահայտված որոշակիության սկզբունքին համահունչ մշակված դիրքորոշումները պահանջում են, որ համապատասխան իրավադրույթները ձևակերպված լինեն բավարար աստիճանի հստակությամբ և ճշգրտությամբ, ինչը հնարավորություն կտա հասցեատերերին դրանց համապատասխանեցնելու իրենց

⁴ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նույնպես անդրադարձել է մարդու արժանապատվության իրավական բովանդակության բացահայտման հիմնահարցին, մասնավորապես՝ նշելով, որ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածի վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի զարգացրած իրավունքն ընդհանուր առմամբ ճանաչում է անձնական կյանքի և դրա հետ կապված արժեքների կարևորությունը: Այդ արժեքները, ի թիվս այլնի, ներառում են հոգեբանական բարեկեցությունը և արժանապատվությունը (Beizaras and Levickas v. Lithuania, Application no. 41288/15, 14.01.2020, Final 14.05.2020, § 117), ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիությունը (Söderman v. Sweden, Application no. 5786/08, 12.11.2013, § 80):

վարքագիծը, կանխատեսելու այն իրավական հետևանքները, որոնք կարող են առաջանալ դրանց գործողության արդյունքում:

75. Սահմանադրական դատարանը հարկ է համարում նշել, որ **(1)** սահմանադրական մի շարք իրավունքների ու ազատությունների իրականացման կամ իրականացնելուց հրաժարվելու դրդապատճառների հիմքում երբեմն նյութական շահը կամ այդպիսի շահագրգռումը էական դեր է խաղում, իսկ որոշակի քաղաքական, իրավական գործընթացներում դրանք շատ հաճախ բնականոն և իրավաչափորեն ենթադրելի են: Խաղաղ հավաքները կարող են հետապնդել տարատեսակ ու բազմազան նպատակներ, ներառյալ որոշակի նյութական ակնկալիքներ ենթադրող տեսակետների արտահայտման, շահերի և իրավունքների պաշտպանության կապակցությամբ: Օրինակ՝ հավաքի կազմակերպիչը կամ անցկացնողը կարող է քարոզել հավաքին մասնակցելու կամ դրան մասնակցելուց հրաժարվելու ակտիվություն՝ քարոզելով նաև նյութական որոշակի օգուտներ և շահեր՝ որպես հավաքի անցկացման նպատակ կամ դրանից ակնկալվող արդյունք, **(2)** մյուս կողմից՝ պետք է նկատի ունենալ հնարավոր տարածական մեկնաբանման հետևանքով առաջացող վտանգները, որոնց մասին ակնարկում է Վենետիկի հանձնաժողովը՝ CDL-AD(2025)037 խորհրդատվական կարծիքում՝ 25-րդ կետում նշելով, որ նյութատեխնիկական (լոգիստիկ) ապահովման այնպիսի եղանակները, ինչպիսիք են ցուցարարների տեղափոխումը, սննդի, կացարանի ապահովումը կամ հիմնական բանախոսների ծախսերի փոխհատուցումը, խաղաղ հավաքի կազմակերպման ստանդարտ գործընթացներ են:

76. Սահմանադրական դատարանն իր՝ 2022 թվականի ապրիլի 29-ի ՍԴՈ-1646 որոշմամբ գնահատելով քրեաիրավական ձևակերպման սահմանադրականությունը որոշակիության սկզբունքի դիրքերից, արձանագրել է. «Միննույն ժամանակ Սահմանադրական դատարանը շեշտում է, որ իրավական որոշակիությունը չպետք է բացարձականացնել: Գնահատողական եզրույթների առկայության պայմանում իրավակարգավորումն ինքնին խնդրահարույց չէ, որպիսի պայմաններում որոշակիության ծավալը լրացնելու ու իրավադրույթների կիրառման համար անհրաժեշտ ու բավարար բովանդակություն հաղորդելու առաքելությունը վերապահված է իրավակիրառողին»: Նշված որոշման մեջ Սահմանադրական դատարանը եզրահանգել է, որ իրավադրույթներում առկա եզրույթների և ձևակերպումների ընդհանրական և գնահատողական բնույթը չի խաթարում իրավական որոշակիության սկզբունքը, և հետևաբար՝ «(...) Վիճարկվող դրույթում առկա ընդհանրական ձևակերպումների բովանդակությունը պետք է բացահայտվի իրավակիրառ պրակտիկայի շրջանակներում՝ նկատի ունենալով յուրաքանչյուր կոնկրետ դեպքը և դրա առանձնահատկությունները (...):»:

77. Այս առնչությամբ կայուն իրավական դիրքորոշում ունի նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, ըստ որի՝ չնայած սահմանումների որոշակիությունը խիստ ցանկալի է, միաժամանակ անհրաժեշտ է խուսափել դրանց չափազանց կոշտ լինելուց. իրավունքը պետք է ունակ լինի հետևել փոփոխվող հանգամանքներին: Այդ իսկ պատճառով հաճախ օրենքներում առկա են տերմիններ, որոնք քիչ թե շատ անորոշ են: Դրանց մեկնաբանումը և կիրառումը դատական պրակտիկայի խնդիր է (The Sunday Times v. the United Kingdom, Application no. 6538/74, 26.04.1979, §49):

78. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ «հավաքին մասնակցելու կամ հավաքին մասնակցելուց հրաժարվելու նպատակով նյութապես շահագրգռելը» հանցակազմի օրենսդրական ձևակերպմանը բնորոշ չէ անհստակությամբ և անճշտու-

թյամբ պայմանավորված անորոշությունը, այլ խնդիրը հանգում է ձևակերպման վերացականությանը պայմանավորված գնահատողական բնույթին, որը սակայն չի խաթարում իրավական որոշակիության սկզբունքը: Օրենսգրքի 236-րդ հոդվածի 2-րդ մասում առկա նյութապես շահագրգռման՝ որպես վերացական իրավադրույթի իրավական որոշակիությանը համահունչ ճշգրտության, կանխատեսելիության և մատչելիության ապահովման պատշաճ միջոցը դրա, ըստ հանցակազմի բոլոր տարրերի (օբյեկտ, օբյեկտիվ կողմ, սուբյեկտ և սուբյեկտիվ կողմ) հետ առնչության, մեկնաբանությունն ու կիրառումն է:

79. Այսպիսով, «հավաքին մասնակցելու կամ հավաքին մասնակցելուց հրաժարվելու նպատակով նյութապես շահագրգռելը» հանցակազմի օրենսդրական ձևակերպման մեջ «նյութապես շահագրգռել» հասկացության պատշաճ մեկնաբանման խնդիրը, դրանով պայմանավորված հանցավոր արարքի առկայության կամ բացակայության հարցը, ելնելով տվյալ գործի բոլոր փաստական հանգամանքների համադրված վերլուծությունից, իրավակիրառ պրակտիկայի, այսինքն՝ վարույթն իրականացնող մարմնի, այդ թվում՝ եռաստիճան դատական համակարգի գնահատման տիրույթում է: Իրավակիրառ և դատական մարմինները պետք է առաջնորդվեն վիճարկվող դրույթի կիրառման միասնական պրակտիկա ձևավորելու հրամայականով, ինչը կնպաստի իրավական կանխատեսելիության բարձրացմանը և վերացական հասկացությունների գնահատման հայեցողության սահմանների հստակեցմանը:

80. *«Նույնիսկ իրավական նորմի առավելագույն հստակությամբ ձևակերպման դեպքում դատական մեկնաբանությունը չի բացառվում: Իրավադրույթների պարզաբանման և փոփոխվող հանգամանքներին՝ զարգացող հասարակական հարաբերություններին դրանց համապատասխանեցման անհրաժեշտությունը միշտ էլ առկա է: Հետևաբար, օրենսդրական կարգավորման որոշակիությունը և ճշգրտությունը չեն կարող բացարձականացվել՝ նույնիսկ ոչ բավարար հստակությունը կարող է լրացվել դատարանի մեկնաբանություններով»* (2016 թվականի մայիսի 3-ի ՍԴՈ-1270):

81. Հետևաբար՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ իրավական որոշակիությունը սահմանադրական չափանիշ է, որին մշտապես պետք է ձգտի ոչ միայն իրավաստեղծը (օրենսդիրը), այլ նաև իրավակիրառ պրակտիկան, որի մեկնաբանողական իրավական դիրքորոշումները յուրաքանչյուր հանցակազմի շրջանակում պետք է կառուցվեն հանցավոր արարքի օրենսդրական բնութագրի գնահատման և մեկնաբանության իրավական որոշակիության սահմանադրական սկզբունքից բխող հստակ մեթոդաբանական հիմքերի վրա՝ առաջնահերթորեն ապահովելով հիմնարար իրավունքների և ազատությունների պահպանումը, պաշտպանությունը:

82. Սահմանադրական դատարանը հարկ է համարում նշել, որ «նյութապես շահագրգռել» չի կարող որակվել հավաքի անցկացմամբ հետապնդվող նպատակներից ու արդյունքներից ակնկալվող իրավաչափ նյութական շահը, հավաքի կազմակերպման ու անցկացման ընթացքում կազմակերպչական անհրաժեշտ ծախսերը: Իրավակիրառող սուբյեկտները պարտավոր են խնդրո առարկա ձևակերպումը սահմանափակել միայն այնպիսի վարքագծով, որն ազդեցություն ունի անձի կամքի ձևավորման վրա և այդպիսով խախտում է անհատի՝ որոշում կայացնելու ազատ կամարտահայտությունը՝ մասնակցությունը կամ մասնակցելուց հրաժարվելը վերածելով իրականում «գնված» վարքագծի:

83. Իրավակիրառ պրակտիկան պետք է առաջնորդվի այն տրամաբանությամբ, որ յուրաքանչյուր նյութական խթան չէ, որ քրեորեն արգելված է, այլ միայն այն, որը (1) կարող

է ազդեցություն ունենալ վարքագծի ընտրության վրա, (2) ներառված է նյութապես շահագրգռելու նպատակի դիտավորության շրջանակներում՝ հասնել հավաքների մասնակցելու կամ դրանց մասնակցելուց հրաժարվելու վերաբերյալ մասնակցի կամքի ձևավորմանը՝ խաթարելով նման որոշման կայացման ազատության սկզբունքը:

84. Ըստ այդմ՝ հավաքին մասնակցության կազմակերպչական և ընթացիկ ծախսերը, որոնք նպատակային կերպով չեն պայմանավորում անձի մասնակցությունը հավաքին, փաստացի չեն խաթարում անձի՝ հավաքին մասնակցելու ազատ կամարտահայտությունը, չեն կարող դիտարկվել իբրև Օրենսգրքի 236-րդ հոդվածի 2-րդ մասի իմաստով՝ «հավաքին մասնակցելու կամ հավաքին մասնակցելուց հրաժարվելու նպատակով նյութապես շահագրգռել»: Նշյալ հանցավոր արարքի օբյեկտիվ կողմում «նյութապես շահագրգռելը» առկա է միայն այն դեպքում, երբ նյութական խթանն իր էությունը և ինտենսիվությամբ կարող է ազդել անձի ազատ կամքի վրա:

Սահմանադրությանը համապատասխանության վերացական ստուգման արդյունքներով Դիմողի կողմից ներկայացված հիմնավորումների շրջանակում ելնելով գործի քննության արդյունքներից և հիմք ընդունելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետը, 169-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը, 170-րդ հոդվածի 1-ին և 5-րդ մասերը, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 68-րդ հոդվածները՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 236-րդ հոդվածի 2-րդ մասի՝ «ինչպես նաև հավաքին մասնակցելու կամ հավաքին մասնակցելուց հրաժարվելու նպատակով նյութապես շահագրգռելը» դրույթը համապատասխանում է Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Ա. ԴԻԼԱՆՅԱՆ

29 ապրիլի 2026 թվականի
ՍԴՈ-1826



ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ

ՍԴ ՆԱԽԱԳԱՀԸ ՆԵՐԿԱՅԱՑՐԵԼ Է ՆՈՐԸՆՏԻՐ ԴԱՏԱՎՈՐ ՎԼԱԴԻՄԻՐ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ



Տեղի ունեցավ Սահմանադրական դատարանի դատավորի պաշտոնը ստանձնած դատավոր Վլադիմիր Վարդանյանի ներկայացումը Բարձր դատարանի դատավորներին և աշխատակազմին:

Արարողակարգային միջոցառման մեկնարկին Սահմանադրական դատարանի նախագահ Արման Դիլանյանը, ներկայացնելով դատավորին, մաղթեց արդյունավետ պաշտոնավարում, վստահություն հայտնելով, որ դատավոր Վլադիմիր Վարդանյանն իր ամենօրյա գործունեությամբ կնպաստի մեր երկրում սահմանադրական արդարադատության, իրավունքի գերակայության և սահմանադրականության ամրապնդմանը:

Վլադիմիր Վարդանյանն իր խոսքում նշեց, որ դատավորի կարգավիճակով Բարձր դատարան վերադառնալն իր համար կրկնակի պարտավորեցնող է, քանի որ իր մասնագիտական ուղու զգալի մասն անցել է Սահմանադրական դատարանում՝ ընդգծելով, որ ջանք չի խնայելու իր փորձն ու մասնագիտական կարողությունները Բարձր դատարանի գործունեության արդյունավետությանը ծառայեցնելու համար:

Միջոցառման ընթացքում Սահմանադրական դատարանի դատավոր Վլադիմիր Վարդանյանին հանձնվեց Սահմանադրական դատարանի դատավորի պատմուճանը:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ ՀՅՈՒՐԸՆԿԱԼՎԵԼ Է ՇՎԵԴԻԱՅԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՌԻԿԱՍԴԱԳԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ



2026 թվականի ապրիլի 8-ին ՀՀ Սահմանադրական դատարանում հյուրընկալվել է «Ռիկսդագի ժողովրդավարական զարգացման համագործակցություն 2024-2026» ծրագրի շրջանակներում Հայաստանի Ժամանաձ Շվեդիայի Թագավորության Ռիկսդագի պատգամավորների պատվիրակությունը՝ ՀՀ Ազգային ժողովի պատվիրակության ուղեկցությամբ:

Ողջունելով հյուրերին՝ Սահմանադրական դատարանի նախագահ Արման Դիլանյանը բարձր է գնահատել ժողովրդավարության զարգացմանն ու ամրապնդմանն ուղղված Հայաստանի Հանրապետության և Շվեդիայի Թագավորության օրենսդիր մարմինների համագործակցությունը:

Ռիկսդագի պատգամավորները նշել են, որ Հայաստանի Հանրապետության գործընկերների հետ համագործակցության կարևոր ոլորտ է ժողովրդավարության և մարդու իրավունքների խթանումը: Հաշվի առնելով Շվեդիայի Թագավորության և Հայաստանի Հանրապետության դատաիրավական ոլորտի տարբերությունները՝ Ռիկսդագի պատգամավորները հետաքրքրվել են Հայաստանի դատաիրավական համակարգի առանձնահատկություններով:

Հյուրերի խնդրանքով Սահմանադրական դատարանի նախագահը ներկայացրել է ՀՀ Սահմանադրական դատարանի կառուցվածքը, գործունեության առանձնահատկությունները, պետական այլ մարմինների հետ փոխհարաբերությունների և համագործակցության սկզբունքները: Արման Դիլանյանը ներկայացրել է նաև Սահմանադրական դատարանի ստեղծման պատմական ուղին, ինչպես նաև Բարձր դատարանի գործունեությունը կանոնակարգող օրենսդրության զարգացումներն ու դրանց ազդեցությունը սահմանադրական արդարադատության արդյունավետության բարձրացման վրա:

Հանդիպման ընթացքում քննարկվել են փոխադարձ հետաքրքրություններ կայացնող մի շարք հարցեր:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ ՀՅՈՒՐԸՆԿԱԼՎԵԼ Է ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՐԴԻ ԿՈՆԳՐԵՍԻ ՊԱՏՎԻՐԱՎՈՒԹՅՈՒՆԸ



2026 թվականի ապրիլի 15-ին Սահմանադրական դատարանում հյուրընկալվել են Եվրոպայի խորհրդի (ԵԽ) Տեղական և տարածաշրջանային իշխանությունների կոնգրեսի ներկայացուցիչները, որոնք Հայաստան են ժամանել ԵԽ Տեղական և տարածաշրջանային իշխանությունների կոնգրեսի կողմից իրականացվող մշտադիտարկման այցի շրջանակներում: Այցի նպատակն է գնահատել Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի կիրառումը Հայաստանի Հանրապետությունում:

Ողջունելով հյուրերին՝ Սահմանադրական դատարանի նախագահ Արման Դիլանյանը ներկայացրել է Բարձր դատարանի գործունեության առանձնահատկությունները, անդրադարձել է Հայաստանի Հանրապետությունում սահմանադրական արդարադատության իրականացման շրջանակներում Եվրոպական խարտիայի կիրառմանը:

Հյուրերի խնդրանքով Սահմանադրական դատարանի փոխնախագահ Էդգար Շաթիրյանը ներկայացրել է ՍԴ այն որոշումները, որոնց կարող է առնչվել Եվրոպական խարտիայի կիրառումը:

ԵԽ Տեղական և տարածաշրջանային իշխանությունների կոնգրեսի ներկայացուցիչներ՝ Կոնգրեսի՝ Հայաստանի հարցերով համազեկուցողներ Ջոնաթան Դենիսի (Միացյալ Թագավորություն), Կատրին Պարտիկայի (Բելգիա), Կոնգրեսի քարտուղար Ստեֆանի Պուրելի և փորձագետ Տանիա Գրոպպիի հետ հանդիպման ընթացքում քննարկվել են փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող մի շարք հարցեր:

Կոնգրեսի ներկայացուցիչները շնորհակալություն են հայտնել արդյունավետ հանդիպման համար:

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀՆ ԸՆԴՈՒՆԵԼ Է ԵՎՐՈՊԱՅԻ
ԽՈՐՀՐԴԻ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐԻՆ**



2026 թվականի մայիսի 20-ին Սահմանադրական դատարանի նախագահ Արման Դիլանյանն ընդունել է Եվրոպայի խորհրդի Մարդու իրավունքների և արդարադատության համագործակցության վարչության ղեկավար Լիլյա Գրետարսդոտտիրի գլխավորած պատվիրակությանը:

Ողջունելով հյուրերին՝ ՍԴ նախագահը բարձր է գնահատել Եվրոպայի խորհրդի դերը Հայաստանում իրավունքի գերակայության, մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների, ինչպես նաև սահմանադրական արդարադատության ոլորտներում իրականացվող գործընթացներում: Արման Դիլանյանն ընդգծել է, որ Եվրոպայի խորհրդի հետ արդյունավետ համագործակցության շնորհիվ արդեն իսկ զգալի առաջընթաց է արձանագրվել Սահմանադրական դատարանի ինստիտուցիոնալ բարեփոխումների մի շարք ուղղություններով:

Եկ Մարդու իրավունքների և արդարադատության համագործակցության վարչության ղեկավար Լիլյա Գրետարսդոտտիրը, շնորհակալություն հայտնելով ջերմ ընդունելության համար, նշել է, որ Սահմանադրական դատարանը շարունակում է մնալ Եվրոպայի խորհրդի վստահելի գործընկերը, և վերահաստատել է արդյունավետ համագործակցությունը շարունակելու պատրաստակամությունը:

Հանդիպման ընթացքում քննարկվել են «Աջակցություն սահմանադրական արդարադատության զարգացմանը Հայաստանում՝ եվրոպական չափանիշներին համապատասխան» ծրագրի շրջանակներում իրականացված աշխատանքները, նախանշվել հետագա անելիքները, ինչպես նաև անդրադարձ է կատարվել փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող մի շարք հարցերի:

ՄԴ ՆԱԽԱԳԱՀՆ ԸՆԴՈՒՆԵԼ Է ՖՐԱՆԿՈՖՈՆԻԱՅԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆԸ



2026 թվականի հունիսի 4-ին Սահմանադրական դատարանի նախագահ Արման Դիլանյանն ընդունել է Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության (ՖՄԿ) և գործընկեր հաստատությունների ներկայացուցիչներից կազմված պատվիրակությանը՝ բելգիացի պատգամավոր, նախկին նախարար և պետքարտուղար Ֆիլիպ Կուրարի գլխավորությամբ:

Պատվիրակության կազմում էին Սենեգալի Սահմանադրական խորհրդի փոխնախագահ Ամինատա Լի Նդիայը, Նյու Բրանսուիկի կառավարության և Ֆրանկոֆոնիայի խորհրդարանական վեհաժողովի ներկայացուցիչ Բենուա Բուրքը, Մոլդովայի Տեսալսողական խորհրդի փոխնախագահ Անետա Գոնտան, ընտրական հարցերով փորձագետ Էյրինի Մարիա Գունարին (Հունաստան), առաքելության ղեկուցող Շառլոտ-Ֆարա Սուիբը (Ֆրանսիա), Կենտրոնական և Արևելյան Եվրոպայում Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության ներկայացուցչության գլխավոր վերլուծաբան Դավիդ Բոնգարը, ՖՄԿ քաղաքական հարցերի տնօրինության ծրագրի պատասխանատու Էժենի Ֆուրնեն:

Ողջունելով հյուրերին՝ Սահմանադրական դատարանի նախագահ Արման Դիլանյանը կարևորել է Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության հետ ձևավորված գործընկերային համագործակցությունը և ընդգծել միջազգային փորձի փոխանակման նշանակությունը սահմանադրական արդարադատության և ժողովրդավարական կառավարման զարգացման համատեքստում:

Հյուրերի խնդրանքով ՄԴ նախագահ Արման Դիլանյանը և ՄԴ փոխնախագահ Էդգար Շաթիրյանը ներկայացրել են Հայաստանի Հանրապետությունում սահմանադրական վերահսկողության իրականացման առանձնահատկությունները, Սահմանադրական դատարանի լիազորությունները, ինչպես նաև վերջին տարիներին

դատարանի ձևավորած իրավական դիրքորոշումների նշանակությունը սահմանադրականության ապահովման և հիմնարար իրավունքների պաշտպանության գործում:

Պատվիրակության անդամները հետաքրքրվել են Սահմանադրական դատարանի գործունեության կազմակերպման առանձնահատկություններով, սահմանադրական գանգատի ինստիտուտի կիրառման փորձով, ինչպես նաև ընտրական և տեղեկատվական գործընթացների իրավական կարգավորման հարցերով: Առանձնահատուկ ուշադրություն է դարձվել ժողովրդավարական գործընթացների նկատմամբ հանրային վստահության ամրապնդման և պետական ինստիտուտների կայուն գործունեության ապահովման հարցերին:

Կողմերը մտքեր են փոխանակել ժամանակակից ժողովրդավարությունների առջև ծառացած մարտահրավերների, սահմանադրական դատարանների դերի և անկախ դատական իշխանության կարևորության վերաբերյալ:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ

**ՀՀ ՍԴ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆՆ ԱՅՑԵԼԵԼ Է
ՄԻԱՑՅԱԼ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀՀ ԴԵՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ**



Լոնդոն աշխատանքային այցի շրջանակում ՀՀ Սահմանադրական դատարանի պատվիրակությունը մայիսի 12-ին այցելել է ՄԹ-ում ՀՀ դեսպանատուն: ՀՀ դեսպանության կողմից կազմակերպված ընդունելությանը պատվիրակությանը հյուրընկալել է Միացյալ Թագավորությունում Հայաստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Վարուժան Ներսեսյանը:

ՀՀ Սահմանադրական դատարանի նախագահ Արման Դիլանյանը շնորհակալություն է հայտնել դեսպանությանը՝ պատվիրակության այցին ցուցաբերված աջակցության և համագործակցության համար՝ ընդգծելով նման այցերի կարևորությունը միջազգային գործընկերային կապերի ամրապնդման տեսանկյունից:

Դեսպան Վարուժան Ներսեսյանը կարևորել է ՀՀ Սահմանադրական դատարանի և Միացյալ Թագավորության դատական հաստատությունների միջև ձևավորված մասնագիտական երկխոսությունը՝ նշելով, որ այն նպաստում է իրավական ինստիտուտների զարգացմանն ու փորձի փոխանակմանը:

ՍԴ նախագահը ՀՀ արտակարգ և լիազոր դեսպանին է հանձնել ՀՀ ՍԴ հուշամեդալը:

ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ Ծ ՏԵՂԵԿՎՈՒԹՅՈՒՆ Ծ 2(123)2026

ՄԴ ՆԱԽԱԳԱՀԸ ԵՎ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԸ ՀԱՆԴԻՊԵԼ ԵՆ ԱՆԳԼԻԱՅԻ ԵՎ ՌԻԵԼՍԻ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱՎՈՐԻ ՀԵՏ



ՄԹ աշխատանքային այցի շրջանակներում ՀՀ Սահմանադրական դատարանի պատվիրակությունը այցելել է Լոնդոնի Արդարադատության Թագավորական դատարաններ, որտեղ տեղի են ունեցել հանդիպումներ Միացյալ Թագավորության բարձր դատական իշխանության ներկայացուցիչների հետ:

ՀՀ Սահմանադրական դատարանի նախագահ Արման Դիլանյանը, դատավորներ Հովակիմ Հովակիմյանը, Սեդա Սաֆարյանը և Արտակ Զեյնալյանը հանդիպել են Անգլիայի և Ուելսի գլխավոր դատավոր Բարոնուհի Քար օֆ Ուոլթոն-օն-դը-Հիլի հետ: Հանդիպման ընթացքում քննարկվել են դատական անկախության երաշխիքները, դատական իշխանության նկատմամբ հանրային վստահության ամրապնդման մեխանիզմները, ինչպես նաև քաղաքական և հանրային զգայունություն ունեցող գործերի քննության առանձնահատկությունները:

Այնուհետև, տեղի է ունեցել ընդլայնված կազմով հանդիպում, որին մասնակցել են Լորդ դատավոր Նյուցին, Լորդ դատավոր Սնոուդենը, դատավորներ Ռոբին Նոուելսը և Սայմոն Փիկեն: Քննարկումների ընթացքում անդրադարձ է կատարվել դատարանների կառավարման, դատական համակարգի արդյունավետության և արդարադատության մատչելիության հարցերին: Երկուստեք ընդգծվել է միջազգային մասնագիտական համագործակցության և դատական փորձի փոխանակման կարևորությունը՝ հատկապես սահմանադրական արդարադատության և դատարանների կառավարման ոլորտներում: Պատվիրակությունը շրջայց է կատարել Թագավորական դատարաններում, ծանոթացել Անգլիայի և Ուելսի բարձր դատարանների կառուցվածքին, դատարանների զարգացման պատմական առանձնահատկություններին:

ՀՀ ՍԴ ՆԱԽԱԳԱՀԸ ՀԱՆԴԻՊԵԼ Է ՄԻԱՅՅԱԼ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՀԵՏ



2026 թվականի մայիսի 11-12-ը Սահմանադրական դատարանի նախագահ Արման Դիլանյանի գլխավորած պատվիրակությունն աշխատանքային այց է իրականացրել Միացյալ Թագավորություն:

Լոնդոնում ընթացող աշխատանքային այցի շրջանակում ՀՀ Սահմանադրական դատարանի պատվիրակությունը մայիսի 11-ին այցելել է Մեծ Բրիտանիայի Գերագույն դատարան, որտեղ հանդիպում է ունեցել ՄԹ Գերագույն դատարանի նախագահ Լորդ Ռիդի և ՄԹ Գերագույն դատարանի փոխնախագահ Լորդ Սելլսի հետ: Հանդիպման ընթացքում քննարկվել են դատական իշխանության անկախության ապահովման, դատական առաջնորդության, ինչպես նաև հանրային վստահության պահպանման հիմնարար հարցերը: Կողմերը կարևորել են սահմանադրական արդարադատության ոլորտում միջազգային համագործակցության շարունակական զարգացումը և փորձի փոխանակման անհրաժեշտությունը: Հանդիպման ավարտին ՍԴ նախագահ Արման Դիլանյանը և Լորդ Ռիդը հուշանվերներ են փոխանակել: Արման Դիլանյանը գրառում է կատարել ՄԹ Գերագույն դատարանի այցելուների հուշամատյանում:

ՄԹ Գերագույն դատարանում տեղի են ունեցել նաև մի շարք բարձր մակարդակի հանդիպումներ՝ նվիրված դատական անկախության, դատարանների կառավարման և հանրային հաղորդակցության հարցերին: Պատվիրակությունը շրջայց է կատարել Միացյալ Թագավորության Գերագույն դատարանում, ծանոթացել դատարանի գործունեության առանձնահատկություններին, կառուցվածքին և իրավասությանը: Այնուհետև կայացել է մասնագիտական քննարկում դատարանի հաղորդակցության և արտաքին կապերի ղեկավարության հետ: Քննարկվել են դատական իշխանության հաղորդակցման ժամանակակից գործիքները, լրատվամիջոցների հետ աշխատանքի

մեխանիզմները, թվային հաղորդակցության ռազմավարությունները, ինչպես նաև հանրային վստահության ամրապնդման ուղղությամբ իրականացվող ծրագրերը:

ՀՀ ՍԴ նախագահ Արման Դիլանյանի գլխավորած պատվիրակության կազմում հանդիպումներին մասնակցել են ՀՀ ՍԴ դատավորներ Սեդա Սաֆարյանը, Հովակիմ Հովակիմյանը, Արտակ Զեյնալյանը, ՍԴ աշխատակազմի ներկայացուցիչներ: Հանդիպումներին մասնակցել են նաև Միացյալ Թագավորությունում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Վարուժան Ներսիսյանը, Եվրոպայի խորհրդի ներկայացուցիչներ, Միացյալ Թագավորության արդարադատության նախարարության պաշտոնյաներ: Այցը կազմակերպվել է Եվրոպայի խորհրդի «Աջակցություն Հայաստանում սահմանադրական արդարադատության զարգացմանը՝ եվրոպական չափանիշներին համապատասխան» ծրագրի շրջանակում:

**ՍԴ ՆԱԽԱԳԱՀԻ ԽՈՐՀՐԴԱԿԱՆԸ ՄԱՍՆԱԿՑԵԼ Է ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՄԻԱՑՅԱԼ ԽՈՐՀՐԴԻ 22-ՐԴ ՆԻՍՏԻՆ**



«Ժողովրդավարություն իրավունքի միջոցով» Եվրոպական հանձնաժողովի (Վենետիկի հանձնաժողով) իրավերով 2026 թվականի մայիսի 21-22-ը Սահմանադրական դատարանի նախագահի խորհրդական Նաիրա Հովհաննիսյանը, որպես Վենետիկի հանձնաժողովում Սահմանադրական դատարանի լիազոր ներկայացուցիչ (կապի պատասխանատու), աշխատանքային այցով մեկնել է Խորվաթիայի Հանրապետություն՝ մասնակցելու Զագրեբում կայանալիք Սահմանադրական արդարադատության միացյալ խորհրդի 22-րդ նիստին:

Նիստի նպատակն է ապահովել կապի պատասխանատուների և Վենետիկի հանձնաժողովի անդամների միջև տեղեկատվության և փորձի փոխանակումը՝ սահմանադրական դատարանների միջև շարունակական մասնագիտական երկխոսության և համագործակցության զարգացման նպատակով:

Նիստի ընթացքում Նաիրա Հովհաննիսյանը հանդես է եկել զեկույցով՝ ներկայացնելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի փորձն ու մոտեցումները սահմանադրական արդարադատության ոլորտում:

Սահմանադրական արդարադատության միացյալ խորհրդի 22-րդ նիստին նախորդել է «Սահմանադրական բողոքի մեխանիզմների ապագան» թեմայով խորհրդաժողովը, որի շրջանակում քննարկվել են սահմանադրական արդարադատության արդիական մարտահրավերներն ու զարգացման հեռանկարները:

ԻՐԱՎԱԿԱՆ ՀՈՐԻԶՈՆՆԵՐ.

ԱՇԽԱՏԱՆՔ ԵՐԻՏԱՍԱՐԴ ՍԵՐՆԴԻ ՀԵՏ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ ՀՅՈՒՐԸՆԿԱԼՎԵԼ ԵՆ ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ



2026 թվականի մայիսի 18-ին Սահմանադրական դատարանում հյուրընկալվել են Հայ-ռուսական համալսարանի Իրավունքի և քաղաքականության ինստիտուտի իրավագիտության բաժնի ուսանողները: Ուսանողներին ընդունել է Սահմանադրական դատարանի նախագահ Արման Դիլանյանը:

Հանդիպման ընթացքում ՍԴ նախագահը ներկայացրել է Սահմանադրական դատարանի առաքելությունը, գործունեության հիմնական ուղղություններն ու սահմանադրական արդարադատության համակարգում Բարձր դատարանի առանցքային դերակատարությունը: Արման Դիլանյանն առանձնահատուկ ընդգծել է սահմանադրական վերահսկողության նշանակությունը ժողովրդավարական պետության կայացման, իրավունքի գերակայության ապահովման և մարդու հիմնարար իրավունքների պաշտպանության համատեքստում:

ՍԴ նախագահը պատասխանել է նաև ուսանողների հարցերին:

Արման Դիլանյանը նշել է, որ Սահմանադրական դատարանը կարևորում է երիտասարդների հետ անմիջական հաղորդակցությունն ու նման ձևաչափով հանդիպումները՝ դրանք դիտարկելով որպես արդյունավետ հարթակ մասնագիտական երկխոսության և ապագա իրավաբանների հետ փորձի փոխանակման համար:

ԿԱՅԱՑԱՎ «ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԽՈՍՔԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԴԱՏԱԽԱՂ-ՄՐՑՈՒՅԹԸ»



2026 թվականի մայիսի 29-30-ը Սահմանադրական դատարանում կայացավ «Սահմանադրական արդարադատության և խոսքի ազատության վերաբերյալ դատախաղ-մրցույթի» բանավոր լսումների փուլը՝ ամփոփելով ծրագրի կրթական և մրցութային բաղադրիչները:

ՍԴ նախագահ Արման Դիլանյանը, ողջունելով դատախաղ-մրցույթի բանավոր փուլի մասնակիցներին, նշեց որ դատախաղ-մրցույթը ապագա իրավաբանների համար հնարավորություն է ընձեռում գործնական միջավայրում կիրառելու իրենց գիտելիքները, զարգացնելու սահմանադրական դատավարության, իրավական վերլուծության և բանավոր ներկայացման հմտությունները, ինչպես նաև խորացնելու պատկերացումները խոսքի ազատության և սահմանադրական արդարադատության հիմնարար արժեքների վերաբերյալ:

Արման Դիլանյանն ընդգծեց, որ Սահմանադրական դատարանը բարձր է գնահատում մրցույթի մասնակիցների, դատավորների, փորձագետների և գործընկեր կազմակերպությունների ներդրումը ծրագրի հաջող իրականացման գործում և վերահաստատում է իր հանձնառությունը իրավական կրթության և սահմանադրական մշակույթի զարգացմանն ուղղված նախաձեռնությունների շարունակական աջակցությանը: Ողջույնի խոսքով հանդես եկավ նաև Եվրոպայի խորհրդի երևանյան գրասենյակի ղեկավար Մաքսիմ Լոնգանգեն:

Մրցութային մասնակցեցին ութ թիմեր՝ Հանրապետության վեց բուհերից. Երևանի պետական համալսարանից, Պետական կառավարման ակադեմիայից, Հայաստանում ֆրանսիական համալսարանից, Հայ-ռուսական համալսարանից, Հայաստանի ամերիկյան համալսարանից, Եվրոպական համալսարանից: Բանավոր լսումների ընթացքում մասնակիցները ներկայացրեցին պայմանական գործով իրենց իրավական դիրքորոշումները՝ հանդես գալով որպես դիմող և պատասխանող կողմեր, պատասխանեցին դատախաղի դատավորների հարցերին՝ ի ցույց դնելով

սահմանադրական իրավունքի, մարդու իրավունքների պաշտպանության միջազգային չափանիշների վերաբերյալ իրենց գիտելիքները, իրավական փաստարկման և բանավոր խոսքի իրենց հմտությունները:

Դատախաղի առաջին օրը՝ մայիսի 29-ին, նախնական լսումների արդյունքում եզրափակիչ փուլ անցած թիմերը մայիսի 30-ին մասնակցեցին մրցույթի եզրափակիչ դատալսմանը:

Դատախաղի դատական կազմի կողմից մասնակիցների գիտելիքների, մասնագիտական պատրաստվածության և դատախաղային հմտությունների գնահատման արդյունքներով մրցանակներ հանձնվեցին հինգ անվանակարգերում: Առաջին և երկրորդ մրցանակները շնորհվեցին համապատասխանաբար՝ Հայ-ռուսական համալսարանի և Հայաստանի ամերիկյան համալսարանի թիմերին: «Լավագույն բանախոս» անվանակարգում մրցանակը կիսեցին Ինգա Բեգլարյանը (Հայաստանում ֆրանսիական համալսարան) և Լուսինե Վարդանյանը (Հայաստանի ամերիկյան համալսարան), «Լավագույն գրավոր դիմում» անվանակարգում մրցանակ ստացավ Հայաստանի ամերիկյան համալսարանի թիմը, «Լավագույն գրավոր պատասխանի» համար՝ Հայ-ռուսական համալսարանի «Արատտա» թիմը:

Բոլոր մասնակիցները ստացան մասնակցության հավաստագրեր՝ որպես ծրագրին ներգրավվածության և ձեռք բերած գիտելիքների ու հմտությունների հավաստում:

Դատախաղը կազմակերպվել է ՀՀ Սահմանադրական դատարանի, Հայաստանի միջազգային իրավունքի միության և Եվրոպայի խորհրդի Մարդու իրավունքների և արդարադատության համագործակցության վարչության (DGI) կողմից՝ Եվրոպայի խորհրդի՝ 2023-2026 թթ. Հայաստանի գործողությունների ծրագրի շրջանակներում իրականացվող «Աջակցություն սահմանադրական արդարադատության զարգացմանը Հայաստանում՝ եվրոպական չափանիշներին համապատասխան» և «Խոսքի և մամուլի ազատության և տեղեկատվության հասանելիության խթանումը Հայաստանում» ծրագրերի շրջանակներում:

Գրանցվել է ՀՀ արդարադատության նախարարության
20 դեկտեմբերի 1996թ. կոլեգիայի թիվ 37/2-14 որոշմամբ

Խմբագրական խորհուրդ՝

**Ա. ԴԻԼԱՆՅԱՆ, Ա. ԳՅՈՒԼՈՒՄՅԱՆ, Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ, Ֆ. ԹՈԽՅԱՆ,
Ա. ԹՈՒՆՅԱՆ, Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ, Հ. ՆԱԶԱՐՅԱՆ, Ա. ՎԱՂԱՐՇՅԱՆ,
Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, Ա. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

Գլխավոր խմբագիր՝

Ի.Գ.Թ., դոցենտ Ա. Փխրիկյան

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 2(123)2026

Խմբագրության հասցե՝
Երևան, Բաղրամյան 10
Հեռախոս՝ 011-58-81-81 (189)
E-mail: armlaw@concourt.am
<https://www.concourt.am>

Вестник Конституционного Суда Республики Армения N 2(123)2026
Bulletin of the Constitutional Court of the Republic of Armenia N 2(123)2026
Bulletin de la Cour constitutionnelle de la République d'Arménie N 2(123)2026

Խմբագրության հասցե՝
Երևան, Բաղրամյան 10
Հեռախոս՝ 011-58-81-81(189)
E-mail: armlaw@concourt.am
www.concourt.am

